Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԲԱԿՈՒՐ

ՇՈՒՇԻ ԲԵՐԴԱՐԱՊԱՐԼ

ԵՐԵՎԱՆ 2000

Աստիրում եմ ծնողներիս՝
Սիմոնին և Մարուսյա
Զարգարդարյանների
հիշատակին

Ամբողջ-ամբան-բեան ֆամկ-լարեբի նեբկայ
մարբենաշարբի այս Հարոնը
բրամանացա- արբեամ
ե- ֆամբի-ֆ
ֆամկ-լարեբի
գենան գ-ոկոր, պրոֆեսոր
ՇԵՆԻ ՄԱՔԵՆԱԿԱՆ
ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

BAKOUR

FORTRESS CITY SHUSHI

(History untill 1920)

YEREVAN STATE UNIVERSITY

YEREVAN 2000

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԲԱԿՈՒՐ

(Պատմությունը մինչև 1920 թ.)

34.136



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2000

ԴՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Բ 229

Խմբագիրներ՝ պատմ. գիտ. դոկտոր
Բագրատ Ուլուբաբյան
պատմ. գիտ. դոկտոր, ակադեմիկոս
Լենդրուշ Խուրշուդյան
Անգլերեն տեքստի թարգմանիչ՝
Գայանե Մուրադյան

Շնավորումը՝ ***Բակուր Կարապետյանի*** և
Տիգրան Ապիկյանի

Կազմի նկարազարդման մեջ օգտագործվել է Շուշիի Ավետարանի (15-րդ դար) տիտղոսաթերթն ու շուշեցի գրիչ Տեր Մանուելի ինքնանկարն ու հիշատակարանը

Բակուր
Բ 229 - Շուշի բերդաքաղաքը, Երևանի պետական համալսարան, Աստվածաբանության ֆակուլտետ, 2000 թ., 350 էջ:

Օգտագործելով Մ. Մաշտոցի անվան մատենադարանում պահվող Շուշիի ձեռագիր հուշարձանները, հայ պատմագիրների ու ժամանակագիրների վկայությունները, ինչպես նաև հետագա հեղինակների աշխատություններն ու այլ վավերագրեր, հեղինակը ամբողջացրել է հինավուրց բերդաքաղաքի պատմությունը, որն ընդգրկում է հին ժամանակներից մինչև 1920 թվականը՝ քաղաքի հրկիզումն ու կոտորածը:

Գիրքը նախատեսված է ինչպես ուսումնասիրողների, այնպես էլ ընթերցող լայն շրջանակների համար:

Բ 0503020913 / 704(02)-00 00

ISBN 5-8080-0410-8

ԳՄԴ 63.3 (2Հ) 52

© Բակուր, 2000

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Շուշի անունը կը հնչեցնէ իրարամերժ հոգիի մէջ մեր նոր յաղթանակները՝ զանգերը: Արդէն ան ըլլար զանգակատունը, որուն զանգերը երկար տարիներ մատնուած էին լռութեան: Այսօր նոր զանգ մը կանչեցաւ իր զանգերուն՝ պրն. Բակուր Արարպետեանի, Շուշիի նուիրուած ներկայ հատորի հրատարակութեամբ: Հեղինակը կը յիշեցնէ մեզի, թէ Շուշին ունեցած է ուրբ Աստուածածին եկեղեցին, որտեղ պատարագած են Եփրեմ Դերեւանցի կաթողիկոսները: Ան յաւերժօրէն խոնարհուած այդ եկեղեցիի մասին կը խօսի՝ արձանագրելով մեր տիւր պատմութեան էջերուն այլ տիւր էջ մը՝ այդ հին եկեղեցիին ֆանդուամը ապրիլէնանկանիշանութիւններու հրահանգով:

Շուշին խորհրդանիշն է նաեւ աղտոտագրական պայքարի առաջին շարժումներուն: Ան թերդուղաղէն է, որ աղտոտիչ մելիքները վանեցին հոգիներուն մէջ տիմադրութեան ոգին մինչեւ յաղթանակ:

Որքան շատ իմանանք Շուշիի մասին, կարծէք աւելի քարոյը կը գնահատենք մեր ազգային ֆաջամարտիկներու հերոսութիւնը, որով Շուշին աղտոտագրուեցաւ, վերականգնեց ե՛ւ ակտիւ ծաղկեալ:

Կը յուսանք, թէ այս հատորը լայն ընդունելութիւն պիտի գտնէ ե՛ւ վաղ պիտի պահէ մեր սրտերուն մէջ հաւատքը, թէ մեր քաջ աղէտներուն պիտի յաջորդէ յաղթանակի արշալոյսը՝ մեր երկիրը վերակերտելու նոր տարաշրջանը:

Այդ յոյսով կը շնորհաւորենք ներկայ հատորի հեղինակը:

ԵՊՀ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ
ՊՐՈՖ. ՇԱՀԵ ԱՐՔ. ԱՃԵՄԵԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

1992 թ. մայիսի 8-ին Լիսագորի կողմից եկող հրետանու որոտն ու գնդացրային ճարճատյունները ասես ճեղքում են օդի շերտը, զարնվում բերդաքաղաքի շրջապատող ապառաժներին, խուլ արձագանքով լցվում այրվող Շուշիի թաղամասերը: Ադրբեջանական բանակի կազմավորումները փորձում էին վերադասավորել ուժերն ու կանգնեցնել իրենց խուճապահար փախուստը:

Բերդաքաղաքից հաջորդ օրը ևս ավտոմատային ճարճատյուններ էին լսվում: Սակայն դա ազատամարտիկների օդ արձակած հաղթական կրակահերթեր էին:

Բերդաքաղաքի «Երևանյան» հին դարպասների հետքն անգամ չէր մնացել: Միայն ձախ կողմում պարսպի մնացորդները հիշեցնում են, որ այն երբեմնի անառիկ բերդի գլխավոր մուտքերից մեկն է եղել: Մի պահ մտքով հայտնվում եմ 19-րդ դարի Շուշիում: Ահա Երևանյան մուտքից ծանրորեն ներս է մտնում Նախիջևանից և Ղափանից եկող ուղտերի քարավանը՝ բեռնավորված աղով կամ պղնձով: Մինչև թաթարական թաղը ձգվող Երևանյան փողոցի երկու կողմերում խանութներ են, արհեստանոցներ, քարակապ պատուհաններով ու մուտքերով երկհարկանի տներ, որոնք լապտերների ուղեկցությամբ ձգվում են մինչև քաղաքային փոստն ու Չերքեզենց խանութները: Անցնում եմ ժամհարյանների հիվանդանոցը: Քիչ ներքևում սուրբ Մարիամայ օրիորդաց ուսումնարանն է: Թվաց, թե ահա երջանիկ ժպիտը դեմքին դուրս կգա Պերճ Պռոշյանը, գոհ, որ բարերար տիկին Մարիամ Հախումյանի ու հայոց թեմական ուսումնարանի տեսուչ Պետրոս Շանշյանի հետ, համատեղ ջանքերով, հիմնեցին Շուշիի օրիորդաց ուսումնարանը:

Խանութի առջև, ծմերուկի հսկա կույտի մոտ հավաքված մարդիկ գրազ էին գալիս. *«ծմերուկի մեջը կարմի՞ր է, թե սպիտակ,»* կամ թե՝ *«որքա՞ն է կշռում»*, *«Երբ կտրեցին ու համոզվեցին, որ կարմիր է, մի նոր գրազ բռնեցին. կորիզների թիվը զո՞ւյգ է, թե կենտ...»*: Հայկական թաղամասի կենտրոնում հրապարակն է, որը եվրոպական քաղաքների օրինակով շուկայի է վերածվել: Այն դեռևս պահ-

պանում էր «Թոփխանա» անվանումը: Հավանաբար, այն 18-րդ դարում որպես հրետանու զորակայան էր ծառայել. իսկ հաջորդ դարում դա շուշեցիների տնտեսական ու մտավոր կյանքի կենտրոնն էր: Ուղտերի ու ջորիների քարավանի մի մասը այստեղ է հասնում՝ բերելով նաև քարածուխ, փայտ, այլ մթերքներ: Մի պատանյակ ջուր է վաճառում՝ իշաբեռը 20 կոպեկ: Տարեց մարդիկ, խանութների մուտքի աստիճաններին նստած, անցյալից են զրուցում: Հիշում են այն Մելիք-Շահնազարին, որը Շուշի բերդը Փանահին գիջեց ու այդպես խորտակեց հայոց Արցախի երբեմնի հզորությունը: Սակայն մի ծեր մարդ, հավանաբար, դավաճան մելիքի շառավիղներից, կամ Ավետարանոց գյուղից բերդաքաղաք տեղափոխված գյուղացի, դժգոհ բողոքեց մելիքի նկատմամբ այս ամբաստանության դեմ: Իսկ մտավորականների խումբը հրապարակի մի անկյունում բարձրաձայն վիճում էր քաղաքական հարցերի շուրջը: Մեկը Թիֆլիսից նոր ստացած «Մշակից» բարձրաձայն հոդված էր ընթերցում: Հրապարակից ոչ հեռու գտնվող ակումբի եռահարկ շենքի ներսից լսվում են թղթախաղով տարված տղաների աշխույժ բացականչությունները: Կանայք իրենց տան պատերի տակ կարպետ էին փռում, նստում, իլիկ պտտեցնելով թել մանում կամ գուլպա գործում ու զրուցում: Մյուսները եկեղեցի էին գնում, իրենց որդիների համար հարսնացու ընտրում:

Կրաքարով սալարկված մի նեղ փողոց եմ մտնում: Ջորին, գլուխը անցկացրած պարկի մեջ, հափշտակված պարկի պարունակությամբ, ողջ մարմնով փակել էր փողոցի անցուդարձը: Ասես տեսնում եմ ազգագրագետ Երվանդ Լալայանին, որը ինչ-որ ծես հիշելով, նեղ փողոցում կանգնում, գրանցում է տետրում, բայց, հանդիպելով փողոցը փակող ջորուն, դժգոհ հետ է դառնում:

Թվաց, թե փոստի մոտ հանդիպեցի մեծ լեզվագետ Հրաչյա Աճառյանին, որը 16 տարի Շուշիում հայոց լեզու էր դասավանդել: Ահա նա ծանոթ գյուղացու հետ զրուցելիս հանկարծ ընդհատում է վերջինիս, կրկին հարցնում, ապա գրանցում անծանոթ բառերը: Նրան ավելի շատ հետաքրքրում էին բարբառային արտահայտությունները, քան զրույցի թեման: Երևանյան փողոցի աջ կողմում շինարարական եռուզեռ էր: 18-րդ դարի երկրորդ կեսի սկզբներին Շահկերտից Շուշի գաղթած հայերը, որոնք հիմնել էին Ղազանչեցոց թաղը, ձեռնարկել են նոր եկեղեցու կառուցումը: Ղազանչեցոց

եկեղեցուց քիչ վեր Շուշիի հին գերեզմանոցն էր: Այնտեղ ես տեսել էի պատկերազարդ բուսական և երկրաչափական մոտիվներով հարյուրավոր տապանաքարեր, որոնք կրում էին Արցախին յուրահատուկ հայկական արվեստի կնիքը: Սակայն այդ քարերից և ոչ մեկը չկար: Ինչ-որ հրաշքով չքացել էր գերեզմանոցը: Գուցե ես շփոթել եմ տեղը: Սակայն մացառների մեջ մի քարակույտ գրավեց իմ ուշադրությունը: Քարաբեկորների վրա հայոց երկաթագիր տառեր էին նշմարվում: Ես հասկացա ամեն ինչ: Ադրբեջանական իշխանությունները չէին բավարարվել քաղաքից հայ բնակչությանը դուրս քշելով: Շուշիի մասին Բաքվում վերջերս հրատարակված գրքերը ուժ կունենային, եթե վերացվեին հայ բնակչության հետքերը՝ հայ գրերով գերեզմանոցները: Եվ ահա նրանք ջարդում էին տապանաքարերը, մանր բեկորների վերածում, դրանք լցնում հենց գերեզմանոցի տարածքում կառուցվող առանձնատների հիմքերը:

Մի պահ Շուշիի փողոցներում տարածվեց խուճապը. մարդիկ թաքստոցներն էին նետվում: Օդում ադրբեջանական ռազմական ինքնաթիռ էր հայտնվել, որը կրակահերթեր էր տեղում քաղաքի վրա, ռումբեր արձակում: Ես շվարած կանգնել էի: Գնդակների տարափը անցավ հին գերեզմանոցով, կպավ եկեղեցու կիսավեր գմբեթին: Եկեղեցին ադրբեջանցիները ռազմապահեստի էին վերածել, և Սու-25 ինքնաթիռի օդաչու Կուրբանովը ձգտում էր նշանառու կրակահերթով պայթեցնել այստեղ թողած «Գրադ» կայանքի արկերը: Հայ զենիթայինները փորձում էին օդում որսալ իրենց տոնական տրամադրությունը փչացնող ինքնաթիռը: Երբ ինքնաթիռը հեռացավ, ու չքացավ խուճապը, ես կրկին ներսուզվեցի անցյալ դարի Շուշիի մթնոլորտը:

Անցնելով Չերքեզենց խանութները, թեքվեցի աջ և հայտնվեցի Շուշիի թեմական դպրոցի բակում: Ասես զրուցում էի շուշեցի հռչակավոր պատմաբան Լեոի նկարագրած դպրոցի անվանի ուսուցիչների, շրջանավարտների հետ: Մի պահ զգացի կրակե լեզվակների տաքությունը: Քաղաքն այրվում էր: Ժամանակների մի խառնաշփոթ էր առաջացել իմ ուղեղում: Գուցե սա 1906 թվականի օգոստոսն է, երբ թաթար հրոսակները հարձակվել էին հայոց թաղի վրա, հրկիզել նրա մի մասը: Բռնկվել էին Խանդամիրյան թատրոնի, թեմական ուսումնարանի շենքերը, տասնյակ առանձնատներ: Գուցե և 1920 թվականի մարտն է, երբ թուրք-թաթարական ազգայնա-

մոլ խմբերը հարձակվեցին Հայոց թաղի վրա և կրկին հրկիզեցին այն կոտորելով նրա բնակիչներին: Սակայն շուտով ես ուշքի եմ գալիս: Սա Շուշիի երրորդ աղետն է, 1992 թվականի մայիսը, երբ նահանջող ադրբեջանցիները որոշեցին այրել, ոչնչացնել քաղաքը՝ հայերին կրկին թողնելով ավերակները: Կրակե լեզվակներն ասես սահում են քաղաքի հին վերքերի վրայով, թողնելով հին հուշը՝ մոխիրն ու ավերակ պատերը: Ծխի քուլաների միջով անցնում եմ Շուշիի թուրքական թաղամասը: Շտապում եմ դեպի Զրաբերդի (Գանձակյան) դարպասը: Դեպի վար ձգվող փողոցում կլոր անցք նկատեցի, որի միջից հոսող ջրի ձայն էր լսվում: Ուշադիր զննեցի: Հինավուրց թաղածածկ տան երդիկ էր: Ադրբեջանցի պատմագիր Միրզա-Ջամալ Ջիվանշիրն ու ճարտարապետության պատմաբան է. Ավալովը ևս վկայում են, որ մինչ Փանահի գալը Շուշիի տարածքում, այնտեղ, ուր հետագայում կառուցվեց ադրբեջանական թաղամասը, հայկական հինավուրց բնակավայր էր եղել: Հակոբ սարկավագ Պողոսյանը Շուշիի մասին իր պատմական երկում գրում է. *«Տեղին ագարակ էր գիւղին անվանիլ Շուշի»*[1]: 1728 թ. շիրվանցի զորավար Ավան հարյուրապետի հեռանալուց հետո Շուշին կորցնում է իր պաշտպանական նշանակությունը, և բերդաքաղաքի դիմացի սարահարթին փռված Շոշ գյուղի բնակիչների համար այն որպես ագարակ էր ծառայում:

Ես շտապում եմ հայտնվել բերդի հյուսիսային՝ Գանձակյան մուտքի վերևի հարթակում: Տասը տարի առաջ այստեղ տեսել և նկարահանել եմ Շուշիի ավերված հայկական եկեղեցիներից հավաքած քարե մասունքները՝ քանդակների, խաչարձանների մի հավաքածու, որն ինձ ցույց էր տվել մի երիտասարդ ադրբեջանցի: Քարերը լուռ էին: Ասես կտրել էին նրանց լեզուն: Բայց ես լսում եմ ճիչերը... Գերեվարված հաշմանդամ քարերը... Մեղրեցոց, Ագուլեցոց, Կուսանաց անապատի, Շուշիի մյուս հայկական հուշարձանների բեկորները պահանջում էին քաղաքն ազատել գերությունից: Խաչված Քրիստոսի մոտ Աստվածամայրը զուսպ, համբերատար հայացքը աչքերիս է հառել... Եվ ահա դատարկ էր հարթակը... Չկան քրիստոնեական մասունքները: Ասես զոհվել են, որ փրկեն քաղաքը, ազատեն գերությունից:

Ստեփանակերտից եկող ճանապարհը Շուշիի հայոց գերեզմանոցը երկու մասի էր բաժանել: «Մեռածները կերան ապրողներին»[2] ու այլ խորագրերով աղմկարար հոդվածներ տպագրելով իրենց թերթերում, Բաքվի իշխանությունները փորձում էին արդարացնել Շուշիի հայոց գերեզմանոցը վերացնելը: Այնպես նախագծեցին, որ ճանապարհը հատի-անցնի գերեզմանոցը: Մնացած հատվածներում անտառատնկման միջոցով քողարկվեցին տապանաքարերը: Իսկ տեղահանված քարերը հիմնականում օգտագործվում էին շինարարության մեջ: Տապանաքարերի մի մասն էլ տեղափոխեցին բանտ՝ սալահատակելու այն հրապարակը, ուր ամեն առավոտ հավաքում էին բանտարկյալներին: Այստեղ քարերն այնպես էին շարված, որ դամբանագրերը չերևան: Բայց ահա հարթակի մի անկյունում ուրվագծվում են երկու խաչքարեր. դրանք բանտարկյալների ու բանտի վերակացուների ոտքերի տակ այնքան են մաշվել, որ խաչերն ու զարդաքանդակները հազիվ են նշմարվում: Այնուամենայնիվ, խաչազարդերի ոճից զգացվում են 15-17-րդ դարերի արցախյան զարդերին յուրահատուկ մոտիվները: Ես հասկացա, որ դրանք Շուշիում կերտված այն խաչքարերն են, որոնց մասին տեղեկություններ կան Հայաստանի պետական արխիվներում[3]: Դրանցից մեկը ստեղծվել է 1451 թվականին, մյուսը՝ 1508-ին: Դրանք Շուշիի հինավուրց բնակավայրի այն անհերքելի վավերագրերն են, որոնցից այնպես վախենում էին Ադրբեջանի թե՛ իշխանությունները և թե՛ գիտնականները, որոնք ջանք ու եռանդ չէին խնայում ապացուցելու և հավատացնելու աշխարհին, թե իբր Շուշի բերդաքաղաքը հիմնել է Փանահ Ալին, և զուտ ադրբեջանական քաղաք է: Այս խաչքարերը վկայում են, որ Շուշի բերդում 15-16-րդ դարերում հայկական կյանքը շարունակվել է:

Շուշիում 15-րդ դարում գոյատևած հայկական իրականության մեկ այլ ապացույց էլ 1428 թվականին գրիչ Տեր-Մանուէլի ստեղծած Ավետարանն է: Հիշատակարանում գրիչը նշում է. *«արդ գրեցաւ աստուածագիծ սուրբ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ և ապիկար գրչի տէր Մանաւելի, ի թվականութեանս Հայոց ՊՀԷ (1428)... ի վիճակս Ամարասաց, ի գեղս Շուշո կոչեցեալ, անդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի կաթողիկոսութեան տէր Յոհանիսի...»*[4]: Մի՞թե այս դարում էլ հայկական հոգևոր-մշակութային կյանքն սպառվեց Շուշի բերդավանում: Բնավ: Մենք հավաստի վկայություններ ունենք նաև հաջորդ ժամանակների վերաբերյալ: Շուրջ մեկուկես դար հետո էլ նույն Աստվածածին եկեղեցու գրչատանը

գրվել է մի այլ Ավետարան: Ահա նրա հիշատակարանի համապատասխան նշումը. *«Կատարեցի... զմաքրափայլ Աւետարանս ի փառս նմանե գաւառս Վարընթոց, ի գաւառս, որ կոչի Շուշոյ, ... Անդ հովանեաւ սուրբ Աստուածածնին: Գրեցաւ ի թվականութեանս ՌԻԴ»* (1575)[5]:

Ես փափագում էի տեսնել Շուշիի վաղեմի գոյության երկու այլ վկաների՝ զույգ դղյակները, որոնց մուտքերին բաքվեցի գիտնականներ Ա. Ալիզադեն ու Ա. Սարկիսովը տեսել և արձանագրել են կառուցման թվականը: Այս ճարտարապետների զեկուցման մեջ ասվում է, որ Շուշիի պարիսպներից ներս, *«քաղաքի հարավ արևելյան մասում կան երկու կառուցվածքներ, որոնք իրենց հատակագծով նման են իրար. Իբրահիմ խալիլ խանի և Մելիք Շահնազար Բ-ի ամրոցները»*[6]:

Իբրահիմ խանի ամրոցը չորս կողմից փակված է բերդի պատերով ու աշտարակներով: Մելիք Շահնազարի ամրոցի պատերին եղել են հրակնատներ:

Գլխավոր մուտքի միացման կամարի վրա գրված է ամրոցի կառուցման թվականը՝ Հիջրայի 1121 թ., այսինքն մեր թվարկության 1709-10 թվականը»: *«Ուրեմն, այս ամրոցները կառուցված են եղել քաղաքի բերդի շինարարությունից (Փանահի ու նրա ցեղակիցների Շուշի տեղափոխվելուց) շատ առաջ»*,- եզրակացնում են զեկուցագրի հեղինակները [7]: Ըստ ամենայնի, մուտքի բարավորի վրա եղել է «Հայոց Ռ�ճԾԸ» (1709 թվականի) գրություն: Այս հինավուրց ապարանքները քաղաքի Երևանյան մուտքի մոտ են, ու բազմաթիվ վավերագրեր և մատենագրություններ վկայում են, թե իրականում ով է եղել այդ հուշարձանների կառուցողն ու տերը: Սակայն ադրբեջանցի պատմագիրները համառորեն ժխտում կամ անտեսում են այս անհերքելի վկայագրերը: Ահա է. Ավալովը, առանց հիմքի, ուղղակի ժխտում է դա, կամայականորեն փոփոխում ճարտարապետական հուշարձանի կառուցման թվականը 60 տարով, հարմարեցնում թափառական սարընջալու ցեղի Շուշիում ամրանալու ժամանակի հետ (Հիջրայի 1182 թ., որ համապատասխանում է մ.թ. 1768 թ.)[8], շարունակելով ադրբեջանական և թուրքական իշխանությունների Շուշիի հայկական լինելը ժխտող և համառորեն «ադրբեջանականացնող» ծրագրային քաղաքականությունը, որի հիմքը դրել էին 19-րդ դարի ադրբեջանցի պատմիչներ Միրզա Ջամալ Ջիվանշիրն ու Միրզա Ադիգյոզալովը: Շուշիի մասին առաջին անգամ գրավոր տեղեկությունը հայտնում է 13-րդ դարի հայ պատմագիր Կիրակոս Գանձակեցին: Նա նկարագրում է, թե ինչպես է Խաչենի և ողջ Արցախի Մեծ իշխան Հասան-Ջալալ Դոլան Գրիգոր Տղայի, Իշխան Դեսումի, Մարկոս վարդապետի և Գրիգոր եպիսկոպոսի հետ *«Դերբենտի դռնով, որ նորա պահակն է»* 1251 թվականին գնացել են Մեծ զորավար Բաթուի որդի Սարթախի մոտ: *«Սարթախը տարավ իր հոր մոտ, մեծարեց և նրան* (Հասան Ջալալին -Բ.) *տվեց իր հայրենիքներ Չարաբերդը, Ականան և Կարկառը, որ նրանից առաջ խլել էին թուրքերն ու վրացիները»*[10]: Գանձակեցին ի նկատի ունի Թիֆլիսի Զաքարյան իշխաններին: Չարաբերդը Ջրաբերդն է, Ականան Վերին Խաչենի բերդը, իսկ Կարկառը հենց այսօրվա Շուշին է, քանի որ Կարկառ գետակի վրա Շուշիից բացի նշանակալից այլ բերդ գոյություն չի ունեցել[11]: Ինչպես երևում է, բերդի Կարկառ (քարակույտ) անունից էլ իր անունն է ստացել նրա ստորոտով հոսող գետակը, ինչպես և իշխանությունը: Մեծ իշխան Հասան Ջալալն այս երեք բերդերի համար Սարթախի հոր մոտ էր հասել, քանի որ դրանք այն առանցքային հենակետերն են, առանց որոնց նա չէր կարող տիրել Արցախ աշխարհին: Ուրեմն, միջնադարում ևս Կարկառ-Շուշին որպես պաշտպանական ամրություն կարևոր դեր ուներ Արցախի անվտանգության ապահովման խնդրում: Երևանի մատենադարանում պահվող ձեռագիր Ավետարանի հիշատակարանում ընդօրինակողը հայտնում է. *«Երեկ շահ Աբբաս տիրեց իմ Ղարաբաղին, Գանձակցի պարոն տեր-Հովհանը շատ գերիներ ազատեց, շատ գրքեր, շարակնոցներ ետ դարձրեց: Նման մի շարակնոց ես տվեցի շուշեցի տեր Ավանեսին 1607 թվականին»*: Ուրեմն, Շուշին որպես բնակավայր ու մշակութային կենտրոն իր գոյությունը շարունակել է 17-րդ դարի սկզբներին ևս:

Շուշիի տեղանվան մասին գոյություն ունի այն կարծիքը, թե այն ստացել է սարահարթի դիմաց, Կարկառ գետի աջ ափին գտնվող Շոշ գյուղի անունից, դառնալով Շոշի-Շուշի բերդ: Դա միայն հնարավոր վարկած է, քանի որ գրավոր առաջին աղբյուրներում տե-

*Երևանի Սաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր N 2745, էջ 1., ինչպես և Бакур Карапетян, Самвел Карапетян, "Тайны Пандзака (Кировабада и Северного Арцаха)", М, стр 23

սանք, որ բերդի անունը Շուշի է: Ըստ Լեոի Շոշ գյուղը կարող է իր անունը Շուշի բերդից ստացած լինել:

* * *

Շրջում եմ անտառի մեջ քողարկված գերեզմանոցում, ու դամբանագրերից իմ առջև հառնում է 19-րդ դարի Շուշին: Երկաթագիր տառերի արանքում տեսնում եմ նրա բնակիչներին, քաղաքի մշակութային կյանքը, պոեզիան, ողբերգություններն ու երջանիկ պահերը, խաղաղ, ծաղկուն օրերն ու ջարդերը...

«Արագահաս մանգաղ մահուան,
Ցատ վաղ հնձեց կենացս թելեր,
Մինչ նոր բողբոջս կծաղկեին,
Թառամեցայ շիրիմիս ներքոյ,
Մինչև մտեալ յուսման ընթաց
Ավաղ կորեալ տենչս անկատար:

Ի ներքո շիրիմիս ամփոփեալ դնի մարմին վաղաթառամ պատանուայ Նիկողայոսի Առաքելեան Թումանեանց, փոխեցավ առ ած ի 1880 ամի ի հասակի 16 ամա»:

Կողքի թեքված տապանաքարին կարդում եմ.

«Ելի ի Հօրէ, եկի յաշխարհ,
Դարձեալ թողում զաշխարհ, երթամ առ Հայր,
Ես՝ Համբարձում Խաչատրեան Խաչատրեանս,
Որ ամփոփեալ դնիմ ի սոյն տապանի.
Վախճանեալ իննսուն ամաց հասակիս
Շուշի 1892 ամի յունվարի 14»

Մեկ այլ շիրմաքարի վրա.

«Ինչո՞վ յարգենք քեզ մայր մեր բարեպաշտ,
Որ ունիս մեզ վրայ անհամար երախտ.
Քավ թե մարմարե կամ ոսկե արձան.
Կարեն լինել քեզ համապատասխան»:

Մյուս երեսին՝

«Արժան է քեզ քո անուն Թազագյուլի,

Թագ էիր մեզ մեր հայր Համբարձումի,
Որինուտիւն քո ծնողի Մարգարիտ Խագյուլի,
Որ ծնան մեզ համար ծնող ցանկալի,
1892 յունիսի 22-ի հասակի 70-ամաց»:

Շրջված շիրմաքարերի արանքում կանգուն մնացած մի տապանաքարի վրա գրված է.

«Դժբախտ էի կե(ան)քս, իմ բաղդի բարս,
Բայց մատաղ հասակս կարծ էր տերս,
Ախ ավաղ, խեղճիս մի ցավ տարաժամ
Ջարնեց սրտիս մեջ, մարեց յարաժամ,
Մահացու քամին փչեց իմ վրա,
Ծածկեց աչքերս, զցեց գերեզման:

Ցիրմիս տակ հանգչում է վաղամեռիկ Ավետիս Թովմասեանի, Որը վախճանուեց 1901 ամի ապրիլի 5-ին»:

Քառանիստ հուշարձանի նիստերին արդեն մի ողբերգության պատմություն է, որ ցնցել է ողջ Շուշիի բնակչությունը:

«Իմ գնդակը քեզ սպանեց,
Քո մահն էլ ինձ, Ովսաննա,
Ներիր, քույրիկ, ես անմեղ եմ,
Մարդ փորձանքի է ենթակա»:

Հաջորդ նիստին քրոջ պատասխանն է.

«Քո գնդակը կրծքիս դիպավ,
Հայկ, քո խաղը ինձ մահ տուաւ,
Աչքս ընդմիշտ փակեցի ես,
Քեզ ներում եմ, դու անմեղ ես»:

Մյուս նիստերին կարդում եմ.

«Ովսաննա Անդրեասյան Թոնիեանց, ծնավ 14.02.1880 ամի մեռավ 1.02.1897 ամի
Հայկ Անդրեասյան Թոնիեանց, ծնավ 1.02.1883 ամի մեռավ 14.02. 1897 ամի»:

Կարոտ են ուսումնասիրության ոչ միայն Շուշիի 19-րդ դարի հայկական գերեզմանոցների դամբանագրային արվեստը, որը գրականության ուրույն մի ճյուղ է և նորանոր էջեր է բացում Շուշիի

կյանքից, այլև ճոխ բուսական ու երկրաչափական զարդամոտիվներն ու պատկերաքանդակները, որոնք ևս հայկական արվեստի արցախյան ճյուղի յուրօրինակ նմուշներն են: Անշուշտ, դրանք հենց Շուշիի տարածքում հայտնաբերված հինավուրց հուշարձանների 10-13-րդ դարերի խաչքարերի, տապանաքարերի արվեստի օրգանական շարունակությունն են:

1981 թվականին Շուշիի սարահարթի հյուսիսային լանջին այստեղ հնուց գոյություն ունեցող հնագույն գերեզմանոցում շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերել են հինգ խաչքարեր, որոնց մասին տեղեկացնում է արվեստաբան Շահեն Սկրտչյանը[12]: Հայտնաբերված ամենահին խաչքարն ունի «թիւ ՆԲ (971) թվագրություն, որը միջին մեծության, պարզ խաչքար է: Մյուս խաչքարը պարունակում է «թիւ ՉԱ (1252) ի... Հաս... յ»արձանագրությունը: Հայ մատենագիտական աղբյուրները Շուշիի սարահարթը միշտ համարել են Վերին Խաչենի տիրույթի մի մասը, որն ըստ Մ. Բարխուտարյանցի ընդգրկում էր Կարկառի ձախ ափից մինչև Թարթառ (Տրտու) գետը և ամենևին էլ պատահական չէ, որ այս խաչարձանների վրա առկա է Հասան անունը, որը, հավանաբար, Խաչենի տեր Հասան Ջալալին է վերաբերում: 13-րդ դարի այս խաչարձանը սարահարթի սպիտակ կրաքարից է այս դարաշրջանին յուրահատուկ զարդամոտիվներով ու արցախյան արվեստին բնորոշ որսի տեսարանի բարձրաքանդակով: Երրորդ խաչքարն ունի «սբ. խաչս փրկութի» արձանագրությունը: Խաչքարերից մեկի վրա ձեռքերը խաչած կին է քանդակված: Այս հուշարձանների գոյությունը ամենևին էլ պատահական չէ, քանի որ Շուշիում մինչև վերջերս հայտնի են մի շարք սրբատեղիներ, ինչպիսիք են «Քամու խաչ»[13] և Սարիբեկի սրբավայրերը, որոնք սերնդեսերունդ մեզ են հասել վաղագույն ժամանակներից: Միջնադարում դրանք վեր են ածվել քրիստոնեական խոշոր օջախների: Բերդաքաղաքի պաշտպանության համակարգում, իհարկե, կարևոր դեր են կատարել այն բազմաթիվ քարանձավները, որոնք սև խոռոչների ձևով բացվում են անդնդախոր կիրճերում: Դրանցից մեկը բացվում է Երևանյան դարպասների մոտ, բերդաքաղաքը կապում Քարին տակ գյուղի կողմից բացվող «Ավանի կարան» քարանձավի հետ: Արցախը իր անառիկ բերդերի համակարգով, անմատչելի քարանձավներով միշտ մի հուսալի պատվար էր Կուր-Արաքսի (Առան) ու Արարատյան դաշտավայրերի հայության համար: Շուշին Արցախամուր աշխարհի բերդերից էր, որի պաշտպանական համակարգի մեջ են մտնում թե՛ սարահարթը և թե՛ լեռան մեջ բացված բազմաթիվ խոռոչները՝ քարանձավները:

Հենց այս քարանձավային համակարգի շնորհիվ է, որ բնիկները կարողացել են օտարների նվաճողական-կողոպտչական հարձակումներից պաշտպանել իրենց գոյությունը: Շնորհիվ այն հանգամանքի, որ Արցախի բնակիչները միշտ էլ հայեր են եղել, երկրամասն ի սկզբանե ընդգրկված է եղել Մեծ Հայքի կազմի մեջ: Իզուր չէ, որ Մ. Խորենացին (5-րդ դար) գրում է, որ դեռևս աղարշակ թագավորի ժամանակ (մ.թ.ա. 2-րդ դար) Մեծ Հայքի պետական սահմանները որոշվել են հայոց լեզվի տարածման եզերքով՝ *«զեզերք հայկական խօսիցս»*[14]: Իսկ հռչակավոր լեզվագետներ Թամազ Գամկրելիձեն ու Վյաչեսլավ Իվանովը ապացուցում են, որ մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներում Հայկական լեռնաշխարհը Անատոլիայի հետ հանդիսացել է հնդեվրոպական լեզուների ծննդավայրը, որ հայերի, իրանցիների ու հույների նախնիները նույն արմատից են սերում...[15]: Թե՛ լեզվաբանական և թե՛ հնագիտական (խեցեղեն, անիվի հայտնագործում) հետազոտությունները վկայում են, որ հայերը, փաստորեն, Հայկական լեռնաշխարհի բնիկներն են, իսկ ժամանակակից հայերենն իր 52 բարբառներով՝ հնդեվրոպական լեզվի գլխավոր ճյուղավորումներից մեկն է: Այս գիտնականները ապացուցում են, որ ըստ «ծովի հետեւից ծագող Արեւը» խեթական առասպելի, անատոլիական բարբառների նախահայրենիքը հանդիսացել է Վան և Ուրմիա լճերի շուրջ ընկած տարածքը՝ Հայկական լեռնաշխարհը[16]: Իսկ Արցախյան բարբառը, որ հին ժամանակներից շատ քիչ է փոփոխություններ կրել, քանի որ նրա անմատչելի բերդերն ու քարանձավները ապահովել են ոչնչացումից, ու զանգվածային տեղահանության (միգրացիա) չեն ենթարկվել, իր մեջ մինչև օրս պահպանել է ոչ միայն հին հայերենի ձևերը, այլև հնդեվրոպական բազմաթիվ արմատներ, որը բացակայում է ժամանակակից գրական հայերենում: Այս երևույթը գալիս է կրկին հաստատելու Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի եզրահանգումների ճշմարտացիությունը:

Արցախցիները, շնորհիվ անմատչելի լեռների ու պաշտպանվելու ունակության, իրենց բարբառը քիչ փոփոխություններով պահպա-

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

նել են մինչև օրս: Այս գործում իր կարևոր նշանակությունն է ունեցել և Շուշիի սարահարթը, նրա տասնյակ քարանձավները: Շուշիի լեռան ներսում կրաքարի հարուստ շերտերը լուծվել են ստորերկրյա ջրերի մեջ, և կարստային երևույթների հետևանքով առաջացրել տասնյակ քարանձավներ: Հետագայում այդ քարանձավների բնակիչները, հայոց պետականության կազմավորումից հետո, որպես պաշտպանական հենակետ են օգտագործել նաև սարահարթի տարածքը, ի նկատի ունենալով երեք կողմից բնական անմատչելիությունը: Շուշիի քարանձավները, որպես պաշտպանական համակարգ իրենց նշանակությունը պահպանել են մինչև 18-րդ դարի առաջին կեսը՝ Հայոց Սղնախների ժամանակաշրջանը:

ՄԱՍ Ա (1701-1725 թթ.)

1. ՀԱՅՈՑ ՍՂՆԱԽՆԵՐ

1701 թվականի հուլիսի սկզբներին էր, երբ Սմոլենսկի վոյեվոդա Շերեմետևը հաղորդում է ռուսաց ցար Պետրոս Առաջինին, որ երկու օտարերկրացիներ են ժամանել Լիտվայի սահմանից և նրա մոտ են գալիս Ավստրիայի Կայսր Լեոպոլդի, Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու և Պֆալցի կյուրֆուրստ Հովհան-Վիլհելմի ցարին հասցեագրված նամակներով: Օտարերկրացիներից մեկը Իսրայել Օրին է, մյուսը՝ խարբերտցի Մինաս վարդապետ Տիգրանյանցը[17]: Իսրայել Օրին երկրորդ անգամ էր ուղևորվել Եվրոպա, հզոր իշխանավորներին տանելով հայ եկեղեցու և իշխանների նամակները, խնդրելով ազատագրել Հայաստանը պարսից և թուրքական բռնապետությունների ճիրաններից:

Ավստրիայի, Լեհաստանի և Պֆոլցի հզոր տերերը հայ բանագնացին խորհուրդ են տվել դիմելու Ռուսաստանի օգնությանը, քանի որ առանց Մոսկվայի մասնակցության այդ գործը գլուխ չի գա: Եվ ահա Պետրոս Առաջինը, որին շատ էր հետաքրքրում դեպի հարավ պետության սահմանների ընդլայնումը, 1701 թվականի հոկտեմբերի 7-ին Մոսկվայում, կանցլեր Գոլովինի տանը, հանդիպում է Իսրայել Օրուն և նրա օգնականին՝ Մինաս վարդապետին: Օրին Հայաստանի ազատագրման մի ընդարձակ ծրագիր է ներկայացնում ռուս ինքնակալին: Ըստ այդ ծրագրի ցարը պետք է կազակներից և չերքեզներից կազմած 25 հազարանոց զորք ուղարկի Հայաստան: 10 հազարանոց զորախումբը պետք է ափ իջնի Նազաբադ նավահանգստում, շարժվի դեպի Շամախի, տիրի Հայաստանի չորս ամրություններին (հավանաբար, Օրին նկատի ուներ Ջրաբերդը, Գյուլիստանը, Քթեշն ու Շուշին), ապա Արցախի մելիքների հետ միացյալ ուժերով արշավեն Օրդուբադի վրա: Օրին նկատի ուներ այն հանգամանքը, որ Օրդուբադի հռչակավոր զինագործներն են Պարսկաստանի բանակի զենք մատակարարողը: Այստեղ վերագի-

նելով բանակը, կրկին համալրվելով զանգեզուրցի կամավորականներով, կգնան Երևանի վրա:

Ցարը հավանություն տվեց այս ծրագրին և խոստացավ իրականացնել այն:

18-րդ դարի սկզբներին Հայաստանում սկիզբ առավ ազատագրական շարժումը Իրանի շահական լուծը թոթափելու համար: Այս շարժման օրրանը Արցախ աշխարհն էր: Իսկ Հայաստանի մեծ մասը դեռևս ուշքի չէր եկել 17-րդ դարի սկզբին պարսից շահ Աբբաս Ա-ի (1585-1628 թթ.) ձեռնարկած ծանր հարվածներից: Որպեսզի ամայացնի իր արևմտյան սահմանները, նա Հայկական լեռնաշխարհի իրանամերձ տարածքներից հայ բնակչությունը տեղահանեց և քշեց Պարսկաստանի խորքերը՝ այդպես գոյացնելով հսկայածավալ դատարկ տարածքներ: Պարսից խորամանկ ու դաժան քաղաքագետը մտածում էր, որ թուրքական բանակը դեպի Պարսկաստան արշավելիս հանդիպելով այս ամայությանը, առանց պարենի կմնա և ստիպված ետ կդառնա կամ թե թուլացած, ուժասպառ բաժին կդառնա պարսկական զորքին: Իսկ որպեսզի հայերը չվերադառնան իրենց հայրենի օջախները, հրամայեց այրել անտառները, հացի դաշտերը, թունավորել ջրհորները:

Ի տարբերություն Հայաստանի այլ մասերի, Արցախը այն վիթխարի միջնաբերդն էր, որն իր ներքին ուժով, ներքին միասնականությամբ և բնական պայմանների շնորհիվ պահպանել էր իր ամբողջականությունը: Մեկը մյուսին հաջորդող օտար նվաճողների՝ մոնղոլների, ապա՝ Լենկ-Թեմուրի արշավների ժամանակ պահպանել էր իր որոշակի ինքնուրույնությունը: Ամենակարևորը՝ անխաթար էր պահպանել իր ազգային նկարագիրը: Արցախը փաստորեն անառիկ բերդերի մի հսկա համակարգ էր, որը ամբողջովին գրավել և հպատակեցնել ոչ մի ուժի չէր հաջողվել: *«Այստեղ ցեղային ինքնորոշման և ինքնապահպանման բնազդը գերակշռող է հանդիսանում կենսական մյուս բոլոր պայմաններից»*,- գրում է Լեոն[18]: Երբ Հայաստանը ներքին խռովությունների և երկպառակությունների պատճառով թուլանում էր և նվաճվում օտարների կողմից, արցախցիները անմիջապես փորձում էին ճկուն դիվանագիտության ու սեփական ուժի համադրմամբ ինքնավար պետական կարգավիճակ ստանալ և պահպանել ամբողջականությունը: Այդպես էր և 4-րդ դարում Հայաստանը Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև բաժանումից հետո: Առանձին դեպքերում Արցախը ստեղծում էր իր ինքնուրույն թագավորությունը:

Հայ իշխանների վեհապետական իրավունքները ճանաչեց ու օրինականացրեց Սեֆյանների Պարսկաստանը: Հայ իշխանները իրենց հերթին պարսից շահին էին ճանաչում որպես ամենաբարձր իշխանություն և նրանցից էլ ստանում էին «մելիք» տիտղոսն ու տարածքները: Շահ Աբբաս Ա-ն և նրա հետևորդները հետևողականորեն իրականացնում էին այս քաղաքականությունը: Հայաստանի արևմտյան հատվածը հեծում էր Օսմանյան Թուրքիայի լծի տակ: Թուրքիան նպատակադրվել էր գրավել Իրանի հյուսիսային հատվածը, դրա միջոցով ճանապարհ բացել դեպի միջինասիական թուրքալեզու երկրները, այդպես տարածել թուրքական աշխարհածավալ կայսրությունը: Պարսիկներից ծանր պարտություններ կրելով, Թուրքիան շրջվեց դեպի Եվրոպա: 1683 թվականին օսմանյան բանակը, հասավ Վիեննայի պարիսպներին և պաշարեց Հաբսբուրգների գլխավոր կենտրոնը: Սակայն այստեղ ուղղակի ծուղակ էր պատրաստված նրանց համար: Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկին միացյալ զորքերով սոսկալի ջարդ տվեց օսմանյան բանակին: Թուրքերը թողեցին զորք ու ավար և փախան: Թուրքիայի բռնատիրության տակ գտնվող ժողովուրդների մոտ սկիզբ առավ մի հզոր ազատագրական շարժում, որը խարխլեց օսմանական պետության հիմքերը: Այս շարժումն էր, որ ալիք տալով հասավ Անդրկովկաս՝ Հայաստան և Վրաստան:

1696 թվականին Ազով ծովի ափին ռուսական բանակը, Պետրոս Մեծի գլխավորությամբ, պարտության մատնեց օսմանցիներին: Պետրոս Առաջինը հայտարարեց, թե ինքը մտադիր է Եվրոպական պետությունների հետ համատեղ արշավել դեպի Թուրքիա և ազատագրել քրիստոնյա ժողովուրդներին: Պետրոսը փայփայում էր դեռևս Կիևյան Ռուսիայի հզոր իշխաններից ու մոսկովյան ցարերից ժառանգած վաղեմի երազանքը, այն է՝ Կոստանդնուպոլսի (Ցարգրադ) ազատագրումը անհավատներից: Հաջորդ տարում թուրքական բանակը դաժանորեն պարտություն է կրում Տիսսա գետի մոտ, ավստրիական զորքերի հրամանատար Եվգենիոս Սավոյացիի կողմից, և ուժասպառ գլուխ խոնարհում: 1699 թվականի մարտին Կոտլովիցում դաշնագիր կնքվեց: Այդ ժամանակ էր, որ Պֆալցի կյուրֆյուրստ Հովհան-Վիլհելմը, հայոց դեսպան Իսրայել Օրու թելադրան-

քով ձեռնարկում է Հայաստանի ազատագրման գործը, որին միանում են Ավստրիական կայսր Լեոպոլդն ու Լեհաստանի Յան Սոբեսկի թագավորը: Սակայն այս ծրագրերին վիճակված չէր իրականանալու, քանի որ Եվրոպայում նոր պատերազմ էր սկսվում: 1700 թվականին մահանում է Իսպանիայի թագավորը, որը ոչ մի ժառանգ չուներ իր աշխարհասփյուռ տիրապետությանը իշխելու համար: Ժառանգորդներ էին համարվում Ֆրանսիայի Լուի 14-րդ թագավորը և ավստրիական Լեոպոլդ կայսրը: Իսպանիային ժառանգ էր կարգվել Ֆրանսիայի թագավորի թոռը: Սակայն Լեոպոլդը նպատակադրվել էր իր որդուն նստացնել Իսպանիայի գահին: Անգլիան ու Հոլանդիան դաշնակցում էին Ավստրիայի հետ՝ ընդդեմ Ֆրանսիայի, ու սկսվում է պատերազմը: Միևնույն ժամանակ սկսվում է և ռուս-շվեդական պատերազմը: Պետրոս Առաջինը՝ ձգտելով Ռուսաստանի համար ելք ստեղծել դեպի Բալթիկ ծով, 1700 թվականի նոյեմբերի 19-ին 45 հազարանոց զորքով պաշարում է Բալթիկի ափին Նարվա բերդը: Ռուսները այստեղ պարտություն են կրում, և Պետրոս առաջինը եռանդորեն սկսում է պատրաստվել նոր հարձակման:

Իսրայել Օրին Հովհան-Վիլհելմի օգնությամբ ստանում է Հռոմի պապի նամակը պարսից Սուլթան-Հուսեին շահին, որով կաթոլիկ եկեղեցու գլխավորը խնդրում է, որ շահը թույլ չտա հարստահարել իր հպատակ քրիստոնյաներին: Հայ դեսպանին այս նամակը անհրաժեշտ էր, որ այն շահին հասցնելու պատրվակով Պարսկաստան գնա ու, մինչ ռուսական արշավանքը, տեղեկություններ հավաքի Պարսկաստանի ու Թուրքիայի մասին: Օրին Եվրոպայում ձեռք է բերում հրազեն և զինամթերք՝ Աստրախանում կազմակերպելիք հայկական գունդը զինելու համար: Այն ռուսական զորքերի հետ պետք է մասնակցեր Հայաստանի ազատագրմանը:

1707 թվականի հունիսին 50 հոգանոց խմբով Իսրայել Օրին Մոսկվայից շարժվում է դեպի Աստրախան, ապա Շամախի: Այստեղ, սպասելով շահի թույլտվությանը Սպահան մեկնելու համար, մնում է շուրջ երկու տարի: Ինչպես երևում է՝ Օրին ամենևին չէր շտապում: Շամախիում գործեր շատ կային: Աշխարհի չորս ծայրերից գալիս էին հայ վաճառականներն ու Օրիի համար կարևոր լուրեր բերում: Շամախին առևտրական այն կարևոր կետն էր, որտեղ կապվում էին Ռուսաստանն ու հարավային երկրները՝ Չինաստանից մինչև Թուրքիա: Իսկ գլխավոր դերը պատկանում էր հայ վաճառականներին:

Դեռևս 1667 թվականին Ալեքսանդր Միխայլովիչ ցարը հատուկ հրամանով արտոնություններ էր շնորհել հայ վաճառականներին՝ սահմանելով նրանց մաքսային հարկերը: Միևնույն ժամանակ հանձնարարում է ստուգել հայ, հույն ու ղզլբաշ (պարսիկ) վաճառականների սնդուկների պարունակությունը, որպեսզի մարգարիտ ու գործվածքներ չթաքցնեն[19]: Հայ վաճառականներին արտոնություններով իրենց կողմն էին գրավում նաև Ռուսաստանի հաջորդ ինքնակալները:

Շամախիում Իսրայել Օրին պարբերաբար հանդիպումներ ունեցավ Եսայի կաթողիկոսի ու Արցախի մելիքների ներկայացուցիչների հետ: Օրիի հոգսերից մեկը Արցախում զինված ստորաբաժանումների ստեղծումն ու ամրապնդումն էր:

Ահա այս առիթով է, որ նա հանդիպում է Շիրվանում հայտնի անուն դարձած Ավան հարյուրապետին ու նրա եղբորը՝ Թարխանին: Շիրվանցի զորապետը, վարակվելով Օրիի հայրենասիրական շնչով և Եսայի Ջալալյան կաթողիկոսի անսահման հավատով դեպի ռուսական զենքը, հանձն է առնում իր խմբի հետ գնալ Արցախ և կազմակերպել երկրամասի պաշտպանությունը, ինչպես նաև նախապատրաստել ռուսական բանակը դիմավորելու և համատեղ ուժերով Հայաստանը ազատագրելու գործը: Ըստ երևույթին, Իսրայել Օրին Եվրոպայից բերած հրազենի մի մասը հատկացնում է Ավանին, մյուս մասը՝ հայ վաճառական Պետրոս դը Սարգիս Գիլանենցին, հայրենասեր մի մարդու, որն հանձն է առել ռուսական զորքերի կազմում կռվող հայկական հատուկ էսկադրոնի հավաքագրումն ու զինումը: Հայոց Սղնախները Արցախում հիմնադրվել էին 17-րդ դարի վերջերին: Այն ռազմական համակարգ էր և նպատակ ուներ երկիրը պաշտպանել արտաքին թշնամիներից: Սղնախների ժամանակաշրջանում երկրի գլխավոր դեմքերը ոչ թե ֆեոդալներն էին, այլ զինվորական հրամանատարները: Սկզբում Արցախում կազմակերպվել էր վեց Սղնախ, որոնք պաշտպանական մի ընդհանուր համակարգի մեջ էին ընդգրկված: Ահա այդ սղնախները.

Ա. սղնախ՝ Գարդման կամ Մլզնաբերդ,

Բ. սղնախ՝ Մեծ Կողմանց գավառ կամ Գյուլիստան,

Գ. սղնախ՝ Ջրաբերդ,

Դ. սղնախ՝ Կաչաղակաբերդ, կամ Խաչեն,
Ե. սղնախ՝ Ավետարանոց,
Զ. սղնախ՝ Տող ամրոց կամ Ցորաբերդ[20]:

Սղնախների գլխավոր ժողովատեղին Գանձասարի վանքն էր՝ Աղվանից կաթողիկոսի նստավայրը, ուր հավաքվում էին մելիքներն ու սղնախների հրամանատարները:

Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանցն իրականացնում էր Սղնախների քաղաքական ղեկավարությունը և միաբանության ոգին էր: Յուրաքանչյուր սղնախ իր հերթին կազմված էր մի քանի բերդերից և հսկում էր իրեն հանձնված տարածքներն ու բնակավայրերը: Շուշիի բերդը, որ վաղուց էր աչքաթող արված, մինչև Ավան հարյուրապետի գալը որևէ լուրջ դեր չուներ սղնախների համակարգում, վաղուց էր կորցրել իր երբեմնի անառիկ բերդի անունը: Չնայած իր ռազմական կարևոր դիրքին ու բնական հարմարություններին, որը նրան երեք կողմից անմատչելի էր դարձնում, Շուշին ամայի էր, քանի որ այն որպես բերդ վերականգնելու համար անհրաժեշտ էր ոչ միայն անսպառ եռանդ ու հսկա միջոցներ, այլև կազմակերպչական կարողություն ու նվիրվածություն: Կովկասյան ավարառու ցեղերի դեմ կռիվներում ռազմական մեծ փորձ ձեռք բերած Ավանը, ծանոթանալով բարձրադիր սարահարթի հնարավորություններին, իսկույն գնահատում և երևակայությամբ տեսնում է ապագա անառիկ բերդն ու այն իր գլխավոր հենակետն է դարձնում: Շուշիի սարահարթի 2/3 մասը երիզված է անդնդախոր կիրճերով, ուղղաձիգ ապառաժներով: Այստեղից 20 վերստ հեռավորության վրա գտնվող Շիկաքարի բերդի հետ Շուշին ասես հայացքի տակ է առնում դաշտավայրից Կարկառի հովիտ թափանցող օտար ամեն մի շարժում: Ավանն ու իր շիրվանցի ընկերները համոզվեցին, որ ոչ մեծ ջոկատով կարելի է պաշտպանել բերդը: Ավանը իր եղբոր՝ Թարխան հարյուրապետի հետ սկզբում ձեռնամուխ է լինում սարահարթի ամենաբարձր կետում՝ ապառաժների վրա կիսաքանդ իշխանական դղյակի և չորս անկյուններում աշտարակներ ունեցող ամրոցի վերակառուցմանը: Ըստ երևույթին, այն հնում որպես միջնաբերդ էր ծառայել, որը հետագայում մելիքական ամառանոցի էր վերածվել: Ձեռնարկելով այս շինարարությունը, Ավանը համոզում է բոլորին, որ հիմնովին է Շիրվանից այստեղ տեղափոխվել: Այս ապարանքից քիչ ներքև քարանձավի խոռոչի վրա կառուցում է մյուս

ՀԱՅՈՑ ՍՂՆԱԽՆԵՐ
XVIII դ. առաջին կես

M 1:500000



ապարանքը, որի պատերի մեջ հրակնատներ են պատրաստում: Այստեղից բացվող քարայրը աստիճաններով ցած է իջնում, ապա թեքվելով դեպի հարավ, տանում է Քարին տակ գյուղի վրա բացվող հսկա խոռոչը: Քարանձավի ներսում ջուր կար: Այն հին ժամանակներում բերդի երկարատև պաշարման ժամանակ հնարավորություն էր ստեղծում անարգել ջուր վերցնել, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ աննկատ կապ ստեղծել: Ավանին պակաս չէր հրապուրում նաև Հունոտի կիրճի պաշտպանական նշանակությունը: Այստեղ ևս երկու հսկայական քարանձավներ կան, որոնցից մեկը իր համար ձմեռային կացարանի է վերածում: Հունոտի կիրճում վերականգնվում են հին ջրաղացներն ու ավելացնում նորերը: Կարկառի հորդառատ ջրերը տալիս են այդ հնարավորությունը: Այդ կիրճը պատերազմելու տեսանկյունից եթե որոշ անհարմարություն ուներ. այն կարելի էր երկու անցքերից փակել ու երկարատև պաշարման մեջ առնել կիրճում ապաստանած զորքը: Բայց և շատ դժվար է կիրճի տարածք մտնելը, քանի որ պատերազմական գործողություններ համար ճակատ չկար: Իսկ պաշարման դեպքում միշտ էլ կարելի է վերընթաց արահետով բերդի տարածք բարձրանալ ու փրկվել հետապնդումից: Այստեղ գտնվող քարայրները, որոնք ներքին ճյուղավորումներով կապված են իրար, կարող են պատսպարել մարդկանց, մանավանդ, որ հենց «Հունոտի Կարան» քարանձավի ներսում ջրավազան կա: Շուտով Ավանը ձեռնարկում է պարսպի վերականգնումը: Սարահարթի հյուսիսային կողմում երկու վերստ ձգվող հզոր պարիսպն ուներ 50 աշտարակ: Շինարարները պարսպից ոչ հեռու բերդի տարածքում վերականգնում էին հին թաղածածկ գլխատները, դրանք իրենց համար կացարանների վերածում: 1717 թ. Ավանը ավարտում է բերդի վերակառուցումը: 18-րդ դարի առաջին կեսին ապրած ժամանակագիրը հաղորդում է, թե *«Ավան յուզբաշին* (հարյուրապետ) *եկավ Շուշվա քարն մտավ սահք խուրուշ իլավ*[21] ՌՆԿԶ թ.»[22]:

Սակայն ամեն ինչ չէ, որ հարթ է գնում Արցախում: Ավան զորապետը Արցախը գտավ տրոհված երկու եկեղեցիների՝ Գանձասարի ու Երիցմանկանց վանքերի միջև: Երիցմանկանց վանքի վանահայրերը իրենց շուրջը պահելով Զրաբերդի ու Գյուլիստանի մելիքներին և զորապետներին, հակադրվում էին Գանձասարի վանքի տերերին, իրենց վանքն էին համարում Աղվանից կաթողիկոսության

կենտրոնը: Եթե Գանձասարում Աղվանից կաթողիկոս էր հռչակված Եսայի Հասան Ջալալյանը՝ Առանձահիկ տան ժառանգորդը, ապա Երիցմանկանց վանքում կաթողիկոսական աթոռին հավակնում էր Ներսեսը: Այս հակամարտությունը շատ հնուց էին ժառանգել, երբ Արցախի վրա իշխելուն հավակնում էին Խաչենի ու Բերդակուրի տերերը: Այս պառակտիչ պայքարը ավելի թեժացավ 17-րդ դարի վերջին, երբ Մեծշենացի Սիմեոնը Երիցմանկանց վանքում իրեն Աղվանից կաթողիկոս հռչակեց:

Այս եկեղեցիները միաբանելու, վեճը հարթելու փորձեր՝ միշտ էլ արվել են: Դեռևս 1677 թ. սեպտեմբերի 25-ին Սիմեոնը պարտավորագիր է տալիս Էջմիածնի Հակոբ և Աղվանից Երեմիա կաթողիկոսներին, որ ինքը քանի կենդանի է, առանց Երեմիայի հրամանի ոչ մի քայլ չանի և որ իր ազգականներից ոչ ոք կաթողիկոսության չկանչվի իրենից հետո[23]: Պատճենն ստորագրել ու կնքել են Էջմիածնի երեք միաբաններն ու կաթողիկոսը: 1691 թվականի փետրվարի 10-ին Արցախի մելիքներն ու իշխանները, ժողով գումարելով Գանձասարում, համախոսական են հռչակել առ այն, որ իրենք դեմ են Սիմեոնի կաթողիկոսությանը և օրինական կաթողիկոս են ճանաչում միայն Երեմիային: Սակայն Երիցմանկանց քահանայապետերը ոչ մի կերպ չէին հրաժարվում կաթողիկոսությանը հավակնելուց: Սիմեոնի հաջորդները ևս Աղվանից կաթողիկոս էին հռչակվում ու դրանով իսկ խարխլում Արցախի միասնությունը:

Նրանք հակադրվում էին նաև քաղաքական կողմնորոշմամբ, որը վեր էր ածվում բացարձակ թշնամանքի: Ասենք, որ եթե Գանձասարը հակում էր դեպի Պարսկաստանը, նրանց հովանու ներքո տեսնում Արցախի գոյությունն ու ինքնավարությունը, ապա Երիցմանկանց վանքի տերերը հակվում էին դեպի Օսմանյան Թուրքիան: Էջմիածնի կաթողիկոսները իրենց հերթին սկզբունքային չէին այս հարցում: Ըստ երևույթին, նրանք ներքուստ կողմ էին նման բաժանմանը, որը թուլացնում էր Աղվանից կաթողիկոսությունը և իրենից միշտ կախման մեջ պահում:

2. ՄՈՒԹ ԱՄՊԵՐ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՆԱԿԱՄԱՐՈՒՄ

Բոլոր կողմերից մութ ամպեր էին կուտակվում Անդրկովկասի երկնակամարում, որոնց դեմն առնելու համար հայերի ու վրացիների միաբանությունն անհրաժեշտություն էր դարձել: Համախմբվելու անհրաժեշտության առջև կանգնել էին նաև արցախցիները: Դա զգում էին և Արցախի գործիչները, առաջին հերթին՝ Եսայի կաթողիկոսն ու Ավան զորապետը: Անդրկովկասում պետք է բախվեին երեք հսկաների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի շահերը: Շամախիից հաղորդված ռուսական զենքի՝ շվեդների նկատմամբ հաղթանակների լուրը նոր ոգեշնչում առաջացրեց Արցախում: Վաղուց, դեռևս 17-րդ դարի վերջերից, Սեֆյան Պարսկաստանը դեպի կործանում էր գնում: Շահ Սուլթան-Հուսեինը ավելի թուլամորթ և անդեմ գործիչ դուրս եկավ, քան նրա նախորդները: Շահն ու նրա արքունիքը ավելի շատ տարված էին հարեմով ու գինարբուքով, քան պետական գործերով:

Պետական գանձարանի պակասը լրացնելու միակ միջոցը հարկերի անընդհատ բարձրացումն էր, սեփական ժողովրդին անխնա կեղեքումը: Եսայի կաթողիկոսը, որ 1711 թվականից սկսում է գրել Արցախում տեղի ունեցող անցքերի մասին, բողոքում է հարկերի խիստ մեծ լինելուց. *«Ատրպատականի Մեծ վեզիր Միրզաթահիրը, որ նստում էր Թավրիզում, եկավ Գանջայ, սկսեց առնել ավելորդը, քան գրել էին: Զորքը ցրվեց երկրով մեկ, կեղեքում էին, առնում իրենց ուզածի չափ, նորանոր հարկեր էին հորինում»*[24]:

Պարսկաստանի թուլանալուն ուշի ուշով հետևում էին թե՛ ռուսները և թե՛ թուրքերը, սպասում հարմար առիթի, որ կազմակերպեն արշավանքը դեպի Իրանի խորքերը: Պարսկաստանում այս ու այն կողմերում տիրապետող տեղական խաները, զգալով կենտրոնական իշխանության թուլացումը, խռովություն էին բարձրացնում, սկսում չենթարկվել շահին: Աղվանստանի Ղանդահար քաղաքում խռովությունը գլխավորում էր խորամանկ և ճարպիկ մի գործիչ՝ Միր-Վեյսը: Նա հնարամտորեն խաբում է խռովությունը ճնշելու հա-

մար շահի կողմից Ղանդահար ուղարկված Գուրգին խանին (մահմեդականություն ընդունած Վրաստանի թագավոր), դաժանորեն սպանում է նրան և կոտորում ողջ զորքը: Աղվանները սկսում են արշավանքը դեպի Պարսկաստան: Այլևս պարսից շահին չէին ենթարկվում լեզգի իշխանավորները, որոնց գլխավորում էր Ալիսուլթանը, միաբանելով 1712 թվականին, ասպատակում են Կուրի հովտի բնակավայրերը: Քանտակ (այժմ՝ Մինգեչաուր - Բ) հայկական գյուղը թալանեցին ու իսպառ ոչնչացրին: Ավարառուները հերթով անցան Շուշիից մինչև Շամախի, ապա Շամքորը, Գանձակի շրջակայքը, Ոսկանապատի ձորը, Կուրակի հովիտը, Պարտավը: Հատկապես դաժան ու անխնա էին հայ բնակչության նկատմամբ: Մարդիկ փրկվելու համար դաշտավայրերից Արցախի լեռներն էին փախչում:

Պետրոս Մեծը, Շվեդական խնդիրը լուծված համարելով, 1717 թվականին Արտեմի Վոլինսկու գլխավորությամբ նոր դեսպանություն է ուղարկում Պարսկաստան՝ իբրև շահի հետ բանակցելու, իսկ իրականում՝ հետախուզելու երկրի ռազմական վիճակը: Դեսպանը իր զեկուցագրում գրում է. *«Ինչպես երևում է, այստեղի թուլությունից, մենք կարող ենք պատերազմ սկսել առանց որևէ երկյուղի, որովհետև ոչ թե մի ամբողջ զորաբանակով, այլ մի փոքրիկ կորպուսով կարելի է այս երկրի մեծ մասը Ռուսաստանին միացնել: Սրա համար ավելի հարմար ժամանակ քան այժմ չի լինելու»*[25]: Սղնախների ժողովրդական զինվորությունը, տեսնելով շրջապատի անիշխանությունը, շարունակում էր ամրապնդել բերդերը, նորանոր հենակետեր ստեղծել: Ավանը Շուշիին զուգահեռ ամրացնում է և Շիկաքար բերդը: Բերդի տարածքում էր Քարագլուխ գյուղը, Բերդասարի հյուսիսային ստորոտում՝ Փառուխ գյուղը: Գյուղից ոչ հեռու Բերդասարի ապառաժների մեջ հսկա քարանձավ կար: Պատերազմի ժամանակ գյուղի ժողովուրդը պատսպարվում էր այս քարանձավում ու փրկվում[26]: Շիկաքարը ևս Շուշիի պես անառիկ բերդերի շարքին էր դասվում: Այն ուներ երկու մուտք: Շիկաքարի բերդի մասին առաջին կարևոր տեղեկությունը պատկանում է հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացուն, որը նկարագրում է հայ-արաբական ընդհարումները 9-րդ դարում: Արաբների դեմ ապստամբությունը գլխավորում էր Խաչենի իշխան Սահլ Սմբատյանը, կամ ինչպես արաբներն են ավանում՝ Սահլ Իբն Սունբաթ ալ Արմանին: Կաղանկատվացին պատմում է. *«Իսկ երբ լրացավ հայոց ՄՁ (821) թիվը, Պարտավից դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավերի ենթարկեցին Ամարաս գավառը և մոտ հազար հոգի գերեվարելով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում էր Շիկաքար: Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահլի Սմբատյան Առանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրները իրենց զորքերով լուսադեմին վրա տվին, նրանց բոլորին միասին դիաթավալ արին, ցիրուցան արին և ինչպես առյուծի ճանկերով, գերիներին խլեցին»*[27]:

Ինչպես կարծում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը. *«Հենց այս ժամանակներում (1710) էլ պիտի սկսված լինի Ղարաբաղի Սղնախների Իրանի դեմ բարձրացրած ապստամբությունը»*[28]:

Շիրվանում գտնվող լեզգիների առաջնորդ Հաջի Դավուդ խանը 1725 թ. վկայում էր, թե Սղնախների հայերը 15 տարի է, ինչ ապստամբել ու ավերում են ղզլբաշական գյուղերը:

Ավան զորապետը հաճախ էր իր ջոկատներով արշավներ կազմակերպում դեպի տափաստան՝ թափառական խաշնարած ցեղերի դեմ, որոնք ցրված էին Կուր-Արաքսի հովտում: Նրանք թուրք-սելջուկների և թաթար-մոնղոլների արշավանքների հետքերով Իրանի հյուսիս՝ Ատրպատական էին թափանցել 16-17-րդ դարերում, որոնց մի մասը տեղափոխվեց Առանի դաշտը: Հինավուրց Առանը ամենևին էլ Ատրպատականը չէ: Ինչպես գրում է Մ.Կաղանկատվացին՝ *«Ապա կարգեաց (հայոց թագավոր Վաղարշակը - Բ.) նոցա առաջնորդ և վերակացու, յորոց գլխավոր ոմն ի Սիսական տոհմե Յաբեթական ծննդոցն կարգի հրամանու Վաղարշակայ, Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ մինչև ցումարն Հնարակերտ»*[29]:

Առանի իշխանական շառավիղները մինչև արցախյան մելիքներն իրենց Առանշահիկներ էին անվանում: Առան երկիրը, որ Կուր ու Արաքս գետերի մեջ ընկած տարածքն է, բաժին ընկնելով Պարսկաստանին, Կուր գետից հյուսիս ընկած Աղվանքի հետ միացնելով մի մարզպանության մեջ, մ.թ. 5-րդ դարից կրում է և մարզի Աղվանք անունը: Հյուսիս Կովկասյան լեռնականների հարձակումները հաջորդում էին մեկը մյուսին: Շամախիի Հասանալի խանը փորձեց ավարառուների առաջն առնել, սակայն լեզգիները հանկարծակի գրոհով ոչնչացրին նրա զորքը և սպանեցին խանին: Լեռնականները Սուրխայ Շամխալի, Իսմիի, Հաջի Դավուդի և Ալի Սուլթանի գլխա-

վորությամբ հարձակվեցին Շամախու վրա: Քաղաքի պաշտպաններին օգնության էին եկել Սղնախների, Գանձակի և Մուխանքի զորքերը: Ութ օր տևեց դաժան, անզիջում ճակատամարտը: Ի վերջո հրոսակները զիջեցին ու ետ դարձան: Հաջորդ տարի (ՌԳՀ) 1721 թվականի օգոստոսին լեռնցիք ավելի մեծ զորքով հարձակվեցին առևտրական քաղաքի վրա: Շամախին շատ համեղ պատառ էր ավարառուների համար: Նրանց նախ գրավում էր քաղաքի հարստությունը: Բայց և առանց Շամախին գրավելու նրանց համար վտանգավոր էր Արցախ և Գանձակ ասպատակելը: Հասան Ջալալյան կաթողիկոսը մանրամասն նկարագրել է քաղաքի գրավումն ու թալանը[30]: Սունֆի բնակիչները, որ Սարու Թորփաղ թաղամասում էին բնակվում, գիշերը բացեցին քաղաքի դռները: Կովկասցի լեռնականները անխնա կոտորում էին ղզլբաշներին ու շիաներին, որոնց արհամարհական «ղաջար» էին անվանում: Եսային գրում է, որ շուկայում արյան գետ էր հոսում: Քաղաքի 800 մեծամեծերը իմամի մոտ էին ապաստանել: Սունֆի լեզգիները, որ ատում էին շիա դավանանքի մահմեդականներին, բոլորին գլխատեցին: Հայերին շատ չէին վնասում, բայց նրանց զավակներից շատերին գերի տարան: Թալանեցին ողջ քաղաքի ոսկին ու հարստությունը: Ռուս վաճառականները կորցրեցին շուրջ 500 հազար ռուբլի: Պարտավից ու Երևանից պարսկական զորք էր եկել կանգնեցնելու ավարառուներին: Մինչ զորքը Կուրի ափին Պարտավի մոտ հանգստանում էր, լեզգիները անսպասելիորեն հարձակվեցին ու ոչնչացրին ծույլ ու դանդաղաշարժ բանակը: Կենդանի մնացածները փախան դեպի Արցախ՝ Թարթառի ու Խաչենի հովիտները: Պարսից շահն ու խանները ոչնչով չպատասխանեցին լեռնցիների այս հարձակումներին, քանի որ ամբողջությամբ զբաղված էին աղվանցի Միր-Վեյսի որդի Միր-Մահմուդի գլխավորած արշավանքների դեմն առնելու հոգսերով:

1722 թվականի մարտին լեզգիները «իբրև զմարախ բիւրք և հազարք հազարաց»[31], առնելով Դերբենտի երկաթե դռները, ի վերջո հայտնվեցին Դիզակում, ուր էլ բնակչությունը կոտորելուց ու թալանելուց հետո հասան Վարանդա: Այստեղի Մելիք Բաղիր Բ-ն ընծաներով դիմավորեց նրանց, որով և երկրամասը փրկեց ավերումից, միևնույն ժամանակ ազատագրեց Դիզակցի գերիների մի մասը: Մելիք Բաղիր Բ-ն Գեղարքունիքի Շահնազարյան մելիքական ծյուղերից մեկն էր: Նրա նախնիներից Միրզաբեկը, որը Մելիք Շահնազար Ա-ի եղբայրն էր, 1603 թվականին Վարանդա էր եկել Պարսից Շահ Աբաս Մեծի տված մելիքական վկայագրով: Մելիք Շահնազարյանների այս ճյուղը, թիկունքում ունենալով հզոր շահի պաշտպանությունը, ետին պլան մղեց Վարանդայի ավանդական մելիքական տոհմին, որը Առանշահիկներից ու Համամ թագավորից էր սերում: Միրզաբեկին հաջորդել են Բաղր Ա-նու Մելիք Շահնազար Ա-ն: Մելիք Բաղր Ա-ն 1627 թվականին Մազրայից Ավետարանոց և Շուշի էր տեղափոխում տեղի հայությանը: Արցախի գահերեց Հասան-Ջալալյանների խորհրդով Մելիքն ամրացնում է այս բերդերը: Մելիք Բաղր Ա-ն*«Օժանդակությամբ տեղական ու նորեկ ժողովրդականց փութացնում է Ավետարանոց բերդի (վերակառուցման) ավարտումը և իւր ապաստանը հաստատում բերդումն»*[32]: Հավանաբար մելիքը ամրացնում է և Շուշիի բերդը: Մելիք Բաղր Բ-ն, որին Գյուլիստանի Մելիք Բաղրից տարբերելու համար Բաղի էին ասում, շարունակելով իր նախնիների ավանդական ճկուն քաղաքականությունը, ոչ մեծ փրկագնով լեզու գտավ լեզգիների հետ: Իհարկե, Մելիքի այս ձեռնարկին թիկունք եղան նաև Ավան զորապետն ու Թարխան հարյուրապետը, որոնք շիցվանցի լինելով, լավ գիտեին լեռնցի ավարառուների բարքն ու սովորությունները: Ընդհանրապես, նման կարևոր հարցերի շուրջ Սղնախի զինվորական խորհրդում էին վճռական որոշում կայացնում:

Իսկ Խաչենում լեզգիներին ո՛չ դիմավորեցին, ո՛չ էլ դիմադրություն ցույց տվին: Ավարառու հրոսակները թալանում էին, մարդկանց գերեվարում, տները հրկիզում: *«Զգերին և զանասունները ընդ միմեանց հետ խառնեալ էին իբրև զհեղեղ յորդ»*, - գրում է ժամանակագիրը[33]: Գանձասարի վանքից Եսայի կաթողիկոսը տեսնում էր ներքևի գյուղում կոտորածն ու կողոպուտը:

Լեզգիները չկարողացան վնասել ո՛չ Ջրաբերդին, ո՛չ Գյուլիստանին, ո՛չ էլ Շուշիին: Սակայն լեզգիների այս ասպատակությունը ցույց տվեց, որ Սղնախները դեռևս պատրաստ չէին միացյալ ուժերով պատերազմելու: Նրանք ստեղծվել էին հենց լեզգիական ասպատակության դեմն առնելու նպատակով: Լուրջ դիմադրություն ցույց տվեցին միայն Ջրաբերդն ու Գյուլիստանը: Չորս մելիքների՝ Ջրաբերդի մելիք Եսայու, Շիրվանի և Սարգսի, Պարտավի մելիք Եսայու, Գանձակի մելիք Հովսեփի՝ Պետրոս Մեծին ուղղված նամա-

կում, որն ընդգրկվել էր Էգովի (Կարապետ Եգյանցի) հավաքած փաստաթղթերում, պատմվում է, որ իրենք 12 հազարանոց զորքով կռվել են լեզգի ավարառուների դեմ, կոտորել և հեռացրել նրանց իրենց երկրից: Մելիքները հայտնում էին, որ սպասում են ռուսական զորքի գալուստին:

Եթե Թարթառի հովտում ջրաբերդցիները դիմադրություն են ցույց տալիս, իրենց տարածքից հետ քշում լեզգիական ավարառուներին, ապա Խաչենի հովտում Սղնախների զինվորությունը Կաչաղանաբերդ, Խոխանաբերդ ու Հավապտուկ (Ռուզանի բերդ) է քաշվում: Այս դեպքը ևս ցույց է տալիս, որ բոլոր սղնախները չէ, որ պատրաստ էին երկրի պաշտպանությանը: Ի վերջո, երբեմնի հզոր Պարսկաստանը ծնկի եկավ աֆղանների առջև: Միր-Մահմուդը հաղթեց վճռական ճակատամարտում և իր համար իբրև նստավայր ընտրեց Սպահանի մոտ գտնվող շահի շքեղ պալատը: Շահի որդին՝ Շահ-Թահմասպը փախավ Ղազվին: Պարսից խաները շուտափույթ նրան շահ հռչակեցին:

3. ԵՐԵՔ ԿՐԱԿԻ ԱՐՄՆՔՈՒՄ

1721 թվականին հաղթությամբ ավարտելով շվեդների դեմ պատերազմը, Պետրոս Առաջինը կայսր հռչակվեց: Նա արդեն շտապում էր օր առաջ գրավելու Կասպիականի ափամերձ շրջանները:

Ավարն ու գերիներին անցկացնելով Կուր գետը, լեզգիները Հաջի Դավուդի ու Կազիկումիխի առաջնորդ Սուրխայի գլխավորությամբ պաշարեցին Գանձակը: Քաղաքին 30 հազարանոց զորքով օգնության հասավ Վրաստանի թագավոր Վախտանգը: Լեզգիները խուսափելով բախումից հեռացան Գանձակից: Սակայն գանձակցիները հրաժարվեցին վրացիներին տալ օգնության դիմաց խոստացած ոսկին: Գանձակի Ջավադ խանը հուշեց վրացիներին, պարտքի դիմաց թալանել սունների թուրք ցեղերին, որոնց հրավերով էին ասպատակում լեզգիները: Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսը, որը Գանձակ՝ Վախտանգի հետ բանակցելու էր եկել, մանրամասն նկարագրում է վրացիների կողոպուտը, որ ոչ պակաս պատուհաս դարձավ հայերի համար: Վրացիները ոչ մի տարբերություն չէին դնում հայերի ու թափառական ցեղերի միջև: Հայերը աղ ու հացով, տոնական հագուստներով դուրս էին գալիս դիմավորելու «քրիստոնյա եղբայրներին», իսկ վերջիններս հարձակվում էին, հանում մարդկանց հանդերձները, թալանում եկեղեցիները, տները: Թալանի 10-րդ մասը՝ 25 հազար ոչխար և 9 հազար արջառ տվեցին իրենց թագավորին: Եսայի կաթողիկոսը գրում է, որ վրացիները իրենց ագահությամբ և անողոքությամբ գերազանցում էին լեզգիներին:

Վախթանգը Եսայի կաթողիկոսի ներկայությամբ նախատում էր իր հրամանատարներին քրիստոնյաներին կողոպտելու համար: Բայց նա զորքին խոստացել էր հարուստ ավար, մեծ հարստություն:

Այս իրադարձությունները չխանգարեցին, որ Գանձակի մոտ Եսային բանակցի Վախթանգի հետ և համոզի միացյալ ուժերով դիմավորել ռուսաց Կայսրի զորքերը, որ դա է ազատության միակ ճանապարհը: Եսայի կաթողիկոսը վճռեց Վախթանգի հետ գնալ Թիֆլիս և այնտեղ շարունակել բանակցությունները:

Վրաստանի թագավոր Վախթանգը, որ զգում էր, թե ինչ ուժ կարող է ստեղծել հայ-վրացական ռազմական միասնությունը, շատ բանով էր օժանդակում Հայոց Սղնախներին: Նրա որդի Շահնավազը (քրիստոնեական անունը Բակուր) հենց Վախթանգի հանձնարարությամբ 30 հայ զինվորականների ու գործիչների ուղարկում է Հայաստանի տարբեր գավառներ՝ ապստամբություն նախապատրաստելու համար: Դրանց թվում էին այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Դավիթ Բեկը, որը գլխավորեց ազգային ազատագրական շարժումը Ղափանում, Մելիք Եգանը, որն ամրացավ Դիզակում:

Ըստ երևույթին, Եսայի կաթողիկոսը Թիֆլիս էր գնացել ոչ միայն շարունակելու բանակցությունները միասնական ուժեր ստեղծելու համար, այլև օգնելու Վախթանգին, նրա ուժերի մեջ ներառելու և թիֆլիսահայությանը: Եվ իրոք, սեպտեմբերի կեսերին Թիֆլիսից դեպի Գանձակ շարժվող բանակի մեջ հայերը մեծամասնություն էին կազմում: «*Եվ պատճառ սորին*, - գրում է Եսայի կաթողիկոսը, - *այսպես էր առնելույն ընդ մեզ այս է առաջինն՝ զի բնական սէր ուներ* (Վախթանգը - Բ) *ընդ ազգիս հայոց և ոչ այնքան հոգատար ազգին իւրոյ Վրայ, զոր միշտ նենգաւորք և խորամանկք են. վասն այն կա-*

մեր այս զօրս մանալանց ազգս իւրն սեփականացուցանել որպես թիֆլիզեցիք»[34]:

Երբ վրացական զորքը Խրամ գետի Կոտրած կամրջին է հասնում, Եսայի կաթողիկոսը իր արցախցի ուղեկիցների հետ առաջ է անցնում, շտապում Գանձակ, լուր հաղորդում Սղնախներին, որ միացյալ ուժով միանան վրացական բանակին: Դա մի բարեպատեհ ժամանակ էր արցախցիների համար, երբ ռուսական զորքի գալու լուրը հաշտեցրել էր Եսայի և Ներսես կաթողիկոսներին: Ներսեսն իր նախորդի՝ մեծշենցի Սիմեոնի պես խոստացել էր իր բոլոր քայլերը համաձայնեցնել Եսայի կաթողիկոսի հետ: Հաշտվել էին և Սղնախների հրամանատարները: Արդեն բոլորն էլ ընդունում էին Ավանի գլխավորությունը: Ավանը այնպես էր ամրացրել Շուշին ու պաշտպանական մի այնպիսի համակարգ էր ստեղծել Սղնախում, որ այն գլխավոր հենակետն էր դարձել ողջ Արցախում: Հրամանատարությունը որոշեց վրացիների հետ միացման համար 10 հազարանոց զորք կազմել, յուրաքանչյուր Սղնախից տրամադրելով երկու հազարական սպառազեն զինվոր: Ավանն իր սղնախում արդեն կազմակերպել էր զենքի, ինչպես և վառոդի արտադրություն: Ավանը, սղնախում թողնելով եղբորը՝ Թարխանին, իր զորքին գումարելով Դիզակից եկած զինվորներին, շարժվեց դեպի Գանձակ, ճանապարհին միացնելով Ավետարանոցի, Զրաբերդի ու Գյուլիստանի սղնախների առանձնացված գնդերը՝ Շիրվան, Շահան ու Սարուխան հարյուրապետերի գլխավորությամբ:

Պայմանավորվածություն կար, որ հայ-վրացական միացյալ զորքը շարժվելով դեպի Շամախի, կջախջախի Հաջի Դավուդի լեզգիական ավարառուներին, կգնա ռուսական զորքին ընդառաջ, և միասնական ուժերով կազատագրեն Հայաստանն ու Վրաստանը, կարշավեն Պարսկաստանի խորքը: Հայտնի է, որ Շահ Թահմասպը Անդրկովկասում իր տեղապահ (վալի) Վախթանգին հանձնարարել էր արցախցիների հետ միացյալ ուժերով գնալ Շամախի՝ լեզգիների դեմ: Ինչ խոսք, որ սա ռուսական զորքին ընդառաջ գնալու մի քողարկված առիթ էր ստեղծում: Եթե որևէ պատճառով այն չիրականանա, ապա Վախթանգը կվկայակոչի շահի հրամանը:

Հայոց զորքը հայ իշխանների ու եկեղեցու առաջնորդների հետ հասան Գանձակի մոտի Չոլակ վայրը: Վրաց զորքը, որը բանակել էր Ղոչղարի գետի, (Ղարա-արխ) վրա, ընդառաջ գնաց հանդիսավորությամբ դիմավորելու և ողջունելու հայոց զորքին: Եսայի կաթողիկոսը, որը քիչ ջանք չէր թափել միավորելու այս ուժերը, մեծ

խանդավառությամբ է նկարագրում երկու բանակների հանդիպումը: Մեր պատմության մեջ օտար նվաճողների դեմ պայքարում երկու ժողովուրդների վերջին միասնությունը կայացել էր Զաքարյանների ամիրսպասալարության ժամանակ՝ 12-13-րդ դարերում, երբ փաստացիորեն վրաց-հայկական միացյալ պետություն էր ստեղծվել: Եվ ահա երկուստեք ուրախությունը չափ ու սահման չուներ: Բանակները մեծ շուքով հանդիպեցին միմյանց: Ճակատ առ ճակատ կանգնել էին, ու նրանց միջև գոյացած տարածքում հայ ու վրացի քաջամարտիկ հեծյալները վարժություններ էին ցուցադրում, խաղում, մրցում միմյանց հետ, պարեր բռնում: *«Փոշեխառն ծուխ նորեն զկայծակնափայլ ամպ արգել զճառագայթս արեգականն մինչ զի զմիմեանս հազիւ տեսեանք»*[35]: Բոլորին համակել էր անսահման ուրախությունը: Եկել է քրիստոնյաների փրկության ժամը: Բոլորը տեղյակ էին, որ ռուսական զորքը առանց գնդակ արձակելու գրավել էր *«ի դուռն իրկաթիցն Դարպանտ»:*

Ռուսական զորքը դեռևս հուլիսին էր Պետրոս Առաջինի գլխավորությամբ անարգել շարժվել մինչև Դերբենտ: Եթե զորքը գնում էր ծովափով, ապա պարենը, հրետանին ու ձիերի մնացած մասը տեղափոխվում էին նավերով: Անսարքության ու նավաբեկության պատճառով, նավերի մեծ մասը խորտակվեց ծովում: Իսկ Գանձակում հայ-վրացական զորքը անհամբեր սպասում էր շարժվելու մասին Պետրոս Մեծի հրահանգին, անտեղյակ, որ վերջինս հոկտեմբերի 4-ին Աստրախան էր վերադարձել: *«Սպասում էինք ինքնակալին, ինչպես Քրիստոսին՝ Երուսաղեմում»*,- գրում է Թիֆլիսի հայոց առաջնորդ արքեպիսկոպոս Մինաս Փարվազյանը: Երկու ամիս սպասելուց հետո զորքերը բաժանվում են: Վախթանգը գլխիկոր ու հուսահատ վերադառնում է Թիֆլիս, իսկ հայոց գնդերը վերադառնում են իրենց սղնախները: Հայերն ու վրացիները կրկին մնացին երեք կրակի՝ թուրքերի, պարսիկների ու կովկասյան լեռնցիների արանքում: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ռուսական կայսրը լավ էր զգում շվեդական պատերազմից հետո իր հնարավորությունները և ամենևին էլ մտադիր չէր ուժասպառ բանակով բախվելու թուրքերի կամ պարսիկների հետ: Նա նպատակադրվել էր օգտվել Իրանի թուլությունից և նրանից խլել Կասպից ծովի արևմտյան եզերքը: Դերբենտի բերդը բաղկացած էր դեպի Կասպից ծովն իջնող լեռներից 40 կմ. դեպի ծովի խորքը ձգվող զույգ պարիսպներով, որոնց միջև հեռավորությունը կազմում է 300-ից 500

մետր: Պարսպի բարձրությունը հասնում է մինչև 15 մետրի: Այն հազարամյակներ շարունակ փակել է հյուսիսից դեպի Հայաստան, Վրաստան և Պարսկաստան գրոհի ու ավարի եկող հորդաների ճանապարհը: Խորենացու վկայությամբ հին ժամանակներում հայոց Մատյան գունդը, ռոճիկ ստանալով Հռոմի կայսրությունից ու Պարսկաստանից, ստանձնել էր Ճորա Պահակի (Դերբենտի անցքի) պահպանությունը[36]:

Դերբենդի գրավումից հետո ռուսները գրավեցին Ռեշտն ու Բաքուն, իսկ ողջ Անդրկովկասի գրավումը թողեցին հետագային: Պետրոսը Պարսկաստանում կոնսուլ Սեմյոն Ավրամովին հանձնարարեց հայտնել շահին, որ Շամախիի վրա են գնում ոչ թե Իրանի դեմ պատերազմելու, այլ պատժելու լեզգի խռովականներին, որոնք նեղություն են պատճառել ռուս վաճառականներին, միևնույն ժամանակ արգելելու Թուրքիային գրավելու Կասպիականի ափերը: Ի վերջո, թուլացած Իրանը պայմանագրով այն զիջեց Ռուսաստանին: Ռուսները նույն միջոցին բանակցում էին Օսմանյան Թուրքիայի հետ, որը ևս ձգտում էր օգտվել Իրանի թուլացումից և գրավել Հայաստանն ու Վրաստանը և արգելել ռուսների առաջընթացը:

Իհարկե, Վախթանգը կարող էր և չսպասել Պետրոսի հատուկ հրահանգին, միացյալ զորքով շարժվել դեպի Շիրվան: Հավանաբար, այդ դեպքում այլ ընթացք կստանար քաղաքական կացությունը: Ի վերջո, ռուսները մեղադրում էին Վախթանգին դանդաղկոտության և անվճռականության համար: Կախեթի ուրացող Մուհամեդ Ղուլի խանը (Կոստանդին), Գյանջայի Օղուրլու խանը, Երևանի, Բոչարլուի, Ղազախի բռնավորները միաբանելով Վախթանգի դեմ, գրեցին պարսից շահին, որ միանալով հայերի հետ հրավիրում է ռուսներին տիրելու Իրանը: Անխոհեմ շահը պահանջեց իր մոտ բերել Վախթանգի գլուխը: Մուհամեդ Ղուլի խանը Վախթանգի եղբոր մատնությամբ մտնում է բերդը, թնդանոթով ռմբակոծում նրա ապարանքը: Վախթանգը հայերից ու վրացիներից արագ զորք է հավաքում և ուրացող Կոստանդինին դուրս քշում Թիֆլիսից: Վերջինս դիմում է լեզգիների օգնությանը, խոստանալով, որ թույլ կտա թալանելու Թիֆլիսը: Վախթանգը, հակառակ հայոց Սղնախների, մշտական զորք չուներ, ու անկարող էր արագ հավաքել այն ու դիմադրել թշնամուն: Լեզգիները ագահորեն թալանեցին քաղաքն ու շատերին գերի տարան՝ ծանր տուրք դնելով քաղաքացիների վրա:

Կախեթի Մուհամեդ Ղուլի խանը, որը Շահ Թահմասպի նաիբն էր, և նրան էր հանձնված Վրաստանի, Արարատյան նահանգի ու Գանձակի տարածքները, ինչպես և Արցախը, պատվիրակ է ուղարկում Շուշի Ավան զորապետի մոտ, առաջարկելով բարձր պաշտոնով և ռոճիկով ծառայության մտնել իր մոտ: Փոքր Սղնախի (Շուշի բերդի) զինվորական խորհուրդը մերժում է վրացի թագավորին, պատասխանելով, որ իրենք ռուսական «իմպերաթորին» են ծառայում ու սպասում են նրա զորքի գալուստին, իսկ եթե ռուսները չգան, ապա իրենք կցրվեն իրենց տները, բայց երբեք չեն ծառայի հավատուրաց խանին: Վրաց խանը, որ լեզգիների միջոցով հաղթել էր Վախթանգին և առիթ էր որոնում Սղնախի զորապետ Ավանին էլ հաղթել, վրացական զորքը միացնում է Երևանի բերդի պարսից զորքի հետ ու շարժվում դեպի Արցախ: Սղնախների զորքը Ավանի գլխավորությամբ ընդառաջ է դուրս գալիս վրաց-պարսկական միացյալ բանակին, հաղթում ճակատամարտում ու դուրս քշում Արցախից: Պարտված խանը նահանջի ճանապարհին իր վրեժը լուծում է Գեղարքունի գավառի հայերից, կոտորելով շուրջ երկու հազար բնակիչների[37]:

4. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Պետրոս Առաջինը բոլոր կողմերի հետ (Պարսկաստանը նվաճած Միր-Մահմուդ, Իրանի Շահ Թահմասպ, Օսմանյան Թուրքիայի իշխանություններ) դիվանագիտական աշխույժ խաղերին զուգահեռ անընդհատ ձգտում էր պահել հայերի ու վրացիների հավատը դեպի ռուսական ազատարար արշավանքը: 1723 թվականի հունիսի 3-ին Կայսրը գեներալ Ֆյոդոր Ապրաքսինի և գաղտնի խորհրդական կոմս Պյոտր Տոլստոյի հետ քննարկում է հայ ժողովրդին ուղղված հրովարտակը, որը պետք է ուղարկվի հատուկ դեսպանի՝ հայազգի Իվան Կարապետի միջոցով: Այս փաստաթղթի ստեղծման առիթը երիցմանկանց վանքի կաթողիկոս Ներսեսի և մելիքների նամակն էր՝ ուղղված Պետրոս Մեծին. *«Վերև աստված, ներքևում Դու... ազատիր մեզ...»*: Ներսեսը, որ առերես հաշտվել էր Եսայի կաթողիկոսի հետ, նամակում նրա անունը չի նշում: Հավանաբար, սա

հակաթոռ կաթողիկոսի կողմից մի փորձ էր Գանձասարի աթոռից խլելու ազատագրական շարժման մեջ ղեկավար դիրքը: Արքունիքում կազմվում է մի երկրորդ փաստաթուղթ ևս, որը կոչվում է Մեմորիյա (հուշագիր):

Պետրոսի հրովարտակը գրված է ընդհանուր խոսքերով և անորոշ արտահայտություններով: Այն ոչ մի կոնկրետ խոստում չի պարունակում հայ ժողովրդի ազատության գործում օգնություն ցույց տալու մասին: Հիմնական խնդիրը հայ առևտրականներին օգնությունն է, որպեսզի նրանք ակտիվ գործունեություն ծավալեն Կասպից ծովի շրջանում: Կանցլեր Գոլովինը բացատրում էր, որ այդպես է գրվել, որպեսզի եթե հրովարտակը ընկնի թուրքերի կամ պարսիկների ձեռքը, դրա պատճառով նեղություն չտան հայ ժողովրդին: Իսկ իրական օգնության ծրագրի մասին Պետրոս Առաջինը գրել է Հուշագրի մեջ, որտեղ հայտնում է, որ իրազեկ է հայ ժողովրդի ծանր վիճակին, ուստի նպատակահարմար է գտել ուղարկել դեսպանին՝ հանձնարարելով վստահեցնել, որ ինքը հայ ժողովրդին վերցնում է իր հովհանու տակ և պատրաստ է նրան ազատել օտար լծից: Բայց այդ ձեռնարկից առաջ նա ցանկանում է ամրանալ Կասպից ծովի ափին, նոր միայն օգնության ձեռք մեկնել[38]:

Պետրոս Առաջինի պատվիրակ Իվան Կարապետը Պետերբուրգում բնակություն հաստատած հայ առևտրականներից էր: Նա Դաղստանի Ղզղար քաղաքում մետաքսի գործարան էր հիմնել: Նրա եղբայրը՝ Ղուկաս Շիրվանովը ցարական արքունիքում որպես թարգմանիչ էր ծառայում: Իվան Կարապետը ռուսների մոտ՝ հայտնի Իվան Եփրեմովն է, որ հայ երկու այլ առևտրականների հետ միասին 1723 թ. մայիսի 10-ին հրավիրվել է Սենատ և հանձնարարություններ ստացել՝ աշխատանք տանել հայ առևտրականների շրջանում՝ Ռուսաստանում առևտուրը զարգացնելու համար[39]:

Իվան Կարապետը արցախցի չէ: Դա մատնում է նրա զեկուցագրի ու նամակների բարբառը, որը ավելի մոտ է Շիրվանի խոսվածքին, որը ևս Արցախյան բարբառի ծյուղերից է: Այս վարկածի օգտին է խոսում Իվան Կարապետի կողմից Ղզլարում (Կիզլյար) մետաքսի գործարանի հիմնումը: Եթե նկատի ունենանք նրա եղբոր Շիրվանովի ազգանունը, ապա Իվան Կարապետի տոհմը Շիրվանից է:

1723 թ. Հուլիսի 6-ին կայսրի հայ պատվիրակը երկու հայ կապավորների՝ Սիմեոնի և Ավետի հետ Աստրախան հասավ: Բաքվում Իվան Կարապետը հանդիպում է Արցախի պատվիրակներին՝ շամախեցի Անտոն քահանա Առաքելյանին և արցախցի Քյոխվա Չարաբիին[40], որոնք Պետրոսին էին տանում Եսայի կաթողիկոսի և զորապետի նամակը: Նկարագրելով վիճակը, նրանք խնդրում են Ռ (1000) զինվոր ուղարկել Արցախ, *«միայն թե անուն քո կոչեցցի ի վերայ մեր ու մեք քոյին զօրութեամբ ու խնամօքն Աստուծոյ կարող ենք հալածել թշնամիս խաչի Քրիստոսի»*[41]:

Իվան Կարապետին ուղեկցում են Շամախիի Մեյսարու վանք, որտեղ պատվիրակին հյուրընկալում է վանահայր Մարտիրոս վարդապետը: Սակայն անցնել Կուրը չի հաջողվում: Լեզգիական ավարառուները Սուրխայի, Շամխալ օղլիի և Ումցի օղլիի գլխավորությամբ թալանի նպատակով անցել էին Կուրն ու փակել բոլոր անցուղիները: Իվան Կարապետի ուղևորությունը Պետերբուրգից մինչև Արցախ տևեց շուրջ յոթ ամիս, որի ընթացքում էլ նոր իրադարձություններ էին տեղի ունեցել տարածաշրջանում: Հոկտեմբերին 80 հազարանոց թուրքական բանակը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ արշավեց Գանձակի վրա: Թուրքերը 20 օր շարունակ ավերեցին հայոց գյուղերը, շատերին գերի վերցրին: Սղնախներից մի պատվիրակություն ուղարկվեց փաշայի մոտ, պահանջելով, որ արձակի հայ գերիներին: Իբրահիմը հայերի սիրտը շահելու նպատակով արձակեց հայերին: Փաշան պատվիրակ ուղարկեց Ավան զորապետի մոտ, առաջարկելով նրան իր զորքով միանալ իրենց: Իհարկե, թուրքերը որոշ տեղեկություններ ունեին Շուշիի վերակառուցված բերդի մասին, և բանագնացներին հանձնարարել էին ուսումնասիրելու այն, ստույգ տեղեկություններ հաղորդելու: Ավանը խորհրդի հավաքելով հրամանատարներին, մերժեց թուրք զորապետի առաջարկը: Սղնախներն ու Գանձակը փոխադարձ օգնության պայմանագիր ունեին, որ կնքվել էր դեռևս նախորդ տարվա հոկտեմբերին, երբ Եսայի կաթողիկոսն ու Ավան զորապետը արցախյան զորքով Գանձակում էին գտնվում: Եվ ահա Սղնախները Ավանի գլխավորությամբ զորք են ուղարկում պաշտպանելու Գանձակը: Քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում թուրքական բանակը պարտություն է կրում, կորցնում երկու հազար հոգու, ու շտապ հեռանում է Գանձակից: Սա թուրքերի՝ Կասպիականի ափերը տանող ճանապարհին առաջին խոշոր պարտությունն էր, միևնույն ժամանակ՝ Սղնախների առաջին բախումն ու հաղթանակը

թուրքական կանոնավոր բանակի նկատմամբ: Իբրահիմ փաշայի բանակը նահանջում է Թիֆլիս ու այստեղ էլ կազմալուծվում: Թուրքերն արդեն գիտեին, որ դեպի Կասպից ծով տանող ճանապարհին իրենց առջև ծառացել է մի հզոր ամրոց. դա Արցախամուր աշխարհն էր իր պաշտպանական համակարգով՝ Սղնախներով:

Այստեղ մարտի 21-ին Գանձակի պարսիկներն ու Սղնախների հրամանատարությունը նոր դաշինք են կնքում ընդդեմ թուրքերի: Հայոց կողից դաշնագիրը ստորագրում են Եսայի և Ներսես կաթողիկոսները, Ավան, Միրզա, Թարխան, Բաղր, Սարգիս և Աբրահամ հարյուրապետները, Թամրազ, Բաղեր, Գրիգոր, Դանիել ու Եգան մելիքները:

Հայոց Սղնախները, որպես վարչատարածքային միավոր իր ռազմա-քաղաքական կարգավիճակով ճանաչված էր հարևան երկրների կողմից: Սակայն նրան մի լուրջ քայլ էր մնում կատարել դեպի պետականության կարգավիճակը, որի վճռականությունն ու կամքը չունեցան արցախցիները:

Ամեն ինչ չէ, որ հարթ ու հաջող էր գնում Սղնախներում: Ի հայտ է գալիս ներքին քայքայման վտանգը: Ներսես կաթողիկոսը շուտով դրժեց Եսայի Չալալյանի հետ հաշտությունը և փորձեց Զրաբերդում ստեղծել միայն իրեն ենթարկվող ռազմական հենակետը: Այս պառակտման պատճառներն են Եսայի հասարակական ու քաղաքական գործչի հեղինակության նկատմամբ չար նախանձն ու իր քաղաքական կողմնորոշումը դեպի Օսմանյան կայսրությունը: Նա իր եղբոր՝ Սարգիս հարյուրապետի հետ բաժանվում է Գյուլիստանից, ստեղծում իր կայանը, ձգտում ջլատել Սղնախների ուժերը:

Ներսեսին զուգահեռ Շուշիի հետ սկսեց հակադրվել և Գյուլիստանը, որի մելիք Բաղիրն ամեն քայլի դիմում էր Արցախից հեռացնելու ազատագրական պայքարին լծված շիրվանցիներին՝ Ավան զորապետի գլխավորությամբ: Բաղիրն էր, որ իբր հաշտվելու առիթով Գյուլիստանի բերդ է հրավիրում Շիրվանի ջոկատի 45 հրամանատարների, հյուրասիրում, ապա գլխատում, գլուխներն ուղարկում նվեր պարսից շահին: Եթե իր ջրաբերդցի հարևանը հակված էր դեպի թուրքական ուժի առջև հնազանդությունը, ապա Գյուլիստանի տերը նախապատվությունը տալիս էր Պարսկաստանին: Նա նամակներով պարսից շահին հրավիրում էր գալ Արցախ և կոտորել ապստամբներին:

5. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը իր ուղեկիցների հետ դեկտեմբերի 21-ին գնում է Սալյանի վանքը, վարդապետական հանդերձներ հագնում ու ինն օրվա ճանապարհ կտրելով, հասնում Փոքր Սղնախ՝ Շուշի, ջերմորեն հյուրընկալվում Ավան ու Միրզա զորահրամանատարների կողմից: Ավանի եղբայրը՝ Թարխանը, արդեն Ավետարանոցի Սղնախի հրամանատարն էր: Ողջ Շուշին ցնծությամբ է ընդունում ռուսաց ինքնակալի պատվիրակին ու նրա հրովարտակը: Ավանը հրավիրում է Դիզակի ու Վարանդայի զինվորականության, եկեղեցու, բնակչության ներկայացուցիչներին ու ընդունում Դիզակի ու Վարանդայի բնակչության ռուսաց հպատակության հավատարմագիրը, որը Իվա Կարապետն իսկույն ուղարկում է Պետրոս Առաջինին: Ահա հինավուրց բերդի վերականգնումից հետո Շուշիում գրված առաջին փաստաթուղթը.

«Պատճառ գրոյս այս է, որ թվին փրկչի 1724 յունվար ամսի չորսումն մեք Դիզագոյ ու Վարանդոյ երկրիս ուզբաշեքս, և մեք մեր թամամիյ Մեծօվ ու փոքրօվ, վարանդապետօվ ու քահանայիքը, մելիքօվ ու քոդխոդէքով, քէվխօվ և ըռայթով, թամամի մեր ասկարօվս, ներքոյ գրեալքս մեր կամօքն և մեր յոժարութեամբն ծառայ դարձանք վերոգրեալ մեծին արքային , որ էս թարեղեն մինչի գալուստն Քրիստոսի կամք ներքոյ հրամանին, որ ինչ որ մեծ թագավորն մեզ հրաման առի, ուր հրամանն կատարեմք: Եւ եթե ինչ որ հրաման առի, հրամանըն կատարեմք ոչ, դառնամք, 'թէ խաբեմք, մեր գլուխն 'մեր ապրանքըն թագաւորին լինի, առաջի աստծոյ թագաւորն անպարտ լինի 'մեք պարտական լինեմք:

Գրեցավ գիրս Շուշոյ Սղնախումն թիւն հայոց ՌԵԳՔ (1724) յունվար ամսուն, գրոյս վերջ:

Կնիք էս վերոգրեալն ինձ՝	*Էս վերոգրեալն ինձ՝*
Ավան ուզբաշոյս	*Միրզա ուզբաշու*
ղաբալ այ 'իմ	*ղաբալ այ 'իմ*
մորս այ	*մորս այ»*[42]:

Ի. Կարապետը Շուշիում տեղեկանալով եկեղեցու առաջնորդների և Սղնախների միջև սկիզբ առած անհաշտ թշնամանքի մասին, անմիջապես ձեռնարկում է նրանց հաշտեցման գործը: Շուշիի Սղնախի հրամանատարներն ու մելիքները հունվարի 5-ին մի

վստահագիր են հանձնում պատվիրակին Գյուլիստանի Մելիք Բաղուն չվնասելու մասին: Բանն այն է, որ Գյուլիստանի տերը, վախենալով իր ոճրագործության դիմացշուշեցիների վրեժից, խուսափում էր ամեն հանդիպումից, ու մեկուսացել էր: Վստահագրում ասվում է. *«Ինչ որ յառէջմնե էլել այ, էլ յիշենք ոչ, թե հիշենք՝ գունախկար լինենք»:* Գրության տակ դրված են Ավանի, Փանու, Այվազի և 10 այլ կնիքներ: Պատվիրակի Արցախ գալու օրը Գյուլիստանի Մելիք Բաղիրի զորքը հարձակվել էր Մեծ Սղնախի (Ավետարանոցի) գյուղերից մեկի վրա, թալանել և հրի մատնել այն: Եթե չժամաներ պատվիրակն ու չբերեր ռուսաց Ինքնակալի հրովարտակը, ապա, հավանաբար, անխուսափելի կլինեին ներքին բախումները, որն էլ վերջնականապես կքայքայեր Արցախի ուժերը: Սակայն Մելիք Բաղիրը իր զինվորներին հաճախ էր ուղարկում Շուշիի ու Ավետարանոցի ենթակա գյուղերը թալանելու և ավերելու: Սա լուրջ պատուհաս էր հայ զինվորականության համար, ու փաստորեն Արցախը կանգնած էր քաղաքացիական կռիվների եզրին: Ինքը՝ Ավանը, խոստովանում է Իվան Կարապետին, որ հաճախ է մտորում դեպի Գյուլիստանի բերդը արշավելու և Մելիք Բաղիրին պատժելու մասին, սակայն խուսափում է ներքին կռիվներից, որովհետև այն կջլատի Սղնախների ուժերը, և այլևս չեն կարող դիմակայել թուրքական նոր արշավանքին: Իսկ որ թուրքական բանակը վերստին կգա, Արցախում ոչ ոք չէր կասկածում:

Պատվիրակին տված հաջորդ փաստաթուղթը, որ Շուշիի սղնախի զինված ուժերի մասին հայտարարությունն է՝ ստորագրված Ավանի և Միրզայի կողմից, պատմում է, որ Շուշիի գունդը կազմված է հրազենով զինված 500 հոգանոց հեծելազորից: Իսկ մնացած 6400 հոգին հրազեն ու ձի չունեն: Ուստի ռուսաց կայսրից խնդրում են օգնել հրազենով ու ռազմապաշարով, որպեսզի ծառայեն ռուսաց շահերին:

Իվան Կարապետը Պետրոս Առաջինի հրովարտակում Ներսեսի անվան փոխարեն մտցնում է Եսայի Ջալալյանի անունը ու զինվորականների հետ մեկնում Գանձասար: Այստեղ ցնծությամբ են ընդունում ռուսաց կայսրի հրովարտակը՝ ուղղված հայ ժողովրդին: Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսը իսկույն ժողով է գումարում Գանձասարի վանքի գավիթում, որտեղ ընթերցվում է Պետրոս Առաջինի ուղերձը: Եսային ու Ավանը լավ էին հասկանում, որ այս հրո-

վարտակն ու պատվիրակի ներկայությունը կարող են փրկել Արցախը տրոհվելու վտանգից և միավորող ուժ կհանդիսանան: Երեք Սղնախներից՝ Դիզակից, Վարանդայից ու Խաչենից Գանձասարում են հավաքվում 12 հազար զինվոր: Ամբողջ ութ օր Գանձասարում տոնախմբություն էր: Եսայի կաթողիկոսը Գանձասար է հրավիրում Ներսես կաթողիկոսին ու Ջրաբերդի զինվորականներին: Սակայն Ներսեսը մերժում է, պատճառաբանելով, թե Սարգիս, Թարխան ու Փանի հարյուրապետները Թթուտ գյուղ են գնացել (գյուղ, ոչ հեռու Ջրաբերդից), իսկ ինքը ձի չունի, որ Գանձասարի վանք հասնի: Սակայն շուտով Ջրաբերդի հարյուրապետ Սարգիսն իր մերձավորների հետ ներկայանում է Իվան Կարապետին և հպատակություն հայտնում ռուսաց կայսրին: Ի վերջո, վախենալով ռուսաց կայսրի պատժից, նրա պատվիրակի մոտ է գալիս և Գյուլիստանի տերը՝ Մելիք Բաղիրը, իր հերթին հպատակություն հայտնում ու Իվան Կարապետին հրավիրում Գյուլիստան: Պետրոս Առաջինի պատվիրակը ընդունվում ու մեծարվում է: Նրան հաջողվում է թուրքական ագրեսիայի նախաշեմին միավորել հայ ֆեոդալներին ու զինվորականությանը: Թե՛ Ջրաբերդի և թե՛ Գյուլիստանի տերերը ու զինվորականությունը հպատակություն հայտնեցին ռուսաց հզոր կայսրի կամքին ու երդվեցին ամեն ինչով նպաստել ռուսական զորքի կովկասյան գործողություններին: Ավանը այս միջոցին եռանդագին պատրաստվում էր դիմավորելու ռուսական զորքին, որի համար Շուշիի Ներքին բերդում (Հունոտի կիրճ) մեծաքանակ նժույգներ, ոչխար և կով, ինչպես նաև պարեն էր կուտակում: Հետաքրքիր է, որ Եսայի Ջալալյանի և Ավան զորապետի կողքին Արցախում երևան է գալիս ազատագրական շարժման մի նոր առաջնորդ ևս: Դա Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետն էր:

Իվան Կարապետը, որ մի առիթով Մեծ Սղնախ՝ Ավետարանոց էր գնացել, հրաժարվում է Շուշի վերադառնալ: Հետաքրքրություն է ներկայացնում Ավանի ու Միրզայի նամակը Իվան Կարապետին. *«... մեր թաք ու պարծանք հրամանքդ է, մեր գլուխ դու ես, մեք քեզ ծառայ ենք:... Դարցեալ այն, որ մեզ պարիշացիր, պիտի որ էն թարափն* (կողմը - Բ.) *պարիշացնես չումի* (մինչև - Բ.) *որ դանջենանք* (հանգստանանք - Բ.): *Դարցեալ հրամանքդ Թարխան ուզբաշուն վեր առնայ քեաս, կընանք Դափան»*:

Իվան Կարապետի միջոցով ռուսաց թագավորին հնազանդություն է հայտնում Գանձակի խանը: Երևանի ու Բայազետի խաները դիմում են Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցուն, խնդրելով հայտնել, իրո՞ք ռուսները հայոց Սղնախներ են եկել, ու եթե դա իրականություն է, ապա իրենք ևս պատրաստ են հպատակություն հայտնելու ռուսաց թագավորին: Իվան Կարապետի ու նրա առաքելության նկատմամբ առանձին հետաքրքրություն է ցուցաբերում Վրաստանի Մուհամադ Ղուլի խանը, սուրհանդակի միջոցով խնդրում պատվիրակից տեղեկություն հաղորդելու ռուսական զորքի ծրագրերի մասին:

1724 թվականի մարտի 5-ի Պետրոս Մեծին ուղղված նամակում Սղնախների հարյուրապետերն ու մելիքները գրում են, որ 20 հազարանոց զորք ունեն, որից 10 հազարն է հրազենով զինված: Կրկին խնդրում են կայսրից օգնական զորք ուղարկել: Իվան Կարապետը, որը դիվանագետի տաղանդ ու հմտություն էր ցուցաբերում, Պետրոս Մեծին ու ռուս գեներալներին ուղղված իր զեկուցագրերում ձգտում է նրանց մոտ մեծ հետաքրքրություն ու գայթակղություն առաջացնել դեպի Արցախը: Գրում է նրա բնական ու ընդերքի մեծ հարստությունների մասին, առաջարկում գոնե ձևի համար, ի տես ամենքի մի գունդ ուղարկել Սղնախներ:

Սակայն մեծ երկրների քաղաքական շահերը նրանց այլ քայլեր են թելադրում: Ռուսական դիվանագիտությունը, եթե Պարսկաստանի Շահ Թահմասպին առաջարկում է իր օգնությունը աֆղանների դեմ, ապա աֆղանների առաջնորդին հորդորում է ամուր մնալ տեղում և չզիջել թուրքերին: Զուգահեռաբար բանակցություններ է վարում թուրքական իշխանությունների հետ տարածքների վերաբաշխման հարցում՝ առժամանակ մի կողմ դնելով վրացիների ու հայերի ազատագրման ծրագրերը:

6. ԳԱՂԹԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ

Երկարատև բանակցություններից հետո Ռուսաստանն ու Թուրքիան դաշնագիր են ստորագրում: Ռուսները շտապում էին իրենց մերձկասպյան նվաճումները ամրապնդել պայմանագրով և օրենքի ուժ տալ: Ըստ դաշնագրի Շամախի քաղաքը իր շրջակայքով ու Շիրվանի դաշտի բնակավայրերով հանձնվում է Սուլթանի վասալ, լեզգիների առաջնորդ Հաջի Դավուդի տիրապետությանը: Փաստորեն լեզգիները, Աղվանքի թագավորության անկումից մեկուկես հազարամյակ հետո, թեկուզ վասալական կարգավիճակով, այնուամենայնիվ, ինքնավարություն են ստանում: Կասպից ծովին կից գավառները մնում են ռուսական տիրապետության տակ: Անդրկովկասի մնացած մասը անցնում է Թուրքիային: Կուր և Արաքս գետերի միախառնման վայրը դառնում է Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի սահմանային կետը: Ռուս-թուրքական դաշնագրի համաձայն, եթե Պարսկաստանը դեմ լինի, ապա Ռուսաստանն ու Թուրքիան պետք է միասին պատերազմեն նրա դեմ:

Ղափանում ևս մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ռուսաց պատվիրակի նկատմամբ: Ղափանն ու Արցախի սղնախները անմիջականորեն կապված էին իրար: Ղափանից Դավիթ Բեկը լուր է ուղարկում Շուշի՝ Ավանին, որ քրդերը հարձակվել են Ղափանի վրա, կոտորել բնակիչներից չորս հազար հոգու, թալանել, շատերին գերի տարել: Ավան հարյուրապետը իր զորքով իսկույն մեկնում է օգնության՝ քրդերի դեմն առնելու:

Մարտավարության տեսանկյունից Ղափանի ու Սղնախների կռիվները խիստ տարբեր էին: Ղափանում շատ էին թուրքական բնակավայրերը: Ուստի Դավիթ Բեկի զորքերը հարկադրված էին անսպասելի ու շեշտակի գրոհներով հանկարծակիի բերել նրանց և ոչնչացնել: Դա պարտիզանական պատերազմ էր հիշեցնում: Իսկ Արցախում նման բնակավայրեր չկային, ու արցախցիները պետք է պատրաստ լինեին արյունահեղ մեծ ճակատամարտի: Սյունիքում լուրջ խնդիր էր և քրդական գործոնը: Մահմեդական քրդերը Ղափանի գյուղերի վրա էին հարձակվել Շահ-Թահմասպի հրահանգով, նպատակ ունենալով ցրել հայկական զորքերը:

Երբ Ավանը 10 հազարանոց զորքով Ղափան է հասնում, քրդերը, չսպասելով պատասխան հարվածի, հեռանում են: Ավանի ու Դավիթ Բեկի միջև գոյություն ուներ փոխադարձ հարգանք: Երբ Ավանի այստեղ գտնվելու օրերին Դավիթ Բեկը, դժգոհ Մելիք Փարսադանից ու իր փեսա Տեր Ավետիսից, ձերբակալում է նրանց ու բանտարկում Շնհերի (Շինուհայր) բանտում, Ավանը ազատում է այդ քաջ

հրամանատարներին ու, հանձնելով Դավիթ Բեկի տրամադրությանը, պատվիրում է խնայել քաջերի կյանքը: Ավանի ու Դավիթ Բեկի միացյալ զորքը պաշարում է Որոտնաբերդը, սակայն չի կարողանում գրավել այն: Ավանը երկար պաշարելու ժամանակ չէր կարող ունենալ, ուստի վերադառնում է Արցախ: Իսկ Դավիթ Բեկը իր զորքով նորից է պաշարում բերդը, և ահա մեկ շաբաթվա մարտերից հետո մի անձրևային օր, փլվում է բերդապարսպի մի հատվածը, հայ զինվորները ներս են մտնում ու ոչնչացնում թուրք զավթիչներին:

Ավանի հետ Սյունիք է գնում Իվան Կարապետը: Նա այստեղ մնում է մեկ ամիս և հուլիսին վերադառնում Մեծ Սղնախ: Դափանի ապստամբության առաջնորդներն ու ողջ բնակչությունը հպատակություն են հայտնում ռուսական կայսրին, հատուկ նամակով խնդրում, որ օգնեն օտար բռնակալներից ազատագրելու իրենց հայրենիքը:

1724 թվականի հունիսի 7-ին թուրքական զորքը գրավեց Երևանը: Մի շաբաթ հետո կնքվեց Ռուս-թուրքական պայմանագիրը, որով Կասպից ծովի արևմտյան ափերը, մինչև Ռեշտ նավահանգիստը, մնում են Ռուսաստանին, իսկ Կուր ու Արաքս գետերի միախառնման կետից արևմուտք՝ հանձնվում են Օսմանյան Թուրքիային: Թուրքերը իրար հետևից գրավում են Թիֆլիսը, Բորչալուն,Ղազախը, Լոռին և ընդհուպ մոտենում Գանձակին: Արցախցիների առջև կրկին ծառացավ լինել-չլինելու և կռվել կամ չկռվելու հարցերը: Այլևս Սղնախները Իվան Կարապետին չեն հավատում: Սղնախների միջև վերսկսվում է թշնամությունը: Մելիք Եսային նամակով առաջարկում է Ավանին հեռանալ Ռուսաստան, հակառակ դեպքում սպառնում է ձերբակալել ու հանձնել թուրքերի ձեռքը: Սակայն Ներսեսը, զգալով ներքին երկպառակության վտանգը, խոհեմաբար ընդունում է Եսայու գահերեցությունը և հպատակություն հայտնում Գանձասարին: Եսայի ու Ներսես կաթողիկոսներին մեծ դժվարությամբ հաջողվում է հաշտեցնել զորապետներին:

Թուրքական զորքերի հրամանատար Օմար փաշան ստիպում է Էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսին նամակ գրել Գանձասարի Եսայի կաթողիկոսին, պահանջելով, որ համոզի Սղնախների զինվորականությանը հպատակություն հայտնելու Թուրքային, պատգամավորներ ուղարկելու թուրքերի հրամանատարություն, այլապես

սպառնում են մտնել Արցախ և կոտորել բոլոր հայերին: Սղնախների հրամանատարներն ու հոգևոր առաջնորդները որոշեցին մերժել թուրք փաշայի առաջարկն ու սկսեցին եռանդորեն պատրաստվել դիմագրավելու թուրքերի ներխուժմանը: Սղնախների ուժերի համախմբման գործում մեծ աշխատանք է կատարում Պետրոսի պատվիրակը, որը փաստորեն կոորդինացնում էր ապըստամբությունը: Պետրոս Առաջինը Իվան Կարապետին հրահանգում է ամեն կերպ թույլ չտալ թուրքերին մտնելու Արցախ, մինչև որ իրենք օգնության գան: Ավան զորավարն ու շիրվանցի հայ զինվորները երբեմն չէին դիմանում Գյուլիստանի ու Զրաբերդի մելիքների դավերին և վճռում էին հեռանալ Արցախից, մանավանդ, որ Պետրոս դի Սարգիս Գիլանենցը (հայ վաճառական, որը առևտրականների մի ամբողջ համակարգի միջոցով կարևոր տեղեկություններ է հավաքում տարբեր երկրների մասին ու հաղորդում ռուսական հրամանատարությանը) Շամախիի ու Շաքիի հայերից էսկադրոն էր կազմել, որը կռվում է ռուսական բանակի կազմում: Ամեն անգամ Շուշիի շրջակայքի բնակիչները աղաչում էին Ավանին, որովհետև, ինչպես Իվան Կարապետն է գրում իր 1724 թվականի հունիսի զեկուցագրում. *«Եթե շիրվանցին էս երկրես թե էսօր դուրս գնայ, յեքսն անհավատն զէ գայ էս երկիրը, զէ զավթի և եսիր կանի»: Ապա գանգատվում է Գյուլիստանցի հարյուրապետ Եսայիից. «Եւ Եսային գրում այ՝ թե ինչ աս նստեյ շիրվանցոց քշտին, վեր կաց գնայ: Եվ մին էլ ասում այ թե՝ գնալ չես, քեզ կտամ Չոբան Յաշամին»*[43]:

Եսայի կաթողիկոսը, որ այցի էր գնացել Ավանին, նամակ է գրում Մեծ Սղնախ՝ Իվան Կարապետին. *«Թե էս կողմերի ալ հալն իմանաս, ես եկի Տուգուղս* (Դիզակ - Բ.) *Ավանին եարան* (վերքը - Բ.) *փոքր է աստուծով շուտ կու լավանայ: Իրեանց մեջն էլ հալա փարաղաթ* (կամաց-կամաց - Բ.) *են, վերջն աստված գիդի, ճշմարտութիւն չկայ: Մեք էլ շատ խոսեցինք սոցա մեջն:... Չալաբիտ* (քյոխվա - Բ.) *հոգսն էլ քաշող չիլալ* (Մոսկվա գնալու ճանապարհածախսի մասին է խոսքը - Բ.) *դորա կողման է, պիտի որ խարջի չտալու համար չգրես, մէկ էս անգամ էլ գնայ գայ: Եւ լէր ողջ տէրամբ»*[44]:

Հավանաբար, Ավան հարյուրապետը վիրավորվել էր թուրքերի հետ ընդհարման ժամանակ: Զրաբերդի Մելիք Եսային իր՝ Աբրահամ և Սարգիս եղբայրների հետ հարձակվում է Մեծ Սղնախի վրա՝ գիշերը անակնկալի բերելով Ավանի եղբորը՝ Թարխան զորապետին:

Հետ ճանապարհին ջրաբերդցիները ու գյուլիստանցիք թալանում են Վարանդայի գյուղերը: Գերեվարած Թարխանին տանում են Գյուլիստանի բերդը, այստեղ ստիպում, որ հպատակություն հայտնի իրենց: Սակայն Բաղիրը, ենթարկվելով Իվան Կարապետի ճնշմանը ու խուսափելով Ավանի վրեժխնդրությունից, Թարխանին ազատ է արձակում:

Այս ամենին զուգահեռ Պետերբուրգում հասունանում էր մի նոր աղետ, որին աղցախցիները պետք է առնչվեն վեց ամիս հետո միայն: Անտոն քահանան, որը քյոխվա Չալաբիի հետ Պետերբուրգ էր մեկնել, տանելով Եսայի կաթողիկոսի և մելիքների նամակներն ու հավատարմագրերը, պատռում է դրանց մի մասը և նոր նամակ կազմում: Այս նոր նամակում մելիքների և հարյուրապետների անունից խնդրում *«նորին կայսերական մեծությանը բարեհաճի նրանց իր հովանավորության տակ վերցնել և հրամայել նրանց համար բնակության տեղեր նշանակել Կասպից ծովի մոտ Գիլիանում, Սալյանում, Բաքվի մոտ և Դերբենտում, որովհետև նրանք հայերը, բոլորովին չեն ուզում այլևս լինել մահմեդական լծի տակ...»*[45]: Դեռևս 1722 թվականին գեներալ Մատյուշկինին ուղարկելով Կասպյան ծովեզերքը նվաճելու, Պետրոս Մեծը հրահանգում է նվաճած տարածքները բնակեցնել հայերով և այդպես ամրապնդել դրանք: Ըստ երևույթին, շամախեցի Անտոն քահանան համաձայնել էր այս ձեռնարկին, Արցախում ունենալով մի հզոր պաշտպան, որը ևս հենց Կասպիականի ծովեզերքը փոխադրվելու մեջ էր տեսնում Արցախի հայության փրկության միակ ելքը: Դա Ավան հարյուրապետն էր ու նրա հետ այստեղ եկած շիրվանցի զինվորականությունը:

Իվան Կարապետը շարունակում է Մեծ Սղնախում մնալ, որից հաճախ էր բողոքում Ավանը: Ահա օգոստոսին Ավան ու Միրզա հարյուրապետերի նոր նամակը պատվիրակին. *«Ավան պէկ ուզբաշիս և Միրզա պէկ ուզբաշիս շատ, շատ պարօվ, հազար պարի հասուցայնեմ Պարոն էլչի* (պատվիրակ - Բ.) *պէկ, մենք ամենս ի քուն հրամայնայցդ ծառայ ենք, հրամայքդ մեզանից ի՞նչ տեսիր, ի՞նչ լսեցիր, որ մեզանից պիտայմազ ես եկել. մենք քու ոտից հողն ենք, մեր տուն(ն) էլ այ քու, մենք էլ ենք քու, պիտի որ հրամայնքդ պազի* (որոշ - Բ.) *չար մարթի ականջ չի դնես, մեզայնից խաթրճամ լինես, դու ողջ լինես»*[46]:

1724 թվականի աշնանը, գեներալ Մատյուշկինի վկայությամբ Ավան հարյուրապետը, հավաքելով 10 հազար զինվոր մարդիկ, հայոց Սղնախից ցանկացել է հեռանալ Գիլան՝ ռուսաց մոտ, բայց *«քուլազոր մարդիկ լաց լինելով խնդրել են նրան, որ եթե նա գնա, իրենց բոլորին կոչնչացնեն, և նրանց հույսը նրա վրա է: Եվ նա լուրջ խորհելով մնացել է Սղնախում և բերդ է կառուցում»*[47]:

Ուրեմն Ավանը ամրացնում է բերդը: Օմար փաշան հոկտեմբերին սպառնալով նամակ է գրում Սղնախի հրամանատարությանը:

Գիտակցելով թուրքական բանակի կողմից սպառնացող վտանգը, Ավանն ու շրջակա գյուղերի բնակչությունը բոլոր կողմերից ամրացնում են Շուշիի բերդի պարիսպներն ու աշտարակները: Թուրքական բանակը մտադիր էր 1725 թ. գարնանը արագորեն գրավել Արցախը, մտնել Շամախի, ապա շեշտակի գրոհով գրավել Բաքու նավահանգիստը: Թուրքական առաջին զորագունդը, շրջանցելով Գանձակը, շուրջ 4700 ասկյար Շահին, Սալահ և Ալի փաշաների հրամանատարությամբ անսպասելիորեն մտավ Վարանդա:

Այս մելիքության զինվորականությունը հանկարծակիի եկավ և զգաց, որ պատրաստ չէ զինված դիմադրություն ցույց տալու թուրքերին: Վարանդայի մելիք Բաղր Բ-ն, որը ավելի կողմ էր ճկուն քաղաքականությանը և դիվանագիտական քայլերով արդեն մեկ անգամ փրկել էր իր երկիրը լեզգիական ավարառուներից, ընծաներով ընդառաջ գնաց թուրք զորապետն առաջարկեց ձմեռը ապահով անցկացնել արցախյան գյուղերում, իր վրա վերցնելով սննդի, կացարանի հոգսերը: Թուրք հրամանատարությունը, որը խուսափում էր լեռնցի հայերի հետ բախումից, շատ գոհ էր նման ելքից և սիրով ընդունեց այս առաջարկը: Օսմանցի զինվորներին 100-ական, 200-ական և 300-ական խմբերով բաժանեցին 33 գյուղերում և 2 օր կերակրեցին, ապա գիշերը, կոտորեցին բոլորին: 200 հոգու, այդ թվում՝ Սալահ փաշային, գերի վերցրին: 150 հոգի կարողացան ճողոպրել: Սպանեցին նաև Շահին և Ալի փաշաներին: Սալահ փաշան պատմեց, որ թուրքերը որոշել էին հարյուրապետներին իրենց մոտ հրավիրելով, բոլորին բաճկոններ նվիրել, երբ զինվորները մտնեն Կուր գետի մոտ գտնվող քաղաքները, գլխավորներին կոտորեն և տիրեն Արցախին:

Թուրքերի դեմ տարած փայլուն հաղթանակը ավելի միավորեց հայ զինվորականությանը: Հայկական Սղնախներն ու մելիքու-

թյունները ավելի համախմբվեցին զինվորական հրամանատարության շուրջը:

Սղնախների զինվորականությունը գիտեր, որ օսմանյան բանակը այս անգամ կհարձակվի ավելի մեծ ուժով, ուստի, չսպասելով ռուսաց օգնությանը, հաշտության և համաձայնության խոսքով դիմեց պարսիկներին: Թահմասպ շահը թուղթ էր գրել և ընծաներ ուղարկել հայ մելիքներին և զորահրամանատարներին: Երկյուղելով, որ ավելի մեծ բանակ է գալու Սղնախների վրա, արցախցիները ավելի իրական դաշնակիցներ էին փնտրում: Բոլոր Սղնախներից 200 հոգանոց մի պատվիրակություն է մեկնում Ղազվին՝ Շահ Թահմասպի նստավայրը, որտեղ և Քյալբլաի բեկի հետ խաղաղության պայմանագիր են կնքում: Շահն առատաձեռնորեն բոլորին ընծաներ է տալիս, հրամանատարներին մեկական բաճկոն նվիրում: Սակայն հայերը միևնույն ժամանակ սրտատրոփ սպասում էին ռուսաց օգնությանը: Հենց այդ ժամանակ էլ, մայիսի 16-ին, վեց ամիս ուշացումով, Անտոն քահանան և Քյոխվա Չալաբին բերում են Պետրոսի հրովարտակը գաղթի մասին: Այդ ընթացքում 1725 թ. հունվարի 28-ին մահացել էր Ռուսաստանի կայսր Պետրոս Մեծը, որին փոխարինել էր նրա կինը՝ Եկատերինա առաջինը: Զգուշության նպատակով Անտոնն ու Չալաբին Գանձասարի փոխարեն Ավան հարյուրապետի մոտ՝ Շուշի բերդ են գալիս: Ավանը պատվիրակներին ոչ թե Գանձասար է տանում, ինչպես ընդունված կարգն էր, այլ մարդ է ուղարկում Եսայի կաթողիկոսի հետևից: Շուշին արդեն վերականգնել էր Կարկառի բերդի հին հռչակը և Արցախի ամենաամուր հենակետերից մեկն էր համարվում: Շուշի բերդում էլ կազմվեց զորապետական խորհուրդ: Այստեղ էին նաև պատվիրակ Իվան Կարապետը, բոլոր մելիքներն ու զորահրամանատարները:

- Տէր Անտոն, - քահանային դիմեց հրամանատարներից մեկը, - քեզ ուղարկեցինք՝ գնա, իմացիր, տես դօշուն (զորք - Բ.) կգա մեզ օգնության, թե ոչ:

- Ե՞րբ ասացինք՝ մեզ համար տեղ ուզիր Դարպանդ, Պաքու, Գիլան կամ այլ տեղ, որ մենք գնանք, տեղն կենանք, - դիմեց մեկ այլ զորապետ:

- Մեր գիրն, որ դու տարար, ուստի՞ էր գրած, թե մեզ տեղ տար, որ գնանք տեղդ կենանք, - հարցրեց Եսայի կաթողիկոսը:

Անտոն քահանան չի կարողանում պատասխանել այս հարցերին: Իհարկե, նա չէր կարող մատնել Ավան զորապետին: Երկու օր հետո նա հենց Ավանի օգնությամբ անպատիժ հեռանում է Արցախից, վերադառնում հայրենի Շամախի քաղաքը:

Խորհուրդը որոշեց շտկել կատարված սխալը: Որոշեցին չհակառակվել ռուսաց արքունիքի կամքին: Պետք է ցույց տալ, իբր հայերը պատրաստ են գաղթելու, բայց և պետք է ցույց տան գաղթի դժվարությունները և նոր օժանդակ միջոցներ խնդրեն կայսրից: Կրկին Քյոխվա Չալաբիին ուղարկում են Պետերբուրգ, բայց արգելելով նրան բերանացի հայտարարություններ անել՝ հանդիպումների ընթացքում: Իվան Կարապետը կանցլեր կոմս Գոլովկինին ուղղված նամակում գրում էր, որ Անտոն քահանայի հայտարարությունը գաղթականության մասին չի համապատասխանում հայ ժողովրդի տրամադրությանն ու ցանկություններին և սոսկ անձնական կարծիքն էր: Ինչպես երևում է, ռուսաց արքունիքի պատվիրակը ևս խիստ դժգոհ էր ժողովրդի Արցախից գաղթելու գաղափարին: Եսայի և Ներսես կաթողիկոսները, ինչպես և բոլոր Սղնախների զորապետներն ու մելիքները հուլիսի 25-ին նամակ են հղում Պետերբուրգ՝ Պետրոս Մեծին, չիմանալով, որ կայսրը յոթ ամիս առաջ է վախճանվել:

Ա մասի հղումների ցանկ

[1] Ի. Յակոբ սարկավագ Պողոսեան Ջավարեանց. «Պատմութիւն Գաւառին Արցախու», Երևանի Մատենադարան, ձեռ. նո. 2734, էջ 19:

[2] "Строитель" газета, К. Сеидов, "Мёртвые съели живых", 2 февраля 1966г. Баку.

[3] ՀՊԿՊԱ Ֆ319, ց.1, գ.6, թ.2:

[4] Երևան, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 211, էջ 359բ-360ա: Տե՛ս նաև «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ե., 1955, էջ 384:

[5] ՄՄ, ձեռ.1575, էջ 264ա:

[6] "Памятники архитектуры Азербайджана" том 2, Баку, 1950, Али-Заде А. М., Саркисов А. В. "О некоторых архитектурных памятниках Шуши" (По материалам экспедиций, проведенных управлением по делам архитектуры про Совмине Аз. ССР), стр. 120-129.

[7] Э. В. Авалов "Архитектура города Шуши", Баку, 1977, стр. 25.

[8] Նույն տեղում, էջ 20-21:

[9] Մ. Խորենացի «Հայոց պատմություն», Եր. 1990, էջ 73 (այսուհետ՝ Խորենացի):

[10] Կիրակոս Գանձակեցի. «Հայոց պատմություն» Եր. 1982, էջ 258 (այսուհետ՝ Գանձակեցի):

[11] Բ. Կարապետյան. «Հարյուր տարվա երկխոսություն» Թեհրան, 1986 թ., էջ 121:

[12] Շ. Մկրտչյան «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները», Երևան, 1985թ., էջ 209

[13] Եր. Լալայան, Վարանդա, «Ազգագրական հանդես» II, Եր., 1998, էջ 33:

[14] Մ. Խորենացի «Հայոց պատմություն» Երևան, 1990, էջ 67

[15] Т. В. Гамкрелидзе, Вяч. Иванов, "Индоевропейский язык и индоевропейцы", т. 2, Тбилиси 1984, стр. 893, 912-913.

[16] Там же, стр. 896.

[17] Պատմաբանները հաճախ նրան արցախցի էին անվանում, որի պատճառը Խաչենի ու Արցախի նույնանուն սրբ. Հակոբավանքերն են:

[18] Լեո, «Հայոց պատմություն», հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 12:

[19] "Сборник актов, относящихся к обозрению истории армянского народа", М., 1833, стр.5.

[20] Մակար Բարխուտարյանց, «Պատմություն Աղվանից» Բ հ., Վաղարշապատ, 1902 թ., էջ 43:

[21] Խուրուշ իլավ-հռչակի տեր դարձավ:

[22] Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազգագրական մտքի պատմության, Բ հ., Եր. 1959, էջ 609:

[23] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան N 21, թղթապանակ 240, էջ 1:

[24] Եսայի Ջալալյան «Պատմություն համառոտ Աղվանից երկրի», Շուշի, 1831, էջ 51-52 (Այսուհետ՝ Ե. Ջալալյան):

[25] Соловьев, "История России", 1868, т. 8, стр. 29.

[26] Մակար Բարխուտարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 152:

[27] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», Երևան, 1983, էջ 326:

[28] Աշոտ Հովհաննիսյան «Դրվագներ...», գիրք 2, էջ 607:

[29] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», Երևան, 1983, էջ 8:

[30] Եսայի, էջ 44:

[31] Մակար Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, հատոր Բ, Վաղարշապատ, 1902, էջ 43:

[32] Մակար Բարխուտարյանց, «Պատմություն Աղվանից» Բ հ., Վաղարշապատ, 1902 թ., էջ 43:

[33] Եսայի Ջալալյան «Պատմություն համառոտ Աղվանից երկրի», Շուշի, 1831, էջ 52:

[34] Եսայի Ջալալյան «Պատմություն համառոտ Աղվանից երկրի», Շուշի, 1831, էջ 60

[35] Եսայի, էջ 58-59:

[36] Բ. Ուլուբաբյան, «Դրվագներ հայոց արևելից կազմանց պատմություն», Եր., 1981, էջ 206:

[38] Մ. Բարխուդարյանց, Պատմություն Աղվանից, հ. Բ, Վաղարշապատ, 1902:

[39] Г. А. Езов "Сношение Петра Великого с армянским народом", СПБ, 1898, стр. 357

[40] Ջոխվա Ջալաբին մի դժբախտ հայ էր, որի ընտանիքի 19 անդամներին գերեվարել էին լեզգիները: Նա հույս ուներ ռուսների օգնությամբ ազատագրել ընտանիքը:

[41] Լեո, հ. 3, գ. 2, Երևան, 1973, էջ 147:

[42] Ա. Գ. Աբրահամյան, «Մի էջ Անդրկովկասի ժողովրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից», Երևան, 1953, էջ 145 (այսուհետև՝ Աբրահամյան, «Մի էջ...»): Նամակի վերջում կնիքի կողքին «Մորս այ» արտահայտությունը նկատի ունի կնիքը մուրով պատելը:

[43] Աբրահամյան, «Մի էջ...», էջ 210:
[44] Աբրահամյան, «Մի էջ...», էջ 169:
[45] Լեո, էջ 160:
[46] Աբրահամյան, «Մի էջ...», էջ 222:
[47] ԳԱՓԿԷ, Ф. СРП, 1725, N 25, стр. 365.

ՄԱՍ Բ (1726-1792 թ թ.)

1. ՇՈՒՇԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Գոստոսին օսմանյան 40 հազարանոց բանակը Սարը-Մուստաֆա փաշայի գլխավորությամբ գրավում է Գանձակը: Նրան օգնում էին լեզգիների առաջնորդ Դավուդ-Բեկը, նրա եղբայր Հաջին, Ահմեդ խանը՝ իրենց գնդերով: Դավուդ-Բեկը Սուլթանից նոր զորք է խնդրում Բաքվի վրա արշավելու նպատակով: Սակայն թուրքերի ճանապարհին Ղարաբաղի Սղնախներն էին, առանց նրանց ընկճելու անհնար կլիներ դեպի Շամախի և Բաքու արշավելը: Բացի այդ, նրանք լեցուն էին վրեժխնդրությամբ: Արցախցիների դեմ կռվին նրանք հատուկ էին պատրաստվում, բայց և երկյուղում էին Սղնախների միացյալ ուժերից, որի հարվածների տակ խայտառակ պարտություն էին կրել Գանձակի մոտ:

Թուրքական զորքերի առաջին հարձակումը տեղի ունեցավ 1726 թ. հունիսին: Նրանք հանկարծակի հարձակվեցին Ղազանչի, Ղապրթու և Չանկաթաղ գյուղերի վրա (այժմ՝ Մարտակերտի շրջան, ԼՂՀ - Բ.): Թուրք ավարառուները թալանեցին գյուղերն ու կոտորեցին բնակիչներին: Հայկական զորքերը հակահարձակման անցան հունիսի 10-ին: Ճակատամարտը տեղի ունեցավ Խաչենի գետահովտում: Թուրքերը պարտություն կրեցին, թողնելով ավարն ու գերիներին, մեծաքանակ զոհերի գնով դեպի Պարտավ ծողոպրեցին: Սակայն օսմանցիների գլխավոր նպատակը արցախյան ամենամուր հենակետի՝ Շուշիի գրավումն էր: Սարը-Մուստաֆայի պատվիրակը դիմում է Ավանին՝ հանձնվելու առաջարկով: Իհարկե, նա նաև հետախուզելու նպատակ ուներ: Թուրք փաշան Սղնախներից հինգ տարվա հարկ էր պահանջում: «*Եթե չուղարկեք տուրքը,- հայտնում է փաշայի պատվիրակը,- ապա կգանք և ուժով կտանենք*»: Հայերը պատասխանում են, որ ոչինչ չունեն տալու թուրքերին, իսկ եթե գալու են, թող գան. իրենք աստծո օգնությամբ կդիմավորեն նրանց, քանի որ նրանցից չեն վախենում: Պատվիրակ Իվան Կարապետի՝ գրաֆ Գոլովինին ուղղված նամակից հայտնի է դառնում, որ Պար-

տավից Սարը Մուստաֆան արշավել է դեպի Շամախի, սակայն զգալով թիկունքում հայոց Սղնախների շունչը, համալրվում է Դավուդ-Բեկի, նրա եղբոր, մյուսների գնդերով, հսկա բանակով շարժվում է դեպի Պարտավ, այստեղ վերադասավորելով ուժերը, ուշադրությունը դարձնում է դեպի Շուշի բերդը: Թուրք ռազմավարները հասկանում են, որ գրավելով այս կենտրոնը, կտիրեն և ողջ Արցախին:

Հետևում է թուրքական բանակի հարձակումը Շուշիի ուղղությամբ: Թուրքական բանակը սկզբում ողջ ուժերը կենտրոնացրեց Ներքին բերդի վրա՝ երկու կողմերից պաշարելով կիրճի մուտքերը: Ուժերը խիստ անհավասար էին, և Ավանը իր մարտիկներով ապառաժները բարձրացավ, վերևից ծորում մի իսկական սպանդ սարքեց: Սակայն թուրքերը տիրացան այստեղ գտնվող նժույգների երամներին, ոչխարի հոտերին ու նախիրներին, որ Ավանը կուտակել էր սպասվող ռուսական զորքերի համար: Ավանը կռվելով նահանջում է Ավետարանոցի բերդը, այստեղից շարունակում է հարձակումները: Թուրքական բանակը իր ողջ ուժերը նետում է դեպի Շուշիի Վերին բերդը: Պաշտպանությունը գլխավորում էին Օհան և Սիմոն հարյուրապետները: Ողջ շրջապատը լցվել էին թուրքական զորքերով: Շրջակա գյուղերի բնակիչները հավաքվել էին բերդում և օգնում էին պաշտպանությանը: Նրանք քարերի կույտեր էին հավաքել պարիսպներին ու աշտարակներին ու քարի կարկուտ էին թափում թշնամու վրա: Միևնույն ժամանակ կաթսաներում եռացնում էին ծեթ ու վերևից թափում ցած: Թուրքերը փորձում էին թնդանոթներով փլել պարիսպները, բայց ապարդյուն: Շիկաքարից ու Կաչաղակաբերդից հայկական ջոկատները հանկարծակի հարձակումներ էին գործում թշնամու վրա ու մեծ կորուստներ պատճառում նրանց: Իվան Կարապետի և Ավան զորապետի տվյալներով թուրքական զորքը ութ օր տևած ճակատամարտի արդյունքում կորցրեց ութ հարյուր զինվոր, սպանվեցին նաև Ղրխչեշմե Աղասի և Ենգիչար Աղասի զորահրամանատարները: Գլխավոր հրամանատար Սարը-Մուստաֆա փաշան *«քշերով վեր կացավ երկու օրեն ճամբան մին օր գնաց»*[1]:

Թուրքերը այլևս անօգուտ համարեցին նման խոշոր ուժերով հարձակումները: Արցախի պատմության մեջ էջեր կան, որոնք իրոք ճակատագրական են եղել ոչ միայն երկրամասի, այլև ողջ Հայքի

համար և վճռել են հայերի իրենց երկրում լինել-չլինելու խնդիրը: Նման վճռական նշանակություն ուներ և Շուշիի ճակատամարտը: Հաստատվելով Շուշիի կարևորագույն հենակետում և վերացնելով այս ուժեղագույն սղնախը, թուրքերին այլևս ոչինչ չէր խանգարի ընկճելու և իրեն ենթարկելու Արցախի մյուս սղնախները: Դրան, անշուշտ, կհետևեր արցախահայության բռնագաղթը դեպի Բաքու, երկրամասը վերջնականապես կբնակեցվեր թուրքերով: Իսկ Հայաստանը առանց Արցախամուր երկրամասի դժվար էր պատկերացնել: Հետաքրքիր է, որ Ավան և Օհան հարյուրապետները ռուսաց արքունիք ուղարկած 1726 թ. նոյեմբերի 15-ի նամակում հայտնում են, թե երբ Սարը Մուստաֆան իր զորքով Շամախուց Պարտավ էր եկել, *«Եսայի հոգևոր տերն Ղարայպաղի մելիքներովն և քաթղուդովն գնացին Պարդայ Սարասկարին»* (Սարը Մուստաֆային - Բ.) *դանշար* (հպատակություն հայտնելու - Բ.)», *ու իբր թուրքերին բերեցին Շուշիի վրա*[2]: Ինչ խոսք, որ սա անհավանական է, ու այդ մասին ոչինչ չի գրում Իվան Կարապետը, և բացի այդ, թուրք զորապետը հայ հոգևոր առաջնորդին ու մելիքներին երբեք չէր նեի 1725-ի կոտորածը: Ու իր հերթին մեծ հայրենասեր, ազատագրական շարժման քաղաքական ու հոգևոր ղեկավարությունը ստանձնած Եսայի Ջալալյանը անընդունակ է դավաճանության: Այս առեղծվածը մենք պետք է փնտրենք Եսայի կաթողիկոսի և Ավան զորապետի հարաբերություններում: Եսային շատ ջանքեր էր թափում Ավանին համոզելու, որ չհեռանա Սղնախներից: Մի գրության մեջ Եսային բողոքում էր Ավանից, ասելով, որ ինքը ընդամենը մի եկեղեցական է ու երբեք չի խառնվել զինվորական գործերին: Քաղաքական ու ռազմական ղեկավարների հարաբերությունների սրումը, անշուշտ, իր հետքն է թողնում ողջ ազատագրական պայքարի վրա: Ավանն ու Եսային հավատարիմ էին ռուսական կողմնորոշմանը: Սակայն Ավանը միշտ առիթ էր որոնում (ու նաև ստեղծում) արցախահայությանը իր հետ Ռուսաստանին ենթակա տարածքները տանելու համար:

Իվան Կարապետի խորհրդով Արցախի մելիքները կրկին դիմում են ռուսական արքունիքին՝ օգնական ուժեր խնդրելով երկրի պաշտպանության համար: Հայ զինվորականությունը զգում էր, որ ավելի անխնա ու կատաղի են դառնալու թուրքական բանակի հար-

ձակումները, ու այլևս առանց ռուսների օգնության դժվար կլինի դիմագրավելը: Սղնախում մեծ ոգևորություն առաջացրեց Քյոխվա Չալաբիի Պետերբուրգից բերած բերանացի տեղեկությունն ու կայսրուհի Եկատերինայի հրովարտակը, որով շուտափույթ օգնություն էին խոստանում հայերին: Հրամանատարների մի պատվիրակություն մեկնում է Սալյան՝ ռուսական զորքերի հրամանատար գեներալ Դոլգորուկովից ստանալու կայսրուհու խոստացած օգնությունը: Գեներալը Ռեշտում էր, որտեղ և հանդիպելով հայ զինվորականներին, մերժում է նրանց դիմումը, հայտնելով, որ ինքը կայսրուհուց Արցախ զորք ուղարկելու թույլտվություն չի ստացել: Քյոխվա Չալաբին Բաղի հարյուրապետի հետ շտապ Պետերբուրգ է մեկնում: Իշխան Դոլգորուկովը իր կառավարությանը հղած զեկուցագրում զարմանք է հայտնում, թե Սղնախների հայերը ինչպե՞ս են կարողանում դիմանալ թուրքական հզոր բանակի հարվածներին: Նա իր կառավարությանը առաջարկում է համաձայնություն կնքել Բ. Դռան հետ՝ մինչև Արաքսի հովիտը ընկած տարածքը հետ ստանալու պայմանով: Այդ դեպքում ռուսները հովանու տակ կառնեն հայերին, իսկ հայերն էլ օգտակար կլինեն ռուսների համար: Բացի այդ, ռուս գեներալը հայտնում է, որ Արցախի հայության համար միանգամայն անիմաստ կլիներ թողնել իրենց բարեբեր ու ընտիր հողերը ու տեղափոխվել անպտուղ տեղեր:

2. ՍՂՆԱԽՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Ռուսաստանի ծրագրերի իրականացման ճանապարհին խոչընդոտ էին նաև Անգլիան ու Ֆրանսիան, որոնք Թուրքիայի միջոցով փորձում էին խափանել ռուսների առաջխաղացումը: Պետրոս Առաջինից հետո իշխանությունը անցավ Գերագույն Գաղտնի խորհրդին, որը արևելյան հարցում ամենևին էլ հետևողական չէր: Արքունիքը այնուհետև անցնում է օտարերկրացիների ձեռքը (բիրոնովշչինա)[3], ու այլևս անհնար էր բարձրացնել հայերի օգնության հարցը:

Իհարկե, ռուսների նկատմամբ խորը հիասթափություն է ապրում հայ զինվորականությունը: Շատերը հեռանում են Սղնախներից: Կրկին երևան են գալիս ազգամիջյան անհամաձայնությունն ու երկպառակությունը: Մեղադրանքների մեծ մասը ուղղվում են Եսայի Չալալյան կաթողիկոսի դեմ, քանի որ նա էր նամակ հղում ռուսաց ցարին, շարունակ բոլորին հավատացնում, թե ռուսական բանակը պիտի գա: *«Իր այս պաշտոնին Հասան Չալալյան կրոնապետը վերաբերվել էր մի անդրդվելի շիտակությամբ և հավատարմությամբ,-* գրում է Լեոն,- *որը բոլորովին չէր համապատասխանում ռուսական ցարի երկդիմի քաղաքականությանը»:* Երբ օսմանյան բանակը չկարողացավ կոտրել Սղնախների դիմադրությունը, նրանք փորձեցին Եսայի կաթողիկոսին կաշառքներով իրենց կողմը գրավել: Հավանաբար, նման մի ապակողմնորոշիչ լուր հասցնելով զորավար Ավանին, թշնամին փորձել էր անվստահություն սերմանել զորապետի և քաղաքական ղեկավարի միջև, որը ինչ-որ չափով ստացվել էր: *«Գուցե հայերը կարողանային օգուտ քաղել իրենց թշնամու այս տրամադրությունից և լավացնել իրենց դիրքը, համաձայնության գալով նրանց հետ,-* գրում է Լեոն,- *բայց մենք արդեն շատ անգամ տեսանք, որ մեր լեռնցիները որքան լավ կռվողներ էին, այնքան էլ վատ քաղաքագետներ էին»:* Եսայի Չալալյանը կտրականապես մերժեց թուրքերի հետ մերձենալու ամեն մի հնարավորություն:

Թուրքական բանակի ընդհարումները Հայոց Սղնախների հետ շարունակվում էին այսուհետև ևս: Արյունահեղ կռիվներ, ինչպես գրում էր Մինաս վարդապետը, տեղի էին ունենում համարյա ամեն օր[4]:

Թուրքական կողմը ուժով չկարողացավ կոտրել Սղնախների դիմադրությունը, փորձեց դիվանագիտական միջոցներով համաձայնության գալ հայերի հետ: Սակայն քաղաքական նուրբ հարցերում Սղնախներն ու նրանց ղեկավարությունը չկարողացան ճկունություն հանդես բերել: Եսայի կաթողիկոսը անմիջականորեն մերժեց ամեն մի առաջարկություն անաղարտ պահելով իր հավատարմությունը ռուսական խոստումների հանդեպ:

Ռուսական ձեռնարկից դժգոհ Եսային չհուսահատվեց: Նրա ջանքերով էր, որ Արցախի զինվորականությունը միավորվեց, ամբողջական համակարգի վերածվելով, մի անհաղթահարելի ամրոց

դարձրեց ողջ Արցախը: Սակայն կաթողիկոսը ոչ միայն հմուտ առաջնորդ էր, այլև փայլուն պատմիչ:

Ընդհանրապես, Հայքի պատմության մեջ բոլոր կարևոր իրադարձությունները չէ, որ ունեցել են իրենց ականատես-գրողները, որոնք պետք է հավերժացնեին այդ անցքերը, դրանք փոխանցեին հետագա սերունդներին: Ցավոք, իր ժամանակի խոշորագույն մտավորականից ու գործչից մեզ ժառանգություն է մնացել միայն մի աշխատություն «Պատմություն համառոտ Ադվանից երկրի» վերնագրով: Մեզ է հասել այդ աշխատության միայն մի մասը: Եսայի կաթողիկոսը 1711 թվականից մինչև 1728 թվականը ողջ 17 տարի գրի էր առել տեղի ունեցող դեպքերն ու իրադարձությունները: Սակայն, չգիտես ինչու, հրատարակիչը (Շուշիի մետրոպոլիտ Բաղդասար Ջալալյան) Եսայի կաթողիկոսի այս ծավալուն աշխատանքը կամայականորեն կրճատում, համառոտեցնում է, ու 1839 թվականին տալիս տպագրության: Այդ մասին իր դժգոհությունն է հայտնում և վիպասան Ռաֆֆին[5]: Նա գրում է, որ իր ձեռքն էր ընկել Եսայու «պատմության» մի գրիչի արտագրածը, որը սակայն խունացած էր ու չէր կարդացվում: Իրոք, որ Եսայի Ջալալյանը դեպքերը շատ մանրամասն էր շարադրում, ու չէր կարող այդքան քիչ լինել 17 տարվա աշխատանքը: Ինչ խոսք, որ նա չէր կարող իր ժամանակի մեծ մասը նվիրել գրելուն, քանի որ մեծամասամբ զբաղված էր պատերազմներով, միջեկեղեցական կռիվներով, ռուսաց արքունիք և այլուր ուղարկվող նամակներ գրելով, որոնք ևս պատմական կարևոր տեղեկություններ են պարունակում: Նրա այս երկում գրական ձիրքի հետ ի հայտ է գալիս և գիտելիքների մեծ պաշարը, հայոց պատմության իմացությունը, որ նա կուտակել էր լեռնային երկրի վանքերի մատենադարաններում: Նա քաջածանոթ էր հայոց պատմությանը, նրա ավանդություններին և նրա մեծերի արժանի ժառանգորդն էր, նրանց մեծ գործի շարունակողը:

1728 թվականին վախճանվեց Եսայի կաթողիկոսը: Սա մեծ կորուստ էր Սղնախների համար: Ղափանում վախճանվեց տաղանդավոր առաջնորդ Դավիթ Բեկը: Սղնախների առաջնորդի դերը որոշ ժամանակ շարունակեց Ավան զորավարը: Իսկ թուրքական բանակը շարունակում էր նորանոր ճեղքեր որոնել Սղնախներում: Սակայն նրանք խոշոր հարված ստացան Ջրաբերդի Սղնախում, որի հրամանատար Տոնմազի գլխավորությամբ կասեցնելով թուրքերի

հարձակումը, 1728-29 թվականներին կոտորում են 5800 թուրք զինվոր[6]: Հավանաբար, սա այն ցեղապետն էր, որ Մաղավուզ գյուղից իր ցեղակիցներով տեղափոխվում է Թարթառի մյուս ափը և հաստատվում Տոնաշեն գեղատեսիլ վայրում: Համոզվելով, որ ռուս զորապետներից օգնություն աղերսելը ժամանակի ավելորդ վատնում է, Ավանն իր եղբորը Թարխան հարյուրապետին, ուղարկում է պատանի Պետրոս Բ-ի մոտ կրկին օգնություն խնդրելով: Սակայն ռուսական արքունիքի համար անդրկովկասյան նվաճումները ծանր բեռ են դառնում, և 1729 թվականի դաշնագրով Պարսկաստանին են վերադարձվում Աստարաբադն ու Մազանդարանը: Պետերբուրգում Պետական Գաղտնի խորհուրդը որոշեց միանգամայն այլ «օգնություն» ցույց տալ հայերին, առաջարկելով Թարխանին ու Սղնախների գլխավոր հրամանատարներին բարձր ռոճիկով ռուսական բանակ տեղափոխվել: Սա արդեն Սղնախների վախճանն էր:

Ռուսական քաղաքագետները ձգտում էին որևէ կերպ լուծել Պետրոս Մեծից ժառանգած Արցախյան հարցը ու համոզվելով, որ ամբողջական գաղթեցում չի ստացվում, փորձում էին դիվանագիտական ճանապարհով մասնակի գաղթեցման հարց լուծել: Ըստ երևույթին, ռուս քաղաքագետները որոշեցին մարտունակ զինուժ ներգրավել իրենց բանակի շարքերում: Ռուսաց պետական գաղտնի խորհրդի որոշումով, որ կայացել էր Ավանի կողմից Մոսկվա ուղարկած Թարխան հարյուրապետի հետ բանակցությունների հիման վրա, հայտարարվում էր, որ եթե ինքը Թարխանը կամ նրա եղբայր Ավանը կամենան մնալ ռուսաց տիրապետության տակ գտնվող երկրներում, դա կթույլատրվի նրանց: Թարխանը վերադարձին ստացավ 1000 ռ. ռոճիկ և սամույրի մուշտակ: Նույնը ուղարկվեց Ավանի համար: Որոշվեց տարեկան 1000 ռ. ռոճիկ սահմանել յուրաքանչյուրի համար: Ավանը, որ սպասում էր նման առաջարկությանը, քանի որ իր նամակներում միշտ առաջարկում էր ռուսական երկրում ծառայելու իր պատրաստակամությունը, սիրով ընդունում է այն: Ավանը փոխադրվեց Պետրոս դի Սարգիս Գիլանենցի կազմած կամավորական «Հայկական էսկադրոնը», իր հետ Սղնախներից տանելով քաջարի հինգ հրամանատար ու 232 զինվոր:

Հայ վաճառական Պետրոս դի Սարգիս Գիլանենցը, որը տեղացի քաջամարտիկ հայերից Ռեշտում հարյուր հոգանոց մի հեծյալ ջոկատ էր կազմել իր իսկ միջոցներով, հոգուտ Ռուսաստանի հետա-

խուզական մեծ աշխատանք էր կատարում: Առևտրական քարավանների միջոցով նա կապեր էր հաստատել ողջ արևելքի հետ: Ամեն տեղից հայ առևտրականները լուրեր էին բերում նրան: Պետրոսը դրանք խնամքով հավաքում էր և զեկուցագրեր կազմում ռուսաց կառավարության համար: Այս նյութերի հիման վրա նա կազմեց իր շատ արժեքավոր «Ժամանակագրությունը»: Պետրոսը սպանվեց հայկական էսկադրոնի մարտերից մեկում: Նրա տեղը գրավեց Ղազար Խաչատրյանը, որը հայտնի էր Ղազար Խրիստոֆոր անունով: Երկար ժամանակ Ղազարը աշխատակցում էր հայ ինժեներ Նավասարդի մոտ, կատարում նրա հանձնարարությունները: Իսկ Նավասարդը շատ արժեքավոր տվյալներ էր հաղորդում ռուսական կառավարությանը Պարսկաստանի և Թուրքիայի ամրությունների, հաղորդակցական գծերի, զինված ուժերի մասին: Երբ Պետրոս Մեծը հետաքրքրվում է Նավասարդով և ցանկանում իր երախտիքը հայտնել նրան մեծ ծառայությունների համար, ոչ մի հարազատի չգտնելով, վարձատրում է նրա աշխատակցին՝ Ղազարին, շնորհելով նրան գեներալ-մայորի կոչում:

Եվ ապա Սղնախների սպարապետ Ավանը այս էսկադրոնը գալով, այն ավելի մարտունակ դարձրեց:

Սակայն այս ազգային հերոսը մի կործանիչ ուժ դարձավ Արցախի համար: Շուշիից ու այլ վայրերից անընդհատ իրենց ընտանիքներով զինվորներ էին հեռանում իրենց զորապետի մոտ ծառայելու նպատակով: Ավանը շահից ստացել էր խանի ու սպասալարի (սպարապետի) կոչումները: Ըստ երևույթին, Ավանը հնարավորություն ուներ Շուշիում մի ընդարձակ խանություն հիմնելու՝ Պարսկաստանի հովանու ներքո, ընդգրկելով և ողջ Սյունիքը: Այդ դեպքում, անշուշտ, կկանխվեին հետագա տարիներին այն կործանարար դեպքերը, որ տեղի ունեցան Արցախում, ու թափառական ցեղերի համար չէր ստեղծվի Արցախի սիրտը թափանցելու միակ նպաստավոր իրավիճակը: Սակայն Ավանը եթե ռազմական մարտավարության տեսանկյունից մեծ գործիչ էր, ապա ռազմավարության քաղաքականության ասպարեզում մեծ սխալ գործեց՝ անձնական շահերը գերադասելով ազգային շահերից:

Այդ ժամանակներից սկսած Շուշին այլևս կորցրեց երկրամասի ռազմական ու քաղաքական կենտրոնի իր նշանակությունը և Վարանդայի տերերի համար կրկին իբրև ամառանոց էր ծառայում:

Իվան Դոլգորուկովի կարգադրությամբ Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը ևս իր առաքելությունը Անդրկովկասում ավարտած համարելով, Ավանի հետ հեռացավ Սղնախներից՝ դժգոհ ռուսական արքունիքի քաղաքականությունից:

Սղնախների քայքայումով փլուզվեց Արցախի պաշտպանական համալիրը: Իշխանությունը գավառներում կրկին անցավ տեղական ֆեոդալներին՝ մելիքներին: Յուրաքանչյուր մելիք ցաքուցրիվ զինվորականներից իր շուրջը հավաքագրեց 1000-ական զինվոր և ամփոփվեց իր տարածքում: Շուշի բերդը, որը Արցախի ամբողջական պաշտպանության մեջ կարևորագույն հանգույց էր, առանձին մելիքությունների բաժանման պայմաններում կորցրեց իր դերն ու նշանակությունը: Այն շատ էր մեծ փոքր գավառի պաշտպանությունն ապահովելու համար: Վարանդայի տերերին ավելի շատ հետաքրքրում էր իրենց նստավայրի՝ Ավետարանոցի բերդի ամրացումը: Շուշիի բերդի ամրացումը արդարացված կլիներ միայն ողջ Արցախի ամբողջականության պաշտպանության կազմակերպման, նրա առանձին պետական կամ ինքնավար կազմավորման կառավարման, ողջ տարածաշրջանի նկատմամբ հսկողության ապահովման ծրագրի դեպքում: Ուստի փոքր մելիքության համար Շուշին կարևոր դեր չուներ և արդարացված չէին լինի ծախսերն ու այնտեղ զինուժ պահելը: Շուշիի սարահարթը հարևան Շոշ գյուղի մարդկանց համար վեր է ածվում ամառանոց-ագարակի: Գյուղացիները քանդում էին բերդի պարիսպներն ու աշտարակները, քարերը տեղափոխում գյուղ կամ հենց Շուշիում տուն կառուցում: Վարանդայի տերերը դրան չէին խոչընդոտում, քանի որ այլևս անտարբեր էին Շուշիի նկատմամբ: Քանդվում, ավերվում էին նաև զույգ ապարանքներով Շուշիի միջնաբերդն ու Ներքին բերդի զույգ դղյակները, որոնք վերակառուցել և ամրացրել էր Ավան զորավարը: Շուշիի բերդը, որ հնում Խաչենի իշխանների ժառանգական սեփականությունն էր, Սղնախների շրջանում Ավետարանոցի բերդի հետ ընդհանուր համակարգի մեջ մտնելով, այսուհետ ևս մընաց Վարանդայի մելիքության տարածքում: Խաչենի տերերը բավարար ուժ չունեին այն ետ պահանջելու, իսկ Շեկ Գրիգորը, որը Խաչենի մելիքն էր, չուներ իր նախահայրերի հզորությունն ու վճռականությունը: Մյուս չորս մելիքությունները Խաչենի տերերի համեմատ ավելի զորեղ էին: Հավանաբար դրա պատճառը նույն Ջալալյան տոհմի Աղ-

վանից կաթողիկոսների առկայությունն էր, որոնք չէին ուզում իրենց կողքին հանդուրժել զորեղ մելիքի գոյությունը:

Արցախի իշխաններին իրար հետ կապող օղակը, քաղաքական շահերից բացի, խնամիական կապերն էին, որոնք վեր էին ածվել մի ամբողջական դաշնակցական միության: Մելիքությունները դարեր շարունակ դիմադրում և հետ էին մղում Արցախ թափանցելու և այնտեղ բնակություն հաստատելու մահմեդական ցեղերի ամեն մի փորձ, լավ գիտակցելով, որ նման դեպքում լուրջ վտանգ կսպառնա Արցախի գոյությանը:

Սղնախների քայքայումից հետո էլ շարունակվում էին օսմանյան զորքերի դեմ կռիվները:

Աֆղան բռնակալ Մահմուդը Իրանի գահին մնաց երեք տարի և 27 ամյա հասակում ցնորվեց ու սպանվեց 1725 թվականին: Նրան փոխարինեց հորեղբորորդին՝ Աշրաֆը: Իրանի օրինական շահը՝ Թահմասպը իր մոտ ծառայության է ընդունում թուրքմենական աֆշար Նադիր-ղուլի (հրաշքների ստրուկ) անունով մի ավազակապետի, որն աչքի է ընկնում իր պատերազմական տաղանդով: Շուտով Նադիրը դարձավ Պարսկաստանի սպարապետն ու ազատագրեց ողջ Իրանը աֆղաններից, ապա զենքը ուղղեց թուրք նվաճողների դեմ: Նադիրի հետ համագործակցում էին նաև ղարաբաղի մելիքները: Այս դաշինքի արդյունքը 1733 թվականի արցախյան իրադարձություններն էին: Նախորդ տարվա աշնանը մելիքները կրկին խուսափելով թուրքական բանակի հետ ճակատ առ ճակատ բախումից, նրանց ընդունեցին իրենց բնակավայրերում, պարտավորվելով կերակրելու նրանց:

Իհարկե, թուրքերը չէին մոռացել 1725 թվականի Վարանդայի ջարդը: Սակայն այս անգամ էլ նրանց գայթակղեց բարեբեր Ղարաբաղում իրենց զորքերի ձմեռումը, մանավանդ, որ արդեն չկային հայոց հզոր Սղնախները, որոնց հարվածներին չէին դիմանում թուրքական բանակները: Թուրքերը ծրագրել էին Գանձակում ու Արցախում հաջող ու անկորուստ ձմեռումից հետո անսպասելի հարված հասցնել Պարսկաստանին:

Ապստամբությունը, որը ընդգրկել էր ոչ միայն Արցախը, այլև ողջ Գանձակի խանությունը, գլխավորում էր Դիզակի մելիք Եգանը: Ապստամբության նշանաբանն էր. *«Պահպանեցեք հին սերմերը՝ որպես բուսնելու, բույս տվողներ և ոչնչացրեք նորը, որ պտուղ չի*

խոստանում»[7]: Հին սերմերը պարսիկներն են, նորը՝ թուրքերը: Իրադարձությունը տեղի ունեցավ Մեծ Պասի առաջին գիշերը: Հրացանի կրակոցները, որ դավադրություն սկսելու նշան էին, միանգամից տարածվեցին ողջ Արցախում և Գանձակի շրջակայքում: Արցախցիները, որ արդեն լավ փորձ ունեին նման գործողության մեջ, այս նշանով հարձակվեցին և կոտորեցին թուրքական ողջ բանակը: Գլխավոր հրամանատարը Շուշիի ճակատամարտից մեզ ծանոթ Սարը Մուստաֆա Փաշան հազիվ կարողացավ փրկվել և փախչել Երևան, որը դեռևս թուրքերի ձեռքին էր:

Վարանդայում ապստամբությունը գլխավորում էր մելիք Հուսեինի կինը՝ Աննա խաթունը, որը Մելիք Եգանի քույրն էր: Այստեղ երևան է գալիս հայ կնոջ հերոսական կերպարը: Մելիքի դուստրը՝ գեղեցկուհի Գայանեն, դաշույնի հարվածով սպանում է ատելի թուրք զորապետ Սուլեյման Բեկին[8]:

Իր հերոսությամբ ու խիզախությամբ աչքի ընկավ նաև Վարանդայի մելիք Հուսեին Մելիք-Շահնազարյանը, որին Նադիր շահը ևս ազատել էր հարկերից: Դրա ապացույցն էր նաև Ավետարանոցի եկեղեցու գավիթ-դամբարանում գտնվող նրա տապանաքարի արձանագրությունը. *«Այս է տապան մելիք Շահնազարի որդի մելիք Հուսեյնի, թվ. ՌՃՃԵ (1736): Ոգեմ զբանս գովեսդի, ի վերայ մելիք Հուսէյնի, զոր գրեցի այս տապանի: Սա էր տեր երկրին Վարանդայի, ԼԵ (35) մասն գեղի, սա էր հացով, սեղանով լի, ողորմեր ամեն ազգի, կերպարանօք էր գովելի, թագ պարծանք հայոց ազգի. Յոյժ կոդարեաց ազգեն դաջկի, պատերազմեաց յետ օսմանցի, սա ոչ ետ հարկ թագավորի, ամուր պարիսպ էր աշխարհի, որ է եաշն թիւն ՌՃՆԸ (1709)»*[9]:

Ինչպես երևում է, Նադիրը, որը գրավել էր և Իրանի գահը, ի տարբերություն ռուսական արքունիքի, ըստ արժանվույն գնահատեց Արցախի իշխանների այս հերոսությունը:

Նադիր շահը հատուկ ֆիրմաներով գնահատեց մելիքների իրավունքները: Նադիր շահի ժամանակներում տեղի են ունենում մի շարք իրադարձություններ, որոնք հետո կապվում են Շուշիի բերդի պատմության հետ: Շահը իր ախոյան Գանձակի խանին թուլացնելու համար (վերջինս Մուղանի դաշտի Մեծ ժողովի ժամանակ դեմ էր Նադիրի շահ դառնալուն) փոփոխություններ է մտցնում, Ղազախ և Բորչալու գավառները խլում է նրա իրավասությունից, Խամսայի

մելիքներին հանձնարարում այլևս կախում չունենալ Գանձակի խանից: Նա դաշտային Ղարաբաղից Խորասանի Սերեկս գավառը (իրենց նախնական բնակավայրը) գաղթեցրեց Ջիվանշիր, Օթուզիքի, Քաբիրլի խաշնարած թափառական ցեղերը, որոնց հետ էր և Սարուջալի ցեղը[10]: Սրանք Գանձակի խանի հիմնական ուժերն էին ներկայացնում, որոնք Առան (Կուր-Արաքսի միջագետք) էին գաղթել 17-18-րդ դարերում նույն Խորասանից: Այս թուրքական քոչվոր ցեղերը հաճախ էին միանում Դաղստանի ավարառու լեզգիներին ու համատեղ ասպատակում հայկական ու պարսկական բնակավայրերը: Պարսկաստանում ընդունված էր, որ յուրաքանչյուր ազդեցիկ ընտանիք մի հոգու ծառայության տար շահի մոտ: Սարուջալու ցեղից ծառայության է գնում Ֆազլ-Ալի ցեղապետը: Նրա սպանությունից հետո շահի մոտ որպես չարչի (մունետիկ) ծառայության է մտնում նրա կրտսեր եղբայրը՝ Փանահ-Ալի բեկը, որը պարտավոր էր իր հնչեղ ձայնով փողոցներում ու բնակավայրերում հրապարակել շահի հրամաններն ու որոշումները: Մի հանցանքից հետո Փանահ-Ալին, վախենալով Նադիրի պատժից (մինչ այդ Նադիրը պատժել էր եղբորը՝ Բեհբութ-Ալի-Բեկին), իր 6 ազգականների հետ փախչում է շահի ճամբարից: Փանահը նոր ավազակախումբ է ստեղծում, միանալով Ջար-Բելականի ավարների հետ, հարձակումներ է գործում դեպի հարավ: Նադիրը, տեղեկանալով այս փախուստի մասին, Շաքիի ու Շիրվանի խաներին հանձնարարում է ձերբակալել Փանահին ու ոչնչացնել նրա ավազակախումբը: Փանահը միշտ խուսափում էր հետապնդումից: 1747 թվականին, տեղեկանալով Նադիր շահի սպանության մասին, իր 200 ավազակներով գալիս է Ղարաբաղ, սկզբում հաստատվում է Թարքառի ստորին հոսանքում՝ Թարքառ բազար կոչվող բնակավայրում: Այն հնուց ի վեր Ջրաբերդի տերերի սեփական հողատարածքն էր: Փահանը այստեղ բնակվելու համար հարկ էր հավաքում իր ցեղակիցներից ու վճարում Ջրաբերդի մելիք Ալահղուլի սուլթանին: Ցմեռային ամիսներին այս թափառական ցեղը դաշտավայրում էր անցկացնում, իսկ ամռանը՝ հոտերով քոչում Մռավի լեռնային արոտները, որի համար Գանձասարի վանքին վճարում էին տասնորդ կոչվող հարկը (եկամտի մեկ տասներորդ մասը): Թե՛ Ջրաբերդի մելիքին և թե՛ Գանձասարի առաջ-

նորդներին շահավետ էր մի այսպիսի հարկատու ունենալը: Փանահը իրեն մոնղոլ, Իրանի շահ Արղունի սերունդներից էր հայտարարում: Արղունը Չինգիզ խանի թոռ Գուլաղ խանի թոռն էր: Գուլաղ խանը 1251 թվականին թափանցել էր Իրան, ապա գրավել Բաղդադը, թալանել այն, ոչնչացրել խալիֆաների թագավորությունը, ապա հպատակեցրել Սիրիան և ողջ Արևմտյան Ասիան: Իսկ Արղունը սպանել էր Իրանի գահին տիրացած իր եղբորը՝ Ահմեդին ու իրեն շահ հռչակել:

Փանահը կեղծորեն հայտարարում է, թե իբրև իր նախկիններից մեկը գնել է ողջ Ղարաբաղը[11]: Ըստ ավանդության, Փանահի նախահայրերից մեկը, փախչելով հետապնդումից, ապաստանում է Լոռի բերդում, ապա տեղափոխվում է Գանձակ, ծառայության մտնում խանի մոտ: Այստեղ ամուսնանալով հարուստ մարդու աղջկա հետ, հարստություն է դիզում, բնակություն հաստատում Ջիվանշիրի (Պարտավի շրջակայքը) տափարակներում: Նրա որդուն, որը շեկ էր, Սարուջայ Ալի էին անվանում, որն էլ դառնում է քոչվոր ցեղի նախահայրը:

Փանահը իր ավազակային խումբը մեծացնում է Խորասանից վերադարձող ցեղակիցների հաշվին, թալանում Շաքիից մինչև Նախիջևանի տարածքները, մեծ հարստություն դիզում: Ամուսնանալով Քաբիրլի ցեղապետի աղջկա հետ, մեծ աջակցություն է ձեռք բերում, ավազակապետի դիրքից անցնում է տիրապետողի դիրքի: Նա որոշում է այլևս նստակյաց դառնալ: Քաբիրլիի գավառամասում վերակառուցում, ամրացնում է հինավուրց Բայաթ բերդը, որը մեծ նորություն էր թափառական խաշնարածների կյանքում:

3. ՄԵԼԻՔ ՀԱՀՆԱԶԱՐՆ ՈՒ ՓԱՆԱՀ-ԱԼԻՆ՝ ՀՈՒՇԻՈՒՄ

Նադիր շահի մահից հետո Իրանում սկսվում են անիշխանությունն ու ներքին պատերազմները: Իրանի գահին տիրում է Նադիրի եղբորորդի Ադիլը, որը Ատրպատականի տեղապահ է կարգում Էմիլ-Ասլան-Սարդարին: Շիրվանի տիրակալ Հաջի-Չելեբին, որը հայ

Սնորդիների մահմեդական ճյուղի շառավիղն էր, իր զորքով անցնելով Կուռը, միանալով Խամսայի մելիքների հետ, պաշարում է Բայաթի բերդը, ձգտում պատժել ինքնակոչ խանին: Սակայն բերդը գրավել նրանց չի հաջողվում: Փանահը իր այս հաջողությունից հետո հպատակություն է հայտնում Ատրպատականի սարդարին և կաշառքի միջոցով նրանից ձեռք բերում խանի կոչումը:

Ինչպես գրում է Եսայի Ջալալյանը, Շաքիի ու Շիրվանի խանություններում բնակվող հայերի մի մասը արցախցիներ էին, իսկ մյուս մասը տեղաբնակներ[12]: Ռուս սպա և ճանապարհորդ Սեգալը Շաքիի խանությանը նվիրված իր աշխատության մեջ գրում է, որ Շաքիի խանությունը հիմնել է հայ հոգևորական Կարա-Քեշիշը (Սև վարդապետ) 9-րդ դարի վերջերում Նուխուտ քաղաքում, որը հետագայում կոչվել է Նուխի: Այստեղ բնակչության մեծամասնությունը հայեր էին[13]: Այս տոհմը մեր գրականության մեջ կոչվել է Սնորդիք, որը սերված է հայկական իշխանական գարմից: Տոհմիս նահապետը Առանշահիկ իշխան Սահակ Սնադան էր, որի հաջորդները կոչվել են Սնորդիք:

Ըստ Սեգալի իշխանական տոհմի ժառանգներից մեկը իսլամ է ընդունում, Ջաֆար անունը վերանվանում Ալիջան: Նա իր իշխանությունը ընդարձակում է, միացնում Խաչմասը, Վարդաշենը, Կութկաշենը: Հետագայում, երբ այս տարածքը մտնում է Պարսկաստանի տիրապետության տակ, իշխանները խանական կոչում են ստանում: Ուշ շրջաններում (17-19-րդ դարերում) այս տոհմի քրիստոնյա մասը դուրս է մղվում մահմեդականացված մասի կողմից: Քրիստոնյա Սնորդիք իրենց հսկա տոհմով ու հայ բնակչության մի մասով տեղափոխվում են Ջավե (Ղազախ) գավառը[14]: Գավառը Ղազախ անվանումը ստացել է խազիր բառից, քանի որ 7-րդ դարի խազարների արշավանքից հետո նրանց մի մասը մնացել էր և բնակություն հաստատել հայոց Ուտիք նահանգի այս տափարակում: Իսկ Սնորդիք բնակվում էին գավառի Սռի (Նորագյուղ կամ Ղրիջքենդ), Մելիք, Նոր Պիպիս, Նոր Ոսկեպար, Բաղանիս, Ղոչղոթան, Ծմնվանք և այլ գյուղերում: Հետագայում իշխանական հինավուրց տոհմը, նեղվելով քոչվորներից, բարձրանում է լեռները, բնակություն հաստատում Ջորագետի վերնամասում: Նրանք կոչվում էին ձորագնացիք: Սրանց մի ճյուղը Սև Աբուվի գլխավորությամբ 17-րդ դարի սկզբներին գալիս է Արցախի հյուսիսային մասերը, բնակվում Թալիշ (Թառինջ) գյուղի մոտ, հիմնում Աբովյան-Բեգլարյանների մելիքական տոհմը (Թալիշի, Գյուլիստանի կամ Իգիրմիդորթ մելիքություն):

Շիրվանում Արցախից գաղթած հայերի առաջնորդ Բարսեղ քահանան էր Հասան-Ջալալյան իշխանական տոհմից: Նա, վերակառուցելով Սոկութլու գյուղը, հաստատվում է այստեղ ու մեծ ազդեցություն ունենում շրջակա բնակավայրերում: Նա գնում է Սպահան, շահից մելիքական ֆիրման ստանում: Հետ գալով, նա տեսնում է իր հիմնած բնակավայրը ավերված վիճակում: Այս ոճիրը գործել էր Շամախու բռնավոր խանը: Բարսեղը կաշառքի միջոցով կուրացնել տվեց իր թշնամուն բռնակալ խանին: Սակայն Շամախու մեծամեծերը ոխ պահեցին հայ իշխանի նկատմամբ և, ի վերջո, սպանեցին նրան:

Վրաց իշխաններ Թեյմուրազն ու Հերակլը ևս հիասթափվելով ռուսական արքունիքի երկդիմի քաղաքականությունից, միևնույն ժամանակ, զգալով պարսիկների հզորացումը, կողմնորոշվել էին դեպի Պարսկաստանն ու մասնակցել Նադիրի արշավանքներին: Նադիր շահը առատորեն վարձատրեց Քարթլինիայի իշխան Թեյմուրազին ու Կախեթի իշխան Հերակլին: Նրանք հանդիսավորությամբ թագադրվեցին և իշխում էին իրենց երկրում: Նրանց նախաձեռնությամբ հայ-վրացական մերձեցում էր սկսվել: Հայ մելիքները ամեն կերպ աջակցում էին նրանց, միևնույն ժամանակ ձգտում նրանց օգնությամբ ոչնչացնել քոչվոր ցեղի առաջնորդ Փանահ-Ալիին:

1749 թվականի օգոստոսին հայ մելիքների հորդորանքով Գանձակի և Երևանի պարսիկ կառավարիչները դիմում են Իշխանաց իշխան (բեկլարբեկ) Թեյմուրազին ներքին թշնամիների հատկապես Փանահի դեմ պայքարում: Փանահը, իր շուրջը հավաքելով Մուղանի դաշտի թուրքալեզու խառնամբոխը, պաշարել էր Գանձակը: Թեյմուրազը համաձայնեց խաներից պահանջելով 5000, ապա 40 հազար ռուբլի[15]: Հաջորդ տարվա գարնանը Թեյմուրազն ու Հերակլը արշավեցին դեպի Գանձակ: Վրացիներին միացավ Գյուլիստանի մելիք Թամրազը Ջրաբերդի հոգևոր տիրոջ Կաթողիկոս Ներսեսի հետ: Փանահը, խուսափելով ճակատամարտից, հանեց պաշարումն ու հեռացավ: Վրացական բանակը հետապնդեց նրան: Նախ Պարտավի մոտ հանկարծակի գրոհով ջարդեց թարաքամա ցեղի առաջնորդ Մամադ բեկի ուժերը: Փանահը այստեղ ևս դիմեց հին և ամե-

նակարող միջոցին փրկագին և թանկարժեք ընծաներ տալով Թեյմուրազին: Վրացի իշխանն ու Փանահը դաշն կնքեցին:

Արցախում այդ ժամանակ սկիզբ են առնում ներքին գժտությունները, որոնց հետևանքով երկրամասը ենթարկվում է նոր քայքայման: Այս դժբախտության սկիզբը Վարանդայում տեղի ունեցած դեպքերն էին: Այստեղ իշխում էր մելիք Հովսեփը, որը 1736 թվականին փոխարինել էր ազգային ազատագրական պայքարի հերոս Մելիք Հուսեինին: Մելիք Հովսեփը թույլ կամքի տեր, հեզաբարո, բայց գրասեր ու խելացի մարդ էր, մի ոտքը կաղ և փոքրահասակ: Նրա կրտսեր եղբայր Սեյն Շահնազարը վայելչահասակ էր, գեղեցիկ և չափազանց փառասեր, որն էլ դարձավ Ղարաբաղի կործանիչը: Նա իր նպատակները իրականացնելու համար ոչ մի բանի առջև կանգ չէր առնում: Մելիք Հովսեփն ու Սեյն Շահնազարը խորթ եղբայրներ էին: Նրանց հայրը Աննա խաթունի մահից հետո ամուսնանում է Նախիջևանի խանի դստեր՝ Զոհրա խանումի հետ, որից էլ ծնվում է Սեյնը[16]: Հավանաբար, հենց թրքուհի մոր դաստիարակությունն էլ թողնում է իր կնիքը: Սեյնը, հակառակ իր հայրենասեր եղբոր, թուրքասեր էր: Եվ ահա Շահնազարը մի գիշեր հարձակվում է եղբոր տան վրա, իր ձեռքով սպանում օրինական մելիքին, ոչնչացնում նրա ողջ ընտանիքը: Ավետարանոցը, որ հայ ազատագրական պայքարի կենտրոնն էր, վերածվում է Արցախի հզորությունն ու միասնությունը կործանող միջոցի: Մելիք Հովսեփը Խաչենի տիրակալ Ջալալյանների տան փեսան էր: Իրենց սիրելի փեսայի, նրա ընտանիքի ոչնչացումը պատճառ է դառնում, որ այս ազդեցիկ տոհմը լցվի վրեժխնդրության զգացումով: Այս ոճրագործությունը սաստիկ գրգռում է Խամսայի մելիքներին, ու նրանք միաբանում են պատժելու եղբայրասպանին: Իրեն մելիք հռչակած Շահնազար Բ-ն փակվում է Ավետարանոցի բերդում: Շուտով այն պաշարում են Գյուլիստանի մելիք Հովսեփի, Ջրաբերդի մելիք Ալահ-Ղուլի սուլթանի, Խաչենի մելիք Ալահվերդու, և Դիզակի մելիք Եսայու միացյալ զորքը: Սակայն վրա հասած ձմեռը ստիպում է, որ մելիքները հանեն պաշարումը՝ գարնանը այն վերսկսելու պայմանով:

Փանահ-Ալին, որի հայացքը դեպի Լեռնային Ղարաբաղն էր՝ նրա անառիկ բերդերից մեկում ամրանալու երազանքով, 1749 թվականին Բայաթից տեղափոխվում է Խաչենագետի վրա գտնվող Արցա-

խի Տիգրանակերտ[17] բերդի ստորոտում գտնվող ամրոցը, որը Վարանդայի մելիքության սեփականությունն էր:

Շահաղբյուր (աղբյուրների արքա) վայրում գտնվող ամրոցը տիպիկ հայկական կառույց է՝ թաղածածկ սրահներով, կամարակապ մուտքերով, քառակուսի հատակագծով, բարձր պարիսպներով, որոնք անկյուններում միանում են կլոր աշտարակներով: Այստեղից Փանահը ընդհարումներ է սկսում Ջրաբերդի, Գյուլիստանի մելիքների հետ, ձգտելով քանդել արցախյան միասնությունը: Եվ ահա Վարանդայի նոր տերը Մելիք Շահնազար Բ-ն, հանձինս թուրք ցեղապետի տեսնում է իր դաշնակցին ու տիրոջը, որը կարող էր օգնել իրեն փրկվելու մելիքների վրեժխնդրությունից: Շահնազարն ու Փանահը միասին գրավեցին Խաչենը, նրա մելիքությունը հանձնելով մեկ այլ դավաճանի՝ Խնձիրստան գյուղի տանուտեր Միրզախանին: Արցախի երբեմնի հզորությունը ջլատված էր: Դիզակը կտրված էր Ջրաբերդից ու Գյուլիստանից: Փանահին արդեն չէր բավարարում Շահաղբյուրի ամրոցը: Նա ծրագրում էր ամրանալ լեռնային բերդերից մեկում: Մելիք Շահնազարը առաջարկում է իր իշխանության տարածքում գտնվող Շուշի բերդը: Փանահ-Ալին ծանոթանալով տեղանքին, ընդունեց առաջարկությունը, այստեղ տեսնելով անխորտակելի բերդը, որի միջոցով կարող է նվաճել ողջ Ղարաբաղը: Փանահը Շուշիի սարահարթից հայացքը ձգելով դեպի չորս կողմերը, արդեն պատկերացնում է, որ այս բերդից կարող է իշխել ողջ Անդրկովկասի՝ Գանձակի, Շիրվանի, Շաքիի, Վրաստանի և Հայաստանի վրա, հետո կարող է հափշտակել Ատրպատականը (Ադրբեջանը), ինչ՞ու չէ, նաև ողջ Իրանը, նրա թագը, թե չէ՝ ինչո՞վ է պակաս սարուջալուն դաջարից[18]:

4. ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Փանահն ու Մելիք-Շահնազարը ձեռնարկում են Շուշի բերդի վերականգնումը: Անհրաժեշտ էր արագորեն վերակառուցել հյուսիսային պարիսպները, որը ձգվելով երկուսուկես կիլոմետր, ընդհատվում էր 50 աշտարակներով: Նրանք Արցախի բոլոր վայրերից հրավիրեցին հայ շինարարների, խոստանալով նրանց ազատել արքունական և հասույթի հարկերից: Շինարարությունը սկսվեց 1752 թվականի ամռանը[19]: Պարսպի շինարարությունը սկսվեց սարահարթի հյուսիս-արևելյան հատվածից: Կառուցվում էր տեղական կրաքարից: Շուշիի ողջ սարահարթը կրաքարե ապառաժ է: Այն հեշտ է մշակվում և շատ հարմար շինանյութ է: Կապակցող նյութ է ծառայում նույն քարի այրումից ստացված կրի և ավազի շաղախը: Պարսպի վրա թողնվում էին հրակնատային ու թնդանոթի համար անցքեր: Ռազմական աշտարակները պարսպի հարթությունից դուրս են ցցված, որը հնարավորություն էր տալիս բերդի պաշտպաններին խանգարելու պարսպի գրավումը: Բերդն ուներ երկու հիմնական մուտք: Հարավային մուտքը կոչվում էր Երևանյան, հյուսիսայինը Ջրաբերդի: Դարպասների վերևում կառուցվել էին մեծ հարթակներ, որտեղ տեղադրված էին թնդանոթները: Պաշտպանական համալիրի վերակառուցումը ղեկավարում էր անձամբ Մելիք Շահնազարը: Հայ շինարարները թե պարսպի, թե աշտարակների դարպասներն ու ապարանքները վերականգնելիս հարազատ են մնացել հայկական ավանդական ճարտարվեստին: Շինարարական արվեստը ուշ շրջանում Հայաստանում միջնադարի համեմատ անկում էր ապրել: Այլևս բացակայում էր մոնումենտալ շքեղությունը, քարերը սրբատաշ չէին, մշակումն ու հարդարանքը կոպիտ էր: Սակայն և հետաքրքիր էր նոր մոտեցման ու հին դպրոցի միահյուսումը: Դա ավելի վառ արտահայտվեց բնակարանային շինարարություններում:

Բանվորները գալիս էին իրենց ուտելիքներով: Ցերեկը շոգ էր, գիշերը ցուրտ: Բանվորներից շատերը գիշերը մրսեցին ու հիվանդացան: Յուրաքանչյուր 10 օրում 50 հոգու հողին էին հանձնում:


N
E
N
ՍՈՄԽԵԹԻԱ
ԹԻՖԼԻՍ
Սղնախ
ԴԱՂԱՍՏԱՆ
ԴԵՐԲԵՆՏԻ ԽԱՆՈՒԹՈՒՆ
ՂՈՒԲԱՅԻ ԽԱՆՈՒԹՈՒՆ
ՂՈՒԲԱ
ՇԱՔԻ
ՇԱՔԻԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՇԱՄԱԽԻ
ԲԱՔՈՒ
ԲՈՐՉԱԼՈՒ
ՂԱՔԱԽ
Աղստաֆա
ՇԱՄՇԱԴԻՆ
ԳԱՆՁԱԿԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԱՆՁԱԿ
ՇԻՐՎԱՆԻ
ԵՐԵՎԱՆԻ
ՍԵՎԱՆԱ ԼԻՃ
ՏՐՏՈՒ
ԵՐԵՎԱՆ
ԽԱՆՈՒԹՈՒՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐ
ԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՍԱԼՅԱՆ
Արարատ լեռ
Բայազետ
ՇՈՒՇԻ
Ասլանդուզ
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ
Արաքս
ԹԱԼԻՇԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԻՋԵՎԱՆ
Ջուղա
ԼԵՆՔՈՐԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՄԱՐԱՆԴ
ԽՈՅ
ԹԱՎՐԻԶ
ՈՒՐՄԻԱ ԼԻՃ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՏԱՐԱԾՔ

Նրանք ծարավ էին ու սոված: Տաժանակիր աշխատանքին շատերը չէին դիմանում: Փանահն ու Շահնազարը զինվորներ ուղարկեցին նրանց բռնի հետ բերելու համար[20]: Հաճախ քարերի շարվածքը ասես ապառաժի շարունակությունն է կազմում և ընդգծում է ձեռակերտի և բնության միասնականությունն ու օտար նվաճողների համար անառիկությունը: Դա ավանդական այն արվեստն է, որ իրար են փոխանցել Կաչաղակաբերդի, Խոխանաբերդի, Ջրաբերդի, Գյուլիստանի բերդի, Գտչաբերդի կառուցողների սերունդները: Զուգահեռաբար վերանորոգվում են Շուշիի հարավային դարպասների մոտ բարձունքին գտնվող մելիքական ապարանքները: Ապառաժներին տեղադրված պարսպապատ ապարանքը յուրացնում է Փանահ-Ալի խանի ընտանիքը, մյուս բարձունքի ապարանքում, որը տեղադրված է դեպի Քարինտակ գյուղը ելք ունեցող քարանձավի մուտքի վրա, ապաստանում է Մելիք-Շահնազարը: Սրանք էլ կազմում են բերդային համալիրի միջնաբերդը:

Շուշիի վերակառուցմանը նախորդել էին մի շարք իրադարձություններ, որոնք էլ որոշեցին բերդաքաղաքի բնակչության կազմը: Նաշիջևանի Հեյդար-Ղուլի խանը խիստ մեծ հարկեր էր դնում Գողթանի հայության վրա, որը անկարող էր վճարել այն: Խանը հարկ չվճարողին դաժան պատժի էր ենթարկում: Հայերը ուրիշ ելք չէին ունենում բացի ապստամբությունից: 1750 թ. առաջինը զենք են վերցնում Շահկերտ (Ղազանչի) հայաբնակ ավանի բնակիչները՝ իշխան Հովհաննես Խանդամիրյանի գլխավորությամբ:

Պղնձագործները թնդանոթներ են ձուլում, ավանը անառիկ բերդի վերածում: Խանին օգնելու համար Թավրիզից լրացուցիչ զորք է ժամանում: Խանը պարտվում է, ստիպված հաշտություն առաջարկում: Հովհաննես Խանդամիրյանը թունավորվում է նենգ խանի կողմից և մահանում: Շահկերտցիք, խուսափելով արյունարբու խանի վրեժխնդրությունից, հատելով լեռնաշղթան, փախչում են դեպի Ղափան[21]:

Պարսկաստանի հյուսիսում տիրում էր Ազադ խանը, որը օգտվելով անիշխանությունից, փորձեց նոր տարածքներ գրավել: 1752 թվականին նա դեպի Երևան շարժվելիս պարտություն է կրում վրացիներից և նահանջի ճանապարհին թալանում Նախիջևանի հայաբնակ գյուղերը: Խանի զորքը մոտենում է Ագուլիս ավանին, որը հռչակված էր իր հարստությամբ: Ագուլիսը «Խաս» բնակավայրի

կարգավիճակ էր ստացել շահից, այսինքն՝ շահի արքունական սեփականությունն էր համարվում և տուրք էր տալիս անմիջապես շահին: Ագուլիսցիները մերժում են տուրք տալու մասին խանի առաջարկը: Ագուլիսի մելիք Եսային, որը մեծամիտ և հարուստ մարդ էր, առանց հիմքի հրաժարվեց բանակցել խանի հետ: Խանը առաջարկեց, որ ագուլիսցիները մթերքը վաճառեն կամ էլ փոխ տան: Գոռոզ մելիքը կրկին մերժեց՝ զենք բաժանելով բնակիչներին: Խանի հրամանով պարսից զորքը հարձակվեց և ոչ մի դիմադրության չհանդիպելով, թալանեց ողջ Ագուլիսը, գերեվարելով շատերին:

Մելիք Եսային ու նրա մերձավորները փակվել էին Թովմա առաքյալի վանքում: Պարսիկները բացում են երկաթյա մուտքն ու սրի քաշում բոլորին, թալանում Ագուլիսի տասնմեկ եկեղեցիները: Այս աղետից փրկված ագուլիսցիների մի մասը գաղթեց դեպի Թուրքիա, մյուս մասը գնաց Ղարաբաղ՝ Շուշի: Հայոց բերդավանի հյուսիսային հատվածը, որը մոտ էր ջրաբերդյան դարպասներին, Փանահը խլում է հայ բնակիչներից, Շահաղբյուրի ամրոցից այստեղ բնակեցնելով բոլոր ռայաթներին, բեկերի, զինվորականների ընտանիքներին, ծառայողներին: Հայ բնակչությանը հատկացվում է բերդավանի վերին հատվածը[22]:

Հինավուրց բնակավայրի մի մասը մնում է հայ բնակիչների ձեռքում: Այստեղ էին գտնվում սրբ. Աստվածածին եկեղեցին ու սրբավայր-ուխտատեղին: 1750 թվականի մի հիշատակությունում նշված է Շուշիի գյուղապետի *«Բեկնազար Քեանդխուդայ շուշեցի» անունը*[23]:

Եթե մահմեդական բնակչության մեջ գերակշռում էին քոչվորները, նոքարները, բեկերն ու զինվորականները, ապա հայերը որմնադիներ էին, պարիսպներ, տներ ու ամրոցներ կառուցող բանվորներ, ինչպես նաև վաճառականներ ու առևտրականներ:

Մելիք Շահնազարը հաշտեցնում է իր երկու խնամիներին՝ Փանահ-Ալիին ու Նախիջևանի Հեյդար-Ղուլի խանին: Փանահը վերջինիս միջոցով շահկերտցիներին գաղթեցնում է Շուշի: Նրան պետք էին Շահկերտի պղնձագործներին թնդանոթներ ձուլելու համար: Նա հաջողեցրեց Ագուլիսի և Մեղրիի հայության գաղթը դեպի Շուշի: Փանահը այստեղ կիրառեց պարսից արքունիքի փորձը, երբ հայերին իրենց բնակավայրերից տեղափոխելով Սպահան մայրաքաղաքը, զարգացնում էին արհեստներն ու առևտուրը: Հայ ժողովուրդը ամեն կողմից Շուշի էր տեղափոխվում օտար ավարառուների ու ասպատակիչների հարձակումներից պատսպարվելու համար: Հայ արհեստավորները իսկույն բացում են իրենց արհեստանոցները: Ագուլիսից եկած վաճառականները վերականգնեցին առևտրական կապերը Եվրոպական երկրների հետ: Հայ բնակչությունը բաժանվում է Ղազանչեցոց (Շահկերտից եկած), Ագուլեցոց (Ագուլիսից եկած), Մեղրեցոց (Մեղրիից եկած) և Ղարաբաղցոց (հետագայում՝ Թազա ժամի) եկեղեցական ծխերի, որոնք ղեկավարվում էին տանուտերերի կողմից:

Առաջին բնակելի տները կառուցվում էին հայկական ավանդական գլխատան ձևով (ղարադամ), որի թաղը ավարտվում է երդիկով: Այս ձևը Արցախում ավանդական էր: Նման տներ կան Շուշիի ստորոտում գտնվող Քարինտակ գյուղում, Բերդաձորում, Արցախի մյուս հինավուրց բնակավայրերում: Սա ևս հաստատում է, որ Շուշին հինավուրց բնակավայր է: Մահմեդական թաղամասի տները ևս կառուցում էին հայ շինարարները, քանի որ թաթար բնակչության մոտ բացակայում էր այդ մշակույթը: Թաթարական թաղամասը բաժանվում է 17 մահալների՝ ըստ ցեղերի:

Ագուլիսցիք, որոնք իրենց քաղաքում տասնմեկ եկեղեցի էին կառուցել, ու Ագուլիսը փաստորեն Գողթան գավառի նշանավոր հոգևոր կենտրոնն էր, չէին կարող Շուշիում եկեղեցի չունենալ: Եվ նրանք այստեղ գալով իսկույն փայտաշեն եկեղեցի են կառուցում: Նման փայտաշեն եկեղեցիներ են կառուցում և շահկերտցիք (ղազանչեցիք) ու մեղրեցիք: Սակայն Շուշիի տեղացի բնակիչները եկեղեցի կառուցելու կարիք չունեին, քանի որ նրանց թաղամասում, որը շատ հին բնակավայր էր, «Քանու խաչ» սրբավայրում էր քարաշեն սուրբ Աստվածածին եկեղեցին: 1428 թ. Մանուել գրիչը այստեղ է գրել Շուշիի ավետարանը: Քոչվոր թուրքերը Կուրի ափից բերեցին եղեգն ու դրանցով վրանատիպ մզկիթ «կառուցեցին»:

Ինչպես նշում է անցյալ դարի թաթար պատմաբան Միրզա-Ջեմալ Ջիվանշիրը, ռազմավարական հարցերը վճռվում էին խանական հատուկ խորհրդակցություններում, որի ոգին Մելիք Շահնազարն էր[24]:

Փանահը Շուշիի բերդը անվանեց Փանահաբադ: Օտար նվաճողները, մանավանդ թուրքերը, սովորություն ունեն իրենց նվաճած երկրներում աշխարհագրական տեղանունները անվանափո-

խել, իրենց լեզվով կոչել: Այս իմաստով զգալի կորուստներ են ունեցել Բյուզանդիան, Հայաստանը, Իրանը, Անդրկովկասը: Բյուզանդիան վերափոխվեց Թուրքիայի, չնայած թուրքերի բուն հայրենիքը Ալթայն է: Նման ճակատագրի արժանացավ և Մեծ Հայքի Արցախ նահանգը, որը միջնադարում որպես Խաչեն էր հիշատակվում: 14-րդ դարի կեսերից թաթար նվաճողները այս երկրին կպցրին Ղարաբաղ (Սև այգի) անունը[25]: Սակայն, այս անգամ Շուշիի ստվարացող բնակչությունը չընդունեց օտար անվանումը: Փանահ Ալիի գլխավոր խորհրդականը Մելիք Շահնազարն էր, որի խորհրդով ու ցուցմունքով բերդի տարածքում քաղաք է հիմնվում[26]:

Ինչ խոսք, որ անհնար է առանց Ասկերանի բերդի քննել Շուշիի պաշտպանական համալիրը: Այս ամրոցը առաջինն էր իր վրա վերցնում թշնամու հարվածը, զգուշացնում մայր բերդի (Կարկառ-Շուշի) պաշտպաններին վերահաս վտանգի մասին: Հայկական հնագույն ու միջնադարյան բերդ-ամրոցների համակարգում նման կառույցները ընդունված երևույթ էին: Օրինակ, Անիում այսպիսի հենակետերի դեր էին կատարում Թղնիս ու Մահաբերդ ամրոցները: Կիլիկիայի Սիս մայրաքաղաքի համար Շամիրաբերդն ու Օձնաբերդը, Վանի համար Ոստանը[27]: Նման դեր էին վերցրել և Մեղրիի բարձունքների ամրոց-աշտարակները: Ասկերանի ամրոցը Արցախում ևս նման միակ կառույցը չէր: Խոր միջնադարում այսպիսի մի ամրոց կար և Խաչենագետի վրա հայկական մատենագիտության մեջ (Մովսես Կաղանկատվացի) Աղվե կոչվող վայրում, որտեղ, ըստ երևույթին, Վաչագան Բարեպաշտ թագավորի նախաձեռնությամբ համայն հայոց Աղվանքի ժողով էր գումարվել և ընդունվել Աղվեի կանոնները: Աղվեի պարիսպը հուսալիորեն փակում էր Խաչենագետի վերին հոսանքը տանող ասպատակիչների ճանապարհը դեպի առանձահիկ իշխանների Հասան-Ջալալյանների ոստանը: Ասկերանը, որը գտնվում է Շուշիից 25 կմ հեռավորության վրա, ձգվելով Կարկառ գետի երկու կողմերում, զուգահեռ զույգ պարիսպներով փակում էր դաշտավայրից (Կուր-Արաքսի միջագետք) եկող ասպատակիչների ուղին: Ինը մետր բարձրություն և երկու մետր լայնություն ունեցող պարիսպներն ու աշտարակները դարեր շարունակ փակել են օտար նվաճողների ճանապարհը: Այն 18-րդ դարի առաջին քառորդում աչքաթող չէր արել և Շուշիի Սղնախի հիմնադիր Ավան զորավարը:

5. ՓԱՆԱՀԻ ՎԵՐՋՆ ՈՒ ԻԲՐԱՀԻՄԻ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ

1752 թվականին վրացական զորքը Թեյմուրազի և Հերակլի գլխավորությամբ Գանձակի կողմերում էր: Շուշիի խան Փանահը, Ղարադաղի Քյազիմ խանը, Նախիջևանի Հեյդար խանը, Գանձակի Շահվերդի խանը դաշնակցել էին վրացիների հետ՝ ընդդեմ Շիրվանի Հաջի Չելեբի խանի, որն, ինչպես նշվեց, հայոց Սեվորդյաց իշխանական ցեղից էր: Փանահի հետ էր նաև Վարանդայի Մելիք-Շահնազարը՝ իր գնդերով[28]: Թեյմուրազը իր բանակում խորհրդատվության է կանչում դաշնակից խաներին, ու փոխանակ պատերազմի գնալու, անսպասելորեն ձերբակալում է նրանց: Հաջի-Չելեբին, որն իր զորքով գտնվում էր Մինկեչովր (հայոց Քանտակ) գյուղում, հանգիստ հետևում էր թշնամական զորքերի տեղաշարժին: Շահվերդի խանի թիկնապահը լուր է հասցնում Շիրվանի տիրոջը այս իրադարձության մասին: Օգտվելով թշնամու բանակում տեղի ունեցած այս պառակտությունից, նա արագ հարձակվում է վրացիների վրա: Հաջիին միանում են Ղարաբաղի, Նախիջևանի, Ղարադաղի, Գանձակի զորքերը: Վրացիները ծանր պարտություն են կրում: Հաջի-Չելեբին հալածում է վրացիներին մինչև Թիֆլիսի մատույցները, ապա Թեյմուրազի ու Հերակլի առջև պայման դնում, որ հրաժարվեն թուրքական հողերի նկատմամբ հավակնությունից:

Խաչենի մելիքության հարցը հեշտությամբ լուծելուց հետո, Փանահը հարձակվեց Ջրաբերդի վրա, որի տերն էր Նադիր շահի սիրելի հերոս Մելիք Իսրայելյան Ալահ-Ղուլին: Ջրաբերդի մելիքը իր քաջագործություններով աչքի է ընկել Նադիրի ու թուրքական սերասկյար Քեփրուլու-օղլի Աբդուլա փաշայի զորքերի միջև ճակատամարտում: Պարսից շահը հայ մելիքին շնորհում է սուլթանի կոչում, որը հավասար է խանական աստիճանին: Փանահի և Ջրաբերդի հերոսի միջև կռիվները ոչ մի կողմում առավելություն չտվեցին: Ի վերջո Փանահը հաշտություն առաջարկեց, արևելյան նենգ ու խորամանկ տիրակալների նման փնտրելով մի հարմար առիթ այս քաջ ու զորեղ մարդուն վերացնելու համար: Ջրաբերդի մելիքը երկրորդ անգամ է ընդունում Փանահի հրավերը: Այս հանդիպումը տեղի է ունենում Ամարասի վանքում, որը գտնվում է Մելիք Շահնազարի տի-

րույթում: Հյուրերի թվում էր նաև Նախիջևանի կառավարիչ Հեյդար Ալահ-Ղուլի խանը: Վերջինս նկատելով վայելչակազմ ու հաղթանդամ հայ իշխանի հանդերձների ու նրան ուղեկցող խմբի շքեղությունը, դիմում է Փանահին, ասելով. *«Տասը դերվիշները կարող են մի փալասի կտորի վրա պառկել, բայց երկու թագավորներ չեն կարող մի աշխարհի մեջ հաշտ ու հանգիստ ապրել...»*[29]: Դավադրության ոգին ու կազմակերպիչը Մելիք Շահնազարն էր: Այստեղ էլ ձերբակալում են Զրաբերդի հերոսին, տեղափոխում Շուշիի բանտը:

Ժողովրդի մեջ երկար ժամանակ հիշվում էին այն երգերը, որ հայ հսկան երգում էր բանտի մեջ: Նա կոչում էր իր քաջ եղբորը՝ Մելիք-Հաթամին, իր անպարտելի զինակցին՝ Ավագ Վարդապետին, որին թշնամիները Դալի-Մահրասա (գիժ վարդապետ) էին կոչում, նրանց հորդորում էր քանդել Շուշին, արյունով շաղափել նրա մոխիրն ու հողը, իրեն ազատել բանտից[30]:

Թուրք խանն ու հայ մելիքը ոչ մի ոճրագործության դեմ կանգ չէին առնում՝ ջլատելու Արցախի հայության ուժերը, ոչնչացնելու մելիքների իշխանությունը:

Զրաբերդում Մելիք-Իսրայելյան Ալահ-Ղուլիին փոխարինեց նրա եղբայր Մելիք-Հաթամը (Ադամ):

Փանահը, համալրված Կուր-Արաքսի դաշտավայրի թափառական ցեղերով, հարձակվեց Զրաբերդի վրա: Մելիք Հաթամը ստիպված էր իր զորքերով անտառով նահանջել Գյուլիստան: Այնուհետև կռիվները տեղափոխվեցին Գյուլիստանի ամրությունների շուրջը: Մելիք Հաթամն ու մելիք Հովսեփը ստիպված եղան հեռանալ Արցախի սահմաններից ու ապաստան գտնել Գանձակի Շահվերդի խանի մոտ, որը թշնամի էր զորացող Փանահին:

Արցախում Փանահի միակ զորեղ թշնամին մնում էր Դիզակի Մելիք Եսային: Փանահը երկու անգամ հարձակվում է Տող ամրոցի վրա ու պարտություն կրում: Սակայն հաջորդ ճակատամարտում դիզակցիները պարտություն են կրում, ու մելիք Եսային հաշտության առաջարկություն է անում Շուշիի տիրոջը, ընդունելով նրա պայմանները: Մելիք Եսային ապրեց մինչև 1781 թվականը:

Ոգևորվելով այս հաջողություններից, Փանահը սկսեց ընդարձակել իր տիրության սահմանները ու հաջող ասպատակություններով Ղարադաղի խանից խլեց Մեղրին, Նախիջևանի շրջանից՝ Տաթևն ու

Սիսիանը, Թավրիզի բեկլարբեկից՝ Կապանն ու Գորիսը: Այնուհետև Փանահը գրավեց Թարթառի ներքին հովիտը՝ մինչև Կուր գետը, ապա և Զեբրայիլը: Ամեն կողմից թաթարական ավազակախմբեր էին գալիս միանալու Փանահին, քանի որ նրա հետ կարող էին ազատորեն թալանել, մեծ հարստություն դիզել: Նախիջևանից եկան ու նրան միացան Դեմիրչի-Հասանլու հազարապետները, Վրաստանից՝ Ջինլի ցեղապետը: Փանահի զորքերը կազմում էին ողջ Կուր-Արաքսի միջագետքում ապրող ջիվանշիրի, օթուզիքի, քեբիրլի ցեղախմբերը: Շուշիի պես մի անմատչելի հենակետ ունեցող և դեպի աջ ու ձախ նվաճումներ անող՝ իր տերությունն անընդհատ ընդարձակող խանը վտանգ էր ներկայացնում նաև Պարսկաստանի խաների համար, որոնք փորձեցին նվաճել Շուշի բերդը[31]: Նման փորձ ձեռնարկեց Մազանդարանի կառավարիչ Մուհամեդ-Հասան խան դաջարը: Նա իր հսկա զորքով եկավ ու բանակ դրեց Խաթունարխ վայրում: Վարանդայի հայկական ջոկատները անընդհատ հարձակումներ էին գործում պարսիկների վրա, փախցնում նրանց ձիերի երամակները: Մազանդարանի խանը պաշարեց Շուշին, սակայն մեկ ամիս հետո, տեղեկանալով, որ իրեն լուրջ սպառնալիք է ստեղծվել բուն Իրանում (նրա դեմ է ելել Վեքիլ Քերիմ խան Զենդը), հեռանում է Արցախից: Շտապելով, պարսից զորքը չկարողացավ իր հետ տանել ծանր հրետանին: Փանահը ուրախանալով այս «նվերի» առթիվ, թնդանոթները տեղափոխեց Շուշի: Երկար ժամանակ դրանք հայկական մասում, մի հրապարակում են տեղադրում, որ բնակիչները Թոփխանա (հրետանու վայր) կոչեցին: Հետագայում, երբ թնդանոթները տեղադրեցին բերդապարիսպների վրա, Թոփխանան վերածվեց առևտրական կենտրոնի:

Տարբեր վայրերից Շուշի եկած ու տարբեր բարբառներով խոսող հայերը աստիճանաբար մոռացան իրենց մայրենի խոսվածքներն ու յուրացրին արցախյան բարբառը, ստեղծեցին մի նոր յուրօրինակ քաղաքային մթնոլորտ:

Այն իր հերթին, շատ բան փոփոխեց Արցախի նահապետական կենցաղի , սովորությունների մեջ: Մարդկանց այս եզակի խառնարանը պետք է հեզորեն հպատակվեր խանական իշխանությանը, անհատույց ծառայեր նրան, օգներ հարստություն դիզելու, աջակցեր Արցախի գավառներում հայկական ավանդական իշխանությունների դեմ պայքարում:

Հաջորդ տարի 30 հազարանոց բանակով Շուշի բերդը նվաճելու է գալիս ազգությամբ ավշար Ուրմիայի Ֆաթալի խանը, որը Նադիրի բանակի հրաձիգների հրամանատարն էր: Նա արդեն իրեն էր ենթարկել ողջ Ատրպատականը: Փանահի դեմ արշավանքում Ֆաթալի խանին են միանում Վրաստանի Հերակլ թագավորն ու հայ մելիքները՝ Հաթամն ու Հովսեփը: Պարսից զորքը բանակեց Խոջալուլում, որը գտնվում էր Ասկերանի ամրոցի ու Վարարակն (այժմ՝ Ստեփանակերտ) գյուղերի միջև: Ֆաթալի խանը պայմանավորվում է հայ մելիքների հետ, որ ձերբակալելով Փանահին, հայերի ձեռքը կհանձնի, միայն թե հայոց զորքը օգնի իրեն գրավելու Շուշի բերդը: Փանահը, խուսափելով բերդի պաշարումից, որը դեռևս լիարժեք ամրացված չէր, Ջիվանշիրի ցեղերի առաջնորդների զորքերով ընդառաջ է դուրս գալիս Ֆաթալի խանին և վճռական ճակատամարտում պարտություն կրում: Փանահն ու Մելքի-Շահնազարը այլ ելք չգտնելով, հպատակություն են հայտնում ուրմեցի խանին, որպես փրկագին նրան ուղարկելով 10 հազար ոսկի: Փանահը Ուրմիայի կառավարիչին խոստացավ իր որդուն պատանդ տալ, որն էլ կլինի հպատակության երաշխիքը: Շուշիի խանը իր որդուն՝ Իբրահիմ Խալիլին խաբելով, իբր թե Ֆաթալին իր դստերը նրան է տալիս, թանկարժեք նվերներով ուրմեցու վրանն է ուղարկում: Ֆաթալի խանը ձերբակալում է Իբրահիմին ու բավարարվելով 6-ամսյա պաշարման այս ելքից, բանակով Պարսկաստան է վերադառնում, իր հետ տանելով և Փանահի որդուն: Ֆաթալին շտապում էր տուն վերադառնալ, որտեղ նրա դեմ աստիճանաբար հզորանում էր մի այլ ախոյան՝ Շիրազի կառավարիչ, ազգությամբ պարսիկ Քերիմ խան Զենդը:

Շուշիի խանը Իբրահիմին գերությունից ազատելու համար դիմում է Ֆաթալի խանի թշնամի Քերիմ-խան Զենդին: Ֆաթալին մի ճակատամարտում սպանել էր Զենդի եղբորը՝ Ասկար խանին, ու Զենդը, որը գրավել էր Իրանի մեծ մասն ու համարվում էր անչափահաս Իսմայիլ շահի խնամակալը, վճռել էր վրեժխնդիր լինել Ֆաթալից: Այս հակամարտությունը նաև բուն պարսիկների ու թուրքական ցեղերի (ղաջար) միջև Պարսկաստանում իշխելու համար ծավալված համառ պայքարի մի ուրույն դրսևորում էր: Սպահանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթում է Ֆաթալի խանը: Պարսից զորավարը նոր զորք է հավաքում, որին միանում է և Փանահը, 1762

թվականին արշավում դեպի Ուրմիա և վճռական ճակատամարտում հաղթում է Ֆաթալի խանին, գերեվարում նրան և գլխատում նույն վայրում, որտեղ զոհվել էր իր եղբայրը: Քերիմ խան Զենդը, գերությունից ազատելով Իբրահիմին, հոր՝ Փանահի հետ իր հայրենի երկիրը՝ Շիրազ է տանում: Փանահ խանը իր տեղապահ էր կարգել իր մյուս որդուն՝ Միհրալի բեկին: Սա Շուշի գալով, ամրացնում է բերդը, Ասկերանի և Ամարասի ամրոցները: Իսկ Փանահը, որը Զենդի Շիրազ գալու հրավերից հասկացել էր, որ ինքն արդեն հավերժ գերության մեջ է, որոշում է մի խորամանկության օգնությամբ ազատվել գերությունից: Նա թմրամոլ էր ու մի օր օպիումի մեծ թմրաբաժին ընդունելով, խորը քուն է մտնում: Քերիմ խանը չէր ցանկանում խորամանկ ու հանցագործ Փանահին թույլ տալ նորից տիրելու Ղարաբաղին: Իբրահիմը դիմում է Քերիմ խանին, խնդրելով թույլ տալ հոր աճյունը տեղափոխելու Ղարաբաղ և թաղելու պապական գերեզմանոցում: Շիրազցին, որ հասկացել էր թափառական թուրքերի խորամանկ քայլը, ասաց.

- Ես պետք է նրան պատվով հուղարկավորեմ...Մարմինը ճանապարհին կհոտի, անհրաժեշտ է զմռսել նրան...

Դահիճները կենդանի Փանահին հերձում են, դուրս թափում փորոտիքը: Քերիմ խանը Իբրահիմին խանական կոչում է տալիս և հոր աճյունը Ղարաբաղ ուղարկում: Աղդամ գյուղի մոտ թաթատական գերեզմանոցում Փանահին թաղելուց հետո սկիզբ է առնում խանական աթոռին տիրանալու համար երկու եղբայրների միջև անհաշտ հակամարտությունը: Եթե Իբրահիմը իրեն ուժեղ էր զգում Շուշիում, ապա Միհրալին կողմնակիցներ էր գտնում Ղարաբաղի տափարակում, ուր նրան են միանում Փանահից ու Իբրահիմից դժգոհ թափառական ցեղերը: Իբրահիմը աջակցություն է ստանում իր հոր հին դաշնակիցներից՝ ավարներից: Իսկ Միհրալին դաշնակցում է Դերբենտի կառավարիչ Ֆաթալի խանի հետ, որը թշնամի էր ավարներին: Դերբենտի առաջնորդը Շամախիում իր վրանում բանակցությունների ժամանակ սպանել էր ավարների առաջնորդ Մուհամմադ Նուցուլին, և մեծ հաճույքով էր ուզում վերացնել ավարների դաշնակիցների որջը ու այնտեղ հաստատել իրեն հավատարիմ ու ենթակա Միհրալիին: Ֆաթալի խանը, որ գրավել էր Գանձակը, պետք է Ղարաբաղի դաշտավայրում միանար Միհրալիին, որ միասին սկսեին Շուշիի բերդի պաշարումը: Սակայն դեպքերի հաջորդակա-

նությունն ու դիպվածքները Իբրահիմի օգտին էին, որը ահաբեկված սպասում էր իր կործանմանը: Գանձակում հանկարծամահ է լինում Ֆաթալի խանը, իսկ Միհրալին սպանվում է մերձավորների կողմից: Առանց որևէ խոչընդոտի Իբրահիմը տիրանում է խանությանը:

6. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ՇՈՒՇԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1763 թվականին Ռուսաստանում գահ է բարձրանում Եկատերինա 2-ը, որը փաստորեն Պետրոս Առաջինի քաղաքականության ժառանգորդն էր: Կրին առաջին պլան է մղվում Սև ծովի, նրա նեղուցները տանող ճանապարհի գրավման խնդիրը: Այդ ճանապարհին էին Ղրիմի թաթարների խանությունը, Թուրքիայի եվրոպական տիրապետությունը: Արքունիքում ամենազդեցիկ մարդը դարձավ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինը, որը նպատակադրվել էր թուրքերին դուրս քշել Եվրոպայից: Թագուհու շրջապատում իր ազդեցությամբ և լայն կապերով աչքի էր ընկնում հայ մեծահարուստ Հովհաննես Լազարյանը: Նրա հայրը՝ մեծահարուստ Եղիազարը (Աղազար) 1747 թվականին իր չորս որդիների հետ Նոր Ջուղայից տեղափոխվում է Պետերբուրգ, այստեղ ծավալում իր առևտրական գործունեությունը: Նրա ավագ որդին՝ Հովհաննեսը, մեծ հաջողության ու հռչակի է հասնում, դիզում մեծ հարստություն: Հաճախ էին նրան հյուրընկալվում արքունիքի ներկայացուցիչները, իշխան Պոտյոմկինն ու ինքը՝ ամենակարող թագուհին: Հովհաննես Լազարյանը իր առևտրական գործունեությանը զուգահեռ չի մոռանում իր Հայրենիքի՝ Հայաստանի աղետալի վիճակը: Նա հաճախ է արքունիքի ու թագուհու առջև բարձրացնում քրիստոնեական Հայաստանը բռնակալական լծից ազատագրելու խնդիրը: Հովհաննեսին այս խնդրում շատ է օգնում Ռուսաստանում Հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանը:

Նրանք նամակներով կրկին հուսադրում են Արցախի մելիքներին, որ շուտով կգա ռուսաց օգնությունը:

Իբրահիմ խանը շարունակելով իր հոր քաղաքականությունը արցախահայության և հայ իշխանների նկատմամբ, իր դաժանությամբ գերազանցում էր հորը: Սա ավելի ճկուն էր իր դիվանագիտությամբ ու շատ ավելի խորամանկ և իր նպատակին հասնելու համար հաճախ դիմում էր ամենանենգ ու ստոր միջոցների: Իբրահիմը շտապում էր ամրապնդել դաշինքը Մելիք-Շահնազարի հետ՝ պսակվելով նրա գեղեցկուհի դստեր՝ Հուրիզադեի հետ: Վերջինս նաև Դիզակի Մելիք Եսայու թոռն էր (Մելիք-Շահնազարի կանանցից Սոնան Մելիք Եսայու դուստրն էր, Սոնային կնության էին տվել Վարանդայի օրինական տիրոջը՝ Մելիք Հովսեփին, սակայն Սեյն Շահնազարը դեռևս եղբոր կենդանության օրոք բռնությամբ տիրացել էր նրա կնոջը): Այս առիթով կրկին բորբոքվում են Շահնազարի ու Եսայու միջև կռիվները: Վարանդայի տիրոջն է միանում Խաչենի մելիքությունը զավթած մելիք Միրզախանը: Մելիք Եսային, ամրանալով Տողի իր ամրոցում, հաղթում է այս կռիվներում: Պահպանվել է մի ավանդություն, ըստ որի այսպիսի մի ընդհարման ժամանակ գերի է ընկնում մելիք Միրզախանը: Մելիք Եսային մերկացած սուրը պահելով դավաճանի գլխավերևում, ասում է.

- Դու, Միրզախան, շատ նման ես այն դավաճանին, որին կոչում էին Մեհրուժան: Նա ուրացավ մեր կրոնը: Նա պարսից ձեռքում գործիք դարձավ և սկսեց մեր հայրենիքը ավերակ դարձնել: Նրան, որպես վարձատրություն իր կատարած չարագործության համար, խոստացել էին Հայաստանի թագը: Մի ճակատամարտի ժամանակ նա ևս գերի ընկավ հայերի ձեռքը: Հայոց թագավոր Սմբատ Բագրատունին կրակի մեջ շիկացած շամփուրին պսակի ձև է տալիս, դնում նրա գլխին, ասելով *«Դու ցանկանում էիր հայոց թագավոր լինել, ահա, որպես ասպետի ու թագավորի՝ պսակում եմ քեզ...: Բայց դու գոնե Մեհրուժանի նման փառասիրություն չունես, դու միայն մի ցածր դավաճան էիր, որ առօրյա չնչին փառքի համար թուրք խանի ու Մելիք Շահնազար չարագործի արբանյակը դարձար: Քեզ հետ պետք է վարվել ինչպես մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպեսզի մյուս արարածները նրա կծոտելուց չվարակվեն»:*

Մելիքը սուրը թափով իջեցնում է դավաճանի վրա»[32]:

Արցախում կրկին սկիզբ է առնում կաթողիկոսական աթոռի շուրջ սուր պայքարը: Ամենքը՝ իշխան թե ռամիկ, տիրացու թե ե-

պիսկոպոս, կլանվեցին այս հարցով, ասես միայն այս հարցի լուծումից էր կախված հայրենի երկրի ճակատագիրը, լինել-չլինելու խնդիրը: Կրկին սրվեցին Գանձասարի ու Երիցմանկանց վանքերի հարաբերություններն ու մրցակցությունը:

Աղվանից կաթողիկոսությունը Եսայի Ջալալյանից հետո անցել էր Ջրաբերդցի Ներսեսին: Սակայն նա Գանձասարի վանքում չնստեց: Նա միշտ Երիցմանկանց վանքում էր, իսկ վերջերը՝ Գանձակում: Եվ ահա 120-ամյա կաթողիկոսը մահամերձ պառկած, իր մոտ հրավիրելով բոլորին, հայտարարում է, որ իր հաջորդ է կարգում իր եղբորորդուն՝ Իսրայելին: Գանձակի եկեղեցում հանդիսավոր կերպով կաթողիկոս են օծում: Ավանդությունը պատմում է, որ օծման արարողության ժամանակ եպիսկոպոսների թիվը մեկով պակաս էր, որը լրացնում է Շահվերդի խանը, որը եպիսկոպոսական հանդերձանքներով կանգնում է նրանց շարքում:

Ներսեսը իշխանների ու ժողովրդի առջև երդվել էր իր հաջորդ նշանակել միայն Ջալալյանների տոհմի ներկայացուցչին: Գանձակի խանը շահագրգռված էր, որ կաթողիկոսը անպայման Երիցմանկանց վանքից նշանակվի և կաթողիկական աթոռը Գանձակ տեղափոխվի, որը նրան իրավական հիմք կտա իր իշխանությունը տարածելու ողջ աղվանից աշխարհագրական տարածքն ընդգրկող երկրների վրա:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որը 1763 թվականին փոխարինել էր Հակոբ Շամախեցուն, պահանջեց, որ Իսրայելը էջմիածին գա և օծվի: Իսրայելը հրաժարվեց էջմիածին գնալ:

Ղարաբաղի մի շարք մելիքներ ու եպիսկոպոսներ (շուրջ 50 հոգի) Ջալալյան տոհմից Հովհաննեսին տարան էջմիածին, դիմելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Աղվանից կաթողիկոս օծի:

Սիմեոն կաթողիկոսը մերժեց, հայտնելով, որ նախորդ կաթողիկոսը արդեն իրեն հաջորդ է նշանակել: Իբրահիմ խանը ևս շահագրգռված էր, որ Կաթողիկոսարանը իր ազդեցության տիրույթում՝ Գանձասարում մնա: Պատվիրակությունը վերադառնալով Գանձասար, հանդիսավոր կերպով Հովհաննեսին կաթողիկոս է օծում: Վեճն ու մրցակցությունը սուր բնույթ ստացան: Էջմիածինը որոշեց, որ հարցը պիտի որոշի Երևանի խանը, որը Շահվերդի խանի բարեկամն էր: Իբրահիմը սպառնաց, որ պատերազմ կսկսի Երևանի

դեմ: Իսրայելը հրաժարվում է Գանձասար գնալուց: Ի վերջո, Սիմեոնը կաթողիկոս ճանաչեց Հովհաննեսին:

Իսրայելը վճռեց վրեժ լուծել Հովհաննեսից՝ որոշելով բոլոր ասպարեզներում ու բոլոր միջոցներով պայքարել նրա դեմ: Սակայն Սիմեոն Երևանցին կրկին թղթեր է ուղարկում մելիքներին ու ժողովրդին, հաղորդելով, որ կաթողիկոս ընդունեն միայն Գանձասարի Հովհաննեսին:

Այդ տարիներին Ղարաբաղում էր գտնվում հնդկաստանցի Հովսեփ էմինը, որը եկել էր օտար լծից Հայաստանը ազատագրելու մեծ ծրագրով: Մինչ Արցախ հասնելը էմինը դժվարին ու արկածներով և զրկանքներով լեցուն տարիներ էր ապրել: Նա ծնվել է 1726 թվականին, Պարսկաստանի Համադան քաղաքում, վաճառականի ընտանիքում: Հետագայում էմինների ընտանիքը ստիպված է լինում տեղափոխվել Հնդկաստան, հաստատվել Կալկաթայում: Երիտասարդ Հովսեփը, որը շատ էր լսել Հայաստանի և Արցախի, նրա ազատասեր ժողովրդի ու ազատության համար նրա հերոսական պայքարի մասին, հակառակ հոր կամքի, վճռում է նվիրվել հայ ժողովրդի պայքարին: 25-ամյա էմինը նավով Հնդկաստանից մեկնում է Անգլիա, նպատակ ունենալով այստեղ զինվորական կրթություն ստանալ, ապա միայն գնալ Հայաստան: Մի քանի տարի զրկանքների մեջ ապրելուց հետո նա կապ է հաստատում Լոնդոնի բարձրաշխարհիկ խավի հետ, ստանալով մի շարք ազդեցիկ մարդկանց հովանավորությունն ու աջակցությունը, ընդունվում է Վուլվիչի թագավորական ակադեմիա, որտեղ ուսումնասիրում է հրետանու գործն ու ռազմական արվեստի գաղտնիքները: 1756 թվականին Անգլիայի դաշնակից Պրուսիան նոր պատերազմ է սկսում: Ֆրիդրիխ 2-րդը իր զորքով ներխուժում է Սաքսոնիա: Անգլիական զորքերը ևս մասնակցում են 7-ամյա պատերազմին: Էմինը որոշելով պատերազմական փորձ ձեռք բերել, կամավոր մեկնում է Գերմանիա, մասնակցում անգլիական զորքերի ֆրանսիական ափամերձ շրջանում (Սեն-Մալու) արշավանքին: Այստեղ նա քաջության և խիզախության համար ստանում է «առյուծ» մականունը: Էմինը Լոնդոնից նամակ է գրում Կախեթի Հերակլ թագավորին, առաջարկում իր ծառայությունը իբրև եվրոպական սպա: Իբրև հայ Բագրատունիների ժառանգորդ, էմինը նրան անվանում է հայոց ու վրաց թագավոր: Էմինին ընդունում է անգլիական կառավարության ղեկավարը՝

Պիտտը և ուշադրությամբ լսում հայ հայրենասերին: Սակայն Ալբիոնի շահերը ամենևին էլ չէին համապատասխանում Էմինի Հայաստանի ազատագրական ծրագրերին: Պիտտը միայն կարեկցանք է հայտնում Էմինին: Հայ գործչին ընդունում են նաև լոնդոնյան բարձրաստիճան պաշտոնյաներ: Վերջապես, Էմինը 1760 թ. Թուրքիայով հասնում է Էջմիածին, հանդիպում կաթողիկոս Հակոբ Շեմախեցուն: Էմինը նպատակադրվել էր գնալ Արցախի Ջրվշտիկ վանքը (Եղիշե առաքյալի վանք) և հայ ազատագրական պայքարի հերոս Ավագ վարդապետի (Դալի Մահրասա) հետ հայկական ջոկատներ ստեղծել, օտար լծից մաքրել հայոց Արցախը: Սակայն շուտով տեղեկանում է, որ Գանձակի կռիվներում զոհվել է քաջ աբեղան: Կաթողիկոսը Էմինին խորհուրդ է տալիս վերադառնալ Անգլիա և Հայաստան գալ Ռուսաստանով, ռուսական արքունիքին պատմելով իր ծրագրերի մասին և դիմել նրանց օգնությանը: Էմինը վերադառնում է Լոնդոն, այստեղից ուղևորվում Ռուսաստան: Ռուսաստանի կանցլեր Վորոնցովն ու վիցե-կանցլեր Գոլիցինը, ծանոթանալով եվրոպական առաջադեմ գաղափարներով կրթված ու ռազմական ուսում ստացած երիտասարդ Էմինին, հանձինս նրա, տեսնում են ապագայում ազատագրված Հայաստանի թագի ժառանգորդին, ու նրա անձնագրում «վաճառականի» փոխարեն «ազնվական» են գրում: Անգլիայում Էմինը մտածում է հայ-վրացական ֆեդերատիվ պետության ստեղծման մասին: Էմինը հանդիպում է հայտնի վաճառական, ռուսական արքունիքում մեծ ազդեցություն ունեցող Հովհաննես (Իվան) Լազարյանին և արքեպիսկոպոս Արղությանին: Պետերբուրգում էր և վրաց թագավոր Թեյմուրազը, որը Ռուսաստան էր եկել դիմելու նրանց օգնությանը: Ելիզավետա թագուհին մեռնում էր, ու չէր կարող ընդունել հայ գործչին: Էմինը պետք է Թեյմուրազի հետ մեկներ Վրաստան, սակայն 1762-ի տարեսկզբին մահանում է ծերունի վրաց թագավորը: Աստրախանում Էմինը ծանոթանում է հայ ազատագրական պայքարի հերոս Ավան զորավարի այրու՝ Գոհարի և նրա գեղեցկուհի թոռան՝ Մարիամի հետ: Մեծ դժվարությամբ Էմինը Թիֆլիս է հասնում: Հերակլը մերժում է հազար հոգանոց հեծյալ ջոկատ տալու Էմինի առաջարկությունը: Էմինը նպատակ ուներ դրան կցելու ողջ Հայքի երկրամասերի զինված ջոկատներին ու պատերազմ սկսելով Քերիմ խանի դեմ, ազատագրել երկիրը: Մուշից ոչ հեռու սրբ. Կարապետ վանքի վանահայր Հովհաննեսը

հաղորդել էր, որ 40 հազար հոգի սպասում են վրաց իշխանի կողմից զորքի գալուստին, որ միանան նրան: Սակայն վրաց իշխանի ծրագրերի մեջ չէր մտնում Հայաստանի ազատագրումը:

1763 թվականին Հակոբ Շամախեցուն հաջորդած Սիմեոն Երևանցին, որը ամենատաղանդավոր եկեղեցականներից մեկն էր, հայտնի գիտնական ու փիլիսոփա, շատ զգուշավոր քաղաքականություն էր վարում ազատագրական շարժման նկատմամբ ու վախենում էր Իրանի ու Թուրքիայի զայրույթից: Նա սկսեց հալածել սրբ. Կարապետի վանահորը՝ Հովհաննին ու Հայաստանի ազատագրման համարձակ ծրագրերով Արդրկովկաս եկած Էմինին: Կաթողիկոսը գրում է Հերակլին. «*Լավ կլինի թագաժառանգին* (Էմինին - Բ.) *ուղարկես այնտեղ, որտեղից եկել է...*»: Էմինին արտաքսում են Վրաստանից: Էմինը Ջարում միանում է ավարների զորքին, որը շտապում էր Գանձակ՝ օգնելու Շահվերդի խանին: Սակայն խանը չի կարողանում վարձատրել նրանց, դրա փոխարեն առաջարկելով գնալ Նախիջևան՝ թալանի: Էմինը գնաց նրանց հետ, որ փրկի հայերին:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որ խիստ վախեցած էր Հովսեփ Էմինի այս մեծ ու համարձակ ծրագրից, քանի որ հայտնի դառնալով կարող էր հայերի ու Էջմիածնի դեմ գրգռել օսմանյան ու պարսից հզոր տերություններին, նամակներ է ուղարկում Վրաստանի իշխաններին, Արցախի մելիքներին, ինչպես և եկեղեցական հովվապետներին՝ հանձնարարելով չընդունել Հովսեփ Էմինին: Այս մեծ հայրենասերը, որ ռազմական գործի իր հմտությամբ, փոքր ջոկատով ամրանալով Գետաշենի ապառաժներում, կազմակերպել էր Գանձակի խանի զորքերի հարձակումից գյուղի պաշտպանությունն ու հակահարձակումով երկու անգամ խայտառակ փախուստի մատնել թաթարներին, այս անգամ ստիպված էր հեռանալ Գյուլիստանի մելիքությունից:

Էմինը գնաց Գանձասար՝ Աղվանից կաթողիկոս Հովհաննեսի մոտ: Սա ևս ստացել էր Սիմեոն Երևանցու նամակը, և Էմինին խորհուրդ տվեց անձամբ գնալ Շուշի և ներկայանալ խանին:

- Որովհետև խանի լրտեսները ամեն տեղ են, լեռների վրա, գյուղերում,- ասաց Հովհաննես Ջալալյանը,- *ո՞վ գիտե, թերևս նա մտահղանա իր մահմեդական գլխի մեջ և հրամայե սպանել քեզ, քո*

պատճառով նաև ինձ, ինչպես նաև վանականներին ու կործանի վանքը:

Քուրդ քոլանիների առաջնորդը, որը լսում էր այս զրույցը, առարկեց նրան, ասելով, որ Իբրահիմ խանը գիտե էմինի քաջության մասին, գիտե, որ էմինը ազատել է քրդերին լեզգիների գերությունից, Գետաշենում կռվել և հաղթել է Իբրահիմի թշնամի Շահվերդի խանի որդու Մահմեդ Հուսեինի զորքերին: Քուրդ շեյխը խոստացավ էմինին տանել Շուշիի իր վրանը, անձամբ ներկայացնել խանին: Հովհաննեսը նամակ գրեց Իբրահիմին, վերջում ավելացնելով. *«Կարվեցեք անոր հետ, ինչպես հարմար գիտէք: Բայց որչափ կըրնամ նկատել, ան բնաւ չի տարակուսիր, թե պիտի գտնէ բարեկամներ կամ ազնիվ ուշադրությամբ պիտի ընդունուի ձեր բարձրութեան կողմե, ինչպես ընդունեցին զինք ֆրանսիստան իշխանները եւ մանաւանդ, տաղիստանի լեզկիները, որոնք թշնամացած են տիեզերքի բոլոր ազգերուն: Ուրեմն խաղաղութիւն ընդ ձեզ եւ մարդասիրութիւնը ձեր սրտին, այնպես որ ազնուական հիւրն ընդունելու տանն ձեր մտքին առաջնորդ է ասպնջականութեան օրենքը, զոր կարգեց Աբրահամ նահապետ:*

Ձերդ Յոհաննիս ծառայ Քրիստոսի եւ Կաթողիկոս Գանձասարի[33]

Թե՛ կաթողիկոսը և թե՛ էմինը գիտեին, որ Իբրահիմ խանին հայտնի էր դարձել հնդկաստանցի հայրենասերների ծրագրերի մասին, ու նա մտադրվել էր սպանել նրան: Սակայն հայտնի էր նաև, որ Իբրահիմը չէր ցանկանա էմինի պատճառով թշնամանալ ավարների հետ, որոնց շատ սիրելի էր այս քաջ հայորդին: Իբրահիմը պետք է հաշվի առներ նաև այն հանգամանքը, որ էմինը ընդունվել է ռուսաց հզոր կայսրության արքունիքում: Հովսեփ էմինը քուրդ ցեղապետի և շուշեցի մի ծերունու Իսահակի հետ գնաց Շուշի: էմինին ուղեկցում էր ծնունդով արցախցի Մովսես Բաղրամյանը: Խանը իր զորքերով Կուր գետի կողմերն էր գնացել: Գրությունը հանձնեցին խանի փոխանորդ ԱղՃսի բեկին, որն էլ հրամայեց հյուրին առաջնորդել Խաչենի մելիք Միրզախանի տունը, մինչև խանի վերադառնալը: Մելիքը ևս բացակայում էր, ուստի հյուրին ընդունեց նրա պառավ կինը: Մելիքի կինը հայտնեց, որ սխալ էր նրա Շուշի գալը, քանի որ խանը որոշել է մահվան դատապարտել էմինին, ու դժվար կլինի խուսափել Իբրահիմի կատաղությունից:

- Նա մարդ կգտնի, որը որոշ դրամի փոխարեն կսպանի քեզ,- ասաց մելիքի կինը: Սակայն էմինը անդրդվելի էր, ու վճռեց սպասել խանին: Խանի մերձավորները էմինին հյուրասիրեցին հաց ու պանիրով, ինչպես և Նախիջևանից բերած սեխով:

Հաջորդ օրը խանը այցելուներին ընդունում էր Շուշիի միջնաբերդում գտնվող իր ապարանքի բակում նստած գետնին փռած գորգի վրա: Քոլանի քուրդը ներկայացրեց էմինին, պատմելով, որ նա իրենց ազատել է գերությունից, կռվել ու հաղթել է Շահվերդի խանին ու այժմ իբրև հյուր է եկել:

- Բարի եկաք, հյուրս, ի՞նչ է ձեր փափագը,- էմինին դիմեց Իբրահիմը:

- Ծեր ծի մ'ունեմ, որ ստացել եմ Մելիք Յուսուֆեն (Գյուլիստանի Մելիք Հովսեփ - Բ.),- պատասխանեց Հովսեփ էմինը,- եկա ուրիշ ծի խնդրելու ձեզանից ծառայիս համար, քանի որ դրամ չունեմ նոր ծի գնելու:

Հավանաբար, էմինը իբրև ծառա նկատի ուներ Մովսես Բաղրամյանին:

Խանին շրջապատող մարդիկ զարմացան էմինի այս համարձակության վրա: Նրանք բերեցին ու առաջարկեցին իրենց ձիերը, բայց խանը մերժեց բոլորին: էմինը մի խաղ էր սկսել, նպատակ ունենալով շեղել խանի ուշադրությունը քաղաքական հարցերից: Խորամանկ խանը ընդառաջ գնաց այս խաղին: Հաջորդ օրը էմինը կրկին եկավ խանի մոտ: Սա նստած էր դռան շեմի վրա: Խանը նկատել էր հյուրին, սակայն երկու ժամ շարունակում էր խոսել իր մերձավորների հետ, միևնույն ժամանակ չարությամբ նայելով էմինի կողմը: Քոլանի քրդերի առաջնորդը համոզում էր խանին, որ նեղություն չպատճառի իր ազատարարին ու հյուրին: Ի վերջո խանը հանդարտվեց ու հրամայեց ձի բերել:

- Է՛հ, հյուր իմ, կընդունե՞ս այս ձին,- դիմեց խանը:

- Կփորձեմ, նոր միայն կհայտնեմ կարծիքս,- ասաց էմինը:

Քիչ անց հետ վերադարձրեց ձին ու ասաց, որ այն ծեր է ու կաղ: Հովսեփ էմինը մի գրություն թողեց խանին. *«Բարեբաստից խան, չի վայելել ձեզ, որպես Հայաստանի հյուսիսային լեռնականաց իշխանի համբավին, տարէց ու անպետք ձին նուիրել ձեր միակ հիւրին եւ ի տեղի աւելի լաւը տալ ծառաներուն: Ի՞նչ պիտի ասեն Տաղստանի յելուզակները»:*

Հաջորդ օրը էմինը կապեց սուրը, ուսովը գցեց հրացանը, հեծավ ձեր ձին և գնաց Իբրահիմի մոտ: Խանը նստել էր իր ապարանքի ճեմասրահում՝ շրջապատված իր հավատարիմ հայ մելիքներով: Էմինը թեթևակի խոնարհելով գլուխը ասաց.

- Ով խան, Ձեր արտոնությամբ մեկնում է ձեր հյուրը, որին արժանի չհամարեցիք ձեր ախոռի մի նժույգին: Որևէ հրաման ունե՞ք Շամախիի խանին: Պատրաստ եմ տանել այն:

Իբրահիմի կարմրավուն դեմքը կատաղությունից կավճի պես սպիտակեց: Հրամայեց մտրակ բերել և առաջարկեց հյուրին: Էմինը շնորհակալություն հայտնեց, մտրակը նվիրեց քոլանի քուրդ առաջնորդին և մեկնեց Շուշիից: Երկու ժամից նա Գանձասար հասավ: Կաթողիկոս Հովհաննեսը զարմանքից քար էր կտրել՝ կենդանի տեսնելով Հովսեփ Էմինին:

Շամախիում Տեր-Գաբրիելից տեղեկանալով վանահայր Հովնանի ծրագրերի մասին, որն առաջարկում էր գնալ Արևմտահայաստան և ղեկավարել լեռնցի ասորիների, քուրդերի և հայերի ռազմական ջոկատները, էմինը ճանապարհվում է դեպի Մուշ: Նա երկրորդ անգամ պետք է անցներ Շուշիի շրջանով: Իբրահիմը իր լրտեսների միջոցով տեղեկանալով էմինի մասին, դավադրություն է սարքում, փորձելով իր հայ գործակալի ձեռքով սպանել հայրենասերին: Սակայն էմինը կանխում է դավադիրին: Այստեղ նա էմինին ուղեկցում էր Մովսես Բաղրամյանը: Շուտով հասնում են Խոյ: Լեռնցի ասորիները էմինից պահանջում էին, որ գա Հերակլի հատուկ ջոկատի հետ, որն էլ կլինի միասնության և ուժի երաշխիքը: Էմինը ստիպված էր վերադառնալ Թիֆլիս: Մովսես Բաղրամյանը հիասթափվելով, հեռանում է էմինից, գնում Աստրախան՝ իր ընտանիքի մոտ, ապա ճանապարհվում Հնդկաստան: Վրաստանում էմինին ոչինչ չի հաջողվում ձեռնարկել: Նրա հայ-վրացական միության ծրագիրը հօդս է ցնդում: Հնդկաստանի ճանապարհին էմինը հյուրընկալվում է Շուշիում Իբրահիմի կողմից:

Երբ 1768 թ. սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, էմինը նոր ծրագիր է առաջարկում: Հաջորդ տարի ռուսները գեներալ Տալեբենի հրամանատարությամբ 3767 զինվոր են ուղարկում Վրաստան, որպեսզի միացյալ զորքերով հարվածեն թուրքերին: Սակայն Հերակլը բախվում է գեներալի հետ ու խանգարում այս ծրագրերի իրականացմանը: Էմինը Կալկաթա է մեկնում: Մադրասում հայ հասարակական գործիչ, մեծահարուստ Շահամիրյանը առաջարկում է հարուստ վաճառականներից փող հավաքել, որի օգնությամբ էմինը ձեռնարկի Հայաստանի ազատագրման խնդիրը: Սակայն այստեղ նա կրկին խանգարում է Սիմեոն կաթողիկոսը: Հովսեփ Էմինը 1789 թվականին Կալկաթայում ավարտում է իր կենսագրության մասին գիրքը, որը լույս է տեսնում 1792 թվականին Լոնդոնում: 1780 թվականին Պետերբուրգում իշխան Պոտյոմկինն ու զորավար Սուվորովը խորհրդակցում են Հովհաննես Լազարյանի ու Հովսեփ Արքեպիսկոպոս Արղությանի հետ հայկական գործերի մասին և հանձնարարում էմինին Ռուսաստան հրավիրել, Հայաստանի ազատագրման գործը գլխավորելու համար: Սակայն նրանց նամակը էմինին է հասնում 10 տարի հետո միայն: Էմինը մահանում է Կալկաթայում 82 տարեկան հասակում:

Հայաստանի ազատագրության նվիրյալին ընկերակցում էր ազատագրական շարժման մեկ այլ ջատագով՝ Մովսես Բաղրամյանը, որը հաստատում է և Սիմեոն կաթողիկոսը իր հիշատակարանում[34]: Մովսեսը նպատակ էր ունեցել հայրենի Արցախում, մանավանդ Շուշիում, ձեռնարկել դպրոցներ բացելու և պատանիներին կրթելու գործը, սակայն Շուշիում համոզվեց, որ թե՛ միջավայրը և թե՛ Իբրահիմ խանի վարած հայատյաց քաղաքականության պայմաններում դա անհնար կլինի իրականացնել:

Նա Հովսեփ Էմինին հանդիպել էր Ռուսաստանում, նրա հետ էլ այցելել Թիֆլիս ու Ղարաբաղ, սակայն գործի անհաջողության հետևանքով թողնում է էմինին, ու վերջինիս խորհրդով 1767 թվականին գնում է Հնդկաստան՝ Մադրաս քաղաքը: Այստեղ նա զբաղվում է հայ առևտրական ընտանիքների երեխաներին հայոց լեզու և հայոց պատմություն ուսուցանելով, միևնույն ժամանակ՝ համագործակցում Մադրասի հայկական գաղթօջախի հասարակական գործիչների՝ Շահամիր Շահամիրյանի, նրա որդու՝ Հակոբի, Գրիգոր Խոջաջաջյանի և այլոց հետ՝ Հայաստանի ազատագրության գաղափարը քարոզելու և ժողովրդի մեջ տարածելու համար:

Մ.Բաղրամյանը Մադրաս քաղաքում 1770-71 թթ. մասնակցում է հայկական տպարան հիմնելու և գրքեր հրատարակելու գործին: 1773 թ. Մադրասում նրա հեղինակությամբ լույս տեսած «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի համար հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին պատժում է Մ.Բաղրամյանին, կարգալույծ անում և

արգելում նրան այլևս նման գրքեր գրել և հրատարակել: Աշխատությունն իր բովանդակությամբ ու գաղափարով մի նոր ու բացառիկ երևույթ էր հայ մատենագրության մեջ: Այն նոր ծրագիր էր հայ ազատագրական շարժման համար, կոչ՝ ուղղված երիտասարդությանը Հայաստանն ազատագրելու համար: Այն փաստորեն սկզբնավորվում էր հայկական քաղաքական հրապարակախոսական մշակույթը: Այն հայ մատենագրության մեջ առաջին գիրքն էր, որ նախաձեռնել էր հայ ազատագրական շարժումը բարձրացնելու և պայքարի ելնելու գաղափարը, գրավոր խոսքով ժողովրդին մատուցելու գործը: Այս աշխատության մեջ մեզ անհնար է չտեսնել, չզգալ Հովսեփ Էմինի ազդեցությունը և հայրենասիրական շունչը:

7. ԽԱՆԸ ՀԱՅՈՑ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԴԵՄ

Գյուլիստանի մելիք Հովսեփն ու Ջրաբերդի մելիք Հաթամը Վրաստանի Հերակլ թագավորի միջնորդությամբ վերադառնում են իրենց երկրները: Հաթամը իր հետ երիցմանկանց վանք է բերում հակաթոռ Իսրայել Կաթողիկոսին:

Քանի որ Խամսայի մելիքները կենտրոնական դեր էին կատարում հայոց ազգային ազատագրական պայքարի ծրագրերում, տարբեր վայրերից հայ գործիչները իրենց հայացքները հառել են դեպի Արցախ: Վրացիների հետ միացյալ քրիստոնեական ուժեր ստեղծելու պատրանքները հօդս ցնդեցին: Վրացի իշխանները ևս չէին հավատում նման միասնությանը, քանի որ իրենք ևս տրոհված էին ու որևէ վճռական ուժ չէին ներկայացնում, ուստի նրանք ևս հայացքները դեպի Ռուսաստան էին հառել: Ղարաբաղի խանի շուրջը ասես սեղմվում էր օղակը: Նա իր հերթին զգալով վերահաս վտանգը, նորանոր դաշնակիցներ էր փնտրում: Շուտով նա պսակվում է Ջարի (Չարի) 12-ամյա Ումմա խանի քրոջ՝ Բախտակի (Բիքու աղա) հետ:

Սարուջալու ցեղապետի և կովկասցի ավառարուների միջև վաղուց էր դաշնություն ստեղծվել: Փանահը իր թափառական ցեղակիցներով հաճախ էր միանում ավարներին ու ասպատակում հայոց, վրաց ու պարսից բնակավայրերը: Եվ ահա այս դաշինքը նորոգելու

նոր առիթ էր ստեղծվել: Կովկասի լեռնականներին հարավում Շուշիի պես մի կարևոր հենարան ու դաշնակից էր պետք, ուստի Ումմա խանը ստիպում է քրոջը, հակառակ նրա կամքի, կնության գնալ ատելի Իբրահիմին, որը *«տգեղ էր ու անճոռնի», իսկ մահմեդական շիաները՝ կեղտոտ»*[35]:

Ահա մի անգամ իր հերթական թալանչիական արշավանքի ժամանակ, երբ Ումմա խանը պաշարել էր Նախիջևանը, փեսան՝ Իբրահիմը հայտարարում է, որ Ատրպատականից թալանի նպատակով հարձակման են եկել Ղարադաղի զորքերը՝ Մուստաֆա խանի գլխավորությամբ: Պարսիկները կարծում են, թե Ումմա-խանը, թալանի նպատակով, ինչպես միշտ, պատրաստվում է Երևանի վրա հարձակվելու: Սակայն Ումմա-խանի և Իբրահիմի զորքերը Խուդաֆերինի կամրջի մոտ անսպասելիորեն նետվում են պարսիկների վրա և ցիրուցան անում նրանց զորագունդը: Լեզգի-ավարական զորքերը նահանջող պարսիկներին հետապնդելով անցան Արաքսի կամուրջն ու Ատրպատականում կոտորեցին շատերին՝ թալանելով պարսկական գյուղերը[36]:

1782 թվականին Ումմա-խանը, որն արդեն հասունացել էր, Իբրահիմի դրդմամբ շարժվեց դեպի Ջավախք, գրավեց Վախտամա բերդը, գերեց իշխան Աբաշիձեի երկու աղջիկներին, մեկին պահեց իրեն: Հաջորդ տարի Ումմա-խանը եկավ Շուշի, ընծաներ թողեց իր քրոջը: Նա Շուշիում մշտապես թողեց և ավարական երեք հազարանոց հեծյալ գունդը ու գնաց իր երկիրը: Այսուհետ ավազակային այս զորքը պետք է մնար Շուշիում ու Իբրահիմի ձեռքին դառնար Ղարաբաղի հայերի համար ամենասարսափելի պատժի միջոցը: Այն իր արյունարբությամբ ու դաժանությամբ ահ ու սարսափ էր տարածել շրջակայքում: Այս պատժիչ գնդի աշխատավարձը ավառարությունն էր, թալանն ու կոտորածը:

Իբրահիմը Մելիք-Շահնազարի ու Միրզախանին հաջորդած Մելիք-Ալավերդու հետ շարունակում էր Դիզակի տիրոջ՝ Մելիք-Եսայու հետ կռիվները: Սակայն նա որևէ հաջողության չէր հասնում:

Եվ ահա Շահնազարը մի քահանայի և նշանավոր հայ մարդու խաչով և Ավետարանով ուղարկում է Մելիք-Եսայու մոտ, առաջարկելով դուրս գալ ամրոցից ու հաշտություն կնքել Իբրահիմի հետ: Եսային, որ հոգնել էր անվերջանալի կռիվներից, հավատում է ու դուրս գալիս բերդից: Ուխտադրուժ Իբրահիմի համար սա սովորա-

կան ծուղակ էր միայն: Նա ձերբակալում է հայոց քաջ հերոսին, տանում Շուշի և սպանում բանտում: Եսայուն հաջորդեց նրա եղբոր որդին՝ Մելիք-Բախտամը[37]:

Երկու տարի հետո վախճանվում են Ջրաբերդի Մելիք-Հաթամը և Գյուլիստանի տեր, անպարտելի հերոս Հովսեփը: Նրանց հաջորդում են Մելիք-Մեջլումն ու Մելիք Աբով 3-րդը:

Իբրահիմը Մելիք Մեջլումին ոչնչացնելու համար դիմեց նոր խարդավանքների: Նա Ջրաբերդի Գյուլաթաղ գյուղում Ալավերդի հարյուրապետի որդուն՝ Միսայել-բեկին խոստանում է տալ Ջրաբերդի մելիքությունը, եթե նա սպանի Մելիք Մեջլումին: Եվ ահա Միսայելը իր փեսայի՝ Հակոբ հարյուրապետի (Թյուլի Հակոբ) հետ գնում է Ղազարխ[38] կոչված գյուղը, որը Արցախի դաշտային մասում էր, Թարթառ բազարից ոչ հեռու, հյուրընկալվում Մելիք Մեջլումի տանը: Այս գյուղը մելիքի ձմեռնոցն էր: Ջրաբերդի տերը սիրով ընդունեց նրանց, քանի որ Մուսայելը իր մոտ էր ծառայում: Սակայն իր ծառաներից տեղեկանալով նրանց դիտավորության մասին, երկուսին էլ կալանավորում է, ապա սպանում, հետո ոչընչացնում նրանց ընտանիքները: Սակայն փրկվում է Մուսայելի փոքր եղբայրը՝ Ռոստոմը, որը փախչում է Շուշի՝ Իբրահիմի մոտ: Շուտով Ռոստոմը Իսրայել կաթողիկոսի հոր՝ Ապրես աղայի փեսան դարձավ, պսակվելով նրա գեղեցկուհի Վարդխաթուն դստեր հետ:

Ռուսական արքունիքում Անդրկովկասի ու Կասպիականի ափերի նկատմամբ նոր աշխուժություն էր նկատվում: Եկատերինա կայսրուհին զորավար Սուվորովին հանձնարարում է Կասպիական ծրագրի իրականացումը: Ռուս գեներալի խորհրդատուներն էին մեծահարուստ վաճառական Հովհաննես Լազարյանն ու հայոց եկեղեցու առաջնորդ Հովսեփ Արղությանը: Սուվորովը Աստրախանից կապ է հաստատում հայ մելիքների հետ: Նա ուսումնասիրում է Հայաստանի ճանապարհները, իր զեկուցագրերում նկարագրում հայոց բերդերը: Իշխան Պոտյոմկինին ուղղված զեկուցագրում ահա թե ինչ է գրում Սուվորովը Շուշի բերդի մասին.

«Շուշին մեծ, ամուր քաղաք է, քարե պարսպով, Բաքուն մեծ չէ, ունի թույլ ու հին անկանոն քարե ամրություն»[39]:

Սուվորովը հայկական հարցի հետ առնչվեց 1778 թվականին, երբ հայերին Ղրիմից պետք է գաղթեցնեին Ռուսաստանի հարավային շրջանները: Սուվորովը ռուսական արտաքին ակտիվ քաղաքա-

կանության ջերմ պաշտպաններից մեկն էր: Նա մեծ հետաքրքրություն էր հանդես բերում Հայոց հարցի նկատմամբ: *«Հունական նախագծի կապակցությամբ,-* գրում է էգովը,- *որ զբաղեցնում էր մեծ միապետուհու գործակիցների մտքերը, ենթադրվում էր վերականգնել Հայաստանի քաղաքական անկախությունը Ռուսաստանի գերագույն պրոտեկտորատի տակ: Այդ ծրագրին առանձին ջերմությամբ էին վերաբերում Իշխան Պոտյոմկինն ու Ա. Վ. Սուվորովը»*[40]:

1782 թվականին Իշխան Պոտյոմկինը Հյուսիսային Կովկասի կառավարիչ և գլխավոր հրամանատար է նշանակում իր ազգակից գեներալ Պավել Պոտյոմկինին:

1783 թվականի մարտի 5-ին Հովհաննես կաթողիկոսը ժողով է գումարում Գանձասարում, որին մասնակցում են Դիզակի, Ջրաբերդի ու Գյուլիստանի, ինչպես և Ղարադաղի հայ մելիքներն ու վեց եպիսկոպոսներ: Նրանք աղերսագիր գրեցին Իշխան Պոտյոմկինին: Վերջինս ապրիլի 6-ին հանձնարարում է գեներալ Պոտյոմկինին.

«Շուշիի Իբրահիմ խանին պետք է պաշտոնանկ անել, որովհետև Ղարաբաղն այսուհետև կկազմի անկախ, բացի Ռուսաստանից ոչ ոքի չենթարկվող մի երկիր: Ամեն ջանք գործ դրեք, որ այս նոր երկիրը կազմակերպվի ժողովրդի համար ամենաշահավետ կերպով: Այս միջոցներով հայկական ուժեղ նահանգները կհետևեն այս օրինակին»[41]:

Ըստ այս ծրագրի Արցախը պետք է դառնար ապագա հայկական պետության կորիզը: Իշխան Պոտյոմկինը գրում է թագուհուն. *«Այսպիսով Ասիայում կվերանորոգվի մի քրիստոնեական պետություն համաձայն Ձեր կայսերական մեծության խոստումներին, որոնց մասին հաղորդել եմ հայոց մելիքներին»:* Ըստ ծրագրի 1784 թվականին զորքերի մի մասը պետք է գրավի Կասպիականի ծովեզերքը, իսկ մյուս կեսը հասնելով Թիֆլիս, այստեղից կշարժվի դեպի Ղարաբաղ, ապա և Ղարադաղ:

Տեղեկանալով հայ-ռուսական հարաբերությունների մասին, Իբրահիմ խանը մի պատգամավոր ուղարկեց Դերբենտում գտնվող գեներալ Պոտյոմկինի մոտ, հայտնելով, որ պատրաստ է ընդունելու ռուսաց հպատակությունը: Ըստ երևույթին, թագուհին ևս պատրաստ էր ընդունելու այս հպատակությունը՝ հետին պլան մղելով հայոց խնդիրը: Սակայն խանը չէր շտապում: Նոր զորք հավաքելով նա սկսեց ամրացնել Շուշի բերդը: Ղարաբաղի, Խոյի, Նախիջևանի

և Բաքվի խաները գաղտնի դաշինք կնքեցին միասին ռուսաց արշավանքի դեմն առնելու համար: Շուշի են գալիս Ախլցխայի Սուլեյման փաշայի մարդիկ ու նամակներ բերում խանին: Սակայն, երբ ռուսաց բանակը սպառնալից դիրք գրավեց, այս խաները շտապեցին հպատակություն հայտնելու կայսրուհուն: Ուրմիայի Ալի-Մուրադ խանը, որ Սպահանում գրավել էր պարսից գահը, դիմեց ռուսներին, որ եթե ճանաչեն իր իշխանությունը Իրանում, ապա ինքը Ռուսաստանին կզիջի ողջ Անդրկովկասը՝ Կասպից ծովեզերքով: Այսպիսի հեռանկարը ի չիք դարձրեց հայերի կողմից սպասվող ռուսաց արշավանքը: Սակայն ռուսների փոխարեն դեպի Ղարաբաղ արշավեց Դերբենտի Ֆաթալի խանը: Իբրահիմը դիմեց վրաց թագավոր Հերակլի օգնությանը, որը չուշացրեց օգնությունը: Դերբենտի կառավարիչը Հերակլին առաջարկեց ոչնչացնել Իբրահիմի իշխանությունը, այն բաժանելով երկու մասի. հայկականը՝ Հերակլին, թաթարականը՝ իրեն: Սակայն Հերակլը չհամաձայնեց: Գեներալ Պոտյոմկինը Ֆաթալի խանից պահանջեց ետ քաշվել, քանի որ Իբրահիմը ռուսաց հպատակություն է ընդունել, ուստի և ռուսների հովանու տակ է գտնվում:

Այս իրավիճակը ասես ազատ արձակեց Իբրահիմին: Նա զգաց, որ արդեն կարող է ազատորեն գործել հայ իշխանների դեմ: Կռվել քաջ մելիքների դեմ վտանգավոր է: Նա 1787 թ. Մելիք-Մեջլումին, Մելիք-Աբովին ու Մելիք-Բախտամին՝ շուրջ 30 հոգու հրավիրեց Շուշի, իբր բարեկամաբար վերջ տալու թշնամությանը: Մելիքները, որոնք թեկուզ քաջ պատերազմող էին, սակայն ուղղամիտ էին ու դյուրահավատ, վստահեցին նենգ խանին: Իբրահիմը իսկույն նրանց կալանավորեց ու բանտ նետեց[41]: Ապա կողոպտեց Գանձասարի վանքի հարստության մի մասը, որը չէին հասցրել թաքցնել, ձերբակալեց Կաթողիկոս Հովհաննեսին ու նրա հինգ եղբայրներին, բոլորին տարավ Շուշի: Ըստ մի ավանդության, Հովհաննես Ջալալյանին մատնել էին նրա եղբայր Ալահ-Ղուլի-բեկն ու Իսրայել կաթողիկոսը, որին Իբրահիմը տեղափոխել էր Ամարասի վանքը:

Որոշ ժամանակ անց հայ քաջերի խումբը հանդուգն գործողություն է ձեռնարկում, գրավում Շուշիի բանտն ու ազատում մելիքներին և զորապետներին: «Գաղտնիք Ղարաբաղի» գրքում մանրամասն նկարագրվել է այս դիպվածը. *«Քաջերի խումբը տողեցի Շեյթան Թունիի, Կուքիի ու Ջաքիի առաջնությամբ հասնում է Շուշիի պարսպին: Կեսգիշերին Նէառադնը պարանից մեծ քար է կապում, պարսպի վրայից ներս նետում: Նույն ձևի է վարվում նաև քարվանդռանը (Գանձակի մուտք - Բ.): Պարաններով մագլցելով բերդ են մտնում բոլոր քաջերը և շրջապատում բանտը: Քեանդխուդա (տանուտեր - Բ.) խաչատուրի հրամանով, որ (խանի կողմից) հրավիրյալների հետ ներկա չէր եղել ճաշկերույթին, սկսում են բանտի գրավումը: Հսկող հերթակալներին, որոնք քնած էին, հսկում են Շահմարն ու Թոփուզը, բանտապետի դռան մոտ՝ Տոնմազը, Պրախմազն ու Սանկյարը, իսկ մնացածները շարվում են բանտի մուտքի և լուսամուտների առջև: Ոռնում է Գայլ-Օհանն ի նշան գործողության: Դնն ու Նէառդնը տեղից հանում են բանտի դռները, Ասլան Աժդահան ու Կեծակը փշրում են բանտի լուսամուտների խաչաձև երկաթները, և դղրդում է բանտը: Բանտապետը և բոլոր հերթակալ պահակները գլխատվում են Ազնավուրի, Օշափի և Կարկտի քրերով, ազատվում են մելիքները, իշխաններն ու քեանդխուդաները: Ա-վա՜ղ, թույնով վախճանված էին Հովհաննես Կաթողիկոսը, Մելիք-Բախտամը: Մյուս մելիքները մահից ազատվեցին դեղթափի միջոցով»*[43]:

Մելիք Աբովն ու մելիք Մեժլումը Թիֆլիս են շտապում: Մեժլումն ու Աբովը այս գործողության կազմակերպիչ Թյուլի Արզումանին ուղարկեցին Գանձասար՝ փախցնելու Սարգիս եպիսկոպոս Ջալալյանին: Թյուլին մի թուրք մոլլայի է բռնում և ստիպում, որ խոստովանի, թե Քրիստոսը աստված է: Երեք անգամ խոստովանելուց հետո մոլլան ազատ է արձակվում: Իբրահիմ խանը, իմանալով այս մասին, դիմում է մոլլային.

- Մի՞թե դու խոստովանեցիր...

- Այո, խոստովանեցի,- պատասխանում է մոլլան,- իսկ եթե դուք, խան, Արզումանի ձեռքն ընկնեք, կասեիք, որ ոչ միայն Քրիստոսը, այլև ինքը՝ Արզումանը, աստվածների աստված է:

Իբրահիմը, տեղեկանալով լրտեսներից, որ Արզումանը պատրաստվում է փախցնելու Սարգիս Ջալալյանին, զինյալ խումբ է ուղարկում ձերբակալելու նրան: Սակայն Սարգիսը իր եղբայրների, Դանիելբեկ եղբոր, 22-ամյա որդու՝ Բաղդասարի հետ հասնում են Գանձակ, և Ջավադ խանը սիրով ընդունեց նրանց: Սակայն Իբրահիմը ձերբակալեց Սարգսի Դանիել-բեկ ու Ջալալ-բեկ եղբայրներին:

Ջալալին Իբրահիմը իսկույն գլխատեց, իսկ Դանիել-բեկին բանտ նետեց, ծաղրական ասելով.

- Թող ռուսները գան, քեզ ազատեն....

Սակայն մի քանի օր հետո դահիճները քառատեցին նրան, ինչպես դա արել էին մոնղոլները Հասան-Ջալալյան մեծ իշխանի նկատմամբ: Դանիել-բեկի քույրը, որ Շուշիում պատանդ էր պահվում, հավաքեց եղբոր մասունքները և թաղեց հայկական գերեզմանոցում[44]:

Իբրահիմը Ջրաբերդի մելիք է կարգում Ռուստամին, որն իր նստավայր է ընտրում Ջրաբերդի Գյուլաթաղ գյուղը:

Մելիք Մեջլումն ու մելիք Աբովը Գանձակից 500 ընտանիքների հետ տեղափոխվում են Շամքոռ: Նրանք իրենց քաջերով հաճախ են ասպատակում Իբրահիմ խանի տարածքները, ոչնչացնում նրա զինվորներին: Սարգիս Ջալալյանը 1791 թ. Գանձակում կաթողիկոս է օծվում, սակայն Ղուկաս կաթողիկոսը մերժում է նրան, պատճառաբանելով, որ Աղվանից Իսրայել Կաթողիկոսը Ամարասում է, Սիմոնը՝ Երիցմանկանց վանքում:

8. ՄԵԼԻՔ ՀԱՀՆԱԶԱՐ Բ-Ի ՄԱՀԸ

Թուրք-թաթարների նպատակներից էր Ղարաբաղի մարդաբանական փոփոխությունների իրականացումը: Ինչպես հայտնի է, տարբեր վայրերից Իբրահիմը Շուշի, ինչպես և Արցախի տարբեր բնակավայրերում էր տեղավորում քուրդ քոլաններին, Փյուսյան, Կարաչարլի, Ջինլի, Դամիրչի-Հասանլի, Ղզլ-Հաջիլի, Սաֆի-քյուրդ, Քոյ-Ահմեդլի, Սահաթլի, Քենդերլի և այլ թափառական ցեղեր[45]:

Իսկ մինչ Փանահի Շուշի մտնելը այս երկրում ոչ մի թուրք ոտք չէր դրել Ղարաբաղ: Հայերին թուլացնելու համար Իբրահիմը իրականացնում էր հայ բնակչության զանգվածային տեղահանումներ, օրինակ, Ջրաբերդից շուրջ հազար ընտանիք տեղափոխում է Դիզակ:

Շուշիի խանը ծեռնարկում է մեկ այլ նենգ արարք ևս, որը թուլացնում է արցախահայությանը: Ծարի (հետագայում՝ Քյալբաջար), Քաշաթաղի (Լաչին), Կովսականի (Ղուբաթլի) գավառներից սկսած մինչև Արաքս գետը հայ բնակիչների բռնի տեղահանում է սկսում, նրանց փոխարեն այլ վայրերից բերում քոլանի կոչվող քրդերի[46]: Լեռնային Ղարաբաղը կտրվում է մայր Հայաստանի հետ անմիջական կապից: Ռազմատենչ քրդական ցեղերը Մռավի լեռներից մինչև Արաքս մի անանցանելի պատնեշ են դառնում Արցախի ու Սյունիքի միջև, որն էլ թուլացնում է այս երկրամասերի հայությանը, խոչընդոտում նրանց միանալուն: Իբրահիմը ամեն հարմար առիթ օգտագործում էր բռնի մահմեդականացնելու հայերին: Դիզակի Մելիք-Բախտամին Շուշիի բանտում սպանելուց հետո Տողի Մելիք-Ավանյաններին բռնությամբ մահմեդականացրեց: Ահա Շուշիում մահմեդական կազմը ուժեղացնելու համար Ղազախից և Շամշադինից թաթարներին բերդաքաղաք է գաղթեցնում: Սակայն նման տեղափոխությանը դեմ էր Հերակլը, որը Ղազախի թուրքերից հարկ էր ստանում: Իբրահիմը արհամարհեց նրանց հետ ուղարկելու Հերակլի պահանջը: Հերակլը հայ մելիքների հետ զորք ուղարկեց Իբրահիմի դեմ: Այս արշավանքին մասնակցում էր և ռուսական երկու գումարտակ՝ Բուռնաշովի գլխավորությամբ: Ջավադ խանը ևս պատրաստ

էր միանալու այս արշավին: Սակայն Շուշիի պաշարումը չիրականացավ: Սկսվել էր ռուս-թուրքական պատերազմը, ու Բուռնաշովը հրաման էր ստացել շտապ վերադառնալ Հյուսիսային Կովկաս:

Իբրահիմը Հերակլի հետ իր դաշնակցական կապերը վերականգնելու նոր փորձ է ձեռնարկում: Նա համաձայնվում է Ղազախի ու Շամշադինի թուրքերի հետ՝ իրենց նախկին բնակավայրերը վերադարձնել, պայմանով, որ Հերակլը ձերբակալի և իրեն ուղարկի Մելիք-Մեջլումին և Մելիք-Աբովին: Իբրահիմը հաշվել էր, որ բոլոր դեպքերում էլ շահողը ինքն էր լինելու:

Հայ մելիքները նախապես տեղեկանալով, որ Հերակլը ծրագրել է կատարել Իբրահիմի առաջարկը, փախչում են Թիֆլիսից ու վերադառնում Գանձակ: Մելիք-Մեջլումը որոշում է օգտագործել ամեն մի առիթ՝ վրեժխնդիր լինելու Հերակլից:

Եվ ահա շուտով գալիս է այդ առիթը:

1792 թվականին մեռավ Մելիք-Շահնազարը՝ Խամսայի հայկական ինքնության կործանիչը: Նրա քայքայիչ գործունեության հետևանքները Արցախում անբուժելի էին:

Նա վերջին տարիներին փորձեց որոշ չափով քավել իր մեղքերը վերականգնելով Ամարասի վանքը: Սովի ժամանակ բացեց ամբարները և ցորենը բաժանեց ժողովրդին: Շահնազարը բազմակնությամբ ևս հետևում էր մահմեդականների սովորությանը: Նա ուներ երեք կին: Թագուհուց ծնվել էր ավագ որդին՝ Զումշուդը, Սոնայից՝ Հուսեինը և Հուրիզադը, Մալայիկից՝ Ջհան-Բախշը, Ջհանգիրը և Հումայի դուստրը: Մելիք-Շահնազարը իր որդիների վրա հոգաբարձու էր կարգել Իբրահիմ խանին: Նա Հուրիզադ-խանումի ճնշմամբ մելիք ընտրեց նրա եղբորը՝ Հուսեինին: Իսկ Ջհան-Բախշը պարսից շահից մելիքական ֆիրման ստացավ: Հուսեինը հարձակվեց և կողոպտեց Ջհան-Բախշի տունը Շուշիում: Ջհան-Բախշը փախավ և ապաստանեց Շամախիում Մուստաֆա խանի մոտ, որը թշնամի էր Իբրահիմին:

Իբրահիմ խանը իր հերթին խիստ անբարոյական մարդ էր: Նրա հարեմը լի էր հայ աղջիկներով: Նա աչք էր դրել Մելիք-Ռուստամի գեղեցկուհի կնոջ՝ Վարդ-խաթունի վրա: Նա Ռուստամից պահանջեց, որ իր կնոջը պատանդ թողնի իր մոտ: Ռուստամը հասկանում էր, որ թուրք խանը իր կնոջը փաստորեն որպես սիրուհի է տանում: Զամշուդը, որի ինքնասիրությունը վիրավորված էր մելիքություն

չստանալու համար, ձգտում էր իր կողմը գրավել Իբրահիմից դժգոհ մելիքներին: Ընդհանրապես, Մելիք-Շահնազարի մահից հետո Իբրահիմը թուլացել էր: Իզուր չէ, որ Հովսեփ Արղությանը Հնդկաստան ուղարկած իր նամակներից մեկում գրում է. *«Երկրորդ անցքն Ղարաբաղա մելիքանց մերոց՝ Մեժլումին և Աբովին զառագոյն եմ գրեալ, իսկ այժմ նոքա է ի գեանջայ և միշտ աւարի առնեն զկողմանս Շուշու բերդին, արդեն խանն Շուշու նկուն է և ի յարքայեն զհաշտություն խնդրէ»*[47]:

Բ մասի հղումների ցանկ

[1] Աբրահամյան, «Մի էջ...», էջ 261:

[2] Նույն տեղում, էջ 275 կամ ГАФКЭ, ф. СРП, 1725, 25, стр. 49:

[3] Գ. Նովիցկի, է. Բուրջալով «ՍՍՀՄ պատմություն (XVIII դար), Եր., 1947թ., էջ 97:

[4] Լեո...., էջ 175:

[5] Բաֆֆի «Երկերի ժողովածու», «Խամսայի մելիքություն» Եր. 1964 թ., էջ 181:

[6] Լեո..., էջ 175:

[7] Բաֆֆի «Երկերի ժողովածու», «Խամսայի մելիքություն» Եր. 1964 թ., էջ 186:

[8] Բաֆֆին 1881 թ. Արցախում տեսել է մի գրչագիր Ավետարան՝ գրված Գայանե կույսի ձեռքով:

[9] Ս. Բարխուդարյան, «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Երևան, 1982, էջ 149:

[10] "Собрание актов", "Обозрение России...", стр. 302.

[11] Мирза Джемал, "О политическом существовании Карабахского ханства с 1747-1805, Шуши, 1901".

[12] Ե. Ջալալյան, էջ 32:

[13] Сегал, "Кавказский вестник", "Елисоветопольская губерния", Тбилиси, 1902, N 1, стр. 70.

[14] Մ. Բարխուտարյան, «Արցախ», էջ 29:

[15] Бутков, т. 1, стр. 237-238, ինչպես նաև Լեո, էջ 275:

[16] Բաֆֆի, էջ 198:

[17] Այս բերդը հայոց արքա Տիգրան Մեծի հիմնած չորս Տիրգանակերտներից մեկն է, որը պետք է պաշտպաներ Մեծ Հայքի հյուսիսային սահմանները: Թուրքերը այն անվանում էին Թառնակյուրտ, իսկ արցախցիք՝ Տկռակերտ:

[18] Ղաջար-Ջավահիրյան թուրքերի ցեղ, որոնցից 200 հազար հոգու Չինգիզ խանի թոռ Գալաղ խանը տեղափոխեց Պարսկաստան: Թամերլանը իր հերթին 50 հազար ղաջարների բերում է Արարատյան դաշտ, բնակեցնում Երևանի շրջակայքում, Գանձակում և Դաշտային Ղարաբաղում: Սարթաղը, որը Արղու խանի խնամակալն էր, Խորասանի և Թաբասարանի կառավարիչը, իր որդուն կոչեց Ղաջար, որի անունն էլ անցավ ողջ ցեղին: Դաղստանցիք Կուրից հարավ ապրող թուրքերին արհամարհանքով «ղաջար» են անվանում:

[19] Մ. Դ. Դիվանշիր "Карабах" газета "Кавказ", Тб., N 61-62, բերդի հիմնադրումը համարում է Հիջրայի 1770 թ. (1758 թ.):

[20] Հակոբ Պողոսյան «Պատմություն գաւառին Արցախու», Մաշտոցի Մատենադարան, ձեռագիր 2734, էջ 23:

[21] Մ. Չամչյան, «Հայոց պատմություն», հատոր Գ, Երևան, 1984, էջ 848:

[22] 19. М. Д. Дживаншир "История Карабаха", Баку, 1959, стр. 72.

[23] Мирза-Адигезалбек "Карабах-наме", Баку, 1950.

[24] «Արարատ», 1914, օգոստոս, էջ 740:

[25] Վրացական ժամանակագրություն 1207-1318 թթ., Եր. 1971, էջ 112:

[26] В. Арутюнян "Город Ани", Ер. 1964 г., цтр. 49, а также Э. Авалов "Архитектура города Шуши" Баку, 1977, стр. 36.

[27] "Присоединение Грузии с Россией", СПБ, 1901, стр. 89.

[28] Լեո..., էջ 272-273:

[29] Նույն տեղում, էջ 204:

[30] Լեո..., էջ 272-273:

[31] Բաֆֆի , էջ 217:

[32] Մատենաշար «Ազդակ», «Յովսեփ էմինի կեանքն ու արկածները», Պեյրութ, 1958:

[33] «Դիվան հայոց պատմության» գիրք, Թիֆլիս, 1908, էջ 576:

[34] Ավարների մոտ մինչև այժմ տարածված է Բախտակի ողբերգը, որի մեջ ասվում է. «Եթե կենդանի լինեին իմ հայրը՝ Մուհամադ-նուցուլն ու նրա եղբայր Մուհամադ Միրզան, ապա իր եղբայր Ումմա խանը ինձ Շուշի չէր ուղարկի»: Երգը սկսվում է այսպիսի տողերով.

Վարսերս հարդարում էի սանրով ոսկի,
Եվ հանկարծ հայտնեցին, որ լուր է եկել Շուշիից...

[35] Геничутлинский, "Историко-географические и исторические очерки", Махачкала, 1992, стр. 46, перевод с арабского Т. Айтберова.

[36] Բաֆֆի , էջ 216:

[37] Հետագայում 1828 թ. Իրանի Մարաղա քաղաքից այստեղ գաղթած հայերը այն վերանվանեցին Մարաղա:

[38] Архив А. Н. СССР, ф. 99 оп 2, стр. 13, ինչպես նաև Մ. Ներսիսյան «Ռուս հայկական հարաբերությունների պատմությունից», Երևան, 1956 թ., էջ 43, 92:

[39] "Кавказский вестник", Тифлис, 1901, N 10, приложение.

[40] "История войн и владычества русских на Кавказе" II т., стр. 29.

[41] "Собрание актов относящихся к обозрению истории армянского народа", М. 1833 г., тип Лазаревых, стр. 60.

[42] «Գաղտնիք Ղարաբաղի», Թիֆլիս, 1907, էջ 82, 83:

[43] Բաղդասար Մետրոպոլիտ, 1851, Շիրմաքար է դնում հոր գերեզմանին:

[44] Ахмедбек Дживаншир, "О политической ..", стр. 11

[45] Քրդերի կողմից այս տարածքները զավթելու պրոցեսը տևել էր մինչև 1990 թվականը: 1992 թ. Քյալբաջար-Քարվաճառը գրավելու ժամանակ այստեղ հայ բնակչություն կար:

[46] Լեո, էջ 370:

ՄԱՍ Գ (1793-1813 թ թ.)

1. ՇՈՒՇԻԻ 32-ՕՐՅԱ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Պարսկաստանի տիրակալ Զենդ Քերիմ խանը իր մոտ որպես պատանդ էր պահում մազանդարանցի դաջար Աղա-Մուհամեդ խանին, որին Նադիր շահը ներքինի էր դարձրել: 1779 թ. Քերիմ-խանի մահից հետո դաջար խանը փախավ Շիրազից իր հայրենի Մազանդարանը, ապստամբություն բարձրացրեց և իրեն Պարսից շահ հայտարարեց՝ աթոռանիստ ընտրելով Թեհրանը: 1795 թ. նա իրեն ենթարկեց Ատրպատականը: Իսկ Անդրկովկասի խաները, որոնք ռուսական արշավանքից երկյուղելով հպատակվել էին Ռուսաստանի կայսրուհուն, արհամարհեցին այս ժամանակավրեպ բռնակալին: Աղա-Մուհամեդ խանը իր բոլոր նախորդներին գերազանցում էր դաժանությամբ և անգթությամբ: Նա մի հրեշավոր մարդ էր, որի արտաքինն իսկ սահմռկեցուցիչ էր. ճղրտուն ձայն, կարճ հասակ, անգույն, թափանցիկ աչքեր, դեղին, անմազ դեմք... Անգթությամբ նա մրցակից չուներ: Հանել էր իր եղբոր՝ Մուրթուզ-Ղուլի խանի աչքերը, սպանել ավագ եղբորը՝ Ջաֆար-Ղուլի խանին: Գրավելով իր դեմ ապստամբած Քիրման քաղաքը, տեղի 20 հազար կանանց բաժանեց իր զինվորներին՝ հրամայելով կուրացնել տղամարդկանց: Նրան ընծա բերեցին 7 հազար զույգ աչք... Այսպես Պարսկաստանում հիմնվեց դաջարների թագավորությունը:

Ատրպատականից շարժվելով դեպի Անդկովկաս, զորքի մի մասը իր եղբոր՝ Ալի Ղուլի խանի գլխավորությամբ ուղարկեց Երևանի վրա: Երևանի տիրակալը իսկույն անձնատուր եղավ: Զորքի մյուս մասը շարժվեց Մուխանքի դաշտով, հպատակեցնելով Թալիշը, Շամախին և Նուխին (Շաքի): Զորքի երրորդ մասով 1795 թ. օգոստոսին շահը շարժվեց Շուշիի վրա: Շահին միացան Զրաբերդի Մելիք-Մեջլումն ու Գանձակի Ջավադ խանը: Հերակլ թագավորը իր Ալեքսանդր որդու հետ զորք ուղարկեց օգնելու Իբրահիմին: Մելիք

Զումշուդը ամրանալով Շուշիում, գործում էր Իբրահիմի կողմից: Զենք էր վերցրել ողջ Շուշիի բնակչությունը, ինչպես և շրջակա հայկական բնակավայրերից Շուշիում ապաստանած հայությունը: Իբրահիմը փակվեց բերդում: Խանը, հաշտվելով պարտության մտքի հետ, իր հարստությունը թաքցնելու տեղ էր փնտրում: Հայ կանայք հուսահատված բռնակալին ցույց են տալիս Մելիք-Շահնազարի ապարանքի մեջ բացվող հին քարանձավը, որը 40 աստիճան իջնելով տանում էր Քարին Տակ գյուղը: Իբրահիմը այստեղ թաքցնում է իր գանձերը, որ տարիներ շարունակ կուտակել էր ավարառություններից: Պարսիկները քնդանոթները շարել էին Խաչին տափում ու որոտալից համազարկերով արկերը թափում էին բերդաքաղաքի վրա: Սակայն քաղաքին դրանք ոչ մի վնաս չէին պատճառում: Արկերից մեկը մի բնակարանի պատուհանից ներս է ընկնում: Այդ պահին մայրը լվանում էր որդու գլուխը: Արկը պայթում է, ջարդուփշուր անում տղայի գլուխը և հատում մոր ձեռքը[1]:

Շահը մտադրվել էր թամբերով լցնել Հունոտի անդնդախոր կիրճը և Խաչին տափի ու Չիարշավարանի (Զդրդոնզ)* միջև կամուրջ ստեղծելով գրավել Շուշին[2]:

Կիրճի հակադիր կողմում ապառաժների մեջ կար մի քարանձավ, որը Շուշիից դիտողի հայացքից փակում էր պարիսպը: Շուշիի մահմեդականները այս պարսպի շինարարությունը սխալմամբ վերագրում էին Իբրահիմին: Այս քարանձավը Ավան զորապետի թաքստոցներից էր: Այստեղ նա ներքինի շահը փայլեց իր դաժանությամբ: Հայկական ջոկատները հաճախ դուրս էին գալիս բերդից ու անակնկալ հարձակումներով կոտորում պարսից զորքը: Մի անգամ պարսիկները նկատում են բերդի մուտքից դուրս եկող հարյուր հոգանոց ջոկատն ու գերում: «Շահը հրամայում է կապկը-պել հայոց քաջերին, իրար կողքի պառկեցնել: Նրանց վրայով անվերջորեն պտտվում էին ձիերը, որոնց սմբակների վրա դեպի դուրս մեխեր էին ցցված: Այս պատժանը Պարսկաստանում եգիտ-խարման էր կոչվում: Ձիերը այնքան են քշում, որ քաջերի մարմինները մսակտորների են վերածվում: Ղաջար շահը դիտելով այս տեսարանը, մեծ հաճույք էր ստանում»: Պարսկական հրետանին, որ ղեկավարում էին ֆրանսիացի հրետանավորները, քարեր ու արկեր էր նետում Շուշիի վրա:

Մնացել է հետևյալ ավանդությունը:

Շահը դիմում է Իբրահիմին.

- Քարերը, ինչպես կարկուտ, թափվում են երկնքից: Խենթ, դրանից հո շուշան չի փրկվի:

- Այո, ստեղծողը ինձ շուշայով է շրջապատել,- պատասխանում է գոռոզ խանը,- *բայց այդ շուշան նա քար է դարձրել*[3]:

Ասկերանի ամրոցի վերակացու էր Հասան բեկը: Նա մի հայ ծերունի է ուղարկում պարսիկների զորքը հետախուզելու: Լրտեսը գիշերը մնում է նրանց մեջ, ծեգին ծպտված հեռանում, ու Ասկերան վերադառնալով բեկին պատմում իր տեսածի մասին: Բեկը լուր է ուղարկում Շուշի՝ խանին, որ պարսից զորքը գիշերը խոր քուն է մտնում ու պահակ չի կարգում, ուստի և առաջարկում է երկու հազարանոց խումբ ուղարկել Հունոտի կիրճը՝ պարսիկներին ոչնչացնելու համար: Խանը այս գործողության համար ընտրում է երկու հազար հայերի, քանի որ թուրքերի մեջ շատ էին պարսից լրտեսները, բացի այդ զորքը պետք է իջներ կիրճը տանող դժվարանց արահետով, որը գիտեին միայն բնիկները:Հայոց գունդը երկու կողմից հանկարծակի հարձակվում է Հունոտի կիրճում խարույկների շուրջ խմբված պարսից զինվորների վրա, խուճապի մատնում ու կոտորում շատերին: «*Պարսիկները զարհուրեցին այս կոտորածից*» - գրում է հայ պատմիչ Հակոբ Պողոնյանը[4]:

Աղա-Մուհամեդ խանը իր եղբոր հետ նաև ծրագրել էր գրավել Թիֆլիսն (Դարուս-սուրար՝ Խրախճալի քաղաք) ու պատժել Հերակլին: Շահը տեսնելով, որ ձգձգվում է բերդի գրավումը, որոշում է այն վերսկսել հաջորդ տարվա գարնանը, պաշարման 33-րդ օրը հանում է զորքը և ուղևորվում դեպի Թիֆլիս: Նրան այս արշավանքում նա միանում է Մելիք-Մեջլումը, որը ոխ ուներ Հերակլի նկատմամբ և ուզում էր լուծել իր վրեժը: Սակայն ղաջար շահը շուշեցիներից վրեժ լուծելու նպատակով դիմում է մի նոր խորամանկության: Նա զորքի մի մասը թաքցնում է Դևթալապ (Հունոտ) կոչվող կիրճում, ինչպես և Ավանի քարանձավում և սպասում բերդի դռների բացվելուն: Առավոտյան շուշեցիները տեսան, որ պարսից զորքի սպիտակ վրանները չքացել էին Խաչին տափի տարածքից, տեղում թողնելով մնացող խարույկները: Ցնծություն էր Շուշիում: Քրիստոնյա թե մահմեդական՝ գրկախառնվում էին, շնորհավորում, աչքալուսանք տալիս իրար:

Իբրահիմը համոզվելու համար, որ իրոք պարսից զորքը հեռացել է, քանի որ նա արդեն մտածում էր հանձնվելու մասին, բայց ոչ մի ելք չէր գտնում փրկելու իր կյանքը, զինյալ ջոկատ ուղարկեց մինչև Երասխ գետը: Բացի այդ, խուլ պաշարման հետևանքով բերդում սով էր սկսվել: Անասունների, ձիերի համար կեր չկար: Ժողովուրդը չէր հասցրել հնձել ու հավաքել մարգերի խոտը: Քաղաքի հայ բնակչությունը խանից թույլտվություն խնդրեց դուրս գալու բերդից: Զինյալ ջոկատը ետ եկավ Երասխից ու հայտնեց, որ պարսիկների հետքն անգամ չի երևում: Բացեցին դարպասներն ու հայերը շտապեցին դեպի դաշտերն ու ձորերը: Այնժամ պարսից զինվորները դուրս սողոսկեցին թաքստոցներից ու սկսեցին անխնա կոտորել ժողովրդին: *«Եվ զօրքն պարսից ի նման գազանաց արիւնարբուաց, սրնթաց արձակիցան ի վիրայ նյուս երկի սայրի սրով և խողխողեցին զբազումս ի նոցանե՛ի մեծ ձորն Ղայպալու կոչելուց: Ի սպանելացն բազումք հայ էին, որոց զգլուխս հատեալ տանէին շահին ընծայ»*[5]: Փրկվածները եկան դեպի բերդի դարպասները, աղաղակելով աղաչում էին բացել դռները, բայց Իբրահիմ խանը պատասխանեց, որ արժանի են մահվան: Թե՛ ներսից և թե՛ դրսից մի համատարած ողբ էր տարածվել: Հայրը որդուն էր ողբում, որդին՝ հորը: Շուշեցի Հակոբ գրիչը պատմում է երկու հայ երիտասարդների մասին, որոնք տեսնելով փակ դռները, հետ են փախչում, թաքնվում ձորում: Մի տեղ նրանք հանդիպում են թուրք մոլլային՝ իր թիկնապահներով:

- Ահա մեր իսկական թշնամիները,- ցույց տալով հայ երիտասարդներին, - գոչում է մոլլան,- *սպանեցեք մեր օրենքի թշնամիներին:*

Հայ երիտասարդներից Հովհաննեսը հրացանով կրակում է ու երիվարից ցած գլորում մոլլային: Նրա թիկնապահները ահից փախչում են լեռն ի վեր, ապա հեռվից սկսում կրակել հայերի հետևից: Նրանք ապառաժներով դեպի վեր էին մագլցում: Պարսիկ զինվորների մի մեծ խումբ սկսում է հետապնդել հայ երիտասարդներին: Մի պահ Հովհաննեսը սայթաքում է ու ցած գլորվում: Ընկերը՝ Մխիթարը, հետ է նայում ու տեսնում ընկերոջը մի ծառից կախված: Փորձում է օգնել Հովհաննեսին, սակայն վերջինս դիմում է ընկերոջը.

- Դու փախիր, եղբայր, գուցե փրկես կյանքդ, իսկ ես վիրավոր եմ...

Մխիթարը տեսնելով, որ գալիս են պարսիկները, ընկերոջը թողնելով, արագ վեր է մագլցում: Բարձրից նա տեսնում է, թե ինչպես պարսից զինվորները գայլի ոհմակի պես շրջապատեցին քաջարի, բայց և անօգնական Հովհաննեսին, երկսայրի սրերով խոցելով նրա մարմինը, կտրեցին գլուխը՝ ընծա տանելու ներքինի շահին: Մխիթարը ողբալով սիրելի ընկերոջ կորուստը, վեր է բարձրանում: Երևանյան մուտքի մոտ պարիսպը հնկում էին հայ կամավորները, որոնք պարանով բարձրացնում են Մխիթարին: Քաղաքում բազմություն էր հավաքվել: Մարդիկ փորձում էին լուր առնել քաղաքից դուրս գնացած ու պարսից խորամանկության զոհ դարձած հարազատների մասին: Երբ Մխիթարը պատմում է տեղի ունեցած ողբերգության մասին, մի գեղեցիկ օրիորդ դիմում է նրան.

- Լո՞ւր ունես իմ փեսացուից, դե ասա, ինչպիսի՞ն էր նա:

- Բարձրահասակ, թիկնեղ, գեղեցկադեմ ու կորովի երիտասարդ էր նա, անունը Հովհաննես,- պատասխանեց Մխիթարը,- *նա ասել էր, որ Շուշի հասնելուն պես կպսակվի, քանի որ հարսնացուն իրեն է սպասում...*- ու Մխիթարը պատմեց դեպքի մասին: Նույն պահին օրիորդը տապալվեց գետնին և ավանդեց հոգին:

2. ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Ղոլա-Մուհամեդ խանի զորքը սեպտեմբերի 13-ին մտնում է Թիֆլիս, ութ օր թալանում այն: 70-ամյա Հերակլը անկարող էր պաշտպանել քաղաքը: Նա նամակով դիմում է ռուսաց կայսրուհուն: Պարսիկները իրենց հետ տարան 12 հազար գերիների: Թիֆլիսահայերը այս ողբերգության համար մեղադրում էին Ջրաբերդի Մելիք-Մեջլումին, որը Հերակլին պատժելու համար մասնակցել էր պարսկական այս արշավանքին: Թիֆլիսի կանայք երգում էին.

Մելիք-Մեջլումը շուն դառնա,
Ջավադ խանը՝ պստիկ կումի

Մելիք-Մեջլումը ազգեմեն,

Թող չմնա մեկը Շուշի...[6] Թիֆլիսի հայկական սուրբ Գևորգ եկեղեցում սպանվում է Հարություն վարդապետը՝ հայ մեծանուն բանաստեղծ և գուսան Սայաթ-Նովան:

Աղա-Մուհամեդ խանը, գնահատելով Մելիք-Մեջլումի ծառայությունները, նրան շատ արտոնություններ տվեց: Մելիքը իր հերթին, իր մեղքերի մի մասը քավելու համար, ազատեց գերիներից շատերին, ինչպես և հետ ուղարկեց եկեղեցիներից թալանած իրերը: Մելիք-Մեջլումը խնդրեց շահին շարունակելու Շուշիի պաշարումը: Սակայն շահը շտապեց Պարսկաստան՝ ճնշելու Ղանդահարում և Հերաթում Քերիմ խանի եղբայր Լիֆտալի խան Զենդի գլխավորությամբ բռնկված խռովությունները: Մելիք-Մեջլումն ու Մելիք-Աբովը ամրանում են Գանձակի բերդում: Հերակլը շրջվեց դեպի Գանձակ: Վրացիները թալանում են Հյուսիսային Արցախի Գարդման, Փառիսոսո, Քուստի և Կողթ գավառները, գերեվարում շատերին: Ավերվում է Բանանց գյուղը: Գանձակի բերդի ութ աշտարակներից չորսը պաշտպանում էր արցախի մելիքների զորքը: Բերդի պաշարումը տևեց չորս ամիս: Հերակլը պահանջեց, որ Զավադ խանը իրեն հանձնի Մելիք-Մեջլումին, իսկ ինքը հեռանա Գանձակից: Խանը մերժեց: Կռիվը ավելի սաստկացավ: Ծանր վիրավորվեց և մահացավ Մելիք-Մեջլումը, որին թաղեցին Գանձակի եկեղեցու խորանում: Եկեղեցու գավթում թաղեցին հայոց քաջերի մարմինները: Ի վերջո Հերակլը, Իբրահիմը և Ումմա-խանը հաշտվեցին Զավադ խանի հետ: Գանձակի կառավարիչը ստիպված պատանդ տվեց իր որդուն ու դստերը:

1796 թվականին դեպի Կասպիականի ծովեզերքն է շարժվում ռուսական զորքը՝ Կոմս Վալերիան Զուբովի գլխավորությամբ, նպատակ ունենալով գրավել Անդրկովկասը: Կոմսին ուղեկցում էր Ռուսաստանի հայոց առաջնորդ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը: Վալերիան Զուբովը թուրքերին և պարսիկներին հայտնի էր Կըզըլ-այաղի (ոսկե-ոտք) անունով, քանի որ պատերազմներում նրա կորցրած մի ոտքի փայտե պրոթեզը պատած էր ոսկե թիթեղով:

Նա հեշտությամբ գրավում է Դերբենտը: Արղությանը համոզում է Մուստաֆա խանին ընդունելու ռուսաց հպատակությունը: Իբրահիմ խանը, զգալով վերահաս վտանգը, նվերներով ու հպատակության գրով իր որդի Աբդուլ-Ֆեթհ բեկին ուղակեց ռուս զորավարի

մոտ: Կոմս Զուբովը իր հերթին մի թանկագին գավազան ուղարկեց Շուշի բերդի մահմեդական հոգևորականների գլխավոր մոլլա Փանահին: Զուբովի բանակը պետք է ձմեռն անցկացներ Սալյանում, գարնանը շարունակեր արշավանքը դեպի Պարսկաստան: Մի զորաբանակ գեներալ Ռիմսկի-Կորսակովի հրամանատարությամբ ու Հովսեփ Արղությանի ուղեկցությամբ շարժվում է դեպի Գանձակ: Կրկին հայոց արքեպիսկոպոսի միջնորդությամբ Զավադ խանը ռուսաց հպատակություն է ընդունում և ներս թողնում ռուսաց զորքերին: Այստեղից ռուսական բանակը շարժվում է դեպի Թիֆլիս: Ռուսական քարոզչությունը հայտարարում էր, որ զորքերը նպատակ ունեն միայն պատժելու Աղա-Մուհամեդ խանին, սակայն գլխավոր նպատակը դեպի Հնդկական օվկիանոսը ճանապարհ հարթող նոր տարածքներ զավթելն էր: Իսկ հայերին ու վրացիներին պարսից ու թուրքաց ծանր լուծը թոթափելու խնդրում օգնությունը այդ ծրագրի մի հատվածն էր: Եկատերինան ծրագրել էր Արարատյան նահանգը Վրաստանի հետ միացնելով ուժեղ պետություն ստեղծել: Սակայն նոյեմբերի 6-ին մահացավ Ռուսաստանի կայսրուհին՝ Եկատերինա 2-րդը: Պավել 1-ը, որը նստեց գահին, Զուբովին շտապ հետ կանչեց: Այսպես Անդրկովկասում ասուպի պես հայտնվում ու անհետանում են ռուսները:

Հայերն ու վրացիները կրկին հայտնվեցին անօգնական վիճակում: Հաջորդ տարի գարնան վերջերին, մինչ հունձը Աղա-Մուհամեդ խանը 100 հազարանոց զորքով մոտեցավ Արաքսին: Իբրահիմի մարդիկ նախապես ավերել էին Խուտաֆերինի կամուրջը: Չորս օր տևեց, մինչև պարսիկները փայտե կամուրջ կառուցեցին, որի վրայով անցավ զորքը: Պարսիկները ավերելով ամեն ինչ, շարժվեցին դեպի Շուշիի բերդը: Պարսից զորքում լուր տարածվեց, թե իբր Իբրահիմը մեծ զորքով եկել, թաքնվել է Սևանա լճի լեռների մեջ և պատրաստվում է թիկունքից հարվածել իրենց: Սակայն Իբրահիմի հոգսը իր կյանքն ու ընտանիքը փրկելն էր: Նա առավ մերձավոր բեկերին՝ շուրջ 50 ընտանիք ու փախավ դեպի կնոջ հայրենիքը՝ Զար և Թալ: Ճանապարհին լեզգիները շրջապատեցին այս խումբն ու որոշեցին ձերբակալել Իբրահիմին ու վաճառել պարսից շահին: Սակայն Իբրահիմի կինը՝ Բախտակը (Բիքու աղա) ամոթանք տվեց, ապա խնդրեց լեզգիներին և ազատեց ամուսնուն:

Արցախի գյուղերում տիրում էր սովն ու դաժան ժանտախտը: Հայությունը սկսեց գաղթը: Մելիք Աբովը իր ժողովրդով գնաց Վրաստանի կողմերը: Մելիք-Զումշուդը ճանապարհվեց դեպի Թիֆլիս, սակայն նա շուտով հանդիպեց պարսից առաջապահ զորքին, ընդհարվեց ու վիրավորվեց գլխից: 20 հազար թուման փրկագնով նա ազատվեց: Պարսից զորքը շարժվում էր դաշտային Ղարաբաղով, ոտնատակ տալով արտերը, ավերելով գյուղերը: Շահը ավերեց Աղդամ գյուղը, որը Իբրահիմի կալվածքն էր[7]: Բերդաքաղաքի բնակչությունը որոշեց հանդիսավոր ընդունելություն ցույց տալ պարսից զորքին, որը կարող էր մեղմացնել ներքինի ու անողոք շահի զայրույթը: Հայոց հոգևորականությունը Շոշ գյուղից ընդառաջ եկավ զորքին և դիմավորեց խաչով, սրբապատկերներով: Բռնակալին դիմավորելու էին եկել նաև քաղաքի ազնվականությունը, մահմեդականները: Նրանք դիմեցին շահին.

Եկել ենք ու բերել սարսափ հրեշը,
Քշել ենք այնպես, որ աղվեսի հետքն է կորել խորամանկ...

Ըստ երևույթին, նրանք ակնարկում էին ժողովրդի մեջ «աղվես» մականուն ունեցող Իբրահիմին: Երգն ու ողջ այս հանդեսը շատ դուր եկավ ներքինի շահին: Նա իջավ ձիուց ու հետևեց թափորին: Շահը հանդիսավորությամբ բերդաքաղաք մտավ Գանձակի դռներից: Բոլորը գալիս էին նրան հպատակություն հայտնելու: Մեկին նա թանկարժեք մուշտակ էր նվիրում, մյուսին՝ գլխատում: Պարսիկները նախ թալանում են մելիքի ունեցվածքը, ապա այստեղ տեղավորում արքունիքը: Բռնակալը կանչում է իր զորավարներից Սադրկ խանին ու պատվիրում իր մոտ բերել Իբրահիմի եղբորորդուն՝ Մամեդ բեկին, որը իր նախորդ արշավանքի ժամանակ կռվել էր պարսից զորքի դեմ:

- Հայտնիր այդ Մամեդի քույրերին, որ եթե մինչև երեկո չգա իրենց եղբայրը, ապա բոլոր ծերբակալված կանանց հետ, որոնց ամուսինները թաքնվում են ինձանից, կհանձնեմ իմ զինվորականների քմահաճույքին:

Երեկոյան ընդունելության ժամին բոլոր այցելուները ծնկի եկած համբուրում էին հզոր տիրակալի ոտքերը: Տեսնելով Մամեդին, բռնակալն ասում է.

- Այո, սա Մամեդն է,- ապա դիմում է Միրզա-Շաֆի վեզիրին, որը շահի դահճապետն էր,- *ճիշտ որ, նա գեղեցիկ աչքեր ունի...*

Դա նշանակում է, որը շահը որոշել է կուրացնել նրան: Պատժի իրագործումը թողնվեց հաջորդ օրվան:

Պարսից զորքի մի մասը, որ բերդաքաղաք էր մտել, սկսեց թալանել բնակչությանը, հափշտակեց ինչ որ աչքը կտրեր: Հակառակողին առանց դատաստանի սպանում էին: Սակայն սա չէր կարող կերակրել սովյալ բանակը: Դժգոհ զինվորականությունը հավաքվում է խանի պալատի առջև, որտեղ իջևանել էր շահը, ու «Յալլա՜հ, Յալլա՜հ»գոչելով իր դժգոհությունը հայտնում: Շահը կասկածելով, թե իր զորահրամանատարներն են կազմակերպել այս դժգոհությունը, որոշեց շատերին պատժի ենթարկել: Իրականում թշնամություն կար շահի պալատականների, որոնք հիմնականում պարսիկներ են, ու զինվորական թուրք հրամանատարների միջև: Սրանք էլ փորձում են դաժան շահին օգտագործելով մեկը մյուսի դեմ գրգռել: Շահը երկու կողմերին էլ լսում էր, պատժում էր մեկ սրան, մեկ նրան, պաշտոններն առնում և անարժան մարդկանց տալիս: Շահը ձգտում էր, որ այս երկու կուսակցությունները իրար հետ երբեք համաձայնության չգան, ու նորանոր խարդավանքներով լարումներ էր ստեղծում: Նա վախենում էր, որ այս երկուսը՝ ֆարսերն ու թուրքերը, իրար հետ համաձայնության գալով կլուծեն իր կորստյան հարցը, ու ինքը փրկության եզր չի ունենա:

Շուշիի այս անցքերը հետաքրքիր է նկարագրել ճանապարհորդ Գալուստ Շիրմազանյանցը: 1842 թվականի օգոստոսին Մաղարթու (սբ. Ստեփանոս) նախավկայի վանքի մոտ լեռան վրա քարայրում հանդիպում է 80-ամյա մի ճգնավորի, որը հենց Շուշիի այս իրադարձությունների ականատեսն էր ու մասնակիցը: Նրա պապը՝ Գևորգը, Թիֆլիսի հայ ու վրացի իշխանների հանձնարարությամբ նամակ է տանում Նադիր շահին, որով խնդրում էին գալ և թուրքերի ձեռքից ազատել երկիրը: Գևորգը Նադիրի բանակում աչքի է ընկնում իր ծառայությամբ ու անձնվիրությամբ, մահմեդականություն ընդունելուց հետո խանի տիտղոս ստանում: Նրա որդին՝ Ալլավերդին (Աստվածատուր) ևս մահմեդական էր, չնայած տանը Աստվածաշունչ էր ընթերցում, աղոթում հայերեն: Եվ ահա նրա որդին՝ Յաղուբը (Հակոբ) հոր մահից հետո, ի վերջո ծառայության է մտնում Ներքինի շահի մոտ, կրկին հասնում խանական տիտղոսի, դառնում

թիկնապահ հեծելազորի հրամանատար: Հետագայում նա իր մեղքերը քավելու համար մտնում է քարանձավը և 40 տարի մենակյաց կյանք վարում: Նա հայ ճանապարհորդ և գրող Գալուստ Շիրմազանյանցին պատմում է այս իրադարձությունների մասին[8]:

Յաղուբը հարյուր հեծյալներով ուղեկցում էր շահին: Երեկոյան, երբ բերդ էին վերադառնում, բերդի ներսից կանանց և երեխաների ճիչ ու աղաղակ բարձրացավ: Հենց որ շահը հայտնվեց մուտքում, հարյուրավոր կանայք ու երեխաներ նույն ճիչերով ընկան նրա ձիու տակ, աղաղակելով՝

- *Թագավորը ողջ լինի՝ ողորմություն արա մեզ:*

Այս աղաղակից հանկարծակիի գալով, շահի ձին խրտնեց: Շահի երեսը թեկուզ բնական գույն չուներ, ավելի սփրթնեց: Յաղուբը, որ գալիս էր շահի հետևից, թռավ և բռնեց շահի ձիու սանձը: Մուհամեդ խանը հրամայեց Յաղուբին իմանալ կանանց և երեխաների խնդիրքը: Չհասցնելով տեղեկանալ կանանց ողբի պատճառի մասին, շահը զայրացավ սպասավորների և ավագանու վրա, որը թույլ էր տվել ամբոխին հավաքվել և այս ձևով դիմավորել իրեն: Նա հայհոյելով ասաց.

- *Գիտեմ, գիտեմ, էսպիսի միջոցներով, հնարքներով ուզում եք ինձ երկյուղի մեջ պահել: Երդվում եմ սուրբ Ղուրանով և Մարգարեի գլխով, որ մի քանի մարդկանց գլուխները վաղը մինչև արեգակի բարձրանալը դիզվելու են վրանիս առաջը:*

Աղերսավորները, տեսնելով շահի զայրույթը, հետևակ սպասավորներից ծեծվելով, հեռու փախան:

Յաղուբը կանացից ոչինչ չկարողացավ իմանալ, որովհետև բոլորն էլ աղմկում էին: Դիմեց մի կողմ քաշված սպիտակամորուս մարդկանց, որոնք պատմեցին այս իրադարձության պատճառը: Երբ շահը մեծ վրանի առջև ձիուց ցած էր իջնում, Յակոբը հասավ ու պատմեց, որ ժողովրդի գանգատի պատճառը զորքի անիրավությունն է, որ զինվորները մտնում են տները, կողոպտում, բռնությամբ տանում ամեն ինչ, չարչարում կանանց, որպեսզի դուրս հանեն թաքցրած իրերը, մթերքը: Շահը լսելով այս, հոնքերը կիտեց ու դառնորեն ասաց.

- *Գնա ասա նրանց, որ վաղը ես վերահասու կլինեմ և կպատժեմ հանցավոր զինվորներին ու նրանց հրամանատարներին:*

Իսկ երեկոյան, երբ առանց զեկույցի իր մոտ է մտնում զորապետներից Սադրդ խանը, շահը կատաղում է ու կտրել տալիս իր անկողնապետի՝ Սաֆար Ալիի ականջները, *«որոնք լավ չեն լսում»: Շահն ասում է, որ հաջորդ օրը այնքան գլուխներ կկտրի, որոնց կույտով մի հսկա աշտարակ կկանգնեցնի Շուշիում, որը ավելի բարձր կլինի, քան Շամխորի Մզկիթի մինարեթը*[9]: Շուշիում գտնվելու 7-րդ օրը Պարսկաստանի դաջար բռնակալը իր մոտ է կանչում Սաֆար Ալի բեկին ու Աբաս բեկին ու սպառնում, որ *«վաղ առավոտյան, երբ երկնակամարի ամենաահեղը՝ Արևը, արևելքում բարձրացնի իր մարմնից անջատված գլուխը, և երկնակամարի էմալե փառը վարդի պես դառնա, ես կհրամայեմ, որ ձեր գլուխները անջատեն ձեր զզվելի մարմիններից ու ձեր արյունով ներկեն Ղարաբաղի ծաղկանոցները»*[10]: Բոլորն էլ գիտեն, որ շահը երբեք չի դրժում իր խոսքը: Ոչ մի միջնորդություն, խնդրանք չփոխեց որոշումը:

Պալատականները որոշեցին դավադրության դիմել: Կեսգիշերին Սաֆար-Ալին ու Աբասը, զինված դաշյուններով, հարեմի մուտքից մտնում են շահի ննջասենյակը ու խամրած լույսի տակ նետվում դեպի քնած շահը:

- *Ի՞նչ եք անում, չարագործներ,*- արթնանալով դիմեց դաջար բռնակալը,- *դուք ավերակ եք դարձնում Իրանը...*

Դավադիրները դաշյունահարում են, ապա կտրում շահի գլուխը: Շտապ ձեռքից հանելով ադամանդե քարերով զարդարված Կյուխ-Նուր (լուսո լեռ) և Դերյանուր (լույսերի ծով) ճարմանդները ու մարգարտաշար հմայիլը, արնաշաղախ շտապեցին իրենց համախոհի՝ Սադրդ խանի մոտ: Դա տեղի ունեցավ ուրբաթ, լույս շաբաթ գիշերը, պարսից 1211 Հիջրեթի, 21-ին Զիլհաջջայ լուսնի (հունիսի 4-ին, 1796 թ.): Համոզվելով, որ շահն իրոք սպանված է, Շահինի կառավարիչ Սադրդ խանը հայտարարելով, թե իբր շահը իրեն հանձնարարել է գնալ Զար և բռնի հետ բերել Իբրահիմին, իր զորքով շտապում է Թեհրան՝ գրավելու պարսից գահը: Նա բանտից ազատելով Մամեդբեկին, նրան խոստանում է Ղարաբաղի խանությունը, եթե իհարկե, հաջողացնի գործը: Մամեդը իրեն համարում էր Ղարաբաղի խանության օրինական ժառանգ, քանի որ Իբրահիմը ուժի միջոցով կարողացավ իր հորից (Միհրալի) խլել խանական տիտղոսը: Իրականում Սադրդն է կազմակերպել դավադրությունը, որպեսզի տիրանա Իրանի գահին: Սադրդը հայոց Արցախի տիրակալի թեկնածու

է ընտրում կրկին մահմեդականի: Սա մտածել է տալիս, որ մահմեդականների Արցախ թափանցելն ու իշխաններ կարգելը ամենևին էլ իրադարձությունների ու դիպվածների պատմական համադրություն չէ: Այն Պարսկաստանի ու Թուրքիայի հետևողական քաղաքականության արդյունք է: Հայերը եթե 18-րդ դարի ընթացքում շատ մոտ էին Արցախում որևէ ինքնավարության ստեղծմանը, ապա մահմեդական երկրները ամեն կերպ խանգարում էին դրան ու նպաստում մահմեդական իշխանության հաստատմանը: Եվ ահա ապստամբ Մաղրդ խանը ևս հավատարիմ մնալով ընդհանուր քաղաքական դրվածքին, Ղարաբաղի կառավարչի պաշտոնի թեկնածու է ընտրում կրկին մահմեդականի, որը իր հանցակիցն է ու հավատարիմ կլինի իրեն:

Իսկ Շուշիում տեղի ունեցող դեպքերի մասին հետագայում միաբնակ մնացած Յաղուբը, որի հայկական անունը Հակոբ էր, պատմում է.

«Հետզհետե բազմութեան ծայնը, ճիչը, աղաղակը բարձրանում էր ու սաստկանում, ըստ որում, մահմեդական տեղացիք սկսել էին պարսկաստանցիներին կողոպտել, մեր կայքն ավար առնել: Խլեցին զենքերը, մնացինք գլխաբաց, շապիկով, վարտիքով ու գուլպաներով: Ատրպատականցի զորքը միացավ տեղացիներին-թաթարներին և սկսեցին միասին կողոպտել Խորին Պարսկաստանից եկած գինվորներին: Ատրպատականցիքը ավելի վնասակար էին մեզ և թշնամի, քան զերկրացիները»[11]:

Յաղուբը մտնում է հայոց թաղը: Հայերը երկյուղելով մտել էին իրենց տները, դռները ամրացրել: *«Ամենևին ձեն ձուն չկար, որպես թե մահացու մեռելութիւն կթագավորեր նրանց թաղի մեջ, նշան էլ չէր երևում, թե ենդեղանք կենդանի շունչ կայ եղել»*,- պատմում է քարանձավի մենակյացը՝ Աղա-Մամեդխան շահի նախկին զորահրամանատարը: Հայոց ներքին թաղի փողոցում վաղուց էր շրջում գինաթափված ու կիսամերկ Յաղուբը, երբ մի տան կտրի երդիկից տղամարդու գլուխ երևաց: Յաղուբը նրա կերպարանքից ու գդակից ճանաչեց նրա հայ լինելը: Մահմեդականացած Յաղուբը այստեղ հիշեց, որ հայ է ինքը, որովհետև ծնողները գիշերները իրեն հայերեն աղոթքներ էին սովորեցնում:

- Օտարական հայ եմ, ողորմություն արա,- դիմում է նա հային,- *օգնիր ինձ, ասպնջական լեր...*

Գլուխը իսկույն աներևութանում է: Մեկ այլ երդիկից սպիտակամորուս մարդու կերպարանք երևաց:

- Հայ եմ, աղաչում եմ, տանդ մի գիշեր պահիր ինձ, առավոտյան կհեռանամ: -Ներսինին կարեկցական նայեց օտարականին, ուզում էր բացել, բայց հարևան երդիկից ձայն եկավ, ասելով.

- Չբացես, վնաս կլինի, երևում է, որ հայ չէ, արաիլի է (պարսիկ է), դրանից մեր թաղին էլ վնաս կլինի:

Յաղուբը դեպի արևմուտք է փախչում, խառնվելով ամբոխին, դուրս գալիս բերդից: Նրան օգնում են հայ հովիվները: Ի վերջո, հայորդին ապաշխարում է, կրկին քրիստոնեության գալիս և որոշում մինչև մահ ճգնավորությամբ քավել մեղքերը:

Մամեդ բեկը առաջարկում է Մելիք-Ռոստոմին միանալ իրեն, պայմանով, որ մելիքը լինի հայերի իշխանը, ինքը մահմեդականների: Սակայն Ռոստոմը, որը իր մելիքությամբ պարտական էր Իբրահիմին, թեկուզ և ստիպված էր նրան գիջել իր սիրելի կնոջը, զգալով, որ Մամեդ-բեկը աջակցություն չի ստանա ոչ մահմեդական, ոչ էլ քրիստոնյա իշխանավորներից, հետևապես էլ բնակչության կողմից, հրաժարվում է Մամեդի առաջարկությունից: Մամեդ-բեկը իրեն խան է հռչակում, սակայն շուտով տեղեկանում է, որ իր միակ հենարանը՝ Մաղրդ խանը պարտվել է Աղա-Մամեդ շահի եղբոր որդուն՝ Ֆաթալի խանին, որը և շահ է հռչակվում: Իբրահիմը վախենալով խռովությունների գոհ դառնալ, նախ Շուշի է ուղարկում իր որդուն՝ Մեհթի բեկին: Աշնանը շահը ֆիրման է ուղարկում Իբրահիմին, հրամայելով ձերբակալել դավադրության մասնակից Սաֆարլիին ու Մամեդին: Մյուս դավադիրը՝ Աբասը, մեկնել էր Մաղրդի հետ: Մամեդը ոչինչ չկասկածելով, մյուս իշխանավորների հետ դուրս է գալիս դիմավորելու Ջարից վերադարձող Իբրահիմին: Մամեդը սպանությունից հետո թալանել էր պարսից շահի գանձարանը, ինչպես և պարսիկներից խլել նրանց թալանը: Նա թանկարժեք նվերներ մատուցեց Իբրահիմին այդ գանձերից, որը փաստորեն ձերբակալումից ազատվելու փրկագին էր: Մամեդի վրա ծանրացած էր մեկ այլ հանցանք ևս, նա սպանել էր սեփական մորը: Հաջորդ օրը, վաղ առավոտյան 80 եզներով բեռնավորված քարավանը դուրս եկավ Շուշիից, գնաց Թարթառի ներքին հովտում գտնվող Մամեդի Քալանթառլու կալվածքը: Նա արհամարհեց Իբրահիմի ավագ որդու՝ Մամեդ-Հասան-աղայի խորհուրդը՝ Իրանին թշնամի Վրաստան

գնալու մասին և նախընտրեց Նուխիի (Շաքի) Քերիմ-Մամեդ-խանի առաջարկը: Նա Մամեդին խոստացել էր տալ իր աղջիկը, ինչպես և ողջ խանությունը, քանի որ ինքը կորցրել էր տեսողությունն ու վախենում էր հարևան խաների հարձակումներից: Ըստ ավանդության, Մամեդը Քիրս լեռան լանջերին թաքցնում է իր գանձերի մի մասը, մի մասն էլ թողնում քույրերին: Մամեդը մի քարավանով անցնում է Կուր գետը, ուղևորվում դեպի Նուխի: Տեղի խանը ընդունում է նրան ինչպես վայել էր, սակայն հյուրընկալման 6-րդ օրը ձերբակալում է, բռնագրավում նրա մոտ եղած գանձերը: Ձերբակալում են և Մամեդի հետ Նուխի մեկնած Սաֆարլի բեկին: Մամեդին շղթայակապ ուղարկում են Շիրվանի Մուստաֆա խանին, որն էլ մահապատժի է ենթարկում նրան: Շահի պահանջով Սաֆարլիին շղթայակապ տանում են Թեհրան:

Անընդմեջ պատերազմներին Ղարաբաղում, ինչպես և ողջ Անդրկովկասում, հաջորդում է դաժան սովն ու համաճարակը: Սկսվում է Ղարաբաղից հայերի գաղթը:

3. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ

1799 թվականին կրկին մելիքները դիմեցին ռուսաց կայսրի ողորմածությանը: Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանն ու Մելիք-Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյանը մեկնեցին Պետերբուրգ: Նրանք խնդրում էին ռուսահպատակ տարածքներում կալվածքներ տալ իրենց և իրենց հետ գաղթած ժողովրդի համար: Հայոց հարցը ռուսաց արքունիքում մարել էր Եկատերինա 2-րդի մահով, ուստի Պավել 1-ը կատարեց նրանց այս խնդրանքը: Մելիք Ֆրեյդունը ստացավ Բորչալուի մի մասը, Մելիք Ջումշուդը՝ Լոռին: Մելիք Աբովը տիրում էր Բոլնիսում: Արցախցի այս իշխաններին թվում էր, թե կարող են միացնել այս երեք շրջաններն ու ստեղծել մի նոր «Խամսա»: Իհարկե, ոչ ռուսական իշխանությունը, ոչ էլ վրացիները նման բան երբեք թույլ չէին տա: Ըստ տարբեր աղբյուրների, մինչև 1795 թվականը Արցախում կար 60 հազար հայ ընտանիք: 1804 թվականին գաղթի պատճառով ողջ Արցախում մնացել էին 4 հազար ընտանիք:

Նրանց մեծ մասը գաղթել էին Վրաստան, Շամախի, Շաքի: Բոլոր դեպքերում էլ հայրենիքից հեռանալը հենց հայրենի երկրի կործանման հիմնական պատճառն է: Սովը, ապա և ժանտախտի համաճարակի հետևանքով երկրից հայ իշխանների հեռանալը կործանեց հայկական իշխանությունը Արցախում:

Իբրահիմ խանը, օգտվելով այս իրավիճակից, թուրք թափառական ցեղերին բնակեցրեց դատարկված հայկական գյուղերում՝ նրանց նվիրելով հայ իշխանների կալվածքները:

Կովկասի կառավարիչ և զորքերի գլխավոր հրամանատար իշխան Ցիցիանովը իր զորքերով Թիֆլիսից շարժվեց դեպի Գանձակ ու 1803 թ. դեկտեմբերի սկզբին պաշարեց բերդը: Ցիցիանովի բանակի հետ էր և Մելիք-Շահնազար 2-րդի որդին՝ Մելիք Ջումշուդը իր հեծյալներով: Այստեղ էին Թիֆլիսի հայոց առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննեսն ու Ներսես վարդապետը[12]:

Իբրահիմ խանը դաշն էր կնքել Գանձակի խանի հետ, սակայն այդպես էլ չօգնեց նրան, քանի որ նրա հոգսը սեփական անվտանգությունն ու իշխանությունը պահպանելն էր:

Ռուսական բանակը հունվարի 3-ին գրոհով խորտակեց պարիսպն ու ներս թափանցելով, իսկական սպանդ սարքեց Գանձակում: Զոհվեցին նաև Ջավադ խանն ու նրա որդիները, որոնք սուրը ձեռքին մինչև վերջ պաշտպանում էին բերդը: Գանձակցի հայերն ու թուրքերը նախապես իրենց անասունը քշել էին Ղարաբաղ: Ցիցիանովը 83-ամյա Իբրահիմից պահանջեց հետ վերադարձնել գանձակցիների հոտերը, ինչպես նաև Մելիք Ջումշուդի որդի Բեհբամին ու թոռանը՝ Աստվածատուրին: *«Վերջապես, բացելով Ձեր առջև ճանապարհը դեպի մեծ ու աստուծով բարձրացված թագավոր կայսրի հովանավորությունը,- գրում է Ցիցիանովը Իբրահիմ խանին,- կընդունեմ ձեզանից լիազորված անձին կամ թե ձեր որդիներից մեկին՝ որոշելու համար այն կետերը, որոնցով դուք կարող եք ընդունված լինել»*[13]: Ցիցիանովը ձգտում էր առանց կորստի գրավել Ղարաբաղն ու նրա Շուշի բերդը: Դրա համար անհրաժեշտ էր որոշակի ուժ ցուցադրել: Շուշին ռուսական ռազմավարների համար առաջնակարգ նշանակություն ունեցող այն հենակետն էր, որը մոտ լինելով Արաքսի վրա Խուդաֆերին կամրջին, կարող էր Ադրբեջանի վրա սրընթաց արշավելու բազայի վերածվել: Հարկ եղած դեպքում

կարող էր խափանել դեպի Թիֆլիս ու Բաքու պարսկական արշավանքները:

Սակայն խորամանկ ու ճարպիկ ծեր աղվեսը (Իբրահիմը) խուսափում է, երկդիմի խաղերով ձգձգում գործնական հպատակությունը: Ցիցիանովը 17-րդ եգերային գնդի հրամանատար գնդապետ Կարյագինին հանձնարարում է պատժիչ ջոկատով արշավել Արցախի հյուսիսային գավառն ու հետ բերել հոտերը: Գործողությունը հանձնարարվեց մայոր Լիսանևիչին, որը «դալի մայոր» (գիժ մայոր) անունն էր ստացել ժողովրդից: Արցախում նախօրոք տեղեկանալով այս արշավի մասին, հոտերը քշեցին լեռները, թաքցրին անտառներում: Լիսանևիչը ձեռնունայն հետ եկավ, իր հետ Գանձակ բերելով հայերի 250 ընտանիք: Պարսիկները հաճախ էին Ղարադաղից ավազակային խմբեր ուղարկում ռուսների դեմ: Նման մի խումբ Գանձակի պարսպի տակից քշեց տարավ 290 ձի:

Իբրահիմը իր հերթին տատանման մեջ էր: Նա գիտեր, որ պարսիկները իրեն երբեք չեն ների Աղա-Մուհամեդ շահի սպանությունը Շուշիում: Եթե նա հպատակվեր շահին, ապա նման բան տեղի չէր ունենա: Ուստի և նա պարսից պատժիչ արշավանքից փրկվելու համար ռուսներից բացի այլ հենարան չէր կարող ունենալ: Իբրահիմը Իսրաֆիլ բեկի միջոցով քծնողական ու շողոքորթ նամակ է ուղարկում Կովկասի կառավարիչին, պատրաստակամություն հայտնում հպատակվելու նրա կամքին: Սակայն, համոզվելով, որ պարսից զորքի շարժման ուղղությունը երևանն է, կրկին ձգձգում է հպատակություն հայտնելը: 1805 թ. հունվարի 16-ին Ցիցիանովը Լիսանևիչին հանձնարարում է շարժվել դեպի Շուշի՝ Իբրահիմից անհապաղ հպատակության պահանջով: Այդ ժամանակ Իբրահիմը իր տեղը թողնելով Մեհթի Ղուլի աղային, գնացել էր դեպի Արաքսի ափերը՝ ճնշելու իր որդու՝ Աբդուլ Ֆեթհի ապստամբությունը: Նրա այս որդին, որը պատանդ էր թողնվել Պարսից շահի մոտ, զորքով եկել էր խռովություն բարձրացնելու ու գրավելու Ղարաբաղի խանությունը: Իբրահիմը շտապ Շուշի է վերադառնում: Նա լսելով Լիսանևիչի պահանջը, բեկերին խորհրդակցության է հրավիրում: Երեք օր խորհրդակցելուց հետո Պարսկաստանին հավատարիմ բեկերը մեժում են ռուսների պահանջը: Սակայն Իբրահիմի համար դա իր իշխանության վերջն էր: Նա համաձայնվում է դաշնագիր ստորագրել ռուսների հետ: Փետրվարի 21-ին խանը իր մոտ է հրավիրում ռուս

մայորին ու հայտնում, որ ընդունում է Ցիցիանովի բոլոր պայմանները[14]: Սակայն հրաժարվեց Գանձակ գնալ: Դաշնագրի ստորագրման վայր ընտրվեց Կուրակ գետը, որը գտնվում էր Ղարաբաղի ու Գանձակի սահմանագծում:

Ցիցիանովի շքախմբում էին Թիֆլիսի ու Գանձակի առանջորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրն ու Վարանդայի մելիք Զումշուդ Մելիք-Շահնազարյանը: Իբրահիմի շքախմբում էր Աղվանից Իսրայել կաթողիկոսը: Այդ դավաճանն ու մատնիչը եկել էր Կուրակ՝ ստանալու նվերների իր բաժինը:

1805 թ. Մայիսի 14-ին Իշխան Ցիցիանովը ու Իբրահիմ խանը հանդիսավորությամբ ստորագրեցին 11 հոդվածից կազմված դաշնագիրը: Իբրահիմը պետք է Շուշիում պահեր 500 զինվորից կազմված ռուսական գումարտակը: Իբրահիմին շնորհվում է գեներալ-լեյտենանտի, որդիներին՝ գեներալ-մայորի աստիճան: Շնորհվում է նաև դրոշակ՝ կայսրության զինանշանով: Խանը պարտավոր էր տարեկան տալ 8000 ոսկի տուրք:

Որոշվեց, որ Իբրահիմի մահից հետո նրան փոխարինի նրա թոռ Ջաֆար Ղուլին:

Իբրահիմը պետք է իր թոռներից մեկին՝ Շուքուր Ուլլահին պատանդ տար Թիֆլիսում մշտապես ապրելու: Երկրորդ հոդվածի համաձայն Իբրահիմի ժառանգներից երբեք չի խլվի խանությունը: Ինչ խոսք, որ դաշնագրում խոսք անգամ չկար Ղարաբաղի օրինական տերերի՝ հայ իշխանների ու հայ քրիստոնյա բնակչության մասին: Այստեղ երկու կողմից ցուցադրաբար արհամարհվում են հայերի իրավունքը ու պաշտպանվում, ամրապնդվում եկվոր բռնապետի, նրան շրջապատող թուրք բեկերի իրավունքները: Սա ինչ խոսք, որ երկու կողմերի շահադիտական քաղաքականության արդյունք էր:

Ցիցանովը Շուշիի բանալիի հետ իսկույն գրություն ուղարկեց Պետերբուրգ՝ Ալեքսանդր կայսրին: Նա նկարագրում է Ղարաբաղի սահմանները, հյուսիսից՝ Կուր գետը, արևելքից՝ Շամախիի խանությունը, հարավից՝ Արաքս գետը, ապա Ղարադաղն ու Նախիջևանը, արևմուտքից՝ Գարուն գետը, Սևանա լիճը: Իշխանը նշում է, որ Ղարաբաղը իր դիրքով դուռ է Պարսկաստան մտնելու համար: Ղարաբաղի միջոցով Թիֆլիսը մոտենում է Բաքվին, իսկ աշնանը Կուր և Արաքս գետերի միախառնման կետում գտնվող Ջավադ բերդը կխլեն Շիրվանի խանից: Հաջորդ օրը Իբրահիմը Զումշուդին հանձ-

նեց նրա 11-ամյա որդուն և 13-ամյա թոռանը, որոնց գերեվարել էր տասը տարի առաջ:

Երեք օր հետո նույն վայրում նման մի դաշնագիր է ստորագրվում և Շաքիի Սելիմ խանի հետ: Սելիմը Սևորդեանց իշխանական տան մահմեդական ճյուղի վերջին ներկայացուցիչն էր:

Մայոր Լիսանևիչը 300 զինվորներով տեղավորվեց Շուշիի հայկական թաղամասում՝ նրա համար ազատելով Շուշիի հայ հարուստներից մեկի տունը: Պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան, որը ուշադրությամբ հետևում էր ռուսների գործողություններին, օգտվելով այն հանգամանքից, որ ռուսական բանակը զբաղված էր Նապոլեոնի դեմ պատերազմով, որոշեց խլել Անդրկովկասն ու պատժել դավաճաններին: Լիսանևիչը 700 հոգանոց ջոկատով Արաքսի կամրջի մոտ բախվեց Փիր Ղուլի խանի առաջապահ զորամասին ու հետ քշեց կամրջից: Սակայն Ջեբրայիլի այգիներում տեսնելով պարսից զորքերի բազմությանը, լեռներով Շուշի շտապեց: Նա վախենում էր, որ Շուշիի թուրք բեկերը կապստամբեն ու կհանձնեն բերդաքաղաքը: Իբրահիմը ևս դիմեց Ցիցիանովին՝ օգնական զորք ուղարկելու պահանջով: Սակայն Իբրահիմը իր ոչ մի խոստումը չէր կատարել: Չէր ուղարկել նաև պատանդին: Մեկ շաբաթ անց պարսից առաջապահ 10 հազարանոց հեծելազորը Ասկերան ամրոցի մոտ էր, իսկ Աբաս Միրզայի բանակը՝ Խոնաշեն գետի վրա: Փիրը համոզում էր Իբրահիմին, որ հանձնի բերդը: Պարսից զորքի հրամանատարներից էր վրաց Ալեքսանդր արքայորդին: Նա նամակով հանդիմանում էր Իբրահիմին. *«Ոչ ոք ռուսներին միանալով ոչ մի օգուտ չի ստացել, դու*

ինչո՞ւ ես տիրապետությունը հանձնում և ուժեղացնում նրանց...»[15]:

Գանձակից Շուշին օգնության էր շտապում եգերական գնդի մի գումարտակ՝ գնդապետ Կարյագինի գլխավորությամբ: Գնդապետը դիմեց Արցախի հայությանը, կոչ անելով քաջաբար պաշտպանել երկիրը: Սակայն չկար Արցախի երբեմնի հզորությունը: Կարյագինին օգնեց միայն Վանի հարյուրապետը: Լիսանևիչը 250 հայ ընտանիքների հետ նրանց ընտանիքն էլ էր Գանձակ տեղափոխել: Սակայն Կարյագինը օգնել էր նրանց ընտանիքին վերադառնալու հայրենի Կուսապատ գյուղը: Կարյագինը չկարողացավ անցնել Ասկերանի ամրոցը, քանի որ այն արդեն գրավել էին պարսիկները:

Գնդապետը հետ գնալով ամրանում է Աղդամի մոտ Կարահաջի Բաբա մահմեդական գերեզմանոցում: Պարսիկները բոլոր կողմերից հարձակվում էին: Պայմանավորվածության համաձայն մայոր Լիսանևիչը Կարյագինին ընդառաջ չգնաց՝ չնայած Ցիցիանովի պահանջներին: Մայորը համոզված էր, որ հենց բերդից դուրս գա, մահմեդական բեկերը իրեն այլևս ներս չեն թողնի: Իսկ կորցնել բերդը խոշորագույն պարտություն կլիներ: Պարսիկները թնդանոթներ դրեցին ու ռմբակոծելով արգելում էին ռուս զինվորներին Կարկառից ջուր վերցնել: Արդեն զոհվել էին 33, վիրավորվել 163 զինվոր: Շատերը արդեն չէին դիմանում հոգեբանական ճնշմանը: Սպաներից մեկը՝ Լիսենկոն, իրեն ենթակա 55 զինվորների հետ պայմանավորվելով, հանձնվեց պարսիկներին: Դա լուրջ հարված էր անհուսալի պաշտպանություն ձեռնարկող զորախմբի համար: Կարյագինը վիրավորվեց: Իբրահիմը նամակ գրեց Ցիցիանովին, որ Լիսանևիչը չի կարող Կարյագինին օգնության գնալ, քանի որ սպասվում է բերդում գտնվող հայերի ու թուրքերի ապստամբությունը: Ինչ խոսք, որ նա հայերի վերաբերյալ ստում էր: Իսկ Ցիցիանովը Թիֆլիսից օգնական զորքերի էր սպասում: Իբրահիմը իր կողմից ոչինչ չէր արել ռուսներին օգնելու համար, ոչ մի զորք չէր կազմել:

Կարյագինը Վանիին հանձնարարեց նամակ տանել Շուշի՝ Լիսանևիչին: Հատելով պարսից բանակի գիծը, Վանին հասավ Խրամորթ գյուղը, որտեղ հանդիպեց Մելիք Մեջլումի որդուն՝ Մելիք Հաթամին ու Ասրի բեկ Փիրումյանին, որոնք բարձունքից դիտում էին մի բուռ քրիստոնյաների օրհասական գոյամարտը պարսից բանակի դեմ: Վանին տեսնելով այն, նամակը ուրիշի միջոցով ուղարկեց Շուշի, իսկ ինքը վերադարձավ Կարյագինին օգնելու: Նախ համարձակ գրոհով գրավեցին պարսից մարտկոցը: Ջոկատում մնացել էին 150 հոգի: Որոշվեց նահանջել Տիգրանակերտի ամրոցը: Վանին հանձն առավ առաջնորդի դերը: Կարյագինին ու Կոտլյարևսկուն ոչինչ չէր մնում, բացի հայ երիտասարդին վստահելուց: Հունիսի 27-ի գիշերը ձեռնարկեցին նահանջը: Անարգել անցնելով պարսից պահակախմբի մոտով, որը հսկում էր Գանձակ տանող ճանապարհը, ռուսները հասան ամրոց, որտեղ տեղավորված էր պարսիկների 150 հոգանոց ջոկատը: Թնդանոթի արկի հարվածով խորտակեցին ամրոցի մուտքի դուռը և անսպասելի գրոհով գրավեցին այն: Պարսից բանակը ուշացած զգաց ռուսների նահանջը: Ռուս զինվորները

մորթեցին պարսիկներից խլած ձիերն ու կերան: Հաջորդ գիշերը Վանին դուրս եկավ ամրոցից, գնաց Կուսապատ, ջրաղացում ցորեն աղաց, թխեց 40 հաց, բեռնավորված մթերքով լուսադեմին հետ եկավ: Հաջորդ օրը կրկին 50 հոգով ծածուկ գնացին Ջրմոկնը (Ջերմուկ) կոչվող վայրը, որը հեռու չէր Ջրաբերդից: Այստեղ էին պատսպարվել տարբեր գյուղերից փախած հայերը: Վանին 60 ոսկով գյուղացիներից գնեց 12 կով, նրանց վրա բեռնելով մթերքը, գինվորների հետ ամրոց վերադարձավ: Պարսիկները շրջապատել էին ամրոցն ու Կարյագինից պահանջում էին հանձնվել: Ռուս գնդապետը ժամանակ շահելու համար խնդրեց, որ Ցիցիանովից հանձնվելու թույլտվություն ստանա: Մի քանի օրից ջոկատը գիշերը, կրկին Վանիի առաջնորդությամբ, հեռացավ «9 մասաց» եկեղեցու մոտ գտնվող Ջրաբերդի մելիքների ամրոցը:

4. ՂԱՐԱԲԱՂԻ ԴԱՀԻՃ ԻԲՐԱՀԻՄԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վսկա զորքով Ղարաբաղ էր եկել նաև Ֆաթալի շահը: Սակայն շուտով նա Պարսկաստան է վերադառնում: Կարյագինի ջոկատն ու Շուշիին օգնության եկող Ցիցիանովի զորախումբը հանդիպում են ու միայն հուլիսի 27-ին մտնում Շուշի: Ժողովուրդը ցնծությամբ է դիմավորում ռուսական զորամասին: Ալեքսանդր Առաջինին ուղղված նամակում Ցիցիանովը գրում է. *«Դիտելով այն (Շուշիի բերդը), ես գտա, որ այս բերդը չափազանց հազվագյուտ է այս երկրում, մի կողմից շրջապատված է քարե բարձր պարիսպով, որը աշտարակներ ունի, ինչպես ընդունված է ասիացիների մոտ, մյուս կողմից ամրացված է բնական դիրքով, որ նրան խոշոր ճեղքվածք է ստեղծել, ու քաղաքը պաշտպանում են 15 սաժեն բարձրություն ունեցող ուղղածիգ ժայռերը: Իսկ դրանց դեմ ոչ մի ռազմական արվեստ չի կարող գործել»:* Ցիցիանովը Շուշիում համոզվեց, որ մահմեդական բեկերը պարսիկներին խոստացել էին բացել բերդի դռները: Սակայն նա չպատժեց ոչ ոքի, միայն երկու պատանդ վերցրեց իր հետ ու հեռացավ: Կարյագինը Թարթառի մոտ բաժանվեց Ցիցիանովից ու գնաց Գանձակ: Նրա հետ էին Վանի հարյուրապետը ու նրա եղբայրը Հակոբը: Վանին ստացավ պորուչիկի կոչում և ցմահ թոշակ: Կարյագինը շտապում էր Գանձակ հասնել, որտեղ ռուսների բացակայության պայմաններում ապստամբել էր Ջավադ խանի կենդանի մնացած որդին՝ Ուղուրլու աղան:

Իշխան Ցիցիանովը ստիպեց Շիրվանի խան Մուստաֆային, որ ստորագրի Կուրակ գետի դաշնագիրը: Իսկ Բաքվի Հուսեին Ղուլի խանը ամեն կերպ հրաժարվում էր հանձնել Բաքուն: Ի վերջո, պայմանավորվում են, որ փետրվարի 8-ին խանն ու իշխանը հանդիպեն Բաքվի մոտ: Խանի հետ եկած Իբրահիմ բեկը ատրճանակի երկու կրակոցով սպանում է Ցիցիանովին: Իբրահիմը կտրում է իշխանի գլուխն ու տանում Թավրիզ՝ Աբաս Միրզային:

Մեռավ գոռոզ իշխանավորը: Նրան հպատակություն հայտնած խանությունները անկախացան: Ցիցիանովը ոչ միայն գրաված տարածքները միավորող ոչ մի համակարգ չէր ստեղծել, այլև ամեն ինչ կապել էր իր անձի հետ: Եվ իր մահով ամեն ինչ փլուզվեց: Իմերեթիան, Մինգրելիան, Ջարը, Շաքին, Ղարաբաղը, Շիրվանը կրկին հեռացան Ռուսաստանից: Ստեղծվեց հակառուսական դաշնակցություն: Շաքիի Սելիմ խանը, որ Կուրակի դաշնագրությունը ստորագրելուց հետո գեներալ-լեյտենանտի աստիճան էր ստացել ու նշանակվել խանության կառավարիչ, ընդգրկվեց այս նոր դաշնագրության մեջ ու ապստամբեց ռուսների դեմ, կոտորելով Նուխիում գտնվող ռուս սպաներին: Սակայն, երբ ռուս գեներալ Նեբելսոնի զորքը պաշարում է Նուխին, Սելիմը փախչում է Պարսկաստան: Այստեղ վերջանում է Սևորդյաց իշխանական տոհմը, որը շուրջ 9 դար անդադար իշխել էր Կուր գետից մինչև Կովկասյան լեռնաշղթան ընկած տարածքում:

1806 թվականի ամռանը Աբաս Միրզան պարսից զորքով կրկին անցավ Արաքսը, անտեսելով Ռուսաստանին տված իր հավատարմության երդումները ու դաշնագրության ստորագրումը, գաղտնի բանակցություններ սկսեց Իբրահիմի հետ Շուշին հանձնելու ու Լիսանկիչի զորամասը ոչնչացնելու մասին: Մելիք Ջումշուդը, որը լավ տեղյակ էր պարսից զորքերի շարժման ու Իբրահիմի մտադրությունների մասին, նամակներով այս անցուդարձի մասին տեղյակ էր պահում ռուս գեներալ Նեսվետաևին: Այդ ժամանակ շահզադան (թագաժառանգը) Արդաբիլում էր: Իսկ Մարաղայի Ահմադ խանը մեծ զորքով Արաքսի ափին էր և սպասում էր Խուդաֆերինի կամրջի

նորոգման աշխատանքների ավարտին: Ծրագրված էր, որ մայիսի 12-ին Աբաս Միրզան պետք է գար ու անցներ կամուրջը: Կռիվը պետք է մղվեր երկու՝ Երևանի ու Ղարաբաղի ուղղություններով: Հյուսիսից Ղարաբաղի վրա պետք է հարձակվեին նաև Բաքվի, Շիրվանի ու Շաքիի զորքերը:

Ժողովրդի մեծ մասը պատսպարվեց Շուշիի բերդում: Իբրահիմը փախստականներին ստիպում էր վերադառնալ իրենց բնակավայրերը, հայտնելով, թե պարսիկները նրանց ձեռք չեն տա: Քոչվոր թաթարական խմբերին նա մերձակա սարերն ուղարկեց: Ինքը ընտանիքի հետ դուրս եկավ բերդից ու իջավ իր այգին, որը Շուշիից չորս վերստ հեռավորության վրա էր: Նրա հետ էին կանանցից մեկը, երկու անչափահաս տղաներ ու երկու չափահաս աղջիկներ: Նրան միացել էր և Մամադ Կասըմ աղա որդին: «Խանի բաղում» Իբրահիմին միացան մի քանի բեկեր, ինչպես և քոչվոր թաթարների զինված ջոկատներ: Մելիք Զումշուդը, որը նակատել էր բերդից խանի հեռանալը, այդ մասին տեղյակ պահեց Լիսանևիչին: Վերջինս տեղյակ էր, որ խանը մի քանի օր առաջ նամակ էր ուղարկել Ֆաթալի շահին, խնդրելով, որ շահը մոռանա անցյալը ու ներում շնորհի իրեն: Իբրահիմը, որ պատրաստակամություն էր հայտնում հպատակվելու շահին, նրանց հանձնելու Շուշիի բերդը, դուրս քշելու ռուսներին, առաջարկում է իր երկու աղջիկներին կնության տալ շահի երկու տղաներին, որն էլ կհաստատի բարեկամությունը: Ըստ երևույթին, նա պատրաստվում էր իր անչափահաս որդիներին պատանդ թողնել շահի մոտ: Պարսից շահի համար սա անսպասելի էր: Նա խոստացավ օգնական զորք ուղարկել: Իբրահիմին հանձնելու համար շահն ուղարկեց 120 հազար թուման փող ու խոստացավ նրա տեղ խան կարգել Իբրահիմի որդուն Աբդուլ-Ֆեթհին:

Լիսանևիչը Իբրահիմից պահանջեց, որ Շուշի վերադառնա: Խանը հրաժարվեց, հայտնելով, որ Պարսից շահից բացի ոչ մի ուրիշ իշխանություն չի ճանաչում: Փոխգնդապետ Լիսանևիչը նրա մոտ ուղարկեց Մեհտիին, որը խորամանկ ու երկդիմի մարդ էր և նպատակադրվել էր ամեն գնով խան կարգվել: Իբրահիմին համոզելու գնաց և թոռը՝ Զաֆար Ղուլին, որին Ցիցիանովի ծրագրով պետք է խան կարգեին: Զաֆարը ամեն կերպ իրեն ռուսների նվիրյալ էր ցույց տալիս, սակայն նա գաղտնի ծառայում էր պարսիկներին, միշտ կարևոր տեղեկություններ հաղորդելով նրանց: Նրանք ձեռ-

նունայն վերադարձան, ասելով, թե ծեր խանը ամբողջ օրը հայհոյում է ռուսներին: Իսկ թոռը հայտնեց, թե պապը համոզում էր ծերբակալել «դալի մայորին» ու հանձնել իրեն: Թե՛ Մեհթին և թե՛ Զաֆարը, որոնք երազում էին խան դառնալ, ցանկանում էին ծեր Իբրահիմի վախճանը: Ուստի նրանք անուղղակիորեն հուշում էին ռուս սպային կատարել այդ վճռական քայլը: Եթե Ցիցիանովը ծրագրել էր Իբրահիմից հետո խան կարգել Զաֆարին, ապա Կովկասի կառավարիչ և գլխավոր հրամանատար նշանակված Գուդովիչը ձգում է շատ բան Ցիցիանովի որոշումներին հակառակ անել: Լիսանևիչը որոշեց կալանավորել խանին: Սակայն խանի մերձավորները այլ կերպ էին բացատրում. խանը ստիպված էր միշտ կաշառել Լիսանևիչին, մթերք ու դրամ տալ ռուս սպաներին: Եվ ահա Լիսանևիչը 100 ռուս կազակներով ու Զումշուդի ու նրա կտրիճների հետ հունիսի 2-ին երեկոյան դուրս եկավ Երևանյան դարպասներից, շրջանցող ճանապարհով կեսգիշերին հասավ Խանի այգին: Շեշտակի ու անսպասելի հարձակումը պաշտպանվելու ոչ մի հնարավորություն չտվեց խանին ու նրա զինվորներին: Մելիք Զումշուդի քաջերից Շեյթան-Թունին սրախողխող է անում Իբրահիմին: Իբրահիմի մերձավորներից քչերին հաջողվեց փրկվել կոտորածից:

Իբրահիմի մահը խոշոր կորուստ էր պարսից շահի ու թագաժառանգի համար, քանի որ Շուշիի գրավման ծրագիրը կապված էր նրա անձի հետ: Լիսանևիչը այս գործողությունից հետո շտապ Շուշի է վերադառնում: Պարսիկները հաջորդ օրը տեղեկանալով Իբրահիմի սպանության մասին, բերդի պաշարման գործողությունը կիսատ են թողնում, զորքերով հեռանում Ղարաբաղից՝ թալանելով ու ավերելով հայոց բնակավայրերը:

Նոր կառավարիչը մեղադրում է Դմիտրի Լիսանևիչին այս սպանության համար: Նրան Թիֆլիս են կանչում ու դատում: Սակայն ռուս սպան շուտով արդարանում է:

Գեներալ Ներբելսինը Կուրակից արշավեց դեպի Շուշի, այստեղ իր մոտ կանչեց մելիք Զումշուդին, բանակի ծանրոցները թողնելով Ասկերանի ամրոցում, առաջացավ դեպի Խոնաշեն գետակը: Պարսիկները ճակատամարտում կատարյալ պարտություն կրեցին:

Կոմս Գուդովիչը խան նշանակեց Մեհտիին՝ գեներալ-մայորի աստիճանով: Մեհթին մեկնեց Թիֆլիս ու հանդիսավոր կերպով երդվեց հավատարիմ ծառայել Ռուսաստանին: Սակայն Շուշի վերադառնա-

լով նա դրժեց իր երդումը: Մեհտի խանը հրաժարվում էր հաց ու մթերք տալ բերդապահ զորքին: Նա իր եղբոր Աբդուլ Ֆեթի միջոցով մշտապես կապ էր պահպանում թագաժառանգ Աբաս-Միրզայի հետ:

Շուշիի զորամասի հրամանատարն էր Կոտլյարևսկին, որի հարաբերությունները խանի հետ խիստ լարված էին: Մեհտին Գուդովիչից պահանջեց, որ փոքրացնի բերդապահ զորքը: Նա գաղտնի սննդի պաշար էր կուտակում պարսից զորքի համար: Նա իր բեկերի հետ կեղեքում էր ժողովրդին:

Շուշին նս դատարկվել էր հայ բնակչությունից: Ժանտախտն ու սովը բնաջնջել էին շատերին:

1810 թվականի գարնանը, երբ Ասկերանի ամրոցում գեներալ Տորմասովն ու պարսից թագաժառանգի վեզիր միրզա Բյուղուրկը բանակցում էին հաշտության պայմանագրի շուրջ, հայերի ներկայացուցիչները գանգատվեցին Մեհթի Ղուլի խանից: Տորմասովը հանձնաժողով կազմեց հարկերի բաշխման հարցը քննելու համար:

Սակայն գնդապետ Կոտլյարևսկին, որը Շուշիում փոխարինել էր Լիսանևիչին, դեմ էր բանակցություններին ու առաջարկում էր նախահարձակ լինել և ուժային ճնշումով ստիպել պարսիկներին զիջումների գնալ: Եվ ահա ամռանը գնդապետ Կոտլյարևսկին 400 զինվորներով գնում է Մեղրի, որը ամուր հենակետ էր լեռների վրա յուրօրինակ ամրություններով: Գիշերային հանկարծակի գրոհով նա գրավում է Մեղրին: Մի անգամ ռուսները ճանապարհին ձերբակալում են մի մարդու, որը Աբաս Միրզայի սուրհանդակն էր և նամակ էր բերում Ջաֆար Ղուլի աղային: Պարսից թագաժառանգը Ջաֆարին խոստանում էր տալ խանությունն ու 15 հազար թուման: Կոտլյարևսկին հրամայեց ձերբակալել Ջաֆարին, որը սարերն էր գնացել: Սուլթան Բադ տեղում գտնվող գումարտակի հրամանատար Չինին ձերբակալում է Ջաֆարին և ուղարկում Թիֆլիս:

Թարթառն անցնելիս Ջաֆարը հրում, գցում է ռուս զինվորին ու ձիով փախչում: Շուշիում ձերբակալում են Ջաֆարի մորը՝ Խեյրանիսա Բեջումին ու տանում Թիֆլիս:

Ջաֆարը սրարշավ գնաց Մուղանի դաշտ, ուր բանակ էր դրել Աբաս-Միրզան: Նա կարծում էր, թե թագաժառանգը նրան կնվիրի խանությունը: Աբաս-Միրզան անսպասելի հարձակվեց Սուլթան Բադի գումարտակի վրա: Չինին զոհվեց: Նրան փոխարինած կապիտան Օլովյաննիկովը գումարտակը հանձնեց պարսիկներին: Ռուս սպան մեղավոր էր Ջաֆարին բաց թողնելու խնդրում և վախենում էր պատժից, ուստի գերադասեց անձնատուր լինել թշնամուն: Հավանաբար, Ջաֆարի փախուստը կազմակերպված էր նրա կողմից մի խոշոր գումարի փոխարեն, ու գումարտակի վրա հարձակումն ու նման ելքը այս մատնության վերջնակետն էր:

Աբաս-Միրզան, որը դեռևս խուսափում էր Շուշիի վրա գնալ, շրջապատեց Տիգրանակերտի ամրոցը, որտեղ ամրացել էր կապիտան Իլիաչենկոն 200 զինվորներով: Հավանաբար, գնդապետ Կոտլյարովսկու հանձնարարությամբ գիշերը այստեղ է գալիս կուսապատցի Վանի հարյուրապետն ու ծածուկ դուրս բերելով զորամասը, լեռներով այն հասցնում Շուշիի բերդը[16]: Մարկիզ Պաուչուլլին 1500 զինվորներով Թիֆլիսից եկավ Շուշի և գունդը հանձնեց արդեն գեներալ դարձած Կոտլյարևսկուն: Վերջինս աչքի էր ընկել թուրքերից Ախալքալակի գրավումով: Նորընծա գեներալը բնակության վայր ընտրեց Ամարասը, որպեսզի ավելի մոտ լինի Արաքսին: Մարկիզը որոշեց Մեհտի խանին աքսորել Ռուսաստան, քանի որ կասկածում էին դավաճանության մեջ: Նրա տեղ ուզում էին խան կարգել գնդապետ Զումշուդ Մելիք Շահնազարին: Սակայն Մելիք Զումշուդը հրաժարվում է հօգուտ Մեհտի խանի:

Վ.Պոտտոյի վկայությամբ, երբ ռազմական խորհուրդը վերջնականապես պետք է որոշեր Մեհթի խանի արտաքսման հարցը, վճռական խոսքը տվեցին Վանի հարյուրապետին: Նա ասում է, որ խանը ոչ մի մեղք չունի ռուսական գումարտակի պարտության հարցում:

- Երեկ Թիֆլիսից եկել էր իշխան Վասիլի Բեյբութովը՝ Կախեթիայում ապստամբության մասին լուրով,- ասաց Վանի հարյուրապետը,- եթե Մեհթիին հեռացնենք, այստեղ նս թաթարները կապըստամբեն: Ավելի լավ է ամեն ինչ թողնենք նույնը[17]:

Հավանաբար Մեհթին ու Վանին նախապես էին պայմանավորվել Վանիի այս վարկածի մասին, ու խանը Վանուն խոստացել էր մելիքական տիտղոս, կալվածքներ ու լիակատար իշխանություն Զրաբերդում:

Սակայն կրկին Արցախում չգտնվեց մեկը, որ օգտվելով պատեհ առիթից, իր վրա վերցներ պատասխանատվությունը ու ինքը կառավարեր երկիրը և ոչ թե թողներ օտար լծի տակ: Բայց թե Վանին, որը

ինչքան էլ քաջ ու հմուտ լիներ, թե Զումշուդ Մելիք-Շահնազարը, միշտ ծառայել են թուրք խաներին և այլ կերպ չէին էլ պատկերացնում:

Նրանք վախենում էին խանական կարգերի կործանումից: Սակայն գլխավոր պատճառն այն էր, որ հայ իշխանների մոտ վաղուց մեռած էին սեփական պետականություն ունենալու զգացումը, և պատրաստ էին ծառայել օտար խանի, միայն թե պահպանվի սեփական իշխանությունը:

Կրկին փոխվեց Կովկասի կառավարչապետը: Մարկիզին փոխարինեց ծերունի գեներալ Ռտիշչևը: Կոտլյարևսկին, որն աչքի էր ընկնում համարձակությամբ, իր զորքով առանց Ռտիշչևին նախապես հայտնելու, արշավեց Արաքսի մյուս ափը, գրավեց մի բերդ, իր հետ բերեց 400 հայ ընտանիք և 15 հազար խոշոր եղջյուրավոր անասուն: Շուշի գալով, նա մի քանի թուրք բեկերի բանտարկեց Շուշիի բանտում, մյուսներին Գանձակ ուղարկեց: Իսկ քրդերին հանդարտեցնելու նպատակով նրանց ցեղապետերից պատանդներ վերցրեց:

Շուշին տեսնելու է գալիս կառավարչապետը: Երբ՝ գեներալ Ռտիշչևը գնում էր Շուշիից, Կոտլյարևսկին դառնությամբ նկատեց, որ նրան ճանապարհողների մեջ չկար Մեհտի խանը: Կոտլյարևսկին գիտեր, որ թուրքը ատում էր ռուսներին: Գլխավոր հրամանատարին ճանապարհելուց հետո Կոտլյարևսկին իր թիկնապահ կազակի հետ սրարշավ կտրեց անցավ ողջ Շուշին, մտավ խանական ապարանքի բակը: Մեհտին, շրջապատված իր բեկերով, ջրավազանի առջև նստած, դայլան էր ծխում:

- Սանի ասաջազամ[18]*...- առանց ծիուց իջնելու, սպառնալից խանին է դիմում քաջ զինվորականը, ապա իջնում ծիուց, մտրակը շարժելով մոտենում սարսափահար խմբին:*

-Ինչո՞ւ ես բարկանում,- քծնանքով ու ահաբեկված դիմեց խանը:

-Ինչպե՞ս համարձակվեցիր ճանապարհ չդնել ռուսաց սարդարին,- հանդիմանեց Կոտլյարևսկին:

Խանը սկսեց ներողություն խնդրել: Հրամայեց մի քանի ջորի բեռնել քաղցրավենիքով ու ընծաներով և ուղևորեց Ռտիշչևի հետևից: Նա ռուս գեներալին հասավ Թարթառ-բազար ավանում: Խանը կովկասյան կառավարչապետից ներողություն խնդրեց և նրան փոխանցեց իր բերած ընծաները:

Աբաս Միրզան վաղուց էր պատրաստվում հարձակվելու և հետ գրավելու Անդրկովկասը: Նրա բանակը վարժեցնում էին անգլիացի սպաները: Ռտիշչևը ծրագրել էր այս հարձակումը կանխել բանակցությունների միջոցով: Սակայն թագաժառանգը այլևս արհամարհում էր ռուսներին: Կոտլյարևսկին իր զորքով անցավ Արաքսը ու անակնկալ հարձակվեց Ասլանդուզ բերդի վրա, որտեղ տեղավորված էր Աբաս Միրզայի գլխավոր բանակը: Թագաժառանգը մի կերպ փրկեց կյանքն ու փախավ: Այս հանդուգն հարձակման համար Կոտլյարևսկուն շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում: Անդրկովկասը փրկվեց պարսիկների ավերիչ հարձակումներից: 1912 թ. դեկտեմբերին Կոտլյարևսկին արշավեց Լենքորանի վրա ու այստեղ ևս անակնկալի բերելով պարսիկներին, գրավեց այն:

Պարսիկները ռուսներից հաշտություն են խնդրում: 1813 թվականի հոկտեմբերի 12-ին գեներալ Ռտիշչևնու պարսիկ Միրզա Աբուլլ Հասան խանը Գյուլիստան գյուղում ստորագրում են դաշնագրությունը:

Այս դաշնագրով Ռուսաստանին է անցնում Դերբենտը, Դուբան, Բաքուն, Թալիշը, Շիրվանը, Շաքին, Ղարաբաղը, Գանձակը, Վրաստանը, Դաղստանը, Շորագյալը: Ռտիշչևը պարսիկներին է թողնում Մեղրին:

Գ մասի հղումների ցանկ

[1] Հակոբ Պողոսյան, «Պատմություն գավառին Արցախու» Եր., Մատենադարան, ձեռագիր նո. 2734, էջ 7 (այսուհետ՝ Հակոբ Պողոսյան):

[2] 44. Ахмедбек Дживаншир, "О политической сущ. К-го Ханства..", Шуша, 1901 стр. 43. Ասվում է, որ ոմն Քերբուլայ Մահմեդ գանձեր փնտրելիս քանդում է պարսպի մի մասը: Այստեղ նա գտել էր պղնձե դրամներ:

[3] Նույն տեղում, էջ 7:

[4] Հակոբ Պողոսյան, էջ 8:

[5] Հակոբ Պողոսյան, էջ 8:

[6] Ռաֆֆի, էջ 261:

[7] Փանահ Ալին Աղդամի կալվածքը գնել էր Մելիք-Շահնազար Բ-ից, մինչև Շուշի գալը:

[8] Գ.Շահամիրյանց, «Ճանապարհորդություն Հայաստանումը», «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 30 սեպտ. 1877 թ., էջ 307-308:

[9] Дубровин III, стр. 211.

[10] Адигезалбек "Карабах-наме", стр. 87.

[11] Գ. Շահամիրյանց, էջ 334:

[12] Հետագայում՝ հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին:

[13] "Акты", т. II, стр. 14, 16

[14] Дубровин IV, стр. 423

[15] Дубровин IV, стр. 441.

[16] Дубровин IV, стр. 448.

[17] В. Потто, "Первые добровольцы Карабаха", Тифлис, 1902, стр. 44-45.

[18] (Թրք.) Քեզ կախելու եմ...

ՄԱՍ Դ (1813-1827թթ.)

1. ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓԱԽՈՒՍՏԸ ՇՈՒՇԻ

Էջմիածնի Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը առիթ էր փնտրում փախչելու, գլուխն ազատելու պարսից բռնատիրությունից: Պարսից թագաժառանգ Աբաս Միրզան հանդուրժողական քաղաքականություն էր վարում հայ եկեղեցու նկատմամբ, որպեսզի այն հեռու պահի ռուսական ազդեցությունից: Սակայն Երևանի սարդար Հուսեին Ղուլի խանը, անտեսելով քաղաքական շահերը, շլացած էջմիածինի հարստությունով, կաթողիկոսից անընդհատ ոսկի էր պահանջում: Երբ այլևս ոչինչ չմնաց ընչաքաղց խանին տալու, Եփրեմը Երևանի մահմեդական հարուստ բեկերից բարձր տոկոսներով պարտք վերցրեց, տվեց սարդարին: Տոկոսներն աճում էին, ու կաթողիկոսին առիթ էր պետք փախչելու պարսից տիրապետությունից: Հուսեին խանը թույլ տվեց Եփրեմին մեկնելու Շուշի, այնտեղի մեծահարուստ վաճառականների օգնությանը դիմելու նպատակով: Եվ ահա 1821 թվականի ձմռանը Եփրեմ կաթողիկոսը իր շքախմբով ճանապարհ է ընկնում: Տաթևում նոյեմբերի 22-ին նրան միանում է սարկավագ Մովսես Թաղիադյանը, որը գրագրի պաշտոն էր վարում:

Սակայն պարզվում է, որ թագաժառանգ Աբբաս Միրզայի ծրագրով պարսկական հալածանքները նպատակ ունեին ստիպելու Եփրեմին, որ կաթողիկոսական աթոռը տեղափոխի Արաքսից այն կողմ՝ սբ. Թադեոսի վանք, որը նախապես վերակառուցվել էր:

Կովկասյան զորքերի հրամանատարի տեղակալ Վելյամինովը, տեղեկանալով հայոց կաթողիկոսի ռուսական սահմանն անցնելու որոշման մասին, Ղարաբաղի կառավարիչ Մեհտի Ղուլի խանին կարգադրում է արգելել նրա մուտքը Շուշի՝ մինչև կոմս Երմոլովից կարգադրություն ստանալը:

Շուշիից պատգամավոր եկավ և Հայրապետին հաղորդեց Մեհթի խանի խնդրանքը՝ սպասել կուսակալի կարգադրությանը:

Երմոլովին թվաց, թե կաթողիկոսի ռուսական սահմանն անցնելը կարող է Ռուսաստանի և Պարսկաստանի միջև պատերազմի պատճառ դառնալ: Նա առերես խիստ վերաբերմունք ցույց տվեց, պահանջելով, որ վերադառնա էջմիածին, կամ հրաժարական տա և ռուսական հողում մնա իբրև մասնավոր անձ: Եփրեմը որոշեց դիմել հայ եկեղեցու Թիֆլիսի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսեսի օգնությանը:

Ներսեսը մեծ հեղինակություն ուներ ռուսաց իշխանություններում: Նա փաստորեն ամփոփում էր հայոց աշխարհիկ և կրոնական իշխանությունները: Նրա մշակութային և լուսավորչական գործունեությունը ևս նպաստեցին, որ Թիֆլիսը վերածվի հայության յուրօրինակ մտավոր կենտրոնի: Նրա գործունեությանը աջակցում էր Երմոլովը: Ներսեսը այն գործիչն էր, որ ռուսաց Անդրկովկաս թափանցելու մեջ փորձում էր միահյուսել հայ ազատագրական շարժումը, ճկունորեն միաձուլել ռուսական արքունիքի և հայոց շահերը: Ներսեսը շահագրգռված էր պատրաստելու և փութացնելու ռուս-պարսկական պատերազմը, որի արդյունքը պետք է լինի Հայաստանի ազատագրումը:

Երմոլովը Հայոց կաթողիկոսի Շուշի գնալու մասին գրեց Ալեքսանդր Առաջինին: Դեկտեմբերի 10-ին Եփրեմ հայրապետի շքախումբը դուրս եկավ Տաթևից և հասավ Գորիս, ուր տեղադրված էր ռուսական զորքի մի գումարտակ: Կաթողիկոսը առանց սպասելու շարունակեց ճանապարհը:

Առատ ձյուն էր տեղում: Հատկապես դժվար է Քաշաթաղի լեռնային ճանապարհներին: Մի պահ ջորիները, որ քաշում էին կաթողիկոսի կառքը, խրտնեցին և, ուր որ է, պետք է կառքը հայրապետի հետ անդունդը գլորվեր: Քաջ Հովսեփը, որ ուղեկցում էր շքախումբը, իր ուսը դեմ տված պահում էր ծանր կառքը, մինչև հասնում են ուղեկիցները ու ազատում կաթողիկոսին: Վեհափառ կաթողիկոսը ձի հեծավ ու դեկտեմբերի 15-ին Շուշիի մատույցները հասավ: Շուշիի հայությանը Անտոն եպիսկոպոսի գլխավորությամբ ընդառաջ եկավ հայոց կաթողիկոսին: Շքախմբին դիմավորելու էին եկել և մահմեդականները՝ Մեհթի Ղուլի խանի գլխավորությամբ:

Շուշին հետաքրքիր է նկարագրում այս ճամփորդության մասնակից Մեսրոպ Թաղիադյանը: *«Շուշի անառիկն համարեալ ամրոց կոգի իմն էր գոգդիր ամբարձեալ ի վերայ քարալերին, որոյ յարևելից կողմանե պարագատեր գետն ընդ որ մեք եկաք, իսկ յարևմտից գետին բխեալ յարևմտեան լերանց, և եկեալ համբուրէին զերեարս հիւսիսոյ ստորոտս նորա»*[1]: Սկզբում 50 հոգանոց շքախումբը տարան շուշեցի մեծահարուստ Հայրումեանց տունը: Սակայն հետո Անտոն եպիսկոպոսը կաթողիկոսին տեղափոխեց Զոհրապ ու Մարկոս Թառումյան եղբայրների տունը:

Շուշիի առևտրական տները ծաղկում էին մի ժամանակաշրջանում, երբ դեռևս չէր հաստատված ռուսաց տիրապետությունը: Ճանապարհների բացակայության պայմաններում ժայռի ծերպից Հախումյաններն ու Թառումյանները ղեկավարում, հսկում էին մեծ առևտուր, երբ Շուշիում մի կարգին շուկա էլ չկար: Նրանք իրար էին կապում Սիբիրն ու Եվրոպան, Հնդկաստանը, Պարսկաստանն ու Ռուսաստանը: Այս հմուտ վաճառականների շնորհիվ Շուշին դարձել էր Անդրկովկասում Թիֆլիսից հետո երկրորդ առևտրական քաղաքը:

Թառումյանները երկրորդ մեծահարուստ վաճառական ընտանիքն էին Շուշիում Հախումյաններից հետո: Վերջիններս ռուսական բանկում ունեին մեկ միլիոն ռուբլի գումար: Ըստ երևույթին, այս տոհմի նախահայրը Հախում հարյուրապետն էր, որի մասին առաջին վկայությունը հանդիպում ենք Աղվանից Հովհաննես Չալալյան կաթողիկոսի գրություններում:

1765 թվականին կաթողիկոսը ուրախություն է հայտնում հարյուրապետին (յուզբաշիին) պանդխտությունից վերադառնալու առթիվ: Կաթողիկոսը, հարգելով նրա խնդրանքը, գրել է Սահիպ խանին, որ նեղություն չտա Հախում յուզբաշուն[2]: Ըստ երևույթին, Հախումը ընտանիքով հայրենի Արցախ է վերադառնում, բնակվում Շուշիում:

Թաղիադյանը գրում է, որ Հախումյանները հետևում էին իրենց տան անվան ու տան արտաքին փայլին ու համբավին: Նրանք քաղաքի փողոցում լապտերների սյունաշար էին տեղադրել և ամեն երեկո վառում էին փողոցի ճրագները: Նրանց հարստության հիմնական աղբյուրը շերամապահությունն էր, մետաքսի ու նժույգների առևտուրը:

Թառումյանները բնիկ Շահկերտցի էին: 1750 թվականին Շահկերտի անկումից հետո Թառումյանները տեղափոխվեցին Երևան: Սակայն Երևանի սարդարը, որը հարստահարում էր բոլորին, սեփականացնում մարդկանց ունեցվածքը, սկսեց հետապնդել Թառումյաններին: Նրանք ստիպված տեղափոխվեցին Փայտակարան: Դեռևս 1808 թվականին Բաքվում տեր դառնալով նավթահորերի, զուգահեռաբար ձեռնարկելով ձկնորսական գործը, Բաբա Թառումյանը մեծ հարստություն է կուտակում: Երբ Բաբան մահանում է Դերբենտում, նրա հարստությունը տեղափոխում են Շուշի՝ Մեսրոպ և Զոհրապ եղբայրների մոտ:

Ժառանգները՝ Զոհրապն ու Մարկոսը, Պարսկաստանում և Ռուսաստանում ձեռնարկած վաճառականությամբ բազմապատկում են այս հարստությունը: Նրանց գործի վրա բազմաթիվ շուշեցիներ էին հարստացել, հետագայում իրենց սեփական գործը ձեռնարկել: Մ.Թաղիադյանը պատմում է, որ մի անգամ Իբրահիմ խանը (Թաղիադյանը սխալմամբ Ահմադ խան է անվանում -Բ) մի առիթով զայրացել էր Թառումյանց եղբայրների քեռու վրա և հրամայել էր «գահավեժ առնել գնա ի ժայռից աստի ի խորախոր ձորոյն»: Ըստ ավանդության, երբ դահիճները նրան ցած են նետում, ուժգին քամին մտնում է նրա երկար ու ծավալուն շորերի մեջ ու մեղմացնում է անկումը, որի պատճառով էլ նա կենդանի է մնում: Այս հրաշքի մասին պատմում են բռնակալին, որը հրամայում է այսուհետ «ազատ շնչել նմա զօդ հասարակաց»: Թառումյան եղբայրները այդ ժամանակ ձեռնարկել էին Ղազանչեցոց քարակերտ եկեղեցու շինարարությունը:

2. ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերը Շուշիում 500 տուն էին, կամ շուրջ 2600 բնակիչ: Քաղաքում կար երեք եկեղեցի՝ Ագուլեցոց, Ղարաբաղցոց և Ղազանչեցոց: Շուշին, չնայած հեռու էր առևտրական ճանապարհներից, շնորհիվ իր գործունյա և ընդունակ բնակչության, վաճառականության յուրօրինակ կենտրոնի էր վերածվել, որ առևտրական աշխույժ

գործարքներ էր ձեռնարկում Պարսկաստանում, Թուրքիայում, Ռուսաստանում և Եվրոպական երկրներում: Հախումյանները, հակառակ Թառումյանների, անվարձահատույց բարեգործության կողմնակից չէին: Նրանք զարգացնում էին առևտուրը իրենց բազմաթիվ «չրաղների» գործակատարների միջոցով, որոնք, ի վերջո, իրենց հերթին վաճառականներ էին դառնում: Շուշին մի առանձին հաճույքով ու եռանդով վաճառականության ոգի էր տարածում Արցախի այլ բնակավայրերում: Իր խանութում գործակատարը իր հերթին ձգտում էր աչքի ընկնել, «մարդ դառնալ»: Հարստանալու տենչն էլ միավորում էր մարդկանց: Ահա այս միջավայրում էլ իրար են ձուլվում քաղաքի եկվորն ու բնիկը: Հախումյանները ողորմություն չէին անում, սակայն մի մեծ հարստություն, հսկա համակարգ բերեցին Արցախ և Շուշի: Բերդաքաղաքի վաճառականը ոչ թե Շուշիում էր շուկա բացում, այլ ուրիշ վայրերում շուկաներ փնտրելով, դրանք միացնում էր իրար: Շուշեցի առևտրականը շրջում էր աշխարհե-աշխարհ, շուրջ 10 տարի գործում տարբեր վայրերում, սակայն նրա երազանքն էր, ի վերջո, հեռանալ կենտրոններից, տուն վերադառնալ, հագնել ավանդական «քոշերը», ազատ ժամանակը վատնել Թոփխանայի շուկայում, «կոլոլակ» ու «ժանգյալով» հաց ուտել ու «քաղաքի իշխան» կոչվել: Սակայն, որոշ ժամանակ անց, այս մեծահարուստները, կարոտելով առևտրական կենտրոնների աշխուժությանը, առնում են իրենց ընտանիքներն ու տեղափոխվում: Նրանց փոխարեն նոր գյուղացիներ են գալիս Շուշի: Մ.Թաղիադյանը գրում է, որ Շուշիի բնակիչները, կին թե տղամարդ, առույգ են և աշխույժ: Կանայք գոգնոց են կրում, որը պահպանում է զգեստը աղտոտվելուց: Աղջիկները ծայրագույն պատկեր են ամոթխածության, «գեղեցիկ են յոյժ և ախորժատեսիլք», այտերը կարմիր են, ինչպես զույգ խնձորներ, իսկ ծամերը ուսերով ցած են սահում մինչև ներբանները: Եթե նրանք չգերազանցեն, ապա հավասար են Վրաստանի գեղեցկուհիներին, միայն այն տարբերությամբ, որ սրանց մոտ իշխում է ամոթը, իսկ նրանց մոտ՝ աշխույժը:

Ինչպես նկարագրում է ազգագրագետ Ե. Լալայանը, աղջիկները, սկսած ամենահարուստից մինչև ամենաաղքատը, մաքուր են հագնվում, հագուստներից կախում են դրամներ, մեջքին կապում արծաթե քամար, գլխներին ձգում կարմիր դիպակ (չարղաթ), որպեսզի կարմրություն տա երեսին և գեղեցիկ երևան, քայլում են սիգաձեմ,

երկար ծամ են պահում և գեղեցիկ են հյուսում, գոտին պինդ կապում են, որպեսզի կուրծքը դուրս ցցված երևա: Աշխատում են ամոթխած երևալ և երիտասարդներին տեսնելիս երեսները դարձնում են դեպի պատը ու աչքի տակով նայում: Փողոցում պատահելիս աղջիկը կանգ է առնում մինչև երիտասարդի անցնելը, իսկ վերջինս մի բան ասում է ու հեռանում: Քաղաքը լի է Պարտավից, Ավետարանոցից, Շաքիից, Շամախուց և Գանձակից բերած ազնիվ գինիով: Շուշեցի կանայք մետաքսից պեսպես գործվածքներ են գործում, իսկ տղամարդիկ վաճառական են կամ երկրագործ: Այստեղ երկու տեսակի նժույգներ են պահում, մեկը դարաբաղյան ցեղն էր, որին դիլիբոզ են անվանում, մյուս տեսակը՝ արաբական:

Երիտասարդ Թաղիադյանը Շուշիում հանդիպում է իր ուսուցչին՝ Պողոս վարդապետ Ղարաբաղցյանին և իր ուսուցչի ուսուցչին՝ այդ ժամանակ մեծ հռչակ ունեցող Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյան Արցախեցուն, որոնց Շուշիի երևելի գերդաստանները՝ Հովհաննես և Կարապետ Մարկոսյանները, Թառումյանները, Աղա Բաբա Հախումյանը, Մնացական Ջալալյանցը և ուրիշներ հրավիրել էին իրենց ուստերին և դուստերին դաստիարակելու և կրթելու համար: Թառումյանենց տան սենյակներից մեկը դասասենյակի էր վերածվել: Այս օրերին է, որ երիտասարդ սարկավագը սիրահարվում է Թաղիադյանների տան գեղեցկուհի օրիորդներից մեկին:

Հովսեփ վարդապետը աստվածաբանության, տրամաբանության, ճարտասանության և քերականության մասնագետ էր, հայտնի էր և Գանձասարի ու Սբ.Հակոբա վանքերում իր կրոնական կենցաղով ու դպրոցներով: Նա թողել էր մի շարք գրավոր աշխատություններ՝ գրաբարից աշխարհաբար բառարանը, համառոտ տրամաբանություն, քերականություն: Նա Շուշիում երկար չմնաց և կրկին գնաց Գանձասար և Սբ.Հակոբավանք՝ վանական դպրոցներում շարունակելու դասավանդումը: Շուշիի հարուստ վաճառականներն ու ազնվականները իրենց երեխաներին ուղարկում էին Սբ.Հակոբավանք՝ Հովսեփ վարդապետից դասեր առնելու համար: Մեսրոպ Թաղիադյանը դիմում է մեծահամբավ Հովսեփ Իմաստասերին՝ «նորոգ պայծառ տրամաբանություն» ուսանելու խնդրանքով: Վարդապետը մեղմորեն դիմում է Մեսրոպին.

- *Որդեակ իմ, գիտե՞ս որքան արժե նժույգն օդապարիկ:*

- *Մինչև հազար ոսկի,*- պատասխանեց Մեսրոպը:

- *Եվ գիտե՞ս, որ նժույգը գնելն ու վաճառքը վավերացվում է քաղաքի դատավորի կնիքով, որով հաստատվում է նժույգի ցեղական ու մաքուր լինելը:*

- *Դիցուք, թե,*- չկռահելով, թե ուսուցիչը իր խոսքը ինչի է բերում, արտաբերեց սարկավագը:

- *Իհարկե, դու ոչ գնելու ես, ոչ էլ վաճառելու, բայց մի օր էլ կգնաս գրոսնելու կամ էլ ջրաղացից աղաս կրելու...*

- *Բնավ ոչ, տեր հայր, ափսոս է նման ազնիվ երիվարը գրաստի փոխարեն բանեցնելը:*

- *Արդար ես, որդեակ,*- ասաց արցախցի ուսուցիչը,- որքան արժեք ունենա երիվարը, դրա քառապատիկ ծախք պետք ունի հեծնողը:

- *Ախ, մի այդպիսի ծի, հայր սուրբ, և այն ժամանակ կտեսնեիր, թե մինչև ուր փախչելով կհեռանայի ես:*

- *Հենց դրա համար էլ եկել եմ ես,*- փութով պատասխանեց ուսուցիչը: Մեսրոպին թվաց, թե նա իրավ նման ազնիվ երիվար ունի:

- *Քո օդապարիկ նժույգը ուսումն է, որն էլ որքան հոգս լինի քեզ հիմա, մի օր էլ իր հեծյալին կյանք կտա, կփրկի նրան վտանգից: Դու մի նախանձիր քո եղբայրների ձայնին, նրանց ձայնը հազիվ տնից տուն է հասնում: Դու սովորիր, և քո համբավը աշխարհից աշխարհ կհասնի:*

Տրամաբանության դասերը զուգորդվում էին պրակտիկ կյանքի դասերի հետ:

Երբ Թառումյանենց տանը ճոխ ճաշկերույթի էին հավաքվել, Զոհրապը զրնգացնելով ոսկու քսակը, դիմում է երիտասարդ հոգևորականին՝ Մեսրոպին.

- *Խոխա, մին տաղ ասե:*

- *Ձայն չունեմ, աղա...*- հանկարծակիի գալով խեղճացած ասաց Մեսրոպը:

Սարկավագի համար, այն էլ էջմիածնից եկած, դա ամենամեծ խայտառակությունն էր: Սակայն կաթողիկոսն ու եպիսկոպոսները Մեսրոպին սիրում էին ու գնահատում նրա գրական ձիրքի ու առողջ տրամաբանության համար: Մեսրոպի համար առավել ցավալի էր, քանի որ այդ մասին անպայման կտեղեկանա իր սիրելի աղջիկը: Մեսրոպը գաղտնի հանդիպումներ էր ունենում օրիորդի հետ:

Զոհրապը դիմեց կաթողիկոսին.

- Ստա, լիա յեախավըտ շոռ օնեմ, հայր սուրբ, խե պերալըս էս խոխաս...

Վաղ առավոտյան վեհապետը իր մոտ է կանչում Մեսրոպին.

- Որդեակ,- ասում է եփրեմ կաթողիկոսը,- *գնա, մի քարոզ գրիր քաղաքի դատավորի վրա և բեր:*

Սուրբ գրքի վկայությունների վրա հենվելով, Մեսրոպը մի քարոզ գրեց: Երեկոյան Շուշիի հինավուրց սբ. Աստվածածին եկեղեցում Աղոթքի արարողությունից հետո Մեսրոպը բեմից ընթերցեց քարոզը, որը շատ հավանեցին թե եկեղեցականները և թե աշխարհիկ մարդիկ: Զոհրապը, որ բոլորին հյուրասիրության է կանչում, մի ընծա տվեց Մեսրոպին, նրա խոսքը շատ ավելի բարձր դասելով, քան մյուս սարկավագների հնչեղ ու երգեցիկ ձայնը:

- Որտեղա՞քի ես,- Մեսրոպին է դիմում Զոհրապը:

- Երևանցի Թաղադեանց Դավթի որդին:

Զոհրապը զարմանում է, ապա պատմում, թե ինչպես էր ինքը փախչելով Երևանի Մահմատ խանի հալածանքներից, դիմել էր Թաղիդյան Դավթի օգնությանը: Նրա մայրը՝ Աննան, արկղի մեջ թաքցնում է Զոհրապին, պարսիկ զինվորները, որ փնտրում էին նրան, չեն գտնում ու հեռանում են: Դավիթը ճանապարհածախսի փող, ուտելիք է դնում հետը և, գաղտնի դուրս բերելով Երևանից, ճանապարհում: Վերադառնալով Դաղստանյան պատերազմից, որտեղ ապաստամբել էին Դաղստանի ժողովուրդները՝ ավարցի իման Շամիլի գլխավորությամբ, Երմոլովը նամակով կարգադրում է կաթողիկոսին վերադառնալ էջմիածին՝ այդպես խուսափելով Ռուսաստանի դաշինքը Պարսկաստանի հետ խախտելու առիթ ստեղծելուց: Կոմս Կարլ Նեսսելրոդեի նամակում հայտնվում է, որ ռուսաց կայսրը համամիտ է Երմոլովի կարծիքին[3]:

Ներսես Աշտարակեցին 1822 թվականին հունվարի 23-ին Շուշի՝ Եփրեմ կաթողիկոսին ուղարկած նամակում գրում է, որ ինքը այցելել է իշխան Մադաթովին ու կոմս Երմոլովին, և որ վերջինս շուտով նամակ կգրի կաթողիկոսին:

Եփրեմ կաթողիկոսը խիստ անհանգիստ էր: Նա վճռում է Ներսես արքեպիսկոպոսի մոտ՝ Թիֆլիս ուղարկել Անտոն եպիսկոպոս Մուղնեցուն և Հովհաննես վարդապետ Ղրիմեցուն: Որպես գրագիր իրենց հետ տանում են Մեսրոպ Թաղիադյանին: Գանձասարի ճանապարհին նրանք հյուրընկալվում են Խաչենի հովտում գտնվող Մելիքվանու Ծիրանաքար կոչվող կալվածքում:

«Երկիրն նորա առատ էր հացիվ և մեղրբ, երիվարք նորա ընտիրք և բնակիչք ամենայն հայք և տիրասերք յոյդ»,- գրում է Մ.Թաղիադյանը: Այստեղ հանդիպում են մեծանուն հայ գուսան Ալավերդուն, որ կույր էր երկու աչքից: Թիֆլիսի ճանապարհին նրանք լինում են մելիք Բեգլարյաններին պատկանող Դիզա և Դիզափայտ գյուղերում, որը Թարթառի ափին էր[4]:

Անտոն եպիսկոպոսի խումբը Թիֆլիսի ճանապարհին հյուրընկալվում է Գյուլիստանի մելիքական տանը, ապա Գանձակում:

Ներսես արքեպիսկոպոսը վճռում է մեկնել Շուշի և կաթողիկոսի հետ վճռել Մայր Աթոռի ճակատագիրը:

Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին 1822 թ. մայիսի 25-ին իր շքախմբով դուրս գալով Թիֆլիսից, հունիսի 8-ին հասնում է Շուշի: Նրան հյուրընկալում է Թառումյանների ընտանիքը: Ներսեսի շքախմբի մեջ էր Տեր-Հարություն Ալամդարյանը, որը պաշտոնավարում էր Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Թիֆլիս էր եկել դասավանդելու Ներսես Աշտարակեցու հիմնած (Ներսիսյան) դպրոցում, ինչպես և Տեր-Եսայի Նազարյանը (Ստեփանոս Նազարյանի հայրը):

Մարկոս Թառումյանը մահամերձ էր: Խնդրեց Ավետարանից մի հատված ընթերցել: Նա եփրեմ կաթողիկոսի խնդրած չորս հազար ոսկու փոխարեն նվիրում է ութ հազար ոսկի: Կաթողիկոսի, արքեպիսկոպոսի և եպիսկոպոսների ներկայությամբ Մարկոսը հիվանդ և ուռած ոտքը դնում է ոսկու պարկի մեջ և ասում.

- Անպիտա՛ն դիրդ, ապաքինեա՛ց, եթե կարող ինչ իցես, դու չաստվա՛ծմոլորդութեան աշխարհի...

Մարկոսը օրական 500 ռուբլի էր բաժանում աղքատներին, որ Աստծու բարությամբ բուժվի իր հիվանդությունը: Մահվանից առաջ Մարկոսը, հակառակ եղբոր՝ Զոհրապի կամքի, կարգադրում է ոչնչացնել իր պարտապաններից ստացած մուրհակները, ազատելով նրանց պարտքերից:

Մեծահարուստ Մարկոսի թաղմանը մասնակցելու են գալիս շատ ու շատ քաղաքների հայ առաջնորդները, Արցախի իշխանները, ռուս սևազգեստ զինվորականները, մահմեդական բեկերը: Շուշի եկավ և Սյունեաց Մարտիրոս արքեպիսկոպոսը, որը Թառումյանենց

տան առաջ համբուրեց Ներսես Աշտարակեցու աջը, այդպես ցուցադրելով, թե իրականում ով է կաթողիկոսը: Մեսրոպ Թաղիադյանը այս թաղման արարողությունը իր փառավորությամբ և ճոխությամբ համեմատում է հայոց մեծ Արշակունի Արտաշես թագավորի թաղման հետ:

Թաղումից հետո Եփրեմն ու Ներսեսը փոքր խմբով մեկնում են Գանձասարի վանք:

Այստեղ նրանք հանդիպում են 1815 թվականին վերացված Աղվանից կաթողիկոսական աթոռի փոխարեն Աղվանից մետրոպոլիտություն ստացած Սարգիս Ջալալյանցին:

Ներսեսը երիտասարդ Մեսրոպին հանձնարարում է արտագրել Գանձասարի վանքի պատերի ու խաչարձանների գրությունները: Հնուց ի վեր ընդունված էր, որ վանքին նվիրատվություն անող ցանկացած մարդ իրավունք է ձեռք բերում տաճարի կամ գավթի պատերին մի քարի վրա արձանագրելու իր նվիրատվության մասին: Այսպես վանքի պատերը պարունակում են 260 արձանագրություններ, որոնք որոշ լույս են սփռում անցյալ դարերի իրադարձությունների մասին:

Եփրեմ Կաթողիկոսը հրաժարվում է էջմիածին վերադառնալ: Նա խնդրում է Ներսեսին, որ իրեն հնարավորություն տրվի հիմնավորվելու Հաղբատի վանքում, որն այն ժամանակ ռուսաց տիրապետության սահմանագլխին էր: Ծերունի կաթողիկոսը Գանձակից օգոստոսի 5-ին մի ձևական հրաժարական գրեց ռուսաց ինքնակալին, պարսից թագաժառանգին և իշխան Գոլիցինին, դրանով ցույց տալով, թե որչափ անտանելի է հայ ժողովրդի ու հայոց կրոնապետի դրությունը պարսկական իշխանության ներքո, որ կրոնապետը փախչելով կեղեքումներից, փնտրում է ռուսաց կայսրի հովանավորությունը: Եփրեմը, բնակվելով Հաղբատում, շարունակում էր Ամենայն հայոց ծայրագույն կաթողիկոս մնալ: Պարսից կառավարությունը պահանջեց Եփրեմից վերադառնալ էջմիածին: Սակայն Ներսեսը պատասխանեց, որ կաթողիկոսը էջմիածին կվերադառնա այն ժամանակ, երբ կվերանան Երևանի սարդարի կեղեքումները:

Մեսրոպ Թաղիադյանը մեկ տարի հետո կաթողիկոսի թույլտվությամբ հեռանում է Հաղբատից ուսումը շարունակելու նպատակով: Մեսրոպը վճռում է Հնդկաստան մեկնել: Ելիզավետպոլում նա հորաքրոջից ստանում է 200 ռուբի, որին Խաչատուր վարդապետը

գումարում է ևս 30 ռուբի: Սակայն դա քիչ էր Հնդկաստան ճամփորդելու համար: Վճռում է դիմել Շուշի իր ծանոթ մեծահարուստներին: Շուշի հասնելով Մեսրոպը բախում է Թառումյանենց դուռը: Սակայն տան ներսից նկատելով Մեսրոպին, դուռը չեն բացում, ասելով.

- Մի բացեք, մի բացեք,- ապա հարցնում են,- *իրո՞ք Մեսրոպն ես, թե չէ..*

Մեկ այլ ձայն ասում է.

- Ա՛ծե ատրճանակս, շուտ ա՛ծե... պրծե՛...

Մեսրոպը վիրավորված նման ընդունելությունից, գնում է Մնացականյանների տան կողմը: Այստեղ Մնացականը տեսնելով նրան, դուռը փակում է երեսին: Մեսրոպը իր ուղեկցի՝ Սուքիի հետ գնում է վաճառականի պանդոկը՝ այնտեղ գիշերելու նպատակով:

Մնացականը հեռվից հետևում է նրան ու դիմում Սուքիին.

- Ատա ափի, լիա տիրացուտ հուվա՞:

- Քյինա, քնծահար,- պատասխանեց Սուքին,- *քուռացալը՞ս...*

Մնացականը գալիս փարվում է Մեսրոպին ու ասում.

- Ատա, քըմատաղ, Մսրոբ, տու հլա մեռալ չը՞ս, խե բա ըսեսը՞ն...

Նա պատմեց, որ Հաղբատից լուր էր եկել, թե Մեսրոպը մահացել է, այդ առիթով Թառումեանց տանը սուգ էր եղել, ու Ղազանչեցոց նորաշեն եկեղեցում պատարագ են մատուցել: Իսկ երբ հայտնվել էր, միամիտ շուշեցիները սարսափել են, մտածելով, թե գերեզմանից է ելել:

Թառումյանները ջերմությամբ ընդունեցին տաղանդավոր գրողին:

-Եթե Թիֆլիս կամ Հաղբատ չես գնալու,- ասում է Զոհրապը,- *մնա Շուշիում, կպսակեմ քեզ:*

Զոհրապը տեղյակ էր իր զարմուհու հետ Մեսրոպի սիրային կապի մասին:

-Պսակս ուսումն է,- պատասխանում է Մեսրոպը,- *ինչ ծախս պիտի անես պսակիս, ուսմանս շնորհիր, և հավիտյանս կօրհնեմ քո կյանքը:*

-Քանի՞ բասի օնես, խոխա,- հարցրեց Զոհրապը:

-Երկուհարյուր ու երեսուն, որ Խաչատուր վարդապետը տվեց:

-Սուրբ փող է դա,- ասաց Զոհրապն ու 170 ռուբի տվեց:

Հետագայում Զոհրապը տալիս է ևս 5 հազար ռուբլի, որն այն ժամանակ մեծ գումար էր, և ուղարկում ուսման:

Տաղանդավոր երիտասարդը՝ Մ.Թառումյանը, 1823 թվականի վերջերին հասնում է Հնդկաստանի Կալկաթա քաղաքը, մտնում տեղի հայոց վարժարանը: Երուսաղեմի նվիրակ Աբրահամ վարդապետի շնորհիվ ծանոթանում է անգլիացի եպիսկոպոս Ռիջինալդ Հեբրի հետ, որը իր ծախսով Մեսրոպին ուսման տվեց անգլիական վարժարանում: Այստեղ Մեսրոպը սովորում է լատիներեն, անգլերեն, հունարեն և պարսկերեն, ինչպես և տարբեր արհեստներ: Շնորհալի երիտասարդը նշանակվում է Կալկաթայի եպիսկոպոսական ճեմարանի գրաքննիչի պաշտոնում: Հնդկաստանում Մեսրոպ Թաղիադյանը ծանոթանում ու մտերմանում է մի շուշեցի մտավորականի՝ Տեր Բաղդասար քահանա Գասպարյանի հետ, որը ճանապարհորդելով Հնդկաստանում, իր տպավորությունները գրել է բանաստեղծությունների ձևով: Նրա ձեռագիրը վերցնում է Մեսրոպը՝ տպագրելու նպատակով[5]:

Տեր Բաղդասարը, սկսած կասպիականի ափերից մինչև Միջերկրական ծովը, շրջել է տարբեր քաղաքներում, նկարագրել իր տեսածը, գիրքն անվանել «ծաղկաքաղ»: Շուշեցի այս մտավորականը գրում է, որ անգլիացին, ֆրանսիացին, ռուսը, երբ շրջում է աշխարհ-աշխարհ, գրում է իր տեսածի, զգացածի մասին, և դրանք տպագրում են: Իսկ հայերը չպահեցին այս մշակույթի նախաշավիղները, և ուրիշները անցան մեզանից: Եվ ահա ինքը վերականգնում է այս մշակույթը:

Իհարկե, զարմանալի չէ շուշեցի Տեր-Բաղդասարի հեռավոր Հնդկաստանում հայտնվելը, քանի որ Շուշիի վաճառականներին արդեն կարելի էր հանդիպել սկսած արևելյան երկրներից՝ Հնդկաստանից ու Չինաստանից մինչև արևմտաեվրոպական երկրները:

Մատենագիր Մեսրոպ Թաղիադյանը Նոր Զուղայի վանքում հիմնում է Ամենափրկչեան ճեմարանը:

3. ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Այդ տարիներին էլ Շուշիում սկիզբ է առնում դպրոցական շարժումը, որի հիմնադիրն է Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերությունը»: Այս կազմակերպությունը 1822 թվականի ձմռանը Պետերբուրգում ձեռք բերելով Կովկասում գաղթականության օջախներ, դպրոցներ, տպարաններ հիմնելու թույլտվությունը, «Աստծո խոսքը տարածելու համար» գալիս է Կովկաս և ընտրում Շուշի քաղաքը: Նրանցից աչքի են ընկնում Ավգուստ Դիտրիխն ու Ֆելիցիան Զարեմբան: 1823 թվականին նրանք հողատարածք են գնում հայկական և թաթարական թաղերի միջև «Դաբաղի ձոր» տեղանքում, եռահարկ տուն կառուցում, որը հայերը «Լեմսի տներ» էին կոչում: *«Քրիստոնյաների համար մենք կհիմնենք ուսումնարաններ, ուր կավանդվի աստծո խոսքը, որը հավասարապես պատկանում է բոլոր քրիստոնյաներին: Մենք գիտենք, որ մարդ ինչ եկեղեցու էլ պատկանա, կփրկվի, եթե սիրտը նվիրի աստծուն»,-* ասում էին բազելցի միսիոներները: Նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին հայերի վրա: Միսիոներները գրում էին. *«Թեպետ մենք մտադիր ենք սկզբում մի քանի տարի շարունակ առանձին ուշադրություն դարձնել Աստծո խոսքը տարածելու միայն հայերի մեջ և նրանց համար ուսումնարաններ հաստատելու, բայց մեր իրական նպատակն է ապագա ժամանակներում առավելապես մահմեդականների մեջ քարոզելու փրկիչ Քրիստոսի ավետարանը»: «Մեր շրջագայության ժամանակ հայ ազգը մենք գտանք շատ արտասովոր վիճակում, տգիտության մեջ»,-* ասում էին բազելցի քարոզիչները: Նրանց Շուշի գալուն նախորդել էին բավականին հետաքրքրաշարժ իրադարձություններ, որոնց մասին որոշ մանրամասներ է հաղորդում անգլիացի ճանապարհորդ Լինչը, որը Հայաստան էր այցելել 1890-ական թվականներին[6]:

Եվրոպացի բողոքական քարոզիչները, ուշի ուշով հետևելով Ասիայում տեղի ունեցող իրադարձություններին, որոշում են, որ արդեն հասունացել է Հնդկաստանից սկսած դեպի Արևելք ընկած երկրներում մահմեդականներին քրիստոնեական հավատքի բերե-

լու ժամանակը: Եթե անգլիացի միսիոներները մկրտելու խնդրում անհաղթահարելի դիմադրության են հանդիպում, ապա գերմանացի ավետարանականները այլ ծրագիր են ընդունում: Նրանք Վիտենբերգի պրուսական թագավորության բնակիչների շրջանում իրենց քարոզներով լուր են տարածում, թե շուտով սպասվում է Փրկչի գալուստը, որը մեծ դատաստանով կավերի երկիրը, կպատժի մարդկանց՝ բացի իր իջևանած վայրից, որի բնակիչները արքայության մեջ կապրեն: Նրանք ասում էին, որ դա ստույգ տեղի կունենա 1836 թվականին, Կասպից ծովի մերձակա Կուր-Արաքսի դաշտավայրում:

Եվ ահա 1500 ընտանիք գերմանացի շվաբներ դուրս եկան Վյուտենբերգից և շարժվեցին դեպի իրենց անհայտ երկիրը, ուր պետք է իջներ Աստծու Որդին: Ուխտավորների 2/3-ը մահացան՝ չհասած Օդեսա: Մի երկրորդ խումբ, շուրջ 100 ընտանիք, 1817 թվականին հասան Վրաստան և տեղավորվեցին Թիֆլիսի և Ելիզավետապոլի նահանգներում՝ հիմնելով Ելենենդորֆ և Աննենֆելդ բնակավայրերը: Բողոքական եկեղեցու հայրերի նպատակն էր Պարսկաստանի սահմանամերձ շրջաններում բողոքականների գաղութներ ստեղծելով, դրանք դեպի Պարսկաստան և մահմեդական այլ երկրներ քարոզչական աշխատանքի բազաների վերածել ու այդպես նվաճել Արևելքը, խաղաղ ճանապարհով անել այն, ինչ միջնադարում զենքի միջոցով չկարողացան խաչակրաց արշավանքները:

Եվ Բազելի ավետարանական ընկերության անդամներ Զարեմբան ու Դիտրիխը 1821 թվականին ընդունվում են Ալեքսանդր կայսեր կողմից, որը հովանավորում էր գերմանացիների այս ծրագիրը, նրանց շնորհում որոշակի արտոնություններ, մասնավորապես՝ մկրտելու իրավունքը, տպարան և դպրոցներ հիմնելը: Նրանց թույլ տրվեց գերմանական գաղութներում եկեղեցու հոգևոր առաջնորդներ նշանակել:

Գեներալ Երմոլովը հասկանալով, որ պատերազմն անխուսափելի է, ձգտում է նախապես թուլացնել պարսիկների մահմեդական գլխավոր հենակետերը: Այս գործի իրականացնողն էր Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունների կառավարիչ գեներալ Մադաթովը: Նա 42-րդ եգերյան գունդը տեղափոխել էր իր կալվածքը՝ Ավետարանոց գյուղը: Շաքիի և Շիրվանի խանությունները վերացնելուց հետո հայ զորավարը չէր շտապում վերացնել Շուշիի խանությունը, քանի որ դեռևս անձնական հարցեր ուներ լուծելու խանի հետ: Քանի որ բացահայտված էր Մեհտիի կապը Աբաս Միրզայի, ինչպես և իր եղբոր հետ, խանը մշտական երկյուղի մեջ էր Մադաթովից: Խանը միշտ փորձում էր սիրաշահել կալվածք չունեցող իշխանին, նրան շնորհելով Մելիք - Շահնազարյանների կալվածքները: Մեհտին այս առումով գործելու այնքան մեծ ազատություն ստացավ, որ հայ իշխանների ժառանգական կալվածքները հատուկ ֆիրմաներով նվիրում էր իր ազգակիցներին ու համախոհներին: Մադաթովը ստանալով իր ուզածը, 1822 թվականի նոյեմբերին խանի եղբոր որդու՝ Զաֆար Ղուլիիի հետ Շուշիում մի դավադրություն է նյութում, որն էլ վերջ է տալիս խանությանը: Նոյեմբերյան մի գիշեր Մադաթովն ու Մեհտիի հակառակորդ Զաֆարը թուղթ էին խաղում ու պայմանավորվում գործողության մանրամասների մասին: Կեսգիշերին Զաֆարը տուն էր վերադառնում, երբ հանկարծ կրակոցներ են տարածվում շուրջը, առավոտյան լուր է տարածվում, թե խանը փորձել է սպանել Զաֆարին, վերջինս թևից թեթև վերք էր ստացել: Մադաթովը հրամայում է ձերբակալել խանի մարդկանցից մի քանիսին:

Թուլամորթ ու վախկոտ Մեհտին նոյեմբերի 21-ին փախչում է, թողնելով ընտանիքը Շուշիում: Նա հայտնում է, թե իբր գնում է Թիֆլիս՝ երմոլովին բացատրելու իրավիճակը և իր անմեղությունը: Մելիք Վանին Թարթառ ավանի մոտ հասնում է Մեհտիին և համոզում, որ Թիֆլիս չգնա, քանի որ այնտեղ նրան պատիժ է սպասում: Մեհթին ետ է դառնում ու Երևանի ճամփան բռնում: Այսպես վերջանում է հայոց Ղարաբաղի վրա թաթարական բռնատիրական խանությունը:

4. ՊԱՐՍԻՑ ԲԱՆԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Պարսից թագաժառանգ Աբաս Միրզան, շրջապատված Անդրկովկասից փախած խաներով, ծրագրում էր մահմեդականների ապստամբության հսկա ալիք բարձրացնել Անդրկովկասում և Դաղստանում ռուսական տիրապետության դեմ, որն էլ կհեշտացներ պարսից բանակի գործողությունները:

1825 թվականի նոյեմբերին Ալեքսանդր կայսեր վախճանվելը որոշ խառնաշփոթ ստեղծեց Ռուսաստանում, որից և փորձեցին օգտվել պարսիկները:

Ալեքսանդրը ժառանգ էր կարգել իր կրտսեր եղբորը՝ Նիկոլային: Ռուսական բանակում Կոստանդինի կողմնակիցները որոշ խլրտումներ առաջացրին Նիկոլայի դեմ: Նիկոլայը արագորեն ճնշեց ապստամբության փորձը: Ըստ երևույթին, ապստամբության լուրը չափից դուրս ճոխացված էր հասել Պարսկաստան, ու Աբասը ակնկալում էր, թե առանց դիմադրության կգրավի ողջ Անդրկովկասը:

Երմոլովը, որը դեռևս չէր սպասում պարսից բանակի հարձակմանը, Դաղստան էր մեկնել՝ ճնշելու Իմամ Շամիլի ապստամբությունը:

Եվ ահա հուլիսին պարսից բանակը մեկ Շորագյալից՝ Երևանի Հուսեին Դուլի խանի, ապա և Ղարաբաղի ուղղությամբ՝ Աբաս Միրզայի հրամանատարությամբ, մտնում է Անդրկովկաս: Մահմեդականների ապստամբությունը բռնկվում է Ղարաբաղում, Շաքիում, Շիրվանում, Գանձակի, Բաքվի և Թալիշի խանություններում:

Երմոլովը, գլուխը կորցրած, իր հույսը կապում է հայերի հետ: Ներսես Աշտարակեցին իր դպրոցի տպարանում տպագրում է շրջաբերական կոչ՝ ուղղված հայ ժողովրդին: Նա կոչ էր անում հայերին զենք վերցնել և ռուս զինվորների հետ համատեղ պաշտպանել երկիրը:

Գեներալ Մադաթովը պարսկական արշավանքի ժամանակ Արցախում չէր: Նա մեկնել էր Պյատիգորսկի հանքային ջրերը՝ պատերազմներում ստացած վերքերը բուժելու համար:

Հուլիսի 18-ին կազակների ուղեկալ ջոկատը ստուգում էր Արաքսի ափը: Հինգ հոգի գնացին դեպի կամուրջը: Նրանց հիմնական նպատակն էր հայտնաբերել Պարսկաստանից հաճախակի դեպի Արցախ ասպատակող ավազակային խմբերն ու ոչնչացնել կամ հետ քշել նրանց: Նրանք թողեցին ձիերն ու աննկատելի մնալու նպատակով ոտքով շարունակեցին ճանապարհը:

Երկու ժամ հետո, երբ հետ էին դառնում, տեսան պարսից զինվորների 300 հոգանոց հեծյալ խումբը, որը կապկպել էր իրենց ընկերներին ու դեպի թաթարական գյուղն էին շարժվում:

Հաջորդ օրը արշալույսին հայ սուրհանդակները դուրս գալով Շուշիից, շտապեցին Թիֆլիս՝ իրենց հետ տանելով Ղարաբաղի պարետ մայոր Չելյանի նամակը Երմոլովին: Չելյանը հայտնում էր, որ Պարսից թագաժառանգ Աբաս Միրզան 60 հազարանոց զորքով ու 30 թնդանոթներով մտել է Ղարաբաղ և շարժվում է դեպի Շուշի: Պարսից զորահրամանատարին կամրջի մոտ դիմավորում է թաթարական պատվիրակությունը Զեբրայիլի կալվածատեր Հաջի-Աղա-Բեկի գլխավորությամբ, որը ռուսական ծառայության մեջ էր և կապիտանի աստիճան ուներ: Ավանդությունը պատմում է, որ Աղալարի տանը հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ սպասավորի ձեռքից ցած է ընկնում մատուցարանը, ջարդվում է չինական հախճապակե թանկարժեք սպասքը: Թագաժառանգը, որ նկատում է այս դիպվածը, մտահոգվում է և դիմում գուշակի օգնությանը: Սա ասում է՝ *«Տեր իմ, երկու մեծ ճակատամարտերում կորցնելու ես զորքերդ, իսկ հետո անհավատները մտնելու են Իրան և կոտորելու քո վերջին ուժերը»:*

Թագաժառանգը, դժգոհ այս գուշակությունից, խոստացավ վերադարձին կախել գուշակին, ու շտապեց դեպի Շուշի: Թագաժառանգի գլխավոր նպատակը Թիֆլիսը գրավելն էր, սակայն նա որոշեց մինչ այդ գրավել Շուշին: Ռուսական հրամանատարությունը Ղարաբաղում թողել էր միայն 42-րդ եգերյան գունդը՝ 2700 զինվորներով, 400 կազակներով ու վեց թնդանոթով: Գնդի հրամանատարն էր կովկասյան պատերազմի հերոս, Ախալքալակի ճակատամարտում[7] աչքի ընկած գնդապետ Իոսիֆ Անտոնովիչ Ռեուտը, որի կրծքին շողում էր սբ.Գևորգի խաչը: Երմոլովը հայ սուրհանդակների միջոցով հաղորդեց, որ Շիրվանից օգնության կգա երկու վաշտ, և հանձնարարում է ամրացնել Չանախչիի շտաբը: Ռեուտի տրա-

մադրության տակ մնացել էր հինգ վաշտ: Երեք վաշտ Գորիսում էր, որոնց հանձնարարել էր Շուշի շտապել: Չանախչիի բերդը պատրաստ չէր դիմակայելու պարսիկների պաշարմանը, ուստի Ռեուտը որոշեց նահանջել Շուշի: Չելյանը հայտնեց Ռեուտին, որ պարսիկները շտապում են կարճ ճանապարհով կտրել դեպի Շուշի նահանջի ճանապարհը, և շուտով կհայտնվեն Խաչին տափ (Թոփխանա) տեղամասում: Շուշիում բնակվող մահմեդականները ծրագրել էին գիշերը հարձակվել բերդում գտնվող վաշտի վրա և կոտորել բոլորին: Ավետարանոցում թողնելով գնդի ունեցվածքը, Ռեուտը շտապեց Շուշի հասնել և ամրանալ այնտեղ:

Ջիվանշիրի քոչվորները հարձակվեցին գնդի գումարտակի վրա, որ մթերք էր տանում, ու թալանեցին այն: Նրանք թալանեցին և Ամարասի վանքը:

Բերդաքաղաքի տակ ռուսները տեսան հայերի դիակներ: Աբաս Միրզան յուրաքանչյուր հայի գլխի համար ոսկի էր խոստացել իր զինվորներին:

Պարսիկները Անդրկովկասում ռուսական զենքի հաջողությունը կապում էին նրանց նկատմամբ ցույց տված հայ բնակչության օգնության հետ: Ինչպես թուրքերը բացեիբաց հայտարարում էին, որ եթե չլիներ հայերի աջակցությունը, ապա ռուսները երբեք չէին կարող գրավել Անդրկովկասը: Սակայն պարսից արքունիքը այլևս չուներ Նադիրի քաղաքական հնարամտությունն ու ճկունությունը: Եթե Նադիրը մեծ առավելություններ ու արտոնություններ, ինչպես և ինքնավարություն էր շնորհում հայ իշխաններին ու զորականներին, ապա նրա հետնորդները միմիայն մտածում էին հայերին կեղեքելու մասին: Իսկ Աբաս Միրզայի զորքն ահա անխնա կոտորում էր հայերին: Հաջորդ օրը ջրաղացում թաքարները սպանեցին երկու ռուս զինվորի: Թաքարների դավաճանությունը այլևս կասկած չէր հարուցում: Ռեուտին անհանգստացնում էր և Բերդապարսպի վիճակը: Երմոլովը ծրագրել էր Արաքսի ափին Ասլանդուզ վայրում նոր բերդ կառուցելու, ուստի և Շուշիի ամրացմանը կարևորություն չէր տվել: Ռեուտին կարգադրված էր պարսիկներից սպասվող լուրջ վտանգի դեպքում ոչնչացնել ամեն ինչ և նահանջել Ելիզավետպոլ կամ Թիֆլիս: Սակայն այս հրամանը չհասավ Ռեուտին, քանի որ այն անցել էր պարսիկների ձեռքը: Սակայն պարսիկները ուշացումով որոշեցին նամակը հասցնել Ռեուտին: Վերջինս բերդի պաշտ-

պաններից թաքցրեց Երմոլովի այս կարգադրությունը: Լուրջ խնդիր էր և պարենի հարցը: Շամախուց եկող վաշտերը տեղեկանալով, որ պարսիկները Ղարաբաղում են, ետ են վերադառնում: Երեք վաշտերը, որոնք Գորիս էին գնացել օգնելու թափառական քոչվոր ցեղերին ոչխարի հոտերը սարեր բարձրանալուն, կարգադրվեց շտապ Շուշի վերադառնալ: Զորամասի հրամանատար փոխգնդապետ Նազիմկան լիարժեք տեղեկություն չուներ պարսիկների շարժման մասին, չգիտեր էլ, որ ճանապարհն արդեն փակ է, ու պարսից զորքը դարանամուտ ռուսական վաշտերին է սպասում:

Գումարտակի ուղեկցորդ էր կարգված շուշեցի Սաֆար-Ալի-բեկը, որը նայիբ էր և ռուսների տեղաշարժի մասին տեղեկություններ էր հաղորդում Մեհտի խանին: Վերջինիս հանձնարարությամբ Հաջի-Աղալար-բեկը տեղական քրդական ջոկատները հավաքելով, միացավ պարսից զորաջոկատին՝ նպատակ ունենալով կտրել գումարտակի ճանապարհը:

Նազիմկան մեկ օր ուշացրեց նահանջը, որն էլ ճակատագրական եղավ: Գորիսից 20 վերստ հեռու՝ բաց տեղում թաթարների ու քրդերի ապստամբ հեծելազորը պարսիկների հետ միացած շրջապատեցին ռուսական գումարտակը: Պարսիկների հրետանին, որը անգլիացի սպա էր գլխավորում, անվրեպ էր խփում: Հայ կամավորները առաջարկեցին Նազիմկային լեռնային կածաններով դուրս գալ ծուղակից: Սակայն ռուս փոխգնդապետը, արհամարհելով այս առաջարկությունը, որոշեց կռվով հասնել Աղվանո գետակին, որից հետո մտնել անտառը: Հազար հոգանոց գումարտակից փրկվեցին միայն պորուչիկներ Նազիմովն ու Բոգդանովը, ինչպես և վեց շարքայիններ: Հայ կամավորները, որոնք լավ գիտեին տեղանքը, անարգել Շուշի էին հասել: Սա ռուսական զենքի առաջին խոշոր պարտությունն էր: Հուլիսի 24-ին մի հայ հեծյալ եկավ Շուշի և հայտնեց, որ Նազիմկան գերվել է, գումարտակը ոչնչացվել:

Թավրիզում տեղեկանալով ռուսական գումարտակի լրիվ ոչընչացման մասին, հուլիսի 25-ին թնդանոթային համազարկերով նշեցին այս հաջողությունը: Պարսիկները անարգել թալանում էին հայոց գյուղերը: Նրանք հրի մատնեցին Ավետարանոց գյուղը, ինչպես և գեներալ Մադաթովի առանձնատունը:

«Բերդապարսպի մոտ հաղթել կամ մեռնել, դրանով իսկ արժանանալ փառքին անմահ»,- հրամայեց Ռեուտը:

5. ՇՈՒՇԻԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չորս կողմից բերդը պաշարման մեջ էր առնված: Ռեուտը համոզվելով, որ բերդաքաղաքի մահմեդականները պարսից կողմն են ընտրել ու շատ վտանգավոր են, երիտասարդ թաթարներին դուրս է քշում Շուշիից: Պաշարման առաջին իսկ գիշերը հայ կամավորները բռնում և պատժի են ենթարկում մի երիտասարդ թաթարի, որը փորձում էր պարսից զորքի առջև բացել բերդի Գանձակյան դարպասները: Հուլիսի 27-ին գիշերը երկու կազակներ հանձն առան նամակ հասցնել Երմոլովին: Երևանի դարպասներով բերդից դուրս եկան նրանք և սուրացին դեպի Գորիս: Պարսիկները նկատեցին և շտապեցին նրանց հետևից: Կազակները բաժանվեցին: Երկուսն էլ Թիֆլիս հասան: Բերդում սննդամթերքի պաշար չկար: Սովն ու ծարավը խեղդում էին մարդկանց: 1700 ռուս զինվորներին ու հայ կամավորներին սնունդով ապահովել էր պետք: Ռեուտը իր նամակում գրում է Երմոլովին. «Իմ պարտքն եմ համարում հաղորդել բերդի հայ պաշտպանների մասին. նրանց ծառայությունը ուշադրության է արժանի, քանի որ նրանք գործում են գերազանց խիզախությամբ, դիմակայել են պարսից անընդմեջ գրոհներին, բազում կորուստներ պատճառելով նրանց: Նրանք արհամարհում են սննդամթերքի պակասը և երբեք չեն մտածում բերդի հանձնման մասին, չնայած սով էր սկսվել բերդաքաղաքում»: Բերդում վառոդ չկար, և ահա բարութչի Պողոսը ամեն օր 20-30 ֆունտ վառոդ էր պատրաստում: Ռեուտի սիրելի սուրհանդակը Հարություն Ալթունյանն էր, որը պարսից զորքի միջով անցնելով, Ռեուտի նոր նամակը հասցրեց Երմոլովին, գեներալից ստանալով Գեորգիևյան խաչ և ոսկե մեդալ: Մի քանի օրից նա հետ եկավ՝ բերելով գերագույն հրամանատարի պատասխանը: Բերդում ապաստանած հայ գյուղացիները Շուշիի պաշտպաններին են հանձնում իրենց կենդանիները: Քաղաքի մեծահարուստներից Հախումյանները, Բեկլարբեկ Մելիք-Շահնազարը, Զոհրապ աղա Թառումյանը և ուրիշներ բացում են իրենց պահեստներում ամբարած ցորենի պաշարները: Հայերը ցորենը շալակած ապառաժոտ դժվարանց ուղիով ցած էին իջեցնում կիրճի հատակը, որտեղ գտնվում էին Շուշիի ջրաղացները:

Այստեղ իրենց 300 կտրիճներով պաշտպանական դիրք էին գրավել շուշեցի Սաֆար և Ռոստոմ Թարխանյան եղբայրները: Աբաս Միրզային ոչ մի կերպ չհաջողվեց մտնել կիրճն ու գրավել աղացները: Հայ կանայք ևս պակաս հերոսություն չէին ցուցաբերում Շուշիի պաշտպանությունում: Ռուս պատմիչ Վ.Պոտտոն նրանցից նշում է Խաթուհու անունը[8]:

Ահա թե ինչ ավանդություն է մնացել այդ հայ կնոջ մասին: Նա ամուսնու հետ ցորենը աղալուց հետո ալյուրի պարկը շալակած Հունոտի ջրաղացներից ապառաժն ի վեր Շուշի էր բարձրանում, երբ նրանց վրա են հարձակվում սարվազները (պարսից զինվորներ): Ամուսինը սարսափից պարկը ցած է նետում ու փախչում: Իսկ կինը մնում է պարկի մոտ ու քարերով կռվում պարսիկների դեմ: Նրա հարվածից սարվազը ցած է ընկնում: Խաթուհին վերցնում է նրա հրացանը, մի ձեռքով շարունակում ապառաժն ի վեր քաշ տալ ալյուրը, որը պետք է փրկեր երեխաներին սովից, մյուս ձեռքով կրակում պարսից զինվորների վրա: Կիրճի բերանին Զդրդուզ՝, կոչվող ծիարշավարանում հավաքված մարդիկ նկատելով այս իրադարձությունը, բացականչելով ոգևորում են Խաթուհուն: Մի քանի սարվազների ևս գետին տապալելով, հայ կինը պարկը բերդաքաղաք է հասցնում: Հետագայում գնդապետ Ռեուտի միջնորդությամբ ռուսաց կառավարությունից Խաթուհին ցմահ թոշակ էր ստանում: Ահա թե ինչ է գրում Վ.Պոտտան Շուշիի բերդի մասին. «Մինչ ամպերը բարձրացող Շուշիի գրանիտե բերդը կառուցված է ապառաժե լեռան մեջ, որոնք մի նեղ անցք են թողել: Այն գրավելով ուժով անհնարին կլիներ: Ով որ իշխում էր բերդում, նա էլ տիրում էր երկրում»:

Բերդի պաշարվածների մեջ էր և Իվան (Հովհաննես) Դավիդովիչ Լազարևը[9], որն այն ժամանակ յոթ տարեկան էր: Հետագայում նա դառնում է Կովկասյան պատերազմի հերոս, ռուսական իշխանություններին է հանձնում ապստամբ լեռնցիների առաջնորդ Իմամ Շամիլին: Նա հասնում է գեներալ-ադյուտանտի աստիճանի, արժանանում Գեորգիևյան Մեծ խաչի:

Շուշիի հերոսական պաշտպանության մասնակից մայոր Կլյուգեն Ֆոն-Կլյուգենաուն, որը հետագայում գեներալ-լեյտենանտի աստիճանի է հասնում, գրում է. *«Շուշիի բերդը այդ ժամանակ*

՝ Զդրդուզ. պարսկերեն «չադորդոզդի» աղավաղված ձևն է, որ նշանակում է վրանագող, քանի որ քամին քշել տարել է վրանները:

գտնվում էր շատ խղճալի վիճակում: Բերդապարիսպը շատ տեղերից փլվել էր, քարերի մի մասը տարել էին թուրքական մասի բնակիչները իրենց տների կառուցման համար, խանդակները լցվել էին... Անհրաժեշտ էր Շուշին բերել պաշտպանունակ վիճակի»[10]:

Ահա այստեղ է, որ անգնահատելի ծառայություն էին մատուցում հայ որմնադիրները, շինարարները, որոնք ռմբակոծության տակ արագորեն վերականգնում էին պարսպի պատերը:

Հայ երիտասարդները իրար ձեռք բռնած «շղթա» էին կազմել մահմեդական թաղամասի առջև, արգելելով թաթարներին մոտենալ դարպասներին ու այն թշնամու առջև բացելու փորձ անել: Հայ կանայք ու աղջիկները ճաշ էին եփում ու հաց թխում, իսկ պատանիները բաժանում էին դիրքավորված զինվորներին ու հայ կամավորներին: Ռեուտին անհրաժեշտ էր կրկին սուրհանդակ ուղարկել Թիֆլիս: Այս գործը ստանձնում է շուշեցի Ասրի-բեկը՝ Մելիք Մեջլումի ամենաքաջ զինվորներից մեկը ու թիկնապահը, ապա Գյուլիստանի մելիք Ադամ 2-րդի խնամակալը: Ասրի-բեկը Ռեուտի նամակը տեղավորում է տրեխի մեջ, գիշերը իջնում Շուշիի հյուսիս-արևմտյան կիրճով, անտառներով ու լեռներով դուրս գալով Արցախից, հասնում Թիֆլիս, ապա Երմոլովից ետ բերում պատասխան նամակը: Ռեուտը հանդուգն զինվորին է տալիս 100 ոսկի և խոստանում ներկայացնել ազնվականության աստիճանի:

Հուլիսի 27-ի երեկոյան պարսից թագաժառանգը պատվիրակ ուղարկեց Շուշի, որը մոտեցավ դարպասներին և պահանջեց ընդունել իրեն: Դա աստրախանցի հայ սպա էր, որ լավ տիրապետում էր ռուսերենին և ներկայանում էր որպես թագաժառանգի ադյուտանտ:

Նա անգլիական սպայի տոնական հագուստ էր հագել: Նրան ընդառաջ էր դուրս եկել մայոր Կլյուգեն Ֆոն-Կլյուգենաուն: Սակայն, տեղեկանալով, որ իր դիմաց մի հայ սպա է, հրաժարվեց ներս տանել:

- Եթե Նորին Մեծությունը ցանկանում է բանակցել բերդի հանձնման մասին,- ասաց նա,- ապա թող մի պատվարժան խանի ուղարկի, և ոչ թե հասարակ հայի:

Հաջորդ օրը դարպասներին մոտեցավ պարսից Բիջան խանը՝ պալատական բարձրաստիճան շքախմբով: Խանի աչքերը կապեցին, ու տարան գնդապետի մոտ: Բիջան խանը հայտնեց, որ ինքը լիազորված է բանակցելու բերդի հանդիսավոր հանձնման արարողության շուրջը: Նա առաջարկում էր կատարել Երմոլովի հուլիսի 25-ի ուշացած հրահանգը, խոստանալով օգնելու ծանրոցները տանելու, սննդամթերքով ապահովելու և անվտանգ երթի հարցերում: Այն ծանր տպավորություն թողեց շտաբի սպաների վրա: Ռեուտը նրանց չէր հայտնել Երմոլովի կարգադրության մասին: Բայց երբ գնդապետը խորհրդակցությունում դիմում է սպաներին, խիզախ գնդապետ Միկլաշևսկին, քաջ ու տաքարյուն Լազանովը, դիմացկուն Միխայլովը, հետագայում Կովկասյան պատերազմում հերոսացած Կլյուգենաուն, պարետ Չելյանը միաձայն մերժեցին պարսից թագաժառանգի առաջարկությունը, որոշելով մինչև վերջ պաշտպանել բերդաքաղաքը: Ռեուտը մերժեց հանձնման առաջարկը:

Երկու օրից մի քանի կետերից սկսվեց բերդի ռմբակոծությունը: Սակայն պաշարյալների համար գլխավոր վտանգը զինվորների հիվանդությունն էր, բերդաքաղաքի հայ բնակչության ծանր վիճակը: Բարեբախտաբար, շուշեցի հերոսները շարունակում էին իրենց ձեռքում պահել Հունոտի կիրճը՝ ջրաղացներով: Աբաս Միրզան փորձեց ոչնչացնել Շոշ գյուղը: Սակայն հայոց քաջերը անառիկ դարձրին այն: Ժողովուրդը տեղափոխվել էր կիրճի քարանձավները: Նրանք ոչ միայն հետ էին մղում պարսիկների գրոհները, այլև հաճախ ցած էին իջնում թաքստոցներից ու նախահարձակ լինելով մեծ կորուստներ պատճառում նրանց: Ըստ երևույթին, նրանց մեջ դեռևս թարմ էր մնացել մեծ զորավար Ավանի պարտիզանական պատերազմը վարելու ավանդական ձևերը:

Պարսիկներն արդեն զգում էին, որ Թիֆլիսի գրավման մասին երազելն արդեն ավելորդություն է, քանի որ հսկա զորքով զբաղվելով Շուշիով, նրանք փաստորեն ժամանակ էին տվել Երմոլովին զորք հավաքելու և պատրաստելու հակահարվածը:

Ըստ երևույթին, պարսից տաղանդավոր զորավար Նադիրի պատերազմ վարելու և շեշտակի ու հանկարծակի հարվածներով առավելության հասնելու մարտավարությունը պարսկական բանակում ռազմական դպրոցի չէր վերածվել: Աբաս Միրզան, հակառակ մեծ զորավարի, դանդաղ էր ու ոչ մի կերպ չէր զատում երկրորդականը գլխավորից:

Թագաժառանգը որոշում է մեծ գրոհ ձեռնարկել: Շոշ գյուղի ավագ Սաֆարը, որը պարսից զորքում մարդիկ ուներ, Ռեուտին զգուշացրեց սպասվող գրոհի մասին: Գիշերը գաղտագողի Գանձակի

դարպասներին մոտեցող պարսից զորքի վրա անսպասելիորեն կրակի հեղեղ թափվեց: Այս պարտությունից հետո թագաժառանգը որոշեց կրկին բանակցել, ինչը և ժամանակ շահելու առումով խիստ ձեռնտու էր բերդի պաշտպաններին: Հանդիպումը այս անգամ պետք է կայանար պարսից բանակում: Ռուս սպաները վիճակ գցեցին, որն ընկավ քաջ Կլյուգենաուին:

Չի հեծած, շքահանդերձով Կլյուգենաուն շուտով պարսից հեծելախմբի ուղեկցությամբ շարժվում է դեպի թագաժառանգի բանակատեղին: Ռուսական պատվիրակությանը պարսից զորքի շարքերը դիմավորեցին մեծ հանդիսությամբ, ձգտելով նրա վրա տպավորություն գործել: Սպան փորձում էր նկատել ամեն ինչ, մանավանդ զորքի ոգին. պարսիկները ի վիճակի՞ են նորից գրոհելու և հաղթելու, թե այլևս չեն հավատում հաջողությանը: Մի քանի րոպե հետո վրանի մետաքսե քողը հետ քաշվեց, ու Կլյուգենաուն երես առ երես հանդիպեց թագաժառանգին: Նրանց թարգմանիչը նույն հայ սպան էր:

- Ես արդեն կորցրել եմ համբերությունս ու այլևս չեմ կարող ներողամիտ լինել ռուսների ու բերդի բնակիչների նկատմամբ,- ասաց Աբաս-Միրզան,- *իմ զորքը նոր գրոհ է պահանջում, իսկ ես արյունահեղություն չեմ ուզում: Ես սպասում էի, որ դուք խելքի կգաք:*

Իրանի թագաժառանգը մի պահ լռեց: Նա ուշադրությամբ ռուս սպայի դեմքին էր նայում: Կլյուգենաուն համբերությամբ սպասում էր, որ նա ավարտի իր խոսքը: Նա զգում էր, որ դրանք թույլ, անճար վիճակում հայտնված զորահրամանատարի խոսքեր են: Բայց Կլյուգենաուն նաև համոզված էր, որ Նազիմկոյի զումարտակը անխնա կոտորողը, բարբարոսը երբեք չի զիջի:

Աբաս-Միրզան շարունակեց,- *ես այլևս չեմ կարող զսպել իմ քաջ զորքին: Մի՞թե դուք կարծում եք, թե ես Շուշիի համար եմ եկել: Ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ համաձայնագիր կկնքեմ միմիայն Մոսկվայի մատույցներում:*

Կլյուգենաուն թեթևակի ժպտաց: Թագաժառանգը դա նկատեց ու աշխուժորեն շարունակեց.

- Երդվում եմ պատվով, որ ոչ մի օգնություն չի գալու ձեզ, քանի որ Երմոլովը հեռացել է Թիֆլիսից:

- Չերդ մեծություն,- դիմեց Կլյուգենաուն,- *ես իրավասու չեմ բանակցելու բերդի հանձնման մասին, իսկ եթե ուզում եք տիրանալ Շուշիին, ապա դիմեք գեներալ Երմոլովին, որը, հավանաբար կհամաձայնի, եթե իրոք չի ուզում իր ձեռքին պահել Ղարաբաղը:*

- Թիֆլիս ես չեմ գնա,- ասաց թագաժառանգը,- *քանի որ այնտեղ ռուսներ չկան:*

Կլյուգենաուն հետ վերադարձավ: Շուտով վերսկսվեց հրետակոծությունը:

Պարսիկները ծերբակալեցին ամենաազդեցիկ հայերին՝ Զրաբերդի Մելիք Վանուն, Գյուլիստանի տեր Մելիք Հովսեփ Բեգլարյանին և Աղվանից վերջին կաթողիկոս, բայց արդեն Աղվանից Մետրոպոլիտ կարգված Սարգիս Ջալալյանցին: Վ.Պոտտոն պատմում է պարսից թագաժառանգի և Մելիք Վանու միջև եղած զրույցի մասին:

- Հիշո՞ւմ ես, մելիք, դու երեք անգամ իմ ձեռքից խլել ես որսը: Դու փրկել ես Կարյագինին, Կոտլյարովսկուն և Իլյաշենկոյին,- մելիքին դիմելով ասում է թագաժառանգը:

Վանին գերեվարած 300 ընտանիքները փրկելու համար փորձում էր շահել թագաժառանգի համակրանքը:

- Չերդ պայծառափայլություն, չի լինում ծառա առանց սխալի, և չի լինում աղա առանց ողորմության,- արևելյան խորամանկությամբ պատասխանում է մելիքը:

Թագաժառանգը կատաղությամբ պոկեց մելիքի կրծքին շողացող ռուսական շքանշանները և կախեց իր շան վզից, ասելով.

- Մեր շահը նման ծառայությունների համար քեզ խան կդարձներ և կտար մի ամբողջ մարզ:

- Իմ հայրը ծառայել է Ղարաբաղի խանին: Ռուսները գրավել են Ղարաբաղը, ուստի ես ծառայել եմ նրանց: Եթե դու գրավես, ապա քեզ կծառայեմ: Ծառան միշտ տիրոջն է ենթարկվում:

- Ղարաբաղը իմն է,- գոչեց գոռոզ թագաժառանգը,- *և ռուսները չեն կարող Շուշիից դուրս հանել իրենց քիթը:*

- Տեր իմ, եթե Ղարաբաղը քոնն է, ինչո՞ւ են պարսիկները կողոպտում քո հպատակներին: Երբեք թագավորը չի ոչնչացնում իր հպատակներին, այլ ընդհակառակը, ձգտում է բազմապատկել նրանց թիվը: Ինչքան շատ են նրանք, այնքան հզոր և փառավոր է նրա թագավորությունը:

Աբաս-Միրզան այս հանդիպումից հետո ազատ արձակեց մելիքին և հրամայեց այսուհետ խնայել հայերին՝ նրանց իր կողմը գրավելու մտայնությամբ:

Թագաժառանգը ստիպեց Սարգիս Զալալյանցին 300 հայ ընտանիքների հետ Շուշիի բերդի պատերի տակ խոսքով դիմելու պարսպի վրա կանգնած հայ կամավորականներին՝ ցած դնելու զենքը և անցնելու պարսիկների կողմը: Հայ զինվորները, ի պատասխան Արցախի եկեղեցու հովվապետի, պահանջեցին Սարգսից գոհվելու հանուն հայրենիքի:

Աբաս Միրզան ազատ արձակեց հայ պատանդներին: Թագաժառանգը եթե վատ զինվորական էր, ապա քաղաքական հարցերում ավելի ուշիմ էր: Լինելով Ատրպատականի (Ազարբայջանի) կուսակալը, նա շատ բան էր անում հայերին այնտեղ պահելու համար, որոնք կարող էին ծաղկեցնել երկիրը: Նա հայ առևտրականներին արտոնություններ էր շնորհում, իր սեփական դրամագլխով մասնակցում նրանց առևտրական ձեռնարկներում: Նա զսպում է մոլեռանդ մահմեդականների հարձակումները քրիստոնեության դեմ, յուրաքանչյուր վանքին մի գյուղ սեփականաշնորհում: Թավրիզի հայությանը ազատել էր հարկ վճարելուց: Այդպես նա ձգտում էր սիրաշահել հայերին, նրանց կապել Պարսկաստանի հետ:

Գնդապետ Ռեուտը ամենաշատը վախենում էր բերդի պաշտպանների ոգու անկումից և հուսալքությունից: Նա դիմեց խորամանկ մի հնարքի: Ասրի բեկին զինվորական հանդերձ հագցրեց և գաղտնի իջեցրեց պարսպի մյուս կողմը: Սա հասնելով հաջորդ աշտարակին, իրեն Թիֆլիսից եկող սուրհանդակ անվանեց և խնդրեց վեր բարձրացնել: Շուտով նրան բերում են գնդապետի մոտ: «Սուրհանդակը» սպայակազմի առջև Ռեուտին է հանձնում «գլխավոր հրամանատարի» նամակը, որը ընթերցվում է ռազմական խորհրդի ներկայությամբ: Ոչ ոք չճանաչեց հայ երիտասարդին: Հաճելի լուրը անմիջապես տարածվեց բերդում: Հույսը, որ շուտով օգնություն կգա, թևավորեց բոլորին:

Աբաս Միրզան, որը չկարողացավ օգտվել բերդում ծայր առած ճգնաժամից, իր հերթին հուսալքվել էր ու հույսը կապել բանակցությունների հետ: Կրկին թագաժառանգին հանդիպելու գործը իր վրա ստանձնեց Կլյուգենուան:

- Դե ինչ,- ռուս սպային դիմեց Իրանի թագաժառանգը,- *խելքի եկա՞վ ձեր գնդապետը: Կարծում եմ ժամանակն է:*

- Ես ձեզ պետք է շիտակն ասեմ,- խոսեց հանդուգն Կլյուգենուան,- *մենք Շուշին կթողնենք, երբ ստանանք Երմոլովի հրամանը:*

- Լավ, համաձայն եմ,- ասաց Աբաս Միրզան,- *թող մեկնի ձեր սպան, իսկ մինչև վերադարձը զինադադար կլինի: Ես համաձայն եմ, որ Շուշիից հեռանալիս տանեք ամեն ինչ, բացի վեց ֆունտանոց երկու թնդանոթներից:*

- Անշուշտ, բանակցելն այլևս իմաստ չունի,- ասաց Կլյուգենաուն,- *ապա դարձավ հայ թարգմանչին,- ասա ձեր թագաժառանգին, որ Մոսկվայի ճանապարհին նա կարող է այդ թնդանոթներից հարյուրներով վերցնել, և մի՞թե արժե այդ դատարկ բանի համար ժամանակ վատնել:*

Զինադադարը կնքվեց ինը օրով:

Թիֆլիս մեկնեց նույն Կլյուգենաուն: Շուտով եկավ Երմոլովի պատասխան նամակը. *«Միայն Շուշիի պաշտպանությունը կարող է պատիվ բերել ձեզ և ուղղել սխալները* (Երմոլովը ի նկատի ուներ առանց դիմադրության Ավետարանոցի բերդի հանձնումն ու Նագիմկայի գումարտակի ոչնչացումը - Բ.): *Դիմացեք և ոչ մի առաջարկություն չընդունեք, քանի որ սրիկաները ձեզ խաբում են: Բերդի հանձնման համար գլխով պատասխան կտաք: Պաշտպանվեք մինչև վերջին մարդը: Շուտով օգնական զորքեր կգան: Թաքարներից վերցրեք ողջ հացն ու մթերքը. թող սովամահ լինեն այդ դավաճանները: Մեծահոգի եղեք հայերի նկատմամբ, քանի որ նրանք մեզ են ծառայում»*[11]:

Երմոլովը Աբաս-Միրզային պաշտոնական պատասխան չգրեց: Թագաժառանգը Չելյանին շղթայակապ Թավրիզ ուղարկեց: Պարսից զինվորները երկու տեղից սկսեցին փորել բերդապարսպի տակ, նպատակ ունենալով պայթեցնել այն: Թագաժառանգը հրամայում է թնդանոթ տեղադրել սարահարթի վրա և ռմբակոծել քաղաքը: Դրանք արդեն պարտվողի հուսահատ գործողություններ էին: Պաշտպանները կասեցրին բերդը գրավելու այս փորձը ևս: 48-օրյա պաշարման ընթացքում ռուսական գունդը կորցրել էր չորս զինվոր, 12-ը վիրավորվել էին, 16-ը՝ անհետ կորել:

Ականահատներից շատերը ընկան հայ քաջերի գնդակներից: Գել Օհանի կրակոցները անվրեպ էին: Հայ կամավորները գիշերը նավթով թրջված հին վերմակ, անկողին, հնոտիներ էին վառում ու պարսպից ցած նետում, որի լույսի տակ հսկում էին պարիսպը: Մի գիշերային մարտ էր սկսվել, որտեղ որոշվում էր պատերազմի ելքը: Սակայն պարսիկներին ոչ մի կերպ չհաջողվեց մոտենալ պարսպին: Պարսկական կողմում գտնվող թուրք, իտալացի հմուտ ռազմագետները շվարել էին: Աբաս Միրզան ու Ղարաբաղի նախկին խան Մեհտի-Ղուլին կորցրել էին գլուխները:

Իշխան Մադաթովը Թիֆլիս հասնելով, իսկույն երկու հազարանոց զորք է կազմում ու շարժվում դեպի Գանձակ: Նրան միանում է Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը՝ 500 հայ հեծյալներով: Այս եկեղեցականին թուրքերը Դալի-քեշիշ (գիժ տերտեր) անունով էին կոչում, քանի որ հարկ եղած դեպքում նա հանում էր փիլոնն ու խաչի փոխարեն հրացան ու թուր կապում: Նա քաջագործությունների համար շքանշանների և 600 ռուբլի թոշակի էր արժանացել ռուս հրամանատարներ Ցիցիանովի և Երմոլովի կողմից:

6. ՀԱՂԹՈՒՆԱԿ

Մադաթովը երկու հազարանոց գումարտակով պետք է կռվեր տասը հազարանոց պարսից բանակի դեմ, որը գլխավորում էր Ամիրխան սարդարը (շահի փեսան) և թագաժառանգի երեց որդին՝ Մահմադ-Միրզան:

Այս զորքը գրավելով Գանձակը, պետք է ճանապարհ բացեր դանդաղամիտ Աբաս Միրզայի զորքերի դեպի Թիֆլիս արշավանքի համար: Շամխորի մոտ նրանց էին միացել Ղազախի ու Շամշադինի թուրք ցեղապետերը՝ իրենց ջոկատներով: Ջագամ գետի մոտ իշխան Մադաթովը հանդիպեց վրաց իշխանազն Ալեքսանդրին, որը պարսից երկու հազար զինվորներով ու վրացի ազնվականներով ուզում էր անցնել Նուխիի գավառը, տեղի լեզգիներին ու մահմեդական մյուս ժողովուրդներին ապստամբեցնելու ռուսների դեմ: Մադաթովը վերցնելով Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի կտրիճնե-

րին, շեշտակի հարձակվեց Ալեքսանդրի վրա: Քիչ անց վրաց իշխանը, խուսափելով ճակատամարտի խորացումից, փախավ դեպի Շամխորի բարձունքները:

Ճակատ-ճակատի հանդիպելուց խուսափելով, հայ զորահրամանատարը, ելնելով Շամխորի տեղանքից, դիմում է մարտավարական հնարքների: Այս ճակատամարտը, որը տեղի է ունեցել սեպտեմբերի 3-ին, նկարագրված է շուշեցի Հակոբ սարկավագ Պողոսյանի ձեռագրում[12]:

Մադաթովն եղեգնուտում թաքցնում է թեթև թնդանոթներն ու զորքի մեծ մասը, ապա կամավորների ջոկատով համարձակորեն հայտնվում է պարսից զորքի դեմ դիմաց: Սկզբում Ամիրխան սարդարը կարծում է, թե նա եկել է հանձնվելու: Մի զորագունդ շարժվում է Մադաթովի ջոկատին ընդառաջ: Քաջարի զորավարը, որ դրան էր սպասում, ետ է սուրում, իր ետևից տանելով պարսից զորքը: Ոգևորված պարսիկները, որ մտածում էին կենդանի որսալ հռչակավոր զորավարին, ուշքի են գալիս այն ժամանակ, երբ անհայտ տեղից հայտնված համազարկները նոսրացնում են իրենց շարքերը:

Պարսիկները կրկնապատկեցին եռանդը՝ Մադաթովի 100 հոգանոց ջոկատը շրջապատելու նպատակով: Այդ պահին էլ հնչում է թաքցրած թնդանոթների խուլ որոտը: Արկերը անսպասելիորեն պայթում էին նրանց խիտ շարքերում: Ահն ու սարսափը համակում է պարսիկներին: Շատերը թողնում են զենքն ու փախչում: Երբ հայտնվում է հայ-ռուսական հեծելազորը, պարսիկները արդեն հաշտվում են լիակատար պարտության հետ: Մադաթովը պարսիկներին հալածեց մինչև Կուր գետը, ուր սոսկալի կոտորած եղավ:

Իշխան Մադաթովը այս փայլուն հաղթանակի համար կայսրից ստանում է ադամանդակուռ թուր և գեներալ-լեյտենանտի աստիճան: Պարտության լուրը արագ պարսից բանակն է հասնում: Սեպտեմբերի 5-ին շուշեցիները նկատեցին, որ պարսից ճամբարում տարօրինակ իրարանցում տարածվեց: Աբաս Միրզան թողեց Շուշին ու զորքով շարժվեց իշխան Մադաթովին, այդ հանդուգն հայ գեներալին պատժելու նպատակով: Իր բանակի գումակը ողջ պարենով ու զինամթերքով թողնելով Կուրակ գետի մոտ, թագաժառանգ Աբաս Միրզան վերցնում է սարբազներին ու հեծելազորը ու

շարժվում դեպի Գանձակ: Գիշերը անցկացնում է Ջազալու գետի մոտ:

Թիֆլիսից օգնության է գալիս գեներալ Պարսկևիչը, որի գլխավորությամբ էլ ռուսական զորքը Գանձակի մոտ սեպտեմբերի 13-ի ճակատամարտում գլխովին ջախջախում է Աբաս Միրզայի զորքը և դուրս մղում երկրի սահմաններից: Պարսից զորքը այստեղ թողնում է 2 հազար դիակ, հազար գերի, 2 թնդանոթ և 4 դրոշ:

Շուշիի պաշարումը վերացավ: Այն իրոք հայ ու ռուս զենքի միության ուժի վառ վկայությունն էր: Նիկոլայ առաջինը բարձր գնահատեց 42-րդ գնդի ծառայությունն ու նրան շնորհեց Գեորգիևյան դրոշ՝ «1926 թվականին Պարսկաստանի դեմ Շուշիի պաշտպանության համար» գրությամբ: Ռեուտին շնորհվեց սրբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշան:

Ռուս պատմագիր Պոտտոն նշում է, որ Ռեուտի այս հաղթանակը ոչ թե նրա տաղանդի արդյունքն էր, այլև կապված էր միմիայն հայրենիքի նկատմամբ նրա պարտքի և պատվի զգացումի հետ, որին չի փոխարինի և ոչ մի տաղանդ: Կիսավեր, բայց և անմատչելի բերդի պաշտպանության համար հարկ չկար նախագիծ կազմել, այլ միմիայն պահանջվում էր զսպել եսասիրությունը հայրենիքի զգացման հանդեպ, սեփական կյանքը, անձնական շահը ցածր դասել հայրենիքի շահերից:

Իշխան Մադաթովը հայ և ռուս միացյալ զորքով անցնում է Երասխն ու արշավում դեպի Շահսևան, հափշտակում 80.000 ոչխար, 15.000 կով, 4.000 ձի, 3.000 ուղտ, դրանք փոխադրում Արցախ:

Գեներալ Երմոլովը կալանավորել է տալիս Սարգիս Մետրոպոլիտին, Թիֆլիսում հանձնում Ներսես Աշտարակեցու դատաստանին, իսկ Մելիք Վանուն ու Մելիք Բեգլարյանին իբրև պետական դավաճանների տեղափոխում են Բաքու, այնտեղից Սիբիր աքսորելու նպատակով: Այս երկու ազգանվեր գործիչները, անշուշտ, զրպարտանքի, ինչպես նաև ռուս ինքնահավան զորապետ և Կովկասի կառավարիչ Երմոլովի բյուրոկրատական գործունեության զոհ դարձան:

Իհարկե, նրանք հետագայում արդարացվեցին: Սարգիս Մետրոպոլիտը մահացավ 1828 թվականին: Պարսկաստանից 40 հազար հայեր գնդապետ Ղազար Լազարյանի գլխավորությամբ գաղթում են Արարատյան դաշտ: Մարաղա քաղաքի հայերը տեղափոխվում

են Պարտավ քաղաքի մոտ, սակայն ամռանը տենդոտ շոգին չդիմանալով, այստեղ թողնելով 1042 մահացած մարդ, անցնում են Արցախի սահմանը և բնակություն հաստատում Ջրաբերդի մելիքների ձմեռանոցում՝ Ղազարխում, այն վերանվանում Մարաղա:

Մեհտի Ղուլին զատվեց թագաժառանգից և մնաց Վայքի ձորերում (Դարալագյազ): Տեղյակ լինելով Պասկևիչի և Երմոլովի միջև անգիջում թշնամանքին, որպես Երմոլովի և Մադաթովի գործունեության զոհ ներկայանալով, Պասկևիչին առաջարկեց իր ծառայությունները, նպատակ ունենալով վերականգնել իր իրավունքները: Պասկևիչը Մեհտիի հետ հանդիպելու ուղարկեց Իշխան Մադաթովին փոխարինած իշխան Աբխազովին: Սա վերցնելով երկու գումարտակ, Մեհթիին հանդիպեց քարվանսարայում: Այս հանդիպման արդյունքում Մեհտիի մարդկանցից շատերը վերադարձան Արցախ և կալվածքներ ստացան, այն դեպքում, երբ ռուսներին ծառայած հայերը ճնշվեցին, աքսորվեցին: Իրոք, զարմանալի էր ռուսական բյուրոկրատիան: Այն ժամանակին ընդունում է օգնությունը, բայց սիրաշահելու նպատակով առատաձեռնորեն վարձատրում է իր ամենավտանգավոր ու խորամանկ թշնամուն, թեկուզ և գիտակցաբար դառնում է այս բոլոր քաղաքականության զոհը:

Շուշիի և ողջ Արցախի աշխարհիկ և հոգևոր հասարակության պահանջով 1830 թվականին էջմիածնի եփրեմ կաթողիկոսի կողմից Աղվանից եկեղեցու Մետրոպոլիտ կարգվեց Բաղդասար Հասան Ջալալյանը:

1827 թվականին ցարի հրամանով Երմոլովին Կովկասի կառավարչապետի և գլխավոր հրամանատարի պաշտոնում փոխարինեց գեներալ Պասկևիչը:

1828 թվականին ռուսական զորքերը հայ կամավորականների աջակցությամբ ազատագրեցին Երևանի բերդը: Ողջ Անդրկովկասը անցավ ռուսական տիրապետության տակ, որի հարավային սահմանն էր Երասխ գետը:

Պասկևիչի դեպի Պարսկաստան արշավանքին մասնակցում էր և գերմանացի միսիոներ Զարեմբան, որը թուրքերեն թարգմանած Աստվածաշունչ էր բաժանում, քարոզ կարդում: Սակայն պարսիկները, որոնք մոր կաթի հետ ներծծել են և ատելությունը դեպի քրիս-

տոնեությունն ու նրա ուսմունքը, Զարեմբայի գրքերը ոչնչացնում էին, հրաժարվելով կնքվելուց:

Դ մասի հղումների ցանկ

[1] Մ. Թաղիադյան «Գրական ժառանգություն», հ. 9, ՀՀԳԱ, Եր. 1975, էջ 157:

[2] «Կաթողիկոսական դիվան» համ. 21, թղթապանակ 240, վավերագիր 20, էջ 4, Երևանի Մատենադարան:

[3] Ալ. Երիցյան, «Ամենայն հայոց կաթողիկոսություն և Կովկասի Հայք», Թիֆլիս, 1894, էջ 199:

[4] Հավանաբար, դրանք հետագայում Վերին Զայլուն Ներքին Զայլու գյուղերն են:

[5] Բանբեր Մատենադարանի, 1969, N. 9, էջ 283-345:

[6] Линч Х.Ф.Б. "Армения. Путевые очерки и этюды", Тб 1910 г., стр. 127.

[7] Ճակատամարտը տեղի էր ունեցել 1810 թ. սեպտեմբերի 11-ին:

[8] В. Потто "Героическая оборона крепости Шуши", С. Петербург, 1903 г., стр. 23.

[9] Լազարև Իվան Դավիթի (Լազարյան Հովհաննես Դավթի ծնվ. Շուշիում 1820 թ., մահացել 14.8.1879, գեներալ-լեյտենանտ, սովորել է Շուշիի գավառական ուսումնարանում: Շամիլը Գունիտում հանձնվել էր Լազարևին:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմում նշանակվում է Բայրաիդարյան զորաջոկատի պետ, ապա Կարսը պաշարած կորպուսի հրամանատար, գլխավորել է Կարսի գրավումը:

Վ.Պոտտոն օգտվում է Շուշիի հերոսական պաշտպանության ականատես Իվան Լազարևի եղբոր՝ գնդապետ Հակոբ Լազարյանի "Вековые заслуги армянского народа" խորագրով ձեռագրից: (В.Потто, "Первые добровольцы Карабаха", Тифлись, 1902, стр. 63):

[10] Генерал фон-Ключенау "Очерк военных действий на Кавказе 1818-1859 гг.", "Ежемесячное историческое из-дание", 1878, сентябрь, стр. 138.

[11] В.Потто "Героическая оборона...", стр. 30.

[12] Հակոբ Պողոսյան, «Պատմութիւն...», էջ 8-9:

ՄԱՍ Ե (1827-1859 թ թ.)

1. ՎԱՃԱՌԱՇԱՀ ՔԱՂԱՔԸ

1827 թվականին Շուշիում բացվում է Բազելի Ավետարանական ուսումնարանը: Աշակերտների թիվը մեկ տարում հասնում է 130-ի: Այն իսկական ժողովրդական դպրոց էր: *«Մանուկները զանազան դասակարգերից էին,*- գրում էին միսիոներները,- *բայց մենք աշխատում էինք, որ չքավորներ շատ լինեին»:*

Ուսումնարանում ուսուցչություն էր անում նաև Պողոս վարդապետը:

Բազելցի միսիոներներ Ավգուստ Դիտրիխն ու Ֆելիցիան Զարեմբան հատուկ ուշադրություն էին դարձնում ուսման մեթոդի, բարոյականության, կարգապահության վրա: Նրանց մեծ հաճույք էր պատճառում, թե ինչպիսի եռանդով ու առաջադիմությամբ էին սովորում շուշեցի երեխաները:

Դպրոցն ուներ մեկ այլ նշանակություն ևս, որը շատ կարևոր էր ողջ Արցախում կրթության գործը տարածելու հարցում: Այստեղ սովորած երիտասարդները գյուղերում դպրոցներ էին բացում: Շուտով բացվեցին ևս հինգ դպրոց՝ երկուսը՝ Շուշիում, երեքը՝ գյուղերում, յուրաքանչյուրը 20-30 աշակերտով:

Եվրոպացի բողոքականները Ղարաբաղ բերեցին կրթական մի կարևոր մշակույթ, որը բաց էր հասարակական բոլոր խավերի համար: Բազելյան քարոզիչների գործունեության համար նշանավոր էր և հրատարակչական գործի հիմնադրումը: Հիմնելով իրենց տպարանը, նրանք հրատարակում էին կրոնական-բարոյական բովանդակության գրքեր և դասագրքեր: Աշխարհաբարի գործածության սկզբնապատճառը ևս բազելցիներն էին: Ժողովրդի գործածական լեզվի նշանակությունը դաստիարակության մեջ նրանք շատ լավ էին հասկացել: Նրանցից Ավգուստ Դիտրիխը Մոսկվայում Սալլաթյանի մոտ հայոց գրաբար լեզուն էր սովորում, իսկ Հաագը՝ Արցախի բարբառը: Գրքեր էին հրատարակում թե՛ Շուշիում և թե՛ Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանի տպարանում:

Շուշիի տպարանի հիմնումը նշանակալի իրադարձություն էր ողջ հայ ժողովրդի կյանքում: Այն բուն Հայաստանում, էջմիածնից հետո, 2-րդ տպարանն էր: Այստեղ տպագրվեցին 11 679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն, 100 օրինակ եբրայերեն գրքեր: Առաջինը, որ լույս տեսավ 1828 թ. «Պատմություն սուրբ գրոց» խորագրով գիրքն էր: Բազելյան միսիոներների կրթական-հրատարակչական գործունեությունը տևում է ութ տարի: Եռահարկ շենքում, ուր տեղադրված էր տպարանն ու դպրոցը, դասավանդում էին հայերեն լեզու, թվաբանություն, աշխարհագրություն, ավելի ընդունակներին սովորեցնում էին հունարեն և անգլերեն լեզուներ:

Սակայն ընդհանուր տգետ շրջապատն ու բազելցիների ակնհայտ հավատափոխության ձգտումը դժգոհություններ են ծնում: Թե՛ Ներսես Աշտարակեցին և թե՛ Եփրեմ կաթողիկոսը խրախուսել, օգնել էին նրանց: Սակայն Հովհաննես Կարբեցու կաթողիկոսության ժամանակ իրավիճակը փոխվեց ոչ ի նպաստ բազելցիների: Նրանց դեմ պայքար սկսեց իրենց մոտ ուսուցչություն անող Պողոս վարդապետը: Բազելցիները ուզում էին Ավետարանի թարգմանությունը տպագրել նաև Ղարաբաղի բարբառով: Նրանց մոտ էր Միրզա-Ֆարուխը (Հարություն Ներսեսի Ամիրխանյանը), որը մանուկ հասակում Թաղլար գյուղից գերի էր տարվել Պարսկաստան: Գերությունից ազատվելով, Շուշի էր եկել, կապվել միսիոներների հետ, թողել մահմեդականությունը, դարձել նրանց օգնականը: Նա գիտեր պարսկերեն և արաբերեն: Միրզա-Ֆարուխը պարսկերեն գրեց Ղարբաղի պատմությունը՝ «Թարիխե-Սաֆի» վերնագրով, որը հայերեն էր թարգմանվել «Բարելավված պատմություն» խորագրով[1]: Այն ընդգրկում էր 18-րդ դարի վերջերից մինչև 19-րդ դարի սկզբի իրադարձությունները: Գիրքը առավել արժեք է ձեռք բերում, քանի որ հեղինակը այդ իրադարձությունների ականատեսն էր ու կենդանի վկան:

Շուտով սև ամպեր են կուտակվում բազելցիների գործունեության գլխավերևում: Կովկասի գլխավոր կառավարիչ բարոն Ռոզենը 1835 թ. հունվարին գրություն է ուղարկում ներքին գործերի նախարարին, հայտնելով, որ Բազելի քարոզիչների գործունեությունը այլևս անթույլատրելի է: Հետևում է մինիստրների կոմիտեի վճիռը. «Վերոհիշյալ ընկերության անդամներին և Շուշիում բնակվող Բա-

զելյան քարոզիչներին արգելել ամեն տեսակ միսիոներական գործունեություն, թույլ տալով նրանց այսուհետ պարապել միմիայն հողագործությամբ, արդյունաբերությամբ և արհեստներով: Որպեսզի հայ հոգևորականության կողմից գանգատների ոչ մի առիթ չլինի, արգելել նրանց ընդունելու հայ երիտասարդներին իրենց դպրոցները»:

Բազելցիները խնդրեցին, որ գոնե թույլ տան տպագրական գործը, որի վրա ծախսել են 20 հազար ռսկի: Այս խնդրանքը չհարգվեց: Նրանք ստիպված վաճառեցին իրենց ձեռնարկությունները և 1837 թվականին հեռացան Շուշիից:

Սակայն նրանց սկսած կրթական և հրատարակչական գործը այնպիսի թափ էր ստացել, որ այլևս անհնար էր կանգնեցնել:

1830 թվականին հիմնվում է գավառական ռուսական ուսումնարանը, որի 92 աշակերտները հայեր էին, 17-ը՝ մահմեդական:

1836 թվականի մարտի 11-ին բարձրագույն իշխանության կողմից հաստատվում են հայ-լուսավորչական եկեղեցու կառավարման վերաբերյալ օրենքներ, որոնք հայտնի են «Պոլոժենիյե» անունով:

Այս օրենքի համաձայն, Ռուսաստանում կազմվում են հայ-լուսավորչական վեց թեմեր, որոնցից մեկն էր Ղարաբաղի թեմը: Այն ընդգրկում է Արցախը, Շաքին (Նուխի) և Թալիշը: Շուշիում հաստատվում է Կոնսիստորիա և թեմական ատյան: Հինավուրց բերդաքաղաքը դառնում է Ղարաբաղի, Նուխիի և Լենքորանի հայության հոգևոր կենտրոնը: 1837 թվականին Մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանցը կայսերական հրամանով նշանակվում է թեմի առաջնորդ և նույն թեմի կոնսիստորիայի նախագահ: Բաղդասարի նախաձեռնությամբ առաջնորդարանը գնում է բազելցիների տպարանը և շարունակում հայերեն գրքերի տպագրությունը:

Բաղդասարը շատ բան էր արել հայկական վանքերին վերադարձնելու թուրք կալվածատերերի բռնագրաված հողերը: Նա վերականգնել էր Գանձասարի վանքի տնտեսությունը: Սակայն կաթողիկոսն ու Ներսես արքեպիսկոպոսը թույլ չտվեցին վերականգնելու Աղվանից կաթողիկոսությունը: Ինչպես հայտնի է, Իբրահիմ խանը Շուշիի բանտում կտոր-կտոր էր արել Բաղդասարի հորը՝ Դանիել-Բեկին: Եվ ահա որդին՝ Բաղդասարը, Շուշիի հին հանգըստարանում տապանաքար է դնում նրա գերեզմանի վրա հետևյալ արձանագրությամբ «Յանձինս շիրմի ամփոփեալ դնի մարմին իշխանին

Խաչեն գավառի, վեհ իշխանազընեայ Դանիել-Բեկի, որդւոյ Մելիք-Բեկի իշխանապետի, ի տանե Հայկազն Մեծ Ջալալ-Դօլի տեառն Արցախայ Հայոց աշխարհի, որ Ղարապաղայ կամ Շուշոյ նահանգ նա սովորաբար արդ վերածայնի, առ սուրբ հավատոյ սա լուսահոգի նահապետի աստ յամրոցիս Շուշի դառն տանջանոք Իբրահիմ խանի, որ թշնամի էր Խաչին Քրիստոսի. ի ՌՄԽկանգնեաց զայս արձան վշտալի որդին այս նահատակի, Բաղդասար արհին Տեր Մետրոպոլիտն Հասան - Ջալալեանց, արքուն հովվապետն Աղուանից երկրին: Որք հանդիպիք այսմ տապանի, տուք հօրն և որդոյն Աստուած ողորմին. ի 1851»:

Քանի որ կոնսիստորիան վարձովի սենյակում էր, Բաղդասարը դիմեց Շուշիի հասարակությանը փող հավաքելու համար: Հայ բարեգործության մեջ դա հետաքրքիր դիպված էր: Մետրոպոլիտի ազգականներից Պողոս Հասան-Ջալալյանը 3000 ռուբլով գնում է Գրիգոր Ղանդաղասպյանի երկհարկանի քարաշեն տունը, իր պարտեզով ու նվիրում մետրոպոլիտին, ասելով՝ «որ լինի սեմինարի...»: Նա տալիս է ևս 2000 ռուբլի շենքի ներսի վերանորոգման համար, փոխարենը Բաղդասարից խնդրում է իր համար իշխանություններից ձեռք բերել «պրապորշիկի» աստիճան: Բաղդասարը կարողանում է նրա համար ձեռք բերել միայն արծաթե մեդալ, որից դժգոհում է նվիրատուն և պահանջում ետ տալ նվերը: Բաղդասարը որոշում է իր խնայած միջոցներով շենք կառուցել: Շուտով նա երդում ընդունելու համար էջմիածին մեկնեց և ստացավ սեմինարիա հիմնելու պատվերը:

Ղարաբաղի թեմական դպրոցը բացվեց 1838 թվականի հունիսի 22-ին: Դպրոցը սկզբում ուներ 20 աշակերտ: Առաջին ուսուցիչներն էին կոնսիստորիայի անդամ Առաքել քահանա Յուզբաշյանը, կոնսիստորիայի թարգմանիչ Սարգիս Աթաբեկյանը: Նրանք դասավանդում էին առանց ռոճիկի: Պարսկերեն լեզվի ուսուցիչն էր Մոլլա-Մահմուդ Մոլլա-Ալավերդիևը, որին հետո փոխարինեց Միրզա-Ֆարուխ Ամիրխանյանը: Ռուսաց լեզվի ուսուցիչներն էին Գաբրիել Մամիկոնյանն ու Սողոմոն Կազանովը: Սկզբում թեմական դպրոցը տեղադրվեց Ագուլեցոց եկեղեցու մոտ գտնվող Մեսրոպ Թառումյանի տանը: Դասավանդում էին Օրենք Աստվածային, Սրբազան պատմություն, հայոց քերականություն, ռուսաց լեզու, պարսկերեն, թվաբանություն, երգեցողություն:

Ինչպես գրում է Լեոն, Ղարաբաղի «վիճակային ճեմարանը ծնվել է աղքատության մեջ, մահվան և կյանքի մեջ մաքառող»: Ղարաբաղի թեմը աղքատ էր և չէր կարող պահել դպրոցը: Պետական հատկացումները ևս աղքատիկ էին:

Եթե աղքատ մարդիկ ձգտում էին իրենց երեխաներին ուսման տալ, որպեսզի գոնե իրենց որդիները պոկվեն աղքատության ճիրաններից, ուսման միջոցով մի գործ գտնեն, գործակատարություն անեն, ապա վաճառականներն ու առևտրականները հասկանում էին, որ այլևս անգրագետ որդին չի կարող իր գործը շարունակել:

Կրթությունը Շուշիում կտրուկ զարգացում էր ապրում, որովհետև արդեն կար պահանջարկը: Տարեցտարի ավելի շատ երեխաներ էին հաճախում դպրոցները:

Այսպես իրար հետ կապվեցին կրթությունն ու վաճառականությունը: Սակայն վաճառականները առատաձեռն չէին դպրոցների նկատմամբ:

Զարգանում, կերպարանափոխվում էր նաև քաղաքը: Բերդաքաղաքը կտրուկ զարգացում էր սկսել վերապրել ռուսական տիրապետության հաստատումից հետո: Ինչպես նշվում է ժամանակակից մամուլում[2], քաղաքային շինությունները տեղաբաշխված էին անկանոն ձևով, փողոցները հաճախ ընդհատվում էին խոր ձորերով: Տները տեղի սպիտակ քարից էին, ծածկը՝ հակառակ ասիական հարթ կտուրներին, երկթեք էին, ծածկված տաշուկով[3], որը հնարավորություն էր տալիս անձրևաջրերին ու ձյանը արագ ցած թափվելու: Դրանք ներկվում էին, որն էլ քաղաքին հետաքրքիր գունեղանգներ էր տալիս: Բերդաքաղաքում 1832 թվականին հաշվում էր 1698 տուն, որտեղ տղամարդիկ կազմում էին 5075 հոգի: Դրանից բացի 10 տուն պատկանում էր պետությանը, մի եռահարկ տուն՝ Բազելի ավետարանական ընկերությանը: Շուշիում կար 762 հայ և 936 թաթարական ընտանիքներ: Մարդահամարով հաշվել են 56 իշխան և բեկ, 64 մոլլա և սեիդ (ուսուցիչ), 21 եկեղեցական: 138 հոգի զբաղվում էին առևտրով, 30-ը վաճառում էին դեղորայք և ներկեր: Քաղաքում կար 12 արծաթագործ, 25 դարբին, պղնձագործ, 3 կլեյկող, 15 փականագործ, 24 գլխարկ կարող, 30 դերձակ, 44 կոշկագործ, 4 ատաղձագործ, 10 բամբակագործ, 22 գինագործ, 6 հացագործ: Բերդի բնակիչները հիմնականում ջուր էին վերցնում հորերից: Մի հայ մեծահարուստ խողովակաշարով ջուր էր հասցրել

բերդաքաղաք, որը սակայն չէր բավարարում բնակիչներին: Ջուր էին վերցնում նաև Երևանյան դարպասների ուղեկալից ոչ հեռու գտնվող աղբյուրից, երբեմն էլ՝ Հունոտի կիրճի խորքից, որը խիստ դժվար էր բերդ հասցնել:

Շուշիում կար վեց դպրոց, որոնցում սովորում էին 240 աշակերտ: Դրանց թվում էր և կուսանոցի դպրոցը, որտեղ սովորում էին 10 հայ աղջիկներ: Սրբակրոն Հռիփսիմե Բահաթրյանցը 1810 թ. ընտրելով կուսակրոն կյանք, 1814 թ. հայրական հողում, մի բարձրադիր տեղ կառուցում է կուսանոց և հաստատում միաբանություն: Բահաթրյան տան կույսերի թելը չկտրվեց: 19-րդ դարի վերջերին կանացի մայրապետը Վառվառե Բահաթրյանցն էր[4]:

Ի պատիվ Շուշիի բնակիչների, կարող ենք ասել որ Ջերմեռանդորեն էին հոգում պատանիների կրթության մասին, ու դեռևս 1828 թվականին կամավոր կերպով մեծ գումար ներդրեցին Շուշիում ուսումնարան հիմնելու համար, որտեղ դասավանդում էին նաև ռուսերենը: Ռուսական կառավարությունը իր հերթին հիմնեց գավառական ուսումնարան 50 աշակերտով[5]:

Բերդաքաղաքում կային մետաքսագործական 42 և բամբակագործական 28, կաշեգործական 20, օճառ եփող մեկ, ներկարարական երեք, աղյուսի 2 արհեստանոցներ: 1829 թվականին արհեստանոցներում տեղադրված էին մետաքսի արտադրության 132 հաստոցներ, որոնց վրա աշխատում էին 324 ջուլհակ-ջուլհակուհիներ ու բանվորներ:

1828 թվականին Թուրքմենչայում ռուս-պարսկական պայմանագրի կնքումը վերացրեց Շուշիի բերդի պաշտպանական նշանակության կարևորությունը, ու Գողթան գավառից այստեղ եկած հայ ավանդական վաճառական տոհմերի ջանքերով բերդաքաղաքը վերածվեց առևտրական կարևոր կենտրոնի:

Երեք հայ վաճառական ընտանիքներ Ղարաբաղում, Շաքիում, Շիրվանում, Գանձակի մարզում, Զար-Բելականում, ինչպես և Պարսկաստանում գնում էին մեկ միլիոն ռուբլու մետաքս և ուղարկում Ռուսաստան: Հախումյանները Պարսկաստանում, Ռուսաստանում և Կովկասի քաղաքներում բազմաթիվ գործակալներ ունեին, որոնք գնում և վաճառում էին մետաքսը: Շուշեցի վաճառականները Պարսկաստանի բազարներից ամեն տարի մինչև 140 հազար ռուբլի ռուսական արծաթի մթերք էին գնում ու տեղափոխում Ռուսաստան,

Երևանից ու Նախիջևանից գնում էին 90 հազար ռուբլու աղ, Թիֆլիսից ու Նուխիից՝ 30 հազար ռուբլու պատրաստի ապրանքներ, տեղափոխում այլ վայրեր: Շուշի բերած մթերքն ու ապրանքը նրանք վաճառում էին մինչև 15% հավելյալ արժեքով: Շուշիում շրջանառության մեջ էին ռուսական ռուբլին, հոլանդական ոսկե դրամը, պարսկական թումանն ու ռեալը:

2. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Շուշին, կապված հասարակական-տնտեսական կյանքի զարգացման բարեկեցիկ ընթացքի հետ, վերապրում է հատակագծի կառուցվածքի զարգացման կենտրոնից ծգվող շառավղային համակարգը: Այստեղ հայկական մասում էին քաղաքային գբոսայգին, հասարակական կարևոր շինությունները՝ եկեղեցիները, դպրոցները, հյուրատները, հիվանդանոցը, թատրոնը, գրադարանը, ակումբը, ռեստորանը:

Քաղաքը տրոհված էր երկու՝ քրիստոնեական և մահմեդական թաղամասերի, որն էլ թելադրում էր քաղաքաշինության սկզբունքները: Եթե թաթարական մասին յուրահատուկ էր զուտ արևելքը, ապա հայկական մասը արևելքի և արևմուտքի մի ներդաշնակ խառնուրդ էր:

Շուշիի օրինակով ևս կարելի է հաստատել, որ ուշ շրջանում Հայաստանում շինարարական արվեստը միջնադարի համեմատ որոշ անկում էր ապրել: Այլևս չկար մոնումենտալ շքեղությունը, քարերը սրբատաշ չէին: Սակայն երևան եկան այս դարաշրջանի պայմաններին համապատասխան նոր վարպետներ ու ճարտարապետներ, որոնք կարողացան միահյուսել, սինթեզել հին, ավանդական դպրոցն ու նոր մոտեցումը: Դա ավելի ցայտուն է երևում բնակարանաշինության մեջ: Պատերը շարված են քարով, որը կրաշաղախ ավազի հետ համադրվելով, ուրույն բծերի խաղ էր ստեղծում:

Հարկերը իրարից բաժանված են քարե գոտիներով, որոնք շարվել են մաքրատաշ կրաքարով: Մաքրատաշ են և պատուհանների ու մուտքերի եզրապատումը, կամարները, որոնք ուրույն ճարտարապետական ձև ու տեսք են տվել կառույցին: Ականավոր ճարտարապետ, ծնունդով շուշեցի Ռաֆայել Իսրայելյանը գրում է. «*Հայաստանում քաղաքներից յուրաքանչյուրը ստեղծվել է մի որոշակի դպրոցի ջանքերով, որի շնորհիվ այն դարձել է կուռ և ամբողջական օրգանիզմ, ու ստեղծել է իր ուրույն դեմքը: Այս տեսանկյունից հետաքրքիր է Շուշի քաղաքը, ուր տները հաճախ գրեթե ճշտորեն կրկնում են ճակատների լուծման միևնույն թեման: Բայց դա բոլորովին չի խանգարել, որ քաղաքը դառնա խիստ կոլորիտային, երփներանգ՝ կրկնություններով հանդերձ, ավելին, այդ կրկնությունները գունախաղ են ստեղծում տների տարբեր բարձրության, ռելիեֆի հարստության, որմնախորշերի ու պատշգամբների բազմազանության, փողոցների անսպասելի դարձերի շնորհիվ: Գնում ես, և հանկարծ դիմացիդ բացվում է մի նոր հեռապատկեր, երկրորդը, երրորդը, որոնք, իրենց հերթին, փոփոխվող լուսավորությամբ զարմանալիորեն ճոխացնում են քաղաքի փողոցների ճարտարապետության ծավալների տարածական ներդաշնակությունը*»[6]:

1985 թվականին ռուս ճարտարապետները կազմել են քաղաքի նոր հատակագիծը: Սակայն քաղաքի ճարտարապետությունը զերծ է մնացել ռուսական կլասիցիզմի ազդեցությունից: Հայ ճարտարապետները հավատարիմ էին ավանդություններին:

Քաղաքի կենտրոնը աստիճանաբար տեղափոխվում է հայկական թաղամասը:

Ամեն թաղամաս ունի իր եկեղեցին: Շուշիի հին հայկական բնակավայրում (Շուշիի մահմեդական թաղամասի կենտրոնն ու շրջակայքը) գտնվող եկեղեցուց զատ քարաշեն եկեղեցի հիմնվեց Ագուլեցոց թաղամասում, 1822 թվականին:

Ագուլեցոց սուրբ Աստվածածին եկեղեցին եռանավ, բազիլիկ կառույց էր, հատակագծում 28,9X17,5 մ չափերով, ուներ երկու գավիթ, մի ավագ և 4 փոքր խորաններ, կանանց վերնատուն: Հարավային մուտքի ճակատակալ քարին գրված էր. «*Կամավն Աստուծոյ սուրբ Աստվածածնաց աւագ եկեղեցիս (մինչ Ղազանչեցոց եկեղեցու կառուցումը սա էր համարվում ավագը) կառուցին արդեամբ և ծախիւք իրեանց իշխանք ազնուազգի հարազատ աղայք Զոհրապ, Յովհաննէս, Մարկոս և Բաբա Տէր Մատթէոսեան Թառումեանց ընդ որս և որդիք Նոցա Յովհաննես աղայն և Ավետիս աղայ ի յիշատակ և ի փրկութիւն հոգւոյ իրեանց և սոցա ծնողաց, ամուսնուց, որդոց,*

դստերաց իւրեանց ամենից և առհասարակ ննջեցելոցն ի Տէր ի կայանս երկնից, ի 1822 ամի Տեառն»[7]:

Եկեղեցու արևմտյան կողմում կառուցվում է եռահարկ զանգակատուն: Եկեղեցին ուներ սեփական կալվածք և մինչև 15 խանութներ: Եկեղեցում պահվում էր թղթյա ավետարանը, որի հիշատակարանում գրված էր, որ այն ստեղծվել է Արցախի Դիզակ գավառի Թաղասեռ գյուղի սուրբ Սարգիս եկեղեցում շահ Սեֆի տիրապետության երրորդ տարում (շահ Սեֆի Ա. 1628 թ. շահ Աբասի թոռը): Գրիչներն են Մելիքսեթ երեցն ու նրա եղբայրը՝ Կիրակոս քահանան: Ավետարանը պարսիկները գերի են տարել Թավրիզ: ՌՄԾԵ (1806) թվականին այն գնել է երզրումցի պարոն Մկրտիչը, հանձնել շուշեցի Մահտեսի Սրապիոն Շխեանոյին, որն էլ նվիրում է եկեղեցուն:

Մեղրեցոց սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվում է 1838 թվականին Մահտեսի Բաբա Հախումյանցի միջոցներով: Այն եռանավ բազիլիկ 24,75X12,77 մ^3 կառույց էր, ուներ մուտք, երկու գավիթ, 10 լուսամուտ: Մինչև հիմա պահպանվել է մուտքի բարավորը, որը պատկերում է խաչելության տեսարան, շրջապատված բուսական ու կենդանական զարդամոտիվներով: Այն Շուշիում քանդակագործական արվեստի բարձր մակարդակի վկայությունն է: Զանգակատունը եռահարկ էր:

3. ԲՆԻԿ ՇՈՒՇԵՑԻՆԵՐԸ

1840 թվականին Շուշիում տեղի է ունենում մի իրադարձություն, որը վերջնականապես կտրում է բերդաքաղաքի հին դարերից եկող պատմության թելը, բացասաբար անդրադառնում նրա պատմության հուշարձանների, ինչպես և ավանդական բնակարանների, հոգևոր ու նյութական շատ ու շատ արժեքների պահպանման վրա: Շուշիի դարաբաղցիների թաղամասը, որը Ներքին թաղ էր կոչվում, շատ հին էր, ինչպես այս սարահարթը, ինչպես մարդկության ծնունդը: Այն 19-րդ դարի 30-ական թվականներին հայտնվում է մահմեդական թաղամասի շրջապատման մեջ: Թաթարական թաղամասի սահմանը, շրջանցելով հինավուրց հայկական բնակավայրը, բարձունքն ի վեր գնալով, հասել էր նոր հայերի թաղամասերին:

Թաթարները սկսեցին մտածել հայերին իրենց արանքից դուրս մղելու մասին: Նրանք նման դեպքում կիրառում են հնուց մշակած մարտավարությունը, որի միջոցով կարողացել են առանց արյան ու զոհերի հայերին դուրս մղել Կուր-Արաքսի դաշտի բնակավայրերից: Առաջին հերթին անդադար գողություններով բնիկներին հոգեբանորեն բերում են այն համոզման, որ իրենց հարևանությամբ անիմաստ է շարունակել բնակվել այդտեղ: Զուգահեռաբար իշխանություններին ներշնչում են, որ կարող է արյուն հեղվել, որի համար նրանք պատասխանատվություն կկրեն:

Այս բնակավայրի Շուշի անվան մասին առաջին գրավոր վկայությունը թողել է գրիչ տեր Մանուելը 1428 թվականին: Սակայն Կիրակոս Գանձակեցու վկայությունները, սարահարթում գտնված խաչքարերը ապացուցում են, որ այս բնակավայրի պատմությունը շատ ավելի հին է: Եկեղեցուց ոչ հեռու գտնվող Քամու Խաչ ուխտավայրի գոյությունը մեզ համոզում է, որ այս բնակավայրը նախաքրիստոնեական ժամանակներից է: Հին շուշեցիների համար առանձնապես ծանր էր քարաշեն եկեղեցին թողնելը: Մինչև 1822 թվականը այն Շուշիում միակ քարաշեն եկեղեցին էր, քանի որ Ղազանչեցոց, Մեղրեցոց ու Ագուլեցոց թաղամասերում ժամանակավորապես փայտաշեն եկեղեցիներ էին կանգնեցվել: 1830-40-ական թվականներին այս բնակավայրում շքեղ, կամարակապ տներ էին հայտնվել: Հին ղարադամների փոխարեն նոր առանձնատներ էին հայտնվում՝ տախտակամած տանիքներով:

Հայաստանի Պատմության պետական կենտրոնական արխիվի մի փաստաթուղթ[8] 1847 թ. տեղեկություն է հայտնում Ներքին թաղի մասին. *«Հասարակութիւն ի Հայոց ժողովուրդականաց յառաջ քան սայս ի Ներքին-թաղի Շուշի քաղաքի ի միջի մահմեդականաց ունեին զառանձին հնացեալ եկեղեցիվասն Աստվածապաշտութեան յանուն ՍԲ. Աստծնայ, կառուցեալ ի վաղ ժամանակաց* (ավելի վաղ 1428 թվականից - Բ.) *հետե, որոյ ոմանք էին քարեայ, բայց յարկ նորին փայտեայ: Ի 1840 ամի ի պատճառ կրելոյ յիշեալ հասարակութեան հայոց ի կենցաղակցութենե ընդ մահմեդականաց խառն ունենալով ի միասին ընդ նոսա զբնակութիւն իւրեանց, զբազմադիմի վիշտս ոչ միայն զանձնականս, այլ որ առավել է ի միասին Աստուածապաշտութեան..., հրամանաւ տեղական քաղաքական իշխանութեան վերաբնակեցաւ հասարակութիւն այն ի Ներքին թաղէն ի Վէ-*

րին թաղն քաղաքիս, ի հիւսիսոյ արեմտից կողման...»: Հին եկեղեցին այլևս կտրված էր նոր թաղից, ուստի շուշեցի եղբայրներ Հովհաննես ու Բաբա Հունանյանները ցանկություն հայտնեցին իրենց միջոցներով նոր եկեղեցի կառուցել:

Շուշիի հին բնակիչները այլ ելք չգտնելով, թողեցին իրենց 56 տներն ու տեղափոխվեցին սարահարթի վերին մասերը՝ նոր թաղամաս հիմնելու համար:

Հին թաղամասի բնակիչների հետ պատահած այս աղետի մասին շուշեցի պատմաբան Լեոն գրում է՝ *«1840 թվականի սկզբին Ներքին թաղի հայերը, 56 ընտանիք, նեղվելով թուրքերի հարեվանությունից, թողեցին իրենց սբ. Աստվածածին եկեղեցին*[10ա], Քամու խաչը և առանձին գերեզմանատունը, տեղափոխվեցին քաղաքի հյուսիսային կողմը, ուր բարձր բլրի վրա կառուցեցին եկեղեցի»[10]: Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին իր բարձր դիրքով, գլաքարե հետաքրքիր շարվածքով, գանգակատան ու տաճարի գլանաձև բարձր գմբեթներով օրգանապես միահյուսվել է Նոր թաղի հետ ու առանձին շքեղություն է հաղորդում շրջապատին: Հին եկեղեցուց այլ մասունքների հետ բերում են և հին մագաղաթյա ավետարանը, որի հիշատակարանում հայոց ՌԵԼԳ (1684թ.) գրությունն է թողել Շնաթաղցի քահանա Առաքելն ու տանուտեր Շապանը: Հետագայում գիրքը օտարներից գնել է ադամեջցի (Գանձակի գավառ) Ծատուրի որդին՝ Սիրականը, նվիրել իրենց գյուղի եկեղեցուն: 1796 թվականին շուշեցի Ավագ Դանիելյան-Ղազարյանցը թուրքերից կրկին գնում է այն և նվիրում եկեղեցուն[11]:

Ինչ խոսք, որ վերին թաղի հին շուշեցիները իրենց հետ բերում են և շատ ու շատ սովորություններ, բարքեր, ավանդություններ: Սակայն դրանք շուտով լուծվում անհետանում են Շուշիի մեծ խառնարանում: Բնիկ շուշեցիները իրենց Ներքին թաղի պատմությունից պահպանել են մի ավանդություն, որը վերաբերվում է 19-րդ դարի սկզբերին Շուշիի բուռն զարգացման շրջանին[12]:

Շուշիի Ներքին թաղում իրար հարևան երկու ընկերներ էին ապրում: Նրանցից մեկը՝ Մովսեսը, զբաղվելով առևտրով, ապա և վաճառականությամբ, արտակարգ ծեռներեցության շնորհիվ հարստանում է, մեծ կարողության տեր դառնում, երդիկով, թաղածածկ գլխատան փոխարեն երկհարկ մեծ տուն կառուցում, ծառաներ պահում: Իսկ մանկության ընկերը՝ Սարգիսը, հորից ժառանգած երդիկով ու մեջտեղում թոնիր ունեցող տանը այդպես էլ աղքատ է մնում: Ուշ աշնանը, երբ Շուշիում սկսվում են ցրտերը, Սարգիսը կնոջ հետ վառում է թոնիրը, շուրջը քուրսի նստում, իրար հեքիաթներ, եղած ու չեղած պատմություններ են պատմում, զրնգուն ծիծաղով լցնում շրջապատը: Սարգիսը շատ կենսախինդ, կատակասեր ու զրուցասեր, բացսիրտ մարդ էր: Նրա կինը ևս այդպիսին էր:

Իսկ Մովսեսը իր բնությամբ մռայլ էր, ինքնամփոփ: Մեծ հարստությունը մեծ հոգսեր էր բերել նրա տունը: Մովսեսի տանը շատ վաղուց չգիտեին, թե ինչ է ծիծաղն ու ուրախությունը: Նրանց հոգսը ոսկիներն էին ու զրնգուն հաշիվները:

Մովսեսը, որ Շուշիում ամենահարուստ ու ազդեցիկ մարդկանցից էր դարձել, վաճառական գործերով աշխարհե-աշխարհ էր շրջում, վաղուց ոչ մի կապ չուներ մանկության ընկերոջ հետ ու հոգսերով տարված մոռացել էր նրա մասին:

Ձմռանը մի օր վերադառնալով Հնդկաստանից, Սարգսի տնից երգ ու պարի զրնգուն ծայն է լսում: Զարմանքը պատում է Մովսեսին, քանի որ երգն ու երաժշտությունը չէր կտրվում աղքատ ընկերոջ երդիկից: Մի օր էլ Մովսեսը, հետաքրքրությունից մղված բախում է Սարգսի տան դուռը: Հայտնվում է կինը մի քուրջ հագին և ուրախ տրամադրությունը դեմքին:

- Ներեցեք, աղա,- ասում է զարմացած կինը,- երգ ու պարով տարված չէինք լսում...

- Ոչինչ... անցնում էի, ասացի՝ տեսնեմ ո՞նց եք, ո՞նց չեք...,- ասաց Մովսեսը:

- Շատ լավ ենք, Մովսես աղա, մեզ ի՞նչ է եղել, որ լավ չլինենք: Ուրախ ենք ու երջանիկ...

- Հա՜, ես եմ, որ միշտ հոգսերի մեջ թաղված, տխուր... Կանչիր Սարգսին:

Շուտով հայտնվում է Սարգիսը՝ կնոջ քուրջը հագին:

- Բարի հաջողություն, Մովսես աղա,- ասում է Սարգիսը,- հետաքրքիր է, թե քեզ ի՞նչն է մեր տուն բերել:

- Կարոտել եմ իմ հին ընկերոջը, ասացի՝ տեսնեմ ո՞նց ես ապրում: Բայց որ երգի ծայն լսեցի, ասացի՝ սրանք երջանիկ են, իմ կարիքը չեն ունենա:

- Հա, Մովսես աղա,- ասաց մեծահարուստի մանկության աղքատ ու հպարտ ընկերը,- շատ ուրախ են անցնում մեր օրերը: Մեկ ես եմ

թոնիրի մեջ մտնում, պարեղանակ երգում, իսկ կինս պարում է թոնրի շուրջը, տաքանում, հետո հագի քուրջը ինձ է տալիս, ինքը մտնում տաք թոնրի մեջ, երգում՝ ես եմ թռչկոտում թոնրի շուրջը, որ չմրսեմ: Էսպես ծմեռը կանցնի, հետո գարուն, ամառ կգա...

- Հա՜,- ծոր տվեց զարմացած աղան ու մտահոգ հեռացավ՝ զրգում երգի ձայնը ականջներում:

Մի քանի օր հետո Մովսես աղան կրկին բախում է հարևանի տան դուռը: Երբ դուռը բացվում է, լուռ ներս է մտնում, աչք ածում դատարկ տան չորս բոլորը: Թոնրի միջից հայտնվում է Սարգիսը:

- Սարգիս եղբայր,- հանդիսավոր դիմում է աղան,- որոշել եմ Շուշիի իմ խանութներից մեկը քեզ նվիրել: Համ էլ մի պարկ ոսկի եմ բերել, որ գործ ձեռնարկես, նոր տուն կառուցես...

Ոսկու տոպրակը դնում է Սարգսի առջև՝ մերկ հատակին ու հեռանում:

Այդ օրվանից մեծահարուստի աղքատ հարևանի տնից իսպառ վերանում է երգ ու պարի ձայնը: Սարգիսը հին տան կողքին երկհարկ, գեղեցիկ կամարներով շքեղ տուն է կառուցում:

Օրերից մի օր Մովսես աղան նորից հարևանի տուն է մտնում, դիմում Սարգսին:

- Ի՞նչ է պատահել, Սարգիս, ինչո՞ւ քո օջախից վերացան երգն ու պարը:

Սարգիսը երկար լռեց, ապա պատասխանեց.

- Ոսկու ու խանութի տեր դարձնելով, դու իմ տնից վերացրիր երգն ու պարը: Հիմա օր ու գիշեր մտածում ենք, թե ինչպես կրկնապատկենք ունեցածը: Իսկ ուրախության ու երջանկության համար ժամանակ չկա...

***

Չնայած շուշեցիները նոր թաղ էին տեղափոխվել, նրանք շարունակում էին ավագ չորեքշաբթի օրերին ուխտի գնալ «Քամու խաչ» կոչվող հին սրբավայրը, որը այլևս քարերի կույտ էր: Քամու խաչը ուխտավայր էր դարձել նաև Շուշիի մահմեդականների համար: Քարակույտն ու խաչքարը մանր ջարդոնի վերածելով, հետագայում լցրել են կառուցվող մշակույթի տան հիմքի մեջ: Որպես ուխտավայր էր և Հին գերեզմանոցի ներքևի մասում գտնվող Նահատակի գերեզմանը, որի տապանաքարին կարդում ենք. «Այս է տապան

թիֆլիսեցի նահատակ Անտոնին ՈՄԽԴ (1795), ես թիֆլիսեցի Սիմոնի որդի Սարկիս այս քարն հոկացի սերս նահատակին»: Ըստ երևույթին, թիֆլիսեցի Անտոնը նահատակվել է Աղա-Մամեդ խանի կողմից Շուշիի պաշարման ժամանակ:

Քաղաքի բնակիչները, ավելի շուտ՝ եկվոր բնակիչները կոչվում էին «քեանդառլու», այսինքն՝ գյուղացիք, ի հակառակ ղարաբաղցիների: Նրանք առանձին թաղեր էին կազմում: Հաճախ էր նրանց միջև սուր վեճեր առաջանում, որը երբեմն էլ վեր էր ածվում ծեծկռտուքի: Սակայն ավելի հաճախ էլ մրցում էին արցախյան կոխով, պարերով, խնջույքներով, քաջությունով, ձիարշավով: Այս խաղաղ մրցումներում Քեանդառլուի կողմից գլխավորում էր Զոհրապաղենց Ավետը, ղարաբաղցոց թաղում՝ Գյանջումաղենց Իսաջանը: Քյանդառլուն, որը հարուստ թաղն էր ներկայացնում, հաճախ էր հաղթող հանդիսանում այս մրցակցությունում:

4. ԿՈՎԿԱՍԻ ՋԻՐԼԻՐԹՎԸ

Անսանաց անապատը գտնվում էր մեղրեցոց և Նոր թաղերը իրար կապող սեռի վրա, քաղաքային գբոսայգու տարածքում: Այստեղ ևս զանգակատունը, ինչպես արդեն ընդունված էր Շուշիում, եռահարկ էր[13]: Ըստ Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցի, Անապատի հարավային մուտքի ճակատաքարին կար հետևյալ արձանագրությունը.

«Ճինեցավ սուրբ եկեղեցիս յանուն սուրբ Աստվածածնայ արդեամբ ձեռագործ աշխատանաց կոյս Հռիփսիմեայ օժանդակութեամբ երից եղբարց իւրոց հարազատաց Իսրայելի. Աստվածատրոյ և Պետրոսի Գրիգորեանի Բահադարեանց ի թիվն 1816 ամի»:

Այստեղ պահվող ավետարանի հիշատակարանում գրված էր. *«Յիշատակ է սուրբ աւետարանս Մայրապետ Մենաստանի Կուսանաց Շուշու Վառվառեայ Բահաթրեանցին 1888 ամի 8 (օգոստոս) ամսվա 31-ի, Շուշի»:*

Ինչպես հաղորդում է Մ.Բարխուտարեանը, Անապատն ուներ մի տնտեսվար և խնամածու աբբայուհի, երեք սարկավագուհի, մի նորեկ միաբանուհի[14]:

Հետագայում ավերված Ագուլեցոց, Մեղրեցոց և կուսանաց եկեղեցիներից փրկված քանդակազարդ մասունքների լուսանկարները, այս կոթողների թե՛ ճարտարապետական և թե՛ քանդակագործական արվեստի զարգացման բարձր աստիճանի վկայությունն են:

Շուշեցի Զումշուդ Շահնազարյանը 1850 թ. Ագուլեցոց սբ. Ամենափրկիչ եկեղեցում գրի էր առել հետևյալ արձանագրությունը. «...ի յիշատակ հանգուցեալ Տեարցն Թառումեանց՝ սրբազնասուրբ Վեհ անուան Ձերոյ, հրամայելով քանդակել ի վերա յիշեալ սբ. Աստուածածնայ մայր եկեղեցւոյն զանուանս հանգուցելոցն Թառումանց, որք կառուցեալ են զայն տաճար արդեամբ Նծախիւք իւրեանց, ընդ նմին նթոյլ տալով ժողովրդականացն Ագուլեցաց ու այլանուանց իսկ անգամ զի եթե խիղճ ուրուն վկայիսցե ինքեան մասնակից գոլ կառուցման տաճարին այնորիկ, զոր երկիցս, կառուցեալ են Տիարքն Թառումեանք...»[15]:

Իսկ եկեղեցու հարավային դռան ճակատկալ քարի վրա քանդակված էր շինարարական արձանագրությունը. *«Կամաւն Աստուծոյ Ս. Աստվածածնայ, աւագ եկեղեցիս կառուցին արդեամբ և ծախիւք իւրեանց իշխանք ազնուազգի հարազատ աղայք Զոհրապ, Յովհաննէսի, Մարկոս և Բաբա տէր Մաթեոսյան Թառումեանց... ի 1822 ամի Տեառն»*[16]:

Մինչև Ղազանչեցոց եկեղեցու կառուցումը Ագուլեցոց եկեղեցին կոչվել է ավագ եկեղեցի:

1859 թվականի մայիսի 12-ի երկրաշարժից վնասվել էր Ագուլեցոց սբ. Աստվածածին եկեղեցու գմբեթը ու քաղաքի այլ շենքեր: Թույլատրվել էր եկեղեցու գումարից 900 ռ. ծախսել եկեղեցու նորոգման համար[17]:

Հայոց Ղարաբաղի վիճակային կոնսիստորիան 1888 թվականի նոյեմբերի 18-ի էջմիածնի սինոդին հղած հայտարարության մեջ նշում է, որ Ագուլեցոց ս. Աստվածածին ավագ եկեղեցու գմբեթը խարխուլ վիճակում է, և այն փայտով վերակառուցելու ծախսը իր վրա է վերցրել շուշեցի պ-ն Միրզախան Պատվականյանցը: Սակայն ողջ եկեղեցու ծածկը հնացել է և կաթում է: Կոնսիստորիան խնդրում է սինոդին թույլատրել մետաղյա ծածկ դնել, ապա նոր միայն կառուցել գմբեթը: Սինոդը պետք է հաստատեր ներկայացված նախահաշիվն ու բացատրագիրը, սակայն ինչպես երևում է իրար հաջորդող գրություններից, սինոդը դեռևս չէր պատասխանել:

Ըստ երևույթին, այս տաճարի տեղում 1820-ական թվականներին կառուցվել է մեկ այլ եկեղեցի, որի մասին գրում է Մ.Թաղիադյանը: Հավանաբար, այն չի բավարարել մեծահարուստ շահկերտցի շուշեցիների պահանջները, որոնք էլ 1868 թվականին նույն տեղում ձեռնարկել են նոր հոյակերտ մայր տաճարի կառուցումը, այն ավարտել 1887 թվականին:

Մարտի 21-ին սրբազան առաջնորդ Սագինեանցը օծեց Ղազանչեցոց սբ. Ամենափրկիչ նորակերտ եկեղեցին: Երեցփոխ Երամիշյանցը վերջին չորս տարում մեծ ջանք էր թափել շինարարության վրա: Դեռևս թերություններ կան: Գմբեթի շինարարությունը ստանձնել է շուշեցի մեծ բարեգործ Թադևոս Թամիրյանցը: Եկեղեցու շինարարության վրա ծախսվել է 100 հազար ռուբլի ավելի, քան նախատեսվել էր[18]: Ղազանչեցոց եկեղեցու շրջակայքը սալահատակել էր Հովհաննես Խունյանցի միջոցներով[19]:

Չորս կողմերում բազմանիստ աբսիդները հատակագծում 34,7X23 մ և 35 մբարձրություն ունեցող հորինվածքին խաչաձև տեսք են տալիս: Տաճարին առանձին հմայք են հաղորդում խաչաձև պատուհաններից վեր տեղադրված հարթաքանդակները, որոնցից մեկի վրա պատկերված է Փրկիչը խաչի հետ, մյուսում Աստվածամայրն է՝ մանուկ Քրիստոսի հետ, երրորդում՝ Հայր աստվածը: Այս պատկերաքանդակները հայկական քանդակագործական արվեստի ուրույն ճյուղավորումներից մեկին՝ արցախյան դպրոցին յուրահատուկ արգասիքն են, պլաստիկ արվեստի իսկական գլուխգործոցներ: Բարձրաքանդակները պատրաստվել են առանձին նվիրատուների պատվերներով: Բեմաճակատի ստորին մասում զետեղված արձանագրությունը հայտնում է քանդակագործի՝ Ավետիս Երամիշեանցի և ճարտարապետ Սիմոն Տեր Հակոբյանցի անունները: Մեդալյոնների տեսքով քանդակված են նաև Հայր աստծո, Սուրբ Հոգու և Փրկչի պատկերները: Հետազոտողների ուշադրությունից դուրս են մնացել նաև տաճարի ներսում տեղադրված փոքրածավալ հարթաքանդակները, որոնք արվեստով ու կատարման վարպետությամբ չեն զիջում դրսի պատերին գտնվող պատկերաքան-

դակներին և, ըստ երևույթին, նույն վարպետի գործերն են: Առանձնապես ուշագրավ են մկրտման ավազանի երեսակալի խորքում տեղադրված Հիսուս Քրիստոսի և Հովհաննես Մկրտչի բարձրաքանդակները:

Ցավոք, այս, ինչպես և բեմի խաչելության տեսարան պատկերող քանդակները դիտավորյալ փչացվել են: Քանի որ մահմեդական կրոնով արգելված է աստծո պատկերումը, ուստի մահմեդականները իրենց իրավունք են վերապահել փչացնելու քրիստոնեական սրբերի պատկերաքանդակները: Իսկ հայերին երկու անգամ (1920 և 1990 թթ.) բերդաքաղաքից բռնի վտարելուց հետո քրիստոնեական սրբատեղին անպաշտպան էր մնացել:

Տաճարից փոքր ինչ հեռու վեր է խոյանում եռահարկ զանգակատունը, որը կառուցվել է 1858 թվականին, այսինքն՝ տաճարի հիմնումից 10 տարի առաջ: Երկրորդ հարկի անկյունում տեղադրված են կրաքարից քանդակված հրեշտակների չորս արձաններ, որոնք հսկա թևերը կիսածալ, ասես նոր են իջել զանգակատան վրա և հնչեցնում են փողերը, մարդկանց ավետում Փրկչի մոտալուտ գալուստը: Այս արձանները քանդակվել են բարեպաշտ Աբրահամ Խանդամիրյանցի պատվերով:

Ցավոք, այս արձանները ադրբեջանական ջարդարարների կողմից 1990-ին ցած են նետվել ու ոչնչացվել: Մ. Բարխուդարյանցը գրում է, որ Ղազանչեցոց եկեղեցում կար նշանավոր փայտյա ու ոսկեզօծ խաչկալ՝ որ *«հիշատակ է բարեհամբավ ժամհարեանց եղբարց»:* Տաճարում կար 12 ավետարան: Մագաղաթյա մի ավետարանի հիշատակարանում նշված էր 1658 թվականն ու Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի անունը: Այն պատկանում է Ղազար գրչին: Ավետարանը գնել է Ղազանչեցի Նարինն ու եկեղեցուն նվիրել 1764 թ.: Ավետարաններից մեկը գրվել է Հայոց ՋԻԲ (1473) թվականին՝ Վայոց ձորում: Մի ավետարանի հիշատակարանից Մակար եպիսկոպոսը արտագրել է *«... գրեցավ ի դառն և վերջացեալ ժամանակի, որոյ լեկգին եկավ Գանջայ, Պարտոյ, Խաչենոյ, Վարանդոյ, Շաքոյ, Շամախոյ, Վրաստանս, Ջակամայ չորեքանկիւն երկիրն, ամեն ասպատակեալ աւերեցին: Բազում արիւն անմեղաց եղավ երկիր, անթիվ գիրք և անմեղ գերիք անկան ի ձեռն անօրինաց: Եկեղեցիք խախտեալ և խավարեալ ամայի մնացին: Երկրորդ օսմանլուն եկաւ երկին, բազում արիւնհեղութիւն եղն: Գերիսն անթիւ եղն ի ձեռս օսմանցոց վասն մեր ծովացեալ մեղացն՝ սուք մեծ եղն քրիստոնէից ազգիս... ՌՃՀԱ (1723) թվինմայիսի ԺԴ-ին (14) ի գյուղն Արգաւոն ի դուռն սուրբ Իշխանաց...»*[20]: Այս նկարագրությունը հիշեցնում է Կիրակոս Գանձակեցու գրած տողերը, որ պատկերել է մոնղոլների կոտորածն ու ավերը: Այսինքն՝ եթե կա անկազմակերպ, սեփական անվտանգությունը ապահովելուն անպատրաստ, սեփական պետականություն չունեցող երկիր ու ժողովուրդ, ապա միշտ էլ կգտնվի այն գիշատիչը (հեռու կամ մոտիկ երկրներից), որը կգա թալանելու և ջարդելու:

Եկեղեցու գանձերից էր սբ. Գրիգորիսի արծաթյա ոսկեզօծ աջը, որի վրայից Մակար եպիսկոպոսը արտարգել է արձանագրությունը. «Այս է աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին թոռին սրբոյ Լուսաւորչին. նորոգող սորա տէր Յոհաննես որդի Տաւութին թոռն Պաղտասարին, որ է որդի Մեհրապ պեկին տեառն Խաչենոյ թվ. ՌՃ (1621թ.)[21]:

Հետո գրված է երկրորդ նորոգման մասին. «Նորոգեաց վերստին սուրբ աջս Գրիգորիսի Բէյրում Բէկ Մէլիք Ջիմշիտեան Մելիք Շահնազարովն ՌՄԿԱ (1812) էր»:

Մեզ հասած փաստաթղթերը պատմում են Շուշիի Մեղրեցոց փայտաշեն հին եկեղեցու փոխարեն նորը կառուցելու հանգամանքների մասին: Էջմիածնի Սինոդին տեղեկացնում են հին եկեղեցու նորոգման մասին, իսկ իրականում հարուստ վաճառական Բաբա Հախումյանի կտակած միջոցներով նոր եկեղեցի ու զանգակատուն է կառուցվում: Այն հաստատող փաստաթղթերից է Կոնսիստորիայի նամակը Էջմիածնի սինոդին 1838 թ. մայիսի 13-ին:

«Ջինդիր Շուշու քաղաքի Մահտեսի Բաբայ Հախումովին - մարտի 12-ի նո. 100 հրաման Ղարաբաղու կոնսիստորիայի ի գործակալ տեր Յոհաննես ավագ քահանային Մեղրեցոց եկեղեցու նորոգման մասին...»: Փաստորեն Հախումովը ուզում է փայտաշեն եկեղեցու փոխարեն նոր եկեղեցի կառուցել: Սակայն նորը կառուցելու համար բացակայում է Սինոդի որոշումը: Սինոդի 77-րդ հոդվածը վերաբերում է նորը կառուցելուն և ոչ թե նորոգման խնդրին: Իսկ վիճակա-

յին կոնսիստորիան եզրակացրեց. *«տալ թույլ... առնիլ նորոգության հին եկեղեցին մեղրիցոց: Տեր Յոհաննես ավագ քահանան կարող է ժամանակավոր ապրել մինչև նորոգման ավարտը կես Ագուլեցուց սբ. Աստվածածին և կես Վարանդեցոց եկեղեցում»: Ստորագրել են ատենական կոնսիստորիայի արք. Բաղդասարն, անդամներ՝ Յովհաննես վարդապետ, խաչատուր քահանա, Ավետիս քահանա, Առաքել քահանա»*[22]:

Այս խնդրով 1839 թ. հունիսի 5-ին Շուշիից Սինոդին ուղղված գրություն է ուղարկում փոխգնդապետ Կիլը (հավանաբար՝ գավառապետը): Նա հայտնում է, որ հանգուցյալ Բաբա Հախումովի կտակով Մեղրեցոց հին փայտե եկեղեցու փոխարեն կառուցվում է նոր եկեղեցի՝ լայնությունը 34 արշին, երկարությունը՝ 54 արշին (1 արշինը = 71,12 սմ - Բ.): Կիլը տեղեկացնում է, որ այն դեռևս չի ավարտվել: Շուշի այցելած Վրաստանում Կովկասի գլխավոր կառավարիչ գեներալ-լեյտենանտ Գոլովինը Հախումյանին թույլ տվեց եկեղեցուն կից կառուցել զանգակատուն[23]:

Քանի որ Շուշիում բոլոր համայնքները իրենց թաղերում եկեղեցի էին կառուցել, 1840-ին Վերին թաղ գաղթած ջրաբերդցիները առաջնորդարանից մի ընդարձակ հողատարածք առանձնացնելով, ծրագրում էին սեփական եկեղեցի կառուցել:

Կոնսիստորիան զեկուցագիր է ուղարկում Սինոդին 1842 թ., որ *«Ջրաբերդցի անուանեալ ժողովրդականաք Շուշի քաղաքի և այլ ոմանց նպատակաւ և դիտմամբ կառուցանելոյ յիւրեանց թաղին քաղաքիս զեկեղեցի՝ որոշեալ են զվայելչական իմն տեղի ընդարձակ ի վերա մեծի փողոցին մերձ Աթոռապատկան հայոց առաջնորդական տանն ի հարավոյ յարեվմուտս կոյս, զոր և շրջապատեալ են քարեայ միայն պարըսպով»*[24]: Սակայն ջրաբերդցի փախստականները, որոնք հեռու էին վաճառականությունից, այդպես էլ հնարավորություն չունեցան մյուս համայնքների օրինակով իրենց թաղի եկեղեցին ունենալու: Հետագայում, 1857 թ. շուշեցի այրի Մարիամ Գևորգյանը հանգուցյալ ամուսնու՝ Անդրեաս Մարգարյան - Խանդամիրյանցի կտակած 1000 ռ. գումարով այս տարածքում կառուցել է եկեղեցի իր վաղամեռիկ որդու՝ Մնացական Խանդամիրյանցի հիշատակին:

«Արծագանք» շաբաթաթերթը գրում է, որ Թադևոս Թամիրյանը Ղազանչեցոց եկեղեցին կառուցելուց հետո ուզում էր կառուցել եկեղեցուն կից կաթողիկեն, սակայն ժողովուրդը դեմ էր այս ձեռնարկին: Թ.Թամիրյանցը որոշում է հին հանգստարանի տարածքում, որը Ղազանչեցոց եկեղեցուց հեռու չէր, նոր եկեղեցի կառուցել: Քաղաքի մտավորականությունը այս ձեռնարկին ևս դեմ էր: Հոդվածագիրը (Ասպետ) արտահայտելով մտավորականության կարծիքը, առաջարկում է բարերարի միջոցները ծախսել Վերին թաղում «Ջրաբերդցոց եկեղեցի» կոչված տարածքում օրիորդաց դպրոց հիմնադրել: Օրիորդաց դպրոցը, որը վարձու շենքում էր տեղավորված, տարեկան 500 ռ. վարձ էր տալիս շենքի տիրոջը: Իսկ «Ջրաբերդցիների եկեղեցու» տարածքը Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը կարողացել էր միայն պարսպապատել[25]:

Շուշիի թաթարական թաղամասում կան երեք մզկիթներ, որոնցից երկուսը կրում են պարսկական պաշտամունքային ճարտարապետության կնիքը: Մեծ մզկիթի ճարտարապետն է պարսկաստանցի Քերբալա Սեֆի խանը: Այն կառուցվել է 1883 թվականին: Եռակամար, հատակագծում համարյա քառակուսի (19,6x17,7) սրահը ծածկված է թաղերով, որոնց վրա կառուցված է հինգ գմբեթ: Կոմպոզիցիոն կենտրոնը ընդգծված է 5 մ տրամագիծ ունեցող սլաքակամար գմբեթով: Դահլիճի երկրորդ հարկը նախատեսված է կանանց համար: Զույգ մինարեթները երեսպատված են կարմիր, սպիտակ և կապույտ գույնի ջնարակված աղյուսով:

Շուշիի անցյալ դարի ուսումնասիրողները (Ն.Նեֆեդև, Ս.Զելինսկի) ուշադրություն են դարձրել այն հանգամանքի վրա, որ բերդաքաղաքի կառուցապատումը կամայական է եղել ու ոչ մի նախագծի չի ենթարկվել: Սակայն նման տեղաբաշխումը թելադրված էր բնական դիրքով: Ռելյեֆի ճիշտ օտագործման միջոցով, լուծված է կարևորագույն խնդիրներից մեկը՝ քարապատ փողոցների միջոցով հորդառատ անձրևաջրերի արագ հեռացումը: Շինարարները շատ ռացիոնալ են օգտագործել սարահարթի կտրտված ռելյեֆը: Անձրևաջրերը ոչ մի տեղ չեն կուտակվում ու քշում տանում են կեղտն ու աղբը:

Թաթարական թաղամասում բնակիչները այդպես էլ հատուկ կեղտաջրերի կամ անձրևաջրերի հեռացման ջրատարներ չկառուցեցին, ուստի վերին թաղերից անձրևաջրերը ամեն ինչ սրբած լցնում էին այս թաղի փողոցները, որտեղ հաճախ գարշահոտություն էր ընկնում:

Շուշիում անհատական տները հարմարեցված են գլխավոր փողոցներին, որը միջինասիական կամ պարսկական միջնադարյան քաղաքաշինության համեմատ լուրջ առաջընթաց էր: Շուշիի փողոցների ծավալատարածական ամբողջականության կազմավորման գործում կարևոր տարրեր են ճարտարապետական շքամուտքերը, դարպասները, սրբատաշ քարերի ու չմշակված գլաքարերի ներդաշնակ շարվածքը, որոնք էլ ստեղծում են Շուշիի փողոցներին յուրահատուկ ճարտարապետական-գեղարվեստական կերպարը: Կապված սոցիալական առաջընթացի հետ, քաղաքի տների փողոցին հարող ճակատները դառնում են ավելի բաց ու ծավալատարածական հետաքրքիր լուծումներ են ձեռք բերում: Հայտնվում են պատուհաններ, քանդակազարդ ու դեկորատիվ տարբեր լուծումներով պատշգամբներ:

Թե քրիստոնեական և թե մահմեդական մասերում ժողովրդական ճարտարապետությունը նույնն էր. նույն շարվածքը, նույն շքամուտքերն ու պատուհանները, նույն կամարները: Ու արևելքին յուրահատուկ մահմեդական ճարտարապետության ոչ մի տարր: Սա ևս հաստատում էր, որ երկու թաղամասերում էլ կառուցվում էին միմիայն հայ վարպետները:

Նույնիսկ հասարակական կառույցներում հայկական ավանդական ճարտարապետության ազդեցությունն էր: Հենց մզկիթի ճարտարապետական հորինվածքի հիմքը հայկական ավանդական ճարտարապետությունն է[26], որ լայն կիրառում է գտել հայկական գավիթներում: Միայն մինարեթն է, որ խոսում է մահմեդական միջավայրի մասին: Շուշիում կար տասը իջևանատուն՝ քարավաններ և վաճառականներ ընդունելու բոլոր հարմարություններով: Սրանց ճարտարապետական հորինվածքը ևս հայկական է:

Շուշին իր նշանակությամբ և բնակչության թվով արդեն Անդրկովկասի 4-րդ քաղաքն էր՝ իրենից ետ թողնելով Երևանը, Բաքուն,

Գանձակը: Գերմանական «Ալգեմայնե ցայտունգ» թերթը 1846 թ. նոյեմբերի 15-ի համարում գրում է. «*Դարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին առանց չափազանցության կարելի է համարել Կովկասի Ջիրիլթարը: Այն գտնվում է քարավանային ճանապարհների վրա, որ տանում է Իրան, Թուրքիա, Երևան, Թիֆլիս... Շուշիի վաճառականները մասնակցում են Լայպցիգի, Նիժեգորոդսկի, Ստամբուլի տոնավաճառներին*»:

Քաղաքի բնակչությունը 1895 թվականին Շուշիի սարահարթում հասնում էր 34 հազարի, որից 21 հազարը հայեր էին: Հայերի հոսքը դեպի Շուշի բացատրվում է արդյունաբերության զարգացմամբ: Արհեստանոցներում զբաղված էին 833 հոգի, ֆաբրիկաներում՝ 209 հոգի: Դարավերջին քաղաքը տարեկան ունեցել է շուրջ 40 հազար ռուբլի եկամուտ, 34 հազար ռուբլի ծախք: Մետաքս մանող և գործող ֆաբրիկաներում 1895 թվականին պատրաստվել է 1100 փութ մետաքսաթել և 280 փութ փրիսակ (կտորեղեն)[27]: Մինչև 1883 թվականը արտադրված մետաքսաթելը ուղարկվում էր Մարսել, սակայն հետագայում այն առաքվում էր միայն մոսկովյան ֆաբրիկաներին, իսկ փրիսակը՝ Ֆրանսիա: Այս գործարաններում աշխատում էին նաև 8 տարեկան աղջնակներ, որոնք ստանում էին 7-10 կոպեկ օրավարձ: Անկասկած, շատ ընտանիքներ կարիքից ստիպված էին իրենց երեխաներին ու հասակավոր կանանց տալիս ֆաբրիկայում աշխատելու:

Լեոն (Առաքել Բաբախանյան) Շուշիի կոտորածից հետո իր ծննդավայրը գալով վերհիշում է պատանեկության տարիները, երբ մայրն ու քույրը աշխատում էին մետաքսի ֆաբրիկայում: «Մեր թաղի տակով մի ձոր էր անցնում,- գրում է Լեոն: - Ձորի գլխին երկարածիգ ու միհարկանի մի շենք շինեցին, կողքին բարձրացրին աղյուսյա մեծ ծխնելույզը, որ սկսեց սուլել ամեն առավոտ, ամեն երեկո...

Մետաքսի գործարան էր... Գործարանը մի ուրիշ աշխարհ էր, մի օտար թշնամի, մի վիշապ, որ ներս էր խուժել աղքատության կյանքի մեջ, և, թեև փող էր տալիս նրան, բայց ընդհանուրի ատելության, նզովքի առարկա էր: Նա եկել էր աղքատ ընտանիքները փչացնելու, տունը քանդելու, ստեղծածն սպանելու: Եվ երբ բարձրանում էր մեր

ծխնելույզի սուլոցը, թաղի կանայք միաբերան «չոռ ու ցավ» էին կանչում և ամեն կողմից ճանկ էին անում նրա ուղղությամբ...

Երջանիկ էր քույրիկս: Ավելի բախտ նա չէր էլ ուզում: Գործարանը պիտի տար նրան օրավարձ հինգ կոպեկ, իսկ մորս՝ ամբողջ 15 կոպեկ»:

Առևտրի ու արդյունաբերության, արհեստների զարգացմանը զուգահեռ Շուշիում աշխուժանում է և մշակութային կյանքը: Այստեղ առաջանում է յուրօրինակ գրական մթնոլորտ, որի պահանջները բավարարելու համար պետք է ավելի զարգանար գրատպության գործը: 1837 թվականին մետրոպոլիտ Բաղդասարի թույլտվությամբ «Հայոց հոգևոր տեսչության տպարանում» հրատարակվեց Բայրոնի «Շիլոնյան կալանավորը»՝ Մովսես Զոհրապյանի թարգմանությամբ: Ապա լույս տեսան Եսայի Ջալալյանի «Պատմություն կամ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Ադուանից», «Ծիսատուն, որ կոչի Մաշտոց», «Տետր այբբենական» և «Կրոնագիտություն» գրքերը:

Գրական ուժ էր ներկայացնում նաև Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյանը, որը գրում է «Տրամաբանություն», ինչպես և «Վահան ուղղափառաց» աշխատությունները: Նա գրաբարի մեծ մասնագետ էր: 1840 թվականին նա տպագրեց Սալլաթյանի «Կրոնագիտություն կամ հոգեվարժություն քրիստոնեական ըստ լուսավորչական ուղղափառ դավանութեան Առաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց» աշխատությունը: Գրքի վերջում համառոտող Տեր-Ավագյանը մի փոքրիկ ոտանավոր է տեղադրում, որով հայտնում է, որ իր գրիչը դեռևս անվարժ է, սակայն ինքը, բանաստեղծությունը դրա հակառակն է ապացուցում.

«Ընկալ սիրով, ով մտերիմ,
Ընդոյզն ընծայ անտխերիմ:
Զոր ընձիւղել ի սուրբ սրտէ,
Բոյդ պերճ անուան ես փափագիմ:
Զի քո խորհուրդ քաջալերիչ,
Զիմ ապիկար դրդեաց գրիչ,
Եւ թարգմանել զներբողեան,
Աստվածութեան փառաբանիչ:

Մի դժնեսցի միտք քո բարի,
Թէ իմ վաստակ չիք անթերի,
Ըսկիզբն է այս իմոյ քրտանց,
Զի՞նչ է զարմանք թե է թերի:

Նրա «Աստված» ներբողն ու Դերժավինից թարգմանությունը, ինչպես նշում է Լեոն, արդեն վայելուչ գրաբարի հմտության արգասիք է: Լեոն գրում է, որ *«Նույնիսկ Մխիթարեանները կարող էին պարծենալ այսպիսի գրաբարով»*[28]:

Տպագրության որակը ոչնչով չէր զիջում բազելցիների տպագրությանը: Տպարանի տեսուչն ու կառավարիչն էր Խաչատուր քահանա Ղարաբեկյանցը, որին շուշեցիները Տեր Բոլոյ էին անվանում: Հետաքրքիր է, որ 1844 թվականին տպարանի հարցի շուրջ գրագրություն է սկսվում իշխանությունների և հայոց հոգևոր վարչության միջև, քանի որ իշխանությունները ուշ էին տեղեկացել տպարանի գոյության մասին:

Մետրոպոլիտը կրկին դիմում է Շուշիի հարուստներին՝ զոհողություն կատարելու թեմական դպրոցի պահպանման համար: Հավաքվում է ընդամենը 187 ռուբլի, որը շատ քիչ էր: Պետական խորհրդատու Մելքոն Խիտրովը հոժարակամ իր վրա է վերցնում ռուսերեն լեզվի ձրի դասընթացը, ինչպես և պատմության, աշխարհագրության և թվաբանության ժամերը:

Հետագայում նա ուսումնարանի տեսուչ է նշանակվում: Մետրոպոլիտը դիմեց Անդրեաս և Մարտիրոս Խանդամիրյան եղբայրներին, խնդրելով ապահովել ուսումնարանի գոյությունը: Մեծահարուստ եղբայրները հանձն առան հոգալ սեմինարիայի բոլոր կարիքները՝ տարեկան տալ 1380 ռուբլի, դրա դիմաց պահանջելով սուրբ Աննայի Ասպետության շքանշան: Մետրոպոլիտը չկարողացավ այն իրագործել, ու փառասեր եղբայրները հրաժարվեցին նվիրատվությունից:

Եթե Երևանի և Թիֆլիսի ճեմարաններում պետք է ընդունվեին միայն եկեղեցականների որդիները, ապա Բաղդասարը Սինոդից պահանջում է թույլ տալ ուսանելու և աշխարհիկ մարդկանց որդիներին ու հասնում է որոշ զիջումների:

5. ՕՏԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԸ ՇՈՒՇԻՈՒՄ

19-րդ դարի Շուշիի կյանքի մասին հետաքրքիր մանրամասներ են թողել օտար ճանապարհորդները: 1843 թվականի աշնանը Շուշի է այցելում գերմանացի ճանապարհորդ Բարոն ֆոն Գակստգաուզենը: Նրա ուղեկցող Ադերկասը բարոնին ներկայացնում է Ջաֆար-Ղուլի աղային, որը ռուսական իշխանություններից գեներալի աստիճան էր ստացել և տարեկան 24 հազար ռուբլի եկամուտ ուներ: Գերմանացին գրում է, որ Ջաֆարի տունը արտաքինից ոչնչով չէր տարբերվում մյուս հարուստ թաթարների տներից: Սակայն ներսի դահլիճը եվրոպական կահավորանքով էր: Պատերին հայելիներ են, առաստաղից կախված էր մեծ լուսամփոփը: Պատի մոտ կարմիր փայտից կահույք էր տեղադրված, ինչպես նաև բազկաթոռներ, բազմոց, աթոռներ, սեղան: Պատերը պաստառապատ էին: Ջաֆարը, որ ռուսական գեներալական համազգեստ էր կրում, զարդարված շքանշաններով, հյուրերին ընդունեց եվրոպական սովորությունների համաձայն: Տեղացի մահմեդականները, որ ներկա էին ընդունելությանը, բազմոցին նստեցին ծալապատիկ, ինչպես նստում էին գետնին փռած գորգի վրա: Չնայած Ջաֆարի եվրոպական այս ցուցամոլությանը, նա մեծ հարեմ և բազում երեխաներ ուներ, որը թաքցնում էր հյուրերից: Գերմանացի բարոնը նկատում է, որ կահույքը պատած էր փոշու հաստ շերտով: Այսինքն, այն եվրոպացի եզակի հյուրերի համար էր: Գերմանացի ճանապարհորդը, որ Երևանում հանդիպել էր մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանին, հետագայում գրում է, որ եթե Աբովյանը ցույց էր տալիս ժողովրդի հոգին, ակունքները, ապա խանների այս ժառանգը, որը զրկված էր խանական իրավունքից, բայց ռուսական արքունիքի կամքով ամեն ինչ ուներ, իր տան ներսից բացի ցուցադրելու ոչինչ չուներ: Ջաֆարն ու մյուս մահմեդական բեկերը խանգարում են ճանապարհորդին ծանոթանալու ժողովրդի կյանքին[29]:

Շուշի է այցելում և ռուս նկարիչ Վ.Վերեշչագինը, որը դժգոհում է. *«Քաղաք տանող ճանապարհը այնքան է դժվար, քարեղեն, ճանապարհը այնքան է թեք, որ հինգ ձիերը դժվարությամբ էին քաշում իր սայլը»*[30]:

Դեռ քաղաք չհասած, մի տարօրինակ ժխորի ձայն էր հասնում նկարչի ականջին:

Այս աղմուկը աստիճանաբար փոխակերպվեց հազարավոր ձայներից կազմված մռնչոցի: «Ես Բերդաքաղաք մտա նեղ դարպասներով, ու իմ առջև հայտնվեց մի պատկեր, որի նմանը ոչ մի տեղ չեմ հանդիպել:

Դա մահմեդական տոն էր: Ամեն տարի դա տևում էր Մոհարեմ ամսվա առաջին ինն օրերին: Շիիթ թաթարները այսպես են նշում իրենց երեկոները շիիթների կողմից ի հիշատակ իրենց պաշտելի իմամների տառապանքների ու տանջանքներով մահվան: Շուշիի Քաղաքային հրապարակում, բազմության մեջ սպասում էի մոլեռանդության ու վայրենության տեսակետից դրա նմանը մեր ժամանակներում ոչ մի տեղ չպահպանված տեսարանի,- գրում է ռուս նկարիչը:- Նրանց առջևից քայլում էին «կտրտվողները», մի քանի հոգի երկու շարքով գնում էին ձախով իրար ձեռք բռնած, աջով յուրաքանչյուրը բռնել էր մերկ թուրը, որի սուր ծայրը ուղղված է դեմքին: Այդ ֆանատիկների գլխի մաշկը տասնյակ տեղերից կտրտված էր, ու վերքերից արյունը ցած էր հոսում, ծածկելով ողջ դեմքը»: Հանդիսության համար հրավիրել էին և ռուսական գնդի փողային նվագախումբը, որը ըստ Վերեշչագինի, ոչնչով չէր ներդաշնակում մահմեդական տոնակատարության հետ: Այս ներկայացման հետ ոչնչով չէր համապատասխանում Դոնի կազակների զորախումբը, որը պետք է լրացներ այն դերակատարների պակասը, որոնց հատկացված էր իմամների հալածողների և սպանողների դերը: Այս անգամ ռուս նկարչին առիթ եղավ տեսնելու ներկայացման ավարտը, որ հանձնված էր կազակներին: Երիտասարդ «իմամը», որը դուրս էր եկել կռվելու իր թշնամիների հետ, պետք է նրանց փախուստի մատներ: Կազակները, որոնք ներկայացնում են խալիֆաթի զինվորներին, պետք է ընկրկեն, նահանջեն 14-ամյա իմամի առջև: Ըստ երևույթին, կազակներին դուր չէր եկել նահանջի դերը, ու նրանք հետ փախչելու փոխարեն այնպես հարձակվեցին իմամի պատանի դերակատարի վրա, որ սա հետ ընկրկեց: Ներկայացման ընթացքը խախտվել էր, ու բազմությունը դժգոհ ոռնում էր, պահանջում, որ կազակները նահանջեն, հետ փախչեն: Ի վերջո, դժգոհ կազակները թրերը պատյան դրեցին և ձիերի սանձից բռնած դուրս եկան հրապարակից: Ոչ անցյալի թշնամուն՝ ռուսական զորքին, ներկայաց-

ման մեջ կրկին հատկացված էր թշնամու դերը: Այն պետք է սարսափահար փախչեր: Սակայն կազակները, որոնք երբեք չեն նահանջում, տարվելով գրոհով, նեղում են պատանի իմամին»: Սա ազգամիջյան հարաբերություններից մի հետաքրքիր դրվագ էր, որին ականատես եղավ ռուս նկարիչը, որն էլ պատկերել էր իր նկարներում:

Շուշիի մասին իր նկարագրություններով առանձնանում է ռուս ճանապարհորդ Սեգալը, որը շատ կարևոր մանրամասներ է թողել բերդաքաղաքի, նրա բնակիչների մասին:

Սեգալը դուրս գալով Գանձակից, եվլախի ճանապարհով շարժվում է դեպի Շուշի: *«Գեղեցիկ հեռանկարն ու մոտակա անընդհատ շարժումը, կառքերի շարանը, մատուտակի արմատով բեռնված սայլեր, երկար վզերը առաջ ձգած ու մեջքին ճոճվող ուղտապանով փոքրիկ քարավանները, փոքրիկ հոտերով լեռներ բարձրացող քոչվորների ընտանիքներ, առանձին հեծյալներ, հանդիպելիս մեջքը դեպի մեզ դարձնող կանայք. այս ամենը կենդանացնում է Եվլախից Շուշի տանող խճուղին, այն դարձնում ուշագրավ և հետաքրքիր»,-* այսպես է նկարագրում Սեգալը իր առաջին տպավորությունը: Ռուս սպան գրում է և Աղդամի շուկայի մասին[31]: Նա գրում է, որ Աղդամը ծնունդ է առել 18-րդ դարի կեսերին, երբ Փանահը Խաչենի տերերից գերեզմանոցի համար գնել է այս տարածքը և այնտեղ սպիտակ կրաքարից տուն կառուցել: Շուշիի խաները այստեղ էին անցկացնում ձմեռը: Աղդամի բնակչությունը բազմացավ Իրանից եկած թափառական ցեղերի հաշվին: Աղդամում առավոտյան ժամը 10-ին արդեն շուրջ 10 հազար մարդ էր հավաքվել: Կիրակի օրերին իրենց մթերքներով այստեղ էին գալիս Ղարաբաղի գյուղացիները, Շուշիի առևտրականները, արհեստավորները: Սա այն տեղն էր, որտեղ իրար են հանդիպում Արցախի հողագործ գյուղացին ու թափառական քոչվորը: Սեգալը հայտնում է, որ լավագույն գորգերն ու կարպետները Շուշիում էին գործում, քանի որ նրանց հիմքը բրդյա էր, նշելով, որ մահմեդական կանանց գործվածքը միօրինակ է, քանի որ նրանց մոտ ոչ մի զարգացում, առաջընթաց չկա[32]:

«Ցավոք, նեղության և տեղանքի կտրտված ռելյեֆի պատճառով քաղաքը չէր կարող տարածվել, ու տները խմբերով ցրվել էին գեղեցիկ անկարգության մեջ, հենվել մեկը մյուսին»: Ամռանը այստեղ զով կլիման վայելելու էին գալիս ոչ միայն Ղարաբաղի այլ վայրերից, այլև Բաքվից ու Ելիզավետպոլից, ու քաղաքի բնակչությունը կրկնապատկվում է: Սեգալն ասում է, որ Շուշիի հայերին մեղադրում էին, որ անընդունակ են կոմերցիոն ձեռնարկումներում, մինչդեռ Շուշիի հայ վաճառականներն էին, որ խոշոր դեր կատարեցին Անդրկովկասի առևտրի զարգացման գործում: Նրանք լինում էին Կոստանդնուպոլսում, Վենետիկում, Լիոնում, Լայպցիգում, ասիական երկրները կապում եվրոպական արդյունաբերական կենտրոնների հետ: Սակայն հեռու լինելով ժամանակակից բանուկ ճանապարհներից, Շուշին դուրս է մնում խաղից: Այդ խոշոր վաճառականների որդիները, նստած հայրերի կուտակած ոսկիների վրա, այլևս ոչինչ չէին կարող անել: Եթե առաջ քթոցներով ամեն կողմից շերամի բոժոժներ էին բերում, վերածում թելի ու գործվածքի, ապա արդեն ողջ Ղարաբաղով մեկ նոր ֆաբրիկաներ են տարածվել, որոնք էլ դուրս մղեցին սարի ծերպին ծվարած Շուշիին:

Մահմեդական բեկերը, ըստ 1846 թ. օրենքի, տասնորդական էին ստանում իրենց կալվածքներից: Նրանք ցոփ կյանք էին վարում Շուշիում: Մահմեդական բեկերը ձի շատ էին սիրում: Բեկերից մեկը պատվիրում է իր որդուն, որ ամեն անգամ երամակը յայլաղ քշելիս երեք անգամ այն պտտեցնի իր գերեզմանի շուրջը, որ ինքը գերեզմանից լսի նրանց ամբակների ձայնը և իր հերթին ձայն տա նրանց: Նրա գերեզմանը Աղդամի մոտ էր, ու որդին սրբությամբ կատարում էր նրա պատվերը:

Մահմեդական բեկերը ամառը Շուշի էին գալիս, ապրում, ինչպես ասիացի խաներ, ուտում և քնում էին հատակին: Այդ բեկերը հյուրերին ընդունելու համար հատուկ սենյակ ունեին, որտեղ եվրոպական կահույք էր դրված: Բայց ռուսները կամ եվրոպացիները իսկույն նկատում էին, որ կահույքը ծածկված էր փոշու հաստ շերտով: Բեկերը շատ քաղցր էին ուտում, ժամանակը վատնում զրույցներով: *«Չկա ավելի պահպանողական ժողովուրդ իր սովորություններով, քան Շուշիի մահմեդականությունը,- գրում է Սեգալը,- խուսափելով բարձր կուլտուրայի հասարակության հետ շփումից, նրանք պարփակված ապրելակերպ էին վարում, ու ամեն մի նորամուծություն նախնիների հաստատած սովորությունների նկատմամբ դավաճանություն էին համարում: Մի ամբողջ տարի ապրելով Շուշիում, դուք մահմեդական կնոջ դեմք չեք տեսնի: Փաթաթված դանավուզի կարմիր չադրայի մեջ, նրանք փողոցում ինքնաշարժ*

անձն կոծղ են հիշեցնում: Իսկ գյուղում կինը հավասար է ընտանի կենդանուն, որին լծում են:

Միանգամայն այլ են հայերը: Զգայուն նորամուծության նկատմամբ, հայերը հեշտությամբ են հարմարվում կյանքի նոր պայմաններին ու սոցիալական պահանջմունքներին»[33]:

Առաջին հայացքից Շուշիում ամեն ինչ բարեհաջող է, բոլորը հանգիստ, անվրդով, գոհացած են թվում, ապրում են հաշտ ու խաղաղ՝ չհաշված այն փոքրիկ թյուրիմացությունները, որ ծագում են հասարակական կառավարման կամ քաղաքային բարեկարգման տարբեր հարցերում: Սակայն մահմեդական միջավայրում այս հանգստության տակ զգացվում է մտքերի այն հուզումը, որ ծնունդ են առել տարբեր աղանդների ուսմունքներից, որոնք այստեղ են թափանցել Պարսկաստանից: Շուշիում տարածվել էին երեք աղանդներ՝ շեյխեր, Հաջի-քերիմ-խան և բաբա: Բաբաիզմը քանդում էր շիիզմի հիմքերը, ուստի մահմեդական հոգևորականները անհաշտ պայքար էին մղում բաբաիզմի կողմնակիցների դեմ:

Սեգալը, դիտելով Շուշին բոլոր կողմերից, գրում է. *«Քաղաքի տեսքը օդային հեռանկարի մեջ իրոք հոյակապ է, ասես այն կախված է օդի մեջ: Նրա որոշ հատվածները լեռնային տեղանքի շնորհիվ ալեկոծվող ծովի մեջ կղզյակներ են հիշեցնում: Այստեղ առանձնանում է խանի տունը, որտեղ 1796 թվականին սպանվել է Իրանի շահ Աղա-Մուհամեդ-խանը»:* Ռուս ճանապարհորդը Շուշիում մնաց երկու շաբաթ:

Ե մասի հղումների ցանկ

[1] Ս. Դ. Ավագյան «Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ», Եր. «Գիտելիք», 1991թ., էջ 106:

[2] "Обозрение Российского владычества за Кавказом" , ч III, 1836 г , С. Петербург. стр 307-309:

[3] Տաշած բարակ տախտակամած:

[4] «Նոր դար» 1886 թ. N. 75, էջ 3, Շուշի:

[5] "Обозрение ..", стр. 311

[6] Ռաֆայել Իսրայելյան, «Հոդվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ», Երևան 1982, էջ 130:

[7] Մ. Բարխուտարեանց, «Արցախ», Բաքու, 1902, էջ 150:

[8] ՀՊՊԿԱ 56-1-2199 թ. 1-2 1847 թ:

[9] Մովսես Թաղիադյանը գրում է, որ Սբ.Աստվածածին եկեղեցին, որտեղ ինքը կաթողիկոսի պատվերով քարոզ է կարդացել, քարաշեն է: Ուրեմն՝ տանիքն ու գմբեթը փայտե շինանյութով 1822 թվականից հետո են նորոգվել:

[10ա] Սբ. Աստվածածին եկեղեցին 1950-ական թվականներին իշխանությունները քանդում են և կառուցում Շուշիի մշակույթի տունը, այդպես վերացնում բերդաքաղաքի հայոց պատմության վերջին հետքերը

[10] Լեո: «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցի», Թիֆլ. 1914, էջ 63:

[11] Մ. Բարխուտարեանց, էջ 148:

[12] Փաստորեն Շուշիի չորս եկեղեցիների զանգակատները կառուցվում են նույն ճարտարապետական հորինվածքով:

[13] Այս պատմությունը գրքիս հեղինակին պատմել է իր մայրը՝ տոնաշենցի Սարուսյա Կարապետյանը:

[14] Մ. Բարխուտարեանց «Արցախ», Բ., 1902 թ., էջ 149:

[15] ՀՊՊԿԱ 56-1-3826 թ. 1-2:

[16] ՀՊՊԿԱ 56-1-8413 թ. 3:

[17] ՀՊՊԿԱ 56-1-2626 թ. 10:

[18] Մ.Բարխուտարեանց, էջ 149:

[19] «Մշակ» թերթ, Թիֆլիս, 1887 թ., N 23, էջ 2:

«Նոր դար», թերթ, Շուշի,1889, N 170, էջ 2:

[21] Մ. Բարխուտարյանց, «Արցախ», Բաքու, 1899 թ., էջ 140-141:

[22] ՀՊՊԿԱ 56-1-415, թ. 2:

[23] ՀՊՊԿԱ 56-1-415, թ. 3:

[24] ՀՊՊԿԱ 56-1-3818, թ. 1,4:

«Արծագանք», Թիֆլիս, 1887 թ., հունիսի 10, էջ 341:

[26] Մ. Բարխուտարյանց, էջ 140-141:

[27] Նույն տեղում, էջ 141:

[28] Շահեն Մկրտչյան, «Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները», «Հայաստան», 1995 թ., էջ 229:

[29] Ե. Լալայան «Երկեր» 2, Եր. 1988 թ., էջ 86:

[30] Լեո, «Պատմութիւն... դպրոցի», Թիֆլիս, 1914, էջ 125:

[31] Барон Август фон Гаксгаузен, "Путевые впечатления и воспоминания Барона фон Гаксгаузена", Спб., 1857 г., ч II, стр. 149

[32] В. Верещагин "Повести, очерки, воспоминания", "Из путешествий по Закавказскому краю", М. сов. Россия, 1990, стр. 119.

[33] "Кавказский вестник" 1902, N 4, Сегаль, "Елисаветапольская губерния-впечатления и воспоминания", стр. 44.

[34] Նույն տեղում, էջ 50:

ՄԱՍ Զ (1860-1899 թ թ.)

1. ՊԵՏՐՈՍ ՀԱՆՀՅԱՆԸ ԹԵՄԱԿԱՆԻ ՏԵՍՈՒՉ

1860-ական թվականներին Շուշիում կրթության վիճակը ավելի լավ պատկերացնելու համար դիմենք այս կրթական համակարգով անցած շուշեցի գրող և երկիծաբան Կոնստանտին Մելիք-Շահնազարյանի հուշերին[1]: 1865 թ. պատանի Կոնստանտինին տալիս են սովորելու Բաղունց Ղարադամում ապրող «բանաստեղծ» Արությունի վարժարանը: 8-12 տարեկան պատանիները կազմում էին առաջին դասարանը, 13-22 տարեկանները՝ մյուս դասարանը, յուրաքանչյուրում՝ 20-ական աշակերտ: Վայելչագրության ուսուցիչն էր Աղաբեկը, որը թնավոր չուխա էր հագել: Նա սագի փետուրներից գրիչ էր պատրաստում, տալիս աշակերտներին: Աշակերտները ծալապատիկ նստած մերկ գետնին, թուղթը դրած ծնկներին փետրագրիչը թաթախում էին փոսի մեջ դրած թանաքամանի մեջ ու խզբզում թղթի վրա: Արությունը մի աշակերտի ուղարկում է հացթուխ Ազիզբեկի խանութից հաց բերելու, մյուսին՝ Թոփխանայի շուկայից հինգ գրվանքայի վարանդյան խաղող բերելու: Նա մի քանի ժամ աշակերտների առջև նստած ուտում էր, առանց ուշադրություն դարձնելու, թե սոված, կիսաքաղց աշակերտների վրա ինչ ազդեցություն կգործի: Արությունը հայտնի բանաստեղծի անուն էր հանել Շուշիի անգրագետ մադկանց շրջանակներում: Աշակերտներին հաջողվել էր ծածուկ արտագրել նրա «բանաստեղծությունները»: Ահա դրանցից մեկը.

Ով տիրացու քյաքյուլ Բասան,
Փոշի հվաքող դարվիշ Հասան,
Թարվիզ Բաքու՝ էս ի՞նչ սաբա,
Մալականի կոտրված յեաբա,
Դու ի՞նչ մարդ ես՝ սխալ ջոկես,

Քոնն էնա քյաքյուվդ կոկես,
Բաղի միջի պոչ կտրված լոկ ես...

Այս տողերը գրելու առիթ էր հանդիսացել Արությունի այցելությունը Խաչատուր վարժապետի դպրոցը, որը նրան վատ էր ընդունել ու հանդիմանել վարժապետական թերությունների համար:

1866 թ. Կոնստանտինին տեղափոխում են Բաբաջան վարժապետի դպրոցը: Քաղաքի հարուստները իրենց երեխաներին այս դպրոցն էին տալիս, որովհետև Բաբաջանը ֆրանսերեն դասեր էր տալիս: Նա մի տետր ուներ, որտեղ նշված էր, թե կարգը խախտելիս ինչ պատիժ պետք է ստանա աշակերտը: Պատժվում էին ծուլության, չարության, դաս չիմանալու, ուշացման համար: Ամենաթեթև պատիժը չոքեցնելն էր կամ «բարեկարգիչ» քանոնով 2-12 անգամ ձեռքերին խփելը: Պատժամիջոցներից էր նաև աշակերտին քաղցած պահելը:

Պատանի Կոնստանտինին այստեղից տեղափոխեցին ժամհար Քյասուն տղա Ալեքսան վարժապետի դպրոցը, որը Կուսանաց վանքի մոտ էր: Դասերը սկսվում էին ժամը 8-ին, տևում մինչև 12-ը: Աշակերտները դպրոց էին գալիս փոքրիկ ու զարդանախշ խուրջիններ ուսերին ձգած, մեջը իրենց գրքերը, պիտույքները, ուտելիք, մեծ մասամբ՝ հաց ու պանիր: Ձմռանը ամեն աշակերտ պարտավոր էր իր հետ փայտի կտորներ բերել վառարանի համար: Աշակերտները սկզբից սագի փետուրներից գրիչ պատրաստել էին սովորում: Մի օր Ալեքսան վարժապետը պատվիրեց, որ աշակերտները ինչքան վայելչագրության տետրեր ունեն, բերեն իրենց հետ: Նա հաշվեց 30 տետր: Շատ ուրախ էր ու հայտնեց, որ գրազը Բաբաջան վարժապետից տարել է, քանի որ իր դպրոցի տետրերը ավելի շատ էին: Հաջորդ տարին Կոնստանտինին տեղափոխեցին Գրիգոր Ղազարյանի դպրոցը: Սակայն նա խունկ ծամելիս թունավորվեց ու մահացավ: Հետո պատանին հաճախում էր թագավորական շկոլը (գավառական դպրոց), որը տեղադրված էր Թոփխանայի հրապարակի վրա գտնվող Ամբրումենց տանը: 1869 թվականին պատանին տեղափոխվում է հոգևորական թեմական դպրոցը, որը այդ ժամանակ գտնվում էր կնյազ Կարապետի տանը: Թեմական դպրոցը ևս իր կրթական մակարդակով որևէ նշանակալից առավելություն չուներ մասնավոր այս դպրոցների նկատմամբ:

Շուշիի մտավորականության կյանքում կարևոր իրադարձություն էր ժամանակի ամենազարգացած գործիչներից մեկի՝ Պետրոս Սամվելյան-Շանշյանի՝ Շուշիի թեմական դպրոցի տեսուչ նշանակվելը: Նա ուսում էր ստացել Ներսիսյան դպրոցում և Լազարյան ճեմարանում, կրթությունը շարունակել Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում, ստացել իրավաբանի մասնագիտություն: Շանշյանը եղել է եվրոպական կենտրոններում՝ Վիեննայում, Վենետիկում, Հռոմում, Փարիզում, ունկնդրել Փարիզի և Հռոմի համալսարաններում: 1848 թվականին ներկա է եղել Փարիզի փետրվարյան իրադարձություններին: 1852-57 թվականներին վարել է Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնը, մի շարք բարեփոխություններ կատարել դասավանդման մեթոդների և ծրագրերի մեջ: Շատ առարկաների դասավանդումը փոխելով հայերենի, որը մեծ ռեֆորմ էր, Շանշյանը իր հետ Շուշի բերեց նոր, ազգային ինքնագիտակցության մթնոլորտը:

Դպրոցը փոխեց իր անունը, այսուհետ կոչվելով «Եղիշեան Ազգային հոգևոր դպրոց» 5-րդ դարի հայ պատմագրի անունով:

Հետաքրքիր է, որ Շուշին դառնում է առաջադեմ հայ մտավորականներին դեպի իրեն ձգող մի վայր, որտեղ կարող են մատաղ սերնդին ի նպաստ դնել իրենց ձեռք բերած գիտելիքները, ողջ կարողությունն ու տաղանդը: Եվ այս մտավորականները առաջին հերթին գալիս են դեպի դպրոց:

Նրանք զգացել են, որ առանց կրթության ազգը չի կարող ազատվել խավարի, կեղեքման, ճնշման ճիրաններից, որ ազգային-ազատագրական շարժում, մեծ զարթոնքը հնարավոր է միայն կրթված ազգ ունենալու դեպքում: Ի վերջո, պետք է Եվրոպայի հետ համաքայլ գնալ: Իհարկե, դպրոցներում իրար են բախվում խավարամտությունն ու լուսավորը, մոլեռանդ կղերականությունն ու ազատամտությունը, Ասիան ու Եվրոպան: Ու առաջադեմ մտավորականները երբեմն հաղթում են, հաճախ էլ՝ պարտվում: Բայց որ Եվրոպայում կրթված ստվար մտավորականների մի մեծ խումբ ընտրել է հանձինս հաջորդ սերնդի ուսյալ ազգ ունենալու ռազմավարությունը, դա իրականություն է:

Դպրոցից դուրս նրանք առօրյա քաղաքային կյանքում ևս ստեղծում են իրենց մթնոլորտը, ու դժվար չէ կռահել, որ Շուշին գաղափարների բախման մի հսկա խառնարան է:

Շանշյանը իր հետ որպես ուսուցիչ է բերում գրող Պերճ Պռոշյանին, որը Թիֆլիսում հիմնել էր օրիորդաց ուսումնարանը: Նա Պետրոս Շանշյանին խնդրեց օգնել իրեն Շուշիում ևս օրիորդաց դպրոց հիմնելու գործում: Պ.Պռոշյանը թեմականում դասավանդում է հայ գրականություն, հայոց լեզու, հայոց պատմություն: Շանշյանի և Մարիամ Հախումյանի օգնությամբ Պերճ Պռոշյանը բացում է «Ղարաբաղա Տիրամայր սուրբ Մարիամ օրիորդաց» ուսումնարանը:

Ինչպես նշում է պատմաբան Լեոն, օրիորդաց կրթության գաղափարը սկիզբ է առել նաև Հախումյանների ընտանիքում, որտեղ այն կար մասնավոր կերպով: Համբարձում աղա Հախումյանի կինը՝ Մարիամը, որ Մելիք-Շահնազարյանների ծյուղերից էր, իր տանը դաստիարակում էր յոթ աղքատ աղջիկների: Երբ հոգևոր դպրոցում, որը տեղադրված էր Դավիթ Սարուխանյանի տանը, Ստեփանոս արքեպիսկոպոսը ժողով գումարեց, Համբարձում աղա Հախումյանը ելույթ ունեցավ և խոսեց օրիորդաց դպրոց բացելու մասին: Դրա դեմ արտահայտվեց մի ազդեցիկ մարդ՝ Գրիգոր Ղուլյանց ապերը, որ երեցփոխ էր ու թեմականի հոգաբարձու: Նա ասաց, որ ինքը երկու աղջիկ ունի, և երբ նրանց դուրս է ուղարկում, ապա նրանց հետևելու է ուղարկում իր երեք ծառաներին: «Հիմա ինչպե՞ս հայբան[2] տամ նրանց ձեռքն ու ուսումնարան ուղարկեմ»,- եզրափակում է նա:

Ժողովը մերժում է օրիորդաց դպրոցի գաղափարը: Սակայն Համբարձում աղա Հախումյանը որոշում է բացել այն: 1864-ի ծմռանը կազմվում է 40 անդամ ունեցող զուտ կանանց ընկերություն՝ տարեկան 6 ռուբլի անդամավճարով: Նրանց անունից Մարիամ Հախումյանը Ստեփանոս արքեպիսկոպոսին առաջարկում է սուրբ Մարիամ անունով օրիորդաց ուսումնարան բացել, ներկայացնում է Պերճ Պռոշյանի կազմած կանոնադրությունը:

Հախումյանները ուսումնարանին են նվիրում իրենց տան հինգ սենյակները: Տեսուչի պարտականությունը ստանձնում է Մարիամ Հախումյանը, իսկ վերակացուի պաշտոնը՝ կույս Եղիսաբեթ Սիմոնյանցը: Ապրիլի 7-ին բացվում է ուսումնարանը: Ահա թե ինչպես է նկարագրում այդ արարողությունը Պերճ Պռոշյանը իր «Շուշիի սուրբ Մարիամ օրիորդաց ուսումնարանի բացումը» ակնարկում:

«1864 թ. ապրիլի 7-ին է, սուրբ Աստվածածնի ավետյաց օրը, քանի-քանի սրտեր են բաբախվում Շուշիումը, հասնում է նշանակեալ

ճաշից հետո երեք ժամը, հանդիսականի՝ հոգաբարձուհի տիկնայք իրենց ամուսիններով հրավիրված են օրիորդաց ուսումնարանումը տիկին Հախումյանցի տանը: Սենյակը, որտեղ պետք է դասատվությունը սկսվեր, պատրաստված էր օրինավորապես. աջակողմը, պատի վերայ, պաշտպանն ուսումնարանիս, միշտ կույսն Մարիամ իր մանկացյալ Փրկիչը գիրկն առած, ուրախ սրտով միջնորդ էր լինում էս գործի հաջողության համար, մյուս կողմը Հայաստանի Ոգին՝ նստած ավերակաց վրա, ձեռքը ծնոտին, որ լալիս էր. այսօր կարծես թե մի փոքր նշույլով ուրախ ժպիտը իրեն երեսը փայլեցրել՝ նայում է դեպի այն մատաղ գառնուկներին, այն սիրված երեխային, ասելով այսպես. «Իմ հույսը Ձեզ և ձեզպեսներու վրա է», կարծես թե արտասվելիս աչքերը դեպի էջմիածին և Արարատը դարձրած՝ ասում էր՝ դուք էլ զգացեք փոքր ինչ ուրախություն, մեր որդիքն ամեն տեղ սկսում են մեզ հիշել»:

Այնուհետև մի պատանի (թեմականի աշակերտներից Հայկ Խաչատրյան) ճառ է կարդում, որը գրել է Պետրոս Շանշյանը...

«... Ցանկանո՞ւմ եք, տեարք, իմանալ, թե ողջից ավելի ինչ է պակաս մեր հայրենեացը ներկայ ժամանակ,- զոհաբերություն, մեծանձնություն և ազգասիրության հոգի: Մենք ունենք վաճառականներ, ունենք հեղինակներ, աստիճանավորներ, իշխաններ, բայց մարդիկ շատ սակավ, և ավելի սակավ՝ հայրենասերի, գլխավորն է՝ եթե ոչ միակ պատճառն այս ցավալի վիճակի, Տեարք, այն է, որ չունինք մայրեր»[3]:

Երբ ներս է մտնում Ղարաբաղի հոգևոր առաջնորդը, հոգևոր դպրոցի աշակերտների կատարմամբ հնչում է «Այսօր ցնծան երկնայինք» շարականը և շուշեցի Շուշանիկի գրած երգ-ողբերգությունը:

Մայր մեր Անի, ցնծա այսօր անտրտում,
Քո որդիքը թմրութիւնից են զարթնում.
Լույս Արևը այսօր ծագեց Ղարաբաղ,
Մի՛ լար, Անի՛, մի նոր յոյս ենք քեզ ավետում:
Հերիք թափավ դառն արտասուքդ, հերիք կոծդ,
Հայոց Անի, կրողջանան վերքդ ու ցավդ.
Լույս արևը այսօր ծագեց Ղարաբաղ,

Մի՛ լար, Անի՛, լսիր աղերսս քո որդւոցդ:
Գանգատ է, թե չըկայ ըսող՝ մի՛ լա, մի՛,
Այսօր տիկնայք քեզ ավետեն՝ մի՛ լա, մի՛,
Լոյս արևը այսօր ծագեց Ղարաբաղ,
Տարածվեցավ յոյս գիտութեան՝ փառքն ազգի:
Տես այս մանկունք, այս սիրասուն աղջիկներ,
Սրանք կորբեն արտասուալից քո աչքեր,
Լոյս արևը այսօր ծագեց Ղարաբաղ,
Սրանք խոստանան ապագային մեծ յոյսեր:
Ձեզ ավետիք՝ մեծ ավետիք, հայ տիկնայք,
Ուսումնարանս կկատարե ձեր բաղձանք,
Լոյս արևը ձեզնով ծագեց Ղարաբաղ,
Ցիսուս մանկիկն ձեզ պարգևէ երկար կեանք:
Սուրբ Տիրամայր Մարիամը ձեզ պաշտպան,
Որինեալ լինեք դուք նրա հետ հավիտեան.
Լոյս արևը այսօր ծագեց Ղարաբաղ,
Մի՛ լար, Անի՛, աւետե քեզ Ղարաբաղն:

Այս երգ-բանաստեղծությունը թե՛ ոճական, և թե՛ բովանդակության առումով Շուշիի տապանաքարերի դամբարաններից հեռու չէ:

«1864 թիվը Ղարաբաղի համար բաց արեց մի ընդարձակ ասպարեզ աշխարհիս տարեդարձի մեջ,- գրում է Պերճ Պռոշյանը,- փետրվարի 27 սուրբ Վարդանանց տօնի օրը Ղարաբաղը զգաց իր մեջ այն ազգայնության և կրօնի հոգին, որով վառված են եղել 1400 տարի առաջ Վարդանանք և իրենց փափկասուն տիկնայք»:

Այնքան կարևոր ու աչքի ընկնող երևույթ էր Շուշիի այս իրադարձությունը, որ փոխարքա Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի կինը՝ Մեծ իշխանուհին Օլգա Ֆեոդորովնան շնորհակալություն է հայտնել տիկին Հախումյանին դպրոցի համար և խոստացել օգնել:

Օրիորդաց դպրոցում դասեր էր տալիս գեղանկարիչ Ներսես Ներսիսյանը, որը ամեն օր Խանքենդիից (հնում՝ Վարարակն, հետագայում Ստեփանակերտ) երկու ժամ ճանապարհ կտրելով, գալիս էր Շուշի և աղջիկներին ձրիաբար գծագրություն, նկարչություն դասավանդում: Նա գեղեցիկ տեսարաններ, ծաղիկներ, գարդեր էր նկարում, որը իրենց ձեռագործերում կրկնօրինակում էին օրիորդները:

Պերճ Պռոշյանը, որը երջանիկ էր օրիորդաց ուսումնարանի հիմնադրումով և դասերով, ավարտում է նաև Կ. Եզյանի «Ներքին կյանք Հայաստանի, պատմաբանական քննություն» գրքի թարգմանությունը, ապա հիվանդության պատճառով ընդմիշտ հեռանում է Շուշիից:

Շուտով գրպարտության զոհ է դառնում Շանշյանը: Կաթողիկոս Մատթեոսը Ստեփանոս արքեպիսկոպոսից պահանջեց հեռացնել Շանշյանին տեսչությունից: Ինչպես Լեոն է գրում. *«... վերկացավ սնաթույր մրրիկը, և մի ակնթարթում մարեց այն լույսը, որ նոր էր սկսել պլպլալ Ղարաբաղի մռայլ լեռներում»: «Ընդամենը մի տարի տևեց Շանշյանի պաշտոնավարությունը Շուշիում, բայց նրա գործունեությունը, նրա անձնավորությունը, նրա պաշտպանած դատը և նրա պայծառ գաղափարները ստեղծեցին նրա համար անմահ մի հմայք, իսկ դպրոցի այդ կարճ ժամանակամիջոցը դարձավ մինչ այսօր էլ ժողովրդի մեջ ապրող նվիրական հասկացություն, սրբություն, ավանդություն, որի մեջ հերոսացած է մեր վերածնու-թյան ժամանակների «լաւ» մարդը»,-* գրում է Լեոն[4]:

2. ԳԵՎՈՐԳ ՉՄՇԿՅԱՆԻ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԸ ԿԱՄ ՀԻՆ ԱՄԲԱՐԸ՝ ԹԱՏՐՈՆ

«*Շուշիում,*- գրում է ադրբեջանցի գիտնական Ֆիրդուն Շուշինսկին,- *որը առևտրի ու մշակույթի բնագավառներում մրցակցում էր Թիֆլիսի հետ, առաջին թատերական ներկայացումը տվել է 1848 թվականին: Տեղական հայ և ռուս մտավորականությունը իր ուժերով հաճախ էր ներկայացումներ բեմադրում: Ադրբեջանցի մտավորականները հաճույքով էին գնում այդ ներկայացումներին: Այդ ժամանակ դեռևս ադրբեջաներեն ոչ մի դրամատիկ ստեղծագործություն գոյություն չուներ, դրա պատճառով էլ ադրբեջանական դրամաներ չէին բեմադրվում»*[5]: Գրականությունը պարսկերեն էր, իսկ թրքախոսը պարսկերեն չի հասկանում: Իսլամի դավանումը արա-

բերեն էր, որը առաջ նս ոչ ոք չէր հասկանում: Մոլլան նամազ էր կարդում, ու շուշեցի մահմեդականները ոչինչ չէին հասկանում...

1865 թվականի հուլիսի վերջին դերասան և ռեժիսոր, թատերական գործիչ Գևորգ Չմշկյանը, դերասաններ Միհրդատ Ամրիկյանի և Սեդրակ Մանդինյանի հետ, փոքրիկ թատերախումբ է ստեղծում և գրպանում ունենալով ընդամենը 50 ռուբլի, Թիֆլիսից հյուրախաղերի է մեկնում դեպի Գանձակ ու Շուշի: Նրանք նպատակ ունեին այս հայաշատ վայրերում որոշ միջոցներ հավաքելով՝ հյուրախաղերի մեկնել Կոստանդնուպոլիս: Գանձակցիների կողմից ուշադրության չարժանանալով, անմիջապես դեպի Շուշի են ճանապարհվում:

Գիշերում են սարահարթի ստորոտում: Քանի որ սայլերով անհնար էր բերդ հասնել, դեկորացիաները, հանդերձանքն ու պաշարեղենը բարձելով ձիերի ու ջորիների մեջքին, շտապում էին ժամ առաջ Շուշի հասնել: Ճանապարհին հանդիպող արցախցիները զարմացած հայացքներով ուղեկցում էին անսովոր ճամփորդներին ու հարցնում իրար.

- Ա, էս հինչ մա՞թիքըն...

Մյուսը պատասխանում էր.

- Հինչըմ գյուդո՞ւմ...

- Քյանդրբազներ կինին...

- Չէ հա՛, ջամբալնե՛ր...

Հյուրատուն մտնելիս նրանք հայտնվում են Արտեմ Լազարիչի քաղաքային ակումբում: Տերը, որ հյուրասեր մարդ էր, իմանալով հյուրերի առաքելության նպատակը, ընդունում և տեղավորում է հյուրերին:

Սեդրակի շուշեցի ուսանողական ընկերը՝ մանկավարժ Տեր-Հակոբյանը, դերասաններին տանում է քաղաքից դուրս գտնվող մի մեծ քարաշեն շինության մոտ և հանդիսավորությամբ ասում.

- Սիա մեր թատրոնը:

Ըստ երևույթին, մինչև ռեալական դպրոցի հիմնումը այստեղ տեղադրված էր Շուշիի ամբարը: Իսկ մինչ այդ այն Շուշի քաղաքի բանտն էր: «Տարազ» շաբաթաթերթը 1900 թ. հունվարի 17-ի համարում (էջ 327) նոր դպրոցի հանդիսավոր հիմնման մասին նյութում հաղորդում է, որ հին ամբարը լայնածավալ շենք է, որը 60-ական թվականներին որպես թատրոն է ծառայել: Ըստ էության, 1848 թվա-

կանին շուշեցի ուսանողները ամռանը այստեղ էլ խաղացել են իրենց առաջին ներկայացումները: Արձակուրդներին Շուշիում թատերական խումբ էին կազմում ու կիսավեր շենքի սրահներից մեկը դահլիճի վերածելով, ներկայացումներ խաղում: Սեդրակ Մանդինյանին հանձնարարվեց դահլիճում բեմ և նստելատեղեր պատրաստելու գործը: Թատերախումբը մեծ համակրանք գտավ Շուշիի երիտասարդության մեջ: Երեք օրում նրանք թղթյա 50 սաղավարտ, փայտե նիզակներ, զրահներ, սրեր պատրաստեցին:

Որոշեցին առաջինը բեմադրել «Սամվելը», որի հեղինակն էր Սրապիոն Հեքիմյանը: Զուգահեռաբար պատրաստում էին «Վարդան Մամիկոնյան» ողբերգությունը:

Ներկայացման օրը դահլիճում ազատ տեղ չկար: Սակայն թույլ սեռի ներկայացուցիչներին չէին հրավիրել: Հին ավանդույթի համաձայն նրանք իրավունք չունեին մասնակցելու այլ մարդկանց հավաքներին: Երբ ներկայացվում էր «Վարդան Մամիկոնյանը», շուշեցիները ինքնամոռաց կրկնում էին՝ «Իմ քաջ զինվորներ...», ապա բացականչում. «Կեցցե՛ Վարդանը»: Ավարտվել էր ներկայացումը, սակայն շուշեցիները «Կեցցե՛ Վարդանը» աղաղակելով չէին հեռանում դահլիճից և պահանջում էին, որ շարունակվի ներկայացումը: Վերջապես, տաղանդավոր դերասան Միհրդատ Ամրիկյանը, ի հիասթափություն ամենքի հայտարարեց, որ ներկայացումը վերջացել է: Հովհաննես Ամրիկյանը 1860 թվականին Ս. Վանանդեցու «Միհրդատ» ողբերգության գլխավոր դերի փայլուն՝ կատարման համար ժողովրդից ստացել էր «Միհրդատ» անունը:

- Ափսո՞ս, ափսո՞ս...,- ասելով տրտնջաց շուշեցի հանդիսատեսն ու «Կեցցե՛ Վարդանը» կանչելով դուրս եկավ դահլիճից: Բարի Լազարիչը մեծ ընթրիք էր պատրաստել բոլորի համար: Որոշեցին հաջորդ ներկայացման համար աջ կողմի տոմսերը վաճառել կանանց, ձախ կողմինը՝ տղամարդկանց համար: Ծրագրված էր ներկայացնել կրկին «Վարդան Մամիկոնյան» ողբերգությունն ու «Շկոլի վարժապետը» վոդևիլից մի քանի տեսարաններ: Գևորգ Չմշկյանը հետագայում «Իմ հիշատակարանը» գրքում գրում է. «Ես այդ երեկոյան խաղովս առավել շատ գոհ մնացի, քան թե Թիֆլիսի մեծ թատրոնում խաղացած ժամանակներս»: Զինվորական նվագախումբը, որ բերել էին Խանքենդիից (Վարստակն), Վարդանանց երգեր էր նվագում: Երեխաները, որ իրենց ծնողների հետ եկել էին ներկայացման,

անընդհատ գոչում էին՝ «Կեցցե՛ Վարդանը», «Կեցցե՛ Չմշկյանը, կեցցե՛ Ամրիկյանը, կեցցե՛ Մանդինյանը»: Կին թե տղամարդ, դերասաններին ուղեկցեցին մինչև նրանց կացարանը: Բերդաքաղաքից հեռանալիս Շուշիի երիտասարդությունը թատերախմբին հայրենաշունչ երգերով ճանապարհեց մինչև սարահարթի ստորոտը: Բաժանումը շատ հուզիչ էր: Բոլորն էլ արտասվում էին: Այս հյուրախաղերը անջնջելի տպավորություն թողեցին դերասանների վրա: Նշանավոր թատերախմբի այցը իր հերթին խորը հետք թողեց Շուշիի հայության վրա, արմատավորեց սերը դեպի թատրոնը, ակնածալից հարգանքը դեպի խոսքի մեծ վարպետները:

Սեդրակ Մանդինյանը, որը կրթությամբ մանկավարժ է (սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, Պետերբուրգի համալսարանում, Գոթայի ուսուցչական սեմինարիայում, Հայդեբերգի, Լայպցիգի, Վիեննայի համալսարաններում), այս հյուրախաղերի ընթացքում կապվում է Արցախի ու Շուշիի հետ, ու արդեն անկարող լինելով մերժել Պետրոս Շանշյանի առաջարկը, ուսուցչություն է անում հոգևոր թեմական դպրոցում: Հետագայում նա դառնում է թեմականի տեսուչը: Իհարկե, նա Շուշիում խրախուսում էր թատրոնը, դպրոցի դահլիճում աշակերտների և ուսուցիչների ուժերով ներկայացումներ բեմադրում:

3. ԱՆԿՈՒՄ ՈՒ ՎԵՐԵԼՔ

1869 թվականին Շուշիում թեմական դպրոցի շուրջը շիկանում է մթնոլորտը: Ստեփանոս արքեպիսկոպոսի հեռանալուց հետո թուլանում են Շանշյանցի դիրքերը, որին սկսում են մեղադրել հակակրոնական քարոզչության մեջ: Հոգաբարձուների խորհուրդը որոշեց դպրոցը տեղափոխել Թոփխանայի հրապարակի վրա գտնվող Անանյանների տունը: Առաջնորդարանը դա չներեց տեսուչին և նրա կողմնակիցներին: Նոյեմբերի 3-ին պատահած մի դեպք տակնուվրա արեց ողջ քաղաքը: Գավառական քարտուղարի աստիճան ունեցող շուշեցի Կարապետ Բահաթրյանը քաղաքային այգում պատահում է երաժշտության ուսուցիչ Գրիգոր Դովլաթյանին, որ Թիֆլիսից էր եկել Շանշյանի հետ, և ասում.

- Կաթողիկոսից կոնդակ է եկել, որ հեռանաք Շուշիից, ինչո՞ւ չեք հեռանում:

Չինովնիկը ձեռնափայտով սկսում է ծեծել ուսուցչին: Ժողովուրդը պահանջեց առաջնորդարանից քննել գործը: Վիճակավոր Գևորգ վարդապետ Արամյանը ծգծգեց այն ու ստիպված գիշերը փախավ էջմիածին: Շանշյանը մի պատվիրակության հետ մեկնում է էջմիածին: Հուզիչ տեսարան էր պատգամավորության վերադարձը էջմիածնից: Աշակերտները խումբ-խումբ շարվել էին ճանապարհի երկու կողմերում ու պատվիրակության մեջ Շանշյանին էին որոնում: Իսկ Շանշյանը Կաթողիկոսի որոշմամբ Թիֆլիս էր վերադարձել:

Մեծ պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) ևս սովորել էր թեմական դպրոցում: Նա հետագայում նկարագրում է աշակերտների ծեծի տեսարանը, որ իրականացնում է դպրոցի տեսուչ Խորեն վարդապետ Ստեփանյանը: Եկեղեցում մանկական միամիտ չարաճճիության համար տեսուչը որոշում է պատժել պատանուն քանոնի քառասուն հարվածով, որից սարսափում էր նա: Նրա հետ պետք է պատժվեր մեկ այլ աշակերտ ևս: Աղոթքից հետո Ստեփանեն մի քանի ուժեղ և բարձրահասակ աշակերտների հանձնարարեց բոլորի առջև իրականացնել պատիժը: Առաջին զոհը Բոգդանն էր: Նա ցավից սկսեց աղաղակել: Շուտով հայտնվեց ուսուցիչ Հակոբ Մելիք-Շահնազարյանը և աշակերտության առջև խիստ հանդիմանեց տեսուչին: Ստեփանեն հանկարծակիի եկած հեռացավ դահլիճից և հրաժարական գրեց: Խորեն վարդապետ Ստեփանեն Շուշիում շարունակեց «Հայկական աշխարհի» հրատարակության գործը: Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը, որը թեմի առաջնորդն էր, ընդարձակում է մետրոպոլիտ Բաղդասարի կառուցած շենքը և դպրոցը տեղափոխում այնտեղ: Այդ ժամանակ դպրոցն ուներ վեց դասարան՝ 313 աշակերտներով:

1868 թ. թեմական հոգևոր դպրոցի աշակերտների ցուցակում արձանագրված էր մահմեդական ընտանիքներից երկու անուն, մեկը՝ Հաջի, որի դիմաց Հաջիյանց էր գրված, մյուսը՝ Կնյազ Ունցի, որը Խուրշիդ Բանու Նատևանի (Մեհթի խանի դստեր) որդին է: Հաջի անունը հիմնականում ընդունված է Դաղստանի ժողովուրդների մոտ: Խուրշիդ Նատևանի ամուսինը դաղստանցի իշխան Հասան Ուցոմնևներ, ազգությամբ կումիկ, որը գերադասում էր, որ որդուն առաջադեմ հայկական դպրոցում ուսման տալ, քան թե մզկիթում:

Դեռևս Իբրահիմ խանի ժամանակ Շուշիում մնացող ավարական զորքի համար ավարների մայրաքաղաք Խունզախից այստեղ էր տեղափոխվել և մահմեդական հավատքի սունի ճյուղի մոլլա Մոհամեդը, որի ճյուղերից էր թեմականի աշակերտներից Հաջի-Հաջիյանցը: Ավարական այս շառավղի ճյուղավորումներից է և խորհրդային շրջանում հռչակավոր կոմպոզիտոր դարձած Ուզերիր Հաջիբեկովը՝ «Լեյլի և Մեջնուն», «Ասլի և քերիմ», «Քյոռ օղլի» և «Արշին մալ ալան» օպերաների հեղինակը (1885-1948 թթ.)[6]:

Շուտով Շուշիի հաշտարար դատավոր Ֆիշերի և Ստեփանեի ջանքերով բացվում է «Շուշու բարեգործական ընկերությունը» և նրա միջոցներով հիմնվում է ռուսաց օրիորդաց դպրոցը: 1876 թ. հուլիսին բացվում է օրիորդաց ծխական դպրոցն ու տղաների երկու այլ դպրոցներ: Ապա բացվում է օրիորդաց Հռիփսիմեան դպրոցը: Շուշիի դպրոցները, տալով հազարավոր շրջանավարտներ, որոնք լրացնում էին հայ մտավորականության շարքերը, ուսուցիչներ էին դարձել: Մի մասը շարունակել է ուսումը արտասահմանում, դարձել բժիշկ, լեզվաբան, ավարտել էջմիածնի կամ Լազարյան ճեմարանը, հետագայում դարձել ակադեմիկոս, գրող...: Հայագետ-գրականագետ Մաղաքիա Պոլուզյանի վերատեսչության տարիներին (1870-74 թթ.) աշակերտներից էին Լեոն, Սեմյոն Հախումյանը, գրող-երկիրագետ Կոնստանդին Մելիք Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), գրող Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան), Արսեն Տերտերյանը, քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը...

Երևանի, Բաքվի և Թիֆլիսի թերթերը հաճախակի էին տպագրում ռեպորտաժներ Շուշիի կյանքից: Ահա 1872 թվականի հոկտեմբեր ամսվա նման մի ռեպորտաժ, որի հեղինակն է շուշեցի Ալեքսանդր Մելիք-Փաշայանը (հավանաբար հետագայում մեծ դիրիժոր Ալեքսանդր Մելիք-Փաշայանի (1905-1964 թթ.) պապը).

«Մտա փոշտը, տեսա «Մշակ» և «Մեղու» լրագրերը, բոլորն էլ ուսումնարանի անունով: Գնացի հասարակաց հրապարակը, որին ասում են Թոփխանա (թնդանոթային), տեսա, որ պարոն Կ. Խ.-նմի խանութի առաջ կանգնած լրագիր էր կարդում («Մշակ») և մի քանի պարոններ թառած միմյանց վրա լսում էին... Ես իմացա, որ հասարակաց ընթերցարանը անհետացել է: Ես իմացա, որ 1867 թվականից, ինչ բաժանված էի (քաղաքից) շատ փոփոխություններ են եղել: Ճանապարհը հարթեցված է, քաղաքի միջի դատարկ տեղերը լցված են շինություններով, մեկը մետաքսաթել քաշելու գործարան է բացել քաղաքի կենտրոնում, այնտեղ բավականին գործավորներ են բանում: Երջանկահիշատակ Բաղդասար Հ.Ջալալյանի շինած առաջնորդարանի պատշգամբը վերածված է ուսումնարանի: Մերձակա գետը կամենում է դուրս բերել քաղաքի մեջը մի ահագին ժայռի միջով, որին ասում են Կեավուր Գալայ (անհավատի բերդ): Ղազանչեցոց եկեղեցին կառուցում են, հիմքը մի քանի արշին բարձրացել է, կառուցում են սրբատաշ սպիտակ քարերով, շինարարության համար հատկացված է 8000 ռուբլի:

Մտավոր զարգացման կողմից դարձյալ ժողովուրդը անհայտ չի մնացել, «Մարիամեան» օրիորդաց ուսումնարանը փակված է վաղուց:

Այն հասարակաց ուսումնարանը, որ ես իմ աշակերտության ժամանակս 1865 թ. մտնում էի, հիանում էի գտնելով այնտեղ ամեն տեսակ գրքեր, այժմ անհետացել է: Հոգևոր դպրոցը, որոյ համար ամեն անհատ ստանալով հրամանաթուղթ՝ իր աղքատ աղջիկը պսակելու մասին, պիտի գնար մի (ռուբլի) վճարե: Յուրաքանչյուր մարդ, մկրտելով իր զավակը, պիտի ուսումնարանին մի բան նվիրե. Վանքորեից բոլոր արդյունքը մտնում է ուսումնարան, ամեն կիրակի օր եկեղեցիների մեջ մի-մի գանձական է պտտում ուսումնարանի անունով: Այն դպրոցը, որ կարող է ունենալ մշտնջենավոր մի տեսուչ 2500 ռուբլի ռոճիկով, յոթն վարդապետք՝ 800 ռ. ռոճիկով, այժմ չունի տեսուչ: Տեսչի պաշտոնը կատարողն է մի ուսուցիչ, որ տարին ստանում է 600 ռ.: Աշխարականների կողմից ընտրված հոգաբարձուներից քանիսը հաշվում են հոգաբարձությունից հրաժարված, մյուսները ուսումնարանի համար բնավ հոգ չեն տանում, կարծելով, որ այդ հոգաբարձուները պետք է լինեն:

Կարծես թե ժողովուրդին իշխել է մի սարսափելի անհոգություն. նրանց քթի առաջ՝ քաղաքի մեջտեղը շինել են մետաքս քաշող հսկա գործարան, նորա շերամի գարշահոտությունը ապականում է քաղաքի մաքուր օդը, բայց նոքա լուռ են իրենց քրտինքով աշխատած փողերը դարսել են ուսումնարանի համար: Երեխաները օրեցօր բթանում են անշարժության մեջ, բայց հայրերը տեսնելով ու հասկանալով այս ամենը, ձևացնում են իրենց կույր ու ոչինչ չհասկացող... ահա իմ տեսածը, ազնիվ խմբագիր, որ հաղորդում եմ Ձեզ Շուշի քաղաքից»[7]:

Սարահարթի վրա թառած Շուշին աշխարհի հետ հաղորդակցական նոր կապեր ստեղծելու կարիք ուներ: Մանավանդ ռազմավարական տեսանկյունից կարևոր էր Շուշին Գորիսի ու Երևանի հետ կապող ճանապարհի կառուցումը: Եղածը միմիայն հետիոտնի և ուղտերի քարավանի էր հարմար: Շուշիի վերընթաց ապրող արդյունաբերությունը, Երևանի, Զանգեզուրի, Նախիջևանի ու Ջուլֆայի հետ անմիջական կապ ունենալու վաճառականության շահերը արդեն դնում են այդ խճուղու շինարարության պահանջը: Բացի այդ, անհրաժեշտություն է դարձել Արցախը հայության մշտական կենտրոնի՝ Արարատյան դաշտի հետ տրանսպորտային կապի ստեղծումը: Ահա այս պահանջն էլ թելադրեց Շուշիի գավառապետ Շանկերեյնին ձեռնարկելու Շուշի-Գորիս ճանապարհի շինարարությունը: Լեռնային ճանապարհի կառուցումը այն ժամանակվա տեխնիկական միջոցների պայմաններում ամենևին էլ հեշտ գործ չէր, ու գավառապետից, ինչպես նաև Շուշիի հայ բնակիչներից բավականին մեծ ջանքեր, առաջին հերթին՝ նվիրում էր պահանջում:

«Մշակ» թերթում 1873 թվականին շուշեցի Վահան (Բաբաջան) Շահումյանցը իր թղթակցությունում գրում է. «Բարեպաշտ և բարեմիտ ուլեզդնի նաչալնիկ Շանկերեյնի մասին. «Նաչալնիկ Շանկերեյնը ինքը առավոտից շատ վաղ կանգնած է լինում բանողների վրա, ինքը շատ անգամ մեծամեծ քարերը իր ձեռքով բարձրացնում է, դնում մշակների վրա, բահը և թոխրը[8] ձեռքին բանում է մշակների հետ, խրախուսում բոլորին»[9]:

Այս ճանապարհի մասին գրել է շուշեցի պատմաբան Լեոն, որը 1888 թվականին փոստային կառքով ուղևորվել է Գորիս: *«Տասնհինգ տարուց ավելի է, որ Շուշուց մինչև Գորիս փոստի ճանապարհ է շինված: Երկրաչափը տարել է այդ ճանապարհը մի լեռնաշղթայի արևահայաց կողով մինչև Թթու-ջուր անվանված առաջին իջևանը, տարել է հարմարվելով վայրենի լեռների բնավորությանը: Շատ թե քիչ ուղիղ լինելու համար այդ ճանապարհը օձի պտույտներ է գործում անթիվ ու անհամար անգամ, և, որովհետև տեղի կազմվածքը քարային է, շատ կարծր, ուստի բահն ու բրիչը կարողացել են ճանապարհին այնքան լայնություն տալ, որ մի սայլ կամ ֆուրգոն ազատ առաջ է գնում, իսկ եթե մի ուրիշն էլ առջևից է գալիս, հանդիպում է, իսկական ցավ է ու կրակ»*[10]:

1879 թվականը շուշեցիների հիշողության մեջ մնում է որպես անբերրիության և սովի տարի: Մեկ փութ ալյուրն արժեր երկու ռուբլի 80 կոպեկ: Չորս տարի առաջ Շուշիում հիմնված բարեգործական ընկերությունը հավաքեց 3 հազար 817 ռուբլի և օգնեց սովյալներին՝ 800 ընտանիքների բաժանելով հաց և այլ մթերքներ[11]: Այս ընկերությունը հետագայում հիմնում է քաղաքային գրադարանը:

4. ԱԶԳԱՅԻՆ ՋԱՐԹՈՆՔԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

1877-78 թթ. հայկական հարցի զարթոնքի ու ողջ հայության ազգային ոգևորության ժամանակաշրջանն էր: Հայ մամուլը, գրականությունը, թատրոնն ու կրթությունը կերպարանափոխվում են, զարգացման նոր փուլ ապրում:

Հայ ժողովուրդը հասկացավ, որ տգիտության մեջ ազգային հարցը անհնար է լուծել: Շուշին անմասն չէր այս շարժումից:

Շուշի է տեղափոխվում նաև գրող Ղազարոս Աղայանը, որի արմատները Արցախից են (Սեյտի շեն գյուղից): Նա գրում է, որ *«Շուշվա դպրոցը նմանվում էր թալանված աշակերտին»*[12]: Իր մասին նա գրում էր, որ իբր ուսուցիչը նման էր *«ծագեր պահող թխսկան հավի, որ սովորաբար գուրգուրում է իր ծագերին»:* Նա այստեղ հասցնում է գրել միայն «Անահիտ» հեքիաթն ու «Թեմական ուսուցիչը»: Աղայանի աջակցությամբ թեմական դպրոցում հաջորդաբար տեսչություն են անում Ջավադ-բեկ Իշխանյանցը, ապա Նկուսապատցի բժիշկ Բախշի բեկ Աղասարյանը, որը մինչ այդ բնագիտություն էր դասավանդում: Նա ավարտել էր Պետերբուրգի Զինվորական ակադեմիան: Ընդունելով տեսուչի պաշտոնը, նա հրաժարվում է ռոճիկից՝ հօգուտ դպրոցի: Նա դպրոցում բացում է էլեկտրական մեքենայով, խոշորացույցով զինված ֆիզիկական կաբինետը: Նրա նախաձեռնությամբ սկսում են մանկավարժություն դասավանդել և գյուղերի համար ուսուցիչներ պատրաստել:

Աղասարյանցն էր, որ 1881 թ. ամռանը Կուսապատում իր տանը ընդունում է մեծ վիպասան Ռաֆֆուն, պատմում իրենց տոհմի մասին ավանդական մի պատմություն, որը մեծ գրողն ու ճանապար-

հորդը գրի էր առել ու թողել բժշկին: Աղասարյանների տոհմի մի ճյուղը 18-րդ դարի վերջերին գաղթել էր Լոռի, իր հետ տանելով և այս պատմությունը՝ հետագայում տեղայնացնելով այն: Այս պատմությունն էլ հիմք է ծառայում Հովհաննես Թումանյանի անմահ «Անուշ» պոեմի համար: Իսկ Բաֆֆու ձեռագիրը երկրորդ աշխարհամարտի տարիներին այրվում է Մեծ-Շեն գյուղում[13]:

Բժիշկ Աղասարյանցին տեսչության պաշտոնում փոխարինում է մասնագետ մանկավարժ Սեդրակ Մանդինյանցը, որը ապարդյուն ձգտում էր դպրոցում արմատավորել գերմանացի մանկավարժ Օտտոյի մեթոդը: Այն ընդունելություն չգտավ Շուշիում:

Ի վերջո Ղազարոս Աղայանը հեռացավ Շուշիից *«առանց ետ մտիկ տալու, Ղովտի նման, որ շուշեցոց նման չքարանամ...»:*

Շանշյանից, Պռոշյանից, Աղայանից ու Մանդինյանից հետո թեմականում դասավանդում էր Մակար վարդապետ Բարխուտարյանցը (հետագայում՝ եպիսկոպոս և պատմաբան), Մանուկ Աբեղյանը, երվանդ Լալայանը, Ասլան Շահնազարյանը, Գարեգին Խաժակյանը (սպանվել է 1915 թ. Սիամանթոյի և Վարուժանի հետ), մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը, Արշակ Չիլինգարյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը, Նիկոլ Աղբալյանը, երաժիշտ Սպիրիդոն Մելիքյանը, Հայրապետ Մուսայելյանը, Անուշավան Տեր-Միքայելյանը, Արշակ Տոնյանը...

1882թ. հունիսի 23-ին Շուշի հյուրախաղերի է գալիս մեծ դերասան Պետրոս Ադամյանը և ցանկություն հայտնում այստեղ մնալու մինչև տարեվերջ: Հախումյանների հին մեծ տան վերին հարկում հարմարեցվում է մի աղքատիկ բեմ, որտեղ Ադամյանը խաղում էր Համլետի դերը: *«Գավառական դեմքերի վրա շեքսպիրյան հանճարի հրճվանքն էր դրոշմվել,-* գրում է Լեոն:- *Արվեստի բարձր գաղափարների ու ճաշակի հետ էր կապել Ադամյանը տեղի հանդիսատեսին»: Ադամյանը կարճ ժամանակամիջոցում դարձավ ողջ Շուշիի սիրելին: Նրա ներկայացումներին էին գալիս ռուս աստիճանավորները, թուրք բեկերը...»*

Շուտով Շուշիում ստեղծվում է թատերական սիրողական խմբեր, որոնց մեջ ընդգրկվում էին աշակերտները և ուսուցիչները, որոնք ներկայացումներ էին տալիս քաղաքային ակումբի կամ հոգևոր դպրոցի դահլիճներում: Շուշիում ներկայացվում են «Պեպո», «Էլի մեկ գոհ», «Խաթաբալա», «Քանդած օջախ», «Վարդանանց պատերազմը», «Արշակ երկրորդ» և այլ պիեսներ, մելոդրամաներ, վոդեվիլներ: Սաֆրազյան ամուսինները 1882 թ. Շուշիում կազմակերպում են ադրբեջանական սիրողական թատերախումբ: Մեծ հաջողություն է ունենում Միրզա Ախունդովի «Խան Սարիբի վեզիրը» ներկայացումը: Թատերական արվեստի այս աշխուժությունը շուտով դրեց թատրոնի շենք ունենալու պահանջը: Նման թատրոնի հիմնադիր հանդիսացավ Մկրտիչ (Նիկիտա) Խանդամիրյանը: Նրա նախնիները Շուշի էին եկել Շահկերտից: Այս տոհմի նախնիներից էր Շահկերտի պաշտպանության ղեկավար և ժողովրդական հերոս Հովհաննես Խանդամիրյանը: Հայրը Մկրտչին ուսանելու էր ուղարկել Մարսել, որտեղ պետք է ուսումնասիրեր մետաքսի արդյունաբերությունը: Սակայն պատանի շուշեցուն ձգում է Փարիզի թատերական կյանքը:

1891 թ. Ղազանչեցոց եկեղեցուց ոչ հեռու բացվում է Խանդամիրյան եռահարկ թատրոնը՝ 350 տեղով, ընդարձակ ճեմասրահով ու դերասանների հանրակացարանով: Երեկոները դահլիճն ու ճեմասրահը լուսավորվում էին նավթի լապտերներով: Հետագայում թատրոնում էլեկտրական լամպեր էին վառվում, որը միակն էր Շուշիում: Խանդամիրյանը ֆրանսերենից հայերեն էր թարգմանել Ժորժ Օնեի «Դոկտոր Ռամոն», թարգմանություններ կատարել ռուսերենից, գրել պիեսներ: Խանդամիրյանի պատվերով գեղանկարիչ Նպերլինգը վարագույր էր նկարել: Ավերակների վրա նստած հայուհին ձեռքով ցույց է տալիս Արարատ լեռը: Ոստիկանության պահանջով նկարիչը կնոջ փոխարեն ծերունի գուսան է նկարում: Խանդամիրյանի թատրոնի վարագույրը 1891 թ. նոյեմբերի 7-ին բացվել է Մուրացանի «Ռուզան» պատմական դրամայով: Ռուզանի դերը կատարում էր Ն.Յարամիշյանը, որը կենդանացնում, կյանքով էր լցնում ներկայացումը: Պատմական գործերը ժողովրդի մեջ արթնացնում էին հայրենասիրական զգացմունքներ: Այստեղ չկար կայուն պրոֆեսիոնալական խումբ, սակայն մշտապես գործող պրոֆեսիոնալ դերասաններ եղել են: Մշտապես ներկայացվում էին Սունդուկյանի, Շիրվանզադեի, Հակոբ Պարոնյանի, ինչպես և Պուշկինի, Գոգոլի, Չեխովի, Լերմոնտովի, Օստրովսկու, Իբսենի, Սերվանտեսի, Շիլլերի, Մոլիերի, Հյուգոյի գործերը, շեքսպիրյան շարքը՝ «Համլետ», «Օթելլո», «Լիր արքա», «Վենետիկի վաճառականը»: Շեքսպիրի հերոսներին ներկայացրել են Աբեղյանը, Սիրանույշը, Պետ-

ռոսյանը, Զարիֆյանը, Գալֆայանը: Հովհաննես Աբելյանը օգնում է աղրբեջաներեն բեմադրելու «Լիր Արքան»: Աբելյանի նախնիները ղարաբաղցի են, իսկ ինքը ծնվել էր Շամախի քաղաքում:

1880 թվականին Բաքվից տեղափոխվելով հայրենի Շուշի քաղաքը, իր տպարանը բացեց Միրզաջան Մահթեսի Հակոբյանը: 1881 թվականին, Ռաֆֆին այստեղ ականատես եղավ իր «Խենթի» լույս ընծայմանը: Դա վեպի առաջին ամբողջական տպագրու-թյունն էր: Վեպը մեծ տպաքանակով ու շքեղազարդ տպագրության է առաջարկում Մոսկվայի համալսարանի ուսանող Գ.Միրզոյանը: Սակայն Ռաֆֆին արդեն համաձայնություն էր տվել Շուշիում գիրքը տպագրելու համար, ուստի և մերժում է մոսկովյան առաջարկը: Ռաֆֆին Թիֆլիսում արդեն ստացել էր Շուշիում տպագրվող «Խենթի» առաջին թերթերը, գոհունակություն էր հայտնել թղթի որակի, մաքուր տպագրության համար և հույս հայտնել, որ Շուշիի տպարանը *«այժմ փոքրիշատե կանոնավորված է»*[14]: Տպարանի, ինչպես և գրքի սրբագրիչը Լեոն էր:

Շուշիում 1882 թ. բացվում է հասարակական գրադարան: Սեմյոն Հախումյանի գլխավորությամբ լույս է տեսնում «Գործ» ամսագրի առաջին համարը:

Շուտով Կովկասի փոխարքայության կողմից փակվում է Օրիորդաց դպրոցը, որը ճնշիչ տպավորություն է թողնում Շուշիի հայ բնակչության վրա:

Իհարկե, մեծ վիպասանը անհամբերությամբ է սպասում իր արցախյան ուղևորությանը և Շուշի հասնելուն (1881 թ.), որտեղ նա պետք է ապրեր ամբողջական վեպը տեսնելու բերկրանքը: Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս է տեսնում Գոգոլի «Տարաս Բուլբան», Մանուկ Աբեղյանի բանաստեղծությունների ժողովածուն, ապա և «Դավիթ և Միհեր ժողովրդական դյուցազնական վեպ» գործը: Այստեղ են տպագրվում Լեոի, Մակար Բարխուտարյանի աշխատությունները, Ֆիրդուսու «Ռուստամ և Զոհրապը», Զոհակ Բյուրասպի «Աժդահակը», շուրջ 92 գրքեր, որը լուրջ ներդրում է ազգային զարթունքի, ազգային մտածողության ձևավորման, ինչպես և համաշխարհային մշակույթի հետ անմիջականորեն առնչվելու գործում:

Շուշիում տպագրության գործում պակաս ներդրում չի ունենում նաև Տիգրան Նազարյանը: Նա Շուշիում հիմնում է հրատարակչա-

կան գրասենյակ: Նրա նախաձեռնությամբ 1882 թ. հրատարակվում է Կոնստանտին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) «Ղելեցի կնանոց պընը, փեշակը», որը գրվում է Ղարաբաղի բարբառով:

5. ...ՋՈՒՐ, ՋՈՒՐ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻՆ

Շուշին, տեղադրված լինելով սարահարթի վրա, բարձր լեռներից աղբյուրներ կամ հոսող ջուր ունենալու հնարավորություն չուներ: Աղքատ կանայք իրենց աղջիկների հետ կժերն առած պտտում էին քաղաքում, ծեծում դռներն, ասելով.

- Ի սեր աստծո, մի կուժ ջուր տվեք...

Եթե տան տերը բարի մարդ էր, ջրհորից մի կուժ ջուր է տալիս: Իսկ չար մարդիկ հալածում են, հայհոյում, պատասխանելով.

- Մեր տուն քարվանսարա չէ, օրական հազար մարդ է մտնում, դուրս գալիս:

1871 թ. օգոստոսի 18-ին շուշեցիներ Հայրապետ Փիրյանցի և Աղաջան Դանիելյանցի ջանքերով ու միջոցներով, ինչպես և խանի դստեր՝ Խուրշուդ Նատավանի օգնությամբ Յաստի-Բուջա տեղամասով ջուր հասցվեց բերդաքաղաք և բաժանվեց երկու մասի՝ հայոց և թաթարական թաղամասերին: Ինչ խոսք, որ 25 հազարանոց քաղաքին երկու աղբյուրը շատ քիչ էր: «Մշակը» 1874 թ. մայիսյան համարում գրում է.

«Վեց հազար ընտանիք Շուշիում ջրի պակասություն ունի: Բաղունց կամ Ղումլազ ջրհորների մոտ հինգ ժամ հերթի էին կանգնում: Խանի աղջիկը ջուրը անհավասար բաժանեց: Մեծ մասը թաթարական մասին իր ապարանքի առաջ կառուցեց, փոքր մասը՝ հայերին: Սակայն այն ևս չի հերիքում: Պ. Ա. Կեանջեցյանի նախաձեռնությունը կփրկի բոլորին, և այն անօգուտ անվանելը անգը-թություն է: 30 հազար զոհելով քաղաքն ազատում է 15-20 հազար ծախսից:

Մի խումբ շուշեցիք»:

Շուշիի բնակիչների համար անլուծելի խնդիր էր մնում խմելու ջրի հարցը: Շուշեցի մեծահարուստ վաճառական Թադևոս Թամիրյանցը 1896 թվականին 700 հազար ռուբլի ներդնելով, ձեռնարկում

է Սարի Բաբա բարձունքից Քարին տակ գետակի ջրերը բերդաքաղաք հասցնելու այն ժամանակվա համար հանդուգն ծրագիրը: 18 կմերկարությամբ ջրատարով ու ջրամբարների համակարգով մաքրված ջուրը հասցվում է Շուշիի թաղամասերը: Աղբյուրներ են կառուցվում զորանոցի մոտ, Վանքի աղբյուրը՝ Կուսանոց վանքի մոտ, Սեյրանենց աղբյուրը՝ թեմական դպրոցի մոտ, ռեալական ուսումնարանի մոտ, շուրջ 20 աղբյուրներ: Մեծ տոն էր Շուշիում ջուրը քաղաք հասնելու օրը: Գորիս-Շուշի ճանապարհի երկայնքով ուտելիքով ու խմիչքով լեցուն սեղաններ էին տեղադրված ու համաժողովրդական տոն էր:

1896 թ. սեպտեմբերի 8-ին քաղաքային իշխանություններն ու եկեղեցու առաջնորդները օծում են նոր ջրատարը[15]: Այսպես լուծվեց քաղաքի ջրամատակարարման խնդիրը: Քաղաքում բացվեցին բազմաթիվ բաղնիքներ, ջուր ստացան արդյունաբերական ձեռնարկությունները: Արդեն ջրվում էին ծառերը և բանջարանոցները: Անձրևային օրերին այս ջուրը պղտորվում էր, ու բնակիչները կրկին դժվարության մեջ էին հայտնվում:

Մեծ բարեգործ Թադևոս Թամիրյանցը մահացավ 1899 թվականի դեկտեմբերի 12-ին, քաղաքի բնակչությանը ժառանգություն թողնելով մեկ միլիոն ռուբլի գումար, որից 100 հազարը՝ ռեալական ուսումնարանին, 300 հազարը՝ թեմական դպրոցին (հոգևոր սեմինարիա), 100 հազարը՝ սբ.Մարիամայ օրիորդաց վարժարանին, 100 հազարը՝ ռուս-թաթարական դպրոցին, վերջապես 100 հազարը՝ աղքատ երեխաներին, որբերին:

Արիստակես Խանդամիրյանցը իր հերթին 15 հազար ռուբլի կտակել էր Շուշիի հայության կրթական գործին: Մոսկվայի պետական դրամատանը այն արդեն հասել էր 48 հազարի: Բաժանվեց այսպես. հայոց թեմական դպրոցին՝ 20 000, օրիորդաց նոր դպրոցի կառուցմանը՝ 20 000, օրիորդաց դպրոցի համար դրսից ջուր բերելու գործին՝ 5000, չքավոր հայ աշակերտությանը՝ 3000 ռուբլի[16]:

6. ՇՈՒՇԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԸ

1860 թվականին Շուշիում երկու բժիշկ կար: Մեկը ուկրաինացի Պյոտր Ֆեոդորովիչ Լոսիներ, որի կինը շուշեցի հայուհի էր: Նա խոսում էր թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն: Ինչպես գրում է «Տարազ» ամսագիրը, *«Նա դարձել էր մի պահապան հրեշտակ դարբաղցիների համար»*[17]: 1872 թ. Լոսինը Թթու ջուր կոչված վայրում բացեց ինքնահոս սելտերյան աղբյուրներ, որն ավելի մարդաշատ դարձրեց այս վայրը: Շուշիից Զանգեզուր տանող փոստի կայաններից մեկը այստեղ են կառուցում: Ամռանը այստեղի ջրերով բուժվելու են գալիս ոչ միայն քաղաքի բնակիչները, այլև Շուշիում տեղակայված ռուսական զորանոցի զինվորների մի մասը: Պարսից թագաժառանգ Բահման-Միրզայի որդին՝ Իրզաղուլի-Միրզան այստեղ բուժվելու նպատակով աղբյուրի մոտ տուն է կառուցում և ամառը այստեղ անցկացնում:

Մյուս բժիշկը Մովսես-բեկն էր: Նա կանանց ու երեխաների լավագույն բժիշկն էր ու օգնականը: Շուշիի սարահարթի ստորոտում՝ Խանքենդիից (Վարարակն) երկու վերստ վեր Մովսես-բեկը կառուցում է առողջարան, գետակի վրա՝ ջրաղաց, այգի և ագարակ: Էլեկտրական մեքենայով լուսավորում է առողջարանը: Շուշեցիներին նա հայտնի էր նաև որպես հանդուգն ծրագրեր ունեցող մարդ: Նա ծրագրում էր առողջարանից ֆունիկյոր գցել մինչև Շուշի:

1880-ական թվականներին Շուշիում կային մի քաղաքային, մի գավառային, մի զինվորական և երկու մասնավոր բժիշկներ: Սակայն միշտ չէ, որ բնակիչները այս բժիշկներին էին դիմում և նրանց վստահում իրենց հիվանդին: Բացի այդ, այս բժիշկները չէին էլ կարող սպասարկել ողջ քաղաքի բնակչությանը: Ու շատերը բժշկի կարիք զգալիս ավելի հաճախ դիմում էին սափրիչներին, սնոչիներին, տատմայրերին, կին «հաքյիմներին» ու մանավանդ՝ սուրբ աղբյուրներին, քարերին ու գիր անող «կախարդներին»: Իհարկե, Շուշիում ևս հնուց մնացել էին բույսերով բուժման ավանդական միջոցները: Ռնմատիկ հոդացավեր ունենալիս շուշեցիները չորեքշաբթի օրերին Շուշիի հին բնակատեղում մնացած «Քամու խաչ» կոչվող ուխտավայր են գնում, որը իրենից մի քարակույտ էր ներկայացնում: Աղոթում են, պտտվում քարի շուրջը, և հիվանդը բուժ-

վում է «քամուց»: Իսկ վախ վեր քաշելու համար շուշեցիք դիմում էին Նենգի գյուղում ապրող քահանա Տեր-Առաքել Տեր Պետրոսյանին, որը սաստիկ խուլ և կիսագրագետ մարդ էր ու վախը բուժողի մեծ հռչակ ուներ: Նրանց տոհմը հին ժամանակներից ի վեր վախ քաղող էին և սերնդե-սերունդ իրար էին փոխարինում այս արհեստի գաղտնիքները: Շուշիի թե՛ հայերը և թե՛ թուրքերը կիրակի օրերին նրա օգնությանն էին դիմում: Շատ դեպքերում մեծ հերթ էր լինում նրա տան մոտ: Իսկ բուժումը կատարվում է հետևյալ ձևով. փոքրիկ կաթսայի մեջ արծիթ ու մոմ են հալում, այն լցնում ջրով լի թասի մեջ, թշշացող ջուրը մոտեցնում աջ, ապա ձախ ականջի մոտ, ապա պահում մեջքի և կրծքերի մոտ: Միևնույն ժամանակ «բժիշկը» (քահանան) «Հայր մեր» է շշնջում: Վախեցած երեխային թույլ են տալիս, որ աղմկի, բառեր արտասանի: Արծիթը լցնելիս ջուրը թշշում է, ու գոլորշի է բարձրանում: Իսկ զզվելու կամ սրտմնա լինելու դեպքերում Շուշիի «գլխավոր բժիշկներն» էին Մարիամ-պաճին ու Անթառամը:

Սրտմնա լինողը մի ասեղ է խրում կրծքին ու չորեքշաբթի, ուրբաթ կամ կիրակի առավոտյան գնում Մարիամի կամ Անթառամի մոտ: Սա հիվանդի մոտից հանում է ասեղը և այն գցում է ձեռքին բռնած կապույտ պնակի մեջ: Մարիամի ասելով զզվելը սատանայություն է, որին միայն սուր և ուղիղ ասեղը կարող է հալածել ու դուրս վանել ներսից: «Բժիշկը» երեք անգամ խաչակնքում է պնակը, ցուցամատը դնում ասեղի վրա: Հիվանդը պետք է աչքը չկտրի պնակից: Մարիամը աղոթում է.

Քինացի երուսաղեմ, տեսա մին ծառ,
Էտ ծառան տուս եկավ մին ծողնը,
Ընտրանա տուս եկավ մին օրիշ ծողնը,
Ընտրանա տուս եկավ մին օրիշ ծողնը,
Ութընջի ծողնիցը կախվեց մին վեխչար,
Մուտացա, փոնեցի,
Անտենակ մոռթեցի,
Անջուր լվացի,
Անկրակ եփեցի,
Ես կերի՝ սրտմնա չիլի,

Ես խեյը՞ս սրտմնա իլյալ...

Հետո Մարիամ-պաճին բարձրացնում է մատը ու եթե ասեղը կպած է լինում մատից, ուրեմն այցելուն սրտմնա եղած է լինում: Մատը թափ է տալիս, որ ասեղն ընկնի ջրի մեջ: Մարիամը մի պահ շեղում է այցելուին ու նրանից աննկատ բռով ջուր վերցնում: Երբ հիվանդը պնակից ջուր է խմում, հանկարծ Մարիամը բռի ջուրը շփում է դեմքին ու ասում. «Էս էլ քո դեղը»: Հիվանդը առանց պնակը ցած դնելու ջուրը դատարկում է իր հետ բերած բաժակի մեջ, տուն տանում և քիչ-քիչ խմում: Բաժակը պետք է կախված պահել, որ հատակով գետնին չկպչի: Երբ առողջանում են, մնացած ջուրը լցնում են տանձի ծառի տակ:

Պակաս հռչակավոր չէին և շուշեցի «չոփչիները»: Առավել անուն էին վաստակել թաղլարցի Հուրին, Նանա- խանումը, Շողերը, Սառան, փահլևանի կինը: Երբ երեխան կորիզ կամ ոսկորի կտոր է կուլ տված լինում, ու չափչին համոզվում է, որ կոկորդին է դեմ առել, երեխային նստեցնում է իր ծնկներին ու նախ բերանից, ապա քթից ուժեղ փչելով կորիզը կամ ոսկորը դուրս է ընկնում:

Չոփչի դառնալու համար երեխային բուժելու շնորհը քիչ է: Այն պետք է որևէ սրբից ստացված լինի: Այսպես, սովորաբար երեք օր ուշաթափված են ծնանում, երրորդ օրը արթնանում ու հայտարարում, որ այսինչ «սուրբը» կամ «Ավետարանը» հայտնվել է ու իրեն չոփչիություն սովորեցրել:

Մկնատամը կապելու համար Շուշիում ընդունված էր «գիր անել» տալը: Ամենանշանավոր գիր անողը քաղաքի քահանաներից մեկն էր: Նա վերքի շուրջը թանաքով շրջան էր գծում, մեջը գրում.

«Ամ, Աման, Արաման,
Պոյպոյ, երիպոյ,
Դուք չորացուցեք, չմկնամատս»:

«Գիրը» անել են տալիս չորեքշաբթի օրերը, մանավանդ մեծ պասի վերջին չորեքշաբթի օրը:

7. ՆՈՐ ՀՈՒՋՈՒՄՆԵՐ

1891 թ. «Տարազ» ամսաթերթը գրում է, որ առաջներում Շուշին հայտնի էր իբրև վաճառականների հարուստ քաղաք[18]: Նախկին վաճառականության դասը գաղթականության մի ահագին հոսանքով տարվել է Բաքու՝ Անդրկովկասյան երկիրը և Թիֆլիս, դրանց հետևից ձգվել է մտավոր և ֆիզիկական աշխատանքի ընդունակ մասը: Քաղաքում գոյացած դատարկությունը լցվում է գյուղացիներով, որը գերիշխող է դառնում: Շուշիում մնում են պարապ ապրելու հարմարություն ունեցողները՝ վաշխառուները կամ դրամական տոկոսների օգնությամբ ապրողները: Հենց դա էր աղքատության պատճառը:

Թուրքերը, որոնք թափառական խաշնարածներ էին, այժմ ամուր նստակյաց են դարձել: Նրանք գնում են գաղթած հայերի տները, աստիճանաբար լցվում հայոց թաղը: Գաղթականության և քաղաքային բնակչության կազմի փոփոխության թեմայով «Շուշու ակնկալները» թեմայով ֆելիետոն է գրում շուշեցի երգիծաբան Կոնստանտին Մելիք-Շահնազարյանը:

«Եթե մի քանի տասնյակ տարիներ առաջ նայենք, կտեսնենք, որ մեր քաղաքը գնալով կերպարանափոխվում է իր բնակիչներով հանդերձ: Կար մեկը, որ սաստիկ խելոքությունից վերջը գժվեց: Սա ամեն օր ելնում էր շուկա և ասում. *«Քաղաքիս գլխին մի փլավքամիչ կայ, դրա մեջ են մտնում քաղաքս եկողները նախապես, ով որ նրա ծակոտիկներով կարողանում է անցնել, նա քաղաքի բնակիչ է դառնում, իսկ մնացածները ելնում գնում են օտարութիւն. դժբախտաբար վատերն են անցնում: Թե որքան ճիշտ է այս, դժվար է որոշել. միայն ճշմարտութիւնը գուցե երևայ, եթե նայենք մեր բնակիչների վրայ և համեմատենք անցյալի հետ»*[19]:

1894 թվականի ամռանը Շուշին կրկին ալեկոծվեց: Առիթը կրկին թեմական դպրոցն էր: Ժողովրդի մեծ մասը պաշտպանում էր տեսուչ Սարգսյանին, սակայն «Թոփխանայի» հրապարակում հավաքված պարոնները նրան «հակակրոնք» և «հակաեկեղեցական» կնքելով, պահանջում էին հեռացնել նրան: Ասես կրկնվում է Շանշյանի դեպքը: Լևոն Սարգսյանը մեղադրվում է հակակրոնականության մեջ այն դեպքում, երբ նա իրականում լուրջ ներդրում ուներ կրոնական դասերը նոր մակարդակի հասցնելու գործում: Թեմի

առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազյանը արձակեց տեսչին և մի քանի ուսուցիչների: Նրա հանձնարարությամբ բոլոր կրոնականները բողոք գրեցին տեսչի դեմ: Սակայն Թիֆլիսից Լևոն Սարգսյանին հրավիրեցին որպես տեսուչ տեղավորվել Ներսիսյան դպրոցում:

Այդ օրերին Շուշի է գալիս երգահան Քրիստաֆոր Կարա-Մուրզան: Խրիմյան կաթողիկոսի հրամանով նրան հեռացրել էին Էջմիածնի ճեմարանից, որտեղ նա երգեցողություն էր դասավանդում: Ռեակցիան նրան մեղադրում էր կաթոլիկության մեջ, ասելով. *«Աստված մի է, եկեղեցական երգեցողությունն էլ մի ձայնով պիտի լինի»:* Երգահանը դիմում է թեմականի դահլիճում համերգ կազմակերպելու համար: Տեսուչը թույլ է տալիս, իսկ թեմի առաջնորդ Կ. Այվազյանը դեմ էր: Տեսուչը անվանի երգահանին առաջարկում է դպրոցում երգեցողության դասեր վարել: Ի վերջո, Խրիմյան կաթողիկոսը հանձնարարում է թողնել դպրոցի հին կազմը: Սա ուսուցիչների ու ժողովրդի հաղթանակն էր: Սակայն թեմականի շուրջ կրքերը կրկին բորբոքվում են: Այսուհետ կաթողիկոսն է անձամբ տեսուչ նշանակելու և ազատելու:

Անդրեաս Խանդամիրյանի՝ դպրոցին կտակած 18 հազար ռուբլի գումարով 1894 թվականին առաջնորդարանի մոտ սկսվեց օրիորդաց դպրոցի նոր շենքի կառուցումը, որն ավարտվեց 1898 թվականին: Սակայն թեմականը տեղափոխվեց այնտեղ, իսկ օրիորդաց դպրոցը՝ թեմականի տեղը:

1900 թվականի նոյեմբերի 23-ին Գրիգոր եպիսկոպոս Գառնակերյանը Շուշիի գավառապետին է հասցեագրում չորս գրություն, որոնցում պահանջում է չորս աշակերտների աքսորել Շուշիից: Աքսորվողները իրենց ուղեկցող ընկերներին պատվիրեցին վրեժխնդիր լինել: Հաջորդ տարի հունիսի 11-ին, երբ տեսուչ Բենիկ վարդապետը շքեղ հանդես էր կազմակերպում դպրոցի դահլիճում և ընթերցում էին աշակերտների անկարգությունների մասին տեսչի տեղեկագիրը, աշակերտների մի խումբ գոչեց, որ սուտ է: Շքեղ հանդեսը իրարանցման փոխարինվեց: Հոգաբարձուներն ու ուսուցիչները օգնեցին ոստիկանական պրիստավի օգնական Միրզա Ջալալովին՝ ձերբակալելու աշակերտներին:

Տեսուչը պահանջեց պատժել նրանց: Այս աշակերտները ստիպված հեռացան Շուշիից և ընդունվեցին Երևանի թեմականը: Բենիկ վարդապետը բողոքեց Երևանի թեմականի դեմ:

1902 թվականի հունիսի 2-ի հրապարակած կարգադրությամբ հայ եկեղեցական կալվածքներն ու գույքը անցնում են կառավարությանը: Խրիմյան կաթողիկոսը, որը հաճախ կրկնում էր, թե ժամանակը չար է ու աննպաստ, կտրուկ փոխեց իր դիրքորոշումը՝ փորձելով պահպանել եկեղեցու դարերից եկող սեփականությունը:

Շուշիում 1904 թ. սեպտեմբերի 25-ին 150 հեծյալ և հետիոտն զինվորականներ շրջապատեցին հոգաբարձուների խորհուրդը: Հատուկ մասնաժողովը բռնագրավեց 30.841 ռուբլի: Նրանք կատարում էին Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի հրամանը: Կառավարությունը որոշեց փակել թեմական դպրոցը: Գանձակի նահանգապետը տեսչի պաշտոնակատար Իշխան Զարոբյանին զգուշացրեց, որ եթե ժողովուրդը բողոքի, ապա ուժի միջոցով կճնշվի այն: Դեկտեմբերի 17-ին կառավարության հատուկ որոշումով և Սինոդի համաձայնությամբ փակվեց այն: Շենքն անցավ կառավարության տնօրինությանը: Իբրև հայկական մշակութային կենտրոն, Շուշի քաղաքը վատ համբավ ուներ հայատյաց կառավարչապետի շրջապատում: Նա փայփայում էր Շուշիի հայությանը բռնի Ռուսաստան գաղթեցնելու միտքը: Սակայն Պետերբուրգում կառավարությունը մերժեց Գոլիցինի այս առաջարկությունը:

1904 թվականի ձմեռը շատ խիստ էր Շուշիում: Խողովակներում ջուրը սառչել էր: Մարդիկ ստիպված ջուր էին բերում Քարին Տակ գետակից, որ խոր կիրճում էր կամ Պեխի աղբյուրից ներքև հոսող լեռնային առվակից: Չէին գործում ջրաղացները, որի պատճառով բարձրացել էր ալյուրի գինը: Քաղաքային Դուման ու քաղաքապետարանը ոչինչ չկարողացան ձեռնարկել բնակչությանը օգնելու համար:

1905 թվականին վերականգնվում է փոխարքայությունը և Կովկասի փոխարքա է նշանակվում կոմս Վորոնցով-Դաշկովը: 1905 թվականի օգոստոսի 1-ի բարձրագույն հրամանով փոխարքան թույլատրեց վերաբացել թեմական դպրոցը, կալվածքները վերադարձրին հայ հոգևոր վարչությանը: Սակայն սկիզբ առած հայ-թուրքական կռիվների ալիքը իրենց մեջ առան ողջ Ղարաբաղն ու Շուշի քաղաքը:

2 մասի հղումների ցանկ

[1] Կոնստանտին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի խաչան) արխիվ «Շուշվադալին անցքերան» և հուշեր, ՀՀ Գրականության և արվեստի ինստիտուտ:

[2] Հայքա (Արցախի բարբառ) - խուրջին:

[3] Պ. Պռոշեանց, էջ 30-33:

[4] Լեո, էջ 347:

[5] Ф. Шушинский, "Шуша", Баку, 1968, стр 64.

[6] "Дагестанская правда" 6 января, 1994г., N 2

[7] «Մշակ» 1873, համ. 35, սեպտեմբեր 18:

[8] Թոխր (բարբառ) - քլունգ

[9] «Մշակ» 1873, համ. 35, սեպտ. 18:

[10] Լեո, «Այունիքից մի անկյուն», «Երկերի ժողովածու», Երևան, 1985, էջ 33:

[11] «Մշակ» 1900, համ. 172, էջ 3:

[12] Ղ. Աղայան «Երկերի ժողովածու», 4-րդ հատոր, Եր. «Հայպետհրատ» 1969 թ., էջ 487:

[13] Բ.Կարապետյան «Հարյուր տարվա երկխոսություն», Եր. 1990 թ., էջ 77-79:

[14] Ռաֆֆի «Երկերի ժողովածու», հ.10, Եր. 1964 թ., էջ 548:

[15] "Кавказ" 1896, N 249, стр. 52.

[16] «Նոր դար», 1891, N 154, էջ 1:

[17] «Տարազ», N 5-6, Շուշի, 1910 թ., էջ 59-60:

[18] «Տարազ», Շուշի, 1891 թ., հունիսի 16, համ. 22, էջ 318:

[19] «Նոր դար», Շուշի, 1898, N 131, էջ 3:

ՄԱՍ Է (1900-1916 թ թ.)

1. ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

Մինչ 1905 թվականը սուր բախումներ հայերի ու թուրք բնակչության միջև չէր նկատվում, սակայն նկատելի էր հակակրանքն ու թշնամությունը, որը ասես աներևութացած հրեշի պես երբեմն ցույց էր տալիս գլուխը ու արագ էլ անհետանում: Երկու կողմերն էլ զգում էին նրա շունչը: Այս հակամարտության զարգացման ամենանպաստավոր տեղը արդյունաբերական Բաքուն էր, որի թուրք առաջնորդները իրենց կարգախոսները ստանում էին Ստամբուլի պանիսլամական կենտրոնից: Իսկ Ստամբուլի ղեկավարները վաղուց էին իրենց հսկողության տակ պահում Անդրկովկասի 2,5 միլիոն թրքության ղեկը: Թուրքերին անհանգստացնում էր առևտրի, արդյունաբերության, մշակույթի ու գրականության ասպարեզներում հայերի հաջողությունները, ազգային ինքնագիտակցության լայն թափը, Եվրոպայի օգնությամբ անկախ Հայկական պետականություն ստեղծելու գաղափարը: Հայ գործիչները առաջնակարգ տեղեր էին գրավում նավթարդյունաբերական բարձրագույն խորհրդում, Բորսայում, միջազգային այլ կազմակերպություններում: Իսկ թուրք բնակչությունը ո՛չ կարող էր մրցակցել հայերի հետ, ո՛չ էլ հանդուրժել այս իրավիճակը: Թուրք առաջնորդները փայփայում էին հայերի այս բուռն զարգացումը տեղում խեղդելու ծրագիրը:

Նրանք մահմեդական բնակչությանը բացատրում էին, որ ժողովրդի աղքատության պատճառը հայերն են: Օրեցօր թուրք բնակչությանը լարում էին հայության դեմ, ջհադի կոչեր անում:

Եվ ահա եկավ հարմար պահն ու առիթը: Դա 1905 թվականի ռուսական հեղափոխությունն էր, Պետերբուրգում հունվարի 9-ին Գապոյի ցույցի գնդակոծումը և դրա արձագանքը Բաքվում: Այստեղ դեկտեմբերյան գործադուլը ավարտվեց մի քանի նավթահորերի հրկիզումով: Բաքվում բնակվում էր 50 հազար հայ, 82 հազար մահմեդական, 61 հազար ռուս և 14 հազար լեզգի: Թուրքերը, որոնք վաղուց էին պատրաստվում հայկական ջարդերին, համոզված էին,

որ անպատիժ կիրականացնեն ջարդերի, թալանի ու կոտորածի ծրագիրը: Շուտով եկավ և այն սկսելու առիթը:

1905 թվականի փետրվարի սկզբներին ռուսական գնդի պահակախումբը դատարանից բանտ էր ուղեկցում նշանավոր թուրք ավազակապետ Աշարբեկովին: Բանտարկյալը փորձեց փախչել: Զինվորները սկսեցին կրակել նրա հետևից: Հայ զինվորը ավելի նշանառու գտնվեց, որի գնդակը սպանեց նրան:

Փետրվարի 6-ին հայկական եկեղեցուն կից Պարապետ հրապարակում ոմն Բաբան մոտեցավ հայ զինվորին ու ատրճանակով կրակեց նրա վրա: Հայերը բռնեցին ոճրագործին ու հանձնեցին ոստիկանությանը: Սակայն նա փախավ: Հայ երիտասարդները հասան ու սպանեցին նրան: Թուրքերը նրա դիակը սայլի վրա դրած պտտեցին Բաքվի թրքական թաղամասում և հայերից վրեժի կոչ արեցին ժողովրդին: Նույն օրը երեկոյան թուրք ղոչիները զինված հրացաններով ու թրերով, փողոց ելան ու անարգել սկսեցին կոտորել հայերին: Իրենց տների պատուհաններից ու պատշգամբներից անսպասելի կրակում էին հայերի վրա: Քաղաքը թշնամուց պաշարված բերդ էր հիշեցնում:

Հեռվից փողոցներում հայերը տեսնում էին միայն թուրքերի փափախների ծովը, որը վայրենի ոռնոցով ալիքվում էր, ալիք առ ալիք շարժվում հայերի վրա: Հայերը պատրաստ չէին թուրքական այս անակնկալ գրոհին: Թուրքերը սկսեցին այրել հայերի տները՝ բնակիչները ներսում: Գազանաբար կոտորեցին մեծահարուստ Լալայանների ողջ ընտանիքը: Ամբողջ 40 ժամ թուրքը Բաքվում անարգել թալանում էր, կոտորում, հրկիզում: Հրապարակներում ու փողոցներում հայերի տասնյակ դիակներ էին թափված: Նիկոլ-Դումանը, որը Արևմտահայաստանում ֆիդայական շարժման հարուստ փորձ ուներ, Բալախանի նավթահորերից Բաքու եկավ և իր վրա վերցրեց ինքնապաշտպանության կազմակերպման գործը: Հայության կողմից միակ կառույցը, որն այդ ժամանակ ընդունակ էր կազմակերպելու թուրքերին արժանի հակահարված տալու գործը, Հայ հեղափոխական դաշնակցական կուսակցությունն էր: Ստանալով արժանի հակահարված, թուրքական խառնամբոխը ընկրկեց և հետ փախավ: Մայիսի 11-ին ժամը 15 անց 15-ին, երբ Բաքվի նահանգապետ Նակաշիձեն, որը խրախուսում էր թուրքերին, իր կառքով տուն էր վերադառնում, Միքայելյան փողոցի անկյունում, «Մետրոպոլ» հյուրա-

նոցի դիմաց, մի ռումբ նետեցին կառքի վրա, որի պայթյունից սպանվեց իշխանը: Ահաբեկիչը Դրոն էր: Հայերի կողմից սպանվեցին հայատյաց մյուս գործիչները Մահմեդբեկովը, Միքայելածեն, Շախտատինսկին, որոնք կազմակերպել էին ջարդերը:

Սակայն ջարդերի ալիքը տարածվեց և հեղեղեց հայաբնակ մյուս նահանգներն ու գավառները: Բաքվում ջարդերը կրկնվեցին օգոստոսին և հոկտեմբերին:

2. ՇՈՒՇԻԻ ՄԱՐՏԵՐԸ

Որեցօր մեծանում էր լարումը Շուշիում:

Այստեղ ևս արդեն նկատվում էր թուրքական և հայկական մասերի միջև լարվածությունը: Չնայած թաթարների մի մասի դեպի նորն ու առաջավորը ունեցած հակումը, մոլեռանդ մոլլաները վճռականորեն խարազանում էին ամեն մի տեղաշարժ, նոր գաղափար, ապրելակերպի ամեն մի շարժում: Հայկական զարգացումը թուրք մոլլաների համար մեծագույն չարիքն էր ու ամենավտանգավոր երևույթը:

Ուստի նրանք ամեն առիթ օգտագործում էին, մահմեդական բնակչությունը լարելու հայերի դեմ: Անդրկովկասի թաթարական բնակչությունը դեռևս չուներ ազգային մտածողություն, նրանք իրենց «մուսուլման» էին անվանում, ու դեռևս չէին հայտնաբերել «Ադրբեջան» հասկացության շուրջ համախմբելու գաղափարը:

Թուրքերին քաջալերում էր Գանձակի նահանգապետ Տակայաշվիլին, որն ուզում էր վրեժխնդիր լինել հայերից իր քեռու Նակաշիձեի սպանության համար: Եվլախ-Շուշի ճանապարհի հսկողությունը հանձնված էր հայտնի ավազակապետ Աբաս Վեզիրովին: Ըստ նախնական ծրագրի թուրքական խառնամբոխը պետք է բաժանվեր երկու մասի և շարժվեր դեպի Շուշի ու Գանձակ, ճանապարհին ավերելով բոլոր հայկական գյուղերը: Ճանապարհներին անխնա կոդոպտվում ու սպանվում էին դեպի Շուշի շտապող հայերը:

Զգալով թուրքերի վտանգավոր շարժերը, հայերը Շուշիում կազմակերպեցին խորհուրդ, որը ստանձնեց պաշտպանությունը ղեկավարելու գործը: Որոշվեց տուրք դնել բնակչության վրա: Կազմա-

կերպվեց ժողովրդական միլիցիա: Վարդանը, որը ղեկավարում էր պաշտպանությունը, ստեղծեց 150 հոգանոց զինյալ խումբ: Նրանք դիրքեր գրավեցին ճաքած քերծի գլխին, վերին դարպասներում, Միրզաբեկի պարտեզում, Գեովհար աղայի տան դիմաց, Քամու ջրաղացում, Ղումլուղում, Ագուլեցոց եկեղեցում:

Օգոստոսի 8-ին Վանք գյուղում ընդհարում տեղի ունեցավ քոչվորների ու հայերի միջև: Աղդամի դաշտը եռման կաթսա էր հիշեցնում: Աղդամցի խոշոր կալվածատեր Ջաֆար-բեկ Վեզիրովը իր խմբով եկավ Շուշի, որ սկսի հարձակումը հայերի թաղի վրա:

Ոմն Շաֆիրբեկով Բաքվում հրատարակվող «Կասպից» թերթում գրեց հետևյալ հաղորդումը. «Գիշերվա ժամը 3-ին մեծ կոշիկներով ու բրդոտ փափախներով երեք հայեր խենջարներով կտոր-կտոր են արել լապտերավաճառ մի մահմեդականի ու փախել»: Այն հետագայում ուղարկվեց Շուշի: Ցերեկը թուրքերի հետ վիճելիս սպանվեց հաշտարար դատավոր Լունյակինը: Թուրքերը մեյդանում (Շեյթան բազար) գնդակահարեցին հայ առևտրականների: Լուրը հասավ Թոփխանա: Հայերը իրենց հերթին սկսեցին կրակել թուրքերի վրա: Հայերը սկսեցին փախչել թուրքական մասից, թուրքերը հայկական մասից: Ոստիկանապետ Խոսրովբեկ Թոփալովը իր հեծյալների հետ փախչելով հայոց թաղամասից, աջ ու ձախ կրակում էր ատրճանակից: Քաղաքը բաժանվեց երկու թշնամի բանակների: Հաջորդ օրը հրաձգությունը վերսկսվեց: Ռուսական կայազորը հանդիսատեսի դերում էր: Բերդաքաղաք եկավ փոխգնդապետ Բարանովսկին՝ 200 կազակների հետ: Սակայն դա չօգնեց խաղաղության հաստատմանը: Թուրքերը հրկիզեցին քաղաքից դուրս Պեխի աղբյուրի մոտ գտնվող Թամիրյանի աղյուսի և քունկերի գործարանը, Ղայբալուի ձորում տեղադրված Դավիթ Ներսիսյանի շերամի գործարանը: Որպես պատասխան հայերը հրդեհեցին Երևանյան դարպասների մոտ գտնվող թուրքերի տները, որտեղից թուրքերը փախել էին: Աղդամից եկած թուրքական ղոչիները հասել էին մինչև Ագուլեցոց եկեղեցին, իսկ մյուս կողմից՝ մինչև Քամու աղացի դիրքերը: Ժողովուրդը մեծ իրարանցումով հեռացավ թաղի խորքերը:

Հայերը, լսելով փոխնահանգապետ Բարանովսկու հաշտության առաջարկը, դադարեցրին կրակը: Դա ոգևորեց թաթար խուժանին, որը գրոհի անցավ: Ագուլեցոց եկեղեցու մոտ նրանք հրկիզեցին մի տուն, որը քամու միջոցով տարածվեց հայկական թաղում:

Հայերի շուկայից (Թոփխանա) սկսած շառավղաձև ձգվում են Թատրոնի, Ագուլեցոց եկեղեցու և փոստի մեծ փողոցները: Նրանք իրենց մեջ առնում էին երկու մեծ թաղամասեր՝ 400 տներով, որոնք փաստորեն հրդեհի ճարակ դարձան:

Այդ ժամանակ Ռիզա-կուլի Միրզայի տանը նահանգապետը, գավառապետը, հայ և թուրք համայնքների առաջնորդները բանակցում էին կրակի դադարեցման և գերիների, այդ թվում՝ Հուսեյին-աղա Ջիվանշիրի փոխանակության հարցերով: Իսկ հրդեհը ավելի էր բորբոքվում ու հուսահատ իրավիճակ ստեղծում: Հրդեհը տարածվեց Թոփխանայից մինչև Խանի աղջկա աղբյուրը և հին հանգստարանի թաղը: Մարդիկ գլուխները կորցրել էին աղետից ու վազվզում էին խելակորույս:

«Ես տեսա, թե ինչպես բորբոքուն, ահռելի մի բոց հարևան տնից սողաց դեպի «Խանդամիրյան» թատրոնը,- գրում է այս աղետալի դեպքերի ականատես, հետագայում մեծ դերասան Վաղարշ Վաղարշյանը,- *տանիքն առավ իր կործանարար ճարճատյունի մեջ, շենքը սկսեց բոցավառվել: Կարծես ոչ ոք չէր տեսնում այդ կործանարար աղետը, որ գնար օգնության: Ես ճչալով փորձ արի վազել դեպի բոցավառվող թատրոնը, հրացանավոր մի մարդ բռնեց թևերիցս ու շպրտելով բակի մի անկյունը, հրամայեց չշարժվել: Թատրոնի շենքը անտեր ու անօգնական իմ աչքի առաջ ճարճատում էր բոցերի լափից: Մի՞թե չէր կարելի փրկել այն: Մի՞թե այն գեղեցիկ լուսավոր սրահը, այն աթոռներն ու ջահերը, այն բեմն ու վարագույրը, այն «անտառներն ու պալատները» պետք է բոցկլտային ու մոխրանային հրդեհի երախում»*[1]:

Հաշտության հայտարարությունը ոչ մի արժեք չունեցավ, քանի որ բանակցողները չէին հսկում իրավիճակը: Օգոստոսի 19-ին ընդհարումը վերսկսվեց նոր ուժով: Տարբեր մասերում նոր դիրքերի համար համառ մարտեր էին մղվում: Թուրք գրոհայինները, օգտվելով համընդհանուր շփոթից, այրեցին Ագուլեցոց եկեղեցու արևելյան դարպասը, ներս խուժեցին եկեղեցու տարածքը ու դիրքեր գրավեցին զանգակատան գմբեթի տակ, հսկելով դեպի եկեղեցին եկող երկու փողոցները: Այստեղ ընկան մի քանի հայ երիտասարդներ: Նրանցից մեկին հաջողվեց ռումբը ձեռքին եկեղեցու բակ թափանցել, մոտենալ հարավային մուտքին ու այն ներս նետել: Հզոր պայթյունը սարսափեցրեց գմբեթի տակ գտնվող թուրքերին, նրանք

ահաբեկված լքեցին դիրքերն ու փախան: Գեովհար աղայի տան շուրջը ևս համառ մարտեր էին ընթանում: Սպանվեց մի ուսանող հայ երիտասարդ՝ Մարգար Ժամհարյանը: Օգոստոսի 20-ին փոխնահանգապետը կրկին հաշտության փորձ արեց, սակայն թուրքական կողմը փորձեց վճռական գրոհով հաջողության հասնել և գրավել հայկական թաղամասը:

Քանի որ թուրքերը հայերի առջև փակել էին Եվլախից ու Գորիսից եկող ճանապարհները, հայերին անհրաժեշտ էր շտապ տիրել Ասկերանին և փակել Աղդամից Շուշիի թուրքերին եկող օգնության ճանապարհը, որը որոշ հավասարակշռություն կստեղծի ուժերի միջև, առանց որի անհնար կլինի հաշտությունը հակամարտող կողմերի միջև:

Օգոստոսի 17-ին վաղ առավոտյան հայերը նկատեցին, որ 30 հոգանոց հեծելախումբը երկու թուրք սպաների գլխավորությամբ հավաքվելով Սեյիթտուի ուռենիների տակ, հանկարծ պոկվեց տեղից ու փոշու ամպ բարձրացնելով, սրարշավ գրոհեց դեպի Ասկերանի բերդը, որտեղ ամրացել էր հայկական մի փոքրիկ ջոկատ: Երբ շատ մոտ էին, անսպասելորեն պայթեց համազարկը: Թուրք հեծյալները անակնկալի եկան ու հետ փախան: Քառորդ ժամ հետո «եա՜... Ալի» գոռալով կրկին հարձակվեցին: Այս անգամ ևս հետ մղվելով, ձիերի գլուխները թեքեցին դեպի Խրամորթ և Խանապատ գյուղերը: Ըստ երևույթին, դրանք հետախուզական գրոհներ էին՝ Ասկերանում հայերի ուժերը ստուգելու համար: Հետևեց 500 հոգանոց զորամասի հարձակումը: Հայերը որոշեցին կրկին հանկարծակիի բերել թուրքերին: Նրանք դուրս եկան դիրքերից, դիրքավորվելով խճուղու մոտ: Անակնկալ համազարկերը կրկին շփոթ առաջացրին թուրքերի շարքերում: Հայոց փոքրիկ ջոկատին օգնության հասավ Խաչենցիների մի ջոկատ՝ ու հայերը ետ մղեցին այս գրոհը ևս: Հաջորդ օրը Ղարաջաղի մոտ գտնվող Հասան աղայի քարվանսարային կից գերեզմանոցում հազարին մոտ թուրք հեծյալներ մեծ շրջան էին կազմել: Նրանք բաժանվում էին երեք մասի՝ դեպի ձախ՝ Նախիջևանիկ, աջ՝ Խանապատ, կենտրոնով՝ Շուշի անցնելու նպատակով: Ասկերանից երևում էր ծխացող Շուշին: Ժամը երեքին սպիտակ համազգեստով մի զինվոր հայտնվեց և հեռվից թափահարեց գլխարկը: Նա հայտնեց, որ նահանգապետը հանձնարարել է գավառապետին, իսկ գավառապետը իրեն է կարգադրել հաղորդել Ասկերանի պաշտ-

պաններին, որ բաց թողնեն թուրքերի քոչը, իսկ զինված ուժերի մուտքը Շուշի արգելել: Երբ հայտնվեց լքոչը, նրանց արանքում խառնված հազար թուրք հեծյալներ հոտերի արանքից սկսեցին կրակել: Ասկերանի պաշտպանները անակնկալի եկան: Հարյուր հոգու հաջողվեց անցնել կիրճը, մնացածները հետ մղվեցին: Կիրճը կրկին փակվեց: Իսկ Խրամորթում վիճակը անորոշ էր: Ղլիճ-Բաղի տակից կարմիր խաչով դրոշակը ծածանելով դեպի Խրամորթ սլացան Խաչենի ու Վարանդայի մարտիկները: Դա էլ որոշեց մարտի ելքը: Այս իրադարձությունների մասին մանրամասն նկարագրել է արցախցի գրող, դեպքերի ականատես Արամայիսը[2] (Միսակ Գաբրիելի Տեր-Դանիելյան, 1895 թ., Մարտիրոս Սարուխանյանի ջոկատի կազմում մասնակցել է Վանի, Շատախի, Մոկաց լեռների մարտերին, վերադարձել ոտքից վիրավորված): Կեսօրից հետո Ասկերանով ստրաժնիկների ուղեկցությամբ մի կառք անցավ, որի մեջ էր մահմեդականների առաջնորդ Շեյխ Ուլ-Իսլամին: Նա Շուշի էր գնում հայերի հետ բանակցելու համար: Այդ պահին Ասկերանի պաշտպանները նկատեցին, որ Աղդամի մոտ այրվում են Ահարոնյանների գործարանները:

Փոխնահանգապետը հայտարարեց, թե ինքը չի կարող ապահովել զինադադարը և դիմում է հայերին *«Պաշտպանվեք, ինչպես կարող եք»:* Երբ արդեն սպառվել էին զինամթերքը, հայ մարտիկները Ժամհարյանների հիվանդանոցի մոտ Մադաթովի ժամանակներից ընկած թնդանոթի երկար փողը քարշ են տալիս Բաղունց Չորը, լցնում վառոդով ու մետաղի կտորներով և երեք անգամ կրակում: Թնդանոթի որոտը ահ ու սարսափ է լցնում թուրքերի թաղամասերը, ու նրանք իսկույն սպիտակ դրոշ են բարձրացնում և հաշտություն խնդրում:

Ընդհարումները տևեցին վեց օր: Այրվել էին քաղաքային վարչության տունը, հիվանդանոցը, հաշտարար դատարանը, սբ.Մարիամայ դպրոցը, 20 խանութներ ու Խանդամիրյանի թատրոնը:

Չորքի ուղեկցությամբ Շուշի եկավ գեներալ Տակայաշվիլին, փողային նվագախմբի ուղեկցությամբ, ի ցույց ամենքի, անցավ Շուշիի փողոցներով: Նրա հրամանով ձերբակալեցին երեք հայերի՝ բժիշկ Աթարբեկյանին, Ռ. Յուզբաշյանին և Յ. Մելիքյանին, որոնք մեղադրվում էին զինված ընդհարում հրահրելու մեջ:

Շուշիի հացն ու մթերքը ստանում էին Եվլախից եկող սայլերով, որոնք պատկանում էին Մալիբեյլու գյուղի թուրքերին: Նրանք ընդհարման ժամանակ հայ առևտրականների ողջ մթերքը քշել, տարել էին իրենց գյուղերը: Այդ օրերին դադարել էին սննդի մուտքը քաղաք: Փակելով Եվլախից ու Գորիսից եկող ճանապարհները, թուրքերը արդեն ընկճում էին հայերին: Օգնության հասավ Ասկերանը, որը հայերի ձեռքումն էր: Հաջողությամբ ետ մղելով խուժանին, նրանց առջև փակեց Շուշի տանող ճանապարհը: Սա բավականին նեղություն պատճառեց թուրքերին: Նրանց թաղամասում հացի ֆունտը հասավ 18 կոպեկի: Գորիսի ճանապարհին հայերի համար նման հենակետ էր Բերդաձորը (Ղարաղշլաղ): Թուրքերը ճանապարհին ամեն տեղ սպանում էին հայերին: Քաղաքից դուրս հրկիզվեց Խանդամիրյանի ջրաղացը:

Քաղաքի բնակչությանը օգնության հասավ Օգերովսկու գլխավորած սայլերի շարասյունը: Թուրքերը պահանջում էին բացել Ասկերանի անցքը, հայերը՝ ճանապարհները: Չնայած Շուշիում կնքված հաշտությանը, Աղդամի թուրք-թաթարները շարունակում էին հարձակումները: Ասկերանցիները դիմեցին ռուս ստրաժնիկին, թե ինչո՞ւ են նրանք շարունակում կռիվը, չէ՞ որ հաշտություն է կնքված: Զինվորը պատասխանեց, որ Աղդամի թուրքերը ասում են, որ Շուշին իր համար է հաշտություն կնքել, իսկ իրենց կռիվը երբեք չի դադարելու:

Օգոստոսի 22-ին խուրջինները շալակած 11 թուրքեր մտան Ասկերան, Աղդամ գնալու նպատակով: Նրանց խուրջինները լցված էին Շուշիի հայերի տներից թալանված իրերով: Բազմաթիվ թալանչիներ էին խմբվել Խոջալու գյուղում, իրենց հարուստ ավարով: Նրանք սպասում էին Ասկերանն անցնելու հարմար պահի: 250 հեծյալներ, ձիերը բեռնած թալանած ապրանքով, հայ պրիստավի առաջնորդությամբ Ասկերան մտան: Պրիստավը փախավ, իսկ ավարառուներից միայն վեց հոգի փրկվեցին:

1906 թվականի սեպտեմբերին պահպանվում էր խաղաղությունը, սակայն և զգացվում էր լարվածությունը: «Մուսուլմանները», ինչպես իրենք էին իրենց կոչում, լցված էին հայերի նկատմամբ վրիժառությամբ: Նրանք սկսել էին հարձակումը, ամեն ինչ նախապես ծրագրված էր, մշակված, ունեին հաղթելու բոլոր նախադրությունները, մանավանդ, որ հայերը պատրաստ չէին, իսկ ստացվեց, որ

հայերը կազմակերպված հակահարված տվեցին: Ճանապարհներին լնորանոր դեպքեր էին տեղի ունենում:

Իսկ Շուշիի հայերը երազում էին վերականգնել բերդաքաղաքի նախկին առևտրատնտեսական երբեմնի հզորությունն ու ազդեցությունը: Հրատարակիչ Տիգրան Նազարյանը հիմնում է Հողային վարկի փոխադարձ ընկերությունը, որի հիմնադիր համագումարին իր ելույթում ասում է, որ *«պետք է մտավորապես և թե տնտեսապես այնքան հզորանանք, որ այլևս ֆիզիկական կոպիտ ոչ մի ուժ չկարողանա մեզ դիպչել»*[3]: Ընկերության նախագահ է ընտրվում Պետական դումայի անդամ, բժիշկ Խաչատուր Բահաթրյանը:

Շուշեցիները 1906 թ. մայիսին դիմում են ուղարկում մեծ արդյունաբերող և բարերար Ալեքսանդր Մանթաշյանին. *«Շուշին 1860-70 թվականներին ուրիշ քաղաքների նախանձն էր շարժում իր ճոխ առևտրով և հարուստ առևտրականներով: Նա կորցրեց և՛ առևտուր, և՛ հարստության միջոց, իսկ հայ-թուրքական ընդհարման հետևանքով զրկվեց վերջին հույսի մնացորդից: Աղետի ու հրդեհի սարսափները մի դառը դաս դարձան Շուշեցու համար... փրկությունը տեսնում է երկաթուղու մեջ ակցիոներական ընկերության ստեղծելը... եթե դուք՝ խոշոր դրամատերերդ համաձայնության գալով կազմեք բաժնետիրական ընկերություն, գործի ծանրությունը ձեզ վրա վերցնելով, դրան կմասնակցեն մյուս հարուստները, նույնիսկ շուշեցի նվազ դրամատերերը և կաջակցեն գործի գլուխ բերելուն:... Չեռնտու է, որ Եվլախի ու Գանձակի միջև որևէ կայարանից գա անցնի հայկական գյուղերով. ճարտարապետ Եացկևիչի ծրագիրը, անցնի Խաչենով ու քաղաքի Երևանյան ճանապարհով մտնե քաղաք՝ Ղայբուլուի և Խալիփլուի ծորակները կտրելով...»*[4]:

Հայտնի չէ՝ թե այս դիմումը հասե՞լ է հայ բարերարին, թե ոչ, քանի որ հունիսից ճանապարհները վտանգավոր էին դարձել: Հավանաբար, ծրագիրը անիրականանալի էր, սակայն կարևոր էր այն հանգամանքը, որ սարահարթի ծերպին հայությունը ցանկանում էր կրկին կապվել աշխարհի հետ, լինել նրա քառուղիներում:

1906 թվականին կրկին վերսկսվեց մարդորսությունը: Մայիսի 14-ին Ղարբանդ կայարանում թուրքերը կոտորեցին 27 հայերի, որոնց մեջ կային կանայք և երեխաներ: Հայերը դիմեցին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի օգնությանը, մյուս կողմից ձեռնարկելով Շուշի-Գանձակ լեռնային ճանապարհի կառուցումը, որը

երևանյան մուտքը կապում է Եվլախի խճուղու հետ: Այդպես նրանք նպատակ ունեին խճուղի հասնել, շրջանցելով թուրքական թաղամասը:

Երբ Կովկասի փոխարքայի հրահանգով Շուշի ժամանեց գեներալ Գոլոշչապովը, ճիշտ կողմնորոշվելով, առաջին հերթին ձերբակալեց Նաջաֆկուլի աղային՝ ջարդերի գրգռողին ու կազմակերպչին: Սակայն մթնոլորտը աստիճանաբար շիկանում էր:

Արամայիսը 1906 թ. հուլիսյան դեպքերի մասին գրում է. *«1905-ի աղետալի ընդհարումներից հետո... երկու սպառազինված բանակների նման ճակատ ճակատի էին կանգնել հարևանները և երկար ու ծիգ ամիսների ընթացքում արիունով էին պարուրում, օդը վառոդի ծխով լցնում, իսկ այնտեղ մեր իշխանավորները լոկ հանդիսատեսի դերում, հետաքրքրությամբ դիտում էին, թե դժբախտ գլադիատորներից որն է ավելի խորը մխելու սուրը հակառակորդի սրտի մեջ...»*[5]:

Հուլիսի 8-ին առավոտյան ժամը 8-ին Զարդարյանցի պարտեզում քնած ժամանակ իր անկողնում սպանվեց Սահակ Միրզոյանը: Դատախազությունը սկսեց քննել գործը: Թուրքերը կրակեցին դատախազության ներկայացուցիչների վրա: Կրկին սկսվեցին երկու ժողովուրդների միջև անմիտ ու աննպատակ բախումները: Թուրքերի կրակից սպանվեց երկու ռուս զինվոր: Ռուսները առանց հրահանգի թնդանոթները դարձրին դեպի թուրքերի դիրքերն ու սկսեցին ռմբակոծել:

Հայերը գրոհով դիրքեր գրավեցին Աղա-Իրզիի տան շուրջը: Թուրքական թաղամասի ջոկատներին օգնության էր շտապում Զառիսլու և Խալիֆալու գյուղերի խուժանը: Սակայն նրանց ճանապարհը հաջողությամբ փակեցին Քարինտակ և Ղայբալու գյուղերի հայերը: Կտրվեց և քաղաքի խմելու ջրի հոսքը: Ասկերանի բերդում հայերը կանգնեցրին Աղդամից եկող խառնախմբի շարժումը:

Հունիսի 13-ի առավոտյան պաշտպանության կազմակերպիչները հավաքվել էին Քյաթուկ գյուղի մոտ բարձունքի կատարին՝ խորհրդակցելու: Այդտեղից Շուշին երևում էր ինչպես ափի մեջ: Լսվում էին թնդանոթների որոտը, կրակոցները: Ծխի թանձր քուլաներ էին բարձրանում քաղաքից: Այդ օրը 300 թուրքեր հարձակվել էին Խրամորթի վրա: Կռիվը տևեց ինը ժամ: Հայկական մի ջոկատ դուրս եկավ իր դիրքերից ու հանդուգն գրոհով մտավ թուրքերի

շարքերի մեջ: Թուրքերը շփոթվեցին ու սկսեցին նահանջել: Հայերից զոհվեց քաջ զինվոր Ջումշուդը:

Հուլիսի 15-ին համարձակ գրոհով հայ մարտիկները գրավեցին Դիքտան-Ղարա տեղամասի դիրքերը: Թուրքերը, որ նախորդ օրը մերժել էին հաշտության առաջարկությունը, ստիպված կրկին սպիտակ դրոշ բարձրացրին: Հուլիսի 16-ին ընկավ նաև Հաջի-Վալիևի տան դիրքը: Հուլիսի 20-ին դրսից թուրքերի բավականաչափ մեծ ուժեր էին մտել բերդաքաղաք: Աղա Իրզիի տան շուրջը կրկին լցվեցին թուրք հրոսակներն ու բորբոքեցին կռիվները: Հայերը կրկին գրոհեցին ու գրավեցին այդ դիրքերը: Թուրքական կողմը պահանջեց գեներալ Գոլոշչապովի փոխարեն այլ գեներալ ուղարկել: Իսկ հայերը առարկում էին, ասելով. *«ի՞նչ տարբերություն, թե որ ռուսը կնշանակվի»:*

Շուշիում կռիվը տևել էր 12 օր: «Ալիքի» թղթակիցը գրում է. «Հայերը պահանջում էին ոչնչացնել «Դիկտան Ղարա» և Գեովհար Աղայի տան դիրքերը: Վերջինս Մելիք-Շահնազարյանների տան ապարանքն էր: Թուրքերը հրաժարվեցին: Հայերը պայթեցրին «Դիկտան-Ղարա» դիրքը, որը խանական հին ապարանքն էր: Թուրքերն արդեն պարտվում էին: Ուրբաթ օրը համատեղ ժողով է նշանակվում: Բայց թուրքերը չմասնակցեցին: Նրանք խոստացան հաջորդ օրը խաղաղություն հայտարարել: Քաղաքի շուրջ ամեն տեղից թուրքերի մեծ խմբեր էին հավաքվել, որոնք փորձում էին ներս մտնել ու օգնել իրենց ցեղակիցներին:

Մի կողմից Շուշի մտան 150, մեկ այլ կողմից 580 սպառազեն թուրքեր, հետևները բերելով մեկ թնդանոթ:

Ուրբաթ օրը, որ օգոստոսի 2-ն էր, թաթարական կողմը նամակ ուղարկեց հայերին, հայտնելով, որ համաձայն են խաղաղությանը: Հայ զինվորները, տեղեկանալով այս մասին, ցրվեցին իրենց տները: Վաղ առավոտյան թաթարների ջոկատները հայկական դիրքերի թիկունքն էին անցել և պահանջում էին հանձնել դիրքերը: Գեներալ-նահանգապետ Գոլոշչապովի ադյուտանտը մոտեցավ թուրք սպային և գաղտնի ինչ-որ բան հաղորդեց: Հետևեց թուրքերի համազարկը: Հայերը իսկույն դիրքեր գրավեցին քարակույտերի հետևում: Զոհվեց մի վրացի զինվոր:

Գոլոշչապովն այդ ժամանակ երեխաներին շուրջը հավաքած զվարճալի պատմություններ էր պատմում Պլևնայի ճակատամարտի մասին: Այդ դիքում հարյուր հայի դեմ 800 թուրքեր էին կռվում: Թուրքերը, ի վերջո, թողնելով սպանվածներ, հետ մղվեցին «Աղա-Իրզիի» դիրքերից: Հայոց պաշտպանության ղեկավարները հավաքվեցին «կլուբի» շենքում խորհրդակցության:

Գեներալ-նահանգապետ Գոլոշչապովը պահանջեց, որ հայկական կողմից խաղաղարար թափոր գնա թուրքերի թաղը: Հայերը երկյուղում էին, որ կարող է թուրքերը նոր սադրանք նյութեն, ու կրկին վերսկսվի արյունահեղությունը:

Օգոստոսի 1-ին հայ նշանավոր մարդկանցից մի խումբ հավաքվեց նահանգապետի նստավայրի բակում: Կազակների մի ջոկատ եկավ, շրջապատեց խմբին, և այդպես շարժվեցին թուրքերի թաղը: Արամայիսը գրում է. «Երկու ժամից հայերին միացած թուրքական թաղից վերև բարձրացան բազմաթիվ թուրքեր ակամայից ժպիտը վշտահար դեմքերին: Անկեղծ ուրախացողների թիվն էլ քիչ չէր: Նրանցից մեկը պար էր գալիս նվագի տակ ու կանչում.

- Այ հայեր, դուք էլ պարեք, որովհետև պարելն ավելի լավ է, քան լաց լինելը:

Մեկ ուրիշը հանդիմանելով հայերին ասում էր.

- Ձեր տունն Աստված չընքանդե, Յապոնի Բարութխանան (ճապոնիայի վառոդի գործարանը - Բ.) *այստեղ եք փոխադրել... տնաշենները, ժայռի գլուխը հավաքված ուզում էիք անդո՞ւնդը թափել մեզ, ինչ է:*

Շատերը խոստովանեցին, որ եթե հնար լիներ մի տեղով փախչելու, կռվի երկրորդ օրն արդեն նրանք կդատարկեին բերդաքաղաքը: Բայց տեղ չկար, քանի որ հայերը իրենց հերթին շրջափակման մեջ էին առել նրանց: Թուրքերը անիծում էին այս կռվի «սաբաբին» (միջնորդին):

1905 թվականին կարկուտը ոչնչացրել էր Խաչենի ու Վարանդայի արտերը: Օգոստոսյան արյունահեղությունների պատճառով աշնանացան չեղավ: Հաջորդ տարի սերմնացու չլինելու պատճառով գարնանացանը տապալվեց: Հայ-թուրքական բախումների գոտին ամբողջությամբ խոպան դարձավ: Ղարաբաղում դաժան ու ծանր ձմեռ էր սպասվում:

Երկու տարի տևած հայ-թուրքական բախումների հետևանքով ժողովուրդը հայտնվեց ավելի թշվառ վիճակում: Ավերվել էին 252 գյուղ, 7 քաղաք: Ընդհանուր զոհերը կազմում էին 10 հազար մարդ,

որի կեսը ընկան սրի կամ գնդակի հարվածից կամ այրվեցին իրենց տանը:

Սակայն ոչինչ չարվեց, որ այս անմիտ բախումները դաս դառնան հետագայում նման բռնությունները կանխելու համար: Ոչ ոք չբռնեց հրահրիչների, կազմակերպիչների ձեռքը: Ու նրանք չհասնելով իրենց նպատակին, նախապատրաստում էին նոր բախումներ, նոր կոտորած:

Վերջապես, Անդրկովկասը, որը կարող էր դրախտավայր դառնալ ժողովուրդների համար, ամեն անգամ դժոխքի էր վերածվում:

3. ԴԱԺԱՐ ՓՈԹՈՐԿԻՑ ՀԵՏՈ

Չնայած վերահաստատվեց խաղաղությունը, հայ բնակչության մի մասը սկսեց հեռանալ Շուշիից: Այդ ժամանակ էլ Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը վերաբացեց թեմական դպրոցը, դրանով իսկ հուշելով, որ հայերը պետք է շարունակեն ապրել Շուշիում: Ժամհարյանները եռահարկ հիվանդանոցային շենք կառուցեցին, սակայն հրաժարվեցին օգնել ինքնապաշտպանության գործին: Ի վերջո, 1905-1906 թվականների ջարդերի հետևանքով հայերը միլիոնավոր ռուբլիների վնաս կրեցին: Այդ կորստի մեկ տոկոսն անգամ ներառնելով ինքնապաշտպանության կազմակերպման համակարգի մեջ, մեծահարուստները կխուսափեին թե՛ կոտորածից և թե՛ նյութական կորստից: Զգալով սպառնացող վտանգը, հայերը պետք է ի հակակշիռ թուրքական մոլեռանդությանն ու հակահայկական քաղաքականությանը, ստեղծեին համահայկական ամուր կառույց, գուցե և ՀՅԴկուսակցությունը վերածեին նման կառույցի, որը միավորեր ողջ հայությանը, այն դարձներ կուռ, ամբողջական ուժ՝ ընդդեմ թուրքական յաթաղանի, ընդդեմ միջազգային այն ուժերի, որոնք քիչ ջանքեր չէին թափում տարբեր շարժումներ գրգռելու հայության դեմ:

Տեսնելով, որ թուրքական ուժերը բավարար չեն հայերին Բաքվից դուրս քշելու համար, 1906 թվականին հայերի դեմ գրգռեցին նաև Բաքվի ռուսներին ու լեզգիներին:

Սրանք պատմության դասեր են, որոնք պետք է հաշվի առնեին հայկական կառույցները: Սրանք մեծ ողբերգության նախանշաններն էին: Վերջապես, հայերը ազգային ողբերգություններում ոչ թե պետք է մեղադրեին հակառակորդ կողմի ուխտադրժությունը, ագրեսիվությունը, այլ իրենց միավորվելուն, դիմակայելուն անընդունակ լինելը: Հակառակորդի ագրեսիվությունը ակտիվանում է այն դեպքում, երբ հարևանը թույլ է ներսից և անընդունակ պաշտպանվելու:

1906 թվականի արյունահեղ դեպքերից հետո, եթե մեծահարուստ շուշեցիները՝ հայ վաճառականներից շատերը ընդմիշտ հեռացան Շուշիից՝ իրենց ընտանիքներով հաստատվելով ազգամիջյան կռիվներից հեռու ու հանգիստ այլ վայրերում, իսկ գյուղացիները քաղաքից վերադառնում էին իրենց գյուղերը, ապա միջին խավը այլընտրանք չուներ: Բնակիչների մեծ մասը վերադարձավ իրենց տները: Վերաբացվեցին տները, արհեստանոցները, սակայն արդեն վարակված հեղափոխական շնչով:

Ստեղծվել էր ընդհանուր աշակերտական միություն, որն ընդգրկում էր բերդաքաղաքի բոլոր ուսումնարանների աշակերտներին: Միությունը անկախ էր հոգաբարձուների խորհրդի և ուսուցիչների ժողովի ազդեցությունից: Խմբերի մեջ արդեն նկատվում էին խիստ կուսակցական երանգներ: Աշակերտները դասադուլ հայտարարելով, իրենց պահանջները ներկայացրին տեսչին: Նրանք պահանջում էին դպրոցը զատել կղերականության հսկողությունից և դարձնել զուտ աշխարհիկ ու ժողովրդական, այնպես որ տիրապետող լինի աշխարհաբարը, կանոնավոր հիմքերի վրա դրվի ռուսերենը, գերմաներենն ու ֆրանսերենը, եկեղեցու պատմությունը ավանդվի հայոց պատմության հետ, իսկ կրոնական մյուս առարկաները կրճատվեն, որոնց փոխարեն մտցվի երկրաչափություն, եռանկյունաչափություն: Մանկավարժական խորհուրդը ստիպված գնաց զիջումների:

1907 թվականին Արցախի թեմում կար 42 դպրոց, այդ թվում և Նուխիի գավառում:

Աշակերտների մեծ մասը աղքատների երեխաներ էին, չունեին գիրք ու պիտույքներ, շատերը գրեթե մերկ էին ու ոտաբոբիկ, տանը ուտելու ոչինչ չունեին, միակ աշխատողը իրենք էին: Դպրոցից դուրս զանազան գործեր էին կատարում, դպրություն, լրագրի վա-

ճառք, Քերծի գլխին թեյ վառել: Այս ամենի հետևանքն այն էր, որ առաջադիմությունը խիստ հետ էր մնում: Ուսուցիչները հաճախ էին քաղաքում փող հավաքում աղքատ աշակերտներին օգնելու համար:

1908 թվականին մեծահարուստ Առաքելյանի միջոցներով կառուցվում է ռեալական դպրոցի հարմարավետ ու ընդարձակ շենքը: Դպրոցը Մովսես բեկի տնից տեղափոխվում է այս շենքը: Շուշիի մեծահարուստները իրենց երեխաներին այս դպրոցն էին ուղարկում:

Շուտով ձերբակալվեցին թեմական դպրոցի տեսուչն ու երկու ուսուցիչներ և բանտարկվեցին:

Վերին Թաղավարդ գյուղի ծնունդ, Մոսկվայի մեծահարուստ վաճառական Բաղդասար Արզումանյանցը թեմական դպրոցին նվիրեց 200 հազար ռուբլի: Ղուկասյանները նվիրում են շենք՝ օրիորդաց դպրոցի համար: Կաթողիկոսի կոնդակով այն վեր է ածվում «Մարիամ Ղուկասյան» օրիորդաց եկեղեցական թեմական դպրոցի՝ վեց դասարաններով: Տնտեսապես քայքայված Շուշին կրթության կարիքների համար ստանում է կես միլիոն ռուբլու օգնություն:

Վճռվում է 1913 թվականին տոնել թեմական հոգևոր դպրոցի 75-ամյա հոբելյանը: Շուշի են գալիս նախկին շրջանավարտներ, ուսուցիչներ, հյուրեր: Օգոստոսի 10-ին հավաքվում են նախկին թեմականի հիմնադիր Բաղդասար Մետրոպոլիտի հոր՝ Դանիել-բեկ Ջալալյանի շիրմաքարի մոտ, հանդիսությամբ կատարում հոգեհանգիստ: Ապա մեծ թափորը շարժվում է դեպի Ղազանչեցոց եկեղեցի, որտեղ պատարագ է մատուցվում: Այդ օրը մեծ հանդեսը եզրափակվեց Առաջնորդարանի մոտ՝ օրիորդաց դպրոցի բակում: Ջավեն վարդապետը ընթերցեց կաթողիկոսի կոնդակը: Շքեղ տոնախմբությանը մասնակցում էր Շուշիի ողջ հայությունը:

Շուշիում աշխուժանում է նաև տպագրության ու մամուլի գործը: Քաղաքական աշխուժացումը բերում է նրան, որ ամեն մի կուսակցություն ձգտում է ունենալ իր թերթը: 1911 թվականից լույս էր տեսնում «Ղարաբաղ» եռօրյա թերթը, որի հրատարակիչն էր Ն. Եարամիշյանը: 1914-17 թթ. լույս է տեսնում «Պայքարը»: «Փայլակը» սոցիալ-դեմոկրատների թերթն էր: Մ.Պետրոսյանը լույս ընծայեց գրական-գեղարվեստական «Ծիածան» ամսագիրը: ՀՅԴՇուշիի կոմիտեն 1917-19 թթ. պատմաբան Հայրապետ Մուսայելյանի խմբագրությամբ հրատարակում է «Ապառաժ» հասարակական-քաղաքա-

կան երկշաբաթաթերթը: Մինչև 1920 թ. մարտի 23-ը՝ Շուշիի եղեռնի օրը Բերդաքաղաքում լույս էին տեսնում նաև «Ասպարեզ» (ՀՅԴ), «Արցախ» (Արցախի Ազգային խորհուրդ), «Ղարաբաղի Սուրհանդակ» (կոալիցիոն կառավարություն), «Նոր կյանք» (սոցիալ-ժողովրդավարներ), «Գյուղական կոմունա» և «Եռանդ» թերթերը:

Շուշիում նոր վերելք է ապրում և թատրոնը:

Խանդամիրյանի թատրոնի հրկիզումից հետո ներկայացումները շարունակվում էին թեմական դպրոցի դահլիճում, քաղաքային ակումբում, երբեմն՝ ռեալական դպրոցի դահլիճում: Ներկայացումներ էին տրվում նաև մասնավոր տներում, օրինակ՝ Փիփերտանց տանը, որտեղ կազմակերպվում էին նաև աշակերտական կամ ընդհատակյա երեկույթներ: Շուշիում ներկայացումների էին գալիս Սիրանույշը, Հովհաննես Աբելյանը, Պետրոսյանը, Հովհաննես Զարիֆյանը, Գրիգոր Ավետյանը, Արուս Ոսկանյանը, Օլգա Գազազյանը: Փաստորեն Շուշին ուներ թատերական իր դպրոցը, որը ծնեց կոմիկական դերերի վարպետ Գրիգոր Ավետյանին ու մեծ դերասան Վաղարշ Վաղարշյանին:

Է մասի հղումների ցանկ

[1] Վ.Վաղարշյան, «Ընկերներս, բարեկամներս և ես», գիրք Ա, Երևան, 1959 թ., էջ 53-54:

[2] Արամայիս (Միսակ Տեր-Դանիելյան) «Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից», Թիֆլիս, 1907, I մաս, էջ 3-18 (այսուհետ՝ Արամայիս):

[3] Տիգրան Նազարյանի արխիվ, ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Երևան:

[4] Նույն տեղում:

[5] Արամայիս, Թիֆլիս. 1907, II մաս, էջ 1:

ՄԱՍ Ը (1917-1920 թ թ.)

1. ԱՐՑԱԽԸ ՀՐՉԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ

1917 թվականի փետրվարյան հեղափոխությունից հետո Շուշին ասես ալեկոծվեց, հուզվեց: Սկսվեցին հախուռն, տարերային միտինգները, ապա՝ գաղափարական անզիջում պայքարը: Հայկական շուկան (Թոփխանա) ասես եռում էր: Ամեն տեղ բանավեճ էր, գաղափարների բախումներ:

Լևոն Վարդանյանի հիմնած «Փայլակ» թերթում հավասարապես թղթակցում էին թե՛ բոլշևիկները և թե՛ մենշևիկները: Բոլշևիկները հետագայում հիմնեցին իրենց թերթը՝ «Նեցուկը», որի գլխավոր խմբագիրն էր հետագայում մեծ գիտնական և ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը:

Էսեռները չնայած 8 հոգի էին, հրապարակեցին իրենց թերթը, որը, սակայն, դադարեց իր գոյությունը: Կադետները հրապարակեցին «Շուշինսկի լիստոկ» շաբաթաթերթը:

Անդրկովկասի կառավարման նոր մարմինը՝ կոմիսարիատը, որ նստում էր Թիֆլիսում, չկարողացավ երկրում իսկողությունը իր ձեռքը վերցնել, ուստի ամենուր սկսեց տիրել անիշխանությունը: Խախտվեց Բաքու-Թիֆլիս երկաթուղու աշխատանքը: Շուշիի գործարաններում, հիմնարկներում, դպրոցներում հիմնվեցին ծառայողների ու արհեստակցական միություններ: Ստեղծվեց գործադիր կոմիտե: 532-րդ հետևակային Սիմբիրյան զորամասն ու ճակատից վերադարձած զինվորները ստեղծեցին զինվորական դեպուտատների խորհուրդ: Գավառական վարչությանը փոխարինեց գավառական կոմիսարիատը: Սակայն քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը իր ապարատով շարունակում էր գործել:

Մարտի 15-ի համարում «Մշակը» գրում է, որ քաղաքային ուպրավայի տանիքին ծածանվում էր «Ազատության նշան կարմիր դրոշակը»:

Շուտով Լեռնային Ղարաբաղը լրիվ մեկուսացավ արտաքին աշխարհից: Արևմտյան Հայաստանից վերադարձող ղարաբաղցի զինվորները Եվլախ-Շուշի ճանապարհին հարձակման ենթարկվեցին թուրք բանդաների կողմից և զինաթափվեցին: Ստեղծված բոլոր մարմինները անգործության էին մատնվել: Քաղաքի մատակարարման գործը կանգ առավ:

Ինչպես փետրվարյան համարում գրում է «Մշակի» թղթակիցը Շուշիից՝ *«Փետրվարը անցնում է մեզ համար սառնամանիքով, որը ծանր է: Ցրտաշունչ եղանակները խիստ ճնշումներ են գործադրում բանկության ճիրաններում տանջվող ժողովրդի վրա: Թանկ է հացը, միսը, շաքարը, փայտն ու ածուխը, թանկ է և ճոթեղենը: Ոստիկանությունը տաքսաներ է դրել ամեն բանի վրա: Բայց ով որպես կարողանում է, թելադրում է խիղճը՝ վաճառում է: Ամենակրիտիկական ամիսներն են մարտը, ապրիլն ու մայիսը: Եթե այդ ամիսներին բնությունն էլ պատերազմի պես պատժի մարդկությանը, այդ ժամանակ շրջանիս բնակչությունը կանգնած կլինի կորստեան անդունդի ծայրին»*[1]:

Բեկական-մուսաֆաթական ակտիվ քարոզչությունն ու սպառնալիքները, մոլլաների մոլեռանդ ու գրգռիչ քարոզները, թուրքական քարոզչությունը շուտով արեցին իրենց սև գործը:

Թուրք բնակչությունը սկսեց հայերի տնտեսական բոյկոտն ու շրջափակումը: Ստեղծեցին թշնամական մթնոլորտ, ազգերը կրկին իրար դեմ էին գրգռվում: Սկսվեց սովը: Երբ փակվեց Եվլախից եկող ճանապարհը, Ասկերան-Շուշի հատվածը գրավեցին հայ զինվորականները:

«Մշակը» գրում է, որ փետրվարի 19-ին Շուշիի Մեղրեցոց եկեղեցում կատարվել է Եվլախ կայարանում սպանված Սիմեոն Մելիք-Ղարագյոզյանի թաղման կարգը: Պատարագիչն էր եղել թեմական Վահան վարդապետը: Համարյա ամեն օր նման պատարագներ էին մատուցվում:

Հայկական թաղամասում տեղավորված ռուսական 532-րդ հետևակային Սիմբիրյան զորամասը, կազմված 500 զինվորներից, որին միացել էր ռուս-պարսկական սահմանից եկած 6-րդ սահմանապահ գնդի մի զորամաս, դուրս եկավ Շուշիից Ռուսաստան մեկնելու մտադրությամբ: Դա լուրջ տագնապ առաջացրեց հայ բնակչության մեջ: Հայ մտավորականները փորձեցին համոզել ռուս

սպաներին հետաձգել մեկնումը, քանի որ Եվլախ տանող ճանապարհը անվտանգ չէ:

Ռուս զինվորները կտրականապես մերժեցին: Հայերը անվտանգ ճանապարհեցին մինչև Ասկերանի բերդը: Աղդամում նրանք ենթարկվեցին թուրքերի «Դիկայա դիվիզիայի» և բանդիտների վայրագ հարձակմանն ու կոտորածին: Մի մասին հաջողվեց թալանված, անզեն, ոտաբոբիկ Եվլախ հասնել:

«Մեփական ժողովրդի կենսական շահերը, ազգամիջյան համերաշխությունն ու խաղաղությունը ապահովելու հրամայական անհրաժեշտությունը պահանջում էին համախմբել ընդհանուր գործի շուրջը հասարակական բոլոր ազնիվ, կարող, ձեռներեց, անձնվեր ու գործուն ուժերը, անկախ նրանց քաղաքական հայացքներից և ստեղծել նրանց մասնակցությամբ մի կոալիցիոն հեղինակավոր մարմին՝ երկրի կառավարման համար,- գրում է Հարություն Թումյանը»[2]:

1917 թվականի դեկտեմբերի կեսերին տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները հավաքվեցին իրավաբան Լևոն Վարդապետյանի բնակարանում և ընդունեցին միասնական գործողությունների ծրագիր, որի նպատակն էր վերջ տալ անիշխանությանը, պահպանել խաղաղությունը հայերի ու մուսուլմանների միջև: Ժողովում ստեղծվեց «Կուսակցությունների, կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ» 14 հոգուց, որի նախագահ ընտրվեց պատմաբան Հայրապետ Մուսայելյանը, քարտուղար՝ Նիկոլայ Իսախանյանը: Այս մարմինը այնուհետև կոչվեց «Միջկուսակցական բյուրո»: Մուսուլմանական ազգային կոմիտեն հավանություն տվեց «միջկուսակցական բյուրոյի» ազգամիջյան մարմին ստեղծելու առաջարկը: Նախագահ ընտրվեց Շուշիի նախկին հաշտարար դատավոր Իոսիֆ Իլարիոնովիչ Կոբիցկը՝ մի վրացի, որը հարգված մարդ էր Շուշիում: Որոշվեց Շուշիի անհատներից գանձել 50 հազարական ռուբլի:

Քաղաքի հայկական մասում կազմվեց միլիցիական վարչություն, նշանակվեցին քաղաքացիական ու զինվորական լիազորներ: Շուշիում ստեղծվում էին զինյալ ջոկատներ:

Զինվորական կոմիսար Հ.Թումյանի գլխավորությամբ 300 հոգանոց զինյալ ջոկատով Խաչենի գյուղերն ու ճանապարհները մաքր-

վեցին ավազակներից: Չհաջողվեց պատժել միայն Մեծ շենցի Բախշիբեկին:

Ռազմաճակատում լքելով դիրքերը, կեսմիլիոնանոց ռուսական բանակը, արհամարհելով ժամանակավոր կառավարության հրամանը՝ «Հարձակում բոլոր ճակատներում» կարգախոսով, ընդունեց բոլշևիկների կարգախոսը՝ «Խաղաղություն առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի», 1917 թվականի նոյեմբերից կազմալուծվեց և հորդաց դեպի հյուսիս:

Դա Անդրկովկասի և մանավանդ, հայության համար լուրջ վտանգ էր պարունակում: Հզորանալով ռուսական բանակի թողած պաշարով ու ռազմամթերքով, թուրքական բանակը մոտեցավ Անդրկովկասին: Հայության վերջին բեկորները վերջնականորեն լքեցին հայրենի հողն ու խուճապահար փախան Անդրկովկաս:

Վրաց մենշևիկներն ու «մուսուլման» մուսավաթականները որոշում են թույլ չտալ, որ այդ զորքերը գնան Ռուսաստան և միանան խորհուրդների իշխանությանը: «Դիկայա դիվիզիայի» հրոսակները 1918 թվականի հունվարի 9-ին շրջապատում են զինվորներով լեցուն փակ վագոնները: Նրանք վագոններում քնած՝ դավադիր գնդակոծության են ենթարկվում: 20 հազարանոց ռուսական զորքը մի քանի ժամում կոտորվում է: Չինաթափ արվեց նաև Գանձակում տեղակայված 219-րդ ռուսական գունդը:

Շուշիում կազմակերպվեց 100 հոգանոց կայազոր՝ Կապիտան Արտաշես Վարդապետյանի գլխավորությամբ, որը տեղավորվեց նախկին զորանոցի շենքում:

1918 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Շուշիում գումարվեցին հայերի ու թուրքերի մասնակցությամբ մի քանի հանրահավաքներ, որոնց նպատակն էր խաղաղության ապահովումը: Ապրիլի 2-րդ կեսին Շուշիում տեղի ունեցավ օկրուգային համագումար, որին մասնակցում էին Շուշիի, Ջիվանշիրի, Կարյագինոյի և Ջանգեզուրի հայ և մուսուլման ներկայացուցիչները: Այն տևեց չորս օր և տեղի էր ունենում թուրքական թաղում «Խանի տանը»: Վերջին նիստում հայ պատգամավորներից Մելիքսեթ Եսայանը խիստ տոնով ասաց. *«Բեկեր, խաներ և աղալարներ, դուք որ հինավուրց տան մեծ պատշգամբից հիանում էիք ձեր առաջ բացվող հիանալի տեսարանը դիտելով, մտածո՞ւմ էիք, որ երբ բոլշևիկները մտնեն Ղարաբաղ, ձեր անհաշիվ չարագործությունների համար ձեզ մեկ-մեկ պիտի կախեն հենց այդ պատշգամբի սյուներից»:*

Սա լուրջ միջադեպ էր և քիչ մնաց վերածվեր արյունահեղ բախումների: Հայերի և Լյուֆտալի-բեկ Բեհբուտովի խմբի միջոցով ու ջանքերով կանխվեց բախումը: Հակահայկական թևը մուսուլմանների մոտ գլխավորում էր բժիշկ Մեհմանդարովը:

2. ՇՈՒՇԻԻ ԳՈՒՆԴԸ ԳՈՐԻՍՈՒՄ

1905-6 թվականների քաղաքացիական պատերազմներից դարաբաղցիների տներում մեծ թվով զենք էր մնացել: Սակայն զինամթերքը չէր բավարարում:

Լուր եկավ, որ Թիֆլիսում կազմակերպված Շուշիի գունդը, կազմված մի քանի հարյուր շուշեցի ու նուխեցի զինվորներից ու սպաներից, գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ, Սիսիան էր հասել ու շուտով կլինի Գորիսում: Նա իր հետ բերում էր երկու դաշտային թնդանոթ, հրացաններ ու զինամթերք: Այն Թիֆլիսից դուրս էր եկել 1917 թվականի նոյեմբերին: Գունդը տեղ հասցնելով, հնարավորություն կստեղծվեր կազմակերպելու քաղաքի և ողջ Ղարաբաղի պաշտպանությունը: Շուշիում ստեղծվեց զենքի նորոգման արհեստանոց: Պատրաստվեցին հին տիպի երկու ռմբաձետներ, որոնք կարող էին գործել մինչև 1,5 կմհեռավորության վրա:

Բաքվում ստեղծվել էր ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ: Շուշիում նս միջկուսակցական բյուրոն վերանվանվեց «Կոմիսարների խորհուրդի»: Գաղտնի ընտրությամբ Կոմիսարների խորհրդի անդամ ընտրվեցին՝ Հայրապետ Մուսայելյանը՝ նախագահ, Աշոտ Մելիք-Հովսեփյանը՝ արդարադատության կոմիսար, Արսեն Բակունցը՝ արտաքին գործերի կոմիսար, Արամ Միքայելյանը՝ ֆինանսների կոմիսար, Հարություն Թումյանը՝ զինվորական կոմիսար, Աստվածատուր Ավետիսյանը՝ պարենավորման կոմիսար և Արտաշես Պետրոսյանը՝ ներքին գործերի կոմիսար:

Կոմիսարների խորհուրդը հիմնեց ժամանակավոր հեղափոխական տրիբունալ, որը առաջին հերթին քննեց ծանր հանցագործների գործերը: Դատարանի վճիռների հրապարակումը մեծ ազդեցություն գործեց հանցագործությունները կանխելու իմաստով:

Շուշիի գունդը դեռևս Սիսիանում էր և ձիեր ու սայլեր չլինելու պատճառով չէր կարողանում Գորիս տեղափոխվել:

Գարնանը մոլի մուսավաթական և պանթուրքիստ ու հայատյաց Խոսրով-բեկ Սուլթանովը Աղդամից դիմում ուղարկեց կոմիսարների խորհրդին՝ թույլ տալու մտնել Շուշի, որտեղից նա պետք է մեկնի հայրենի «Քուրդիստան»՝ ամառը այնտեղ անցկացնելու համար: Նա «Քրդստանի» տիրակալ ու հայերի ոխերիմ թշնամի Սուլեյման Սուլթանովի եղբայրն էր: Զինվորական կոմիսար Հարություն Թամյանը, իմանալով այդ մասին, մերժեց նրա մուտքը Շուշի, համոզված լինելով, որ նա թուրքերից ու մուսավաթականներից լուրջ հանձնարարություններ ունի Շուշիում իրագործելու համար:

Ռուսաստանի խորհրդային իշխանությունը վերացրել էր Թուրքիայի հետ կնքված բոլոր պայմանագրերը, որոնք ի նպաստ չէին Թուրքիային: 1918 թվականի մարտի 3-ին կնքված Բրեստի պայմանագրով թուրքերը հնարավորություն ստացան անարգել նվաճելու Անդրկովկասը: Թուրքերին թվաց, թե զորավոր թշնամին՝ Ռուսաստանը («սարը գյավուրը»), կործանված է: Թուրքական վերականգնված դիվիզիաները փետրվարի 13-ին գրավեցին Երզնկան, մարտի 12-ին՝ Էրզրումը: Անդրանիկն ու Կովկասյան բանակի հայ զինվորները չկարողացան որևէ դիմադրություն ցույց տալ: Բոլշևիկյան քարոզչությունը քայքայեց հայերի դիմադրողականությունը: Նրանք թուրքերին «ազատարար» էին համարում: Թուրքերի համար Հայաստանի անդրկովկասյան հատվածն էր խանգարում միանալու թուրքալեզու ժողովուրդներին:

Մուսավաթականները դիմեցին Թուրքիայի օգնությանը՝ Բաքվի կոմունայից խլելու Բաքուն և վերջնականորեն ջարդելու հայերին: Թուրքերը ապրիլի 25-ին համարյա առանց դիմադրության գրավեցին Կարսը, իսկ մայիսի 15-ին մտան Ալեքսանդրապոլ (Գյումրի), որը Բրեստի պայմանագրի խախտում էր: Ջորքերի մի մասը շարժվեց դեպի Երևան, մյուսը՝ Ղարաքիլիսա ու Դիլիջան:

Ճակատից վերադարձած կամ փախած հայ զինվորները, որոնք հրաժարվել էին կռվելու թուրքերի դեմ, այժմ հասկացան, թե ինչ

վտանգ է սպառնում իրենց իսկ բնակավայրերին, ընտանիքներին: 1918 թվականի մայիսի 22-ին հայկական զորամասերն ու աշխարհազորայինները Սարդարապատի մոտ լուրջ և վճռական ճակատամարտ տվեցին: Հնգօրյա համառ մարտերից հետո Շեֆքի փաշայի 30 հազարանոց բանակը ջախջախվեց ու խուճապահար նահանջեց Գյումրի: Կասեցվեց նաև ղարաքիլիսյան ուղղությամբ թուրքերի առաջխաղացումը:

Սարդարապատի ճակատամարտը ապացուցեց, որ կազմակերպված դիմադրության դեպքում կարելի էր թուրքերին կանգնեցնել հենց Բայազետում ու Էրզրումում: Հայերի ամենավտանգավոր թշնամին ոչ թե թուրքն է, այլև ներքին անմիաբանությունը, մասնատվածությունն ու անկազմակերպ լինելը:

1918 թվականի ապրիլի 22-ին հայտարարվեց Անդրկովկասի ֆեդերացիա, որը հույս ուներ Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքել:

Շուտով Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը իրենց անկախ հայտարարեցին:

Վերջապես, Անդրկովկասի մահմեդական մասը նոր անուն ստացավ՝ «Ադրբեջան», չնայած այն աշխարհագրական առումով ոչ մի առնչություն չուներ պարսկական բուն Ադրբեջանի հետ: Սակայն այս անունը կնքելով, թուրք ռազմավարները հեռուն գնացող ծրագիր էին ուրվագծում, այն է՝ մի օր միացնել Արաքսից հյուսիս և հարավ գտնվող «Ադրբեջանները» ու այլևս ոչ մի արգելք, ոչ մի ուժ չի կարող կանգնեցնել պանթուրքական ծրագրի՝ Օսմանյան Թուրքիայի գերիզոր կայսրության իրականացմանը:

Նախ պարզենք, թե ինչ երկիր է Ադրբեջանը: Այն հնում Մարաստանի մի մասն էր, որը «Փոքր Մեդիա» կամ «Մեդիա-Աթուրփաթ» էր կոչվում: Այն ստացավ Աթուրփաթ անունը (կրակ և պահապան), քանի որ այստեղ էր գտնվում զրադաշտական կրոնի ամենահեղինակավոր Ատրուշան-սրբատեղին՝ Աթուր կամ Ազար-Գուշասպը: Արաբները, նվաճելով Պարսկաստանը, չկարողանալով յուրացնել իրենց լեզվին խորթ հնչեղություն ունեցող «Աթուրփաթգան» երկրի անունը, «Գ»-ն փոխարինում են Ջ-ով, Թ-ն՝ Զ-ով, ու երկրամասը ստանում է «Ազարբայջան» անունը: Բոլոր հին հեղինակները վկայում են, որ Ազարբայջանը գտնվում է Արաքս գետից հարավ, և այս գետից վեր տարածվում է Առան կամ Արան երկիրը, որտեղ էթնիկա-

պես այլ ժողովուրդ է ապրում: Ռուս գիտնական Վ.Բարտոլդը գրում է. «Արաքս գետը, որ Ազարբայջանը անջատում է Կովկասից, հին օրերին համարվում էր տոհմային և ցեղագրական որոշակի սահման Մարաստանի տարածքի և Ալբանիայի հողային տարածքի միջև»[3]: Ազարբայջանի բնակչությունը իրանյան Մարաստանի ցեղերից էր: Պարսից հեղինակ երկաթ Համավին, որ ստեղծագործել է 13-14-րդ դարերում, հավաստում է, որ Ազարբայջանի ժողովուրդը մի լեզու ունի, որն «ազարի» է կոչվում, ու այն իրենից բացի ուրիշների համար անհասկանալի է: Այստեղ միախառնվում են բնիկ մարերն ու եկվոր թուրքական ցեղերը: Տեղական բարբառները չեն կարողանում դիմադրել թուրքերենի թափանցմանը: Դրան նպաստում է և այն հանգամանքը, որ թուրքական տարրը դոմինանտ է դառնում թե՛ ռազմական և թե՛ տնտեսական ոլորտներում: Ազարբայջանը դառնում է սովորությունների ու բարքերի մի իսկական խառնարան: Իսկ ժողովուրդը, ըստ էության, էթնիկապես հին մարերի ժառանգն է: Բայց քանի որ ուշ միջնադրում թուրքական զանազան ցեղերի թափանցումով բնիկ մասը կորցրել է կապը իր արմատների հետ, կորցրել է ազգային հիշողությունը, ու ոչ այն է ասի թե թուրք է, ոչ այն է, պնդի, թե մարացի է, իրեն կոչում էր կրոնական պատկանելության հատկանիշով՝ «մուսուլման»:

Իսկ թուրքերը, որոնք արդեն թափանցել էին Միջին Ասիա, Իրան քոչեցին 11-րդ դարից, երբ սելջուկների առաջնորդ Թուղրուլ բեկը 1048 թ. գրավեց Իրանը: Իսկ թուրքական խաշնարած ցեղերին գրավում էր նոր արոտավայրերն ու թալանի հնարավորությունը: 16-րդ դարի Սեֆյան թագավորության ժամանակ Ազարբայջանի հիմնական լեզուն թուրքապարսկերենն էր՝ խառնուրդ մի խոսվածք: Սեֆեվիների գահը ազարի խաների ձեռքին էր:

Ինչ վերաբերվում է Թուրանին, ապա այն թուրքերի ու նրանց հայրենիքի հետ ոչ մի կապ չունի: Թուրքերի նախահայրենիքը Ալթայն է, ու նրանց պատմությունը սկսվում է մեր թվարկության 545 թվականից, երբ նրանք հարձակվում են Չինաստանի վրա: Իսկ Թուրան երկրի անունը կապված է իրանական ժողովուրդների հետ: Ըստ դիցաբանական ու կրոնական գրվածքների Քիան թագավորական տոհմի հիմնադիր Ֆրեյդունը երկիրը բաժանում է իր երեք զավակների՝ Սայմի (Սարման), Թուրի (Թուրան), Իրաջի (Իրան) միջև: Թուրքերն այսօր օգտագործում են Թուրան ու թուրք անվանումնե-

րի պատահական համապատասխանությունը ու փորձում կեղծել պատմությունը: Թուրանը իրականում Միջին Ասիայում է և ընդգրկում է Սիրդարյա գետի ավազանը: Թուրքմեն ժողովուրդը, որը նս հանգամանքների բերումով կորցրել է իր թուրանական լեզուն և դարձել թուրքախոս, համարվում է պարթև-թուրանցիների էթնիկական հետնորդը:

Իսկ Առան կամ Արան երկիրը Հայաստանի հյուսիս-արևելյան երկրամասն է, որը հաստատում են թե՛ հայ և թե՛ օտար հեղինակները: 10-րդ դարի պարսից հեղինակ Իբն Ֆակիհ Աբուբաքր Ահմադը իր «Ալբուդան» աշխատության մեջ Հայաստանը բաժանում է չորս մասի: Առաջին մասի մեջ է դասում և Առանը իր Պարտավ (հնում՝ Հորում, ապա՝ Պարթև-Պարտավ ու արաբերեն՝ Բարդա) կենտրոնով: Առանն ուներ չորս հազար գյուղեր: Առանից բացի Հայաստանն ընդգրկում է և Զար (Ջար) - Բելուկանը, Կապաղակը, Շիրվանը (Շերվան), Շաբրան, Շաքեն, Շամքորը (Շամքուր) և Բալասաջանը (Բաղասականը)[4]: Թուրքական քոչվոր ցեղերը պարսկական Ազարբայջանից Առան տարածք են գաղթում 18-րդ դարի սկզբներին[5]: Եվ ահա 20-րդ դարի առաջին քառորդին թուրք քաղաքագետները գտան հօգուտ թուրքերի Իրանը մասնատելու մի նոր տարբերակ ևս: Արաքսից վեր ընկած տարածքում ստեղծելով նոր պետություն «Ազերբայջան» անունով, հետագա սերունդներին են կտակում «երկու Ազերբայջանների» միացման ծրագիրը: Վերջապես, իր ազգը «մուսուլման», այսինքն՝ մահմեդական անվանող ժողովրդի վզին փաթաթեցին մի նոր անվանում: Հինավուրց Առան-Արանի վրա դրվեց աշխարհագրական մի նոր անուն, որը թե՛ պատմական և թե՛ աշխարհագրական առումներով զուրկ է որևէ հիմքից: Եվ ահա թուրք դիվանագետներն ու քաղաքագետները սկսում են խոսել «հյուսիսային և հարավային Ադրբեջանների» միավորման մասին: Դրա իրականացումը թուրքերին հնարավորություն կտար հսկա տարածքով իրար միացնել Միջին Ասիան ու Թուրքիան, այսինքն, ստեղծել թուրքական գերհզոր կայսրություն:

Բաքվի կոմունայի զինված ուժերը, զգալով Օսմանյան Թուրքայից եկող լուրջ վտանգը, հունիսի 10-ից շարժվեցին դեպի Եվլախ, ձգտելով սպասվող ճակատը հեռացնել Բաքվից: Ղարաբաղից սպասում էին, թե երբ կգա երկու ճակատների միացնելու ժամանակը: Սակայն թուրքական բանակի զորամասերը միանալով «Իսլամի

բանակի» հորդաներին, ստիպեցին կոմունայի զորքերին հետ քաշվել մինչև Շամախի:

Թուրքերը դեռևս չէին անհանգստացնում Ղարաբաղի հայությանը: Իսկ Շուշիի կոմիսարների խորհրդի անդամները գիտակցում էին, թե ինչ լուրջ սպառնալիք են ներկայացնում թուրքերը Բաքվի գրավումից հետո:

Շուշիում որոշեցին կապ հաստատել Բաքվի Կոմունայի հետ: Կապավոր ընտրվեց ջուլամերիկցի ասորի Սիմոնը: Սակայն նա անզգուշության հետևանքով ծերբակալվեց Եվլախի կամուրջը անցնելիս:

Բաքվի նավթահանքերի վրա աչք ուներ և Անգլիան, որը ծրագրել էր հսկողություն սահմանել Ռուսաստանի ստանալիք նավթի վրա: Անգլիական մի զորամաս Բաղդադից տեղափոխվում է Պարսկաստան և բազայավորվում Կասպից ծովի ափին ու 1918 թ. սկզբներին շարժվում հյուսիս, գրավում Աշխաբադն ու Կրասնովոդսկը: Նրանք ձգտում էին տապալելու Շահումյանի կառավարությունը: Անգլիացիների գլխավոր ուժը լրտեսական ցանցի միջոցով ներսից քայքայելն էր:

1918 թ. հուլիսի 25-ին Բաքվի Կոմունայի ընդլայնված խորհրդում ձայների մեծամասամբ որոշվում է անգլիացիներին Բաքու հրավիրել և կազմել բոլոր կուսակցություններից նոր կառավարություն: Այսպես անկում ապրեց Շահումյանի կառավարությունը: Իշխանությունը բաժանվեց մենշևիկների, էսեռների և Հ.Յ.Դաշնակցության միջև:

3. ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՐԱՎԱՐԻ ԱՐՇԱՎԸ ԴԵՊԻ ՇՈՒՇԻ

Գանձակի օսմանյան հրամանատարությունը Նուրի փաշայի գլխավորությամբ Ղարաբաղի շուրջը Աղդամում, Թարթառում, Կարյագինում ու Զաբուղում կանոնավոր զորքեր էր կենտրոնացրել:

1918 թ. հուլիսի 22-ին Շուշիի թեմական դպրոցի դահլիճում գումարվեց Ղարաբաղի հայության առաջին համագումարը: Հավաքվել

էին 180 պատգամավորներ: Ստեղծվում է յոթ հոգուց կառավարություն հետևյալ կազմով.

Եղիշե Իշխանյան՝ նախագահ, արտաքին և ներքին գործերի կառավարիչ,

Արշավիր Քամալյան՝ հողային և արդարադատության գործերի կառավարիչ,

Արսեն Հովհաննիսյան՝ պարենավորման գործերի կառավարիչ,

Մարկոս Տեր-Աստվածատրյան՝ ֆինանսական գործերի կառավարիչ,

Հարություն Թամյան՝ զինվորական գործերի կառավարիչ,

Մարտիրոս Այվազյան՝ հաղորդակցության գործերի կառավարիչ,

Միքայել Եսայան՝ կառավարության քարտուղար:

Թուրքական թաղամասն ու հայկականը իրարից կախվածության մեջ են մթերքի ապահովման գործում: Սակայն օսմանցիների մուտքը Բաքու «մուսուլմաններին» ամբարտավան ու լկտի դարձրեց:

Կառավարությունը որոշեց Գանձակի գավառի ամբողջ լեռնային շրջանը, որի բնակչության 90 տոկոսից ավելին հայեր են, հայտարարել հայկական Ղարաբաղի տարածքի անբաժանելի մաս: Դա Սռավից ու Գետաշենից հյուսիս և արևմուտք ընկած հայկական բնակավայրերն էին, որոնք հնում հայտնի էին Գարդմանք և Փառիսոսի իշխանություն անվամբ: Սրանք հնում միշտ էլ Արցախի իշխանության կազմում էին:

Անդրանիկը, որ դժգոհ էր Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի միջև 1918 թվականի հունիսի 14-ի հաշտության ստրկացուցիչ պայմանագրից, իր զորամասով («Հայկական առանձնացված հարվածող զորամաս») դուրս եկավ Դիլիջանից, Դարալագյազով գնաց դեպի Նախիջևան, իր հետ տանելով 14 հազար արևմտահայ գաղթականությանը: Նա հուլիսի 14-ին Ապրակունիս գյուղի իր շտաբից հեռագրեց Բաքու՝ Ստեփան Շահումյանին, որ Նախիջևանի գավառը հայտարարում է Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության անբաժան մասը: Թուրքերի ճնշման տակ Անդրանիկն անցավ Պարսկաստան՝ Ուրմիայի ասորիներին օգնելու նպատակով, պաշարեց Խոյը, բայց պարտություն կրեց և նահանջեց:

Հետո նա անցավ Գորիս, իր հետ բերելով և 15 հազար գաղթականությանը: Գորիսցիները գրկաբաց ընդունեցին Շապին-Գարահի-

սարի արծվին: Սակայն կիսաքաղց զանգեզուրցիների համար հեշտ չէր 15 հազար գաղթականներին ու 3 հազարանոց զորամասին պահելը:

Թուրքերը, թիկունքում տեսնելով Անդրանիկին, շփոթվեցին:

Գանձակում տեղակայված թուրքական շտաբը, տեղեկանալով, թե Անդրանիկը սրարշավ սլանում է Գանձակը գրավելու, Նուրի փաշայի գլխավորությամբ, հենց գիշերը շտապ փախչում է դեպի Աղստաֆա կայարանը: Համոզվելով, որ լուրը սուտ էր, հաջորդ օրը Նուրին հետ է վերադառնում: Անդրանիկը դիմեց Ղարաբաղի կառավարությանը՝ գաղթականության մի մասը Ղարաբաղում տեղավորելու խնդրանքով: Ղարաբաղցիք գիտեին, որ Բաքվի գրավումից հետո թուրքերը ճակատը տեղափոխելու են Ղարաբաղ: Ղարաբաղցիների համար լուրջ գարշապար էր Զաբուղի ձորի արգելքը, որին տիրում էր քուրդ առաջնորդ Սուլթան-բեկ Սուլթանովը՝ Ղարաբաղի հայությանը Զանգեզուրի հետ միակ կապի հնարավորությունից:

Գորիսում գտնվող ղարաբաղցի և նուխեցի 200 զինվորներ որոշում են ինքնակամ անցնել Զուբաղն ու Շուշի մտնեն: Թուրքերը թույլ են տալիս, որ նրանք հասնեն մինչև Հագարի (Աղավնո) գետի կամուրջը, որտեղ շրջապատում են նրանց ու անխնա կոտորում: Անդրանիկը, տեղեկանալով այդ մասին, որոշում է վրեժխնդիր լինել և հանկարծակի հարձակումով թշնամուն հետ է քշում, չսպասելով Ղարաբաղի կառավարության պատասխանին, իր ետևից Բերդաձորի հայկական գյուղերը տեղափոխելով արևմտահայ 2500 գաղթականների: Սակայն այստեղից ճանապարհը հսկում էին թուրք և քուրդ քոչվորները:

1918 թվականի օգոստոսի 5-ին 200 հոգանոց խաչենցիների հեծյալ ջոկատը Շուշիից դուրս եկավ ու լրիվ մաքրեց ճանապարհը ավազակներից, և գաղթականները անարգել հասան Շուշիի «Հին գերեզմաններ» թաղամասը: Շուշեցի կանայք այդտեղ սեղան գցելով ընդունեցին սովյալներին, ցույց տվեցին բժշկական օգնություն, նրանց համար շորեր հավաքեցին Շուշիի ընտանիքներից:

Հետաքրքիր հանգամանք էր և այն, որ Անդրանիկը չձգտեց օգնել Շուշիի գնդին տեղափոխվելու Ղարաբաղ, այլ գաղթականներ տեղափոխելով, նոր բեռ դրեց սովյալ, ծմռան ու թուրքական հարձակման սպասող արցախցիների վրա:

Գաղթականության կոմիտեն գաղթականներին բաժանեց ողջ Ղարաբաղի գյուղերի վրա:

4. ՇՈՒՇԻԻ ԳՆԴԻ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Երեք ամիս Շուշիի գունդը գտնվում էր Տող գյուղում և ոչ մի աջակցություն չէր ստանում զանգեզուրցիներից Ղարաբաղ տեղափոխվելու համար:

Զաբուղի ձորում, որպես ռազմավարական կարևոր կետ, կենտրոնացված էին երկու թուրքական հրաձգային վաշտ՝ իրենց հրետանիով և գնդացիրներով, 600 հոգանոց քրդական հեծյալ զորամաս, ինչպես և մի քանի հազար տեղացի մուսուլմաններ: Բացի այդ, վտանգի պահին նրանց կարող էին միանալ Հագարի գետի հովտում վխտացող թուրքական բանդաները:

Վճռվեց, որ Զանգեզուրից Շուշիի գունդը և Բերդաձորից Ղարաբաղի ուժերը համատեղ կսկսեն հարձակումը: Գնդապետ Մելիք-Շահնազարյանը իր 300 հոգանոց ջոկատով, միացնելով Տող և Կոռնիձոր գյուղերից 800 հոգու, անցավ հարձակման: Ղարաբաղցիները ևս նույնքան հոգով գրոհեցին դեպի Զուբալի ձորը: Շուտով գունդը անհաջողության մատնվեց: Զանգեզուրցիները, գրավելով մի քանի գյուղ, տարվեցին թալանով, ու գործը անհաջողության մատնվեց: Ըստ երևույթին, առկա էր և շուշեցի գնդապետի՝ գործողությունները կազմակերպելու անընդունակությունը: Թուրքերը ուժերը կենտրոնացրին դեպի Շուշիի թևը: Զաբուղի գործողությունը ձախողվեց: Չորսօրյա համառ մարտերից հետո ստիպված Բերդաձորի ժողովրդին ուղարկեցին Շուշի և դատարկեցին գյուղերը: Թուրքերի կորուստները շատ ավելի մեծ էին՝ երկու թուրքական վաշտ, 150 քուրդ սպանված, 200 վիրավոր:

Այսպիսով, Զանգեզուրն ու Անդրանիկը ոչնչով չօգնեցին բացելու Զաբուղի անցքը և հայկական երկու հատվածները միացնելու իրար: Համատեղ ուժ դառնալով, նրանք կարող էին միասնական պետականության կարգավիճակ ձեռք բերել:

Ղարաղշլաղի չորս հազար փախստական Շուշիում հայտնվելով, տագնապալի իրավիճակ ստեղծեցին: Սակայն կառավարությունը կտրուկ միջոցառումներով կանխեց այն ազգամիջյան բախումների վերածելու վտանգը:

Բերդաձորի կորուստը շատ ծանր նստեց Ղարաբաղի վրա: Ավելի հեռացավ Զանգեզուրի հետ միանալու հույսը:

Զգալով, որ Ղարաբաղի ուժերը թույլ են և զինամթերքի կարիք ունեն, թուրքերը, մանավանդ օսմանցի «կոմենդանտները», ավելի լկտիացան և սկսեցին ուլտիմատումներ ուղարկել հայերին: Նրանք պահանջում էին ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

5. ՕՍՄԱՆՅԱՆ ՋՈՐԱՄԱՍԻ ՄՈՒՏՔԸ ՇՈՒՇԻ

Ղարաբաղի կառավարությանը հայտնի դարձավ գերմանական բլոկի՝ Անտանտի դեմ պատերազմում կրած անհաջողությունների մասին, ու հասկանալի էր, որ Թուրքիան՝ գերմանացիների դաշնակիցը, պետք է հեռանա Անդրկովկասից: Անհրաժեշտ էր ամեն կերպ դիմանալ մինչև նրանց հեռանալը: Իսկ բուն տեղացի թուրքերը անկարող էին ինքնուրույն հաղթելու հայերին:

1918 թվականի սեպտեմբերի 15-ին Շուշիում հրավիրվեց նոր համագումար: Այն դիմեց ազգամիջյան կոմիտեին՝ Բերդաձորի վերաբնակեցման համար: Թուրքերը մերժեցին, ասելով, թե այդ հարցը կարող է լուծել միայն Ադդամի «կոմենդանտը»:

Սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Բաքուն: Նրանք թույլ տվեցին, որ Բաքվի հայությանը ջարդեն ու թալանեն թուրքական ավազակներն ու խուժանը: Իրականացվեց Խան-Խոյսկու և Ջիվանշիր-խանի ծրագրած կոտորածը: Սպանվեց 30 հազար հայ: Կողոպտվեց հայերի ողջ ունեցվածքը: Շատ ղարաբաղցիներ ու զանգեզուրցիներ էին գյուղերից գնացել Բաքու՝ աշխատելու համար: Նրանք ևս զոհ գնացին հրեշավոր եղեռնին:

Թուրքական զորքերի մի մասը շտապ եկավ դեպի Արցախ՝ նախապատրաստվելով վճռական հարձակման: Ադդամ մեկնեց հատուկ պատվիրակություն՝ Ղարաղշլաղը (Բերդաձոր) հայ բնակիչներին վերադարձնելու հարցի շուրջ բանակցելու համար: Նրանց ուղեկցում էր Լուֆտալի-բեկ Բեհբուդովը, որը մեծ դեր ուներ հայ-թուրքական խաղաղության պահպանման խնդրում: Նրանք Ադդամում ականատես եղան թուրքական զորքերի եռանդուն պատրաստություններին: Թուրքերի հրամանատարն էր Ջամիլ-Ջայիդ բեյը: Նա պահանջեց հանձնել զենքը և հպատակվել Ադրբեջանին: Լուֆտալի-բեկին թուրքերը դաժանորեն սպանեցին: Հինգ հայ պատվիրակներից երկուսին բաց թողեցին, իսկ երեքին պահեցին որպես պատանդ: Ղարաբաղի շուրջը անընդհատ սեղմվում էր օղակը:

Հայերը սկսեցին պատրաստվել պաշտպանության: Հայերեն, թուրքերեն և ռուսերեն լեզուներով հայերին իր ուլտիմատումը ներկայացրեց Նուրի-Փաշան: Նա պահանջում է զինաթափվել, ճանապարհ տալ թուրքական և ադրբեջանական զորքերին անցնելու Շուշի և ճանաչելու Ադրբեջանի գերիշխանությունը: Հայերին պատասխանի համար տրվում էր 24 ժամ:

Իհարկե, թուրքերի ծրագիրն էր գրավել Շուշին, որը հայության ուժի և ազատագրական շարժման կենտրոնն էր և ուղեղը: Ղարաբաղի, ինչպես և Շուշիի ապահովության գլխավոր միջոցը կլիներ Շուշիից թուրք բնակչության, ինչպես և Ղարաբաղի թուրքական բնակչության գաղթեցումը, որը հնարավոր կդարձներ Շուշիի և ողջ Արցախի պաշտպանության կազմակերպումը: Նուրի-Փաշայի ուլտիմատումին պատասխանելու համար գումարվեց համագումար՝ յուրաքանչյուր գյուղից հրավիրելով երկուական պատգամավոր: Սեպտեմբերի 26-ին գումարվեց Արցախի ժողովրդական 3-րդ արտակարգ համագումարը:

Շուշիի հայկական մասը ռազմական ճամբար էր հիշեցնում: 700 պատգամավորներից 400-ը հետ՝ շրջաններ ուղարկվեցին: Համագումարը տեղի ունեցավ ռեալական դպրոցի դահլիճում: Մուսայելյանը բացման խոսքում խաղաղության կոչ արեց: Պատգամավորները «Կռի՞վ, կռի՞վ...»էին գոչում: Մերժելով զինաթափումն ու Ադրբեջանին ենթարկվելու պահանջները, կառավարությունը համաձայն էր 600-1000 հոգանոց զուտ թուրքական զորամասին թույլ տալ տեղաբաշխելու Շուշիի թուրքաց թաղամասում: Դա ևս դժգոհության տեղիք տվեց համագումարում:

Օսմանցիները ադրբեջանական զորքերի հետ հարձակման անցան Նախիջևանիկ և Վարազաբույն գյուղերի ուղղությամբ, ինչպես

և Թարթառ ավանից՝ Մարաղա-Մարգուշևանի ուղղությամբ: Սակայն նրանք ծանր կորուստներ կրելով հետ նահանջեցին: Ապա գործի դրեցին ծանր հրետանին:

Շուշիի մուսուլմանական բնակչությունը հոկտեմբերի 6-ին ողջույններով դիմավորեց Նուրի-Փաշայի օսմանական չորս հազարանոց զորքը: Փողոցները ծածկված էին գորգերով, իսկ պատուհանները՝ զարդարված թուրքական դրոշներով:

Թուրքերի մուտքը հայերի համար արդեն լուրջ պարտություն էր և կամովին դիրքերի զիջում, որի հետևանքները կարող էին ահավոր լինել: Իսկ թուրքերը շտապում էին օր առաջ նվաճել հայոց Արցախը և հասնել Ադրբեջանին, քանի որ շուտով նրանց կստիպեն հեռանալու Անդրկովկասից: Իսկ ինքնուրույն և մեծ Ադրբեջանը նրանք դիտում էին իբրև Թուրքիայի մի մասը: Օսմանյան զորքերը տեղավորվեցին ռեալական դպրոցի, օրիորդաց դպրոցի, հիվանդանոցի շենքերում, ինչպես և նախկին զորանոցում: Այնուհետև թուրքերը պահանջեցին Անդրանիկին հեռանալու Զանգեզուրից:

Իհարկե, Ղարաբաղի ղեկավարությունը այնքան համարձակ չգտնվեց, որ հաշվի առներ պատմական անցյալի դասերն, ու հենց հոկտեմբերի 6-ին արշավի ժամանակ ծուղակ պատրաստեր ու ոչնչացներ թուրքերին՝ գրավելով զինամթերքն ու զենքը, ինչից և վախենում էին թուրքերը: Սակայն դա տեղի չունեցավ:

Շուշիի թուրք հրամանատարությունը բերդաքաղաքը հայտարարեց պատերազմական դրության մեջ: Երեկոյան ժամը 8-ից հետո փողոց դուրս գալն արգելվում էր: Հայկական մասում թուրքերը խանութում զենք պահելու համար կախեցին Սավադ անունով մանրավաճառ երիտասարդի: Ապա սկսեցին ձերբակալությունները: Թուրքերը բռնեցին կառավարության անդամներից շատերին՝ շուրջ 70 հոգու: Զինկոմ Հարություն Թումյանին չգտնելով տանը, տարան նրա ծնողներին՝ Բահար և Գրիգոր Թումյաններին:

Թուրքերը իրենց հետ Շուշի էին բերել Խոսրով-բեկ Սուլթանովին՝ նշանակելով Ղարաբաղի գավառապետ: Թուրքական զորքերը սկսեցին հեռանալ Ղարաբաղից՝ ստիպված լինելով կատարելու Բրեստի պայմանագիրը:

Հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում, անգլիական «Ագամեմնոն» հածանավի վրա Անտանտայի հրամանատարության և սուլթանական կառավարության միջև կնքվեց զի-

նադադար, որի 11-րդ հոդվածի համաձայն, Թուրքիան պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել Օսմանյան կայսրության արաբական մարզերից և Անդրկովկասի գրաված մասերից: Դաշնակից երկրները կարող էին օկուպացնել Բաքումն ու Բաքուն, ինչպես նաև հայկական վեց վիլայեթները, սակայն այն դեպքում, եթե նրանցից որևէ մեկում «անկարգություններ» ծագեն:

Իհարկե, պայմանագիր կազմողներին հայտնի է, որ 1915 թվականից հետո այդ վիլայեթներում այլևս հայություն չկար ու դրանք գրավելու առիթ այլևս չի ծագի: Դա եվրոպացի դիվանագետների կողմից արված մի ռներանս էր մարդու իրավունքների խնդրի շուրջ քաղաքակիրթ աշխարհում ծայր առած շարժումների առջև, կեղծ, ոչինչ չարտահայտող ռներանս և ուրիշ ոչինչ, կամ ինչպես հայերը կասեին՝ մի կտոր ոսկոր, որ զբաղվեն հայերի ցեղասպանության շուրջ խոսող մարդիկ, սակայն այդ «ոսկորը», պարզվում է, որ «փայտից» էր: Եվրոպական տերությունների համար ամենակարևորը իրենց սեփական շահերն էին, իսկ տեղական ազգային խնդիրները միայն միջոց էին ծառայում այդ շահերին ի նպաստ օգտագործելու համար: Ուժը, դիվանագիտությունն ու քարոզչությունը զուգակցելով, անգլիացիները աստիճանաբար գերակշռության էին հասնում Անդրկովկասում:

Թուրքիայի համար կրկին հետին պլան է մղվում դեպի իրենց արմատները՝ Միջին Ասիա շարժումը և հրատապ է դառնում բուն Օսմանյան Թուրքիայի պետության փրկության խնդիրը ու պատերազմից նվազագույն կորուստներով դուրս գալու անհրաժեշտությունը:

Եթե Շուշիի ղեկավարությունը հույսը կապել էր հաղթող կողմի դրդմամբ Անդրկովկասից թուրքական զորքերի շտապ դուրս քաշելու հետ, ապա թուրքերը ամեն կերպ ձգտում էին ձգձգել հետ քաշելը մինչև Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի տարածքները բռնի թե դիվանագիտական ճանապարհով Ադրբեջանին կցելու գործը հաջողեցնելը: Նրանք տեղի մահմեդական բնակչության զորակոչ հայտարարեցին, շտապ լիարժեք զորքեր կազմելու և իրենց փոխարեն Շուշիում տեղավորելու, հայերի դեմ հաջողությամբ պատերազմ վարելու, Ղարաբաղը նվաճելու համար:

6. ՋԱԲՈՒԽԻ ԳՐԱՎՈՒՄԸ ՈՒ ԱՆՊԱՍԵԼԻ ՆԱՀԱՆՋԸ

Նոյեմբերի 29-ին Անդրանիկի զորքերը սկսեցին հարձակումը Զաբուխի ձորի ուղղությամբ, ճեղքելով ադրբեջանական և քրդական դիրքերը, ծանր պարտության մատնելով նրանց, ստիպեցին, որ գետի հոսանքով դեպի ցած գնան: Սուլթան-բեկ Սուլթանովը անձնատուր եղավ՝ խնդրելով չոչնչացնել «Քրդստանը»: Դեկտեմբերի մեկին Անդրանիկը պետք է արշավեր դեպի Շուշի: Սակայն այդ օրը տեղի է ունենում մի անակնկալ դեպք: Շուշիի նախկին քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի անունից Բաքվից հեռագիր է հասցվում Անդրանիկին՝ անգլիացի գեներալ-մայոր Թոմպսոնի ստորագրությամբ: Հեռագրի մեջ Անդրկովկասի անգլիական զորքերի հրամանատարը Մելիք-Շահնազարյանից պահանջում է անհապաղ հայտնել Անդրանիկին՝ դադարեցնելու զորքերի շարժումը դեպի Շուշի: Թոմպսոնը սպառնում էր, որ պահանջը չկատարելու դեպքում հայերի գործողությունները կդիտվեն իբրև թշնամական ակտ Մեծ Բրիտանիայի կայսրության դեմ»: Անդրանիկը որոշեց սպասել անգլիական ներկայացուցիչների գալուն:

Անդրանիկը հռչակված էր իր քաջությամբ, մարտավարական տաղանդով, կազմակերպչական ջիղով ու մարդկանց իր ետևից տանելու օժտվածությամբ, սակայն դրա հետ, ըստ երևույթին նրա մոտ բացակայում էր դիվանագիտական ճկունությունը, քաղաքական իրավիճակի ճիշտ գնահատումը: Փոխանակ նույն արագությամբ շարունակելու գործողությունները, որպեսզի թշնամին չհասցնի ուշքի գալ և հավաքել ուժերը, իսկ անգլիացիներին կարելի էր որևէ պատասխան գրել, ձգձգել ու կատարված փաստի առաջ կանգնեցնել, որոշում է սպասել: Ի վերջո, Սյունիքի և Արցախի միասնական ուժի առջև իր քաղաքականության մեջ ստիպված կլինեին որոշ շտկումներ կատարել և անգլիացիները: Իսկ ահա Անդրանիկը ենթարկվում է ադրբեջանցիների կողմից հապշտապ կազմակերպած նամակին: Իհարկե, ադրբեջանցիները իրենց հերթին հաշվի են առել Անդրանիկի թույլ կողմը: Անդրանիկը կարող էր անգլիացիների մոտ իրեն «խաղից դուրս» ցույց տալ: Անշուշտ գործողության տապալման ծանրության մեծ մասը ընկնում է հենց զորավար Անդրանիկի վրա:

Մյուս կողմից հետաքրքիր էր և այն հանգամանքը, որ ադրբեջանական դիվանագիտությունը, ճարպկորեն շահարկելով Բաքվի նավթի գործոնը, փորձում է հանձինս հայաբնակ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի, նոր տարածքներ միացնել Անդրկովկասում ծնունդ առած թուրքական նոր պետությանը՝ Ադրբեջանին: Անգլիացները սիրով ընդառաջ գնացին ադրբեջանցիների ու թուրքերի այս խաղին, քանի որ այս տարածքները նրանց զիջելով, նրանք ոչինչ չէին կորցնում: Տարածաշրջանում տիրություն անող հետագա նոր ուժերը ևս հեշտությամբ զիջելու են դրանք նորաբնծա Ադրբեջանին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրենք ոչինչ չեն կորցնում դրանից ու միայն շահում են:

Սակայն դա առաջին ու թռուցիկ հայացքից է այդպես թվում, իսկ խորքում իրավիճակը այլ մոտեցում էր թելադրում: Այն է, Թուրքիային թուրանիզմի վտանգավոր գաղափարների իրականացումից զրկելու համար Թուրքիային տարածքային իմաստով զրկել նորընծա Ադրբեջանի հետ անմիջական կապից:

Շուշիում կրկին իր կարգավիճակը վերականգնեց Ղարաբաղի կառավարությունը, որը շտապ միջոցառումներով պետք է կանխեր ադրբեջանական զորքերի մուտքը Ղարաբաղ: Բայց ինչպես Հարություն Թամյանն է հետագայում գրում իր այդպես էլ չհրատարակված գրքում. «Կույր հավատը և վստահությունը անգլիական օկուպանտների նկատմամբ դարձրել էին մարդկանց թուլամորթ, անհեռատես ու անվճռական, կորցրել էին իրադրությունները ճիշտ հասկանալու և գնահատելու կարողությունը:

Դեկտեմբերի 2-ին Ավդալար գյուղում գտնվող Անդրանիկի շտաբ հասան անգլիական երկու սպա և զորավարին հանձնեցին գեներալ Թոմպսոնի նամակը: Անգլիայի դաշնակից բարձր հրամանատարության անունից Անդրանիկից պահանջվում էր դադարեցնել զորարշավը դեպի Շուշի և վերադառնալ Գորիս: Անդրանիկը թույլ տվեց երկրորդ ճակատագրական սխալը, առանց խորհրդակցելու Ղարաբաղի ղեկավարության հետ, հրամայեց զորքերին վերադառնալ Գորիս: Այնուհետև Անդրանիկի մոտ եկան մի անգլիացի և մի ֆրանսիացի սպա: Թոմպսոնը այս անգամ զորավարից պահանջում էր դիմել Ղարաբաղի սպաներին «դադարեցնելու ռազմական գործողությունները մուսուլմանների դեմ»: Այս ամենի հետևում պարզորեն ուրվագծվում են ադրբեջանական դիվանագետների նենգ ու

սադրիչ խաղերը: Անդրանիկը, որ իրեն կաշկանդված էր զգում անգլիացի գեներալի անունը լսելիս, իսկույն տեղի է տալիս ու հրաման ուղարկում՝ ուղղված ղարաբաղցիներին: Իրականում Անդրանիկը չուներ նման հրաման արձակելու բարոյական իրավունքը:

7. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Ադրբեջանի թուրքերը այլևս ազատ էին զգում իրագործելու իրենց վաղեմի երազանքը՝ Ղարաբաղը մաքրելու իր դարավոր բնակիչներից: Թարթառից, Կարյագինայից ու Աղդամից ադրբեջանական հրոսակները թուրք սպաների գլխավորությամբ սկսեցին դեպի հայկական գյուղերը արշավանքները, որի ընթացքում կոտորում էին բնակչությանը, թալանում ունեցվածքը, ավերում գյուղերը: Շուշտով Շուշի եկավ անգլիական միսիան՝ մայոր Մոնկ-մեզոնի գլխավորությամբ: Որպես թարգմանիչ խմբի մեջ էր մտնում Ադրբեջանի գործակալ ու լրտես, «Դիկայա դիվիզիյա» ռուս սպա Մալենիկովը, որը հավաքագրելով դավաճանների ու տականքների, լրտեսական ցանց ստեղծեց Ղարաբաղում, որի միջոցով ժողովրդի մեջ տարածում էր ցանկացած ստահոդ լուր: Այս դավաճան գործակալներից էր և Սոկրատ-բեկ Մելիք-Շահնազարյանը, միլիցիապետ Միքայելյանը, որոնք թշնամուն տեղեկություններ էին հաղորդում Ղարաբաղի զինված ուժերի, մարտունակության, զինամթերքի վիճակի մասին:

Ադրբեջանական զինված ջոկատները շարունակում էին հարձակումները, անպատիժ կոտորում մարդկանց և քշում, տանում անասունները: Անգլիական հրամանատարությունը ոչ մի ուշադրություն չէր դարձնում հայկական կողմի բողոքների վրա: Ազգային խորհուրդը անդեմ մի կազմակերպություն էր, անգլիական միսիային գրած գանգատում նկարագրելով ադրբեջանական զորքերի հարձակումների ու բռնությունների մասին, որը փաստորեն ագրեսիա է մի ժողովրդի դեմ, վերջում նշում է. «Իսկ մենք ճշտու-թյամբ կատարելով անգլիական միսիայի պահանջները, ոչ մի միջոց չենք ձեռ-

նարկում դրա առաջն առնելու, ուրիշ խոսքով, մենք մեր ձեռքով փորում ենք Ղարաբաղի հայության գերեզմանը»:

Շուտով ադրբեջանական ստորաբաժանումները հարձակվելով ավերեցին Շուշիի շրջակա հայկական գյուղերը:

1919 թվականի փետրվարի 10-ին Շուշիում գումարվեց Արցախի հայության 4-րդ համագումարը: Այն պետք է վճռական պատասխան տար Արցախը Ադրբեջանին ենթարկելու պահանջին և ընտրելու նոր Ազգային խորհուրդ: Համագումարը ընդունեց բանաձև՝ ուղղված դաշնակից պետությունների հրամանատարությանը, գեներալ Թոմպսոնին, Ադրբեջանի կառավարությանն ու Եվրոպայի խաղաղարար համագումարի հայ պատգամավորներին:

«Կանգնած լինելով ժողովրդի ինքնորոշման սկզբունքների վրա,- գրված է բանաձևում,- *Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը հարգանքով է վերաբերում դեպի հարևան թուրք ժողովրդի ինքնորոշման իրավունքը և դրա հետ միաժամանակ վճռականորեն բողոքում է ամբողջ աշխարհի առջև ադրբեջանական կառավարության փորձերի դեմ, որոնցով ցանկանում է ոչնչացնել այդ սկզբունքը հայկական Ղարաբաղի նկատմամբ, որը երբեք չի ընդունելու և չի ընդունում իր վրա Ադրբեջանի իշխանությունը: Համագումարը պնդում էր իր իրավունքների պաշտպանության վրա թե՛ Կովկասում գտնված դաշնակից պետությունների ներկայացուցիչների և թե՛ Եվրոպայի խաղարարար համագումարի առաջ»:* Բանաձևը ստորագրել են համագումարի նախագահ Ա. Շահնազարյանն ու քարտուղար Առուստամյանը:

Ցավոք, համագումարի մասնակիցները վճռականություն չունեցան ստեղծելու կառավարություն, որը կազմակերպեր երկրամասի պաշտպանությունը: Իսկ Ազգային խորհրդի փորձը ցույց տվեց, որ թե կարգավիճակով և թե՛ իր կազմով այն անգործունյա էր, որը բողոքներից այն կողմ անցնելու վճռականություն չուներ: Սա ձեռնտու էր բրիտանացիներին ու ադրբեջանցիներին՝ իրագործելու իրենց ծրագրերը: Շուտով բրիտանական հրամանատարությունը հայտարարեց, որ Զանգեզուրի, Շուշիի, Ջիվանշիրի և Ջեբրայիլի գավառների ժամանակավոր գեներալ-նահանգապետ է նշանակվել դոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովը:

Նահանգապետին կից հիմնվեց խորհուրդ, բաղկացած երեք մուսուլմաններից, երեք հայերից, որի նիստերին մասնակցելու է մի

անգլիացի սպա: Բրիտանական միսիան հաստատեց, որ հիշյալ մարզերի պատկանելությունը այս կամ այն պետական միավորին պիտի որոշվի խաղաղության կոնֆերանսում: Սուլթանովը, որը հայտնի էր որպես մոլեռանդ հայատյաց, 1919 թվականի հունվարին արդեն Շուշիում էր: Ղարաբաղի ազգային խորհուրդը մերժեց գեներալ-նահանգապետ նշանակելը, ինչպիսի ձևով էլ այն արտահայտվելու լինի:

1919 թվականի մարտի 25-ին Գյանջայի բրիտանական ներկայացչությունն են հրավիրվում Արցախի Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանն ու Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը: Ժամը 11-ին նրանք հանդիպում են գնդապետ Շատելվորտի հետ, որը գեներալ Թոմպսոնի փոխարեն անգլիական հրամանատարության ներկայացուցիչն էր Բաքվում: Զրույցին ներկա էր մայոր Մոնկ-Մեզոնը: Գնդապետ Կլատենբերգը հանդիպման թարգմանիչն էր: Մայոր Մոնկ-Մեզոնը Շատելվորտին է ներկայացնում հայերի ներկայացուցիչներին: Գնդապետը մանրամասն հարցեր է տալիս նախ նախագահին, ապա քարտուղարին ու պատասխանները գրանցում տետրում: Նա հայտնում է, որ բոլոր մանրամասները՝ ծննդավայրի, աշխատելու վայրը, միջնակարգ և բարձրագույն կրթության մասին, եղել է՞ Էրիվանում, Ղարսում, Հայաստանի թուրքական մասում, ո՞ր կուսակցությանն է պատկանում, ինչու է անկուսակցական, կալվածքը որտեղ է և այլն:

- Լավ, հիմա ասեք, ի՞նչ է ուզում ձեր ժողովուրդը,- ասես բոլորին դիմելով հարցրեց անգլիացի գնդապետը:

- Ո՞վ պիտի պատասխանի,- հարցրեց Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Շահնազարյանը,- ե՞ս, թե նախագահը:

Ասլան Մելիք-Շահնազարյանը նկարագրում է մինչ դաշնակիցները գալը Ղարաբաղում տիրած ընդհանուր պատկերը, պատերազմը, հայերի հույսերը՝ կապված անգլիացիների հետ:

- Իսկ ժողովուրդը ի՞նչ է հասկանում հանգիստ ու խաղաղ կյանք ասելով, և ինչպե՞ս դրան հասնենք,- հարցնում է բրիտանացին:

- Մոդուսը (համաձայնության պայմանագիր) պետք է փնտրենք Ադրբեջանից դուրս,- ասում է Ազգային խորհրդի նախագահը,- իսկ Ադրբեջանի իշխանության հետ մեր ժողովուրդը չի հաշտվի:

- Մենք գիտենք, որ պատերազմի ժամանակ ամենաշատը դժբախտ հայ ժողովուրդն է տառապել,- ասաց Շատելվորտը,- այժմ

նրան խաղաղություն և հանգիստ է պետք: Դաշնակիցները մտահոգված են այս հարցով, ու նրան ավելին են տալիս, քան թե սկզբից էր նախատեսված: Ինչ վերաբերվում է Ղարաբաղին, ապա այդ հարցը վիճելի է ու այն կլուծվի խաղաղարար կոնֆերանսում, իսկ մինչ այդ դուք պետք է բացատրեք ձեր ժողովրդին, որ նա պետք է ենթարկվի գեներալ-նահանգապետին, որը նշանակվել է բրիտանական հրամանատարության համաձայնությամբ ու գիտությամբ:

- Դա անհնար է,- կտրուկ ասաց նախագահը,- մեր ժողովուրդը չորրորդ համագումարում մերժել է Ադրբեջանի իշխանությունը՝ ինչ ձևով էլ նա հանդես գա:

- Լավ, ինչի՞ է ձգտում ժողովուրդը,- հարցրեց գնդապետը:

- Մեծ Հայքի վերականգնմանը:

- Դուք ընդհանուր Ղարաբա՞ղն ի նկատի ունեք, թե վիճելի գոտին,- կրկին հարցով դիմեց անգլիացին,- Հայաստանին միանալը խաղաղարար կոնֆերանսը կվճռի:

- Ես վիճելի գոտու մասին եմ խոսում, որտեղ բնակչության 90 տոկոսը հայ է:

- Հայերն ի՞նչ կառավարում են ցանկանում ունենալ վիճելի տարածքում:

- Հայերն ուզում են, որ բարձրագույն կառավարությունը լինի ձեր ձեռքին, իսկ խորհրդում լինեն երկու ժողովուրդների ներկայացուցիչները՝ ըստ բնակչության թվի, կամ գուցե և հավասար լինեն:

- Դա անհնար է,- ասաց անգլիացին,- մենք գործ ունենք կառավարությունների հետ և ոչ թե առանձին օրգանների հետ: Ահա Ղարսում թաթարները չեն ճանաչում Հայաստանի Հանրապետության իշխանությունը, բայց մենք պահանջում ենք նրանցից ենթարկվել հայերին, ու նրանք պետք է ենթարկվեն: Նույն իրավիճակն է ստեղծվել նաև Ղարաբաղում: Մենք այստեղ գործում ենք գոյություն ունեցող կառավարության միջոցով, այլ կերպ ոչ մի հնարավորություն չենք ունենա կարգ հաստատելու համար:

- Վերքերը թարմ են,- դիվանագիտական մի նոր քայլ փորձեց Ա. Շահնազարյանը,- ու դա չի կարելի թույլ տալ այստեղ: Ժողովուրդը մեզ վստահել է հազարավոր ճակատագրեր, ուստի և մենք չենք կարող դավաճանել և ադրբեջանական իշխանության համար քարոզել: Մենք խաղաղություն և հանգիստ ենք ուզում:

- Իսկ Ազգային խորհուրդը ազդեցություն ու հեղինակություն ունի՞ ժողովրդի մեջ:

- Անշո՛ւշտ,- պատասխանեց Ա. Շահնազարյանը:

- Իսկ դուք Սուլթանովին բանիմաց մա՞րդ եք համարում,- հարցրեց Շատելվորտը, դիմելով քաղաքագլխին,- ի՞նչ մարդ է նա, բնութագրեք ինձ:

- Նա թուրքասեր է,- պատասխանեց Մելիք-Շահնազարյանը:

- Գիտեմ, բայց մեր համաձայնությամբ նա գեներալ-նահանգապետ է նշանակվել,- ասաց բրիտանացին,- Շուշիում մեր ներկայացուցիչը կհսկի նրա գործունեությանը, ու նա ոչ մի վատ բան չի կարող անել: Իր այստեղ գալուց հետո նա որևէ վնաս հասցրե՞լ է ձեզ:

- Այո՛,- ասաց խորհրդի նախագահը,- զորքերի շարժը դեպի Խանքենդ, խրամատների փորելը, հայերի զինաթափումը...

Գեներալը դիմեց Մոնկ-Մեզոնին: Վերջինս հաստատեց, բացի զինաթափման փաստից:

- Զինաթափման մասին մենք անգլիական միսիային դեռ չենք հայտնել, բայց զգուշացրել ենք դրա հնարավորության մասին,- բացատրեց նախագահը:

Շատելվորտը ասաց.

- Խրամատների մասին տեղեկանալով, ես հրահանգել եմ դադարեցնել: Զինաթափման մասին առաջին անգամ եմ լսում: Տարօրինակ է, որ դրա դիմաց փող կամ տեղեկանք չեն տալիս:

Շահնազարյանն ասաց.

- Այո, Ադրբեջանը ընդունակ չէ իր մոտ կարգ ու կանոն հաստատելու, քանի որ իրենց ժողովրդի կուլտուրան խիստ ցածր է, և չի կարելի բարձր մշակույթի տեր ժողովրդին ենթակայացնել կուլտուրա չունեցողներին:

- Ես համաձայն չեմ,- ասաց Շատելվորտը,- հայերն ու մուսուլմանները համարյա նույն կուլտուրական մակարդակի են: Մի՞թե ձեր ժողովուրդը խաղաղություն չի տենչում ու կգնա բախումների խիստ վտանգավոր ուղիով, եթե գեներալ-նահանգապետություն մտցվի:

Շահնազարյանն ասաց.

- Ամենաշատը մենք ենք խաղաղություն ուզում, բայց այն ստորացուցիչ չլինի: Եթե գեներալ-նահանգապետություն մտցվի, ապա ժողովուրդը կդիմի ամեն մի միջոցի:

Շատելվորտն ասաց.

- Դուք ժողովրդի ներկայացուցիչն եք և մեծ հեղինակություն ունեք: Դուք պետք է բացատրեք ժողովրդին, որ Ադրբեջանը մեզ համար ժամանակավոր է, մինչև խաղաղարար կոնֆերանսը: Իսկ եթե կոնֆերանսից հետո միանաք Ադրբեջանին, սակայն չցանկանաք մնալ նրա հետ, ապա ազատորեն կարող եք միանալ Հայաստանին:

- Մենք ապագայով շատ ենք հետաքրքրված: Ես խոսում եմ ժամանակավոր կազմակերպման մասին: Մենք չենք կարող ժողովրդին քարոզել ենթակայության մասին: Դա դավաճանություն կլինի:

- Ես ձեզ զգուշացնում եմ,- սպառնալից տոնով դիմեց գնդապետ Շատելվորտը,- ցանկացած ելույթ Ադրբեջանի ու նրա գեներալ-նահանգապետի դեմ կդիտվի նաև ելույթ ընդդեմ Անգլիայի: Մենք բավականաչափ ուժեղ ենք, որպեսզի կարողանանք ստիպել ձեզ ենթարկվելու: Դուք եք նախագահը, ու պատասխանատու ամեն ինչի համար, ձեզանից էլ կպահանջենք:

Շահնազարյանն ասաց.

- Պարոն գնդապետ, ժողովրդի համար անելանելի վիճակ ստեղծելու ի՞նչ կարիք կա: Ուրիշ ելք գտեք: Կառավարումը ձեր ձեռքը վերցրեք, մենք համաձայն ենք, նույնիսկ թող գեներալ-գնդապետը մահմեդական լինի, բայց ոչ Ադրբեջանի անունից:

- Ես կրկնում եմ,- ասաց Շատելվորտը,- որ մենք չենք կարող երկրամասում ադմինիստրացիայի ստեղծողի դեր կատարել: Մեր առաքելությունը, որի մեջ կմտնեն և ամերիկյան երկու սպա, իրահանգ ունի միայն հետևելու գեներալ-նահանգապետի գործողություններին, այլ ոչ թե կառավարությունը իր ձեռքը վերցնելու: Հայերի շահերը չեն արհամարհվելու, քանի որ առաքելությունը իրավունք ունի միջամտելու ադրբեջանական ադմինիստրացիայի ներքին հրահանգներին: Դուք պետք է բացեք ճանապարհները, դուք պետք է մեզ օգնեք թափանցելու հայերի մեջ, որպեսզի մեր աչքերով տեսնենք ու համոզվենք, թե հայերը ինչի են ձգտում: Չէ՞ որ խաղաղարար կոնֆերանսը ճշգրիտ սահմաններ չի որոշում, այն տեղում իրականացնում են հանձնաժողովները, ստուգում են փաստերն ու տվյալների համաձայն սահմանագծում տարածքները:

- Դուք միշտ էլ կարող եք մտնել հայերի մեջ, իմանալ այն ամենը ինչ պետք է ձեզ, բայց Ադրբեջանի առաջ մեր ճանապարհները փակ են լինելու, ու նրա իշխանությունը չենք ճանաչելու:

- Դա անհնար է,- համոզիչ տոնով ասաց գեներալ գնդապետը,- դուք պետք է մայորի հետ նորից գնաք, համոզեք ժողովրդին ճանաչելու գեներալ-նահանգապետին, ապրել խաղաղ ու միջադեպեր չստեղծել: Ազգային խորհուրդը մեր առջև պատասխան կտա ամեն մի անկարգության համար, իսկ դրդողները խիստ կպատժվեն:

- Անելանելի վիճակ է ստեղծվում,- դժգոհեց ազգային խորհրդի նախագահը, - եթե գեներալ, նահանգապետ ուղարկվի, ապա խորհուրդը հրաժարական կտա, քանի որ աշխատելն անհնար կլինի:

Գնդապետի համազգեստով անգլիացի դիվանագետը կտրեց.

- Դուք հրաժարական տալու իրավունք չունեք, դուք մայորի հետ պետք է գնաք ու վերականգնեք կարգ ու կանոնը:

Շահնազարյանը դիմեց վերջին քայլին.

- Ժողովուրդը անկուսակցականիս է ընտրել, որպեսզի պաշտպանեմ նրա շահերը, ու ես այլ կերպ աշխատելու իրավունք չունեմ: Կրկին արենայում կհայտնվեն հեղափոխական կուսակցությունները: Խնդրեմ, նոր համագումար հրավիրեք, իմացեք ժողովրդի կարծիքը, նոր օրգան ընտրեք: Իսկ ես չեմ կարող...

- Իսկ ի՞նչ եք կարծում, միջադեպեր կլինե՞ն,- թեմային այլ կողմից մոտենալու փորձ արեց անգլիացին:

- Քոչի սարեր տեղափոխելու ժամանակ այո, եթե քոչը մեր ղեկավարությամբ չշարժվի, հայտարարում եմ՝ հանում եմ իմ պատասխանատվությունը:

- Այդ դեպքում դուք մնում եք այստեղ:- Շատելվորտը դիմեց քաղաքապետին,- Ի՞նչ կարծիք ունեք հնարավոր բախումների մասին:

- Ես ներկայացնում եմ թե հայերին, թե մուսուլմաններին,- պատասխանեց Մելիք-Շահնազարյանը,- ես բարեկամական կապեր ունեմ մուսուլմանների հետ ու նրանք ինձ շատ են հարգում: Ղարաբաղը, որի մասին խոսեց նախագահը, ոչ միայն վիճելի շերտը, այլ ամբողջն իր պատմական սահմաններում է: 120 տարի առաջ ողջ Ղարաբաղը գտնվում էր իմ նախնիների կառավարման տակ[6], և մելիքների ժամանակ հայերն ու մուսուլմանները հաշտ էին ապրում: Այժմ էլ կարելի է առանց Ադրբեջանի էլ նման ձևով ապրել:

- Դուք հետ Շուշի՞ եք գնալու:

- Այո, ես քաղաքապետ եմ, ու պետք է մեկնեմ, բայց սկզբից խնդրում եմ թույլ տաք մեկ շաբաթով մեկնեմ Թիֆլիս երեխաներիս

տեսակցության, հետո Շուշի կդառնամ: Անգլիական միսիան գիտի իմ աշխատանքի, ուղղվածության, քաղաքավարության մասին:

Գնդապետը դիմում է նախագահին.

- Դուք կմնաք, իսկ դուք,- դիմում է Շուշիի քաղաքապետին,- գնացեք:- Ապա դիմում է Մեզոնին,- ուրիշ պատասխանատու անձիք կա՞ն այստեղ,- կրկին դառնում է ազգայինխորհրդի նախագահին:- Ձեր հրամանատարները հեղինակություն ունե՞ն: Կարո՞ղ են նրանք պատասխանատվությունը վերցնել իրենց վրա:

- Հրամանատարները զինվորներ են, առաջնորդներ,- ասաց Ա. Շահնազարյանը,- ու քաղաքական հարցեր վճռելու իրավունք չունեն և անվերապահորեն ենթարկվում են Ազգային խորհրդին:

- Հարցերը սպառված են,- հայտարարեց Շատելվորտը:

Ղարաբաղի Ազգային ժողովը անգլիացիներին առաջարկեց Ղարաբաղում հիմնել բրիտանական գեներալ-նահանգապետություն, հետո տեսնելով, որ այն չի ընդունվում, առաջարկեց Ղարաբաղի ինքնավարության ծրագիր: Այն ևս անտեսվեց բրիտանացիների կողմից: Անգլիացի գնդապետ Շատելվորտը ապրիլի 3-ի հրամանով Զանգեզուրի, Շուշիի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի հայերից պահանջում էր ենթարկվել Սուլթանովի հրամաններին:

Ապրիլի 19-ին ցերեկվա ժամը 2-ին Շուշիում անսպասելիորեն փակվեցին բոլոր խանութները, ամենուրեք դադարեց աշխատանքը, և ժողովուրդը հավաքվեց անգլիական միսիայի շենքի առաջ: Գավառներից ևս գյուղացիներ էին եկել այս հանրահավաքին: Ժողովրդի միջից բազմաթիվ մարդիկ ելույթ ունեցան մեղադրելով անգլիացիներին հակահայկական քաղաքականության մեջ, դատապարտելով նրանց սադրիչ քաղաքականությունը, պահանջելով Շուշիից հեռացնել Սուլթանովին և Ադրբեջանի մյուս գործակալներին: Սակայն քաղաքի միլիցիապետ և անգլիական լրտես Միքայելյանի առաջնորդությամբ ցույցի վայր եկած հնդկացի զինվորների մի ջոկատ սադրիչ հրաձգությամբ ստիպեց անզեն ժողովրդին ցրվել: Ցույցը ոչ մի հետևանք չունեցավ:

1918 թվականի ապրիլի 23-ին Շուշիում տեղի ունեցավ Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը: Մասնակցում էին 69 պատգամավորներ: Համագումարը մերժեց Շատելվորտի առաջարկը ընդունելու իրենց նախագիծը: Ղարաբաղի հայության 5-րդ համագումարի պատասխանը զայրացնում է արդեն գեներալ դարձած Շա-

տելվորտին, որը գեներալ-նահագապետ Խոսրով բեկ Սուլթանովի հետ ներկա էր համագումարին: Շատելվորտը հայտարարել էր՝ *«Ի նկատի ունեցե՛ք, որ ձեր ճանապարհները կարող են փակել, այն ժամանակ դուք որտեղի՞ց մթերք կստանաք, ինչպե՞ս կպահպանեք հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ: Կարող են ձեզ տնտեսական բոյկոտ հայտարարել, կարո՞ղ եք առանց հացի ապրել: Եվ եթե հուզված, զինված ամբոխը հարձակվի ձեզ վրա, կարո՞ղ եք պաշտպանվել»:* Անգլիացիները չէին ընդունում նաև Շուշիի Ազգային խորհրդի գոյությունը: Շատելվորտի խոսքերը վկայում են, որ Ղարաբաղի հայության դեմ գործողությունները, նրան ծնկի բերելու ծրագրերը մշակվել են Ադրբեջանի ու անգլիական սպաների հետ համատեղ: Իսկ համագումարի մասնակիցները այն կարծիքի էին, որ անգլիացին ադրբեջանցիներին սովորեցնում է ինչպես վարվել հայերի հետ[7]:

Շուշին փաստորեն գրավել էին ադրբեջանցիները: Շուշիի հարցը լուծել էին անգլիացիները, կամ գուցե և ադրբեջանցիները՝ անգլիացիների միջոցով. երբ նրանց հետևից քաղաք մտավ ադրբեջանական կառավարչական ապարատը, ապա և զորքը: Ի տարբերություն Շուշիի, շրջաններում հայությունը, չնայած զինամթերքի պակասությանը, մարտականորեն էր տրամադրված: Խնածախի մոտ թուրքերը լուրջ պարտություն կրեցին: Սակայն գիշերը բավականին զորքեր էին մտել Շուշի: Թաթարները Խանքենդիի (Վարանակ) մոտ խրամատներ էին փորում ռուս սպաների հսկողությամբ: Հունիսի մեկին քաղաքի հայ-թուրքական սահմանի ողջ երկարությամբ ասկյարները դիրքեր են մտել, գնդացիրներ տեղադրել: Շուշիում Գեովհար աղայի տան մոտ ևս թաթարները դիրքեր էին պատրաստել. գնդացիրներ տեղադրել: Անգլիական միսիան Ազգային խորհրդի ութ անդամների կանչում է ներկայացչություն և ստորագրություն վերցնում, որ այսուհետ քաղաքականությամբ չեն զբաղվելու:

Իրիկնադեմին տասնհինգ զինված ասկյարներ, նռնակները գոտկատեղերը խրած եկան հայկական մաս ու գրավեցին գանձարանը (բանկը): Գանձարանի բոլոր ծառայողները հայեր էին, ու Սուլթանովի հրամանը՝ գանձարանը թաթարական մաս տեղափոխելու դեպքում նրանք այնտեղ աշխատել չեն կարող: Գանձարանի արժեքավոր թղթերի 95 տոկոսը (600000 ռուբլի), ինչպես և երեք միլիոն ռուբլի խնայդրամարկղի գումարը հայերինն է: Վարանդայի հրամա-

նատար Արտեմ Լալայանը ուզում էր թաթարներից հետ գրավել գանձարանը: Սակայն ազգային խորհուրդը արտակարգ նիստ գումարելով, մերժեց այդ առաջարկությունը, ասելով, որ Շուշիում միայն 70 զինված երիտասարդներ կան, ընդամենը 400 փամփուշտով: Ծրագրել էին վարել ծգծգողական քաղաքականություն և պասիվ դիմադրողականություն:

Ինչպես Արամայիսն էր գրում. *«Ղարաբաղը թպրտում է մղձավանջային դրության մեջ, իսկ այնտեղ* (Հայաստանում - Բ.) *դեռ մտածում են ինչ-որ քայլեր անել:*

Մայիսի 5-ին Շուշի ժամանեցին ամերիկյան օգնության միսիայի ներկայացուցիչները: Դրոշակներով ու բարեմաղթություններով դիմավորեցին բարեգործներին: Սակայն ամերիկյան միսիայի անդամները հրաժարվեցին Ազգային խորհրդի հետ համագործակցելուց: Ըստ երևույթին, նրանց այս գործում դրդողի դեր էին կատարել անգլիացիները: Նրանք հրաժարվեցին և 5-րդ համագումարի ընտրած երեք ներկայացուցիչների օգնությունից:

Մոնկ-Մեզոնը պահանջել էր, որ անգլիական միսիա գան հայ երեք գործիչներ՝ ազգային խորհրդի նախագահ Իշխանյանը, Ավետիսյանն ու զինվորական գործերի նախկին կառավարիչ Թումյանը, իբր խորհրդակցելու նրանց հետ երկրում կարգը վերականգնելու միջոցների մասին, ապա երեքին էլ ազատ թողնելու:

Եպիսկոպոսը խնդրեց համոզել երեքին ներկայանալու անգլիացիներին: Իշխանյանն ու Ավետիսյանը իսկույն համաձայնվեցին, սակայն Թումյանը մերժեց, ասելով, որ անգլիացիները գործում են Սուլթանովի թելադրանքով, որ իրենց կծերբակալեն:

- Խնայեք ժողովրդին,- ասացին բազմության միջից,- *մեզ կոտորած է սպասում:*

- Գնացեք ներկայացեք, որ մեզ չկոտորեն,- գոչեց մյուսը:

- Կոտորածը կսկսեն մեր ծերբակալությունից հետո,- հանգիստ ասաց Թումյանը:- *Ոչնչից մի վախեցեք, շուտով շրջանից օգնության կգան:*

- Ես հավաստիացա, որ անգլիական միսիայի պետը կամենում է երեքիդ հետ հանդիպել,- ասաց եպիսկոպոսը,- *նրանք, միևնույն է, մտադիր չեն ձերբակալել ձեզ, խնայեք ժողովրդին:*

- Տե՛ր հայր, անգլիացիների հավաստիացումներին երբեք պետք չի հավատալ,- պատասխանեց Թումյանը:

Եպիսկոպոսը հուզմունքից սկսեց լաց լինել ու աղերսել:

- *Լավ,*- ասաց զինվորական կառավարիչը,- *ի՞նչ արած, կամքը ձերն է...*

Հաջորդ օրը՝ հունիսի 5-ին, վաղ առավոտյան անգլիացի երեք սպա զինվորական երեք «պիկապներով» Ղարաբաղից վտարեցին Իշխանյանին, Թումյանին ու Ավետիսյանին:

Ադրբեջանական զորքը առանց դիմադրության անցավ հայկական թաղամասը:

Ամերիկյան միսիան իր կողմից էր նեղացնում հայությանը: Նկատվում էր կարիքավորներին մի կտոր հաց տալու մեջ քաղաքականություն մտցնելու ձգտումը, Շատելվորտի ազդեցության տակ ադրբեջանական գաղափարն առաջ տանելու ցանկությունը: Ամերիկյան միսիայի գլխավոր կառավարիչ դոկտոր Հարմանը չկարողացավ ստեղծել մի մարմին, որին ժողովուրդը հավատ ընծայեր, որի միջոցով հացի բաշխումը արդարացի լիներ, առանց զեղծարարության ու յուրացումների:

8. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԻՋՈՒՄՆԵՐԸ

Վսկայական ուժեր կենտրոնացնելով Ղարաբաղի շուրջը, թուրքերը օր-օրի սեղմում էին օղակը: Ողջ Ադրբեջանում տնտեսական բոյկոտ էր հայտարարվել հայությանը: Հայերին ոչինչ չէր վաճառվում խանութներում: Թուրքերը բավականաչափ ուժեր էին կենտրոնացրել նաև Շուշիում ու Խանքենդում (Վարարակն): Շուշիի անգլիական միսիան մահմեդական հնդիկ զինվորների թիվը հասցրել էր 300-ի:

Հունիսի 4-ին ժամը 10-30-ին Քերծի գլխին մի քանի կրակոցներ լսվեցին: Թուրք սպան՝ Սուրխայը, հայոց դիրքերից բանակցելու կանչեց հրամանատարին՝ Ավագին ու ատրճանակով կրակեց նրա վրա: Հայ մարտիկները հարձակվում են, ասկյարներին դուրս քշում Քերծի դիրքերից, սպանում Սուրխային:

Թուրքական դիրքերից ողջ երկարությամբ մի դժոխային հրացանաձգություն է սկսվում: Այստեղ ակտիվ դեր ուներ Խոսրով բեկ Սուլթանովը՝ իր կատաղի հեծյալներով:

Հայկական մասից թաթարները նախապես տեղեկանալով ընդհարման մասին, հեռացել էին: Իսկ թուրքական մասում բավականաչափ հայեր էին մնացել, որոնց ճակատագիրը անհայտ էր:

Եկեղեցու բակում հավաքված մարդիկ առաջարկում էին հպատակվել թուրքերին, քանի որ իրենք չեն ուզում իրենց երեխաներին ու կանաց կատաղած ամբոխի ձեռքը տալ, իսկ եթե գավառներն ուզում են կռվել, թող գավառում կռվեն, իսկ իրենք չեն կռվելու:

Թուրքերը քաղաքի հայ-թուրքական թաղերի սահմանով մեկ սկսեցին հրացանաձգությունը՝ ժողովրդին ահաբեկելու նպատակով: Կրակում էին փամփուշտներով: Հայկական մասում բնակչության մեջ խուճապ առաջացավ: Հայկական զինված ուժերը դիրքեր գրավեցին և պատասխանեցին կրակով, ապա գրոհով նրանց դուրս քշեցին դիրքերից: Սուլթանովին օգնության հասան անգլիացիները: Հնդիկ զինվորները թիկունքից մոտենալով հայ մարտիկներին, զենքի ուժով ստիպում էին հեռանալ դիրքերից: Թուրքերը արդեն կրակում էին հայերի տների վրա: Նրանք նախ գրավեցին դեպի գավառներ տանող ճանապարհները, հարկ եղած դեպքում բնակչության էվակուացումը ապահովելու համար: Խաչենի հրամանատարին հանձնարարվեց փակելու քրդերի անցման ուղիները: Հանձնարարվեց Դիզակի և Վարանդայի հրամանատարներին շուրջ հազար հոգանոց զորախմբով Բերդաքաղաք մտնելու: Ծրագրվել էր Սուլթանովի ու անգլիացիների վրաճնշում գործադրել ու նրանց կողմից որոշ զիջումներ ձեռք բերել:

Քաղաքական սուր իրավիճակը ստիպեց Շուշիի մտավորականությանը խորհրդակցության հավաքվելու բժիշկ Բահաթրյանի ընդարձակ այգում: Այստեղ էր և Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը՝ Արցախի թեմի առաջնորդը: Մինչ այդ նա անգլիացիներին խնդրել էր դադարեցնելու հրածգությունը մահմեդական թաղամասից:

Թաթարական զորամասը գրավեց ռուսական նախկին զորանոցի շենքերը, այնտեղից դուրս քշելով արևմտահայ և Բերդածորի փախստականներին: Թուրքական մաս տեղափոխվեցին հեռագրատունն ու գանձարանը:

Հայ արտաքսյալներին տանող ավտոմեքենաները դեռ Մազի կամրջին չէին հասել, թուրքերի կողմից մի կատաղի հարձակում սկսվեց Ղայբալուի վրա: Հուսահատական մաքառումից հետո ժամը մեկին Ղայբալու շենն ընկավ: Սկսվեց անպաշտպան կանանց, երեխաների ու ծերերի անխնա կոտորածը: Անգլիական սպաները Քերծի գլխից հանգիստ դիտում էին դիվային այս խրախճանքը եղեռնը: Եղեռնագործները նկատելով Քերծի գլխին խմբված մարդկանց, մի համազարկ են ուղարկում նրանց կողմը: Մի գնդակ գալիս, պոկում է սպաներից մեկի ուսադիրը: Անգլիացիները խոհեմաբար հետ են քաշվում: Գյուղի 700 բնակիչներից կենդանի են մնում 11 տղամարդ, 67 կին և երեխա: Ղայբալու շենի տները այրվում էին մեկը մյուսի հետևից: Ծուխը թանձրացել էր գյուղի վրա: «Բարի հարևանները» մեկ-մեկ թալանում էին տներն ու հրկիզում: Շուտով մի հորդ անձրև սկսվեց, որը հանգցրեց կրակը: Անգլիացի սպաները բերդապարսպի վրա կանգնած դիտում էին արյունալի տեսարանը: Հետո թալանվեցին ու հրկիզվեցին մի շարք այլ գյուղեր, ինչպես նաև Դավիթ Ներսիսյանի ու Դանիել Ահարոնյանի մետաքսաթելի և մետաքսամանման գործարանները: Հունիսի ութին Սղնախ գյուղից Դիզակի և Վարանդայի մարտիկները տեղեկացրին շուշեցիներին, որ պատրաստ են օգնության գալու: Շուշիից խնդրեցին «հանգիստ մնալ», քանի որ որոշել են «լեզու գտնել Սուլթանովի հետ»:

Հունիսի 7-ին Վահան եպիսկոպոսը գնում է Սուլթանովի մոտ: Քաղաքական և դիվանագիտական խորամանկություններին անծանոթ ու պարզամիտ եկեղեցականին զարմանք է պատճառում Սուլթանովի խաղաղ տրամադրությունն ու ճոխ ընդունելությունը: Հաջորդ օրը Սուլթանովն է այցելում եպիսկոպոսին: Թեմական դպրոցի բակում, ուր շուշեցիներ էին հավաքվել, Սուլթանովը հայտնել է, թե ինքը իբրև բժիշկ իրեն բախտավոր է զգացել, երբ կարողացել է մի հիվանդի կյանք փրկել և այժմ որքա՞ն ցավ է զգում, երբ Ղայբալու հայոց շենին դժբախտություն է պատահել: Նա ասում է, որ քանդված գյուղերը պետք է վերականգնվեն, որբերը խնամվեն, վնասները հատուցվեն: Մինչ կեղծավոր հրեշը փորձում էր թյուրիմացության մեջ գցել ժողովրդին, Ղայբալուից մազապուրծ մի քանի հոգի Շուշիում խելագարի պես հեծեծալով պատմում էին, թե ինչպես թուրքերը անողորմ կոտորեցին հայերին, բռնաբարեցին կանանց ու

աղջիկներին, շատերին տարան, տները թալանեցին ու հրի մատնեցին:

Շուշիում հայերի մոտ հաղթող դուրս եկավ ստրկամտությունը, թուրքերին որպես ողորմություն հպատակությամբ ապրելու իրավունք ստանալու հույսով: Իսկ Օսմանյան գործակալները ավելի էին գրգռում մահմեդականներին: Ադրբեջանական զինվորական համազգեստով ծպտված, իրենց սև գործն էին անում Նուրի և Քյազիմ փաշաներն ու Թուրքիայի պարտությունից հետո Ջիվանշիրի մահմեդական գյուղերում ապաստանած Էնվեր Փաշան:

Անգլիական միսիա գնացած հայկական պատվիրակությանը անգլիական բանակի սպա Հոքմանսը ասել էր. *«Մենք կին ու երեխաներին կհրամայենք քաշվել լեռները, իսկ տղամարդկանց կկոտորենք մինչև վերջին մարդը: Ղարաբաղը պետք է անցնի Ադրբեջանին... եթե ամբողջ Ղարաբաղը մոխրի վերածվի, մենք միայն դիտողի դերում կլինենք»*[8]:

Համաձայնության հարցը լուծելու համար որոշվեց հայերի նոր համագումար հրավիրել:

Համագումարը (6-րդ) տեղի ունեցավ հունիսի 29-ին, Շոշ գյուղում: Շրջաններից եկել էր 500 պատվիրակ: Այն մերժեց Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու առաջարկությունը: Ոչ անգլիական միսիան, ոչ էլ Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչները չէին մասնակցում համագումարին: Բաքվից ներկայացուցիչները ուշացումով Շուշի հասան, երբ արդեն ավարտվել էր համագումարը: Բանակցություններից հետո որոշվեց Միսակ Տեր-Դանիելյանին (Արամայիս) ու Շուշիի քաղաքագլուխ Ռուբեն Շահնազարյանին ուղարկել Բաքու՝ Ադրբեջանի հետ բանակցություններ վարելու մանդատով: Այն նպատակ ուներ կրկին ձգձգելու հարցի լուծումը: Իսկ Ադրբեջանի կառավարությանը անհրաժեշտ էր ինչ գնով էլ լինի, արցախցիներից համաձայնություն կորզել, որն էլ այս երկրամասը տիրելու իրավական հիմք կհանդիսանա, իսկ համաձայնության կետերը երկրորդական են:

9. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 13-ին Ազգային խորհրդի հրավերով Շոշ գյուղում գումարվեց Արցախի հայության 7-րդ համագումարը, որին մասնակցում էին 135 պատգամավորներ: Գլխավոր հարցը Արցախի և Ադրբեջանի փոխհարաբերությունների խնդիրն էր: Ելույթ ունեցողների մեծ մասը պահանջում էր Ադրբեջանի հետ ոչ մի համաձայնություն չկնքել, ու եթե Ադրբեջանը փորձի բռնությամբ փաթաթել իր իշխանությունը պատերազմել: Մյուս մասը առաջարկում էր չափավոր քաղաքականության ու բանակցությունների միջոցով դիմանալ մինչև Փարիզի միջազգային կոնֆերանսը կվճռի Ղարաբաղի ճակատագիրը:

Որոշվեց ընտրել մի հանձնաժողով, որը պետք է զինվորական շտաբի պետի հետ միասին պարզի, թե պատերազմի դեպքում Արցախը կկարողանա՞ զենքի ուժով ստիպելու Ադրբեջանին ճանաչելու իր ինքորոշման իրավունքը: Հանձնաժողովը բացասական պատասխան տվեց այդ հարցին: Հանձնարարվեց Արշավիր Քամալյանի դեկավարած հանձնաժողովին համաձայնության պայմաններ մշակել:

Ադրբեջանի իշխանություններն ու Սուլթանովը շտապում էին հաջողությամբ լուծելու Ղարաբաղը նվաճելու խնդիրը: Ռազմական պատրաստության մեջ դնելով Շուշիի և Խանքենդիի թուրքական զորքերը, Սուլթանովը կազմեց համագումարին ուղղված վերջնագիր, որով պահանջում էին 48 ժամվա ընթացքում պատասխանել. արդոք Ղարաբաղը ճանաչում է Ադրբեջանի գերիշխանությունը, թե՞ ոչ: Այն Շոշ բերեց Վահան եպիսկոպոսը:

Համագումարը քննեց և ընդունեց համաձայնության նախագիծը: Ապա ընտրվեց հանձնաժողով Ադրբեջանի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու և համաձայնությունը ստորագրելու համար: Հանձնաժողովը նորընտիր Ազգային խորհրդի անդամների ու քսան պատգամավորների հետ մեկնեց Շուշի, համաձայնության նախագիծը հանձնեց նահանգապետ Սուլթանովին, որը մի քանի նոր կետեր մտցրեց: Այն ստորագրվեց համագումարից լիազորված տասնվեց պատգամավորների կողմից: Համաձայնագիրը վավերացրեց Սուլթանովը: Այդպիսով, հայկական Արցախը երկարու ծանր պայքարից հետո, կտրված լինելով հայրենիքից, ստիպված եղավ ժամանակավորապես ճանաչելու Ադրբեջանի կառավարության իշխանությունը: Առաջին կետում նշվում է. *«երկու կողմերն էլ ընդունում են ժամանակավոր համաձայնությունը, մինչև այս խնդրի մասին որոշումը խաղաղարար կոնֆերանսում: Իսկ որոշումը հավասարապես պարտադիր է երկու կողմերի համար»:*

Երկրորդ կետով հայտնվում է, որ Ղարաբաղի Լեռնային մասը, որտեղ բնակվողները հայեր են, ժամանակավորապես համարում է իրեն Ադրբեջանի հանրապետության սահմաններում:

Ադրբեջանն ու Թուրքիան բռնի ուժի միջոցով, թեկուզ ժամանակավորապես, իրենց ենթարկեցին հայկական այս երկրամասը: Ինչ վերաբերում է Փարիզի կոնֆերանսին, ապա այնտեղ ոչ մի Ղարաբաղի հարց էլ չլսվեց:

Իսկ Ադրբեջանը պատրաստվում էր նվաճելու Զանգեզուրը: Շուշին այդ օրերին թուրքաց ռազմական ճամբար էր հիշեցնում:

Զանգեզուրյան հարձակումներում կրելով ջախջախիչ պարտություն, Ադրբեջանի քաղաքական գործիչները ծրագրեցին ավելի կոշտ և ուժային ճնշում գործադրել Ղարաբաղի հայ բնակչության վրա: Նրանց արդեն չէր բավարարում ժամանակավոր համաձայնությունը: Կրկին փակվեցին ճանապարհները: Սահմանային շրջափակման ենթարկվեցին հայկական բնակավայրերը: Ադրբեջանի Ն.Գ. մինիստր Հաջինիսկին 1920 թ. հունվարի 24-ի գաղտնի հրահանգով գեներալ նահանգապետ Սուլթանովին հանձնարարեց զորքերին օգնելու համար քրդերից ու թուրքերից կազմել պարտիզանական ջոկատներ:

Սուլթանովը Ղարաբաղի ազգային խորհրդից պահանջեց թույլ տալ զորքեր մտցնել շրջանները, հպատակվել Ադրբեջանի իշխանություններին: Դա նպատակ ուներ իրականացնելու Արցախը հայաթափելու ծրագիրը: Ազգային խորհուրդը մերժեց Սուլթանովի պահանջները:

1919 թվականի դեկտեմբերին Գողթանի ու Ագուլիսի կոտորածն ու ավերը ցույց տվեցին, որ 1915 թվականին Օսմանյան կայսրության ձեռնարկած եղեռնը շարունակվում է, ու հայերի միակ միջոցը պաշտպանություն կազմակերպելն է:

Անհրաժեշտություն կար նոր 8-րդ համագումարի հավաքվելու: Սուլթանովի կողմնակից մի քանի հայ մեծահարուստներ պահանջե-

ցին այն Շուշիում անցկացնել: Սակայն պատգամավորները հավաքվեցին Շոշ գյուղում: Ելույթների թեման ժամանակավոր համաձայնության կետերի խախտումներն էր ադրբեջանական իշխանությունների կողմից: 1920 թվականի մարտի 4-ին համագումարը միաձայն ընդունեց հուշագիր՝ ուղղված դաշնակից պետությունների ու Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչներին, որտեղ ասվում էր, որ հայերը անցյալում այնքան մեծ կորուստներ չեն կրել, որքան ժամանակավոր համաձայնություն կնքելուց հետո:

Վկայակոչվում է Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետ Սուլթանովի 1920 թվականի փետրվարի 19-ի նո. 1927 գրությունը Շուշիի Ազգային խորհրդին. *«... համաձայնության առաջին կետում, Ղարաբաղի քաղաքական հարցի վերաբերյալ, խնդրում եմ քննության առնել հետևյալ սկզբունքային հարցը՝ Ղարաբաղը Ադրբեջանի մեջ վերջնականապես մտնելու իբրև նրա անխզելի տնտեսական մաս»:* Ադրբեջանցիները այլևս իրենց ծրագրերը չէին քողարկում: Սուլթանովը փետրվարի 14-ին հայ ներկայացուցիչների հետ պաշտոնական խորհրդակցությունում հայտարարել էր, որ դաշնակից երկրների կոնֆերանս գոյություն չունի և *«Մենք ինքներս պետք է դուրս գանք իրավիճակից»:*

Հայաստանում և Վրաստանում ապրող հայրենակցական միությունների նախագահ պատմաբան Լեոն հուշագիր ներկայացրեց դաշնակից երկրների ներկայացուցիչներին. *«Հայտնել դաշնակիցների բարձր շրջաններին ճնշում գործադրելու Ադրբեջանի շովինիստական շրջանների վրա, վերջ տալու Ղարաբաղում սկսված ավանտյուրային, որը կարող է վերջանալ աղետով»:* Իսկ Ղարաբաղում վաղուց արդեն այլ չափանիշներ էին գործում, այն է. ինչքա՞ն փամփուշտ ունես, ինչ զենքով պիտի դիմադրես, ինչքան կդիմանաս... Կպաշտպանե՞ս քո տունը, քո գյուղը, քո քաղաքը, թե լուռ կմորթվես...

Ահա թե ինչ էր գրում «Մշակ» թերթը 1920 թվականի մարտի 21-ի համարում. *«...Հավաքված դիպլոմատները կխոսեն Ղարաբաղի մասին, իսկ միևնույն ժամանակ այնտեղ կշարունակեն արյուն հոսեցնել Նուրի և Խալիլ փաշաները, բժիշկ Սուլթանովը, որոնց համար միայն մի պաշտամունք կա. արյուն, որքան կարելի է՝ շատ արյուն: Թուրանիզմն է այսօր հրամայում Ադրբեջանում:*

Երբ Ադրբեջանը կհամակվի այն գիտակցությամբ, որ չինգիզ խաների ուլենկթեմուրների ժամանակն անցել է և չի կարելի սրով Միջերկրական ծովից մինչև Չինաստան պետություն ստեղծել, այդ ժամանակ կարելի կլինի նրան զգալ մի ընդհանուր Կովկասյան իրականության անդամ, հասկանալ, որ պետք է չափավորել ախորժակը, հնարավորություն տալ, որ հարևաններն էլ ապրեն»:

Նույն համարում թերթը տպագրում է հենց նոր Շուշիից ստացած նամակը. *«Շատ սարսափելի և ծանր դեպքեր են գալիս մեր գլուխը, ոչ մի ապահովություն թե կյանքի և թե գույքի: Օր չի լինում, որ քաղաքից դուրս 5-10 ճամփորդ հայերի դիակ չգտնվի ընկած: Վերջին երկու ամսում քանի-քանի հայ ընտանիքներ մնացին որբ և անտիրական: Դիմումներն ու գանգատները խորամանկ Սուլթանովի կողմից մնում են անհետևանք: Հայկեր յաթաղանը ամեն րոպե կանգնած է մեր աչքի առաջ: Մտնում ենք անկողին՝ հույս չունենալով, թե հետևյալ առավոտը կենդանի կմնանք: Չենք իմանում մենք մեր այս կրիտիկական դրության մասին սկի այդտեղ մտածող, հոգ տանող կա՞, թե ոչ:*

Խանքենդում պատահած կոտորածի հետևանքով մնացած հայ ընտանիքները տեղափոխվել են Շուշի: Սրանց տեղերը Խանքենդում բնակեցվում են թուրքերով»:

Հայաստանի կառավարությունը շատ քիչ բան էր անում արցախցիներին օգնելու համար, իսկ վճռական ոչ մի բան չէր ձեռնարկում: Ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հիմնական ծրագիրն էր Նախիջևանի ազատագրումը թուրքերից, իսկ Ղարաբաղի իրավիճակի բարդացումը նրան անհրաժեշտ էր ադրբեջանական ուժերի ուշադրությունը շեղելու համար: Այդ պատճառով էլ իր գործակալներին հրահանգավորել էր քաղաքական ավանտյուրաներ ստեղծել և գրգռել Ղարաբաղում, Շուշիում և Ղարաբաղի շուրջը կուտակված թուրքական բանդաներին: Նա Ղարաբաղ զինամթերք չուղարկեց: Նա ղարաբաղյան գործողությունները հանձնարարել էր ԱՄՆ-ից նոր վերադարձած Արսեն Միքայելյանին (Տեր-Հովհաննիսյանին), որը չէր պատկերացնում իրավիճակը և իր ունակություններով անկարող էր նման գործ կատարելու:

Հարություն Թումյանը 1920 թվականի մարտին ծպտյալ հայտնվեց հայրենի Շուշիում և հանդիպեց Ալեքսանդր Ռուբենու և բժիշկ Սարգիս (Սաքո) Համբարձումյանի հետ: Նրանք դժգոհ էին

Արսեն Միքայելյանի գործողություններից, ու արդեն գիտեին, որ Կարմիր բանակը շուտով շարժվելու է դեպի Անդրկովկաս, ուստի Ղարաբաղի հայերի բախումը Ադրբեջանի հետ անմտություն կլինի: Լուրեր էին պտտվում, թե թուրքերը «նովրուզ-բայրամի» մահմեդական տոն օրվա գիշերը ողջ ճակատով հարձակվելու են Ղարաբաղի հայության վրա:

10. ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՐԿԻԶՈՒՄՆ ՈՒ ԵՂԵՌՆԸ

1920 թվականի մարտի 23-ին, գիշերը Ղարաբաղի հայկական ջոկատները հարձակվեցին Ասկերանի, Շուշիի և Խանքենդիի (Վարանդա) զորանոցների վրա: Ասկերանում գործողությունը ղեկավարում էր Ղազար (Միքայել) Բաղալբյոխյանը: Հարություն Թումյանը նրա շտաբի պետն էր:

Դիզակից մինչև Գյուլիստան սկսվեցին մարտերը: Ասկերանից հայ մարտիկները հետ էին մղում Աղդամի գրոհն ու մեծաթիվ զորքերի հարձակումը: Նրանք փորձում էին ճեղքել, անցնել Ասկերանն ու արշավել դեպի Շուշի ու Խանքենդ: Մարտի 27-ից Ասկերանի վրա ուղղեցին ութ ծանր հրանոթներ: Թուրքերի գրոհը հետ մղելով, հայ մարտիկները անցան հակահարձակման, և խուճապի մատնեցին թշնամուն: Զոհվեց 60 ասկյար:

Ասկերան բերեցին 1918 թվականին թուրքերից խլած հրանոթը՝ 60 արկով: Հրետանավոր Գասպարը ճշգրիտ կրակով լռեցրեց թշնամու հրետանին: Նոր թարմ ուժեր բերվեցին Բաքվից ու Գանձակից: Կուտակվել էր Ադրբեջանի ուժերի շուրջ 80 տոկոսը՝ մինչև 80 հազար մարդ: Իսկ դրա դիմաց Հայաստանից ոչ մի օգնություն չէր գալիս:

Խանքենդում և Շուշիում կայազորների վրա հարձակումները ձախողվեցին: Խանքենդի 500 հոգանոց կայազորի վրա գրոհը ղեկավարում էր բայազետցի Ալեքսան Դային, որը պարտիզանական կռիվների փորձ ուներ, սակայն նման պատասխանատու գործողություններ կազմակերպելու համար լրիվ անընդունակ էր: Թուրք հրամանատարը հանձնվելու նշան է տալիս: Ալեքսանը, փոխանակ

արագ զինաթափելու, կարգադրում է գերի չվերցնել ու անխնա ոչնչացնել բոլորին: Ասկյարները սկսում են հուսահատական կռիվը: Գրոհողները մեծ կորուստներ են ունենում ու հետ քաշվում:

1920 թ. մարտի 23-ին Շուշիում ասկյարները դուրս են թափվում զորանոցից ու փոքր խմբերով սկսում սպանել ու թալանել հայերին:

Շուշիում Արսեն Միքայելյանը գործողության ղեկավար էր նշանակել Մավաս գյուղացի Աղապարոն Դանիելբեկյանին, որը մարտական փորձ չուներ ու անկարող մարդ էր: Արսենը կարգադրել էր 50 զինվոր հավաքել և գիշերը հարձակվել կայազորի վրա, որը կազմված էր 500 ասկյարներից: Շատերը, այդ թվում՝ Հ. Թումյանը, նրան խորհուրդ էին տվել քաղաքում ոչինչ չձեռնարկել: Եվ ահա մարտի 23-ի գիշերը 50 հոգանոց ջոկատով քաղաք է մտնում և մոտենում հայկական մասում գտնվող զորանոցներին, սկսում անկանոն հրաձգությունը: Մառախլապատ օր էր, ու սկզբում թուրքերին դժվար էր կողմնորոշվել: Ասկյարները սկսում են դիմադրությունը զորանոցից, սակայն համոզվելով, որ հարձակվողները անվճռական են ու թույլ, դուրս են գալիս զորանոցից ու մարտի բռնվում: Աղապարոնի մարդիկ խուճապի մատնվելով, հետ են քաշվում դեպի Երևանյան դարպասները: Ասկյարները սկսում են հարձակվել հայերի տների վրա, սպանել բնակիչներին, թալանել, ապա նավթ լցնել ու հրկիզել տները: Մարդիկ արթնանալով ու տեսնելով հրդեհից լուսավորված քաղաքն ու համընդհանուր խուճապը, որոշում են մի կերպ փախցնել ընտանիքները: Քաղաքի մահմեդական մասի խուժանը իր հերթին մտնում է հայկական մաս և անպատիժ սպանում ու թալանում հայերին:

Հարյուրավոր մարդիկ ընկնում են գնդակներից, մորթվում իրենց տների շեմին: Շուշիի տները յուղաներկ էին ու հեշտ էին բռնկվում: Այս տեսարանը այնքան ահավոր էր, որ չի համեմատվի 1906 թ. աղետի հետ: Վահան եպիսկոպոսի ու այլ երևելի հայերի գլուխները ցցերի վրա հանած թուրքերը շրջում էին թուրքաց թաղամասում:

Այս դեպքերի ականատես հայ զինվոր Զարե Մելիք-Շահնազարյանը պատմում է. *«Բռնկված քաղաքը ամբողջ գիշեր լուսավորում էր շրջապատի լեռները: Հետագայում հանդիպեցիշուշեցի գեղեցկուհի Տաքնիկին: Նա պատմեց, թե ինչպես թուրք Նուրի փաշան ու բազկաթոռին նստած բազմության առաջ գերի հայ պատանիներին մեկ-մեկ կանգնեցնում էր դիմացն ու երկու մատով երեխաների*

ռունգերից բռնած վեր ձգում ու յաթաղանի շեշտակի հարվածով հատում գլուխները: Տաթևիկի աչքի առաջ սպանեցին և նրա 14-ամյա որդուն: Տղամարդկանց սպանում էին, կանանց, աղջիկներին ու երեխաներին բռնաբարում, գեղեցկուհիներին իրենց տները տանում: Տաթևիկը կիսախելագար թափառում էր Շուշիի փողոցներով ու անվերջ կրկնում այս պատմությունը»:

Հատկանշական է ադրբեջանցի զինվոր Իսմայիլ Ալմարդանբեկովի նամակը, որ նա Շուշիից գրել էր Բաքվում ապրող եղբորը. *«Տեսածդ էրմանիստանը* (Շուշիի Հայկական մասը) *այրված է: Հինգ կամ տասը տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին: Տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչև անգամ խալիֆին* (եպիսկոպոսին), *բոլոր նշանավոր հայերին սպանելուց հետո գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս: Այս ժամիս զորքը, թնդանոթները, գնդացիրները, Խալիլը* (Խալիլ-փաշան)՝ *բոլորն այստեղ են:*

Այս կողմում այլևս ոչ մի հայ չես գտնի և ոչ էլ այնպիսի թուրք կարող եք հանդիպել, որը հարյուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպիսի մարդ կա, որ մեկ միլիոնից ավելի ապրանք է բերել: Բոլորը եղան մի դասակարգի, էլ ոչ հարուստ կա, ոչ չունևոր, բոլորը հավասարվեցին... Հայերի ողջ հարստությունը քաղաքի բնակիչ մուսուլմանները թալանեցին: 18 ռաջաբ (1920 թ. 8 ապրիլի)»:

«Մշակ» թերթը մայիսի 9-ի թիվ 73 համարում զետեղում է շուշեցի մի կնոջ ապրիլի 5-ի նամակը: Ահա այն.

«Իհարկե դուք արդեն լսած կլինեք, թե մի քանի օր առաջ ճանապարհին ինչքան մարդ սպանվեց ու նաև Խանքենդի դեպքերը: Զարմանալին այն է, որ թուրք և հայ քաղաքացին միաբերան հավատացնում էին, թե Շուշիում ոչ մի բան չի պատահել: Եթե լինեն դեպքեր, կը լինեն միայն գավառում: Երեկոյան ես պատահեցի Գրիգոր Քալանթարյանին և հարց տվի, նա պատասխանեց, թե ոչինչ չի լինելու, նույնիսկ այս գիշեր թուրք-հայկական երեկույթ է կլուբում: Իրոք դեռ առավոտյան ժամը 6-ին կլուբում մի քանի թուրքեր շարունակում էին թուղթ խաղալ, մինչդեռ ասկյարներն արդեն մի քանի հայ տներ սրի էին քաշել: Առավոտյան ժամը 6-ին թուրքերը Գր. Քալանթարյանին տանում են իրենց թաղն, ու նա մնում է այնտեղ:... Քաղաքը այրվում է կազարմի մոտ, Կանաչ ժամի մոտ ու ներքևի

հանգստարանում: Երկու ժամում հրդեհը հասնում է մինչև ուպրավան:

Սրբազանին ու քահանաներին թուրքերը խլխլում են ու տունը այրում: Աթարբեկյանների, Խալունց, Ալխենքի ընտանիքները թիքա-թիքա են անում ու տան մեջ այրում: Սաքո Համբարձումյանի (բժիշկ) խորհուրդով երեխաների հետ դուրս եկանք:

Շատ քաղաքացիք Քարին տակով փախչում էին, թեև մահվան մի քանի դեպքեր էլ եղան: Երեկոյան հասանք Աղնախ, ուր գիշերեցինք, առավոտյան մեկնեցինք Չանախչի (Ավետարանոց), այնտեղից Թաղավարդ, ուր հյուրընկալեցինք Շուշուց փախած Նիկոլայբեկ Տեր-Մովսիսյանի աղջիկների մոտ»:

Նամակագիր տիկնոջ գիմնազիստ որդին ավելացնում է *«... Շուշիի հայ բնակիչների կեսը ոչնչացավ ամբողջ ընտանիքներով: Շուշին կործանվեց: Կիզիլ - Խաչից և Բաղունց - Նատիրից ազատվել են միայն երեք ընտանիք: Շատերին կենդանի այրել են: Մոտ 12 հազար հոգի հրաշքով ազատվեցին և առանց դրամի ու շորի գտնվում են գավառում: Երկու հազար հինգ հարյուր հոգի գերի ընկան, նրանց վիճակը հայտնի չէ»:*

Այսպես Շուշիի հայկական մասը «Հայոց փոքրիկ Փարիզը» ավերվեց, նրա բնակիչների կեսը կոտորվեցին, մյուս կեսը ցիրուցան եղավ աշխարհով մեկ, իր հետ տանելով հիշողությունն ու գեղատեսլի սարահարթով գոյատևած ու տաղանդի նյութով հարստացած գենային նյութը:

Ասկերանի գրավումից հետո ադրբեջանական հեծելազորի առաջապահը «Թաթարական հեծյալ խումբը» մտավ Շուշի: Այն առաջին հերթին հարձակվեց բանտում պահվող շուշեցի արհեստավորների, մտավորականների վրա և բոլորին անխնա մորթեցին: Ասկյարները շուտով դուրս եկան Շուշիի ծխացող հայոց մասից ու գնացին հարձակվելու Արցախի գյուղերի վրա:

Բերդի պարիսպների վրա տեղադրված հրանոթներից պարբերաբար կրակում էին դիմացի լեռնալանջերին փռված հայոց գյուղերի ուղղությամբ: Շուշիի հայկական և թուրքական մասերում փռված հայերի հազարավոր դիակների մի մասը ամփոփեցին եղբայրական գերեզմանոցներում: Մնացած մասը լցրին ջրհորները:

Այս եղեռնի, հրկիզման ողջ պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն Բաքվի մուսավաթական ղեկավարության, այլև Թուրքիա-

յի իշխանությունների վրա, որն իր սահմաններից դուրս ևս իրականացնում էր հայերի բնաջնջման քաղաքականությունը:

1920 թվականի սկզբներին մոլեռանդ մուսավաթական, և պանթուրքիստ Խոսրով-Բեկ-Սուլթանովը մի խումբ հայերի ազատեց բանտից և պատվիրեց հաղորդել Վարանդայի հայությանը, որ Բաքուն արդեն գրավել են 11-րդ Կարմիր բանակի զորամիավորումները և նրանց հրամանատարության առաջարկությամբ ինքը՝ Սուլթանովը, Շուշիի «Հեղկոմին» նախագահ է նշանակվել: Շուշիից եկած հայերը հայտնեցին, որ տեսել են Սուլթանովին Բաքվից Շուշի եկած ռուս զինվորների և Կարմիր բանակի ղեկավար մարդկանց հետ:

Ը մասի հղումների ցանկ

[1] «Մշակ», 1917, 23 փետրվարի:

[2] Հ.Թումյան «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում» 1917-29 թ թ,. Եր. Մատենադարան, ձեռագիր համ. 2:

[3] Бартольд В.В "Сочинения", т. 2, 1963, стр. 775

[4] Էնեաթուլլահ Ռեզա «Ազրեբայջան և Առան», Եր. 1994, էջ 32-33:

[5] Նույն տեղում, էջ 143:

[6] Քաղաքագլուխը նկատի ունի Մելիք-Շահնազարյան 2-ին:

[7] Արամայիս «Ղարաբաղի տագնապը», Երևան, 1993 թ., էջ 18:

[8] ՀՊՊԿԱ, ֆ 200, գ. 612, թ. 99:

THE MYSTERIES OF THE SHUSHI FORTRESS

(abridgment)

The author of this book visited Shushi on 9 May 1992, when shots were fired on all parts of the city. Shushi was in flames. The Armenian troops of Karabagh had taken the city from the Azerbaijanis that very day. For a long time the Azerbaijanis had been shelling the city of Stepanakert from the height of that key mountain outpost.

The author, seeing one of the cradles of Karabagh Armenians - the Shushi fortress, recalls all the manuscripts, lithographs and historical records and descending into the abyss of history solved the mysteries of the Shushi fortress.

While wandering in the concealed graveyard, the sight of the 19th century Shushi, ascending from the mist meet his eyes. He sees the flourishing and the grieving Shushi, its inhabitants, its cultural life, its poetry, its happiness and its tragedy.

The thirteenth century historiographer Kirakos Gandzaketsi gives evidence of the place Gargar-Karkarr, situated in Artsakh. He describes the visit of the Great Prince Hassan-Jalal to Batu Khan's son Sartakh. This delegation passed the Derbent gates (Chora Guard) in 1251. The son of the great general had adopted Christianity and patronized the Armenian princes;

"Sartakh accompanied him (the Armenian prince) to his father, honored him and granted control over his native Charaberd, Akana and Karkarr fortresses, which had seized the Turks and the Georgians', wrote Kirakos Gandzaketsi in his work "History of Armenia".

Charaberd is the settlement Jraberd, Akana is the Verin Khachen fortress, which are situated on the Tartarr river. Karkarr was later renamed Shushi. The name of the river Karkarr, flowing in the bottom of the fortress, derived from the name of the fortress Karkarr (heap of stone). The whole principality got the name Karkarr too. The Prince of Princes Hassan-Jalal had applied to the Mongol Khan for the three

stone). The whole principality got the name Karkarr too. The Prince of Princes Hassan-Jalal had applied to the Mongol Khan for the three fortresses, as they were the key mountain outposts without which he would not be able to rule over the whole of the Artsakh land. Thus, in the medieval period too Karkarr-Shushi played a great role in the defense system of the north-eastern Armenian territory - Artsakh.

The cultural and spiritual development of the region was connected with the Shushi fortress of the coming centuries. The handwritten books preserved in the Repository of Ancient Manuscripts in Yerevan prove that Shushi has always been the heart of the highlands. The abundant sources of 15th century are witnesses of the events that took place in Shushi and in Artsakh. A manuscript was created by the scribe Ter Manuel in 1428 in the Church of St. Avetaranots. It's a handwritten Bible in the colophon of which we read;

"Thus, this holy Bible of mine was written by sinner Ter-Manuel in 1428 in this village Shushi in Amaras, during the times of Catholics Ter-Hovhannes and the tyrant Iskandar, who is from the family of Torgom and a torturer of Christians. The God is almighty."

There is another handwritten Bible in the Repository of Ancient Manuscripts (Matenadaran), written in Shushi a 150 years later, in 1575, testifying that during all that period Shushi represented one of the most important cultural centers of Armenia.

The inscriptions on a number of cross-stones preserved in Shushi, give evidence of the active and lively life going on in the town. One of these cross-stones is found in the stone-made prison square of Shushi. The tombstones (cross-stones) served as building material for constructing the prison house and were ordered to be carried there from the Armenian graveyard of Shushi by the Azerbaijani authorities. This way they were trying to abolish all evidence of Armenian way of life in the town. The authors of Baku school have written several books on Shushi, where because of political considerations they seem to be oblivious of Shushi's Armenian past, insisting that the city was founded in the second half of eighteenth century when the chief of the Turkish nomads Panah Ali established himself in Shushi. It's a historical fact that in early eighteenth century Shushi was one of the six most important military - strategic posts in

had preserved its integrity due to its internal balance and sound nature. It managed to survive all the foreign incursions, preserving its independence of semi-independence. This territory was a great unit with its impregnable fortresses which could not be overcome or taken by force. When the country underwent weakening due to internal discordance and was conquered by foreigners, the rulers of Artsakh achieved a new status using their diplomacy. After a fateful political decision was taken in 387AD, when the Romans and Persians carved up Armenia between themselves, Artsakh, though cut off politically from Armenia, preserved the tradition of national sovereignty unbroken until the late medieval period. New principalities or kingdoms emerged on its territory. It was on this territory that the idea of recreating an independent national state arose in early eighteenth century to resist the attacks of the Turkish army and a powerful military system was established, to which the historiographers refer to as "Armenian Sghnakhs". General Avan was the military commander of that state and the political power was centralized in the hands of the Catholicos Yessayi Hassan-Jalalian, residing in Gandzassar. General Avan undertook to restore the Shushi fortress. The historical evidence dating from this period prove that the reconstruction of the fortress was finished in 1717.

The desire of national renaissance led the Karabagh country to look to Russia. The envoy of the Russian Emperor Peter the Great - Ivan Karapet was sent to Karabagh with the decree of the Tsar. He arrived in Shushi in December 1923. General Avan and Mirza reported about their submission to the Russian Empire. The military and the feudal lords of the region approached Russian authorities with a view of freeing Armenia from the forthcoming Turkish attacks. The latter intended to capture Karabagh in 1725, then advancing to Shamakhi and taking Baku with a sudden attack, drive the Russian forces out of the Caspian territories. At first the population of Varanda and their leader Melik Baghr II decided to avoid direct conflict with the Turkish army of 4700 men and take diplomatic steps. The Turkish soldiers were accepted and distributed among the thirty-three villages of Varanda. Two days later the mighty Turkish army was destroyed. In August 1725 the Turkish army, under the leadership of Sari-Mustafa,

Varanda. Two days later the mighty Turkish army was destroyed. In August 1725 the Turkish army, under the leadership of Sari-Mustafa, captured Gandzak. The next year, in summer, the Turks launched an attack on Shushi fortress. They were aware of the fact that once established in the heart of the Armenian mountain stronghold, they could easily assume control of the whole Karabagh. The battle for Shushi lasted eight days. At last, suffering great casualties, the Turks retreated. Their casualties were great in the Tartar valley too.

The Armenian hopes for the advance of the Russian army were frustrated. Time for the Russian advance into Transcaucasia had not yet arrived. Moreover, Russia concluded a treaty with the Turks granting them control over Transcaucasia, in return for the Caspian territories from Astrakhan to Resht.

Some years later the Armenian Sghnakhs collapsed. The Armenian meliks retained power over their mountain domains in the territory of the former Sghnakhs. The Shushi fortress was left to its fate. The petty melikdoms could not afford restoring and were not interested in keeping the fortress going. Besides, the fortress had lost its strategically importance, as the country was deprived of its integrity. The Shushi valley was turned to a farm-hours for the peasants of the neighboring Shosh village.

In second half of the eighteenth century the Varanda ruler Melik Shahnazar II, who had assumed power unlawfully, being at enmity with the neighboring melikdoms, came to an agreement with the chieftain of nomadic Turkish Sarujalu tribe Panah Ali and handed Shushi over to him. Melik-Shahnazar and Panah Ali undertook to restore the ramparts and the citadel of Shushi. The above mentioned events were described in the works of Mirza Jemal Jivanshir and Hakob Poghossian. Taking advantage of the weakening in the Persian power, Panah Ali exercised bribe-giving and received a Khan's title from the Shah of Iran which enabled him to rule over Karabagh. Having Melik Shahnazar as an ally and advisor in internal affairs Panah Ali and his son Ibrahim Khalil gradually assumed control of the whole of what was formerly Khachen and began extending their domain, conquering parts of neighbouring provinces, however, without succeeding in eliminating the Armenian melikdoms.

Military Academy and fighting in the seven-year-war in Europe. unable to bear the persecutions of the Catholicos of all Armenians Simeon Yerevantsi:, Emin left Caucasia for India.

In 1796 decisive political events took place in Shushi, which turned to be fateful for the whole of Iran. The Persian Shah Agha Muhammed Khan easily conquered the fortress. Ibrahim Khalil was forced to flee to Jar, where the Avars lived. On June 4 the Shah's servants Safar Ali and Abbas treacherously murdered him in his bedroom. The Persian army dispersed.

Then Shush became an arena of struggle between the two superpowers of the time - Russia and Iran.

The Russian troops entered Shushi in 1805. Karabagh became a base for Russia to launch an attack on Iran.

The Shushi fortress consisted of two parts. The lower town was occupied largely by Turkish speaking Tatars, while the higher town was Armenian and had a form of a fortress. The Ibrahim Khalil Khan, who was realizing his policy of cleansing the city of its native population, was murdered by the Armenians in 1806.

Russia's conquest over Karabagh was confirmed by the Russo-Persian peace treaty concluded at Giulistan (situated in Northern Karabagh) on October 12, 1813. Russia took over the greatest part of Transcaucasia, including Karabagh with the centre of Shushi.

In early nineteenth century Shushi became a flourishing trading centre. The development of it was spectacular, with the main trading houses controlling and directing the trade from their height. Owing its position on the crossroads of trading routes Shushi connected Siberia with Europe, India and Persia with Russia. The influential trading families Hakhumian and Taramian enjoyed great popularity not only in Karabagh. Shushi had become the second prosperous trading centre in Transcaucasia. The first was Tiflis.

The Armenians were traditionally settled farmers and enterpreneurs, the Tatars were originally semi-nomad stepherds, under leading military families, landlords or servants. In 1832 there lived 762 Armenian and 936 Tatar families in Shushi. 138 Armenians were engaged in trade, the rest were craftsmen.

lived 762 Armenian and 936 Tatar families in Shushi. 138 Armenians were engaged in trade, the rest were craftsmen.

The English traveller Lynch described the activity of the myssionaries in detail in his book.

In winter of 1821 the Catholicos of all Armenians Yeprem arrived in Shushi. The Persian Crown-Prince Abbas Mirza intended to transfer the seat of the Catholicos to the Tadem Monastery in Iran. The Armenian Catholicos was forced to move, but on his way to Iran, probably following the dictates of Nerses Ashtaraketsi, he turned back and went to Shushi. The prosperous merchant Markos Tarumian donated 8 thousand in gold to the Armenian Catholicos.

From 1827, with the arrival of missionaries from Basle who established a school and a printing press in the town, Shushi gradually became a flourishing centre of Armenian culture, the most important after Tiflis and Baku.

Obtaining a permission of setting up settlements of German refugees in Caucasia in 1822 in Petersburg, the Basle evangelists established themselves in Shushi to preach their religion among its mixed population of Christians and Muslims. The missionnaries aimed at converting the population of Muslim countries to Christianity. To realize this project the heads of the evangelical Church had organized the migration of the German Shivabs to Transcaucasia, where they hoped to find the Promised Land.

The Russian Emperor Alexander patronized the missionaries Zaremba and Dietrich. In the printing press, established in Shushi, they published Armenian books too.

Soon Karabagh was turned to an arena of struggle between the superpowers of the time - Russia and Iran. Taking advantage of the death of the Russian Emperor in 1825, the Persian Crown Prince Abbas Mirza considered the circumstances favourable to seize Transcaucasia from Russia. The Caucasian governor General Yermolov was engaged in suppressing the rebellion of Imam Shamil. The military commander Madatov, Armenian by origin, was still having rest in the North Caucasian health resorts. With an army of 60 thousand men Abbas Mirza crossed the border in Khudaperin and advanced to Shushi. There was only a division of 2700 soldiers and

successful due to the Armenian support. They themselves failed to win the favour of the Armenians and the Georgians, as didn't possess the ability of being diplomatic towards the above mentioned nationalities. Nadir Shah's policy did not teach them a lesson. The latter, as an able politician and diplomat, maintained good relations with the Armenian and Georgian nobility. Many princes entered his service and fought bravely against his enemies. His descendants had adopted the policy of pressure towards the Armenians, deprived them of their rights and privileges which led them to rise in arms against Persian authority. The Armenians of Shushi supported the Russian garrison of the fortress against the Persian force. All the attacks of the Persian troops were unsuccessful. Once again the fortress defended its population. The fortress was kept under siege for 48 days. Russian casualties were four dead and twelve wounded.

Arriving in Shushi, General Madatov mobilized an army of two thousand soldiers and moved to Gandzak. With his cavalry of five hundred, Grigor Bishop Manucharian joined his army. The Persian army suffered a defeat near Shamkhor. Abbas Mirza left Shushi and hurried to the help of his army. General Paskevich in his turn hurried to Madatov's help. The Persians were humiliated by another defeat near Gandzak. In 1828 the Russo-Persian Turkmenchai treaty was concluded, with which Iran admitted the Russian control over Transcaucasia. As a result of the Treaty Shushi lost its defensive importance.

In 1827 the Basle Evangelical College was founded. It had 130 students. After finishing the college, the educated young people opened schools in different parts of Karabagh. The Basle printing press published 11679 copies of Armenian, 728 Persian, 147 Turkish and 100 Hebrew books. The activity of the Basle missionaries lasted eight years. The following subjects were taught in their college: Armenian language, Arithmetics, Geography, Greek and English languages. Since 1835 all kinds of missionary activity was forbidden by the Caucasian governor. They were forced to leave Shushi two years later. But the seeds of education were already sown. New schools and printing presses were set up all over Karabagh. In 1838 the Metropolitan Bishop Baghdassar Hassan Jalalian undertook to

schools and printing presses were set up all over Karabagh. In 1838 the Metropolitan Bishop Baghdassar Hassan Jalalian undertook to establish the Shushi diocesan school. He bought the Basle printing press and continued to publish Armenian books.

The Armenian district of Shushi was famous for its five churches, among which the St. Astvatsatsin Cathedral was distinguished for its architectural originality. The Muslim district had three mosques, two of which bore the influence of the Persian architecture. The Great Mosque was designed and built by the Persian Kerbala Sefi Khan. The constuction of the mosque was completed in 1883.

The fortress was being restored and built without any general design, considering only the natural position of the districts. For example the floods of rain easily ran down across the Armenian district due to its natural high relief. The main highway of the city stretched from the Yerevanian Gates to the Gandzak Gates of the Tatar district, dictating the positioning of the other districts and markets. The private houses were built considering the positions of the main streets, a thing that was not considered in medieval Persian or Asian settlements. The gates, thresholds, decorative balconies, the arrangement of stones and the windows played a great role in forming and preserving the completeness of the Shushi streets. The Muslim and the Armenian districts were architecturally alike with the same vaults and thresholds as the building works in both districts, were carried out by the Armenian architects and workers. The public buildings too, even the mosques gave evidence of the Armenian architectural presence.

In mid-nineteenth century the third largest town of Transcaucasia was in Mountainous Karabagh: Shush, Yerevan, Baku and Gianja followed it. The 15 November 1846 issue of the German newspaper "Algemeine Zeitung" wrote, "The main town in Mountainous Karabagh, Shushi may be regarded as the Caucasian Jibraltar. it is situated on the crossroad of the trading routes, which lead to Iran, Turkey, Yerevan, Tiflis.... The Shushi merchants are present in Leipzig, Nizhegorodsk, Istanbul fairs."

The town was preponderantly Armenian, with a population of around 34 thousand in 1895. The silk thread produced here was sent to

to its schools and monuments, it became after 1848, when the first performance was given here, a centre for theatrical activity culminating. The first theatre was housed in the building of an old warehouse. This activity was undertaken by the Shushi young people studying in different European universities and arriving in their native town during their summer holidays. In 1865 the distinguished artists Gevorg Chmshkian, Mihrdat Amrikian and Sedrak Mandinian staged "Samvel", "Vardan Mamikonian" and "Mihrdat" in Shushi theatre. In 1891 a large, three-storeyed building of the new theatre was constructed here. Plays of Armenian, Russian and European dramatists were performed. The most prominent and educated literary dealers taught in the Shushi schools, Petros Shanshian among them. The famous Armenian writers Perch Proshian, the founder of the first school for girls, Ghazaros Aghaian, Makar Bishop Barkhutariants, the linguists Manuk Abeghian, Hrachia Acharian, Nikol Aghbalian, the ethnologist Yervand Lalayan and others taught in the diocesan school. Emphasizing past glories and lost statehood, these scholars recovered national historiographies and compiled the first modern dictionaries and grammars. They called for use of vernacular language, more specularized education and an appreciation of the people and nation. They educated a new generation of Armenian intelligentsia. The well-known benefactor Tadevos Tamirian brought the first kilometres long water-pipe for Shushi, constructing tens of springs in the Armenian and Muslim districts of the town.

In late nineteenth century the economical fame of Shushi began to decrease gradually. Being located a great way off the railway, it was unable to catch up with the flourishing centres situated on that line.

The "Armeno-Tatar War" of 1905 turned Shushi to one of the main scenes of the fighting. In July the Tatars attacked a bus on the important road between Shushi and Yerlakh, a station on the Batum-Baku railway line, and in August there were similar incidents both along the strategic road and in Shushi itself. The capital of the district was sacked and over 400 Armenian houses were burnt, the building of the Khandamirian theatre among them. After an interval of 12 years a new wave of inter-ethnic violence was set in motion. The Muslim nationalists were encouraged by the Turkish army, deployed in

new wave of inter-ethnic violence was set in motion. The Muslim nationalists were encouraged by the Turkish army, deployed in Transcaucasia. Mountainous Karabagh was kept under siege for four years. Countering the violence the Armenians organized a successful self-defence, under the prominent historian Hairapet Musaelian. In spring of 1918 Georgia, Azerbaijan and Armenia proclaimed themselves independent. The declaration of the Tatars marked the birth of a state whose name indicated a sympathy to Azarbaijan proper, which situated in Northern Iran and is geographically detached from the new Azerbaijanian state. The Tatar element, which gradually became the largest, took some time to forge the notion "Azerbaijani", which changed gradually from meaning "inhabitant of Azerbaijan" to Muslim inhabiting Azerbaijan", thus turning the ancient and large Christian minority into foreigners in the country.

The Turkish army, humiliated by defeat near Yerevan, advanced to Baku. They transferred the capital of the new Azerbaijan state from Giaja to Baku and organized the massacres of the Armenians here in September 1918. Thirty thousand Armenians were slaughtered during the three days of massacre. A new factor, the Great Britain, with its designs on Baku strategic oil appeared in autumn of 1918 and proved damaging for the Armenians. The British despatched an army under the command of General L.C. Dunsterville from Baghdad to Northern Iran. Deployed on the Caspian coast the British army soon took Ashgabad and Krasnovodsk. The autumn of 1918 marked the end of the World War I and the defeat of the Central Powers, including the Ottoman Empire, which signed the armistice of Mudros on 30 October, Turkey was to leave Transcaucasia. In accordance with the conventions between the Allies, the British were kept in charge of the Caucasus. Before finally driving out their forces, Turkey tried to seize the regions of Karabagh, Zangezur and Nakhichevan from Armenia to attach them to the newly established state of Azerbaijan. The main obstacle on their way was Karabagh. The Turkish General Nuri Pasha, a former Ittihadist, who had transferred his allegiance to Kemalism, arrived to support the attack on Karabagh, with an army of 40 thousand men. The British command began by calling on Karabagh Armenians to submit to Azeri authorities. At Baku the

Neither the protests of the Armenians of Karabagh, who refused to obey, nor those of the Armenian government had any effect. On the contrary, the British diplomacy proceeded to take new anti-Armenian measures. Faced with this situation, the Fourth Congress of Karabagh Armenians, meeting in Shushi, persisted on its refusal to submit to Baku.

In view of the gravity of the situation in August 1919 the Seventh Congress of Karabagh Armenians opened at Shosh, west of Shushi and against the will of the population of the region the Congress recognized provisionally the authority of the Azerbaijani government, pending the conclusions of the Paris Peace Conference, while preserving its governing bodies, in particular the Armenian Council. This decision of the Congress was a victory for Azerbaijan and also marked the zenith of a shady British policy, but it didn't put an end to the Azerbaijani violence in the region. On 23 March 1920 the Azeri army, after several days of violent fighting entered Shushi. The town was ransacked, thousands of houses were burnt down and the majority of the inhabitants massacred. The Tatars had Vahan Bishop and other Armenians dignitaries beheaded, after which their heads, carried on spikes were paraded throughout the markets of the region. The organizers of the destruction were the commander of the Turkish army Nuri Pasha and the representative of Britain and Azerbaijan Khosrov Bek Sultanov, who was the governor-general of Karabagh and the surrounding districts, including Zangezur. The Pan-Turkic ideology served as a theoretical base for the murderers.

After being Turkicized, Shushi was soon Sovietized. As to the problem of Karabagh, the Bolshevik Azeri leaders pursued the policy of their predecessors, affirming falsely that the region had formerly been under the authority of Azerbaijan. All the districts of Karabagh submitted to Baku with the help of the Soviet Power.

translated by G. Muradian

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

1. Երևանի Մատենադարան, ձեռագիր 8211 2. Երևանի Մատենադարան, ձեռագիր 1575 3. Ի Յակոբ սարկավագ Պողոսեան-Ջավարեանց- «Պատմութիւն գաւառին Արցախու», Երևանի Մատենադարան, ձեռագիր 2734:

4. Երևանի Մատենադարան, «Կաթողիկոսական դիվան 21, թղթապանակ 240:

5. «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ». Եր., 1955:

6. Մովսես Խորենացի,- «Հայոց պատմություն», Եր., 1990:

7. Կիրակոս Գանձակեցի,- «Հայոց պատմություն», Եր., 1982:

8. Մովսես Կաղանկատվացի- «Պատմություն Աղվանից աշխարհի», Եր., 1983:

9. Եսայի Ջալալյան,- «Պատմություն համառոտ Աղվանից երկրի», Շուշի, 1831:

10. Ռաֆֆի, «Խամսայի մելիքություն», «Երկերի ժողովածու», Եր., 1964:

11. Ալ. Երիցյան, «Ամենայն Հայոց կաթողիկոսություն և Կովկասի հայք», Թիֆլիս, 1894:

12. Լեո, «Հայոց պատմություն», հ. 3, գիրք 2, Եր., 1973:

13. Լեո, «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցի», Թիֆլիս, 1914:

14. Լեո, «Սյունիքից մի անկյուն», «Երկերի ժողովածու», հատոր 6, Եր., 1985:

15. Եր. Լալայան, «Վարանդա», «Ազգագրական հանդես», հատոր 2, Եր., 1988:

16. Աշ. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազգագրական մտքի պատմության», հատոր 2, Եր. 1959:

17. Մակար Բարխուտարյանց, Արցախ, Բագու, 1895:

18. Բ. Ուլուբաբյան, «Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության», Եր.,1981:

19. Ա. Գ. Աբրահամյան, «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից», Եր., 1953:

20. Գ. Նովիցկի, Է. Բուրջալով, «ՍՍՀՄ պատմություն (18-րդ դար) Եր., 1947:

21. Ս. Բարխուդարյան, «Դիվան հայ վիմագրության», պրակ 5-րդ, Եր., 1982:

22. Մ. Չամչյան, «Հայոց պատմություն», հատոր Գ, Եր., 1984:
23. «Վրացական ժամանակագրություն 1207-1318 թթ.», Եր., 1972:
24. Մատենաշար «Ազդակ», «Յովսեփ էմինի կեանքն ու արկածները», Պեյրութ, 1958:
25. «Դիվան հայոց պատմության», Թիֆլիս, 1908:
26. Մ. Ներսիսյան, «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից», Եր., 1956:
27. «Գաղտնիք Ղարաբաղի», Թիֆլիս, 1907:
28. Գ. Շահամիրյանց, «Ճանապարհորդություն Հայաստանումը», «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 30 սեպտ., 1877:
29. Մ. Թաղիադյան, «Գրական ժառանգություն», հատոր 9, ՀՀԳԱ, Եր., 1975:
30. Ս. Դ. Ավագյան, «Արցախը հայ մշակույթի կարևոր օջախ», Եր., «Գիտելիք», 1991:
31. Ռաֆայել Իսրայելյան, «Հոդվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ», Եր., 1982:
32. Գ. Նովիցկի, Է. Բուրջալով, «ՍՍՌՄ պատմություն (18-րդ դար)», Եր., 1947:
33. Ղ. Աղայան, «Երկերի ժողովածու», հատոր 4, Եր., «Հայպետհրատ» 1969:
34. Վ. Վաղարշյան, «Ընկերներս, բարեկամներս և ես», գիրք Ա, Եր., 1959:
35. Արամայիս (Միսակ Տեր-Դանիելյան), «Մի քանի գլուխ հայթուրքական ընդհարումներից», մաս 1, Թիֆլիս, 1907:
36. Հ. Թումյան, «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ.», Երևանի Մատենադարան, ձեռ. համ.2:
37. Էնեաթոլլահ Ռեզա, «Ազերբայջան և Առան», Եր., 1994
38. Արամայիս, «Ղարաբաղի տագնապը», Եր., 1993:
39. Բ. Կարապետյան, «Հարյուր տարվա երկխոսություն», Թեհրան, 1986:
40. Շ. Մկրտչյան, «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները», Եր.,1985:
41. «Գաղտնիք Ղարաբաղի», Թիֆլիս, 1907:

42. Г. А. Езов "Сношение Петра Великого с армянским народом", СПб, 1898.
43. "Памятники архитектуры Азербайджана" том 2, Баку, 1950, Али-Заде А. М., Саркисов А. В. "О некоторых архитектурных памятниках Шуши" (По материалам экспедиций, проведенных управлением по делам архитектуры про Совмине Аз. ССР).
44 Э. В. Авалов "Архитектура города Шуши", Баку, 1977.
45. Т. В. Гамкреладзе, Вяч. Иванов, "Индоевропейский язык и индоевропейцы, т 2, Тбилиси 1984
46. Соловьев, "История России", 1886, т. 8.
47. "Собрание актов", "Обозрение России...".
48. Мирза Джемал, "О политическом существовании Карабахского ханства с 1747-1805", Шуши, 1901.
49. Сегал, "Кавказский вестник", "Елисоветопольская губерния", Тбилиси, 1902, N. 1, Тб., 1902.
50. М. Д. Дживаншир "Карабах" Газета "Кавказ", Тб., 1855, N. 61-62.
51. Мирза-Адигезалбек "Карабах-наме", Баку, 1950
52. В. Арутюнян "Город Ани", Ер., 1964 г.
53. Э. Авалов "Присоединение Грузии с Россией", СПб, 1901.
54. Х. Геничутлинский, "Историко-географические и исторические очерки", Махачкала 1992, стр. 46, перевод с арабского Т. Айтберова.
55. "История войн и владычества русских на Кавказе" II т. "Собрание актов относящихся к обозрению истории армянского народа", М. 1833 г
56. В. Потто, "Первые добровольцы Карабаха", Тифлис, 1902.
57. Х.Ф.Б., Линч "Армения. Путевые очерки и этюды", Тб. 1910 г.
58 В.Потто, "Героическая оборона крепости Шуши", СПб, 1903
59. Генерал фон-Ключенау "Очерк военных действий на Кавказе 1818-1859 гг.", "Ежемесячное историческое издание", 1878, сентябрь.
60. "Обозрение Российского владычества за Кавказом" , ч. III, 1836 г., С. Петербург.
61. Барон Август фон Гаксгаузен, "Путевые впечатления и воспоминания Барона фон Гаксгаузена", С., 1857 г.
62. В. Верещагин, "Повести, очерки, воспоминания", "Из путешествий по Закавказскому краю", М. Сов Россия, 1990.
63. Ф Шушинский, "Шуша", Баку, 1968.
64. В В. Бартольд Сочинения т. 2, ч. 1, М., 1963.
66. «Բանբեր մատենադարանի», 1969, N 9:
67. «Նոր դար», N 75, էջ 3, Շուշի, 1886.

68. «Մշակ», թերթ, N 23, Թիֆլիս, 1887:
69. «Նոր դար», N 170, Շուշի, 1889:
70. «Արձագանք», Թիֆլիս, հունիսի 10, 1887:
71. «Մշակ», N 35, 1873:
72. «Մշակ», N 172, 1900:
73. «Նոր դար», N 154, 1891:
74. «Տարազ», N 5-6, Շուշի, 1910:
75. «Տարազ», N 22, Շուշի, 1891:
76. «Նոր դար», N 131, 1898:
77. «Մշակ», 23 փետրվարի, 1917:
78. "Кавказский вестник" Тифлис 1901, N 10, приложение 1901.
79. "Дагестанская правда" 6 января, 1994 г., N 2.
80. "Кавказ" 1896, N 249, стр. 52.
81. ГАФКЭ, ф. СРП, 1725, N 25.
82. Архив А. Н. СССР, ф. 99, оп 2.
83. ՀՊՊԿԱ 56-1-2199 թ. 1-2, 1847:
84. ՀՊՊԿԱ 56-1-3826, թ. 1-2:
85. ՀՊՊԿԱ 56-1-8413, թ. 3:
85. ՀՊՊԿԱ 56-1-2626, թ. 10:
86. ՀՊՊԿԱ 56-1- 415, թ. 2:
87. ՀՊՊԿԱ 56-1-415, թ. 3:
88. ՀՊՊԿԱ 56-1- 3818, թ. 1, 4:
89. Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի խաչան) արխիվ, «Շուշքաղաքին անցքերան» և հուշեր, ՀՀ Գրականության և արվեստի թանգարան, Երևան:
90. Տիգրան Նազարյանի արխիվ, ՀՀ Գրականության և արվեստի թանգարան, Երևան:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաս բեկ-111, 120
Աբաս-Միրզա-122, 125, 126, 128, 131, 133, 147,148, 153, 155, 156, 157, 157, 160, 161, 162
Աբբաս Ա-13, 20, 31
Աբդուլ-Ֆեթհ-111, 120
Աբեղյան Մ.-212
Աբեղյան, դեր.-214
Աբելյան Հ.-214, 239
Աբխազով, իշխ.-163
Աբովյան Խ.-190
Աբրահամ, հ-պետ-41
Աբրահամյան.-52, 102
Ադամյան Պ.-212
Ադիգյոզալբեկ Մ.-15, 105
Ադիլ, շահ-68
Ազադ խան-73
Աթարբեկյան, բժ.-231
Ալամդարյան -141
Ալավերդի, մելիք-70
Ալեքսանդր 1-ին -124, 146, 148
Ալեքսանդր, իշխ. -160
Ալեքսանդր Միխայլովիչ - 23
Ալիզադե Ա.-12
Ալի-ղուլի, բեկ -97
Ալի-Մուրադ, խան -96
Ալիջան -68
Ալի, սուլթան -30
Ալի փաշա -49
Ալմանդարբեկով Ի.-281
Ախունդով Մ. -213
Ահմադ, խան -126
Աղայան Ղ. - 211, 212, 223
Աղա Մուհամմեդ խան, շահ -105, 110, 111, 112, 115, 116
Աղասարյան Բ. - 211
Աղասի բեկ -89
Աղբալյան Ն.- 211
Աճառյան Հր. -8, 212
Ամիրխան, սարդար -160, 161
Ամրիկյան Մ. -204
Այվազյան Կ., եպ. - 221
Այվազյան Մ. - 251
Այտբերով Թ. - 103
Անդրանիկ, գեն. - 246. 251, 253, 258, 259
Անդրեասյան Հ. - 14
Աննա խաթուն - 65
Անտոն եպ. Մ. -135, 141
Անտոն, քհն. - 48, 50, 51
Աշարբեկով - 225
Աշոտ, եպ. -236
Աշրաֆ - 64
Ապրակսին Ֆ., գեն. - 37
Ապրես աղա -94
Առաքելյան Ն. - 14
Առաքել, քհն. -175
Ասկար, խան - 80
Աստվածատուր - 119
Ասրիբեկ Փ. - 123, 154
Ավագ Վարդապետ - 78, 86
Ավագյան Ս.Դ. -194
Ավալով Է.- 10, 52
Ավան,զորավար - 10, 23, 25, 25, 27, 29, 31, 33, 35, 37, 38, 40, 41, 42, 43, 46, 49, 50, 55, 57, 58, 59, 61, 77, 86, 106, 155
Ավետիսյան Ա. - 245, 270
Ավետյան Գր. - 239
Ավետ -39
Ավրամով Ս. - 37
Արամայիս -230, 233, 240, 269, 283
Արամյան Գ. վրդ. - 207
Արղության Հ., արք. - 83, 86, 91, 94, 110, 119
Արղուն - 67

Բ

Բագրատունի - 86
Բաթու,զոր. - 13
Բախտակ - 93, 111
Բակունց Ա. - 245
Բահաթրեանց Կ. - 206
Բահաթրյանց Վ..- 170
Բահաթրյանց Հռ. - 171
Բաղիր, մելիք - 40, 42
Բաղի, հպտ. - 58
Բաղեր, մելիք - 41, 49
Բաղրամյան Մ.- 89, 90, 91, 92

Բաղդասար Ջ., մետ. - 188, 207
Բայրոն - 188
Բարանովսկի - 227
Բարխուդարյան Ս. - 102
Բարխուտարյանց Մ., եպ. -16, 33, 102, 179, 180, 182, 195, 212, 214
Բարսեղ, քին. -69
Բարտոլդ Վ.. - 248, 283
Բեկնազար - 74
Բեհբուտով Լ. - 245, 253
Բեհթամ - 119
Բեյբութով Վ. - 129
Բիջան, խան - 155
Բյուղուրկ, Մ. - 128
Բյուրասպ Ջ. - 214
Բոգդանով - 151
Բուռնաշով - 99, 100,
Բուրջալով Է. - 102
Բուտկով Տ. - 102

Գ

Գազազյան Օ. - 239
Գակստգաուզեն, բարոն - 190, 195
Գամկրելաձե Թ. - 17
Գայանե - 65
Գառնակերյան Գ. եպ. - 221
Գենիչուտլինսկի - 103
Գիլանենց Պ. դի Ս. - 23, 47
Գոհար - 86
Գրիգորիս, սբ. - 183
Գրիգոր Տղա - 13
Գոգոլ - 213
Գոլիցին, իշխ. - 222
Գոլովին, կանցլեր - 19, 35, 51
Գոլովին, գեն. - 184
Գոլոշչապով, գեն. - 233, 235
Գուդովիչ, կոմս - 128
Գուլաղ, խան - 67, 102
Գուրգին, խան - 28

Դ

Դանիելբեկ Ջ. - 98, 169, 238
Դանիելյանց Ա. - 215
Դանիել, մելիք - 41
Դավիթ Բեկ - 34, 45, 46, 55, 60
Դեսում, իշխ. - 13
Դերժավին - 189
Դիտրիխ Ա. - 145, 166
Դոլգորուկով, իշխ. - 58
Դրո - 226
Դուբրովին - 132

Ե

Եգան, մելիք - 41, 65
Եկատերինա 2-րդ - 82, 94, 111
Եղիազար - 82
Եսայան Մ. - 251
Եսայի Հ. Ջ., կթղ. - 23, 24, 26, 32, 33, 35, 37, 39, 41, 43, 53, 59, 84, 102, 188
Եսայի, մելիք - 32, 79, 83, 94
Երամիշյանց Ավ. - 181
Երեմիա, կթղ.- 26
Երիցյան Ալ. - 164
Երմոլով, գեն. - 134, 140, 150, 152, 154, 155, 159, 162
Եփրեմ, կթղ. - 133, 134, 142

Զ

Զարեմբա Ֆ. - 145, 164, 166
Զարիֆյան Հ. - 214, 239
Զարոբյան Հ. - 222
Զաքարյաններ - 35
Զելինսկի Ա. - 185
Զուբով Վ., կոմս - 110, 111

Է

Էզով - 32, 53
Էմիլ-Ասլան, սարդար - 68
Էմին Հովսեփ - 85, 86, 87, 88, 89, 90
Էնեաթուլլահ Ռ. - 283
Էնվեր, փաշա -274

Թ

Թահմասպ շահ - 34, 44, 45, 50
Թադիադյան Մ. - 135, 136, 143, 144, 164, 181, 195
Թամիրյան Թ. - 185, 215
Թամրազ - 41
Թառումյան Ջ. - 135, 136, 140, 143, 153
Թառումյան Մ. - 135, 136, 143, 145, 164, 181, 195
Թարխան, հ-տ - 23, 24, 31, 34, 41, 43, 48, 61
Թարխանյան Ս. - 153
Թարխանյան Ռ. - 153
Թովմասեան Ավ. - 15
Թոփալով Խ. - 227
Թումյան Հ. - 243, 245, 246, 251, 257, 270, 279, 183

Ժ

Ժամհարյան Մ. - 229
Ժամհարյանց - 7, 182
Ժորժ Օնե - 213

Ի

Իբսեն - 213
Իբրահիմ, խան - 12, 81, 83, 85, 89, 90, 93, 102, 108, 112, 119, 120, 121, 126, 208
Իբրահիմ փաշա - 39
Իլյուշենկո - 157
Իշխանյան Եղ. - 251, 270
Իսրայել, կթղ. - 84, 92
Իսրայելյան Ռ. - 173, 195
Իսրայել Օրի - 19, 22, 23
Իսմի - 30
Իվանով Վլ. - 17
Իրաջ - 248

Լ

Լազարյան Ղ. - 163
Լազարյան Հ. - 82, 86, 94
Լազար- Ի.Դ. - 153
Լալայան Եր. - 8, 137, 195, 212
Լերմոնտով - 213
Լեո - 9, 20, 53, 54, 59, 102, 170, 176, 187, 189, 195, 200, 203, 208, 214, 223
Լեոպոլդ, կայսր - 19, 22
Լինչ - 145, 164
Լիսանևիչ Դ. - 120, 123, 126, 127, 128
Լիսենկո - 123
Լիֆտալի Զենդ, խան - 110
Լոսին Պ.Ֆ. - 217
Լուսավորիչ Գր. - 183

Խ

Խաքուտի - 153
Խաժակյան Գ.,- 212
Խալիլ փաշա - 277
Խանդամիրյանց Ա. Մ. - 184, 189, 216
Խանդամիրյան Հ. - 10, 73, 213
Խանդամիրյան Մ. - 189
Խան-Խոյսկի - 255
Խաչատրեան Հ. - 14
Խիտրով Մ. - 189
Խորենացի Մ. - 17, 52

Կ

Կաղանկատվացի Մ. - 29
Կարապետ, Իվան - 38, 39, 40, 42, 43, 44, 46, 47, 51, 56, 57, 58
Կարապետյան Բ.- 14, 52, 223
Կարապետյան Մ. - 195
Կարապետյան Ս. - 14
Կարա-Մուրզա Ք.- 221
Կարա-Քեշիշ - 68
Կարյագին, գնդ. - 122, 123, 157
Կիլ, գնդ. - 184

Կիրակոս Գանձակեցի - 13, 52, 183
Կոտլյարեսկի - 128, 129, 130, 157

Հ

Հաբսբուրգներ - 21
Հախում, յուզբաշի - 35
Հախումյան Բ.- 138, 174, 183, 184
Հախումյան Ս. -208, 214
Հախումյան Հ. - 200
Հախումյան Մ. - 7, 200
Հախումյաններ - 135, 171
Հակոբ Շեմախեցի, կթղ. - 86, 97
Հակոբ, հ-տ - 94
Հակոբյան Մ. - 214
Համամ, թագ. - 31
Հաջի Դավուդ - 29, 30, 33, 45, 55, 56
Հաջի Աղաբեկ - 149
Հաջի Աղազար - 151
Հաջիբեկով Որ. - 208
Հասան Ջալալ-Դոլա-13, 16
Հեյդար-Ղուլի, խան - 73, 77
Հերակլ - 69, 77, 86, 90, 91, 96, 99, 107
Հյուգո - 213
Հովհան - 87
Հովհաննես - 108
Հովհաննես Կարբեցի, կթղ. - 167
Հովհաննես Ջալալյան կթղ. - 84, 85, 88, 97, 135
Հովհան-Վիլհելմ - 19, 22
Հովհաննիսյան Ա. - 29, 241
Հովսեփ Իմաստասեր - 138

Ղ

Ղազար, գրիչ - 182
Ղազար Խաչատրյան - 62
Ղարաբեկյանց Խ., քհն.- 189
Ղովտ - 212
Ղուկաս կթղ. - 98

Մ

Մահմեդբեկով - 226
Մանթաշյան Ալ. - 232
Մատյուշկին, գեն. - 48, 49
Մարկոս, վրդ. - 13
Մեհմանդարով - 245
Մելիք Աբով Գ. - 94, 96, 97, 100, 102, 118
Մելիք-Ավանյան - 99
Մելիք-Ալավերդի - 94
Մելիքյան Սպ. - 212
Մելիք-Բախտամ - 94, 96, 97, 99
Մելիք Բաղիր Բ - 30, 31
Մելիք-Իսրայելյան Ալահ-ղուլի - 66, 77, 78
Մելիք Հաթամ - 78, 92
Մելիք Հովսեփ - 89, 92
Մելիք Հովսեփյան Աշ. - 245
Մելիք Մեջլում - 94, 96, 97, 100, 102, 105, 110
Մելիքյան Յ. - 231
Մելիք-Շահնազար Բ - 71, 72, 80, 83, 94, 100
Մելիք-Շահնազարյան Ա - 8
Մելիք-Շահնազարյան Ջ. - 280
Մելիք-Շահնազարյան Մ. - 245
Մելիք-Շահնազարյան Գ. - 258
Մելիք-Շահնազարյան Ս. - 261
Մինաս Վարդապետ - 19
Միրզաթահիր, վեզիր - 27
Միրզա, հ-տ - 41, 42, 49
Միհրալիբեկ - 81, 82
Միսայելբեկ - 94
Միրզախան- 83, 94
Միրզա-Ջամալ Ջ. - 10, 13, 102, 103
Միր-Մահմուդ - 30, 38, 64
Միր-Վեյս - 28
Միքայելյան - 258
Միքայելածե - 226
Մխիթար - 109
Մկրտչյան Շահեն - 16, 195
Մոնկ-Մեզոն - 262, 270
Մովսես բեկ - 217
Մուրթուզ ղուլի - 105
Մուսայելյան Հ. - 212, 245

Մուստաֆա խան - 100

Յ

Յաղուբ (Հակոբ)- 113, 114, 116, 117
Յարամիշյան - 213
Յուզբաշյան Ռ. - 231

Ն

Նադիր շահ - 65
Նազարյան Ստ. - 141
Նազարյան Տ. - 215, 240
Նազիմկո - 151, 156
Նակաշիձե - 225
Նաջաֆկուլի - 233
Նեսսելլրոդե Կ., կոմս - 140
Նեսվետա-, գեն. - 125
Ներբելսին, գեն. - 127
Ներսես, աղվ. կթղ. - 38, 84,
Ներսես Աշտարակեցի կթղ. - 119, 134, 140, 141, 142, 148
Ներսիսյան Բ. - 227
Նեֆոդե Ն. - 185
Նիկոլայ 1-ին - 148, 162
Նովիցկի Գ. - 102
Նպերլինգ - 213
Նուրի փաշա - 251, 253, 255, 273
Նուցուլ Մ. - 82

Շ

Շախտախտինսկի - 226
Շահամիրյանց Շ. - 91, 132
Շահան - 35
Շահթահմասպ - 31, 34, 37
Շահին փաշա - 49
Շահնազարյան Ա. - 212, 262
Շահնազարյան Ջ. - 180
Շահնազարյան Ռ. - 274
Շահնավազ (Բակուր) - 33
Շահսնան - 162
Շահվերդի խան - 77, 84, 87, 89
Շահումյան Ստ. - 250, 252
Շահումյանց Վ. - 210
Շամիլ իմամ - 148, 154
Շամխալ օղլի - 33, 39
Շապան - 176
Շանշյան Պ. - 7, 199, 201, 203, 206, 207, 212
Շատելվորտ - 262, 267, 268
Շաֆիբեկով - 227
Շեկ Գրիգոր - 63
Շենկերեյն - 210
Շերեմետ- - 19
Շեֆի փաշա - 247
Շիլլեր - 214
Շիրմազանյանց Գ. - 113, 114
Շիրվանզադե - 213
Շիրվան, հ-տ - 31, 33, 34, 41
Շիրվանով - 39
Շուշինսկի Ֆ. - 203, 223
Շուքուր Ուլլահ - 121

Ո

Ոսկանյան Ա. - 239

Չ

Չալաբի - 48, 58
Չամչյան Մ. - 103
Չեխով - 213
Չելյա- - 149, 150, 155, 159
Չերքեզենց - 7, 8
Չիլինգարյան Ա. - 212
Չմշկյան Գ. - 203
Չոբան Յաշամ - 47

Պ

Պասկևիչ, գեն. - 163, 164
Պավել 1-ին - 111
Պատվականյանց Մ. -181, 182
Պարոնյան Հ. - 213
Պաուչուլի, մարկիզ - 129
Պետրոս Մեծ - 21, 22, 28, 33, 36, 37, 38, 39, 43, 47, 50, 82
Պետրոսյան Ա. - 245

Պերճ Պռոշյան - 7, 200, 203, 212, 223
Պիտտ - 86
Պոլուզյան Մ. - 208
Պողոս վրդ. - 167
Պողոսյան Հ., գրիչ - 10, 52, 102, 132
Պոտյոմկին Գ. Ա., իշխ. - 82, 95
Պոտյոմկին Պ., գեն. - 95

Ջ

Ջալալ-բեկ - 98
Ջալալյան Բ., մտրպ. - 98, 163, 168, 169, 209
Ջալալյանց Ս. աղվ. կթղ. - 142, 158, 162
Ջալալյանց Ս. արք. - 207
Ջալալով Մ. - 221
Ջամիլ-Ջայիդ բեյ - 255
Ջավադ խան - 33
Ջաֆար - 68
Ջաֆար-Ղուլի - 105, 127, 128, 146, 190
Ջիվանշիր խան - 255
Ջհան-Բախշ -100
Ջումշուդ, մելիք -100, 118, 122

Ռ

Ռեուտ Ի.Ա. - 149, 150, 152, 153
Ռիջինալդ Հ., եպս. - 144
Ռոզեն, բարոն - 167
Ռոստոմ, մելիք - 94, 100
Ռտիշչև, գեն. - 130, 131
Ռուզան Ջ. - 213

Ս

Սաղըխ խան - 115
Սալահ փաշա - 49
Սալլաթյան - 166, 188
Սահիպ խան - 135
Սահլ Սմբատյան - 29
Սայաթ-Նովա - 110
Սավոյեցի Եվ. - 21
Սարգիս - 31
Սարգիս, հ-պտ - 40, 43
Սարգսյան Լ. - 220, 221
Սարը Մուստաֆա, փաշա - 55, 56, 65
Սարթախ - 13, 102
Սարկիսով Ա. - 12
Սարուխան - 35
Սարուխանյան Մ. - 230
Սարուջայ Ա. - 67
Սաֆար Ա. - 115, 117
Սաֆրազյան - 213
Սեզալ - 68, 102, 192
Սելիմ խան - 122, 125
Սերվանտես - 214
Սեֆի Ա., շահ - 174
Սեֆյաններ - 20, 248
Սիամանթո - 212
Սիմեոն - 26, 39, 98
Սիմեոն Եր. կթղ.-87, 88, 91
Սիրանույշ - 214
Սուլեյման փաշա - 96
Սուլթանով Խ. -246, 273, 275, 277
Սուլթանով Ս. - 252
Սուլթան-Հուսեին, շահ - 27
Սունդուկյան Գ. - 213
Սուվորով - 91, 94, 95
Սուրխայ Շ. - 30, 33, 39
Սև Աբով, մելիք - 69

Վ

Վախտանգ, թգվ. - 33, 34, 37
Վահան, եպ. - 242
Վաղարշակ, թգվ. - 17, 29
Վաղարշյան Վ. - 228, 239, 240
Վանանդեցի Ա. - 205
Վանի (մելիք) - 123, 124, 129, 130, 141, 157, 162
Վարդան Մամիկոնյան - 206
Վարդանյան Լ. - 241
Վարդխաթուն - 94
Վաչագան Բարեպաշտ, թգվ. - 76
Վարուժան - 212
Վեզիրով Ա. - 226
Վերեսչագին Վ. - 190, 196
Վեքիլ Քերիմ խան Զենդ - 79

Վոլինսկի Ա. - 28
Վորոնցով-Դաշկով կոմս-222, 233

Տ

Տակայաշֆիլի - 226, 230
Տեր-Աստվածատրյան Մ. - 251
Տեր-Ավագյան Վ. վրդ. - 138, 188
Տեր-Ավետիս - 46
Տեր-Բաղդասար քհն. - 144
Տեր-Գաբրիել - 90
Տեր-Գրիգորյան եպ. - 272
Տեր-Դանիելյան Մ. - 274
Տեր- Հակոբյան - 204
Տեր-Հակոբյանց Ս. - 181
Տեր-Հովհան - 13
Տեր-Հովհաննես - 14
Տեր-Մանուել գրիչ - 175
Տեր-Միքայելյան Ա. - 212
Տեր-Պողոսյան Ա. - 212
Տերտերյան Ա. - 208
Տիգրան Մեծ - 102
Տմբլաչի Խաչան - 215
Տոլստոյ Պյոտր կոմս. - 37
Տոնմազ - 60
Տոնոյան Ա. - 212
Տորմասով գեն. - 128

Ր

Ռաֆֆի - 60, 102, 132, 210, 214, 223

Ց

Ցիցիանով - 119, 120, 121, 123, 124, 126

Ու

Ուլուբաբյան Բ. - 53
Ուլ Իսլամ շեյխ - 230
Ումմա խան - 91, 110
Ումցի օղլի - 39

Փ

Փանահ Ալի - 8, 10, 11, 13, 66, 67, 68, 69, 71, 72, 78, 80, 81, 93
Փանի հպտ. - 43
Փարվազյան Մինաս (արք.) - 36
Փիր - 122
Փիրյանց Հ. - 215

Ք

Քամալյան Ա. - 275
Քյազիմ փաշա - 273
Քյալբլահ բեկ - 50
Քյալիմ խան - 77
Քյոխվա Ջալաբի - 39, 50
Քիան, թագ. - 248
Քրիստոս - 11, 36, 40, 41, 88, 145, 181

Օ

Օզերովսկի - 231
Օղուրլու խան - 36
Օմար փաշա - 47, 49
Օստրովսկի - 213

Ֆ

Ֆազլ-Ալի - 66
Ֆաթալի խան - 80, 81
Ֆաթալի խան - 96
Ֆաթալի խան - 118
Ֆիշեր - 208
Ֆիրդուսի - 214
Ֆրեյդուն - 248
Ֆոն-Կյուգենաու Կ. - 154, 155, 156, 159

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Ագուլիս - 74, 276
Ագուլեցոց եկղ. - 10, 136, 173, 180, 227
Ադրբեջան - 247, 248, 255, 259, 261, 274
Ազար-Գուշասպ - 247
Ազովի ծով - 21
Աթուրփաթ - 247
Ալեքսանդրապոլ - 246
Ալթայ - 76
Ախալցխա - 96
Ախալքալակ - 129
Ականաբերդ - 13
Աղավնո գետ - 252
Աղդամ - 81, 152, 227, 251, 279
Աղվանք - 26, 30, 45, 76, 84
Աղվե - 76
Ամարասի վանք - 78, 97, 98, 129
Անատոլիա - 17
Անդրկովկաս - 27, 41, 45, 63, 74, 110, 142, 220, 224
Անգլիա - 22, 58, 85, 86
Անի - 76
Աննեֆելդ - 146
Առան - 17, 29, 66, 247
Ասլանդուզ - 150
Ասկերանի ամրոց - 76, 106, 127, 128, 229, 230, 231, 242, 279
Աստրախան - 22, 29, 36, 39
Ավետարանոց - 24, 31, 35, 41, 63, 70, 138, 141, 159, 282
Ավստրիա - 19, 22
Ատրպատական - 27, 72, 80, 93, 105
Արարատ լեռ - 213
Արարատյան դաշտ - 17, 102, 163, 210
Արարատյան նահանգ - 37
Արաքս գետ - 17, 29, 45, 66, 99, 119, 121, 122, 125, 126, 129, 247
Արցախ - 8, 20, 23, 26, 27, 30, 37, 40, 41, 46, 47, 55, 60, 65, 69, 72, 83, 85, 116, 154, 163, 256, 272, 274
Աֆղանստան - 28

Բ

Բազել - 145, 166
Բաթում - 257
Բալախան - 225
Բալթիկ ծով - 22
Բաղդադ - 67
Բաղանիս - 68
Բաղունց Ձոր - 230
Բայազետ - 247
Բանանց - 110
Բաքու - 36, 48, 55, 95, 96, 121, 126, 162, 186, 193, 220, 224, 257, 274
Բելական - 171
Բերդաձոր - 231, 254, 255
Բյուզանդիա - 76
Բոլնիս - 118
Բորչալու - 37, 66, 118
Բրեստ - 246

Գ

Գանձակ (Գյանջա) - 27, 28, 30, 33, 34, 35, 36, 40, 46, 55, 63, 78, 84, 85, 98, 100, 103, 117, 129, 138, 141, 142, 156, 171, 182, 186, 204, 226, 233, 252,
Գանձասարի վանք - 24, 26, 32, 47, 50, 67, 84, 85, 138, 141, 168
Գարդման - 23, 110
Գարուն գետ - 121
Գեղարքունիք - 37
Գետաշեն - 251
Գիլան - 49
Գյումրի - 246
Գյուլաթաղ - 94
Գյուլիստան - 19, 26, 32, 34, 40, 42, 78, 92, 95, 279
Գոթա - 206
Գողթան - 171, 276,
Գորիս - 79, 134, 151, 210, 215
Գտչաբերդ - 73

Դ

Դաղստան - 131
Դարալագյազ - 252
Դերբենտ - 13, 30, 31, 48, 81, 96, 110, 131
Դիզա գյուղ - 141
Դիզակ - 30, 34, 41, 43, 65, 70, 94, 95, 174, 272, 279
Դիզափայտ գյուղ - 141
Դիլիջան - 246, 292

Ե

Ելենենդորֆ - 146
Եվլախ - 192, 226, 233, 242
Երզնկա - 246
Երից մանկաց վանք - 26, 38, 92
Երուսաղեմ - 36
Երևան - 37, 73, 126, 133, 186, 209
Երևանյան դարպաս - 7, 17

Զ

Զաբուղ - 251, 253
Զագամ գետ -160
Զակամ - 183, 254
Զանգեզուր - 209, 217, 244, 252, 254

Է

Էջմիածին - 84, 142, 167, 207
Էրզրում - 246, 247

Թ

Թաբասարան - 102
Թադևոսի վանք - 133
Թալ - 111
Թալիշ - 105. 131
Թալիշ գյուղ - 69
Թաղասեռ - 174
Թառնակյուրտ - 102
Թաղլար - 167
Թավրիզ - 27, 73, 79, 158, 159
Թարթառ բազար - 94, 131, 147, 251
Թարթառ գետ - 30, 79, 117, 125
Թեհրան - 115, 118
Թեոդոսիա - 182
Թթոտ գյուղ - 43
Թիֆլիս - 8, 13, 34, 37, 40, 46, 86, 107, 119, 121, 146, 154, 160, 189, 217
Թուխխանա - 8, 79, 137, 198, 208, 217, 227, 228, 241
Թուրան - 248
Թուրքիա - 21, 22, 23, 26, 37, 45, 46, 47, 58, 64, 76, 252, 256, 274
Թուրքմենչայ - 171

Ի

Իմերեթիա - 125
Իսպանիա - 22
Իրան - 20, 29, 36, 37, 65, 76, 87, 116, 248

Լ

Լազարյան ճեմ. - 141, 167, 199
Լայպցիգ - 193, 206
Լեհաստան - 19, 21, 22
Լեմնոս - 257
Լենքորան - 131, 168
Լիոն - 193
Լիսագոր - 7
Լիտվա-19
Լոնդոն - 85
Լոռի - 44, 118

Խ

Խալիփլու - 231
Խանապատ - 229
Խանքենդի - 217
Խաչեն, իշխ.- 182, 183

Խաչեն գետ - 28, 43
Խնձրիստան - 71
Խոխանաբերդ - 32
Խոյ - 96
Խորասան - 66, 102
Խրամ գետ - 34
Խրամորք - 229
Խուտաֆերին - 111

Ծ

Ծար - 99
Ծիրանաքար - 141
Ծմնավանք - 68

Կ

Կազիկումիխ - 33
Կախեթ - 86
Կալկաթա - 91, 144
Կանաչ ժամ եկղ. - 176
Կասպից ծով - 36, 40, 48
Կարապետի վանք - 87
Կարյագինո - 244, 251
Կարկառ բերդ - 13, 25
Կաչաղակաբերդ - 24, 29, 32
Կաֆա - 182
Կիլիկիա - 76
Կինյան Ռուսիա - 21
Կողք - 110
Կոստանդնուպոլիս - 21, 193
Կովսական - 99
Կովկասյան լեռներ - 30
Կուսանաց անապատ -10
Կուսանաց վանք - 198
Կուսապատ - 124
Կուր գետ - 17, 29, 30, 33, 46, 66, 102, 122
Կուրակ գետ - 125

Հ

Հագարի գետ - 252
Հաղբատի վանք - 142
Համադան - 85
Հայաստան - 19, 20, 22, 35, 36, 37, 71, 72, 76, 82, 83, 85, 86, 87, 91, 145, 167, 171, 247, 252, 277
Հայդեբերգ - 206
Հայկական լեռնաշխարհ - 17, 20
Հայոց Սղնախներ - 19, 23, 24, 29, 34, 41
Հավապտուկ - 32
Հերաք - 110
Հնարակերտ - 29
Հնդկաստան - 85, 91, 135, 144, 145
Հռոմ - 199
Հոլանդիա - 22
Հունոտի կիրճ - 25, 43, 106, 153, 155

Ձ

Ձորագետ - 69

Ղ

Ղազախ - 66, 160
Ղազարխ - 94, 99, 100, 163
Ղազանչեցոց եկղ. - 9, 136, 175, 180, 181, 213
Ղազանչի - 55
Ղազվին - 32
Ղայբալու - 232, 233, 272, 273
Ղանավուզ - 194
Ղանդահար - 27, 110
Ղարաարխ(ղոչղար) գետ - 35
Ղարաբաղ - 13, 29, 55, 81, 82,93, 96, 99, 102, 116, 121, 125, 147, 157, 158, 168, 222, 258, 259
Ղարադաղ - 77, 93, 96, 121
Ղարաղշլաղ - 231
Ղապրթլու - 55
Ղափան - 34, 45
Ղզլար - 38
Ղուբա - 131

Ճ

Ճորա պահակ (Դերբենտ) -36

Մ

Մադրաս-92
Մազանդարան - 61
Մազրա - 31
Մալիբեյլու - 231
Մաղարթու վանք - 113
Մարաղա - 126, 163
Մարաղա գյուղ - 163
Մարաստան - 248
Մարսել - 213
Մելիք - 68
Մեծ Կողմանք - 24
Մեծ Հայք - 102
Մեծ Շեն - 24, 210
Մեծ Սղնախ - 46, 49
Մեղրեցոց եկղ. - 10, 180, 183
Մեղրի - 74, 76, 128
Մեյսարու վանք - 39
Մինգրելիա - 125
Մինգեչաուր - 28, 77
Մլզնաբերդ - 23
Մոկաց լեռներ - 230
Մոսկվա - 19, 48, 141, 157, 166
Մռավ - 251
Մուդրոս - 257
Մուխանք - 30, 66, 105
Մուշ - 87

Ն

Նազաբադ - 19
Նախիջևան - 73, 77, 96, 121, 210, 252
Նախիջևանիկ - 229
Ներսիսյան դպրոց - 141, 199
Ննգի - 218
Նոր Ոսկեպար - 68
Նոր Պիպիս - 68
Նոր Ջուղա - 82
Նուխի - 105, 125, 168

Շ

Շահաղբյուր - 71
Շահկերտ - 73, 74, 136, 213
Շամախի - 19, 22, 28, 30, 35, 37, 40, 45, 47, 49, 51, 55, 69, 81, 90, 100, 105, 119, 138, 160, 183, 214
Շամիրաբերդ - 76
Շամշադին - 99
Շաքի - 47, 66, 68, 71, 119, 122, 125, 126, 131, 138, 146, 171, 183
Շամքոր - 28, 160, 161
Շատախ - 230
Շապին-Գարահիսար - 252
Շիկաքար բերդ - 24, 28, 29, 56
Շիրազ - 80
Շիրվան - 23, 25, 37, 45, 66, 68, 69, 71, 118, 126, 131, 146, 151, 171
Շնհեր - 46
Շորագյալ - 131
Շոշ - 10, 14, 63, 155, 156
Շվեյցարիա - 145

Ո

Ոսկանապատ - 28
Ոստան - 76

Չ

Չայլու - 164
Չանախչի - 149
Չանկաթաղ - 55
Չարաբերդ - 13
Չինաստան - 23, 144
Չոլակ - 34

Պ

Պարսկաստան - 19, 20, 22, 26, 27, 28, 35, 36, 37, 38, 45, 61, 62, 64, 102, 105, 122, 146, 148, 158, 163, 164, 167, 171, 247

Պարտավ - 28, 29, 31, 56, 163, 182
Պետերբուրգ - 40, 51, 58, 61, 82, 91, 118, 145, 211, 224
Պֆալց - 19, 22

Ջ

Ջավախք - 93
Ջար (Ջար) - 87, 93, 111, 117, 125, 171
Ջդրդուզ - 106, 153
Ջեբրայիլ - 122, 16
Ջերմուկ (Ճրմոկմը) - 124
Ջիվանշիր - 66, 244, 274
Ջրաբերդ (Ջարաբերդ)- 10, 13, 19, 23, 32, 34, 43, 60, 66, 70, 72, 92, 94, 95, 105, 124
Ջրվշտիկ - 86
Ջուլֆա - 210

Ռ

Ռեշտ - 36, 62
Ռուսաստան - 19, 22,, 45, 86, 89, 127

Ս

Սալյան - 47
Սալյանի վանք - 41
Սարդարապատ - 247
Սարիբեկ - 16
Սարու Թորփախ - 30
Սբ. Հակոբավանք - 138
Սբ. Աստվածածին եկղ. - 140
Սիբիր - 135, 162
Սիս - 76
Սիսիան - 79, 245, 246
Սյունիք - 46
Սղնախ - 29, 30, 31, 34, 38, 39, 45, 47, 49, 59, 60
Սղնախ գյուղ - 282
Ստամբուլ - 224
Ստեփանոսի վանք - 113
Սևանա լիճ - 135, 121

Վ

Վան - 17, 76, 230
Վարանդա - 30, 31, 41, 43, 49, 182, 272
Վարարակն - 80, 217, 270
Վենետիկ - 193, 199
Վերին Դաչեն - 13, 16
Վիեննա - 199, 206
Վրաստան - 21, 28, 35, 36, 37, 119, 183, 247, 277

Տ

Տաթև - 79
Տաթևի վանք - 133, 134
Տիգրանակերտ - 102, 123
Տիսսա - 21
Տող - 24, 99

Ց

Ցորաբերդ - 24

Ու

Ուրմիա - 17, 80, 96, 252

Փ

Փառուխ -28
Փառիսոս - 110, 251
Փարիզ - 199, 213, 276
Փոքր Սղնախ (Շուշի) - 37

Քաշաքաղ - 99, 134
Քելբաջար - 99
Քթեշ բերդ - 19
Քիրս լեռ - 118

Օ

Օրդուբադ - 19
Օձնաբերդ - 76

Ֆ

Ֆրանսիա - 22, 58, 187

Շուշիի վավերագրերը

Նոր Զո-ղայի Մարդենապարանում պահվող նամակները

Երբ ես 1996 թ. Նոր Զո-ղայի (Պահան, Իրան) Մարդենապարանի գնօրեն Լեռան Մինասյանին հայրենեցի, որ արդեն ավարտում եմ Շուշի քաղաքամայրի մասին գիրքը, նա իմ առջև դրեց անցյալ դարում Շուշիից Նոր Զո-ղա ուղարկած իններ նամակ: Դա հաճելի անակնկալ էր ինձ համար: Առաջինը 1831 թվականին Սալոն Հակոբ Յուզբաշյան Ընտրելյանցի նամակն էր Նոր Զո-ղայի թեմի առաջնորդին: Շուշեցին խնդրում էր գեղեցիորեն հաղորդել իր հորեղբոր՝ Մելիք-Հովհաննեսի մասին, որից մի ամբողջ դարի ոչ մի լուր չունեն: Հաջորդ նամակները գրվել են 1859-1870 թթ., որոնց մեջ առանձին հեգնավերբերություն են ներկայացնում շուշեցի Համբարձումի Հախումյանի նամակները՝ հասցեագրված բեմի առաջնորդին: Այս հավաքածուի վերջին նամակը գրվել է 1902 թվականին, Կոնստանդնուպոլսի անդամ Գրիգոր ավագ քահանա Հովհաննեսյանի կողմից, ուղղված Նոր-Զո-ղայի թեմի առաջնորդ Տեր-Մահակ արքեպիսկոպոս Այվազյանին: Շուշեցի եկեղեցականը խնդրում է հաղորդել Շուշի քաղաքի Մարդոսի ճշգրիտ պաշտոնը՝ խառարյա՞նց է, թե Բաղդասյան:

Այս վավերագրերը առանձին արժեք են ներկայացնում, քանի որ 1920 թ. Շուշիի հրդեհի ու կողոպտի պատճառով Կոնստանդնուպոլսից ոչինչ չի երկվել:

Ա. Ն. Գ.

ԱՐՔԱՅԵՏԻՆ
ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱ
ՀԵՏՈՑ
ՂԱՐԱԲԱՂՈՒ

2 Հոկտեմբեր 1905 թվականի

№ 351

Դ. Ք. Եռաշիր

Պարոնայք 351 համարի

Հարգելի Հայոց Պատրիարքարանի Բարձր Սրբազան Տ. Մատթեոս Արքեպիսկոպոսի Այվազյան՝ ի Զո-ղա-Սպահան.

Շուշի քաղաքի վերաբերեալ ի թեհրան Լեռան Յովսեփեանցի թղթակցութեան թղթատարից ի 5 Հոկտ. 1902 ամի, ուր վերջացուցեալ է թարգմանութիւն Ձեր խնդրելոյ ի Ցուցակագրքեան վասն թարգմանչաց վենետիկ, թվին Տերոյ ի 1864-66 ամեան. ի Հարութիւնեան Տպարանս յորոյ գրեալ գրեցեալս թեւառ ապ ամագրեալս Տերոյ ի 1865 ամի, ապա գտանումն Ձեր ասա ապրեալ:

Այդ ինչ բան օրինի պարոյ կ՝ խնդրարարեալ Տանուցանել ի թղթակ. Պիտանաս Տարեցոյց (Ալմանակ) թերթատարեալ 60 կանգնոց ապրանքաբանաս. և գնում կրկին գրագրեալ, թեթ ուշնաց

Դ. Ներսես աղայի,

Հոկտ. 18-ին 1859

Իմ հարգելի Սիրելի աղա՝

Ղարաբաղի Հայոց ա-

ղայության Լոնդոն.

Ի հարցեալ ձեզանէ՝ անասնոց ուսումնոյ՝ ասիոյ մասին սիրելի Լոնդոնեան՝ Ի Բաքու՝ Իմ հարգելի Սիրելի աղա՝ Ասիոյ ասպետին՝ անդնդոտ ամենայն՝ Ղարաբաղի Հայոց՝ Ղարաբաղի Հայոց՝ Ղարաբաղի Հայոց

Գրագիր.

Հարգելի Սոֆիկյան

Ծռեղ
1860

Ես Սոֆոյ Սոֆիանց.

Հայրի հոգիներին խաղաղություն (1)

Ողջույն օրհնություն և սիրո

Նեռը մեզ Գիլիի հայոցագրությունը լուսաբերին, մեր Գիլիերի գնալիս լուսաբերին և նրանից հայրական մեր և նրանց հոգերց, անխնայ ի միտիրը մեր տեղը. մի գնաս, (2) իմանալ մեր (3) իմանալ ի 23 հունվարի 1850-ից տարի է, ոչ գիտեմ, Հարգելի Սոֆիկյանի Գրում.

Հիրավի՞նքում Հիսուսյան Ոչ Հայրն, տիրոջ ի 1850 ամ հրդեհ և ոչ, մրոտանքի չեր անիծյալի Հիրավիրեր հասարակի, Հրդեհը ի Իրանք Հայոց-խաղաղասիրաց շատ գնալին, Իրարանցի գնալ գնալ գնալ

[illegible]

3) Հարավային հիմքերի։ Դեռ չլցված է գրանիտե։ Ներսից ունի 2 մետրանոց [illegible] 342. գրառում։ Շինության գագաթամասի քարերը [illegible] Ռաբատ քերդի։ Դրանք մեծ են և հաստիքներ։ Դրանց [illegible] Հայաստանի։ Փոքրիկ քիչ մի [illegible] 400 տարի։ Հայ [illegible] Հայաստանի Հանրապետության։ Դրանց [illegible] Հայաստանի [illegible] Հանրապետության։ Դրանց [illegible] Հանրապետության։ Դրանց [illegible] Հանրապետության։ Դրանց

Հարգելի Խաչիկ - Սրբազան։

Հիանալի՞ որ մեր ազգերդ մի Հայոց Սարգսեանց կամ Գրիգորի տեղ մնալով մեզ մի՞ գրեցիր

խեղդել։

Խաչիկ Սրբազան Հոգևոր տեր։ Ձեռագիրս յանձնում ես ի Հայրիարան Տպագրատան։ Ձեր, շայ գրաբարն ես ոչ ոքից ոչ ի յիշատակ հանդերձի Հոգևոր տերից և ոչ ինքդ քեզանից յանձն առար թարգմանել Հանձնաժողովի կողմն առնելով ընդ հանուցան հայոց ի գրչի ի գրչութեան մայրաքաղաքին Հին Երուսաղեմ, որոյ միտքդ ես պարտականի ի տարեցի Հայրն էր միշտ պարտաւոր։ Եւ գրեցուցի Հանձնաժողովն ոչ զանձնանձն ոչ ի մի ոչ ոչ ի մի ոչ ոչ ի մի ոչ



Ծոմակոմոտիվի բերդաքաղաքը



Ղազանչեցոց եկեղեցի ամբողջապես

Տեսարան Շուշիի հին գերեզմանոցից

Զարդապատկեր տապանաքարից

Կանաչ ժամ (Ղարաբաղցոց վերին թաղամասում)



Ղազանչեցոց եկեղեցու զանգակատունը

Խաչելության տեսարան Մեռելոց ցցելեկեղ մուտքի կամարքարից

Հայր աստծո եւ Քրիստոսի պատկերաքանդակը հյուսիսային պատին

Աստվածամայրը մանկան հետ (Ղազանչեցոց եկեղեցու հարավակողմ պատին)

ШУШИНСКАЯ ЖИЗНЬ

Литературная, общественная и политическая газета.

Выходитъ по средамъ, пятницамъ и воскресеньямъ

Воскресенье. 7 іюля 1913 г. № 8

Цѣна 5 к.

Первый годъ изданія.

1913

Редакція помѣщается на Гянджинской ул. въ домѣ Тагировыхъ и открыта утромъ отъ 8—10 ч., веч. отъ 3—6 ч.

Рукописи присылаются или вручаются исключительно въ редакцію и должны быть четко переписаны, снабжены подписью автора и его адресомъ. Неправильно оформленныя и слишкомъ грязныя не возвращаются и уничтожаются и по новому разсмотрѣнію не въ числѣ „бракованныхъ" не вступаютъ. Принятыя статьи, въ случаѣ надобности, сокращаются.

Плата за объявленія:

Городскія впереди текста 15 к., а позади текста 10 к. за строку петита или занимаемую со мѣста. Проводятся и иныя выгодныя годы, пользуются скидкой 25 %. Иногородняя 25 и 15 к. за гуже строку. За многократное печатаніе объявленія—скидка.

Траурныя объявленія 3 р. за 1 разъ.

Объявленія принимаются въ конторѣ редакціи, въ книжномъ магазинѣ и въ типографіи И. Бабджанова.

Принимается подписка до конца 1913г.

на газету

„Шушинская Жизнь"

подписная цѣна:

	до конца 1913 г. съ доставкою въ Шушѣ	съ пересылкою въ другія губерніи
	3 руб.	3 р. 50 к.
на три мѣсяцъ	1 „ 25 к.	1 „ 50 к.
на одинъ мѣсяцъ	„ „ 50 к.	„ „ 75 к.

Объявленіе. Симъ объявляю почтеннѣйшей публикѣ, что мною уничтожены всѣ довѣренности, выданныя на имя жит. гор. Шуши, МИХАИЛА АЛЕКСАНДРОВИЧА СТЕПАНИНЦА 1) 15 марта 1911 года по реестру Шушинскаго Нотаріуса Копыдыча за № 481 и 2) 1 февраля 1913 года по реестру Бакинскаго Нотаріуса Гр. Толстого за № 1216 на управленіе всѣми моими дѣлами и веденіе ихъ въ судебныхъ и административныхъ учрежденіяхъ, а также уничтожаю всѣ прочія довѣренности выданныя мною Степанинцу лично отъ моего имени, или же отъ имени Торговаго Дома Р. Гулянцъ и М. Степанинцъ въ гор. Шушѣ и Баку.

3—1 Съ почтеніемъ Рубенъ Богдановичъ Гулянцъ.

ЗАНЯТІЯ НАЧАЛИСЬ **ТАНЦЫ**

въ дѣтнемъ помѣщеніи Общественнаго Собранія преподаетъ учитель танцевъ БАЛЕТМЕЙСТЕРЪ казенныхъ и частныхъ театровъ С. Н. НЕКОРКОВЪ.

Пріемъ учениковъ и учениць (взрослыхъ и дѣтей) ежедневно

Занятія начались.

ДОКТОРЪ

Ѣ. С. Зурабяхцъ

Врачъ клиники нервныхъ бол.

Мск. Моск. Ук.

Пріемъ отъ 11—12 ч. дн. отъ 5—6 ч. веч. Адр. Митрипская ул. д. № 22, бывш. Франгульяцъ.

ДОКТОРЪ

САГІЯНЪ

по внутреннимъ и дѣтскимъ бол.

Пріемъ дн. отъ 10—12 веч. отъ 6—8 д. Атабекова, противъ гостиницы „Мирдо". Внѣ пріемныхъ часовъ спросить въ домѣ Мосес-б. Юзбашева

ДОКТОРЪ

С. Ѣ. Григорьяхцъ

окончившій

Императ. Военно-Медиц. Академію

Внутр., нервныя и венерич.

Пріемъ дн. отъ 10—1 ч. веч. отъ 5—7 ч. Адр. Клубный пер. д. 7. Александрбека Тюнкбекова противъ нижняго клуба. 5—2

75-лѣтній юбилей духовной семинаріи.

75-лѣтній знаменательный юбилей единственнаго средне-учебнаго заведенія для всего Карабага вызвалъ къ себѣ повсюду глубокое сочувствіе.

Увѣнчавшіеся успѣхомъ труды архиепископовъ Завена и Баблкена по сбору пожертвованій далеко превысившихъ возлагаемые надежды, вызвало всеобщее воодушевленіе нашихъ соотечественниковъ. Однако шушинское армянское общество, связанное непосредственно съ этимъ учрежденіемъ, въ которомъ въ продолженіи многихъ лѣтъ воспитываются мои дѣти, какъ будто относится безучастно къ этому вопросу, не интересуясь вовсе юбилеемъ.

Полагаемъ, что шушинскому обществу давно пора оказать энергичное содѣйствіе культурно-воспитательному учрежденію своего города какъ въ матеріальномъ отношеніи, такъ и нравственной поддержкой.

Въ скоромъ времени къ намъ прибудутъ депутаціи и представители отъ различныхъ учрежденій, обществъ и городовъ и шушинцы не должны ударить лицомъ въ грязь передъ ними, ни передъ приславшимъ ихъ обществомъ, доказавъ, что ихъ сердцу въ самомъ дѣлѣ близко и дорого то учрежденіе, юбилей котораго мы празднуемъ.

Мы требуемъ отъ шушинскаго общества сознанія своего долга передъ культурнымъ учрежденіемъ и увѣрены, что за этотъ короткій промежутокъ времени до юбилея оно предастся плодотворной подготовительной работѣ по устройству юбилея.

Пора энергично приняться за эту работу.

ДОКТОРЪ МЕДИЦИНЫ

Москв. унив.

А. Б. БАЛАЯНЪ

Врачъ Московской факульт. терап. клиники

Спец. внутрен. и нервныя болѣзни

принимаетъ 9—12 ч. дн. 5—8 ч. веч. Ганджинская ул. № 7 Х. Степан. 7—7

Война на Балканахъ.

Петербургъ. Румынія неоднократно заявляла о своемъ желаніи участвовать въ мирныхъ переговорахъ воюющихъ сторонъ. Вопросъ объ участіи Румыніи въ предварительныхъ переговорахъ остается открытымъ.

Греція, кромѣ уступки значительной части Эгейскаго моря, требуетъ еще шкальной и религіозной автономіи грековъ во Фракіи и уплаты Болгаріей контрибуціи.

Въ министерствѣ иностранныхъ дѣлъ и въ дипломатическихъ кругахъ получены успокоительныя свѣдѣнія относительно положенія дѣлъ на Балканахъ.

Бѣлградъ. Основы мира будутъ выработаны на совѣщаніи Пашича и Венизелоса въ Нишѣ. Туда придетъ болгарскій уполномоченный.

Сербскія войска въ 12 километрахъ отъ Кустендиля ведутъ бой четвертый день.

Союзники требуютъ для Сербіи, кромѣ оккупированныхъ мѣстностей, Кочаны и для Греціи треугольника между Салониками, Сересомъ и Орфано.

Вѣна. Болгарія выразила свое согласіе на непосредственные мирные переговоры съ Сербіей и Греціей и просила опредѣлить предварительныя условія обсужденія мирнаго договора.

Берлинъ. Въ биржевыхъ сферахъ наступило успокоеніе. Окончанія военныхъ операцій ждутъ къ воскресенью.

Ужасы войны. По словамъ бѣлградскаго корреспондента R. P., раненые сербы разсказываютъ ужасныя вещи. Изъ ихъ словъ можно заключить, что сражающіеся доходятъ до ужаснаго ожесточенія, забывая не только о томъ, что они—братья, но даже и о томъ, что они—люди. Сплошь и рядомъ дѣло обходится безъ стрѣльбы, такъ какъ обѣ стороны сразу переходятъ къ штыкамъ. Сражающіеся бросаются другъ на друга, какъ звѣри, хватаютъ другъ друга за горло, вонзаютъ другъ въ друга ножи и разбиваютъ другъ другу головы ружейными прикладами.

Ожесточеніе доходитъ до ужасныхъ размѣровъ. Изъ раненыхъ, прибывающихъ въ Бѣлградъ, почти половина—потерпѣвшихъ въ рукопашныхъ схваткахъ. Врачамъ приходится констатировать раны, причиненныя артиллерійскимъ снарядомъ, штыками, ножами и, наконецъ, зубами. У нѣкоторыхъ раненыхъ видъ искусаны до неузнаваемости.

Неистовство и присоединенія болгарскаго духовенства въ Усадьбѣ къ сербской церкви истолковываются какъ кощунственное обращеніе. Такіе обращенія систематически про-

«Շուշինսկայա ժիզն» թերթի 1913 թ. 8-րդ համարի առաջին էջը



Շուշին 1920թ. Երևանից հետո

Թարեւոս Թամիրյանի ցարդած շիմաքարի բեւեռները



Տեսարան բերդապարսպի աշտարակից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
ՆԱԽԱԲԱՆ 7

ՄԱՍ Ա (1701-1725 թթ.)
Հայոց Սղնախներ 19
Մութ ամպեր՝ Անդրկովկասի երկնակամարում 27
Երեք կրակի արանքում 32
Պետրոս Առաջինի հրովարտակը 37
Ռուսաստանի պատվիրակը Շուշիում 41
Գաղթի առաջարկության մերժումը 45
Ա մասի հղումների ցանկ 52

ՄԱՍ Բ (1726-1792 թթ.)
Շուշիի ճակատամարտը 55
Սղնախների քայքայումը 58
Մելիք-Շահնազարն ու Փանահ-Ալին Շուշիում 67
Բերդաքաղաքի վերականգնումը 72
Փանահի վերջն ու Իբրահիմի հաստատվելը 77
Հովսեփ Էմինի Շուշի առաքելությունը 82
Խանը՝ հայոց մելիքների դեմ 98
Մելիք-Շահնազար Բ-ի մահը 99
Բ մասի հղումների ցանկ 102

ՄԱՍ Գ (1793-1813 թթ.)
Շուշիի 32-օրյա պաշարումը 105
Պարսից շահի սպանությունը Շուշիում 109
Ռուսաստանի և Պարսկաստանի պայքարը Ղարաբաղի համար 118
Ղարաբաղի դահիճ Իբրահիմի սպանությունն ու Գյուլիստանի դաշնագրությունը 124
Գ մասի հղումների ցանկ 132

ՄԱՍ Դ (1813-1827 թթ.)
Եփրեմ կաթողիկոսի փախուստը Շուշի 133
Մեսրոպ Թաղիադյանի հայտնությունը 136

Ղարաբաղի խանության վախճանը... 145
Պարսից բանակի վերջին հարձակումը... 148
Շուշիի հերթական պաշտպանությունը... 152
Հաղթանակ160... 160
Դ մասի հղումների ցանկ... 164

ՄԱՍ Ե (1827-1859 թթ.)
Վաճառաշահ քաղաքը... 166
Շինարարական արվեստը Շուշիում... 172
Բնիկ շուշեցիները... 174
Կովկասի Ձիբրիլթարը... 179
Օտար ճանապարհորդները Շուշիում... 189
Ե մասի հղումների ցանկ... 194

ՄԱՍ Զ (1860-1899 թթ.)
Պետրոս Շանշյանը՝ թեմականի տեսուչ... 197
Գևորգ Չմշկյանի հյուրախաղերը կամ հին ամբարը՝ թատրոն... 203
Անկում ու վերելք... 206
Ազգային զարթոնքի պտուղները... 211
....Զո՜ւր, ջո՜ւր բերդաքաղաքին... 215
Շուշիի ժողովրդական բժիշկները... 217
Նոր հուզումներ... 220
Զ մասի հղումների ցանկ... 223

ՄԱՍ Է (1900-1916 թթ.)
Հայ-թուրքական բախումներ... 224
Շուշիի մարտերը... 226
Դաղար փոթորկից հետո... 236
Է մասի հղումների ցանկ... 240

ՄԱՍ Ը (1917-1920թթ.)
Արցախը շրջափակման մեջ... 241
Շուշիի գունդը Գորիսում... 245
Անդրանիկ զորավարի արշավը դեպի Շուշի... 250
Շուշիի գնդի անհաջողությունը... 253
Օսմանյան զորամասի մուտքը Շուշի... 254

Զաբուխի գրավումը ու անսպասելի նահանջը... 258
Անգլիական ներկայացուցչությունը Շուշիում... 260
Ազգային խորհրդի զիջումները... 271
Ժամանակավոր համաձայնություն... 274
Շուշիի հայկական մասի հրկիզումն ու եղեռնը... 278
Ը մասի հղումների ցանկ... 283

Անգլերեն համառոտագիր... 284
Մատենագիտություն... 295
Անձնանունների ցուցակ... 299
Աշխարհագրական անունների ցուցակ... 305

ՇՈՒՇԻԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ
Նամակներ... 312
Լուսանկարներ... 334

Բակուր Կարապետյան
ՇՈՒՇԻ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ
Bakour Karapetian
FORTRESS CITY SHUSHI

Համակարգչային ձևավորումը Տիգրան Ապիկյանի
Հրատ. խմբագիր Վ. Դերձյան

Լուսանկարները՝ Տիգրան Նազարյանի
Հակոբ Բերբերյանի
Բակուր Կարապետյանի

Հանձնված է տպագրության 26. 01. 2000 թ., ֆորմատ 60 × 84 1/16, թուղթ «օֆսեթ», տպագրությունը օֆսեթ, 22 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 500, պատվեր 15

Երևանի պետական համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. թիվ 52:

ՏԵՐ-ՄԱՆՈՒԵԼԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ



Բակուր Կարապետյանը ծնվել է 1941 թ. ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մարգուշավան (Լենինավան) գյուղում: Մարաղայի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, 1967 թ. ավարտել այն:

1966 թ. աշխատանքի է ընդունվել Երևանի ամրանների գործարանում որպես առաջատար կոնստրուկտոր:

1967 թ. սկսած հանրապետության մամուլում լույս էին տեսնում Բակուրի հոդվածները, հրապարակախոսական նյութերն ու պատմվածքները, հաղորդվում հեռուստատեսային ակնարկները՝ նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային խնդիրներին, հայ ժողովրդի արցախյան հատվածի կյանքին, նրա միջնադարյան հուշարձաններին:

1974 թ. աշխատանքի է ընդունվել հայկական հեռուստատեսությունում, աշխատել որպես խմբագիր, սեփական թղթակից, աղա՝ մեկնաբան: 1983-88 թթ. վարել է «Հսկում է օբյեկտիվը» հեռուստահանդեսը:

1981 թ. մեծ միտասան Բաֆֆու նոթերի ու նամակների հետքերով ճանապարհորդել է Արցախում, Սյունիքում, Նախիջևանում, Արևիքում, աղա և Իրանում, գրել «Հարյուր տարվա երկխոսություն» գրքերը, որի համար արժանացել Միքայել Նալբանդյանի անվան Հայաստանի գրողների միության ամենամյա մրցանակին:

1982 թ. Հայաստանի Ժուռնալիստների տանը կազմակերպվել է Բակուրի գրաֆիկ աշխատանքների անհատական ցուցահանդեսը:

1988 թ. սկսած նկարահանումներ է կատարել Արցախյան գոյամարտի թեժ կետերում, վարել «Արցախյան օրագիր» հաղորդաշարը: Արցախում, Սումգայիթում, Գանձակ-Կիրովաբադում և այլուր կատարած նկարահանումների հիման վրա ստեղծել է բազմաթիվ վավերագրական ֆիլմեր, որոնք ցուցադրվել են շատ երկրների հեռուստաստուդիաներում:

1992-93 թթ. աշխատել է «Ազատամարտ» թերթում որպես Արցախյան բաժնի վարիչ, հրապարակել ռազմա-ճակատային հարյուրավոր ռեպորտաժներ, այլ տեղեկատվական ու վերլուծական նյութեր:

1985 թվականից լույս են տեսել Բակուրի հետևյալ գրքերը.

«Վերագտնված օրեր», «Հարյուր տարվա երկխոսություն», «...Եվ նրա շուրջը», «Աղեր», «Ծերմակ անդունդ», «Մնգլուռու արցախեան ռդիսականը», «Պարսկաստանյան հանդիպումներ», «Հեյդար Ալիև՝ «Ո՞վ եմ ես...» (ռուսերեն), «Գանձակ-Կիրովաբադի և Հյուսի-սային Արցախի գաղտնիքները» (ռուսերեն, Մոսկվայում):